LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

ԲԱԺԱՆԵԳԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70ֆ.	140ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԻՏԱԼԻԱ	250 ֆրանք		
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200ֆ.	

"HARATCH"

Directeur-Propriétaire
SCH. MISSAKIAN
Խմբագիր՝
Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Rédaction et Administration
Խմբագրութիւն եւ Վարչութիւն
235, Faub. St.-Martin
PARIS (10e)

MÉTRO: LOUIS-BLANC OU JAURÈS
Téléphone: NORD 67-23
R. C. SEINE 376.266

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 3 ֆրանք

ԵՐԵՔՇԱԲԹԻ
1
ՅՈՒԼԻՍ
1930
1 JUILLET 1930

Զ. ՏԱՐԻ Թիւ 302 — ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ — ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԽՐԿՈՒ ԽՕՍՔ

ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ

Մեր ընթերցողները օրը օրին հետեւեցան այն շահեկան ձեռնարկութիւններուն, որ ստացած էինք Հայաստանէն, ականատեսի մը ստորագրութեամբ: Մանրամասնութիւնները պարզեցին իրական աղէտի մը պատկերը, որու կործանարար նշանակութեան մասին, ատենին խօսած ենք:

Ինչ որ գերագոյապէս վրդովեցուցիչ է, այն անբարոյական վերաբերմունքն է, որ հրապարակ բերին Երեւանի Զեկավի յեղափոխական և «յղափոխական» գործակալները արտասահմանի մէջ, ազատ ու համարձակ ծափահարելով Հայաստանի արիւնահեղութիւնները:

Արտասահմանի հայութիւնը հեռու Հայաստանէն, անտեղեակ հալածանքի ծաւալին, ինքզինք չկրեց, որքան կը կրէ տեղի ունեցած պատահական երկրաշարժներէն: Ըստ երեւոյթին, արտասահմանի հայութեան անկուսակցական հոծ զանգուածը հաշտուած է այն մտքին հետ թէ՝ բոլշեւիկները մշտական բնակն աղէտն են Հայաստանի գլխուն, հետեւաբար մեծ ու պզտիկ դէպքերն այլ եւս յուզումի և ցնցումի չեն մատներ հայութեան այդ հատուածը: Թերեւս շատերը դառնութեամբ կը հետեւին Հայաստանի անցքերուն, բայց անճարութեամբ կամ «խոհեմութեամբ» կը լռեն:

Լռութեան սահմանին վրայ հիւլն ալ առաքինութիւն մը պիտի նկատէինք, նկատի ունենալով այս օրերու հոգեկան ադքատութիւնը:

Բայց . . .

Այս անպատուէ թշուառութեան և հակամարդկային վարվարոսութեան իտես, արտասահմանի մէջ կան խելքէ ու խղճէ զուրկ մարդիկ, որոնք կրնային գոնէ անկուսակցական ազմութեան պէս լռել: Կրնային Պիղատոսի պէս իրենց ձեռքերը լուալ ու մէկ կողմ քաշուիլ: Սակայն քաղաքացու և մարդու արժանապատուութիւնն այն աստիճանին իննած է, որ առանց հարիւրտոկոսած ըլլալու, կէտք կը զգան խունկ ծխելու խելագար ու ոճրապարտ ասպետներուն առջեւ, որոնք հայ դիւցազնութեան վրին չոքած՝ կը խղդեն զայն:

Երբ դաշնակցական մամուլը օր օրին հասած հատ ու նուր տեղեկութիւններ կուտար, Փարիզի հակադաշնակցական Հեղափոխական Երիտը չկրցաւ իր պապանձումը պահել և խմբագրականով մը յայտարարեց թէ արտասահմանի մամուլի մէկ մասը, տեղի ունեցած դէպքերը չափազանցուած ձեւով ներկայացուցած է: Այսինքն, ըստ ամենայնի կակուղկեկ մարդոց, հազարէ աւելի սպանութիւններ ու մահերը ոչինչ են: Քանի մը հազար աքսորականներ, որոնք առանց հաշուի Սիպերիոյ սառնամանիքներուն մէջ կ'ոչնչանան, ամենավարներու ըմբռնած ազգին չեն պատկաներ: Խօսքը չենք ըներ տնտեսական այն անհաշիւ վնասներուն, որոնց հետեւանքով հայ գիւղացիութեան մէջքը կոտրեցաւ:

Ու մենք զարմացած կը մնանք այս անխղճութեան և գիտակից սուտ վկայութեան առջեւ, առանց կարենալ բացատրելու իմաստը այս ժողովակցութեան, արիւնահեղութեան մը որ ամէն ազնիւ քաղաքացու դատապարտութեան պիտի արժանանար:

Պարագան բոլորովին տարբեր է, երբ մեր դէմ կը կենայ ծախուած գործակից մը, կասկածելի անցեալով և ներկայով, որ յեղափոխութեան սրբութիւնները կը շահագործէ քսակահատի մը գոհունակութեամբ: Ան վճարուած է բոլշեւիկեան բեռնը դառնալու արտասահմանի մէջ, և առանց քաշուելու իր տուրքը կուտայ հրամայող մեծաւորներուն, բոլշեւիկեան ոճրագործութիւնները ներկայացնել որպէս Հայաստանի «ընկերվարական շինարարութիւն» մը:

Այս ընթացքը ստորնութիւն մըն է, բայց վճարուած, ու որակումը կը դառնայ անզօր...:

Իսկ, երբ ռամկավարը, առանց հրաւէրի և առանց Զեկավի ստիպողութեան, այս ազատ երկնքին տակ, խօսքի ազատութենէն օգտուելով՝ սիւնակներ կը մրոտէ պաշտպանելու համակամարդկային այս արարքները. երբ իր սուտ վկայութիւնը կը բերէ արդարացնելու չեկիստները, որոնք արիւն արցունքի հոլվիտ դարձուցին մեր հայրենիքը, այլապէս ստորին պարտականութիւն մըն է որ կը կատարէ, այս անգամ անվճար:

Անվճար այս գործակալութիւնն է, որ պէտք է դադրի: Եթէ չեն կրնար օգնել այդ հայրենիքին ու ժողովուրդին, թող քար կտրին ու քաղաքական անբարոյականութեամբ մեզմէ չպարձնեն արտասահմանի հայութիւնը անանուն բարբարոսութեան մը:

Հայաստանի հայութիւնը երբեմն լուռ, երբեմն ալ մռնչուկը, կը տանի բոլշեւիկեան լուծը, ու եթէ հոգեկան մխիթարանք մը ունի, այն ալ արտասահմանի հայութեան համակրանքն է, որ կը շեմի բոլշեւիկներէն և ուղիղ ճանապարհով կ'երթայ Հայաստանի ճնշուած զանգուածին:

Բարոյական այս ճանապարհէն շեղողները, ուշ կամ կանուխ, հանրային դատաստանին պիտի ներկայանան, շատ անցանկալի աթոռի մը վրայ նստելով:

Կ. Ս.

ՄԱՄՈՒԼ

ՔՐԻԶԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

«Էլ Ահվալ» սուրիական թերթը, հետեւեալ լուրուածը կը հրատարակէ քրտական ապստամբութեան մասին.

— «Թրքական լուրերը կը հաստատեն քրտական ապստամբութեան ծաւալումը Թուրքիոյ արեւելեան նահանգներուն մէջ: Ըստ Թրքական Թերթերու եւ Թուրք կառավարութեան յայտարարութեան, այս շարժումը Շեյխ Սաիտի ապստամբութեան շարունակութիւնն է:

Քիւրտերը իրենց հայրենիքին անկախութիւնն ու ազատութիւնը կ'ուզեն: Անոնք զօրաւոր, չարքաշ եւ տոկուն ցեղ մըն են. բայց ցրուած են Սուրիա, Իրագ եւ Թուրքիա: Թուրքերը կ'ուզեն Թրքացնել զանոնք. սակայն Թուրքերուն հետ չեն ձուլուիր, որովհետեւ պարսիկներուն աւելի մօտ են քիւրտերը քան Թուրքերուն: Այդ է պատճառը որ պարսիկ կառավարութիւնը մերժեց Թուրք կառավարութեան այն պահանջքը, որով կ'առաջարկուէը ձնշում բանեցնել իր սահմաններուն մէջ գտնուող քիւրտերուն վրայ:

Իրագի կառավարութիւնը, այսինքն Անգլիան շատ բարեացակամ վերաբերմունք ցոյց կուտայ քիւրտերուն հանդէպ, մինչեւ անգամ Անգլիացիները ուզեցին որ Իրագի եւ Թուրքիոյ մէջ, քրտական ինքնավարութիւն մը ստեղծեն եւ Մէլիք Ալին (Շիձագի նախկին Թագաւորը եւ Ֆէյսալի եղբայրը) անոնց վրայ Թագաւոր դնեն: Այդ պատճառաւ, Իրագի մէջ քրտական դպրոցներ բացին, պետական մարդիկ եւ պաշտօնեաներ պատրաստելու համար Ազգ. Դաշնակցութեան 16 սեպտ. 1925 Թուակիր որոշումագրին համաձայն: Այդ որոշումը, Մուսուլի Ֆրանսայէն անջատումը եւ քրտական ինքնավարութեան ստեղծումը կը պահանջէր. եւ ատոր համաձայն ալ Ֆրանսացիները պարպեցին այդ շրջանները:

Քիւրտ լիտրները շատ լաւ գիտեն այս բոլորը եւ այդ պատճառաւ—ալ կը հրաւիրեն բոլոր քիւրտերը որ գան եւ հաստատուին Մուսուլի շրջաններուն մէջ: Իրագի տեղացիներն ու կառավարութիւնը գոհ չեն այս աշխատանքներէն եւ որոշումներէն եւ կը ջանան ամէն գնով արգելք ըլլալ քիւրտերու համախմբման իրենց հողին կամ սահմաններուն վրայ:

ՀՆԴԿԱՍՏԱՆ ԵՒ ՍԻՄՈՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Հնդկաստանի կառավարութիւնը հպարտութեամբ նահանգներու կառավարիչներուն Թէ պէտք է մինչեւ օգոստոս 15 հասցնեն սիմոնի տեղեկագրին մասին իրենց կարծիքը, Անկից յետոյ է որ Հնդկաստանի կառավարութիւնը պիտի բանաձեւէ իր գնահատականը եւ սեպտեմբեր 19էն առաջ, զայն պիտի հղորդէ Անգլիոյ, որպէսզի կարելի ըլլայ ներկայացնել Լոնտոնի խորհրդաժողովին:

*** Նիւ-Եորքի բրիտանական հիւպատոսարանին առջեւ 500է աւելի հաշմանդամներ ցոյց մը կատարեցին, ընդդէմ Հնդկաստանի մէջ անգլիական քաղաքականութեան, եւ պահանջեցին Հնդկաստանի անկախութիւնը:

ցուցարարները ցրուեցան ոստիկանութեան միջամտութեան վրայ:

ՕՐԸ ՕՐԻՆ

Թուրքերէն լրատուական քախտումներ

ԱՐԱՐԱՏԻ ԵՒ ՋԻԼԱՆԻ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ

Պայազիտէն էնկիւրի տրուած լուրերու համաձայն, զինեալ խումբեր մերթ ընդ մերթ յարձակում կը գործեն սահմանագլուխին վրայ, Արարատիշրջանին մէջ, արջառի գողութեան համար (?): Թուրք զինուորական օդանաւերը կրցան անոնց թաքստոցը երեւան հանել եւ ստիպել զանոնք որ քաշուին Թուրքեւպարսիկ սահմանագլուխէն անդին:

Միւս կողմէ, յարձակում գործուեցաւ նաեւ սահմանագլուխի Չանիք գիւղին վրայ: Յարձակողները ետ մղուեցան:

Յունիս 20ի գիշերը, 110 ձիաւորներու խումբ մը, Պարսկաստան ապաստանած գաղթական ցեղախումբերու պետերուն հրամանատարութեամբ, Եէքմալ գիւղէն մեկնեցաւ ու մտաւ Թրքական հողաժասը՝ Ջիլանի լեռնոտ շրջանին մէջ, ուր Հայտարանը ցեղախումբին հետ շփման մէջ մտաւ: Շաբաթ մըն է որ աւազակները կը ջանան սպառնալիքով իրենց կողմը քաշել տեղացիները: Այդ շրջանէն անդին չկրցան անցնիլ: կը զգուշանան ոստիկանական ուժերէն: Բռնուած փաստաթուղթերէն կ'ապացուցուի Թէ այս աւազակախումբերը մտադիր են յեղափոխական շարժում մը ստեղծել: Զանոնք պաշարելու համար միջոցներ ձեռք առնուած են:

Այս կերպով, Թրքական աղբիւրէ եւս կը հաստատուի Թուրքեւքիւրտ լուրջ բախումներու լուրը, Թէեւ Թուրք գործակալութիւնը աւազակ կը կոչէ քիւրտ ըմբոստները եւ կը ջանայ աւազակային գործողութիւններու իջեցնել յեղափոխական լայն շարժում մը:

Ալպանեւրտատական միջադէպ

Ալպանական բանակի իտալական մարզիչներէն սպայ մը սպաննուեցաւ, այն միջոցին որ Շքոտրայի մէջ, իտալական զօրանոցը կը մտնէր: Ալպանացի զինուոր մըն է որ զէնքի հինգ հարուածով սպաննեց իտալացին եւ անմիջապէս անհետացաւ: Դեռ կարելի չէ եղած գտնել անոր հետքը:

Այս սպանութիւնը կրնկատուի ազդանշանը ծանր վէճի մը, որ երկար ատենէ ի վեր կը տեւէ մէկ կողմէ իտալացի մարզիչներու եւ միւս կողմէ ալպանացի սպաներու եւ զինուորներու միջեւ: Մէկ քանի ամիսներէ ի վեր զինուորները դասալիք կ'ըլլային և կ'ապաստանէին Սերպիա, իտալացի մարզիչներու խստութենէն դանգատելով: Վերջերս անոնց դժգոհութիւնը սաստկացեր էր նոր մարզիչներու ժամանման հետեւանքով:

Շքոտրայի զօրախումբերը հսկողութեան տակ առնուեցան:

Յար Քհրսիևաւն կը վերադառնայ?

Պուլկարիոյ մէջ, վերջերս կատարուած մակեդոնական յեղափոխականներու ձերբակալման հետեւանքով, կ'ենթադրուի Թէ իտալական կառավարութեան գործակալները մեծ գործունէութեան մը լծուած են, խափանելու համար պուլկար դահլիճին ջանքերը, որոնք կը ձգտին բարելաւել Սերպիոյ եւ Պուլկարիոյ յարաբերութիւնները:

Իբր Թէ այս մտօք, ֆաշիստ գործակալները կը Թելադրեն մակեդոնական կուսակցութեան որ պետական հարուած մը կատարէ եւ Հռոմի այժմու պուլկար դեսպանին՝ գօր. Վոլքոֆի ղեկավարութեան տակ՝ Պուլկարիոյ մէջ հաստատէ ֆաշիստ կառավարութիւն մը:

Միւս կողմէ, հակառակ պաշտօնական հերքումներուն, լուր կը շրջի Թէ նախորդ ցարը՝ Քէրտինանտ կը պատրաստուի մօտերս մտնելու Պուլկարիա:

Պուլկարիոյ կառավարական Թերթերը կը հաւաստեն Թէ Քէրտինանտի վերադարձը չի կրնար քաղաքական որեւէ նշանակութիւն ունենալ, նախ իր յառաջացած տարիքին եւ երկրորդ՝ Պօրիս Թագաւորին ժողովրդականութեան հետեւանքով: Իբր Թէ, վառնայի առջեւ, նաւ մը հրամանի կը սպասէ մեկնելու համար գերմանական նաւահանգիստ մը, ուրկէ Քէրտինանտը առնելով պիտի բերէ Պուլկարիա:

Ռուսեւճափոնի միջադէպ

երկար ատենէ ի վեր, վէճ կայ ճափոնցի ձկնորսներուն եւ ռուս կառավարութեան միջեւ, Բամչաթքայի ջուրերուն մէջ՝ ձկնորսութեան իրաւունքին մասին: Այս վէճին հետեւանքով, առջի օր ռուսական պահակնաւը, առանց ազդարարութեան, կրակ բացաւ ճափոնցի ձկնորսներուն վրայ: Ձկնորս մը սպաննուեցաւ, վիրաւորը ձերբակալուեցան:

Ճափոնական կառավարութիւնը իր երկրէն վտարեց Թոքիոյ Սորհրդ. առեւտրական պատուիրակութեան պաշտօնատարներէն մէկը:

Բոլշեւիկեան համագումարը

Բոլշեւիկեան 16րդ համագումարին մէջ, Ստալին կարդաց քաղաքական գործունէութեան տեղեկագիրը: Ընթերցումը բռնեց երկու նիստ, եօթը ժամ:

Ստալին մանրամասնօրէն վերլուծեց Սորհրդ. Միութեան

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ԵԳԻՊՏՈՍԻ ԴԱՇԼԻՔԸ ԵՒ ՎԱՖՏԸ

Եգիպտոսի նոր վարչապետը Իսմայիլ Սըտքը փաշա հետեւեալ յայտարարութիւնները ըրաւ.— Ներկայ դահլիճը հակառահմանադրական ոչինչ ըրաւ, հակառակ Վաֆտ կուսակցութեան դրդռւթիւններուն: Սակայն, ձեռք առած ենք նախազգուշական միջոցներ, որոնք շնորհիւ զրդռւթեանց հանդէպ ժողովուրդին անտարբերութեան, բաւական են ապահովելու երկրին խաղաղութիւնը»:

Իսմայիլ Սըտքը խիստ քննադատութիւններ ուղղեց Վաֆտ կուսակցութեան հասցէին: «Ան իր քաղաքականութեամբ եւ գործելու եղանակով՝ Թշնամաբար վարուեցաւ հանդէպ ժողովրդավար սկզբունքին: Սահմանադրական ոգիէ զուրկ ըլլալով, Վաֆտը, ինչպէս ապացոյցը տուաւ արդէն, միայն բռնապետական վարչաձեւի ընդունակ է»:

Նոր դահլիճը, ըստ Սըտքը փաշայի յայտարարութեան, պիտի վերահաստատէ իսկական սահմանադրութիւնը երկրին մէջ եւ դայն պիտի պաշտպանէ Վաֆտի դէմ:

ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ՅՈՅՍ ՄԸ

Քրեաքովիայի մէջ (Կալիցիա) ձախերու միջկուսակցական համագումար մը տեղի ունեցաւ, 6000 հոգիներու ներկայութեամբ: Համագումարը պահանջեց կառավարական ներկայ վարչաձեւին հաշուետւարդարը, վերահաստատումը խորհրդարանական իրաւունքներու եւ հանրապետութեան նախագահին հրաժարումը:

Մբեւնոյն պահուն, հրապարակային 40 հաւաքոյթներ տեղի կ'ունենային կառավարութեան կողմնակիցներուն կողմէ եւ պախարակելով ձախերու համագումարը, վստահութեան բանաձեւ կը քուէարկէին հանրապետութեան նախագահին հանդէպ:

ՍՊԱՆԻՈՅ ԲՈՅՔՈՏԸ ՌՈՒՍԻՈՅ ԴԷՄ

Սպանիոյ քարիւղի ժեռաշնորհի վարչութիւնը որոշեց չարգել Ռուսիոյ հետ իր պայմանագրութիւնը, քարիւղի գնման մասին:

Որոշումը տրուած է սպանիական կառավարութեան Թելադրութեան վրայ եւ նկատի ունենալով այն պարագան Թէ, տեղի վաճառումէն գոյացած հասոյթին մէկ մասը պիտի յատկացուի բոլշեւիկեան գործունէութեան գանազան երկիրներու մէջ, ըստ համայնավար վերջին համագումարին որոշման:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՁԱԻԵՇՏԸ

Հանքերու մէջ, աշխատանքի տեւողութիւնը կանոնաւորելու բոլոր ջանքերը զուր անցան: Ժընեւի Յանձնախումբին ուշադրութեան նախագիծը քուէարկութեան ընթացքին, մեծամասնութիւն գրաւած չըլլալով խնդրին ուսումնասիրութիւնը մնաց յաջորդ տարուան...:

Այս ձախողութիւնը կը վերագրուի գերման կառավարութեան, որ անտեսական բացառիկ պարագաներու ընթացքին, հանքերու մէջ՝ աշխատանքի յանկուածական ժամերու մասին իր առաջարկը կրցեր էր ընդունել տալ:

Այս կերպով հանքերու բազմահազար աշխատաւորները տարի մը եւս իրենց աշխատանքի ժամերուն կանոնաւորումը պիտի սպասեն մեծամասնութեան քաջահաճոյքէն:

ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ 16ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԱՌԹԻԻ

Ա.ժսոյն 26ին, Մոսկուայում բացուեց Խորհ. Միութեան կոմունիստական կուսակցութեան տարեկան համագումարը, որմէ առաջ տեղի ունեցան բազմաթիւ շրջանային համագումարներ (ինչպէս և Հայաստանում ու Անդրկովկասում), ուր երբեմն խիզախ կոմունիստներ համարձակուեցան քննադատել ոչ միայն իրենց տեղական չինովնիկներին, այլ եւ բարձր պալատականներին։ Ջնայած դաժան իրաւակարգին, խորհրդային աշխարհը դեռ հարուստ է արի անհատներով, լինեն դրանք կուսակցութիւնից դուրս թէ նրա շարքերում։ Գուցէ ճիշդ է այն կարծիքը, թէ խորհրդային իշխանութիւնը վերջ ի վերջոյ խորտակուելու է հէնց կոմունիստների ձեռքով, այդ է պատճառը, որ չնայած քննադատութեան «աղատութեան» կուսակցութեան ներսում, ժամանակաւոր վիճաբանական թերթերի հրատարակման, ամէն տեղ խօսքով թէ գրչով քննադատողներին կուսակցական ժողովներում ստալինականները նկատողութեան առան եւ նրանց շարքերից արտաքսելու սպառնալիք կամ որոշում կարդացին։ Խորհրդային ժամուն էլ ճգնում է թանձրացնել պատկերը, տարրական ամէն մի նկատողութիւն կենտրոնական կոմիտէի, այսինքն Ստալինի հասցէին անուանելով տրոցկիական կամ աջակողմեան ելոյթ։

Խժբաղդները բոլորն էլ հաւիւր տոկոսանոց ստալինականներ են. ուռեցնելով փոքրիկ փաստերը, տալով նրանց նշանակալից եւ կազմակերպած հակակուսակցական պալքարի քնաւորութիւնը, նրանք ձգտում են մի աւելորդ անգամ եւս իրենց նուիրումը ապացուցել դիկտատորին։ Նախահամագումարային այս վէճը թէ կարմիր սահմաններից ներս եւ թէ նրանցից դուրս, արթնացնում է անորոշ յոյսեր, խաթուսիկ աղմուկին եւ իրարանցման փաստի վրայ։ Խորհրդային իշխանութեան հակառակորդների վատ կազմակերպուածութիւնը աշխատում է կանգնել կուսակցական ժողովական քարայրում դրաւիչ հեռանկարը։ Փաստերը դասաւորելով մի քանիսը ուսական տարածքը մամուլի էջերում գալիս են այն եզրակացութեան, որ ալեւրի եւ ձախերի գործակցութիւնը համագումարում, կարող է անակնկալներ ստեղծել Ստալինի համար եւ որ նրա դիրքը խախուտ է։

Բայց նախորդ տարիների աւելի բուռն պայքարները յանգեցին յուսախաբութիւնների՝ հակախորհրդային տարրերի համար։ Ստալինը փշրեց իր հակառակորդներին ու աւելի ընդլայնեց իր դիկտատորութեան սահմանները. բաւական է յիշել, թէ ինչ դաժանութեամբ նա հալածեցտրոցկիականներին, շարժումի մարզարէից Տրոցկիից (Լէնինի անունը մի ժամանակ մինակ չէր արտասանուում, այլ կ'ասէին Լէնին-Տրոցկի) մինչեւ նորաբողբոջ կոմսոմոլը։ Անցեալ տարի, նա ստիպեց աջ թեքումի մէջ մեղադրուող կառավարութեան նախագահ Ռիկովին եւ կոմինտերնի նախագահ Բուխարինին մեղայական կարդալ։ Այնուամենայնիւ հոսանքների վախը միշտ կայ։ Ստալինի եւ նրա ծառաների աղմուկը ապացուցում է, որ կառավարութիւնը վարակուած է քայքայմանախտով. «չքնաղ վրացին» ունի բազմաթիւ եւ կատաղի հակառակորդներ, որոնք դիմում են ամէն մաքիաւէլական միջոցի, կուսակցութեան մէջ մնալու, մինչեւ նրան հարւածելու վայրկեանի սպասելիք։ Այդ վայրկեանը գալու է արիւնալի, որովհետեւ կոմունիստները չեն կարող բաժանուել հոսանքների ու պայքարիլ զաղափարական զէնքերով։ Խորհրդային Միութեան մէջ գոյութիւն չունի պարլամենտական երկիրներին յատուկ կուսակցական հատուածական ելեւէջը։ բիրտ ոյժի իրաւակարգում, միայն ոյժն է որ վճռելու է, թէ ո՞ւմ է պատկանում իշխելու կարողութիւնը։

Գիտակցելով այս ճշմարտութեանը, Ստալինը եւ իր Զեկան հէնց սադմի մէջ խեղդում են ամէն մի ընդդիմադրութիւն։ Ճիշդ է, դեռ ոչ մի հատագումար կանգնած չի եղել դեկավարման այնպիսի ծանր սխալների առաջ, ինչպէս նեռկալինը։ Կոլխոզային անմիտ դեկրետի հրատարակումն ու չհնգիզխանեան արագ գործադրումը եւ աւերը գործելուց յետոյ, խուճապային նահանջը նրանից՝ մինում են ամենացայտուն փաստը ոչ միայն Ստալինին տապալելու, այլեւ դատապարտելու համար։ Բայց ըստ կոմունիստական ուղղափառ թեաբանութեան 2անդամ 2 հաւասարէ աւելի կոթին, Ստալինը եւ իր կենտրոնական կոմիտէն, որ հրաժանագրեցին կոլխոզային բաշխրդուկութիւնը, անշեղ են ու անսխալական։ Մեղաւոր են հակայեղափոխականները, որ կոմմունիստական մորթ հագած հրաժանի անթերի իրագործումով ուզեցին վարկաբեկել խորհրդային իշխանութիւնը։ Նահանգապետին մնծարել, իսկ գղիրներին կախել, որ համարձակեցան նրա հրամանով շագանակները ջարդել գիւղացու մէջքին. ինչով բացատրել տրաժաբանելու այս հիւանդոտ ձեւը. ուրեմն պատասխանատու կօշկակարը (իր լիանամեակի առթիւ, Ստալինը թիֆլիզի կօշկակարներից այս կոչման արժանացաւ) կարող է անպատիժ դարկել կոմմունիստական թէկուզ անմիտ փորձերի կարմիր մեխերը խորհրդային ժողովուրդների կրունկներին շարունակաբար։

Միակ շնորհը, որ նա կարող է անել ցաւից ճչացող զոհին. դա շատ խոր ժառած սեխը մի քիչ դուրս քաշելն է։ Դրանից արիւնաքամ ոտները քալելու ոյժ չպիտի ստանան եւ հոգեկան տրկութիւնն ու նիւթական թշուառութիւնը պիտի շարունակեն պահել միլիոնաւոր բազմութիւնները կենդանի դիակների վիճակի մէջ, իր եւ իր արբանեակների բռնութեան տակ։

Լէնինը մնծագոյնն է, կոմունիստական աստուածը։ Ստալինը իրեն համարում է նրա միակ մարգարէն. բայց անգամ այդ աստծու իշխանութեան շրջանում, խորհրդային վարչաձեւի բախտը այնքան սերտօրէն կապուած չէր նրա անձի հետ, որքան այսօր նա ի մի է ձուլուած մարգարէի անձի հետ. չմոռանանք, որ լէնինեան վերջին շրջանի կոմմունիզմը ծիծաղելի է համեմատած ստալինեանի հետ։ Լէնինը տօնածառ էր գնում եւ բաղկամիներին ծննդեան Ս. Տօնով շնորհաւորում. եկեղեցին պետութիւնից բաժանուած էր եւ նրանք միմիանց չէին խանգարում, ատելի սպանդի միջոցով իր իշխանութիւնը հաստատելուց յետոյ, Լէնինը մտցրեց Նեպը— մասնաւոր առեւտրի ազատութիւնը եւ անհատական սեփականութիւնը։ Իսկ Ստալինը յամառօրէն նահանջեց Լէնինի դիրքերից դէպի յետ, դէպի կոմմունիզմի կատարը— անաստուածութեան բռնի տարածում, մասնաւոր առեւտրի իսպառ ոչնչացում, կենսամթերքների պետական բաշխում ու հնգամեայ ծրագրի անւան տակ միլիոնաւոր մարդկանց տառացի ստրկութեան ենթարկում։ Երկու չարիքների մէջ կարելի է հաստեմատութիւն դնել. մինչ Լէնին գնում էր դէպի հաշտութիւն մասսաների եւ առանձնապէս գիւղացիութեան հետ, Ստալինը դասակարգերի ոչնչացման նշանաբանի տակ, գնում է դէպի նրանց ատելութեան եւ զայրոյթի բորբոքումն։ Այս վիճակը կոմունիստներին ստիպում է սարսափով նայիլ այն վաղուան, որ կարող է յայտնուել Ստալինի անկման. ամէնքը զգում են դիկտատորի եւ խորհրդային իր ստեղծած վարչաձեւի կատարեալ նոյնացումը. թւում է թէ նրանք միասին պիտի ոչնչանան, ամէն երկու հարիւր մարդու մէջ դտնուող երկու կոմմունիստներից ոչ մէկը վստահ չէ, ինչ հոսանքի էլ նա պատկանի, թէ փլուզումի դէպքում ինքը կենդանի կը մնայ իր շրջապատողների մէջ։

Բայց կգայ մի օր, երբ պոտիկումը հասունանալով կուսակցականների եւ ոչ կուսակցականների մէջ, կը յաղթանակէ իսկ այսօր Ստալինի զսպանակները դեռ բաւականին զօրեղ են տանջվեցերորդ համագումարը դարձնելու ձեւական մի արարողութիւն իր հասցէին։ կը կատարուի կոմունիստական թագաղրանքի հանդէսը արդէն իր զարդարուած բազմած միապետի եւ Նորին Մեծութիւն Սօսօ (*) Ա.ինը Մոսկուայի Մեծ թատրոնի գահլիճում ունկնդրելով իր անսխալականութեան ու անպատասխանատուութեան միաձայն ներբողները, կը շարունակէ իր ասիական բռնակալութիւնը աշխարհի վեցերորդ մասի վրայ։

ՀԱՅԿ ՄԱՐԳՍԵԱՆ

(*) Ստալինի մականունը։

ՕՐՈՒԱՆ ՀՈԳԵՐԼՆ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԸ ՌԱՄԿԱՎԱՐԻ ԱԿՆՈՑՈՎ

Դաշնակցութեան դիրքը բարեգործականի մասին շարքս չըսպառած, ատիթը կ'ունենամ թերթելու Ամերիկայի Ռամկավար կուսակցութեան պաշտօնական օրկան «Պայքար»ի վերջին թիւերը, որոնց մէջ պ. Գ. Ս փափազեան գետեղած է «Դիտողութիւններ Հ. Ռ. Ը. Միութեան շուրջ» խորագրին տակ երկու յօդուածներ։

Խիստ շահեկան է ծանօթանալ այս գրութիւններուն, գլխաւորաբար անոր համար որ ռամկավար հրապարակագիրը իւրայատուկ եղանակով կը հաստատէ ինչ որ ըսած ենք մենք, ոչ միայն մեր այս վերջին շարքի ընթացքին, այլ եւ ասկէ տարիներ առաջ։ Առաջին պարագան, որ կը ներկայանայ հոս, այդ այն հիմնական խնդիրն է թէ բարեգործականը, հակառակ փարիզի իր կաշառուած պաշտպաններուն, իրապէս խոցելի կողմեր ունի։

Պ. փափազեան կրկնելով իր ընկերներու հաւատամքը թէ դաշնակցութիւնն է միայն որ «հալածած» է բարեգործականը «ծուռ շարժառիթներէ դրդեալ» կ'ընդունի ակամայ ոչ միայն դաշնակցութեան դիտողութիւնները, այլ եւ անոր շարունակական պահանջը։

«Թերութիւններ, ան (բարեգործականը) ունեցած է անշուշտ, սխալներ անխուսափելի եղած են նաեւ անոր գործունէութեան մէջ. անտարակոյս կան բաներ, որոնք կրնան շտկուիլ ու բարեփոխուիլ»։ («Պայքար», յունիս 8)։

Ցեղն է այս տողերը ստորագրող պարոնին հարցնելու — Ցարբե՞ր իմաստ ունեցած է դաշնակցութեան քննադատութիւնը նոյն ձեր յիշած բարեգործականի մասին. չէ՞ որ ի վերջոյ քննադատութիւնները եղած են կամ թերիներու եւ կամ այն «անխուսափելի» սխալներու բարեփոխման մասին, որոնք մեր կարծիքովը-նան շտկուիլ միշտ, եթէ միայն ձգտումն ունենան բուն պատասխանատուները։

Ըստ էութեան ո՛չ մէկ տարբերութիւն մեր ըսածներու եւ վերի տողերու իմաստին մէջ։ Կրնան արտայայտութեան ձեւերը տարբեր ըլլալ, բայց այս ալ անխուսափելի է, նկատի ունենալով դաշնակցականի եւ ռամկավարի տարբեր խառնուածքները։

Թուելով տարիներ շարունակ կրկնուող բայց երբէք չշտկուող սխալները, մենք ալ կրկնած ենք նոյնպէս, «Հ. Ռ. Ը. Միութիւնը իր սկզբունքներէն իսկ պիտի կրնայ ի յայտ բերել ինքզինք սրբագրելու եւ ժամանակին ոգիին համեմատ յառաջդիմելու, արդիականանալու ընդունակութիւնը։»

Դաշնակցական ո՞ր թերթն է, որ հազար անգամ եւ հազարաւոր ձեւերով թելադրած չըլլայ այս անհրաժեշտութիւնը, իբրեւ հիմնական դարման բարեգործականի կազդուրման։

Ամբոխավարութիւն է, այն ալ գռեհիկ տեսակէն, չխոստովանիլ մեր այս պահանջը, որ կը կրկնուի անյուսօրէն։ Եւ ճիշդ հոս է մեր եւ Ռամկավարի տարբերութիւնը։ Մինչդեռ մենք թերահաւատ ենք դարձած, որ բարեգործականը իր ներկայ վիճակին մէջ կարողանայ փոխել իր ներքին բարոյական մթնոլորտը, անոնք յոյս ունին եւ հաւատք։

Բարեգործականի շուայլութիւններու եւ աւելորդ մսխումներու մասին մեր քննադատութիւնները մասնաւորաբար միշտ ալ ջղայնացուցած եւ կատաղութեան են մատնած իր պաշտօնատարներն ու անոնց գործակից ռամկավարները։

Որքա՜ն արիւն պղտորեցինք սա փարիզի կեդրոնի վրայ անպատակ եւ շուայլօրէն ծախսուած հազարաւոր ոսկիներու վրայ, այն ժամանակ երբ մէկ պաշտօնեայի ամսականովը միայն հարիւրաւոր հայ մանուկներ կարելի էր վարժեցնել իրենց մայրենի լեզուին։

Այս բոլորի դէմ պաշտօնական բարեգործականը կամ լուռ էր, եւ կամ երկդիմի պատասխաններ կուտար, իսկ իր պաշտպանները, «ծուռ հաշիւներ» միայն կը տեսնէին մեր խօսքերուն մէջ։

Այսօր, ալ է պատկերը գոնէ Ամերիկայի «Պայքար»ի համար։ Ան կը թելադրէ «խիստ խնայողութիւն ի գործ դնել» Միութեան ծախքերու մասին։ Իսկ նոյն թերթի յօդուածագիրը՝ պ. Ս. փափազեանը բարեգործականի հաշուեկշռի մասին կ'ըսէ ի միջի այլոց.— «Սակայն հաշիւներուն ճշտութիւնը ըսել չէ թէ Միութեան տեղեկագրին ու հաշուեկշռին մէջ գոյց տրուած բոլոր ծախքերն ալ արդարացի են, եւ կամ թէ Միութիւնը երբեք չէ հետեւած օգնութեան հմար եւ կամ ուրիշ նկատումներով գանազան մարդոց հմար աւելորդ պաշտօններ ստեղծելու ուղղութեան»։ (Ընդգծումները իմս են, Ս. Թ.)

Հոս ի՞նչպէս չըսել.— ո՞ւր էիք պարոններ երբ մենք չարունակաբար այս նոյն գաւոտ կողմերու վրայ էր որ կ'ուզէինք հրաւիրել Հանրութեան ուշադրութիւնը։ Ի՞նչու լուռ մնացիք, երբ ձեր իսկ կուսակցական գործիչ Հրաչ Երուանդը բարեգործականի հաշուին մեծածախս ճամբորդութիւն կ'ընէր հեռաւոր Հնդկաստանի խնդիրը։ Ո՞ւր էիք, երբ տարին մէկ քանի անգամ պատուիրակներ կը դրկուէին Հայաստան, նայնքան շուայլ ծախսերով։ Եւ վերջապէս դեռ անցեալ տարի չէ՞ր, որ պ. Մալէզեանի ճամբորդութիւնը դէպի Ամերիկա շուրջ հարիւր հազար ֆրանքի կը նստէր բարեգործականին։ Հարկ չկայ կրկնելու նաեւ այն բոլոր պաշտօններու մասին, որոնք մինչեւ այսօր ալ չեն կրնար իրենց անհրաժեշտութիւնը փաստել։ Լաւ է սակայն, որ գոնէ միայն այսօր մարդիկ կ'ընդունին, այն ալ մութ հաշիւներէն տարուած, թէ այո՛, «աւելորդ պաշտօններ ըստեղծելու» ուղղութիւնը գլխաւոր թերին եղած է բարեգործականի կեդրոնին։

Մեր քննադատութիւններու մէջ «ծուռ հաշիւ» տեսնողները կրնա՞ն սակայն հաւատացնել, որ իրենք անկեղծ են այս խոստովանութիւններուն մէջ։ Պ. փափազեանի ակնարկները բարեգործականի մէկ երկու իրը թէ աւելորդ պաշտօններու մասին, առաջին իսկ աւթիւ կը մատնեն իր հոգիին բովանդակ գաղտնիքը։ Ցաւը այս մարդոց ո՛չ թէ աւելորդ պաշտօնեաներու մասին է, այլ այն թէ, ինչո՞ւ այդ պաշտօնները տրուած են անկուսակցականներու եւ ո՛չ թէ ռամկավարներու։ Աւելորդ է բացատրել թէ ինչո՞ւ ան մասնաւորաբար կը ծանրանայ պ. Բաշալեանի եւ գրադարանապետի մասին միայն, մինչ անդին բուն ռամկավար պաշտօնատարներ ալ կան, աւելի մեծ թոշակներով։

Իրենց ճիշդ քննադատութիւններու հետ, այս իրապէս ախտաւոր եւ գերագանգաղէս կուսակցական հաշիւները, պարզ է որ մէկ պատճառներն են, որ մղած են դիրենք երկու գնդասեղի հարուածներ հասցնել իրենց անախլական բարեգործականին։ Այս մտայնութիւնը կը մատնեն անոնք կեդրոնական վարչութեան կազմի մէջ հրաւիրուած պ. Պետրոս Հալաճեանը նկատելով, իբրեւ մէկը, որ դեռ պատերազմէն առաջ իր թէ «հակած» ըլլալ Դաշնակցութեան։

Հոս արդէն, երեւան կգայ այն իրական հիւանդոտ մտայնութիւնը, որու մասին ծանրացանք ասկէ առաջ. եւ որ մեր կարծիքով կը մնայ մշտնջենաւոր թշնամի բարեգործականին։ Այլապէս, մարդիկ ըստ էութեան չեն առարկեր պ. Հալաճեանի նման մէկու մը դէմ, որու «վարչական կարողութիւնը խնդրոյ առարկայ» չընելով հանդերձ, կ'ընդունին «թէ կարող եւ վարչագէտ անձ մըն է, այսուհանդերձ»։ Բայց սխալ կը գտնեն այս անձի ընտրութիւնը, նախ, անոր համար որ գտարիւն Ռամկավար չըլլալով, կրնայ «հակած» ըլլալ Դաշնակցութեան, երկրորդ՝ որ ի վերջոյ բարեգործականի մէջ նոր դէմք է։

Այս բոլորի հետ, պ. փափազեանը այնուամենայնիւ կը շարունակէ մօտիկնալ բուն վերքերուն։ Ան բարեգործականի ներքին կեանքի մէջ չի տեսներ ժամանակակից ոգին։ Ժողովական կարգը եւ ընտրութիւնները անհամապատասխան կը գտնէ մեր գարուն ընդունուած «սկզբունքներուն եւ ռամկավարութեան ոգիին»։ Դեռ աւելի առաջ երթալով, խորհուրդ կուտայ Հ. Ռ. Ը. Միութեան, որպէսզի անոնք «մի քիչ թօթափեն տիտղոսներու եւ անուններու շատ կարեւորութիւն ընծայելու մտայնութիւնը»։

Վերջացնենք հոս մեր այս ընդհանուր շարքը, թողլով ուրիշ ատիթի մը, գուտ գործնական մէկ քանի խնդիրներու քննութիւնը։

Ս. ԹԱՔՈՒԻ

ՍԱԼՄԱՍՏԻ ԵՒԿՐԱՇԱՐԺ

Հանգանակութիւնները ի նպաստ աղէտեալներուն

ԹԱՒՐԻԶ, 12 յունիս (ա.թ.)— Ալմաստի երկրաշարժի աղէտեալներու օգտին պարսկահայ գաղութներուն մէջ, ազգայ մարմիններ ու համայնքներ արդէն սկսած են կատարել հանգանակութիւններ։ Այսպէս թէհրանի մէջ արդ հանգանակութիւնը կ'անցնի 800 թումանի, նոր Ջուղա մէջ՝ 800 թումանի, Սուլթանապատ մօտ 160, Ռաշտ՝ 150, Շիրազ 161 թումանի եւայլն։

Շիրազի փոքրաթիւ հայ գաղութը, ձայտարապետ պ. Ս. Մ. Լիքեանի նախաձեռնութեամբ կատարած է ժողովրդական հանգանակութիւն մը, որուն գումարը 161 թումանն (տոլար) փոխադրեն թաւրիզի հայոց Առաջնորդարան։

— Պարսից կառավարութիւն Ալմաստի վերաշինութեան համար յատկացուցած է 300,000 թումանի (տոլար)։ Ըստ գումարի (նուիրատուներու ցանկը առնելու ձին կը իրատարակուի դ. էջի մէջ, խմբ.) մէջ կը մտնեն նաեւ հանգանակուած գումարները։

Ալմաստի պարսիկ գիւղերը դիմած են կառավարութեան, որ իրենց քանդուած գիւղերու վերաշինութեան յատկացուելիք գումարը դիմած է կառավարութեան, որ գիւղատէրերու առաջարկը նկատի չառնուի, վասնզի եթէ գիւղատէրը կառավարութեան դրամով իր գիւղերը վերաշինէ, այն ժամանակ, այդ նոյն գիւղերուն մէջ ապրող հողագործ գիւղացիները շատ ճնշուած վիճակի պիտի ենթարկուին։ Գիւղատէրերը ամէն րոպէ պիտի սպառնան զանոնք հեռացնել գիւղերէն։ Ասկէ զատ, գիւղատէրերը կրնան խանգարացնել վերաշինութեան յատկացուելիք դրամներուն մեծագոյն մասը, գիւղերը կը թողուն անհնամեայ եւ տուժողները պիտի ըլլան նորէն գիւղացիները պիտի ըլլան։

Անտարակոյս կառավարութիւնը պիտի պայքարի հողագործ գիւղացիութեան շահերը եւ նկատի պիտի ունենայ կարգ մը ազդեցիկ հարուստ եւ գիւղատէր պարսիկներու վատ նպատակներն ի չիք ճնշուած եւ հողագործ գիւղացիութեան։

Երկրաշարժը դեռ կը շարունակուի Ալմաստի մէջ եւ գրեթէ ամէն գիշեր, թոյլ կամ թեթեւ ցնցումներ տեղի կունենան։

Ժողովուրդը բացօթեայ կ'ապրի եւ կարծես վարժուած է այս վիճակին։ Ցնծկները տաք, իսկ գիշերները ցուրտ են։ Ամէն ընտանիք թեթեւ ծածկոց մը շինած է անոր տակ պատսպարուելու համար։

— Թաւրիզի հայ կանայք Միութեան նախաձեռնութեամբ, «Ջ. վերջերս նորէն հաւաքուած են հագուստներ, աղէտեալներուն բաժնելու համար։ Կանանց Միութիւնը իր կրցածին չափ, նախկին գրամական օգնութիւն ցոյց տուած է աղէտեալներուն։

— Թաւրիզի մէջ Ալմաստի երկրաշարժի աղէտեալներուն օգնելու համար կազմուած «Հայ հանգանակիչ ընկերակցութիւն»ը (Հ.Հ.Ը.) եւ պարսիկ նման անդամներ բաւական չափազանց գումար հանգանակելով, զրկած է կեդրոնական կառավարութեան։ Ներպատասխանի պատգամաւորները պարսից Խորհրդարանում (որոնց մէջ նաեւ Ջօրա խանի յաղիւեանը) իրենց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՀՀ նախագահի 2 [illegible]

[illegible] ՀՀ նախագահի [illegible]

[illegible] ՀՀ նախագահի [illegible]

[illegible] ՀՀ նախագահի

ԱՅՍՕՐ ԿԸ ԲԱՑՈՒԻ

ԵՂԲԱՐՔ ՍԱՊՈՆՋԵԱՆՆԵՐՈՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՆՊԱՐԵՂԷՆՆԵՐՈՒ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ԱՐԱՐԱՏ

39 RUE DE TRÉVISE, PARIS (9) MÉTRO CADET — ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐ — TÉL. PROVENCE 05-91

ներքին և արտաքին կացութիւնը, ինչպէս նաեւ բոլշեւիկեան կուսակցութեան վերաբերեալ կարգ մը ներքին խնդիրներ։

Ըստ Ստալինի, վերջին շրջանը կազմած է անկիւնադարձ մը՝ նպաստաւոր ժողովրդ. միութեան համար, տնտեսական նոր եւ շատ կարեւոր ճիգերով, — աննպաստ՝ դրամատիրական պետութիւններուն համար՝ տնտեսական անկումով։

Անցնելով ռուսական պարտքերու հատուցման խնդրին, Ստալին ըսաւ.—

Այս մարգին մէջ, մեր քաղաքականութիւնը շատ յստակ եւ հիմնաւոր է, եթէ մեզի վարկ բանան, պատրաստ ենք վճարելու մեր նախապատերազմեան պարտքերուն մէկ մասը, զանոնք նկատելով իբր վարկերու յաւելուածական տոկոսներ։

Այս կերպով, յեղափոխական բոլշեւիզմը նոր զիջումի մըն է որ կը պատրաստուի հանդէպ քաղքենի պետութիւններուն, և կարթ մըն է որ կը փորձէ հետեւիլ միջազգային դրամատիրութեան...։

Ցոյն կառավարութեան եւ սիւնտին միջեւ

Բուռն վէճ մը ծագեցաւ Աթէնքի կառավարութեան եւ եկեղեցական իշխանութեան միջեւ, Յունաստանի վանքերուն վերաբերեալ կալուածներուն եւ սեփականութեանց հաշուեյարդարին առթիւ։

Սինոտը նիստ պիտի գումարէ եւ կը կարծուի թէ պիտի որոշէ յայտարարել բոլոր աշխարհի եկեղեցական իշխանութեանց թէ «օրթոտոքս եկեղեցին ներկայիս կը հալածուի յոյն կառավարութեան կողմէ»։

Պոլիվիոյ յաղթական յեղափոխութիւնը

Պոլիվիոյ մայրաքաղաքը, ինչպէս գրեր էինք, ինկաւ յեղափոխականներու ձեռքը։ Դեռ յայտնի չէ թէ առժամեայ կառավարութեան հաստատման նախընթաց կռիւներուն մէջ, ի՞նչ է մարդկային կորուստներուն գումարը։ Միայն Լափազի եւ արուարձաններուն մէջ, 500ի չափ մեռելներ եւ հազարաւոր վիրաւորներ կան։ Վիրաւորուած է նաեւ նախորդ նախագահին՝ Սիլէզի կինը։

Յեղափոխական պետերը կ'ուսումնասիրեն երկիրը խաղաղեցնելու միջոցները։ Կարեւոր քաղաքներ առանց ընդդիմութեան, յանձնուած են յեղափոխականներուն։

Խռովայոյզ Սպանիան

Սէվիլի մէջ, 40,000 բանուորներու գործադուլը սկսաւ ցոյց տալ իր քաղաքական հետեւանքները։ Գործադուլը սկսած է տարածուիլ ճարտարարուեստի մեծ կեդրոններու մէջ եւս, ինչպէս Քորտու, Պիլպաօ եւ Մալակա, ուր ծանր բախումներ տեղի ունեցան բանուորներու և կառավարական ուժերու միջեւ։ Ոստիկանութիւնը ստիպուեցաւ զէնքի դիմել։ Մատրիտէն և կրնատէն եւս նման լուրեր կուգան։

Սպանիոյ ներքին նախարարութեան մէկ զեկոյցը կը յայտնէ թէ կառավարութիւնը անհրաժեշտ մանրամասնութիւնները քաղած է ներկայ յեղափոխական շարժման մասին և զայն զսպելու համար, պիտի դիմէ կորովի միջոցներու։

Սպանիոյ Աշխատաւորներու Ընդհ. Ընկերութեան կեդրոնը՝ գաւառի իր կազմակերպութիւններուն հրահանգեց զգուշանալ շարժումին որ եւ է մասնակցութիւն բերելէ։

Կը կարծուի թէ շարժումը կը ղեկավարէ համայնավար կուսակցութիւնը։

Հ. Յ. Դ. ՓԱՐԻԶԻ ԿՈՄԻՏԷՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԶԱԿԱՆ

Ժողովի կը հրաւիրէ բոլոր խումբերու ներկայացուցիչները այս ուրբաթ եւ 7 յուլիս երկուշաբթի իրիկուն ժամը 8.30ին Café Sourceի վերնայարկը, Rue des Ecoles.

Ա. Ե. Հ. Կ. ԽԱՉԻ ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

6 ՅՈՒԼԻՍ ԿԻՐԱԿԻ ՕՐ ՍԷՆ ՔԼՈՒԻ ԱՆՏԱՌԻՆ ՄԷՋ

Հովանաւորութեամբ Պ. ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ

Կը նախագահէ Ա. ՋԱՄԱԼԵԱՆ

Բանախօսութիւն, երգ, պար, անակնկալներ

ԵՐԵԿՈՅԹ — ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Սթանոզի Հայր. Միութեան կողմէ 5 յուլիս Շաբաթ իրիկուն ժամը 8էն մինչեւ առաւօտ Harolah սրահներուն մէջ, 3 Rue Lavieuville, Nord Sud, Abbesses։ Գեղարուեստական բաժին։

ՄՕՏ ՕՐԷՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄՆԻ

ՍՊԱՆԵՐԷՆԷ ՀԱՅԵՐԷՆ

ԱՌԱՋԻՆ ԲԱՌԱՐԱՆԸ

ՅՕՐԻՆԵՑ

Յ. Ս. ԱՅԱՑԵԱՆ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՄ

5 ՅՈՒԼԻՍ ՇԱԲԱԹ ԳԻՇԵՐ, ԺԱՄԸ ՃԻՇԴ 9ԻՆ ՍՕՍԻԷԹԷ ՍԱՎԱՆԹԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

8 Rue Danton, PARIS — Métro: Odéon եւ St. Michel

Մեծ պատրաստութեամբ կը բեմադրուի Փարիզի մէջ առաջին անգամ ըլլալով

ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ

ԱՐՑՈՒՆՔԻ ՀՈՎԻՏԸ (4 ԱՐԱՐ)

(ԱԶԳԱՅԻՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

Մասնակցութեամբ՝ Տիկ. Ս. Ալիքսանեանի, Օր. Ակահիտի, Տիկ. Լաթիֆեանի եւ Պ. Պ. Դմբէթեանի, Ա. Կոթիկեանի, Լաթիֆեանի, Սարիմի, Դրիգոր Վահանի, եւայլն։

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ *կը կատարէ «ԱՍԼԱՆ»ի դերը*

ԳԻՆԵՐԸ՝ 20, 15, 10 եւ 7.50 ՖՐԱՆՔ

Յոմսերը ապահովել *Կավռշի* խմբագրատունէն՝ 208bis rue Lafayette եւ բոլոր հայկ. ճաշարաններէն

Ծախու է քիչ գործածուած «Տիւաման» վ... ճառանիշով էկ մէթր երկ... բութեամբ թիթեղաժի մե... նայ մը։ Կը տրանձենք տալ... ցնել պարզ եւ ֆանթէզի հիւ... ուածեղէններու շինութիւնը։ Դի... մել՝ Պ. Յակոբ Պէհիտեանի ... մէն օր (բաի կիրակիէ) ... Rue Tourtille 4րդ յարկ, Փ... րիկ։ Մէթրօ՝ Պէլվիլ։

IMPRIMERIE - MASSIS - ÉDITION
208bis, Rue Lafayette Paris (...
Le Gérant H. STEPHAN

Հ. Ց. Դ.

ԳԱՒԱՌ

ԼԻՈՆԻ Պատ. միութեան ընդհ. ժողովը՝ այս հինգշաբթի իրիկուն, ժամը 8.30ին Դրադարանի սրահը։ Կարեւոր օրակարգ։

ՇՐԱՊԱՐԱԿ ԵԼԱՒ

ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆԻ

Նոր գիրքը

ԲԱՆԱՍՏԵՂԾ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ (իր գրական գործունէութեան քառասնամեայ յոբելեանի առթիւ)։

Դիմել՝ L. Kévonianի, 235 Fbg. St Martin։ Գինը՝ 5 ֆրանք, փոստը ծախք չկայ

ՅԱՆԿ

ՍԱԼՄԱՍՏԻ ԱԼԷՅԵԱԼՆԵՐՈՒՆ

Ի ՆՊԱՍՏ ՇՐԱՋԻ ՄԷՋ

ԿԱՏԱՐՈՒԱԾ ՀԱՆԴԱՆԱԿԱՒՐԹԵԱՆ

Հայկ մալթոնեաս 150 դրան, Ա. Գիւլզարեան, ցէը եւ տիկին Մարտիրոս Սարգիսեան, Ս. Մելիքեան, Մ. Քրաչեան, Դ. Մինասեան եւ ժօլէֆ Նէսիմ 100ական դրան, Տիկին Մ. Սարգիսեան, Վ. Քէնտիրեան, Տիկին Մ, Կարապետեան եւ Պ. Տէօքմէճեան 50ական, Թ. Ադաճաբէկեան 40, ձօրձ Տէր յովսէփ Գէորգեան, յովհ. խան Պաբախանեան, Տօքթ. Գ. Մանաւազ, Ա. եւ Պ. Ֆրէնդեան, Ոմն, յովհ. եւ Տիկին Արժանեի 30ական, Կ. Կարապետեան, Մ. Մարտիրոսեան, Յ. Կարապետեան, Ֆուատ Կարիքեան, Թ. Նալբանդեան, Լ. Կարիքեան, Մ. Գասպարեան, Տիկին Լ. Ներսէսեան, Տիկ. Եղիսաբէթ 20ական, Սայիտ Բօղոս խան, Ոմն 15ական, Մ. Թադէոսեան, Ս. Դաւիթեան, Ա. Տրամբալի, Ա. Ադամեան, Գ. Դրոբեան, Մ. Մրքայէլեան, Մ. Կարապետեան, Ա. Թադէոսեան, Բժ. Տ. Ադաջանեան, Էմիլ Գլանդեան, Ս. Գասպարեան, Յ. Ասատուրեան. Ն. Ասատրեան, Տիկին Մ. Սահակեան եւ Օր. Վ. Գլանդեան 10ական, Գ. Կարապետեան 6, Ա. Կարապետեան, Տիկին Սառա. Տիկին Շ. Վազգարեան, Բէկկար, Խաչատուրեան եւ Օր. Թօգա 5ական, Տիկին Մէրի եւ Օր. Եղիսաբէթ, 2ական դրան։ Ընդհանուր գումար 1610 դրան։

Ծախու է Goussainvilleի մէջ տուն մը որ ունի 2 սենեակ, գետնայարկ եւ մառան։ Պարտէզով միասին 400 քառ. մէթր։ Մանրամասնութիւններու համար դիմել Պ. Mauriceի, 220 Rue Pierrot, Goussainvilie. *Հոգեկառք՝* Gare du Nordէն։

Կ'ՈՒԶՈՒԻ

— Կը փնտռուի Էնկիւրի նահանգին Ստանօս գիւղէն Յակոբ Զօպանեան 27—28 տարեկան, հօր անուն՝ Պօղոս, մօր՝ անուն Մարիամ։ 1920ին կը զանուէր իր մեծ մօրը քով Մարսէյլ։ Այդ թուականին մեկնած է Դամասկոսէն Պոլիս երթալու համար։ Կիլիկիոյ ճամբուն վրայ տեսնուած է հայրենակիցի մը կողմէ։ Իր մասին ստոյգ տեղեկութիւն տուողին 1000 ֆրանք նուէր։ Իմացնել իր եղբօրը Դրիգոր Զօպանեանի 31 Rue de Fossé-Issy-les-Moulineaux (Seine) France կամ թերթիս վարչութեան։

Կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել։

— Կը փնտռեմ Քէմախի վերի բագառիճէն խոսրով իլպիկեան եւ գաւակները Ղազարոս, կաթիկ, Ագատուհի, եւ իօրեղբօրդուհւոյսզաւակները՝ Ալագ, Մատթէոս եւ Ծագիկ, որոնք աքսորուած են 1915ին։ Իմիջի դէպքէն ամիս մը առաջ մալաթիայէն լուր առնուած է աղջիկը դաճիկէն։ Անկէց ի վեր լուր չկայ։ Իրենց մասին ստոյգ տեղեկութիւն տուողին 500 ֆր. նուէր, իմացնել՝ H. Hougasian, Mazagan: Maroc: կամ «Յառաջ»ի։ Կը խնդրուի սուրիահայ եւ յունահայ թերթերէն արտատպել։

Կ'ուզուի սպասուհի մը տարեց այրեւկնոջ համար, սնունդ եւ պահկելիք տեղ։ Դիմել Պ. Մագրմեանի, 22 Rue d'Hauteville, Paris.

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ

96 r. Rivoli, *մէթ. Շաթլէ։ Արմատ.* եւ նոր մեթոտով դարմանում արանց եւ կանանց մորթի, արիւնի եւ վէներ. հիւանդութեանց (ֆրանկախտ, ջերմատիզ.) եւ վարիսի։ Մասն. լապօռատուռ։ Ինչեմիա եւ արագ խորհրդակութիւն. ամէն օր 9—12, 2—8 կիրակի 9—12,

ՄԻՄԻԹ

Անուան արժանի է միմիայն այն սիմիթը որ պատրաստուած է A. LA GARDE, 1 Rue St. Lazare, PARIS (9e) Nord Sud, N. D. de Lorette. Téléphone Trudaine 95.21

WAGRAM AUTO
73 Ave. de Wagram
63 Ave. Gde. Armée
149ter Bd. Villette
Ամբողջ դասընթացքը՝ սկսեա 100 ֆրանքէն։

EMPIRE Միգիք-Շօլ՝ 37 Av. Wagram

ՅԱՐԳԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

Եթէ կ'ուզէք բերնի համով մաքուր եւ անարատ սուրճ խմել, դիմեցէք հռչակաւոր

CAFÉ SULTANի

Ս. ԹՈՐՈՍ (Թէմախցի)

92 Rue d'Angoulême — Métro: Couronne, Tel. Ménil. 56—06

Ամենավերջին դրութեամբ մեքենաներով օժտուած մեր վաճառատան մէջ պատրաստուած սուրճը կը գոհացնէ ամէն նրբաճաշակները։

Հոս տեսակներ, գիները անմրցելի, փորձեցէք անգամ մը եւ պիտի տեսնէք տարբերութիւնը ձեր գործածած եւ մեր պատրաստած սուրճին։ Կ'ընդունինք ապսպրանքներ արուարձանէն եւ գաւառներէն։ Փոստաքաշներու կը ղրկենք գիներու ցանկը, մանրաքանակ եւ մեծաքանակ վաճառում։

ՀԱՒԿ. ԲՈՒԺԱՐԱՆ — POLYCLINIQUE de BELLEVILLE

ցէր եւ ցնօրէն՝ Տ Օ Քթ. Գ Ր Գ Ո Յ Ե Ա Ն

29, Rue (Place) des Fêtes, Paris, XIX. Tél. Nord 96-61

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Գշ., Երկ. եւ Շաբաթ օրերը ժամը 4—6։ Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երեք. եւ Շաբաթ օրերը ժամը 2—3։ ԱՏԱՄՆԱԲՈՅԺը ամէն օր ժամը 9էն 19։



ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ ԲԱՑՈՒԱԾ Է

Կ. ՅԱԿՈԲԵԱՆԻ

ՄԱՍԻՍ ԳՈՀԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

57A Rue Nationale, MARSEILLE

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ PRINKIPO

VERTANÈS MAHDJOUBIAN et A. ...ITCHEN

24 Rue des Carmes, Paris (5) Մէթրօ՝ P...ace Maubert

Տնական ոճով պատրաստուած արեւելեան և ազգային ճաշեր տեղական կերակուրներ ամէն ժամ։ Մասնաւոր կերակուրներ պատուիրուած տէօնէր-քէյթրինկ։

Այցելեցէք, համոզուելու համար։ Հարմարութիւն, ժողովներու, հաւաքոյթներու եւ այլնի համար տրամադրելի սրահ։

ՀԱՅԵՐՈՒԻ ԺԱՄԱԴՐԱՎԱՃԱՌԸ

ՃԱՇԱՐԱՆ ՖԼՕՐԻԱ

61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)

Մէթրօ Օտէոն եւ Սէն Միշէլ — Հեռաձայն Littré 38—43

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ

ԲԱՑՈՒԱԾ Է

ԳՐԱՏՈՒԻՆ ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ՓԱՐԻԶԻ ԿԵԴՐՈՆԸ (ֆարթիէ Լաթէն) 51 Rue Monsieur-le-Prince
Հեռաձայն՝ Danton 88 65

ուր պիտի գտնէք ամէն տեսակ հին ու նոր գիրքեր, Հայերէն, ֆրանսերէն, անգլիերէն եւ այլ լեզուներով, գրական, գիտական դպրոցական, վիպական եւայլն, նաեւ ամէն լեզուով պարբերականներ։

ՀԱՍԱՆՕ ԵՆ ԲԱՓՓԻԻ ԲՈԼՈՐ ԳՈՐԾԵՐԸ

Արտասահմանէն եւ գաւառէն եղած ապսպրանքները օրը օրին կը որկուին։

ԳՐԱՏԱՆ ԿԻՑ ԲԱՑՈՒԱԾ Է ՆԱԵԻ ԿԱԶՄԱՏՈՒՆ ՄԸ

Բոլոր գրավաճառները, հրատարակիչներն ու հեղինակները կրնան դիմել սեւէ գործի համար՝

LIBRAIRIE H. SAMUEL, 51 rue Monsieur-le-Prince, Paris VIe

ՀԱՐԱՉ

LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԲԱԺԱՆԵՑԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70ֆ.	140ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԻՏԱԼԻԱ			250 ֆրանք
ԱՄԵՐԻԿԱ		6 տլ.	10 տլ.
ԵՒՐՈՊԱ		100 ֆ.	200ֆ.

"HARATCH"

Directeur-Propriétaire SCH. MISSAKIAN
Խմբագիր՝ Տ. ՄԻՍԱՔԵԱՆ

Rédaction et Administration
Խմբագրութիւն եւ Վարչութիւն
235, Faub. St.-Martin
PARIS (10e)
MÉTRO: LOUIS-BLANC OU JAURÈS
Téléphone: NORD 67-23
R. C. SEINE 376.266

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 3 ֆրանք

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
2
ՅՈՒԼԻՍ
1930
2 JUILLET 1930

Զ. ՏԱՐԻ Թիւ 1303

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ՇՐԿՈՒ ԽՕՍՔ

ԹՐՔԱԿԱՆ ՍԱԴՐԱՆՔՆԵՐԸ

Էնկիւրիի թրքական գործակալութենէն առնելով, ֆրանսական երէկուան թերթերը կարգ մը լուրեր հաղորդած էին քրրական կոմիներու մասին: Թրքական գործակալութիւնը աշատած էր, որքան կարելի է, շարժումը մութ ձեւով ներկացնել, որպէս զի գաղափար մը չկազմուի անոր ծաւալի վրայ:

Այս մտքութեան հակառակ, թրքական հաղորդագրութիւնը րոշակի կը խօսի պարսկական սահմանագլուխէն անցնող եղապետներու, ինչպէս նաեւ շարժման յետաշրջական բնոյի մասին:

Այդ կցկտուր տեղեկութիւններէն կ'երեւի որ կոմիները կը արունակուին Արարատի բարձրունքներուն վրայ, և թէ ապըստամբութիւնը ծաւալած է Զիլանի շրջանը եւս, ուր կը գործէ այտարանցի աշիրէթը: Այսպիսով, եթէ հաւատանք թրքական եղեկութեան, որ այդ սահմանէն անդին չէ ծաւալած շարժումը, նորէն լայն է շրջագիծը, որու մէջ կը մտնեն Արարատի, Ալաշկերտի, Ալատաղի, Արճէշի, Մալազկերտի և Աբաշայի շրջանները:

Կոմիներու և անոնց հետեւանքներու մասին, այսօր որոշ բան մը չենք կարող ըսել, մինչեւ չհասնին ճշգրիտ մանրամասնութիւնները: Սակայն, ի վիճակի ենք ժխկացնելու թրքական դիւանագիտական սադրանքները, և ցոյց տալու էնկիւրիի գործակալութեան մտահոգութիւններու ներքին աստառը:

Երբ թրքական գործակալութիւնն առանձնապէս կը շեշտէ պարսկական սահմանագլուխէն անցած ձիաւոր խումբին պատգան, պարզօրէն այդ դիւանագիտական ակնարկութեամբ ուզէ զգուշացնել պարսիկ կառավարութիւնը, անոր չեզոք իրքը կասկածի տակ առնելով: Ասկէ առաջ թրքական կառավարութիւնը մեծ չանքեր թափեց անվստահելի ներկայացնելու սահմանագլուխի վրայ տեղաւորուած քիւրտերը, ու ուզեց ընեցնել Պարսկաստանի օժանդակութիւնը՝ ճզմելու Արարատի ապստամբութեան օջախը: Բարեբախտաբար, Պարսիկները շուով ըմբռնեցին թրքական դաւադրութեան իմաստը և հասան միջոցին իրենց չեզոքի դիրքին մէջ:

Բացայայտ է որ Հայտարանցի ձիաւորները Արարատի պատամբ շրջանէն անցած են Զիլան: Բայց թրքական գործակալութիւնն անհրաժեշտ գտած է բսելու որ անոնք Պարսաստանէն անցած են թրքական սահմանը: Այս ակնարկութեամբ, Թուրքերը յոյս ունին անվստահելի ներկայացնելու արսկական սահմանի երկայնքը տարածուած քրտութիւնը և այս պարսկական կառավարութեան և մղելու այս վերջինը խստ միջոցներ ձեռք առնելու փախստական քիւրտ յեղափոականներու հանդէպ:

Աւելի հետաքրքրական է էնկիւրիի միւս տեղեկութիւնը: ըր թէ «բռնուած փաստաթուղթերէն կ'ապացուցուի թէ այս ւազակախումբերը մտադիր են յետադիմական շարժում մը տեղծել»:

Քէմալական նոր յանկերգ:

Քրտական ազատագրական շարժումը, երբ լայն ծաւալ կը տանայ, Քէմալի կառավարութիւնը «յետադիմութեան» ուրւականը, բոլշեւիկեան սիստէմով, երկրի մէկ ծայրէն միւսը րջաբերութեան կը դնէ, սարսափի մատնելու թուրք այն ընդիմադիր տարրերը, որոնք օգտուելով քրտական ապստամբներէն արող էին գլուխ բարձրացնել իշխանութեան դէմ: Միւս կողմէ, թրքական ճարպիկութիւն մըն է «յետադիմական» մկրտելու քրտական ազատագրական շարժումը արտասահմանի աչքին, որպէս զի ճնշուած ազգի մը կորովի պայքարները աղաքական բնոյթ չստանան, և տերի ունեցած արիւնահեղութիւնները հանրային կարգը պահպանելու վերագրուին:

Շեյխ Սայիտի ապստամբութենէն մինչեւ այսօր, քրտան շարժումները ճնշուեցան անխնայ կոտորածներով և քրրական թերթերը, խօսք մէկ բրած, «չէրիաթ»ի և յետադիմութեան պատմութիւններ հիւսեցին տեղի ունեցած դէպքերուն և դէմքերուն շուրջ, գիտակցօրէն, մոռացութեան տալով շարժման ազգային նկարագիրը: Բայց Թուրքիոյ ներքին և արտաքին նկատումները շատ անծանօթ են քիւրտերուն, որոնք ցուած են ատելութեամբ և կիրքով հանդէպ թուրք ազգին և ղեութեան: Ազգայնական մոլեռանդութեամբ մը (առանց կրօական մոլեռանդութեան) քիւրտերը սկսած են հարուածել րքական պետական շէնքը, որ Արեւելեան Նահանգներու մէջ ժողովին խարխլած է քիւրտ ազգի զարթնումով:

Թրքական տեղեկութիւնը չի մոռնար իլուր աշխարհի յտնելու թէ ժողովուրդը հանդարտ է, և թէ «ապստամբները» չանան սպառնալիքով զանոնք ոտքի հանել: Ի հարկէ այս ան-բայց սուտերուն հաւատացողներ կրնան գտնուիլ: Սայն իրենք թուրքերը, որ լուր հնարողներն են, և քիւրտերը, հրդեհի մէջն են, երբեք չեն հաւատար անոնց:

Թրքական ազդիւրներէն բխած այս լուրերը ցոյց կուտան, կառավարութիւնը կը գտնուի խիստ լուրջ շարժումի մը ղին: Տակաւին վաղաժամ է խօսիլ քիւրտիստանի համատած ապստամբութեան մը մասին, սակայն թուրք կառավաութեան մտահոգութիւնները մեզ կը մղեն մտածելու նման ւանականութեան մը վրայ:

Կ. Ս.

ՄԱՄՈՒԼ

ՄԵՐ «ՊԱՅՔԱՐԻՆ ԷՈՒԹԻՒՆԸ»

Խմբագրական շարքէ մը ակէ «Յուսաբեր», ի միջի այլոց կը գրէ. (յունիս 16).

— «Յամակաւար «կուսակցութիւն»ը անվարանկը յայտարարէ.

«Մեր քաղաքականին չի կրնար արժանանալ դաշնակցական դպրոցը, դաշնակցական գրականութիւնը, դաշնակցական հանդէսը, դաշնակցական նուիրատաւութիւնը, դաշնակցական «Համազգայինը», կամ դաշնակցական կեղծ կարմիր խաչը...»:

— Իսկ «դաշնակցական» Հայաստա՞նը...

Ան նոյնպէս այդ քաղաքականին անկարող է արժանանալ. բազմակէտը ձիշդ այդ իմաստը ունի. աներեւոյթ ուժ մը ամկաւար գրիչը սանձած եւ թոյլ տուած չէ նաեւ այդ բառերը գրելու: Սակայն որոշ է լուութեան իմաստը: Ու կեղծիք պիտի ըլլար քաղաքներ ջանդիսանալ «դաշնակցական» Հայաստանին, միաժամանակ կուռելով դաշնակցական բովանդակ գործունէութեանը դէմ: Ո՛չ, ամբողջովին «կուսակցութիւն»ը ոգիով, մտքով ու մարմնով դէմ է «դաշնակցական» Հայաստանին. բոլշեւիկեանին՝ կողմնակից է, իսկ իակառակ այն հայրենիքին, ուր դաշնակցականը պիտի իշխէ:

Այսպէս կը հրահանգէ ամկավարին իր մղած «պայքարին էութեան»:

Մենք պայքար չունինք յանուն պայքարի:

Մենք իշխանութեան տենչ չունինք յանուն իշխանութեան:

Մեր պայքարը նպատակի մը կը ձգտի եւ իշխանութիւնը այդ նպատակը իրագործելուն կը ծառայէ:»

ՀՌԵՆՈՍԻՒՄ ՊԱՐՊՈՒԻՄԸ

Հռենոսիոյ գրաւումը դաշնակիցներու կողմէ վերջ գտաւ առջի գիշեր եւ գրաւման ֆրանսական զօրքը պարպեց վերջին շրջանը, Հռենոսի ձախ ափը:

Վերսայլի դաշնագրով իբր գերման պարտքերու հատուցման երաշխաւորութիւն գրաւուած էին Քոլոնեի, Քոպլենսի եւ Մայեանսի շրջանները, որոնք պիտի պարպուէին առաջին շրջանը 1925 յունուար 10ին, երկրորդը՝ 1930 յունուար 10ին, իսկ երրորդը 1935 յունուար 10ին: Գրաւումը ուրեմն վերջ պիտի գտնէր, ըստ դաշնագրի, հինգ տարի յետոյ:

Գերման Թերթերը այս առթիւ, կը հրատարակեն խանդավառ գրութիւններ, իսկ ֆրանսական կարգ մը Թերթեր ժտաիոգութիւն կը յայտնեն եւ դառն խորհրդածութիւններ կ'ընեն:

ՍՊԱՆԻՈՅ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Կառավարութիւնը կ'երեւի թէ յաջողած է մեծ մասամբ զսպել յեղափոխական շարժումը, որ Սպանիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ ծայր տուաւ գործադուլներով: Սակայն տեղ տեղ դրգռութիւնները կը շարունակուին: Պիլպաօի մէջ, բազմաթիւ յայտարարութիւններ ցրուեցան, հրաւիրելով բանուորները որ մասնակցին ընդհանուր գործադուլին եւ մեծ ցոյցի մը: Նորագոյց շէնքի մը մէջ երկու ձևնաւորուժեր պայթեցան: Շէնքը քանդուեցաւ ամբողջովին:

Բանուորները երբ կը փորձէին կնջնել հանրակառքը, ոմտիկանութիւնը միջամտեց. երկու կողմէ կրակ բացուեցաւ: Մէկ քանի հատ ոստիկաններ ձերբակալուեցան:

ՕՐԸ ՕՐԻՆ

«Արեւելեան սահմանի աւազակները»

ՄԱՔՐՈՒԵՑԱՆ»

Այսպէս կը խորագրէն Թուրք Թերթերը Արարատի Թուրքեքիւրտ բախումները եւ լուր հաղորդելու իրենց յատուկ եղանակով կը յայտնեն.—

Ֆրանսական եւ գերման կարգ մը Թերթեր, Թէհրանէն լուր առած են Թէ Թուրքիոյ կառավարութիւնը Արարատ լերան վրայ զինուորական շարժման սկսած է, այնտեղ միացած աւազակախումբերը ի սպառ բնաջնջելու համար: կառավարութիւնը 10 հազար զինուոր հանած է Արարատ լեռը ուր առաջին առիթով իսկ աւազակներուն հանդիպած են: Պարսիկ կառավարութիւնն ալ, զինուորական միջոցներ ձեռք առեր է որպէսզի աւազակները Պարսկաստան չփախչին:»

«Ագշամ» այս լուրը հրատարակելով կ'ըսէ Թէ էնկիւրիէն դեռ չէ հաստատուած եւ ճշդուժի կարօտ լուր մըն է: Միայն Թէ, կ'աւելցնէ յիշեալ Թերթը, յայտնի է որ Թէեւ Արեւելեան նահանգներուն մէջ անդորրութիւնը ամբողջովին ապահովուած է, բայց հաւանական է որ Արարատի նման բարձր լերան վրայ դեռ աւազակախումբերու մնացորդներ գտնուին:

Այս լեռը իր ժեռուտ եւ անմատչելի ծերպերուն շնորհիւ, շատ նպաստաւոր Թաքստոց մըն է աւազակներու, որոնք գաղտնօրէն շրջակայ գիւղերը կ'իջնեն եւ հետապնդուժի միջոցին ալ դիւրութեամբ կրնան պարսկական սահմանն անցնիլ:

«Եթէ, կը շարունակէ «Ագշամ», եւրոպական Թերթերու մէջ հրատարակուած լուրը ճիշդ է, Արեւելեան Անատոլուի մէջ միացած աւազակներու այս որջը մաքրելու յաջողած է կառավարութիւնը»:

Պուլկար ընդդիմադիրներ կը շարժին

Պուլկարիոյ ոստիկանութիւնը գրաւեց մայրաքաղաքին եւ գլխաւոր քաղաքներու մէջ փակցուած յայտարարութիւններ, կառավարութեան քաղաքականութիւնը եւ ժողովուրդին ուշադրութիւնը կը հրաւիրէ վտանգին վրայ որկրբխիերկրին վատ կացութենէն:

Յայտարարութեան հեղինակները կը մատնանշեն երկրին ներսը՝ ազգային ճակատի վրայ միութեան պակասը, եւ երկրէն դուրս՝ ազգ. շահերու պաշտպանութիւնը ստանձնող մարդոց անկարողութիւնը: Ցիշելէ յետոյ Թէ կառավարութեան տկարութիւնը կը նպաստէ պատակտումներու, յայտարարութիւնը կը յանձնարարէ կարգ մը արմատական բարեկորոգումներ՝ խորհրդարանական եւ հանրային գանազան հաստատութիւններու վերաբերեալ:

Յայտարարութիւնը կը վերագրուի «Լիկս» պարբերաթերթին շուրջ հաւաքուած քաղաքական խմբակի մը, որուն կը մասնակցին նախկին նախարարներ Կէորկուլոֆ եւ Բագանոֆ: Այս վերջիններս համամիտ չէին որ Ցանքօֆ մտնէ դահլիճին մէջ, որուն կը մասնակցի նաեւ Լիաբչեֆ:

Ստալին կը ճաւէ

Համայնավարներու ընդհ. քաղաքականութեան մասին իր զեկոյցին մէջ, Ստալին բացատրեց բոլշեւիկներու դերը: Իբր անմիջական աշխատանք՝ բոլշեւիկեան կուսակցութիւնը պիտի ջանայ Խորհրդային Միութեան մէջ ապահովել ճարտարարուեստի կանոնաւոր ճիւղաւորումը, Ուրալի եւ Սիպերիոյ մէջ ստեղծել հանքածուխի եւ մետաղագործութեան խարիսխներ, կազմակերպել երկրագործութեան գլխաւոր ճիւղերը, կռուիլ պաշտօնակալութեան դէմ, բարձրացնել աշխատանքի արտադրական կարողութիւնը, բարելաւել պարենաւորումը եւ այլն: Գծելէ յետոյ հոյակապ եւ Թերեւս այս պատճառով ալ անիրագործելի եւ կանխաւ սնանկութեան դատապարտուած տնտեսական գործունէութեան մը ծրագիրը, Ստալին անցաւ բոլշեւիկ կուսակցութեան ներքին գարգացման.— կուսակցութեան լէնինեան գիծը ամէն ճակատի վրայ պարտութեան կը մատնէ բոլոր Թեքուսիները եւ տրոցկիզմի եւ աջ Թեքման դէմ իր պայքարին մէջ ալ յաղթական դուրս պիտի գայ: Ոչ ոք կ'ուրանայ այլեւս Թէ կուսակցութիւնը անքան ամրօրէն չէր հաւաքուած կեդր. կոմիտէին շուրջ, որքան է այսօր»: Անշուշտ Ստալինի ճառը ընդունուեցաւ խանդավառ ծափերով:

∴ Բոլշեւիկեան հայադումարին մէջ, Ստալինի ճառէն յետոյ, վիճաբանութիւնները սկսան անոր տեղեկագրին շուրջ: Բոլոր ճառախօսները յայտնեցին իրենց հաւանութիւնը կուսակցութեան ընդհանուր ուղղութեան, որուն նպաստաւոր արդիւնքները ցոյց տուին տնտեսական եւ մշակութային ժարդին մէջ՝ յաջողութեան փաստերով: Բոլոր ճառախօսները պահանջեցին որ ընդդիմադիր հին պետերը վերջնական յայտարարութիւններ ընեն իրենց ներկայ դիրքին մասին:

Ուկլանով, կուսակցութեան նախկին քարտուղար եւ աջ ընդդիմադիր պետերէն, յայտնեց Թէ պատրաստ է գործելու կուսակցութեան հետ եւ ուրացաւ հատուածական աշխատանքներու իր մասնակցութիւնը:

Խօսք առին նաեւ Տոմսկի եւ Ռիկով:

(Լուրերու շարունակութիւնը կարդա՛ Գ. էջ)

ՀԻ. Յ. Դ.

ՓԱՐԻԶԻ ՏԱՆ՝ ՀԱՄԱՐ

(Հանգանակութիւն եւրոպայի կեդր. կոմիտէի)

Յանկ 20	
Արշաւիր Մինասեան	1000
Լեւոն Մօգեան	200
Գերասիմ Բալայեան	150
Ժորժ Շէրպէթճեան	150
Մկրտիչ Աշճեան	100
Նուպար Այատինեան	150
Յակոբ Երանեան	150
Կարօ Երանեան	150
Բիւզանդ Աճէմեան	150
Բարունակ Գումրուեան	150
Թաչիկ Մկրտիչեան	150
Գումար	2500
Նախորդ գումար	20,470
Ընդհ. գումար	22,970

ԴԷՊԻ ԹԱՂԱՂՈՒԹԻՒՆ...

Իտալիա կէս միլիառ լիռ նոր վարկ մը յատկացուց երկրին պաշտպանութեան պէտքերուն:

Իսկ ճափոն իր կարգին ետ չմնալու համար սպառազինման ժամերին մէջ, որոշեց կարեւոր նաւորդական կազմակերպութիւններուն մէջ, շատցնել մարտանաւերու եւ սաւառնակներու թիւը, թեթեւ յածանաւերուն մէջ վերջին նորութիւններ մտցնել եւ ծովային թընդանօթներու կատարելագործումը ուսումնասիրել,

21 ՕՐ ՕԴԻՆ ՄԷՋ

Ամերիկացիօդանաւորդ՝ Հուն-տէր եղբայրները որ Հորսը մէկ յունիս 11ին օդը բարձրացեր էին, յաջողեցան կոտրել տեւկունութեան եւ տեւողութեան մրցանիշը, ցարդ օդին մէջ մնալով աւելի քան 450 ժամ 0. դանաւորդները ուտելու եւ վառելանիւթ կը ստանան օդին մէջ, ուրիշ օդանաւի մը միջոցաւ: Մտաղրութիւն ունին օդին մէջ մնալու 21 օր, այսինքն 504 ժամ:

ԵՒՐՈՊԱՅԻ ՄԱՔՈՒԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Այս միջոցիս, Փարիզի մէջ տեղի կ'ունենայ խորհրդակցական ժողով մը, որ նպատակ ունի ուսումնասիրել Եւրոպայի մաքսային միութեան հարցը: Ժողովին կը մասնակցին 14 երկիրներ: Ներկայացուցիչ ղրկած են նաեւ երկրագործական, ճարտարարուեստական մեծ կազմակերպութիւններ:

ԱՆԴՈՒՆԴ Ի ՎԱՐ

Տանեւսիհնգ օրուան մէջ, երկրորդ անգամն է որ Կրընոպլի անդունդները կը հմայեն ու կը խլեն լերան սիրահարները: Կիրակի օր, Կրընոպլի շրջակայ Պէլտոնի բարձունքէն սայթաքեցան եւ 150 մեդր խորունկութեամբ անդունդն իյնան 5 անձեր, որոնք մագլցումի փորձ կը կատարէին՝ պարանով իրարու կապուած: Անոնց երկուքը կին՝ ծանրապէս վիրաւորուեցան:

Մօտերը գտնուող շրջիկներ օգնութեան փութացին եւ զանոնք փոխադրեցին հիւանդանոց, շատ ծանր վիճակի մէջ:

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ

ՄԵՆԱՇՆՈՐՀԻ ՁՆՁՈՒՄԸ

Արեւելեան բոլոր երկրների մէջ, ուր Հականգլիական ցոյցերը լուրջ կերպարանք ստանում,—մի տեղ բողոք, մի տեղ գործադուլ, ուրիշ տեղ սպառնալիք կամ ահռելի ընդհարումներ,—մեկ մօտ ընդհակառակը շաբաթէ շաբաթ ուժեղանում են անգլիասէր տրամադրութիւնները: Անգլիական պարսկասէր քաղաքականութիւնը մինչեւ իսկ հրապարակային շնորհակալութիւններ է ընդունում տարբեր խաւերից, մասնաւորի տարբեր օրգաններից ու խորհրդարանից: Մի քայլ եւս եւ թուում է պիտի լսենք «կեցցէ՛ Անգլիան» բացականչութիւններ այնպիսի բերաններից, որոնք տասնեակ տարիներ ոչ մի առիթ չեն փախցրել Ալպիոնը նախատինքի սիւնին գամելու:

Իր ազգային շահերին խորապէս գիտակից այս երկիրը, փոխանակ իր հին լծակը դէմ սարքած սալին, փոխանակ Հարեւան Հնդկաստանի, կրօնական եգիպտոսի կամ Հեռաւոր Եւրասազէմի անարիւն կամ արիւնալի քայլերը ողջունելու, ի ցաւ դաւադիր Ռուսիոյ եւ Հակառակ վերջինիս օրօրած սիրուն երազների, Արեւելքում ստեղծած կնճիռներից Հեռու, կարողանում է չտեսնուած Հեռատեսութեամբ օգտագործել երբեմնի յարձակողական Անգլիոյ բարեացակամութիւնը, նրանից կորզելով անցեալում կորցրած իր այս կամ այն իրաւունքը:

Պատեհութիւնը եզակի է, բայց ոչ աննախընթացութեան պատեհութիւններ ներկայացել են մ'օտաւոր անցեալում: Վերցնենք համաշխարհային պատերազմի օրերին ստեղծուած նպաստաւոր կացութիւնը, որից սակայն Պարսկաստանը մազաչափ անգամ օգտուելու ընդունակութիւն չյայտնաբերեց. մինչդեռ անգլօ արեւելեան փոխ յարաբերութիւններից ծնած ու զարգացող ներկայ վիճակից լաւագոյն կերպով օգտուում է նոր Պարսկաստանը, օրի օրին քաղելով պալատական նախարար թէ՛մուրթաշի Հայրենասէր քաղաքականութեան պտուղները:

Բառերը պակաս են գալիս արտայայտել կարողանալու համար այն նոր խոշոր յաղթանակը, որ քանի մը օր առաջ շահեց պարսիկ դիւանագիտութիւնը: Դրամական արծաթի միաւորը ոսկիի փոխելու օրէնքից յետոյ, սկսուած բանակցութիւնները անգլիական The Imperial Bank of Persia դրամատան հետ, յանգում են անսպասելի հետեւանքների, որով յիշեալ դրամատունը իր թղթադրամի մենաշնորհի ժամանակը լրանալուց 19 տարի առաջ, հրաժարւում է իր իրաւունքից՝ յօգուտ պարսիկ պետութեան: Այսպիսով վերջինս ամենից առաջ, յանուն ազգային արժանապատուութեան, իրականութեան է վերածում այն գեղեցիկ երազը, որի մասին մտորել են Սահմանադրութիւնից յետոյ լաւագոյն Հայրենասէրները, առանց որեւէ գործնական ելք կանխատեսել կարողանալու:

Կատարեալ անկախութեան ձգտող մի երկրում, սեփական թղթադրամի իրաւունքից զուրկ մի պետութեան համար ի՞նչ աւելի խոշոր յաղթանակ կարելի է երեւակայել. բայց պէտք է տեսնել, թէ բոլորից ծափահարուող այս յաջողութիւնը ինչպէս են տղայամիտ կերպով նսեմացնել փորձում կարմիր աքլորների բանակում: Չգիտեմ ինչե՞ր գրեցին «Իզվեստիա»ն ու «Պրավդա»ն, կամ ի՞նչպէս կապկեց մեր «Խորհրդային Հայաստան»ը: Իրենց պարսիկ հոգեղբայրը ծիծաղելի էլոյթ յայտնաբերեց Խորհրդարանում մի երկար ջղայնոտ ճառով: Մեղադրելի չէ, երբ տաբիների աղմուկներն ու մութ դաւերը միանգամայն հակառակ արդիւնք են տալիս, չղաձգութիւնները նոյնքան բնական են, որքան ի լուր աշխարհի յայտարարելու այն միամիտ գրգռութիւնը, թէ պարսիկ կառավարութիւնն իր այս քայլով վերակենդանացնում է 1928ի մայիսին, արքայական հրովարտակով չնչած օտարների վայելած առանձնաշնորհումները: Թուում է աւելի շատ ջղայնացած են, թէ ինչո՞ւ իրենք ամէն ինչ նուիրեցին Պարսկաստանին, առանց փոխարէնը մի բան ստանալու, որով նոր Իրանին անկախութեան դէմ գաւեզու տարիների յոգնութիւնը իրենց ճնաց, մինչդեռ Անգլիան նուիրում է Թղթադրամի մենաշնորհի 19 տարեայ իրաւունքը, փոխարէնը 200 հազար ստերլին ստանալով: Այդ բաւական չէ նաեւ իրաւունք ունենալու այս երկում կալուածներ գրաւ վերցնելու եւ խորհրդային տնտեսական քաղաքականութեան հետեւանքով սնանկացող պարսիկին դրամ փոխ տալու: Եւ ահա, Խորհրդարանի 125րդ պատմական նիստում, երբ սկսւում են վիճաբանութիւնները Իմպերիալ Բանքի եւ կառավարութեան միջեւ կայացած համաձայնութեան խնդրի շուրջ, երբեմն խորհրդայինոսկիներով նպաստաւորուած, այժմ դադարած «Թուֆան»ի խմբագիրը՝ Ֆարրոխի համարում է կորստաբեր՝ նախագիծը եւ «խիստ» քննադատութեան ենթարկում: Պատգամաւորները շատ տեղին ու կծու ակնարկներով ընդհատում են իր ճառը, մինչեւ իսկ բղաւելով իր երեսին.

— Դուք վճարուած էք այստեղ այսպէս խօսելու»: Արդարադատութեան նախարար Դաւար, յանուն կառավարութեան փաստացիօրէն ջրում է կարմիրների թմբկահար պատգամաւորի բոլոր անհիմն առարկութիւնները եւ Խորհրդարանը ձայների ճնշող մեծամասնութեամբ վաւերացնում է նախագիծը:

Ներկայ նստաշրջանի այս տարօրինակ էլոյթը չպիտի բացատրել մի այն ժողովրդական Հանրածանօթ «Էրւած սրտի մխիթարանք» առածով: Ցաւը աւելի մեծ է եւ շատ գլուխը թաղուած ռուս-պարսկական առեւտրական դաշնագրի կոլոպուտի մէջ: Վերջերս աւելի յաճախ են ստացուում գանգատի հեռագիրներ Ատրպատականի, Գիլանի եւ Մազանդարանի պարսիկ, Հայ եւ Թուրք վաճառականներից, որոնցով բողոքում են պատկան Հաստատութիւններին, պատգամաւորներին, մինչեւ իսկ միապետին, ռուս առեւտրական հիմնարկների սովորականոտնձգութիւնների դէմ: Խորհրդային տնտեսական սպառնալիքը ընդդէմ պարսիկ տեւետուրի այնքան է կարմրել, որ ոչ միայն շահագրգռուած շրջանները, այլեւ կենտրոնը ստիպուած են արմատական միջոցներ խորհիլ օրառաջ ազատելու կարողանալու համար այս անհաճոյ Հարեւանի լարած ամենակուլ թակարդից:

Վ. ԻՐԱՆԵԱՆ

ԳԵՐԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

Բոլոր պետութիւնները, առանց բացառութեան, կը տառապին գերարտադրութիւնէ յառաջացած տնտեսական տագնապէ:

Անգլիա ծանրաբեռնուած է հիւսուածեղէնի եւ քարածուխի հսկայական պահեստներով, որոնցմէ դուրացած են մէկ միլիոն 775 հազար անգործներու բանակ մը եւ 42 միլիոն սթերլին (5ուկէս միլիառ ֆրանք) ելեւմուտքի նախատեսուած բաց մը:

Գերմանիոյ մէջ, պիւտճէի անհաւասարութիւնը քաղաքական սուր տագնապի մը դուռն առած է, որովհետեւ զանազան տուրքերով մկրատուած դրամազլուխի շրջանառութիւնը յառաջացուցած է կեանքի սղութիւն եւ ճարտարարուեստի թուլութիւն: Անգործները, երկու միլիոն 637 հազար, անցած են ամէն չափանիշէ: Անոնց կուգան միանալ գիւղացիներու բազմութիւններ՝ անսնկացած գերարտադրութիւնէ, պարզապէս գնորդներ չգտնուելու պատճառով:

Իտալիա, հակառակ Մուսոլինիի պաշտօնական լաւատեսութեան, կը գտնուի յարատեւ տագնապի մը մէջ: Լիրը կայուցնացած սակագինէն երկու կէտի անկում ունեցած է արդէն եւ ցորենի հոչակաւոր պայքարը պարզ ժամավաճառութիւն է, երբ արտասահմանի մէջ միլիոնաւոր թոնօներով ժամն ու ժամչելի արժութիւններ կը փտին:

Չէխոսլովաքիա կը տառապի շաքարի առատութիւնէն, Ռումանիա ցորենի եւ լազուտի շատութիւնէն եւ Եուկոսլաւիա պահարներու արտածելի նախիրներէն: Հունգարիոյ կացութիւնը աւելի վատ է, ամբարներու մէջ անցեալ տարուայ ցորենը կը փճանայ եւ գետնախնձորի նոր բերքը կը ծախուի մեռած դինով, 100 քիլօն երեք ֆրանքի:

Ֆրանսա, բաղդատմամբ միւսներուն, աւելի բախտաւոր է: Ճարտարարուեստի եւ երկրագործական արտադրութիւններու մէջ հաւասարակշռութիւնը պահուած է դեռ, սակայն այստեղ ալ կը տիրէ գինիի, ցորենի, մետաղադրամութեան, ժանեակներու եւ արտահանումի տագնապը, ժտահոգիչ՝ բայց դիմագրաւելի:

Իսկ բախտաւորներու բախտաւորը, Միացեալ Նահանգները ալ ունին իրենց անբուժելի ցաւերը: Այնտեղ ալ կը տիրէ երկրագործներու հաստատուած ղժզոհութիւնը, այնտեղ ալ միլիոնաւոր անգործներու, նահանգէ—նահանգ թափառողներու բազմութիւններ կան: Ճիշտ է որ, տոլարի հմայքը զօրաւոր է, բայց սակարանային ահռելի փլուզումները, ճարահատ կառավարութիւնը նետեցին ժամքսային հովանաւորութեան տակ: Այդպէսով կը յուսան հիմնել պերճանքի նոր ճարտարարուեստներ: Պիտի յաջողի՞ն. անկասկած ո՛չ, վասնզի դրամատիրութեան յեղաշրջումը աւելի զօրաւոր է քան պետական օրէնքները:

Այսպէս, ամէն կողմ կենսական նիւթերու առատութիւն կը տիրէ, ամբարները լեցուն են արժութիւններով, պահեստարանները փուլ կուգան ապրանքներու ծանրութեան տակ: Սակայն, տարօրինակ երեւոյթ, ամէն կողմ ալ տնտեսական տագնապ կայ, կեանքի սղութիւն, աննդառութեան պակաս, անգործութիւն եւ նոյնիսկ թշուառութիւն:

Ինչո՞ւ համար նախնական նիւթերու մեծաքանակի այս առատին զոհը, գիւղացիութիւնը անսնկացնելու, իր մանն ու ժանգաղը լքել տալու աստիճան:

Որովհետեւ արտադրած են անհաշիւ կերպով եւ շուկայի մէջ նետուած բերքը անկարելի է սպառել, որովհետեւ չեն նկատած սպառողներու կարողութիւնը:

Երկրագործական տագնա՛պ, երբ չորութիւնը խամրեցուցած է մուտքերը, երբ պաշարները կը ծախուին չնչին արժէքով, երբ այգինները ցրտահար եղած են եւ կամ խոնաւութիւնը փճացուցած է դաշտերը:

Բայց, երկրագործական տագնա՞պ, երբ ցորենը, գինին, կաթը, շաքարը առատ են, երբ խնդրանքի եւ ժատուցումի հնարաւորութիւնը պէտք էր ժարդկութիւնը երջանկացնէր:

Տագնա՛պ, միշտ տագնապ, որովհետեւ կը ցանեն, կը տնկեն, կը բուծանեն, կը հիւսեն եւ կը կառուցանեն, առանց նախապէս վստահ ըլլալու թէ արդիւնքները պիտի կրնա՞ն սպառիլ եւ ո՞վ պիտի սպառէ:

Սակայն, սպառողներու զանգուածները, ժտքի եւ ձեռքի աշխատաւորները, իրենց կարգին այնքան են շահագործուած, անոնց գնելու կարողութիւնը այնքան է սահմանափակուած, գործազրկումի վտանգէն այնքան են մտահոգուած, որ պահաս սննդառութիւնը՝ խնայելու առաքինութիւն են անուանած:

Ու յետոյ, շահագործուած գիւղացիին, գործաւորին եւ մտաւորականին կողքին արկածախնդիր մէջնորդը, արծաթասէր ղրաժատէրը եւ ռազմապաշտ պետութիւններ, իրենց գայթակղեցուցիչ տուրքերով:

Ահաւասիկ գրամատիրութեան բարիքները: Գիւղացիին առատ բերքը կը փճանայ, որովհետեւ աշխատաւորը անգործ է ու կէս կուշտ: Աշխատաւորը անգործ է, որովհետեւ ղրաժատէրը չի կըրնար իր ապրանքները ժան ծախել սնանկացած գիւղացիին:

Մեզի յաջորդող սերունդները ազատագրուած սեփականատիրութեան նախապաշարումէն, երբ քննեն մեր օրերու տնտեսական դրութիւնը, պիտի զարմանան նկատելով, որ մեր աշխատանքի եւ արտադրութեան եղանակները որքա՜ն անբերդաշնակ եղած են մեր գոյութեան եւ վայելքի պայմաններուն հետ:

Ըսել է, որ բոլոր տեսակի տագնապներուն — ճարտարարուեստի եւ երկրագործական — իսկական պատճառները կը գըտնուին դրաժատիրութեան խառնափնթոր արտադրութեան մէջ եւ դարժանները՝ ընկերվարական արտադրութեան, միայն ու միայն ընկերվարական արտադրութեան մէջ կը գտնուին:

ԱՐՍԷՆ Կ. ՄԵԼԻՔՈՆԵԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԳԵՐՄԱՆԻԱՑԷՆ

ՌՈՒՍԵԻԳԵՐՄԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անցնող շաբթուան ամէնէն կարեւոր քաղ. անցուդարձը ռուս եւզերմանի նոր համաձայնութիւնն էր, երկար ատենէ ի վեր երկու երկիրներու միջեւ «սեւ կատու անցած» էր, որովհետեւ Գերմանիա զիտակցաբարքշուած էր արեւմտեան քաղաքական հոսանքին մէջ, իրազործելու համար Հէնոսի պարպուժը: Տօրսի ծրագրէն մինչեւ ընկիլ նոր այլ թոլլ վճարման պայմանները, շեղ ճամբէ մը քալելու ստիպեր էին գերման քաղաքականութիւնը, Պերլինի նշանաւոր դաշնագրէն ասդին: Եւ վերջերս, Ռուսիա իրաւամբ կ'ամբաստանէր Գերմանիան թէ հակառուս ճակատին կը մասնակցի եւ իր ուղղութիւնը կ'առնէ արեւմտեան քաղաքականութենէն: Մինչդեռ, գերման քաղաքականութիւնը էր եւ կը մնար զուտ գերմանական: Մարդիկ լաւ սերտած էին Պիզմարքի «հաւասարակշռութեան» քաղաքականութիւնը, վախնալով «երկու ճակատ»ի վտանգէն, այլ չանալով օգտագործել զայն:

Գերմանիա, ճիշդ Թուրքիոյ պէս, ռուսական կռնակը ցոյց տալով արեւմտեան պետութիւններուն, շարունակական հանդիպումներով կորզեց անոնցմէ ինչ որ կրնար խաղաղ ճամբով. իսկ այժմ նկատելով որ Ռուսիա սկսած փոքր դժկամակութիւններով, մասնաւոր դժուարութիւններ կը յարուցանէր գերման ընկերութեանց եւ ապրանքները կը փոխադրէր դէպի անգլիական կամ ամերիկեան հրապարակը, ժամանակը եկած համարեց «տարակարծութեանց վերջ տալու»:

Պրիւնինկ, գերման երիտասարդ վարչապետը, հակառակ իր աղգայնական որոշ ուղղութեան, առաջին առթիւ Պերլինն հրաւիրեց ռուս գործակալները «իրար հասկնալու համար»: Ռուսները սիրով եկան եւ համաձայնեցան: Ռուսական խաղը յաջողած էր, գերմանականն ալ իր կարգին: 14 յունիս 1930 թուականը յայտարարութիւնով երկու պետութեանց ներկայացուցիչները կ'ընդունէին որ երկու երկիրներու միջեւ ծագած խնդիրները Ռափալլոյի եւ Պերլինի դաշնագրերու ոգիով պիտի լուծուին: Իսկ ամէնէն ուշագրաւ մասը՝ «... Շամոզուած են որ ֆիննովին տարբեր երկու պետական դրութիւնները արգելք պէտք չէ ըլլան երկու երկիրներու բարեկամական յարաբերութիւններու զարգացման:կը ֆաստատեն որ ոչ մէկ փորձ պէտք է ըլլայ ազդելու այս կամ այն երկրի ներքին խնդիրներուն»:

«Իզվեստիա» խմբագրութիւնակոլութիւն յայտնեց «Ռափալլոյի փորձուած ճամբու վերականման» առթիւ, բայց գերմանի թերթերու նոյնքան սիրալիր ընդունելութեան մէջէն կը նշմարուէր նաեւ կասկածանքի բացատրութիւններ վերջին պարբերութեան շուրջ: Ռուսիա շատ յաճախ նոյն խոստումը ըրած է, բայց ամէն դիտողութեան պատասխանած է թէ յանցանքը Գ. Միջազգայինինն է, մինչ արար աշխարհ դիտէ թէ Մոսկուայի խորհրդային կառավարութիւն կը նշանակէ Գ. Մ. Ը...ը...ը...:

Իսկ ամբողջը, ինչպէս հաստատ կերպով վերը ակնեցի, քաղաքականութիւն է: Գերմանիոյ մէջ, մանաւանդ այս օրերս, ոչ թէ հաժայնավարական բարեկամութիւն այլ նոյն իսկ ընկերվարական պարզ տեսակէտներ, հանրապետական սկզբունքներ խնդրոյ առարկայ են: Տեղ տեղ խորութիւններ կ'ըլլան քաղաքացիներու հանպէս: Թիւրինկէնի նախարար Ֆրիք խիստ աղգայնական ուղղութիւն մը ունի, «Հրեաները դուրս», «Պերլինի մէջ գերութեան դաշնագրեր կը ստորագրեն (Ընկիլ ծրագիր), «Սեւ Ճերմակ» աւորներ կ'աղմկեն հրապարակը՝ Deutschland · Erwache (Գերմանիա՛, արթնցիր) եւլլն.: Կառավարութիւնը դրժուարութեանց կը հանդիպի հանրապետական ընդհանուր սկզբունքներ յարգել տալու այս կամ այն երկրի նախարարին: Նոյն Ֆրիքը զուտ գերման ազգային աղօթքներ սովրեցնել կուտայ դպրոցներու մէջ, ինչ որ քրիստոնէական ոգիին իսկ չի համապատասխաներ, կը հաւաստեն կարգ մը թերթեր:

Մինչ այս մինչ այն, անգործներու բազմացեալ գանգուածը եւ տնտեսութեան քայքայուած դրութիւնը, այլ մանաւանդ պիւտճէի ահագին բացը (որ նոր տուրքերու փորձարկութեան մը ենթարկեց գանձին նախարար տօքթ. Մոլտենհաուէրը, պատճառ դառնալով իր իսկ կուսակցութեան հետ գժտուելու եւ հրաժարելու) ղրած են Գերմանիան զօրաւոր մարդոց կամ դիկտատուրայի, փնտռտուքի վիճակին մէջ:

Ելմտական նոր նախարարը Տիթրիխ իր ելմտական ծրագրով եթէ յաջողի բարւոքել տնտեսական և դանձային դրութիւնը, արդէն ամէն բան բնական ճամբով կ'ընթանայ: Բայց ինչ աղէկ կ'ըլլար եթէ սա ընկիլ ծրագիրն ալ չըլլար:

Պ. Ճ.

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՁԵՐՄՈՒԹԻՒՆ

Մարդը կրնայ ապրիլ խիտ տարբեր բարեխառնութիւն ունեցող կլիմաներու տակ, սակայն հասարակած մէկէն կիզիչ երկիրներուն, ինչպէս նաեւ բեւեռային սառոյցներու մէջ:

Փորձերը ցոյց տուած են թառանց խոշոր անպատեհութեան, կարելի է քանի մը վայրկեան մնալ 100, մրնչեւ իսկ 120 աստիճան տաք բաղնիքներու մէջ, ասոր հակառակ, յանդուգն բեւեռախոյզներ կրցած են տալ 40 աստիճան ցուրտի:

Հակառակ բարեխառնութեան այս զգալի տարբերութեան մարդկային մարմինը, ջերմութեան ու ցուրտի հակոտնեայ պարագաներու մէջ, կը պահէ 37 աստիճանի միջին ջերմութիւն: Ասկէ կը հետեւի թէ՝ մեր մարմնին մէջ գոյութիւն ունի ջերմութեան աշտակայ աղբիւր մը որ կանոնաւորուած է այնպիսի եղանակով մը, որ կարելի ըլլայ կուռիլ արտաքին ցուրտ օդի դէմ. միեւնոյն ատեն չափաւորող ներքին պատճառներ կ'ալդիչեն մարմինին ջերմութեան աւելի բարձրանալուն:

Մարդկային գործարանութեան մէջ տարածուած ջերմութեան քանակը ճշդելով, կարելի եղած է հաշուել թէ՝ մարմինը 24 ժամուան մէջ միջին թիւով 2700-3250 գոլ կ'արտադրէ, որ կ'ընէ ժամը մօտաւորապէս 112 գոլ: Քունի ատեն ջերմութեան տատանումները աննշան չափով զգալիօրէն պակաս է քան արթնութեան վիճակի մէջ:

Հինները կը կարծէին թէ գործարանային ջերմութիւնը բնական ուժ մըն է եւ անոր կեդրոնը սիրտը: Այդ վարկածը շարունակուեցաւ մինչեւ ժիլին գալը: Սակայն ֆրանսացի նշանաւոր քիմիագէտ Լաւուազիէ քննելով մարդկային շնչառութեան քիմիական հանգամանքը, հաստատեց թէ անոր հաստատուն ջերմութիւն առաջ բերել մարմնի մէջ: Ասկէ զատ, հաստատուած է թէ ներքին ջերմութիւնը առաջ կուգայ անդադարունակ տարրերուն մէջ տեղի ունեցող քոլոր քիմիական գործողութիւններէն եւ անոնցմէ ծագումառաջ շարժուններէն, արեան շրջաբերութենէն, ինչպէս նաեւ մկանային շարժուններէն:

Մարմնի բոլոր մասերուն ջերմութեան աստիճանը նոյնը չէ, այլ կը ներկայացնէ թերմոտարբերութիւններ: Արդէն հետազոտած գործարանները, ինչպէս՝ քիթը, ականջները, ձեռքերն ու ոտքերը նուազ ջերմութիւն ունին. այս պատճառաւ աւելի ենթակայ են մսելու: Նամանապէս մարմնին այն մասերը, որոնք զրկուած են արեան օթոթներէն, ինչպէս՝ մազերն եղունգները, չունին ինքնայուտուկ ջերմութիւն մը: Ասկէ զատ նորածիններն ու ծերերը չունենալով կենսական զօրաւոր ջերմութիւն մը, աւելի տրամադիր կրելու ցուրտին ազդեցութիւն:

Շատ մը հիւանդութիւններ ատեն, որոնց կ'ընկերանայ ջերմը, մարմինին տաքութիւնը կը բարձրանայ մինչեւ 40, 42 43 աստիճան: Երբ այդ սահմանը անցնի հիւանդը կը մահանայ: Ասոր հակառակ, քոլէրայի ինչպէս նաեւ ուրիշ կարգ մը տիֆոյդութիւններու մէջ, մարմինին ջերմութիւնը զգալի նուազում կըլլ. ասոր ալ հետեւանքը մահ է:

Տաքօդին, երկուներքինպատճառներ թոքային եւ թոքային անոթային արտաշընչութիւն, կը ձգտին պաղեցնել մարմինը, եւ ատոնք ա՛նքան աւելի մեծ ուժգնութեամբ կը յայտնուին, ո՛րքան արտաքին օդին ջերմութիւնը:

Ինչպէս ըսինք, ինչ որ ըլլայ արտաքին օդին բարձրութիւնը, մարդկային մարմինը ի կենդանութեան կը պահէ հէ ներքին տեւական եւ աննուազ անփոփոխ ջերմութիւն մը: Պարագան նոյնն

ՆՀԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿԸ

Ղ.ԳՈՆԳԱԴԶԵ ԱԶ

Հայ ռազմական գործիչ, զորավար, Ղարաբաղի ազատագրական պատերազմի հերոս, Ղարաբաղի առաջին հանրապետության նախագահ Ղազար Գոնգադզեն ծնվել է 1873 թ. Շուշիում։ Ավարտել է Շուշիի ռեալական դպրոցը, ապա՝ Ելիզավետպոլի (Գանձակ) ռազմական գիմնազիան։ Ծառայել է ցարական բանակում, հասել գնդապետի կոչման։ Ղարաբաղի ազատագրական պատերազմի ժամանակ ղեկավարել է հայկական զորամասերը։ Ղարաբաղի հանրապետության կազմավորումից հետո եղել է նրա նախագահը։ Մահացել է 1921 թ. Շուշիում։

ԻՆՉ ՊԱՏՄԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՂԱԺԱՄԵՐԸ

Հայկական հանրապետության վաղաժամերը ծանր էին։ Ռուսական զորքերը հեռանում էին, իսկ նորակազմ հայկական զորամասերը դեռ չէին հասցրել ամրանալ։ Ռուսական զորքերի հեռանալուց հետո Հայաստանի տարածքում մնացել էր 1,123,730 զինվոր, 116,000 հեծյալ, 1,500 գնդացիր, 1,200 թնդանոթ, 1,000 ականանետ, 1,000 ձիավոր, 1,000 սվինահար, 1,000 սակրավոր, 1,000 հեռագրատեխնիկ, 1,000 ինժեներ, 1,000 բժիշկ, 1,000 բուժքույր, 1,000 սայլ, 1,000 ձի, 1,000 ուղտ, 1,000 ավտոմեքենա, 1,000 մոտոցիկլետ, 1,000 հեռագրական սարք, 1,000 հեռախոսային սարք, 1,000 ռադիոկայան, 1,000 պրոժեկտոր, 1,000 պրոժեկտորային սարք, 1,000 պրոժեկտորային ռադիոկայան, 1,000 պրոժեկտորային հեռագրական սարք, 1,000 պրոժեկտորային հեռախոս

**** Բանախօսներէն ոմանք հարցումներ ուղղեցին Տրոցկիի վիճակին եւ անոր աքսորի տեւողութեան մասին։*

Կեդր. կոմիտէն յայտարարեց թէ անհրաժեշտ է որ Տրոցկի աքսորական ճնշայ, թէ այդ աքսորը պիտի նպաստէ հակայեղափոխական շարժումի վերջնական զսպումին։ Որով, Տրոցկիի Ռուսիա վերադարձին խօսքն անգամ չի կրնար ըլլալ։

Կաւճիի յաջորդը ձերբակալուած

Մոթիլալ Նէհրու որ կանուխի ձերբակալումէն ի վեր կը վարէր հնդիկ ազգային շարժումը, ինչպէս նաեւ իր քարտուղարը ձերբակալուեցան Ալլահապատի մէջ։ Միեւնոյն առեն ապօրէն յայտարարուեցան Հնդիկ Ազգ. Կոնգրէսին բոլոր մասնաճիւղերը։

Նէհրուի ձերբակալումը նոր յուզման մատնած է հնդիկ յեղափոխականները։ Պոմպէյի մէջ ընդհանուր գործադուլ յայտարարուեցաւ։ Բոլոր խանութները գոցուած է եւ հնդիկ առեւտրականները որոշեցին փակ պահել իրենց խանութները, մինչեւ սակարանի վերբարացումը։

Ռուսիա կը վճարէ իր պարտքերը

Բոլշեւիկեան 16րդ համագումարին առջեւ, իր տարեկան տեղեկագրին մէջ, Ստալինի բերնով, գրեր էինք թէ բոլշեւիզմը նոր զիջում մը եւս կ'արձանագրէ հանդէպ միջազգային դրամատիրութեան, պատրաստակամութիւն յայտնելով վճարելու Ռուսիոյ նախապատերազմեան պարտքերուն մէկ մասը։

Իբր հաստատում այս տրամադրութեան, Անգլիոյ խորհրդարանին մէջ, նախարար Չէնտէրսըն երէկ յայտարարեց թէ յառաջիկայ երկուշաբթի օր պիտի կրնայ յայտնել անգլեւոուս խառն յանձնախումբին կազմը, որ պիտի զբաղի հատուցումներու խնդրով։

Անգլիական թերթերը կը հաղորդեն թէ ռուս պատուիրակները Լոնտոն պիտի հասնին այս օրերս եւ թէ ամէն չանք պիտի թափուի վերջնապէս կարգադրելու համար նախապատերազմեան պարտքերու հարցը։

Յանձնախումբը պիտի բաղկանայ հինգ անգլիացի եւ նոյնքան ռուս պատուիրակներէ։

Անգլեւրամական համաձայնութիւն մը

Պաշտօնական կերպ կը հաղորդուի թէ Անգլիոյ եւ Իրաքի կառավարութիւնները, Պաղտատի մէջ կնքեցին համաձայնութիւն մը, հիմ ունենալով Իրաքի հաւանական մասնակցութիւնը Ազգերու Դաշնակցութեան։

Համաձայնութիւնը որուն մէջ տրամադրութիւններ կան ժանաւանդ Իրաքի անկախութեան ճանաչման մասին, կը ճշդէ երկրին իրաւական կացութիւնը։

Յայտնի չեկիստի մը հրաժարումը

Ժորժ Սերկեւիչ Աղաբեկով որ 1920էն ի վեր կ'աշխատէր Չեկայի մէջ, ամէն կապ խզեց բոլշեւիկեան կուսակցութեան հետ, որուն կ'անդամակցեր 1918էն սկսեալ։ Եղած է Չեկայի արեւելեան արտաքին գրասենեակին պետը եւ անցեալ տարի, իբրեւ Չեկայի գաղտնի լրտես կը գործէր Թուրքիոյ, Յունաստանի, Պաղեստինի եւ Եգիպտոսի մէջ։

Աղաբեկով կը յայտնէ թէ ինքնաբերաբար կը քաշուի բոլշեւիկեան կազմակերպութենէն, մեղսակից չըլլալու համար երկրին ներսը՝ սովի եւ ճնշումի քաղաքականութեան, երկրէն դուրս՝ Մերձաւոր Արեւելքի, Աֆղանիստանի, Պարսկաստանի եւ Չինաստանի մէջ՝ կայսերապաշտութիւն։ Աղաբեկով մտադիր է անհերքելի փաստաթուղթերով երեւան հանել կարգ մը գաղտնիքներ եւ կը յայտնէ թէ իր հին պաշտօնակիցներէն շատերը համամիտ են իր ընթացքին եւ թէ փոխ վրէժի վախն է որ զանոնք կը կապէ։

Մանչի ընդծովեայ փապուղին

Բոլոր կուսակցութիւններէն կազմուած անգլիացի երեսփոխաններու խումբ մը, որ կը նկատէ թէ կառավարութիւնը մեծ սխալ գործեց Մանչի ընդծովեայ փապուղիին մասին՝ իւրացնելով Անգլիոյ Ազգ. Պաշտպանութեան յանձախումբին տեսակէտը եւ մերժելով անոր շինութիւնը, դարձեալ մէջտեղ դրաւ այդ հարցը, Խորհրդարանին մէջ։

Ընկերվարական երեսփոխան մը բանաձեւ մը ներկայացուց եւ պնդեց թէ Մանչի փապուղին կարելի է կառուցանել իբրեւ մասնաւոր ձեռնարկ, առանց կառավարական օժանդակութեան եւ թէ անոր շինութիւնը անշուշտ աշխատանք պիտի հայթայթէ բազմաթիւ անգործներու։

Վարչապետը յայտնեց թէ, այդ մասին եթէ նոր որոշում մըն ալ տրուի Խորհրդարանին կողմէ, ընդդէմ նախկին որոշման, այդ չի նշանակեր թէ կառավարութիւնը, վերաքննելով կացութիւնը, ետ պիտի առնէ փապուղիին շինութեան դէմ տրուած որոշումը։

Փապուղիին շինութեան առաջարկը այս անգամ ալ մերժուեցաւ։

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

ՋԱՁԱՐԱՆ ՓԼՕՐԻԱ

61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)

Մէթրօ Օտէոն եւ Սէն Միշել — Հեռաձայն Littré 38—43

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ

ՁԵՐ ԳՆՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԴԻՄԵՑԷՔ.

MAISON VARTERESSIAN

1bis Rue Hautefeuille, Մէթրօ St. Michel

Արեւելեան եւ եւրոպական ամէն տեսակ նպարեղէնները

Ջոր պտուղներ, լաքէրտա, երշիկ, ապուխտ, եւայլն.

Ա Մ Ե Ն Ա Լ Ա Ի — Մ Ա Ք Ո Ի Ր — Ա Ժ Ա Ն

Մասնաւոր ապահարկութիւն բնակարաններու համար

Կ'ընդունինք ապսպրանքներ գաւառներէն և արտասահմանէն

Հ. Յ. Դ. ՓԱՐԻԶԻ ԿՈՄԻՏԷՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԿԱՆ

Ժողովի կը հրաւիրէ բոլոր խումբերու ներկայացուցիչները այս Ուրբաթ եւ 7 Յուլիս երկուշաբթի իրիկուն ժամը 8.30ին Chope Parisienneի վերնայարկը, 64 Rue des Ecoles.

ՄԱՅԻՍ 28Ը ՇԱՍԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Ռոստոմ խումբի

Այս կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին

կը նախագահէ ընկ. Մ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

կը խօսի Ընկ. Բ. ԱՂԱԲԷԿԵԱՆ

Գ ե ղ ա ր ո ւ ե ս տ ա կ ա ն բ ա ժ ի ն

Ընկ. Կ. ՄՈՒՐԱՖԵԱՆ կը ներկայացնէ զաւեշտ մը

Ա. Ե. Հ. Կ. ԽԱՉԻ ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

6 ՅՈՒԼԻՍ ԿԻՐԱԿԻ ՕՐ ՍԷՆ ՔԼՈՒԻ ԱՆՏԱՌԻՆ ՄԷՋ

Հովանաւորութեամբ Պ. ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ

կը նախագահէ Ա. ՋԱՄԱԼԵԱՆ

Բանախօսութիւն, երգ, պար, անակնկալներ

ԵՐԵԿՈՅԹ — ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Սթանոգի Հայր. միութեան կողմէ 5 Յուլիս Շաբաթ իրիկուն ժամը 8էն մինչեւ առաւօտ Harolah սրահներուն մէջ, 3 Rue Lavieuville, Nord Sud, Abbesses, Գեղարուեստական բաժին։

ՄՕՏ ՕՐԷՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ

ՍՊԱՆԵՐԷՆԷ ՀԱՅԵՐԷՆ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Բ Ա Ռ Ա Ր Ա Ն Ը

ՅՕՐԻՆԵՑ

Յ. Ս. Ա Կ Ա Յ Ե Ա Ն

ՀԱՁԿ. ԲՈՒԺԱՐԱՆ — POLYCLINIQUE de BELLEVILLE

Տէր եւ Տիկոջ **ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ**

29, Rue (Place) des Fêtes, Paris, XIX. Tél. Nord 96-61

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ նեարքին եւ վէներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Գշ., Երկ. եւ Շաբաթ օրերը ժամը 4—6։ Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երեք. եւ Շաբաթ օրերը ժամը 2—3։ ԱՏԱՄՆԱԲՈՅԺԸ ամէն օր ժամը 9էն 19։

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

5 ՅՈՒԼԻՍ ՇԱԲԱԹ ԳԻՇԵՐ, ԺԱՄԸ ՃԻՇԴ 9ԻՆ ՍՕՍԻԷԹԷ ՍԱՎԱՆԹԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

8 Rue Danton, PARIS — Métro: Odéon եւ St. Michel

Մեծ պատրաստութեամբ կը բեմադրուի Փարիզի մէջ առաջին անգամ ըլլալով

ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ

ԱՐՑՈՒՆՔԻ ՀՈՎԻՏԸ (4 ԱՐԱՐ)

(ԱԶԳԱՅԻՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

Մասնակցութեամբ՝ Տիկ. Ս. Ալիքսանեանի, Օր. Անահիտի, Տիկ. Լաճիֆեանի եւ Պ. Պ. Դմբէճեանի, Ա. Կօճիկեանի, Լաճիֆեանի, Սարիմի, Դրիգոր Վահանի, եւայլն։

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ *կը կատարէ «ԱՍԼԱՆ»ի դերը*

ԳԻՆԵՐԸ՝ 20, 15, 10 եւ 7.50 ՖՐԱՆՔ

Տոմսերը ապահովել *Կավռոշի* խմբագրատունէն՝ 208bis rue Lafayette եւ բոլոր հայկ. ճաշարաններէն

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ

96 r. Rivoli, մէթր. Շաթլէ։ Աչք եւ նոր մեթոտով դարմանում արտ. եւ կանանց մորթի, արիւնի եւ վէներ. հիւանդութեանց (ֆրանկախօս, կ մասին.) եւ վարիկի։ Մասն. լաբ. աշխատատեղ։ Խորհրդատու եւ արագ խ հրդագրութիւն. ամէն օր 9—12, 2 կիրակի 9—12.

EMPIRE Մէթրօ-Հոլ՝ 37 Av. Wagr

IMPRIMERIE - **MASSIS** - ÉDITIO

208bis, Rue Lafayette Paris (1

L.e Gérant H. STEPHAN

Հ. Յ. Դ.

Փ Ա Ր Ի Զ

ՍԱՐՍԷԼԻ Հրայր խումբի ընկերական ժողովը՝ այս իրիկուն ժամը 9ին ընկեր Ն. Այտինեանի բնակարանը։

Դ Ա Խ Ա Ր

ԼԻՈՆԻ Պատ. միութեան ընդհ. ժողովը՝ վաղը Հինգշաբթի իրիկուն, ժամը 8.30ին Դրագարանի սրահը։ Կարեւոր օրակարգ։

Լիոնի կայծակ խումբի ընկերները ստիպողաբար ժողովի կը հրաւիրուին այս իրիկուն ժամը 8.30ին։ Պարտաւորիչ ներկայութիւն։ Ներկայանալ անդամատետրով։

ՄԱՐՍԷՅԼԻ Քրիստափոր Ենթակոմիտէի ընդհ. ժողովը՝ այս Ուրբաթ իրիկուն ժամը 8.30ին սովորական հաւաքատեղիին մէջ։ Պարաւորիչ ներկայութիւն։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ՔԷՕզօԷՆ մեկնող հայրենակիցներու կը յայտնեմ թէ 1927 եւ 1928 տարիներու տեղւոյս հայ ազգային մրուելեան քով գտնուած դրամին վերջին մասը 74 ֆր. 05 յատկացուցած եմ անծանօթ գինուորին գերեզմանին վրայ դրուած ծաղկեպսակի մը։

Համբարձում Ծըլղճեան

ՅԱՆԿ

Նահր էլ Օժարի զաղթական-ներուն համար, հանգանակուած Մարսէյլի վանի կարճկան գաւառի համբենակիցներէն.—

Ս. Ղազարեան, Ց. Յովնանեան, Գ. Սաֆեան, Մ. Շահէնեան, Վ. Դրիգորեան 20ական, Թ. Ասատուրեան, Խ. Մխիթարեան, Ա. Մուրատեան, Ա. Յակոբեան, Մ. Ղազարեան, Յ. Յակոբեան, Բ. Աւետիսեան, Մ. Աւետիսեան, Խ. Եղիազարեան, Գ. Սարգիսեան, Ֆ. Յովհաննէսեան 10ական, Մ. Մանուկեան, Յ. Այվազեան 5ական, գումար 220 Ֆր., նախորդ գումար 2795 Ֆր., ընդհ. գումար 3015։

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Կը փնտռուի Լինկիւրի նահանգին Ստանլօս գիւղէն Յակոբ Զօպանեան 27—28 տարեկան, հօր անուն՝ Պօղոս, մօր՝ անուն Մարիամ։ 1920ին կը գտնուէր իր մեծ ծորը քով Մերսին։ Այդ թուականին մեկնած է Դամասկոսէն Պոլիս երթալու համար։ Կիլիկիոյ ճամբուն վրայ տեսնուած է հայրենակիցի մը կողմէ։ Իր մասին ստոյգ տեղեկութիւն տուողին 1000 ֆրանք նուէր։ Իմացնել իր եղբօրը Գրիգոր Զօպանեանի 31 Rue de Fossé, Issy-les-Moulineaux (Seine) France կամ թերթիս վարչութեան։

Կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել։

— Կը փնտռեմ Քէվախի վերի բագարիճէն Թոսրով Իլպիգեան եւ գաւակները Ղազարոս, Կաթիկ, Ազատուհի, եւ հօրեղբօրորդւոյս գաւակները՝ Աւագ, Մատթէոս եւ Թագուհի, որոնք աքսորուած են 1915ին։ Իզմիրի Դէպքէն ամիս մը առաջ Մալաթիայէն լուր առնուած է աղջիկը կաթիկէն։ Անկէց ի վեր լուր չկայ։ Իրենց մասին ստոյգ տեղեկութիւն տուողին 500 Ֆր. նուէր, իմացնել՝ H. Hougasian, Mazagan: Maroc: կամ «Յառաջ»ի։ կը խնդրուի սուրիահայ եւ յունահայ թերթերէն արտատպել։

ՅՐՈՆՔԻ ՄՈՒՐԱՑ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՏԱՐՕՆ - ՍԱՍՈՒՆ

Է ջ եր Հ ա յ ոց

նորագոյն պատմութենէն

Հրատ. «Յառաջ-Սասուն մուրատ Ֆոնտի յանձ.ի» Հալէպ։

380 էջով այս գեղեցիկ հատորը զարդարուած է մեր յեղափոխական դէմքերու եւ պատմական վայրերու նկարներով։

Դիմել՝ Լ. Գեւոնեանի՝ 235 Fbg. St. Martin. Paris. Գին՝ 12 Ֆրանք փոստի ծախք 1 Ֆրանք

կ'ուզուի վարպետ դերձակ մը։ Դիմել Պ. Պարսամեանի, 233 Fbg. St. Martin, Մէթրօ Louis Blanc.

ՄԱՇՈՒՆ JURA

Անիւամանայնութեան պատճառաւ ծախու է մաշունի գործարան մը։ Գործատեղի, ջուր, կազ, étuve, աւազան, 1000 մաշունի աման, տպագրուած թուղթեր, ապահովուած յաճախորդ, ամբողջ սարգաւորումը իր իսկական գինով 8500 Ֆր.։ Դիմել՝ Richard, 7 Rue J. B. Dumray, Paris (20).

Ծախու է Goussainville*ի մէջ տուն մը որ ունի 2 սենեակ, գետնայարկ եւ մառան։ Պարտէզով միասին 400 քառ. մէթր։ Մանրամասնութիւններու համար դիմել Պ. Mauriceի, 220 Rue Pierrot, Goussainville. Հոգեկառք՝ Gare du Nordէն։*

Նրբաձաշակ տիկիններ

Մի մտահոգուիք թէ ձեր հագուստները ո՞վ պիտի կարէ եւ ո՞ւ ձեզ լիովին պիտի գոհացնէ։ Դիմեցէք 13, Jaret Փիրմայոյ հայկական հաստատութեան որ մեծ խնամքով կը պատրաստէ ձեր փափաքած ամէն տեսակ հագուստները՝ դեկավարութեամբ ծանօթ վկայեալ դերձակուհիի եւ հնարող մտելիստ տիկին Ցասմիկ Դաւիթօֆի։ Բաց աստի հոն կը գտնէք ամենավերջին նորաձեւութեամբ պատրաստ հագուստներ անհաւատալի ժամանակի գիներով։ Հասցէն շատ դիւրին. 4 Rue de la Collegiale և յարդ (86 Bld. St. Marcel). Métro Gobelinsէն 40 քայլ։

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ — ԿԵՐՊԱՍԵԼԻՆՈՑ

SIROUNAK ARABIAN & Cie

155 Rue Montmartre (1er étage)

Ֆրանսական եւ անգլիական խիստ ճոխ եւ ճաշակաւոր nouveautéներ այրերու համար։ Մետաքսեայ եւ բրդեղէն ամէն տեսակ ընտիր կերպասեղէններ կիներու համար։

Ա Ր Տ Ա Կ Ա Ր Գ Ա Ժ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ջեռք մը կարուած հագուստը ձեզի պիտի արժէ՝ *Ճրանս. առաջնակարգ գեղեցիկ կերպասով 500 ֆրանք փոխանակ 700ի։ Իսկ Անգլ. կերպասէ 700 փոխանակ 1000ի։* փափաքողներու (այր եւ կանանց) կը տրամադրենք անձերի coupe ունեցող եւ à façon աշխատող վարպետ — դերձակ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ PRINKIPO

VERTANÈS MAHDJOUBIAN et A. VITCHEN

24 Rue des Carmes, Paris (5) Մէթրօ՝ Place Maubert

Խնամքով պատրաստուած արեւելեան և եւրոպական ամէն տեսակ կերակուրներ ամէն ժամ։ Մասնաւոր կերպով պատրաստուած տէօնէր-քէյպայ։

Այցելեցէք, համոզուելու համար։ Հարսնիքի, ժողովներու, հաւաքոյթներու եւայլնի համար տրամադրելի սրահ։

Ուշադրութիւն

Յուլիս 1ին կը բացուի ԵԼԲՈՒՐՔ ՍԱՊՈՆՋԵՆՆԵՐՈՒՆ արեւելեան մեծ նպարավաճառատունը՝

ԱՐԱՐԱՏ

որ Մարսէյլէն փոխադրուած է փարիզ

39 Rue de Trévise, Paris (9), Մէթրօ՝ Cadet, Tél. Prov. 05-91

Մեր վաճառատունը պիտի աշխատի գոհացնել իր բոլոր յաճախորդները իր պատրաստած ընտիր *սուրճով* եւ ամէն տեսակի ընտիր նպարեղէններով։ Ընծրցելի գիներ



ՅԱՌԱՋԻԿ

LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԲԱԺԱՆԵՑԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70ֆ.	140ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շ.	40 շ.	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԻՏԱԼԻԱ		250 ֆրանք	
ԱՄԵՐԻԿԱ		6 տլ.	10 տլ.
ԵՒՐՈՊԱ		100 ֆ.	200ֆ.

"HARATCH"

Directeur-Propriétaire
SCH. MISSAKIAN
Խմբագիր՝
Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Rédaction et Administration
Խմբագրութիւն եւ վարչութիւն
235, Faub. St.-Martin
PARIS (10e)
MÉTRO: LOUIS-BLANC OU JAURÈS
Téléphone: NORD 67-23
R. C. SEINE 376.286

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 3 ֆրանք

ՀԻՆԳՇԱԲԹԻ
3
ՅՈՒԼԻՍ
1930
3 JUILLET 1930

Զ. ՏԱՐԻ ԹԻՒ 1304

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԸ

Յառաջիկայ Կիրակի, Յուլիս 6 ին, Փիտրոյիտի մէջ (Ամերիկա) կը բացուի Հայ Կարմիր Խաչի 10 րդ Ընդհ. Պատգամաւորական ժողովը, որուն կը մասնակցին հեռաւոր գաղութներու բոլոր Հայ Կարմիր Խաչի կազմակերպութիւնները։

Ամերիկայի Հայ Կարմիր Խաչը երկար տարիներու ընթացքին սերտ կապ հաստատած էր զանազան գաղութներու մէջ կազմուած քոյր Կարմիր Խաչերուն հետ, նիւթական և բարոյական օժանդակութիւն բերելով անոնց ձեռնարկներուն։ Այս սերտ գործակցութիւնը յանգեցաւ միութեան մը, որով Ամերիկայի կեդր. վարչութիւնը կը դառնար վերին մարմինը ամէն տեղ ցրուած Կարմիր Խաչի մասնաճիւղերուն։ Այս միացումը, սակայն, սահմանափակում մը չէր մասնաճիւղերու ինքնավար գործունէութեան, որ հետզհետէ կ'ընդլայնի և կը դառնայ հայ ազգային հաստատութիւն մը։

Մեր այսօրուան թիւին մէջ զետեղած ենք Հայ Կարմիր Խաչի կեդր. վարչութեան համաոօտ տեղեկագիրը, որ պիտի ներկայացուի 10 րդ Ընդհ. Պատգամաւորական ժողովին։ Այդ տեղեկագրէն կը տեսնեն մեր ընթերցողները, որ Հայ Կարմիր Խաչը լծուած է մարդնային աշխատանքի մը և ստեղծած է ընդարձակ ցանց մը Ամերիկայէն մինչեւ Պարսկաստան, Պալքաններէն մինչեւ Եգիպտոս, և կրցած է իր կեդրոնական մասնաճիւղերով և ենթամասնաճիւղերով մուտք գործել տարագիր բոլոր մեծ ու պզտիկ համայնքներուն մէջ։

Ու այս կազմակերպութեան խարիսխը հայ ընտանիքն է և անոր ոգին՝ հայ կինը։ Տուն-տուն այս միացումն է, որ համայնքի շէնքը կ'ամրացնէ, ու աւելի մեծ կամարով մը իրարու կը շղթայէ բազմաթիւ մեծ գաղութներու հայկական ընտանեկան կեանքը, որ միակ ապահով վայրն է հայ ազգային դիմագծի պահպանման։

Ասկէ կը բխի այն մեծ արժէքը որ ունի Հայ Կարմիր Խաչը հայ իրականութեան համար։ Ընտանեկան կազմակերպութիւնը, — կանանց համագործակցութիւնը հանրային գործին շուրջ, գործաւոր ազգակներէն ձկէ է մեր հաւաքական սպարագրի կազմութեան, որ կրնայ անդրադառնալ ազգային և քաղաքական նկարագրին վրայ։

Կարմիր Խաչի կազմակերպութիւնը որ հնարաւորութիւն կուտայ հայ կիներուն և օրիորդներուն ձկկտեղ համախմբելու իրենց ուժերը, հետաքրքրութելու հայկական կեանքով, մղուելու ինքնագործագումն և վարժուելու հաւաքական գործակցութեան, ինքնին խիստ դրական գործ մը կատարած կ'ըլլայ։ Այս պարագային, կազմակերպուած ու իրարու շաղկապուած ուժ մը ինքնարժէք է, և արժանի լուրջ ուշադրութեան։ Այս, ինքնին ուշագրաւ պայքար մըն է կազմալոյծ ու անշաղախ կեանքին դէմ։

Այս առողջ կազմակերպութիւնը խիստ մեծ կարեւորութիւն կը ստանայ մանաւանդ իր հետապնդած նպատակներով և որոշակի ձեռնարկներով։ Մեր հանրային կեանքի հրատապ պահանջներուն արդիւնքը կարելի է նկատել կարմիր խաչի գոյութիւնը, որ իր առանձին տեղն ու դերն ունի, առանց խաչաձեւելու ուրիշ հաստատութիւններու աշխատանքները։

Երբ դուք ուշադրութեամբ կը հետեւիք Հայ Կարմիր Խաչի որդեգրած նպատակներուն և անոր գործունէութեան, կը համոզուիք որ այդ կազմակերպուած ուժը հրապարակ եկած է խիստ կենսական պահանջներուն ընդառաջելու։ Կարմիր Խաչի կազմակերպութիւնը, նպատակը և գործառնութիւնները իրարու միացած, կը կազմեն լրիւ ամբողջութիւն մը, որ հոգ ունի ներկայ հայ իրականութեան մէջ, ու կոչուած է փրկարար դեր մը կատարելու՝ ուրիշներէ անտեսուած ասպարէզներու վրայ գործելով, որ, վերջապէս, մրջնային ու համբերատար աշխատանքով մը հայութեան ֆիզիքական գոյութեան և մշակոյթի պահպանման կը սատարէ։

Յիշենք միայն 9256 տոլարի գումարը որ Հայ Կարմիր Խաչի կեդր. վարչութիւնը, այս տարի հայթայթած է զանազան վայրեր հայութեան բեկորները փրկելու, կամ մշակութային հաստատութիւնները կանգուն պահելու համար։ Եթէ այդ գումարին վրայ բարդէք բոլոր մասնաճիւղերու կատարած տեղական գոհողութիւնները, գումարը կը կրկնապատկուի։ Այս կը նշանակէ որ հայ կիներու միայն մէկ մասի միացեալ ջանքերով, տարին մօտ 20,000 տոլար կը յատկացուի կազդուրելու և առողջացնելու հայ ժողովուրդի մարմինն ու հոգին։ Սահմանափակ, ըստ երեւոյթին, բայց տարիները եւ յարատեւ աշխատանքը իրարու վրայ գումարեցէք, պիտի տեսնէք անոր առաւելութիւնը շատ մը բարեգործութիւններէն, որոնք այնքան ծախ ու ծնծղայով կը դիմաւորուին։

Մնայուն, առողջ եւ հաւաքական աշխատանքն է որ կը ծառայի հայ ընտանիքներէն ներս, շնորհիւ Հայ Կարմիր Խաչին, որուն պիտի լծուին ազգային սիրտ ու հոգի ունեցող բոլոր կիները, ընկերային կեանքին բերելու իրենց անհրաժեշտ մասնակցութիւնը։

Կ. Ս.

ՄԱՄՈՒԼ

ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ

«Հայրենիք» այս խորագրով խմբագրականի մը մէջ կը գրէ (յունիս 21)։

— «Ապստամբական պոռթկումները, որոնք այս տարուան յունուար, փետրուար, մարտ եւ մասամբ ապրիլ ամիսներուն տեղի ունեցան Խորհրդային Միութեան մէկ ծայրէն միւսը եւ մասնաւորապէս ծաւալուն ու արիւնալի ձեւեր ստացան Թուրքեստանի, Ուկրայնայի, Չիւսիսային Կովկասի եւ Անդրկովկասի մէջ, ըստ երեւոյթին՝ մեծ ոգեւորութիւն են առաջ բերած Ռուսիայէն ամէն գնով անջատուիլ ձգտողներուն եւ կազմակերպութիւններուն մէջ։ Եւ, ինչպէս պէտք էր սպասել, այդ ոգեւորութեան մեծ չափով գարկ կուտան Լեհաստանի բախտը տնօրինող ռազմապաշտ եւ ռուսատեաց շրջանակները, որոնք վերջերս այնքան հեռու գացին, որ չքաշուեցան նոյնիսկ իրենց ժամուլի մէջ հրապարակով պաշտպանելու Ուկրայնայի, Չիւսիսային Կովկասի, Թուրքեստանի ու Անդրկովկասի անջատումը բուն Ռուսիայէն։ Եւ իրենց գրգռիչ ընթացքով նկատելի իրարանցում առաջ բերին Մոսկուայի մէջ։

Ապահովաբար այս վտանգաւոր խաղերն ու էնթրիկները կասեցնելու համար, ընկերվարական (երկրորդ) Միջազգայնականը վերջերս հաբկադրուած եղաւ բանաձեւ մը հանելու, որով կը հրահանգէր բոլոր ընկերվարական կուսակցութիւններուն եւ խմբակցութիւններուն ամենավճռական կերպով պայքարիլ արտաքին էնթրիկներուն դէմ, որոնց նպատակն է արտաքին գինեալ միջամտութեան օգնութեամբ տապալել Խորհրդային կառավարութիւնը։ Բանաձեւը, եթէ կը յիշէ ընթերցողը, կը յանձնարարէր միաժամանակ ջանալ խաղաղ մրջոցներով բարելաւման ենթարկել Խորհրդային ներկայ կարգերը։

Պէտք է ըսել, որ մինչեւ այժմ մասնաւորապէս Ռուսիայէն անջատուիլ ձգտող ազգերու ընկերվարական կազմակերպութիւնները, բացի Հ. Յ. Դաշնակցութենէն, կը հետեւէին ատոր ճիշդ հակառակ քաղաքականութեան մը, ամէն ճիգ ընելով ձեռք ձգելու արտաքին գինուորական օգնութիւն, Ռուսիոյ լուծէն ազատուելու համար։ Այս կազմակերպութեանց մէջ առաջին տեղը կը գրաւէին վրացի Սոցիալ-Դեմոկրատները, որոնք՝ Ժորդանիայի եւ Րամիշվիլիի գլխաւորութեամբ, պոլսէն սկսած մինչեւ վարշաւիա եւ փարիզ Թուրքեստանցիներու հետ միասին կը գործէին Ռուսիոյ դէմ։

Այսուհետեւ, կ'ըսէ «Սոցիալիստ Չեսկի Վեստնիկ», Ժորդանիա եւ Րամիշվիլի իրենց հետեւորդներով պիտի չկարողանան այլեւս մասնակցիլ այնպիսի յարձակողական օրկանի մը, ինչպիսին է «Պրոմեթէն», կամ ձեռք ձեռքի տուած գործել յեղափոխական եւ արտաքին գինեալ միջամտութեան կողմնակից տարրերու հետ։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՆՁԸ

Ամերիկայի ելմտական տարին կը փակուի 18½ միլիոն տոլարի յատկացուածական հասոյթով մը, (4 միլիարդ, 625 միլիոն ֆրանք)։ Այս գումարին մէջ կը մտնեն օտար պետութեանց կողմէ վճարուած 75 միլիոն տոլար։

ՕՐ Ը ՕՐԻՆ

Անգլեւիրահեան դաշնագիրը

Երէկ հաղորդեցինք Անգլիոյ եւ Իրաքի միջեւ հաւաձայնութեան մը կնքումը։ Ըստ նոր մանրամասնութեանց, հաւաձայնագիրը որ կը նախատեսէ Իրաքի կատարեալ անկախութիւնը, կը տրամադրէ հետեւեալ մէկ քանի կէտերը։ Անմիջապէս որ Իրաք ընդունուի Ազգերու Դաշնակցութեան մէջ՝ իր անդամ, պիտի ապահովէ երկրին ամբողջ ներքին վարչութիւնը։ Երկրին ներքին ապահովութեան եւ նոյնիսկ արտաքին յարձակումներէ պաշտպանութեան պատասխանատուն կը մնայ միայն Իրաքի կառավարութիւնը։

Բրիտանական հոգատարութիւնը՝ երկրին վրայ վերջ պիտի գտնէ, երբ Իրաք մտնէ Ազգերու Դաշնակցութեան մէջ։ Դաշնագրին կիրարկութեան թուականէն մինչեւ հինգ տարի, Անգլիապիտի պարպէ Մուսուլի և Պաղտատի իր զինուորական կայանները, իսկ Իրաք յանձն կ'առնէ օդանաւային երեք նոր խարիսխներ տրամադրել Անգլիոյ՝ Եփրատի եւ Քութպել Արապի արեւմտեան կողմը։ Խարիսխներու ծախքը պիտի հոգայ Անգլիա։ Անոնց զինուորական պաշտպանութիւնը պիտի ստանձնէ Իրաք։

Դաշնագիրը կնքուած է 25 տարուան համար։

Ռիկով մեղայն կուգայ

Բոլշեւիկեան 16րդ համագումարին մէջ, Ստալինի եւ իր երկրպագուներու ճառերէն յետոյ, խօսք առաւ Ռիկով, գործավարներու խորհուրդի նախագահը, մեղայի գալու համար։

Յոռնարհաբար, Ռիկով խոստովանեցաւ իր անցեալ ու ներկայ մեղքերը...«Կուսակցութեան կեդր. կոմիտէին դէմ իմ գլխաւոր յանցանքս է ըսաւ, կարելիութեանց ստորագնահատում մը համայնացման եւ գիւղատնտեսութեան մարզերուն մէջ։ Այս խոշոր սխալը քաղաքական վճռական կարեւորութիւն մը ունեցաւ. անկէ յառաջ եկան շարք մը ուրիշ սխալներ։ Մեր բոլոր վէճերուն մէջ, կուսակցութիւնը իրաւունք ունեցաւ։ Քանի մը խօսք ալ ըսելու եմ կուսակցութեան ներքին վարչաձեւին մասին։ Քաղաքական մտանաւոր նպատակներ հետապնդելով կը քննադատեն մեր կուսակցութեան վարչաձեւը։ Ամբողջովին, ի նպաստ կուսակցութեան քաղաքականութեան արտայայտուելով, ես կ'առնեմ անոր վարչաձեւին մասին իմ յայտարարութիւններս։ Կուսակցութիւնը իրաւունք ունէր մեր դիրքը նկատելու նեցուկ եւ օժանդակ փոքր քաղքենիներուն՝ ընդդէմ ընկերվարական գրոհին։ Մեր դիրքը կ'ուժեղացնէր անոնց ընդդիմութիւնը։ Իմ անունս խաղալիք դարձաւ հակայեղափոխական տարրերու ձեռքին մէջ։»

Ռիկով վերջացնելով՝ խոստովանեցաւ.— «Չեմ ուրանար իմ պատասխանատուութիւնս՝ կեդր. կոմիտէի եւ կուսակցութեան ընդհ. ուղղութեան դէմ կռուին մէջ։ Յանցանքս աւելի կը ծանրանայ երկրին մէջ վարած պաշտօնիս եւ կուսակցութեան մէջ ունեցած դիրքիս հետեւանքով։ Այդ արդէն, միջոց տուաւ թշնամի տարրերուն որ իմ դիրքս օգտագործեն, կռուելու համար կուսակցութեան եւ խորհրդային իշխանութեան դէմ։ Պատրաստ եմ կատարելու ինչ որ կուսակցութիւնը ինձմէ պահանջէ, դարմանելու համար գործուած սխալները»։

Ռիկովէն առաջ, նման յայտարարութիւններ ըրած էին Տոմսկի եւ Ուկլանով։

Ռիկովէ վերջ, խօսք առաւ Լենինգրադի բոլշեւիկներու քարտուղարը Քիրով, որ յայտնեց թէ ընդդիմադիր պետերու ճառերը չեն գոհացներ զիրենք։ Ռիկովի խօսքերը արժանացան բոլորին հաւանութեան։

∴ «Պրաւդա» բոլշեւիկեան պաշտօնաթերթը կը պահանջէ աջ ընդդիմադիրներու վտարումը։

Ալպանեւիտալական միջադէպը

Իտալացի սպային սպանումէ ալպանացի զինուորի մը կողմէ՝ ձգտում յառաջ բերաւ Ալպանիոյ եւ Իտալիոյ միջեւ, հակառակ Ալպանիոյ արտաքին նախարարին կողմէ իտալական կառավարութեան ներկայացուած պաշտօնական չքմեղանքին։

Իտալիա կը մեղադրէ ալպանական կառավարութիւնը թէ կորովի միջոցներու չէ դիմած իտալիոյ հակառակորդ տարրերուն դէմ, մանաւանդ որ երկրին հիւսիսային մասին մէջ, իտալիոյ դէմ գրգռութիւնները կը շատնան ալպանացի զինուորներուն եւ սպաներուն միջեւ, ինչպէս նաեւ հարաւի կողմը ուր հաստատուած իտալական գաղութը եւ իտալացի բանուորները մրցորդ կը նկատուին Ալպանացիներուն։

Ալպանիա եւս իր կարգին կը մեղադրէ իտալացիները թէ նկատի չեն առներ տեղական ժողովուրդին շահերը։

Հեղինակաւոր անձնաւորութիւններ կը յայտնեն թէ՝ ոչ մէկ միջոց պիտի կրնայ արգիլել վալոնայի եւ Շքոտրայի մէջ նման դէպքերու կրկնութիւնը, եթէ իտալացիները չփոխեն իրենց վարուելու եղանակը։

Թուրքեւսուրիական սահմանը

Թուրքեւսուրիական սահմանագլխի տեւական յանձնաժողովը, իր բանակցութիւնները աւարտեց եւ տեղեկագիրը պատրաստեց։ Բանակցութիւնները տեղի ունեցան Ատանայի Թուրք Օճախին մէջ։

ԱՐՏԱՇԷՍ ՄԻՐՋՈՅԵԱՆ

ցաւով կը տեղեկանանք, որ բանտի մէջ մեռած է հին դաշնակցականներէն Արտաշէս Միրզոյեան։ Հանգուցեալը գործած է Պարսկաստան, Կովկաս, Պուլկարիա եւ Մուշ։

Կամաւորական շարժման շրջանին եղած է անդրանիկի վաշտապետներէն մէկը։ Անկախ Հայաստանի մէջ էջմիածնի գաւառական կարեւոր պաշտօնեայ էր, սիրուած ժողովուրդէն։ Իր կարեւոր մասնակցութիւնը ունեցած է փետրուարեան ապստամբութեան մէջ։

ՀԱՅՈՒ ՄԸ ՈՃԻՐԸ

Գանի մը օրուան մէջ երկրորդ ոճիրն է որ կը պատահի Մարսիլիոյ շրջանի Հայերուն մէջ, չնչին պատառներու հետեւանքով։

Բաց պատուհանի մը պատճառաւ Մարտրաք հաստատուած Հայերէն, 28 տարեկան Արամ Տէմիրճեանի եւ իր երկու դրացիներու միջեւ վէճ մը ծայր տուաւ։ Զափազանց գրգռուած, Արամ դանակով յարձակեցաւ եւ սպաննեց Սարգիս Քէօսէեանը 30 տարու եւ կարապետ Տէրտինեանը 27 տարու, հայր երեք զաւակներու։

Կատղած՝ մարդասպանը տակաւին կը սպառնար ուրիշ հայրենակիցներու ալ, բայց օգնութեան աղաղակներէն հասնող ոստիկանները ձերբակալեցին զայն ու բանտ տարին։

ԱՂԱԲԵԿՈՎ ԿԸ ԽՕՍԻ...

Երէկ գրեր էինք թէ Չեկայի գլխաւոր գործակալներէն Ժորժ Սերկեեւիչ Աղաբեկով հրաժարած է իր ուժէ պաշտօնէն եւ թէ Բեսեդովսկիի պէս կը պատրաստուի յայտնութիւններ ընել Չեկայի գործունէութեանմասին։

Աղաբեկով հայ է ծագումով, 35 տարու եւ ֆրանս. մէկ քանի թերթերու յայտնած է թէ վախ չունի Չեկայի փոխ-վրէժէն, որովհետեւ գաղտնիքները զորս ունի իր գլխուն մէջ, կրնան դինքը ղերծ կացուցանել ամէն վտանգէ։

— Բեսեդովսկին փրկուեցաւ շնորհիւ իր յայտնութիւններուն։ Երբ լուր տրուեցաւ Մոսկուա անոր փախուստին մասին, Չեկայի փոխ պետը կանչեց զիս եւ ըսաւ.— Հնդկաստան պիտի երթաս, բայց նախ պէտք է անցնիս Փարիզէն եւ հոն կարգադրես Բեսեդովսկին։ Բայց, երբ Մոսկուայի մէջ լսուեցաւ թէ ան յայտնութիւններ կ'ընէ, վախցան թէ անոր մահը կրնայ աղմուկ յարուցանել եւ զիս ազատեցին սպանիչի պաշտօնէս։

Ըստ իր յայտարարութեան Աղաբեկով կը ճանչնայ արտասահմանի բոլոր չեկիստները, թիւով 150-200, զորս մտադրած էդիմակազերծելու իր կարծիքով։

Չեկայի գործունէութիւնը Ռուսիոյ մէջ, կախում ունի դէպքերէն։ Հողերու համայնացման օրերուն, ընդդիմութիւնը այնքա՛ն զօրաւոր էր, որ Չեկան ստիպուեցաւ մեզմ վարուիլ։ Բայց արտասահմանի մէջ, ան կը շարունակէ եռանդուն գործունէութիւն մը, որուն դէմ ո՛չ մէկ օտար կառավարութիւն լրջօրէն կը շարժի։

Չեկայի նախկին լրտեսը քաղաքական կարծիքներ ալ ունի։ Պատասխանելով խմբագրի մը հարցումին, յայտնեց թէ Ռուսիոյ մէջ, եթէ ճարտարարուեստացման ներկայ խենթութիւնը տեւէ, երկրին վիճակը երթալով կը վատթարանայ. բայց եթէ ոանձները թոյլ տան, եթէ նեպը վերսկսի, ո՛վ գիտէ...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԱՁՈՒԵՑՈՒՄՐԴԱՐԸ

Ինչպէս տեսանք «Համատարած կոլլեկտիւացում»ը Հայաստանում (ինչպէս եւ Ռուսաստանում) ունեցաւ արիւնալի մի շարք հետեւանքներ, որոնք անդրադարձան գիւղացիական տնտեսութիւնների վրայ, արտադրողական ունակութեան բարձրացման վրայ։ Այդ պատճառներով երկիրը կրում է այն տեսակ մի անօրինակ տագնապ։

Մենք նախորդ յօդուածում գոյց տուեցինք, թէ ինչպէս «Համատարած կոլլեկտիւացման»հետ սկսեց նաեւ «Համատարած անասունների կոտորում, եւ որովհետեւ այդ բոլորը մի «գլխապտոյտ» էր, ուստի մեզ անհրաժեշտ է ուսումնասիրել թէ «Համատարած»ը ինչպէս անդրադարձաւ արդիւնաբերութեան եւ գիւղագիական տնտեսական ճիւղերի վրայ։

Գարնանացանի այն կամպանիան,որ գործադրւում էր,գարնանացանի սեզոնը իրագործել Հայաստանում — բոլորը ջուրը ինկաւ։

Ինչպէս էին տանում գարնանացանի աշխատանքները գիւղերում։ Գիւղացու ձեռքի տակ գտնւած հողերը բռնի ուժով (որը յատուկ է կոմունիստներին) կարգադրւում էր շրջանի լիազօրի կողմից, որ պէտք է ցանւի բամբակ եւ այլ տեխնիկական բոյսեր։ Չէ՞ որ կուսակցական 15րդ խորհրդաժողովը որոշել էր, «ոչ թէ հասնել առաջաւոր կապիտալիստական երկրներին,— այլ եւ նրանցից անցնել» կամ. «ոչ թէ մի կախւում կապիտալիստներից»։ Ահա մի հրապարակի վրայ յայտնաբերւած հարց, որի լուծումը պայմանաւորւած էր, գարնանացանի յաջող աշխատանքների հետ։ Ինչպէս էր անցկացւում գարնանացանի աշխատանքները գիւղերում, մենք տեսանք որ նա ամենեւին չէր բղխում, գիւղացու շահերից կամ որեւիցէ առնչութիւն չունէր նրա յօժար կամքի հետ։ Գիւղացին իր գլխի տէրը չէր, նա որպէս մի ճորտ, կատարում էր ինչպէս ճորտատիրական հասարակարգում, կալւածատիրոջ Ֆրամանը, այնպէս էլ այժմ կատարում է կրէմլի դիկտատորների կամքը։ Նա որպէս մի չարքաշ աշխատաւոր հանդէս է գալիս աշխատողի դերում։ Իսկ ում համար, կամ ինչո՞ւ համար է բամբակ ցանում՝, դա նրան յայտնի չէ։ Իսկ ինչ վերաբերմունք կ'ունենայ գիւղացի դէպի իր այն ցանքը, որը հաստատ հաւատացած է որ իրան չէ։ Պարզ է որ բացասական, մանաւանդ այն գիւղացին, որի գլխին իջել է համատարածի ծանր հարւածները, եւ նա խելագարւած՝ պատրաստւում է վրէժխնդիր լինելու, այն մարդկանց, որոնք պատճառ եղան նրա անասունների փշացմանը, ապրանքների ոչնչացմանը, այլ խօսքով՝ նրա տնտեսութեան յանկարծակի սնանկութիւնը։

Այս բացասական վերաբերմունքը կ'ունենայ, նաեւ կառավարութեան հանդէպ։ Ինչ վերաբերմունք պէտք է ունենայ մի գիւղացի դէպի իր կառավարութիւնը, երբ իր երախաների համար, 3-4 մեգր հողատեղ տնկելով բոստան եւ այլ բանջարեղէններ, այն նպատակով որ իր երախան կաթ կամ մածուն ուտելիս — վարունգ կամ ձմերուկ տայ ձեռքը, իսկ կառավարութիւնը համարելով յանգագործութիւն, այդ գիւղացուն, նախ տաքանում է եւ ապա կանանչ բոստան հերկելով, նորէն, խորտակելով նրա յոյսերը, ստիպում է նրան, բռնի ուժով բամպակ ցանելու։ Գիւղացու հոգեբանութեան ծանօթ մարդը ի հարկէ կ'ասէ որ բացասական կը լինի պետութեան եւ գիւղագիութեան փոխյարաբերութիւնը։ Բնական նաբար պարզ է որ բոլշեւիզմի «կուլտուրական յեղափոխութեանը» ծանօթ գիւղացին, անշուշտ իր նպատակին հասնելու համար պիտի դիմէր այլ այլ միջոցների, եւ ինչպէս մենք կը տեսնենք քիչ յետոյ,որ նրան յաջողւում էր Այսպիսով կառավարութեան գանքսային քաղաքականութիւնը, կամ գարնանացանի կամպանիայի ընթացքի աշխատանքները հիմն ում էր ուժի, բռնութեան, հետեւապէս Չեկայի ուժի վրայ։

Ահա ինչպիսի հասկնալ ամէն ժամանակ, երբ այդքան գրւում են խորհրդային թերթերն գարնանացանի նւաճումների մասին։ Բայց եւ այնպէս, գիւղացիները տեղերում բողոքում էին այդ «բռնի նոր գանքսային քաղաքականութեան» դէմ։ Իսկ շատերն էլ որպէս կեանքի մի սեւ լուծ՝ տանում էին։

Գիւղերում գիւղացիների աւելի «գիտակից» մասը խորհրդ. կառավարութիւնից ստացած բամպակի սերմերը թշնամաբար խառնում էին եւ այնուհետեւ ցանում, իմանալով որ յետագայում երբ բամպակի գանքի ժամանակը կ'անցնի, չնայած ուշ, բայց նա իր ասածը կ'անի, բոստան բանջարեղէն եւ այլ իր սիրած ցանքսը կը ցանի։ Ի հարկէ բամպակի այդ սերմերը չէին կարող կանանչել, վարչական մարմինների տւած հարցերին, գիւղացիները պատասխանում էին, «որ բամպակի այս սերմերը ուրիշ են, մեր հողերում չեն ծըլում»։ Դարձեալ, պէօրիւք վէդի, փարաքար գէօդակլու, ողորբեկլու եւ այլ գիւղերը՝ այդպէս վարւեցին։

ՑԱԿՈՒԲ ԱՐԱՐԱՏՑԻ

ԽԼԻՐԴ

«Խլիրդի դէմ ազգային պաշտպանութեան շաբաթ»։ Այսպէս կոչւեցաւ այն կարճ շրջանը, երբ փարիզի անթելի կայաններըը, դասախօսական բեմերը, պատերուն ազդերը եւ բոլոր բժշկական մարմինները ամբողջ շաբաթ մը Ֆրանսայի ժողովուրդին պարզեցին ահաւոր աղէտը, որ կը կոչուի խլիրդ (քանսէր)։

Արդարեւ սիֆիլիսին եւ հիւծախտին հետ խլիրդը կը կազմէ այն երրորդութիւնը, որ մահուան մանգաղը ձեռքը կը հնձէ մարդկութիւնը։ Սակայն խլիրդին մահը ամէնէն սարսափելին է, ահաւոր գաւեր կը պատճառէ եւ կը սպանէ ի վերջոյ։

Մեր ժողովուրդը եւս արդէն սկսաւ ծանօթանալ ստինքի, ստամոքսի, արգանդի խլիրդի դէպքերուն, որոնք ի՛նչ տուներ մարթին։

Եւ «պաշտպանութեան շաբաթը» կը թելադրէր.

1.— Ամէն վերք, որ երկար կը տեւէ, գոյց տալ բժիշկի։

2.— Ամէն արիւնահոսութիւն, որ երկար կը տեւէ,բժշկական քննութենէ անցընել։

Պէտք է գիտնալ, որ խլիրդը — այն որ կը սպանէ — կը պատահի 30 տարիքէն յետոյ։ Ժառանգական չէ,ոչ ալ տարափոխիկ։ Կ'ըսեն թէ գարնջուր խմողները քիչ կ'ենթարկուին խլիրդի։

ՀԱՍԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

(Շետեւեալ տեղեկութիւնները կը քաղենք Հ. Կ. Խաչի կեդր. վարչութեան տարեկան տեղեկագրէն.—
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ.

Անցեալ 9րդ Ընդհանուր ժողովէն մինչեւ ներկայ թուականը, ուր ամբողջ երեք տարի կանցնի, ուր ամբողջ երեք տարի ընթացքին, անխնայ միջոցներ ի գործ դնելով, կազմակերպել յաջողած ենք, Թրակիոյ-Մակեդոնիոյ շրջանը, Շրջանային Առաջամեայ վարչութիւն մը կազմելով Սկլանիկի մէջ եւ հրահանգելով որ կազմակերպական ցանց մը ստեղծուի այդ շրջանի հայաբնակ խումբ մը քաղաքներուն մէջ, որոնց աշխարհագրական դիրքը Սկլանիկը կ'ընծայէ իբրեւ կեդրոն։

Սուրիոյ մէջ շարունակած ենք սկսուած աշխատանքները եւ կազմուած ու մեր վաւերացումը ստացած է Առաջամեայ վարչութիւնը, Հալէպի մէջ։

Յունաստանի Շրջանը բաւարարած ենք նախատեսուած չափով։ Տեղւոյն վրայ կատարուած փորձերը հասոյթ գոյացնելու համար,երբեմնակի յաջողութիւններ ապահոված ըլլալով հանդերձ մեր Շրջանային Վարչութեան եւ այդ շրջանի մասնաճիւղերուն, բաւական նեղութիւն կրեց շրջանը նիւթապէս։ Սակայն կազմակերպական մեքենան չկասեցաւ. դպրոցները եւ ընդհ. գործը սկսուած թափով շարունակուեցան։

Այնտեղ ունինք սեփական շէնքեր, որոնցմէ ամէնէն արժէքաւորը, Դոգինիոյ մեր Ջաւարեան անունով մկրտուած նորակառոյց դպրոցին շէնքն է, որուն ամբողջական ծախքը վճարել լրացնելով, անցեալ շրջանին, այս տարեշրջանի սկիզբէն, շէնքին օրինական թուղթերը կեդրոնական Վարչութեանս անունին հինուեցան եւ ուղարկուեցան մեզ։ Գետինը վարձով առնուած է. այդ վարձուած գետինը ժամանակաւոր է եւ ներկայ տարեշրջանի Ընդհ. Ժողովը պիտի որոշէ գնել այդ հողը եւ վերջնականօրէն սեփականացնել շէնքը Հայ Կարմիր Խաչին համար։ Գետինը կ'արժէ մօտ 1200 տոլար։

Ընդհանրապէս, Յունաստանի շրջանին մէջ գոհացուցիչ են մեր աշխատանքներ եւ կը հաւատանք, որ հետզհետէ ինքնապահ կը դառնայ այդ շրջանը։

Ատրպատական.— Թաւրիզի մեր Շրջ. Վարչութիւնը ներկայ տարեշրջանի ընթացքին եւս շարունակեց 10 — 16 գիւղական դպրոցներու նպաստել, մեծ մասով քրտախօս հայ գիւղերու մէջ հայերէնի դասընթացքներ բանալով։

Կազմակերպական աշխատանքները սկսած ըլլալով այդ շրջանի զանազան վայրերուն մէջ, պահ մը կանգ առին, քաղաքական վերազրումներէ զգուշանալու համար։ Սակայն այժմ աւելի կուռ եւ լուրջ աշխատանքներ կը կատարուին,ստեղծելու համար նոր մասնաճիւղեր։

Արեւմտեան Եւրոպա.— Փարիզի մեր Շրջ. Վարչութիւնը, թերեւս իր կամքէն անկախ պատճառներով, չկարողացաւ աչքառու նուաճում մը կատարել, կազմակերպական գետնի վրայ։ Մէկէ աւելի պատճառներ արգելք հանդիսացան որ այդ միջավայրին մէջ չկարենան ստեղծել ժողովրդական լայն հետաքրքրութիւն՝ Հայ Կարմիր Խաչին հանդէպ։Նիւթական հասոյթներու պակասը թերեւս մեծագոյն արգելքը հանդիսացաւ մեր Շրջ.Վարչութեան, որպէսզի դրական ու շօշափելի գործ մը ստեղծէր իր շուրջը։

Շրջուն գործիչ մըն ալ չունեցան, որպէսզի այդ շրջանի մեր արդէն կազմ ու պատրաստ մասնաճիւղերը մղէր արդիւնաւոր եւ սիստեմատիկ աշխատանք կատարելու։ Այսուամենայնիւ, այդ շրջանը ամէն հաւատիք կը ներկայացնէ, մերձաւոր ապագային դառնալու մեր ամէնէն աւելի գործօն մէկ շրջանը։

Կեդրոնական վարչութիւնս, Փարիզի մեր Շրջ. Վարչութեան միջոցաւ որդեգրեց երկու ուսանողուհի եւ մէկ ուսանող, որոնց մինչեւ յառաջիկայ օգոստոս հոգացած ենք ծախքերը։

Իրաքի Շրջան.— Պաղտատի մեր ընկերուհիներն ու ընկերները, Չանքեր ի գործ դնելով, յաջողած են ձեռք բերել տեղական իշխանութեան վաւերացումը եւ առ այդ յոյս կայ, որ գործունէութեան նոր թափ մը պիտի սկսի, այդ շրջանին մէջ եւս մասնաճիւղային ցանց մը ստեղծելու։

Պուլկարիա.— Շրջանը կազմակերպուեցաւ աւելի քան 15 մասնաճիւղերով եւ 500է աւելի ընկերուհիներով։ Հաղորդակցութիւնը եւ կապը կեդրոնիս հետ՝ շատ կանոնաւոր եղած են։ Շրջանի մասնաճիւղերը՝ կազմութեան օրէն սկսած՝ երեւան բերին աննման եռանդ եւ սարքեցին հանդէսներ ու ձեռնարկներ, ինչպէս նաեւ հանգանակային հասոյթներ ունեցան։

Ռումանիա.— Կ Խաչի շուրջ այս շրջանին մէջ հետաքրքրութիւնը կ'աճի օր ըստ օրէ։Մասնաճիւղեր կան Պուքրէշի,Քոնստանցայի եւ Պազարճըզի մէջ։ Նոր մասնաճիւղեր հիմնելու հաւաստիքներ կան։

Ամերիկայի շրջան.— Անցեալ շրջանին ունէինք 63 մասնաճիւղեր, որոնցմէ 6ը Սան Սանուհիներու մասնաճիւղեր էին։

Վերջին 8 — 10 ամիսներու մէջ յաջողած ենք կազմել 10 նոր մասնաճիւղ, որոնցմէ 3ը Սան-Սանուհիներու մասնաճիւղեր են։

Այս նոր հիմնուած մասնաճիւղերու շարքին մէջ է նաեւ Հաւանայի Քուպա քաղաքին մէջ վերջերս հիմնուած մեր մեծ մասնաճիւղը։

Միւս կողմէ, անդամներու յաւելում տեղի ունեցաւ գրեթէ ամէն տեղ, եւ անդամական — ամսավճարներն եւս կանոնաւոր կերպով գանձուեցան։

ԴՐԱՄԱԿԱՆ ԱՌԱՔՈՒՄՆԵՐ

Ազգօրականներու եւ բանտարկեալներու ընտանիքներուն ղրկած ենք 300 տոլար։ Սուրիոյ նորեկ հայ գաղթականներուն՝ մեր Շրջ. Վարչութեան միջոցաւ ղրկած ենք 1000 տոլար։ Դարձեալ Սուրիա, մեր մասնաճիւղերուն եւ Շրջ. Վարչութեան ղրկած ենք՝ 1495 տոլար, զանազան առիթներով։ Պէյրութի Շանթ-Աղբալեան հաստատութեան (Հայ Ճեմարան) ղրկած ենք 3000 տոլար։ Արեւմտեան Եւրոպայի մեր Շրջանային Վարչութեան ղրկած ենք 456 տոլար, Հայ Կ. Խաչի Փարիզը որդեգիրներուն մասնավճարով յատկացնելու, մինչեւ օգոստոսի վերջը։ Յունաստանի Հայ Կ. Խաչի կարիքներուն համար ուղարկած ենք 1500 տոլար։ Ատրպատականի Շրջ. Վարչութեան ուղարկած ենք 500 տոլար, դպրոցներու կարիքներուն համար, իսկ 300 տոլար ալ Սալմաստի մէջ երկրաշարժէն աղէտեալներու յատկացուելու համար։

Թրակիոյ Մակեդոնիոյ Շրջ. վարչութեան Սկլանիկ, ուղարկած ենք կազմակերպական ծախքերու համար՝ 200 տոլար։

Այլ եւ այլ երկիրներ, մեր ուսանողուհի եւ ուսանող որդեգիրներու ուղարկած ենք 435 տոլարի գումար մը, ըստ կարիքի։

Հիւանդներու եւ այրիներու օժանդակած ենք 70 տոլարի գումարով մը։

Սկսած 1929 օգոստոսէն մինչեւ 1930 մայիս, ուրեմն, մեր առաքած գումարներուն համար, 9րդ Ընդհանուր ժողովը գծած եւ կեդրոնիս յանձնած էր ընդհանուր Պիւտճէի նախահաշիւ մը, որոշ ահմանումներով։Պիւտճէի նախահաշուի այդ ահմաններուն մէջ ինալով, մեր առաքած դրամին ընդհանուր գումարը ցարդ հասած է 9256 (ինն հազար երկու հարիւր յիսունեւվեց) տոլար։

Բացի այս, տպագրած ենք Հայ Կ. Խաչի Ալպոմը, մօտ 260 էջնոց մեծ ծաւալով գիրք մը, որուն քլիշէները եւ տպագրութիւնը կեդրոնիս արժած է մեծ կակ գումար մը, որուն մասին վերջնական հաշիւը կը ներկայացնենք Ընդհ. Ժողովին։

Հայաստանի այգեգործական մի քանի գաւառները, գլխաւորապէս Երեւանն ու Էջմիածինը, իրենց ամենամեծ, ծանր ու դժւար աշխատանքը համարում են այգիների փորելը, որ, որպէս ֆիզիկական մեծ աշխատանք, կատարւում է միայն եւ միայն տեղական եւ այլ գաւառներից եկած (Դարալագեազ, Ն. Բայազետ, Լենինական եւ այլն) տղամարդ աշխատաւորների միջոցով։ Իսկ ո՞ւր էին այդ աշխատաւորները այս տարի։ Դրանց որոշ մասը դեռ «համատարած»ի նախօրեակին Զեկայի դամբրոնները ձերբակալելով՝ աքսորել էին Սիբիրի լայնածաւալ բոնավայրերի մէջ, իսկ խոշոր մասն էլ յուսահատական պայքար էին մղում լեռներում, սարերում, չեկիստների հետ, եւ կոտորւում իրար։ Գիւղական կիսայրի կանայք, երեխաներն ու ծերերը, որոնք որպէս «անվնաս տարր» գիւղում էին, անկարող էին կատարել այդ աշխատանքները։ Մենք տեսնում ենք երկիրը ղրկւած լինելով իր շէնցնող ուժերից, այսօր ւնացել է անապատ։ Այգիներն մինչեւ իրենց արմատի ծայրը խեղդւած են խոտերի մէջ, փշերն ու տատասկները ծածկել են զեղեցիկ այգիներն ու արտերը եւ դժոխքի վերածել։

Անտարբեր մնալ չի լինում երբ գնացքով անցնելիս տեսնում է մարդ, միշտ խոպանացած արտեր, չվարւած այգիներ, դեռ մինչեւ օրս սպասում են անտէր անտիրական ւնացած իրանց մշակմանը։ Տեսնում է մարդ դաշտերում հատ ու կենդ կին, աղչիկ, երախայ,ի. իշխանութեան ժխտիչ հայեացքներն աչքերին՝ խեղճ, մոլար ու զլխիկոր նստած սգում են իրենց ծաղկաւէտ երկրի ավերութեան վրայ։ Միթէ հեշտ է նկարագրել բոլշեւիզմի ոճիրը մեր երկրի մէջ։

Դեռ մինչեւ օրս էլ, երկրի աշխատաւորութիւնը հերոսաբար Դիլիջանի, Ղարաքիլիսայի, Դարալագեազի եւ Ն. Բայազետի գաւառներում արիւնաթաթախ՝ ընկնում են իրենց ազատութեան ճանապարհին։ Այսպէս, գիւղացիութիւնը միանգամից շուռ եկաւ տասը տարւայ ընթց, իւր միւս ձախ կողքի վրայ եւ միանգամից իրեն «հրաժարիւքն» ասեց Ի. կառավարութիւնից։

Արդ, հետեւողական կերպով ուսումնասիրելով այդ երեւոյթները, մենք յանգում ենք այն եզրակացութեան, որ գիւղացին ամբողջութեամբ հրաժարւել էր բուն նիւթերի արտադրողականութիւնից։ Նա հնարաւորութիւն ունեցաւ քաղաքի եւ գիւղի հետ ունեցած անքակտելի կապերի վրայ խաչ քաշել։ Իսկ առանց հուժ նիւթերի, որը արտադրում էր գիւղացիութիւնը, քաղաքի արդիւնաբերութիւնը, մանր թէ խոշոր կանգ են առնելու։

Գիւղացիութեան սուրբ աշխատանքի պտուղներն ահաւասիկ տասը տարի է որ վայելում են արիւնարբու չեկիստներն ու վարձկան կոմունիստները, որոնք տարապրեցին նրանց լաւագոյն զաւակները եւ որոնք մինչեւ այսօր, տառապում են և աքսորում, հիւանդ, թոքախտ, անտէր ու անտիրական մնալով եւ կերպով ալիքների կորչելը լինում էր շատ երկար որ այս տարւան լաւ բերքից յետոյ փճանան։ Այսպէս էին վերաբերւում գիւղացիները դէպի իրենց դաշտային աշխատանքները. որի մասին ստիպւած «Խորհ. Հայաստան» թերթը մի քանի անգամ գրեց։ Այնուհետեւ ամենածանր եւ գլխաւոր աշխատանքը, որ այգիների փորելն է, դա արգէն անկարելի էր կատարել, շնորհիւ մի շարք առարկայական պատճառների։

Որոնք էին այդ առարկայական պատճառները?։

Հայաստանի այգեգործական մի քանի գաւառները, գլխաւորապէս Երեւանն ու Էջմիածինը, իրենց ամենամեծ, ծանր ու դժւար աշխատանքը համարում են այգիների փորելը, որ, որպէս ֆիզիկական մեծ աշխատանք, կատարւում է միայն եւ միայն տեղական եւ այլ գաւառներից եկած (Դարալագեազ, Ն. Բայազետ, Լենինական եւ այլն) տղամարդ աշխատաւորների միջոցով։ Իսկ ո՞ւր էին այդ աշխատաւորները այս տարի։ Դրանց որոշ մասը դեռ «համատարած»ի նախօրեակին Զեկայի դամբրոնները ձերբակալելով՝ աքսորել էին Սիբիրի լայնածաւալ բոնավայրերի մէջ, իսկ խոշոր մասն էլ յուսահատական պայքար էին մղում լեռներում, սարերում, չեկիստների հետ, եւ կոտորւում իրար։ Գիւղական կիսայրի կանայք, երեխաներն ու ծերերը, որոնք որպէս «անվնաս տարր» գիւղում էին, անկարող էին կատարել այդ աշխատանքները։ Մենք տեսնում ենք երկիրը ղրկւած լինելով իր շէնցնող ուժերից, այսօր ւնացել է անապատ։ Այգիներն մինչեւ իրենց արմատի ծայրը խեղդւած են խոտերի մէջ, փշերն ու տատասկները ծածկել են զեղեցիկ այգիներն ու արտերը եւ դժոխքի վերածել։

Անտարբեր մնալ չի լինում երբ գնացքով անցնելիս տեսնում է մարդ, միշտ խոպանացած արտեր, չվարւած այգիներ, դեռ մինչեւ օրս սպասում են անտէր անտիրական ւնացած իրանց մշակմանը։ Տեսնում է մարդ դաշտերում հատ ու կենդ կին, աղչիկ, երախայ,ի. իշխանութեան ժխտիչ հայեացքներն աչքերին՝ խեղճ, մոլար ու զլխիկոր նստած սգում են իրենց ծաղկաւէտ երկրի ավերութեան վրայ։ Միթէ հեշտ է նկարագրել բոլշեւիզմի ոճիրը մեր երկրի մէջ։

Դեռ մինչեւ օրս էլ, երկրի աշխատաւորութիւնը հերոսաբար Դիլիջանի, Ղարաքիլիսայի, Դարալագեազի եւ Ն. Բայազետի գաւառներում արիւնաթաթախ՝ ընկնում են իրենց ազատութեան ճանապարհին։ Այսպէս, գիւղացիութիւնը միանգամից շուռ եկաւ տասը տարւայ ընթց, իւր միւս ձախ կողքի վրայ եւ միանգամից իրեն «հրաժարիւքն» ասեց Ի. կառավարութիւնից։

Արդ, հետեւողական կերպով ուսումնասիրելով այդ երեւոյթները, մենք յանգում ենք այն եզրակացութեան, որ գիւղացին ամբողջութեամբ հրաժարւել էր բուն նիւթերի արտադրողականութիւնից։ Նա հնարաւորութիւն ունեցաւ քաղաքի եւ գիւղի հետ ունեցած անքակտելի կապերի վրայ խաչ քաշել։ Իսկ առանց հուժ նիւթերի, որը արտադրում էր գիւղացիութիւնը, քաղաքի արդիւնաբերութիւնը, մանր թէ խոշոր կանգ են առնելու։

Գիւղացիութեան սուրբ աշխատանքի պտուղներն ահաւասիկ տասը տարի է որ վայելում են արիւնարբու չեկիստներն ու վարձկան կոմունիստները, որոնք տարապրեցին նրանց լաւագոյն զաւակները եւ որոնք մինչեւ այսօր, տառապում են և աքսորում, հիւանդ, թոքախտ, անտէր ու անտիրական մնալով

ՄԱՐԱԽՆ ԻԲՐԵԻ ՊԱՏՈՒՀԱՍ

Եւ մարախ ծածկեաց զամենայն երեսս երկրին, եւ եկեր զամենայն բանջար եւ զամենայն պտուղ ծառոց.եւ ոչ մնաց կանաչ, ոչ ի ծառս եւ ոչ յամենայն բանջար դաշտի յամենայն երկրին եգիպտացւոց (Ելից, Գլ. ժ. 15)։

Եւ, Աստուածաշունչը, այսպէս, կը պատմէ թէ, մարախը խուժեց փարաւոնին պալատէն ներս, աւերեց եգիպտացիներուն տուներն ու պարտէզները։

Այս պատմութիւնը կը հաստատէ թէ հինէն ի վեր ծանօթ էր մարախը իբրեւ պատուհաս դաշտերուն ու պարտէզներուն։

Եւ սակայն դեռ մինչեւ հիմա շատեր չեն գիտեր թէ ի՛նչ մեծ աղէտի ենթարկւած է Հայաստան, մարախի վերջին արշաւին առթիւ։

Երբ փոքր էի, դաշտերէն մարախ բռնելու կ'երթայինք, սընուցանելու համար մեր վանդակներուն թռչունները։ Կանաչ ու մանտրտիկ մարախներ, խառնիճ (sauterelle), որոնց գլուխը կը փրցնէինք ու կուտայինք սարեակներուն։ Կային նաեւ մեծ մարախներ, որ կը ցատկրըտէին ու կը թռչկոտէին արտերուն մէջ։ Երբեմն բարակ թուղթէ տուփեր կը շինէինք, մէջը մարախ մը կը դնէինք ու գետին կը ձգէինք։ Յանկարծ թուղթէ այդ մանրանկար տապանները կը թռչկոտէին օդին մէջ, ամէն անգամ որ մարախը ցատկելու փորձեր ընէր։ Խնդալէն կը ճաթէինք մենք, երկու ձեռքով բռնած մեր դմբլիկ փորը։

Ախո՛ն, մարախը (criquet), որ հիմա կ'աւերէ Հայաստանը, իսկակա՛ն ու մեծ աղէտ մը կը պատրաստէ։ Ըբրաւեցիները, այլաբանական ձեւով մը ներկայացնելով զայն, կը կոչէին Աբադոն (Յայտ. Գլ. Թ. 11), որ կը նշանակէ աւերիչ, կորստաբեր։

***

Մարախը ուղղաթեւ միջատ մըն է։ Եւեւի ոտքերը չափազանց երկար են, այնպէս որ եռանկիւնաձեւ կը ծալլեն՝ երբ կը հանգչին գետինը։ Երբեմն արագ կշռոյթով մը եւեւի ոտքերը կը զարնեն իրենց թեւերուն, մասնաւոր ձայն մը հանելով դաշտերուն մէջ։ Նոյն այդ ոտքերուն եւեւի կողմը սղոցի ձեւ ունի, եւ կը ծառայէ բոյսերուն տերեւները կամ ցօղունները կտրելու։

Մարախները (acridium) քանի մը տեսակ են. 1.— Մարոքեան 2.— Սուտանեան, 3.— Իտալեան մարախներ։ Ապահովաբար, Հայաստանի գաւառներուն մէջ տեսնուած տեսակը, զոր Ռուսերը շիստոցերկա կ'անուանեն, Սուտանեան մարախն է։

Մարոքեան մարախ.— Դեղնորակ կարմիր գոյն մը ունի։ Առատութեամբ կը գտնուի Ափրիկէի հիւսիսային կողմերը, մասնաւորաբար Աթլաս լեռներուն արօտատեղիներուն վրայ։ Հովը յաճախ կը քշէ զանոնք դէպի ծով։ Էգերը օդոստոս ամսուն կը փորեն հողը եւ կը թաղեն իրենց ածած հաւկիթները։ Յաջորդ եղանակին՝ ձագերը հետզհետէ կը մեծնան, եւ օր մըն ալ յանկարծ կը թռչին հովին ուղղութեամբ։ Ցերեկները կը թռչին եւ գիշերները կը նըստին բանջարեղէններու վրայ, շարունակ ուտելով։ Ցետոյ նո-

---

են, չտեսնելով իրենց զաւակները։

Արդ, կարելի՞ է յուսալ այսուհետեւ Մտալինից կամ առհասարակ բոլշեւիկներից՝ խելացի, մտածւած որ եւ է ընթացք։ Դա կատարեալ անմտութիւն կը լինի։ Որովհետեւ, Մտալինը շարունակում է նորէն իւր փորձերը — մեր ժողովրդի համար նորանոր «գլխապտոյտներ» առաջացնելու, որոնք մեր հայրենիքը մատնելու են սովի եւ չտեսնուած աղքատութեան։

ՅԱԿՈԲ ԱՐԱՐԱՏՅԻ

վառ նիւթեր նետելով՝ կը բռնկցնեն ամբողջ դաշտը։

Հաւկիթները փճացնելու համար, կը յանձնարարուի հողը փորել եւ հաւկիթ հաւաքել,կամ քիմիական նիւթեր սրսկել դաշտերուն վրայ։

Մարախին արշաւէն առաջ իբրեւ կանխարգելիչ միջոց, Հայաստանի մէջ կը գործածեն փայտի սղոցուկ, զոր կը սփռեն գետինը։

Ոմանք կը յանձնարարեն մարախին ամբողջը երեւցած տեղն, ուժանակներով դիւրավառ նիւթեր սրկսել օդին մէջ, այսպէսով այրելու հաւար մարախները։

Զորեքշաբթի օր Քոթիտիէն կը գրէր թէ Ալճերիա դարձեալ ենթարկուած է մարախներու արշաւին։ Քոսթանթին նահանգին համար ղրկուած են 100 հազար քառ.մեթր պղինձի թերթեր, 10,000 քառ. մեթր մուժլաթեր, որպէսզի կարելի ըլլայ պաշտպանել ցանքերը։ Նոյն տեղն պիտի գործածուին 375 հազար լիթր crésyl, և 170,000 քիլօ arséniate de soude։ Դժբախտաբար բոլոր այդ միջոցները ազդու չեն։ Գերմանացի մասնագէտները պատերազմի կազ կը յանձնարարեն։

Բարեբախտաբար կան կարգ մը մակաբոյծ անասնիկներ, որոնք հողին մէջ կը փնտռեն մարախին հաւկիթները ու կը փճացնեն զանոնք։ Կան մակաբոյծներ ալ, որ կը յարձակին մարախին ձագերուն վրայ։

Ժամանակ մը Ամերիկացի մը մասնաւոր մանրէներ մշակեց, սրսկելու համար մարախներուն վրայ։ Թուրքիոյ Այտըն նահանգին մէջ շատ փորձուած է այս մեթոտը։

Մարախները փճացնելու կը նպաստեն նաեւ ... մարախակերները։ Արդարեւ կան մոդուվուրդներ, Մաւրիտանացիներն ու Հոթէնթոթները, որոնք մարախ կ'ուտեն։ Եւ կ'ըսեն թէ... համով է մարախը,(ուտողաց ասուշ)։ Թունուզի մէջ ցեղախումբեր կան, որոնք մարախի պահածոյ կը շինեն։ Կառավարութիւնը եւս, քաջալերելու համար, ժամանակ մը աղ կու տար պահածոյ շինողներուն։ Ինչո՞ւ կը զարմանաք, Յովհաննէս Մկրտիչ եւս անուշ անուշ մարախ կ'ուտէր (Մարկոս, Գլ. Զ. 4), եւ յետոյ կուշտ ու կուռ կը հայհոյէր Հերովդէսի կնոջ եւ անոր ցատկան աղջկանը՝ Սալոմէի։

Ափսո՛ս, որ մարախին արշաւները չեն դադրած՝ հակառակ մարախակեր (acridiphage) մոդուվուրդներու որկրամոլութեան, եւ հակառակ գիտութեան հնարած բոլոր դէնքերուն։

Ուստի ճիշդ է ողբալ մարախին աւերը երբ ւնացել է մարգարէին հետեւեալ տողերով.

«Ողբացէ՛ք, մշակք, սգացուածովք ի վերայ ցորենոյ եւ գարւոյ, զի կորաւ կուիթք լագարակէ։ Սո՛ւգ էառ երկիր, թշուառացան դաշտք, ցաժաքեցաւ գինի, նուազեաց ձէթ։ Ցամաքեցաւ որթ, նուազեաց թուզ եւ նուռն եւ արմաւ եւ խնձոր, եւ ամենայն փայտ ագարակի գօսացաւ»։

ԱՐՄԱՇԱԿԱՆ

ՓՈՔՈՐԻԿԸ ՎԵՐՍԿՍԱԻ

Քանի մը օր տեւող հանդարտ օդերէ յետոյ, փոթորիկը դարձեալ վերսկսաւ Ֆրանսայի կարգ մը շրջաններուն մէջ։ Վուվրէյի վրայ առջի օր կաղինի մեծութեամբ խիտ ու յորդ կարկուտի տարափ մը տեղաց, կէս ժամէն աւելի։ Լուրը սակայն, երեկ իրիկուն առնուեցաւ հաղորդակցութեան միջոցներու ընդհատման հետեւանքով։ Փչող սաստիկփուքը արմատախիլ ըրեր էր ծառները եւ կոտրեր հեռաձայնի ու հեռագրի սիւները, երկու հազարէն աւելի հեկտար տարածութեան մը վրայ, փոթորիկը մեծ աւեր գործած է։ Այդ շրջանի մէջ միայն, ւնասը առայժմ կը գնահատուի աւելի քան 10 միլիոն ֆրանք։

«ԹԱՎՐԷԶ ՈՉ ԹԷ ՀԱՎՐԷԶ»

ՄՈՒՍՈՒԼ.— Մրջագետքի գ... թականներու այս կայ... Թէ կառավարական շրջանակներ եւ Թէ շրջապատի ժողովուրդի շադրութեան առարկայ եղած Մասնաւորաբար շրջապատի քիւ... ազգաբնակչութիւնը ականատ... ըլլալով մեր ժողովուրդի վերջ... նական աշխատանքներուն եւ տ... նելով նորահաստատ գիւղը իր ... պար տներով ու շարքերով, գ... նահատութիւնը խտացուած ... հետեւեալ տարօրինակ ասացո... քով՝ «Մի ըսէք Հավրէզ, ... Թավրէզ»։

Որքան ալ չափազանցու... ըլլայ մեր դրացիներու այս գ... հատանքը, այնու ամենայ... իրողութիւն մը կայ որ անկ... քելի է. այդ մեր ժողովուր... գերբնական աշխատանքն է։

Ինչպէս յայտնի է, անց... հոկտեմբերին միայն սկ... փոխադրութիւնը, ժամանակ... որ բնաւ համապատասխան ... նոր բոյն շինելու, տարիներ... վեր գետնին հաւասարած ... բակներու վրայ։ Հոս է որ մեր ... ղովուրդը՝ իր կենսունակութեա... գոյց տուաւ բոլոր թերահաւատներուն, Թէ ինք միայն նպաս... վարժուած չէ, եւ գիտէ իր գո... յատուկ կենսունակութեամբ, ... րաշինել աւերակները եւ իր ... յութիւնը պահել, նոյն իսկ ... մէնէն դժուար պայմաններ... մէջ։

Հոկտեմբերէ դեկտեմբեր ... մանակամիջոցին մէջ, մեր հ... րենակիցներուն սիստեմատիկ ... խատանքներուն շնորհիւ էլ ... 150է աւելի տուներ շինուե... եւ 700է աւելի անձեր տեղա... ւեցան, տեղացող անձրեւներ... տակը չմնալու համար։ Ա... միայն օտարները, նոյնիսկ մ... չէինք հաւատար որ այդ ան... պաստ պայմաններու մէջ, ... տեղափոխուած ժողովուրդը պ... կարողանայ տուներ կառուցա... եւ հոն տեղաւորուիլ։ Այս կա... ծով ալ, նոյնիսկ միջոցներ ձ... առնուեցան մինչեւ գարուն՝ ... ղաւորելու շրջապատի ժողովո... գիւղերու մէջ, սակայն Թէ ... տարներու եւ Թէ մեր մտա... խութիւնը ջուրը ինկաւ, շնոր... ժողովուրդի գերբնական ջան... բին։ Ընկարելի է մէկիկ - մէ... պատկերացնել տագնապդոց, ... ներու եւ երախաներու անընդհ... աշխատանքները. պէտք է մ... աչքով տեսնէ լիովին գաղափա... մը կազմելու համար։

Հապա՞ վարուգանքի աշ... տանքը դեռ տուներ կէս չեղ... ամէն օք բահ ու բրիչով սկ... հողը փորփրել յաջորդ տարու... ապրուստը ապահովելու համ... Որքա՜ն միամիտներ եղան, որ... կը ծաղրէին բահ ու բրիչով ... րոնց կատարած գանքի աշխատան... ները։ Բայց ժողովուրդը վստ... իր կենսունակութեան, այս գ... ծին մէջ ալ յամառ կերպով շ... րունակեց աշխատիլ, եւ ինչ խ... որ յաջողեցաւ։ Գաղթ. կոմիտէ... օժանդակութեան շնորհիւ, բացա... ձակ մեծամասնութիւնը քիչ մ... ցորեն ձգեց գետին։ Որքան որ ամ... ղածը խիստ անբաւարար է, բ... եւ այնպէս, բան մըն է, այսքան ... չեղածէն շատ ու շատ լաւ։

Տարիներէ ի վեր անգործ մ... Թեան դատապարտուած մեր ... խատաւոր ձեռքերը, օրն ի բ... չարաչար կ'աշխատին այսօր փ... Թով ինքնաբաւ գառնալու հ... ար։ Բոլոր անոնք որ չկրցին ... գած աշնան տուներ շինելու, ... գարնան այդ պակասը լրացնի։ Միւս կողմէ ձեռնարկեցին պ...

ՅԱԳՉՎԱԾ ՎԿՎԴՈՒՅՆԸ

Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՄԵՆԱՆ ԻՆ ԳԱՂՏ

Մեր փոքրիկ ընթերցողները հաճախ են հարցնում մեզ, թե ինչպես է ծնվում գրքի հեղինակը, ինչպես է նա գրում իր գրքերը, ինչպես է նկարազարդում դրանք նկարիչը, ինչպես է գրքի տեքստը հայտնվում տպագրական մեքենայի վրա, ինչպես է գիրքը հասնում գրախանութ և գրադարակ։ Ահա այդ հարցերին պատասխանելու համար էլ մենք որոշեցինք պատմել մի գրքի մասին, որը հրատարակվել է վերջերս։ Այդ գրքի անունն է «Ամենաին գաղտ»։ Գրքի հեղինակը Ռուբեն Մուրադյանն է, նկարազարդողը՝ Ռուբեն Հարությունյանը։

Ռուբեն Մուրադյանը գրում է հետևյալը.

«Ես ապրում եմ Երևանում, Կոմիտաս պողոտայի 74 շենքի 24 բնակարանում։ Ես ունեմ կին և երեք երեխա։ Ամենամեծ աղջիկս՝ Լուսինեն, 7 տարեկան է, միջնեկ աղջիկս՝ Անին, 5 տարեկան, իսկ կրտսեր որդիս՝ Արամը, 3 տարեկան։ Ես ամեն առավոտ վաղ արթնանում եմ, ինքս ինձ համար սուրճ եմ եփում և նստում եմ աշխատելու։ Ես գրում եմ հիմնականում առավոտյան, երբ ոչ ոք չի խանգարում ինձ։ Ես գրում եմ մատիտով, հետո ջնջում եմ սխալները, նորից գրում եմ, նորից ջնջում եմ, մինչև որ ամեն ինչ դառնում է այնպես, ինչպես ես եմ ուզում։

Ես սիրում եմ գրել երեխաների մասին, որովհետև ինքս էլ երեխա եմ եղել, և հիշում եմ, թե ինչ եմ ուզում կարդալ։ Ես սիրում եմ գրել այնպիսի գրքեր, որոնք ինձ էլ դուր կգան, եթե ես նորից դառնամ 7 տարեկան։ Ես սիրում եմ գրել ուրախ գրքեր, որովհետև ինքս էլ ուրախ մարդ եմ։ Ես սիրում եմ գրել նաև տխուր գրքեր, որովհետև երբեմն ինքս էլ տխուր եմ լինում։ Ես սիրում եմ գրել այնպիսի գրքեր, որոնք ինձ էլ դուր կգան, եթե ես նորից դառնամ 7 տարեկան։

Ես գրում եմ ոչ միայն երեխաների համար, այլև մեծերի համար։ Ես գրում եմ պատմվածքներ, վեպեր, հեքիաթներ, բանաստեղծություններ։ Ես գրում եմ ամեն տեսակ գրքեր, որովհետև ես սիրում եմ գրել։ Ես սիրում եմ գրել, որովհետև ես սիրում եմ կարդալ։ Ես սիրում եմ կարդալ, որովհետև ես սիրում եմ գրել։

Ես ունեմ շատ ընկերներ, որոնք ինձ օգնում են գրքերս գրելու մեջ։ Նրանք ինձ ասում են, թե ինչ է պետք գրել, և ես գրում եմ այդ մասին։ Ես ունեմ նաև ընկերներ, որոնք ինձ օգնում են գրքերս հրատարակելու մեջ։ Նրանք ինձ ասում են, թե ինչ է պետք հրատարակել, և ես հրատարակում եմ այդ մասին։

Ես ունեմ նաև ընկերներ, որոնք ինձ օգնում են գրքերս վաճառելու մեջ։ Նրանք ինձ ասում են, թե ինչ է պետք վաճառել, և ես վաճառում եմ այդ մասին։ Ես ունեմ նաև ընկերներ, որոնք ինձ օգնում են գրքերս կարդալու մեջ։ Նրանք ինձ ասում են, թե ինչ է պետք կարդալ, և ես կարդում եմ այդ մասին։

Ես ունեմ նաև

Շարժման գլուխը կանգնած է գիւղացի մը Քոզոլա որ 15.000 հոգիով յուլիս 7ին պիտի քալէ մայրաքաղաքին՝ Հէլսինկֆորսի վրայ։

Երեսփ. ժողովը 60ի դէմ 112 ձայնով քուէարկեց համայնավար հոսանքին դէմ՝ կառավարութեան ներկայացուցած խիստ օրէնքը, հակառակ ասոր սակայն, դահլիճը հրաժարեցաւ, թոյլ տալու համար, որ «աւելի լայն հիմերու վրայ վերահաստատուի նախարարական կազմը։

ALLO, ALLO

Tél. TRUDAINE 81-07

Այս է թիւը մեր թէլէֆոնին

ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՃԷՆԱԶԵԱՆ եւ ԳԱՍԱՆՃԵԱՆ

8, Rue de Chateaudun, PARIS (9e)

Métro Cadet, Peletier եւ Notre Dame de Lorette խիստ մօտ

ՏՕՔԹ. ԱՍԼԱՆ

38 Rue Rochechouart մէթրօ Cadet և Anvers Autobus J. JB.

Tél. TRUDAINE 56 - 58

Թոքերու, Ստամոքսի, Լեարդի եւ Աղիքի հիւանդութիւնները ցատուկ յարկաբաժին Վէնէրական եւ Մորթի հիւանդութեանց

ULTRA - VIOLET ճառագայթներով կը դարմանէ *Ոսկորի*, ջղային, Արեան հիւանդութիւնները եւ ցօդացաւ։

Կ՚ընդունի ամէն օր ժամը 9—12 եւ 3—7, կիր. մինչեւ կէսօր։



ԼԻՈՆԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Ջատկի տօնի առիթով KYSA կօշիկի վաճառատան մէջ

209 Rue Duguesclin (angle rue Dunoir), Lyon



պիտի գտնէք սեփական արհեստանոցի մէջ ժամանակաւոր խնամքով պատրաստուած այրելու եւ կիներու ֆանթէզի եւ ամէն տեսակ տոկուն կօշիկներ։

ԳԻՆԵՐԸ ԱՆՄՐՑԵԼԻՕՐԷՆ ԱԺԱՆ

Կը բաւէ անգամ մը այցելել համոզուելու համար

ՇԱՆՕԹ.— *Նոյն կօշիկները կը գտնուին մեր երկրորդ վաճառատունը 217 Rue Garibaldi, angle rue Paul-Bert.*

Ամէն տեսակ կօշիկներ խնամքով կը նորոգուին մեր արհեստանոցին մէջ

ՑԷՐ եւ ՑՆՕՐԷՆ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ ԵՂԲԱՐՔ

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

ՃԱՇԱՐԱՆ ՓԼՕՐԻԱ

61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)

Մէթրօ Օտէոն եւ Սէն Միշէլ Հեռաձայն Littré 38—43

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ

ՏԱՆՏԵՐ ԸԼԼԱԼ ԵՒ ՎԱՐՁՔԷ ԱՋԱՏԻԼ

Այժմեականէն եւ նպաստաւոր պայմաններով, Պէքոնի մէջ Սէն Լազարի կայարանէն 8 վայրկեան, ելեքտրական գնացքով, ժամը 10 թրէն, երթեւեկ 0.90 սանթիմ օրական, 2, 3 եւ 4 սենեակով ափարթմըմաններ, ամենավերջին Confortով, ամառ ձմեռ տաք եւ պաղ ջուր խոհանոցին եւ բաղնիքին մէջ, կեդրոնական ջեռուցութիւն եւ վերելակ (ascenseur)։ 50 հազարէն 100 հազար ֆրանք —միայն մէկ քառորդը կանխիկ, մէկ քառորդը մէկուկէս երկու տարիէն, իսկ մնացեալ կէսը 5, 10 կամ 15 տարիէն վճարելի, ըստ կամս, պետական տոկոսի սակով, հարիւրին 7։ Դիմել Archambault et Delacourt, 14 Rue de la Pépinière, կամ Սէն Լազարի մօտ։ Այսէն հինգշաբթի ժամը 4էն 6 հայ թարգման մը պիտի տայ պէտք եղած բոլոր բացատրութիւնները։

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ **PRINKIPO**

VERTANÈS MAHDJOUBIAN et A. VITCHEN

24 Rue des Carmes, Paris (5) մէթրօ՝ Place Maubert

Խնամքով պատրաստուած արեւելեան և եւրոպական ամէն տեսակ կերակուրներ ամէն ժամ։ Մասնաւոր կերպով պատրաստուած ձէօնէր-քէյթաս։

Այցելեցէք, համոզուելու համար։ Հարսնիքի, ժողովներու, հաւաքոյթներու եւալնի համար տրամադրելի սրահ։

ՀԱՑՔ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

ՑՏԵՐ ԵՒ ՑՆՕՐԷՆ՝ **ՏՕՔԹ. ԳՐԳՈՑԵԱՆ**

29, Rue (Place) des Fêtes, Paris, XIX. Tél. Nord 96 - 61

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէնէրական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ՚ընդունի Գշ., Երք. եւ Շաբաթ օրերը ժամը 4—6։ Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երեք. եւ Շաբաթ օրերը ժամը 2—3։ ԱՏԱՄՆԱԲՈՑԸ ամէն օր ժամը 9էն 19։

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ ԲԱՑՈՒԱԾ Է

Կ. ՅԱԿՈԲԵԱՆԻ

ՄԱՍԻՍ ԳՈՇԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

57A Rue Nationale, MARSEILLE

Հ. Յ. Դ. ՓԱՐԻԶԻ ԿՈՄԻՏԷՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԱԿԱՆ

Ժողովի կը հրաւիրէ բոլոր խումբերու ներկայացուցիչները 7 յուլիս երկուշաբթի իրիկուն ժամը 8.30ին Chope Parisienneի վերնայարկը, 64 Rue des Ecoles.

Ա. Ե. Հ. Կ. ԽԱՉԻ ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

ՎԱՂԸ ՍԷՆ ՔԼՈՒԻ ԱՆՏԱՌԻՆ ՄԷՋ

Հովանաւորութեամբ Պ. ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ

Կը նախագահէ Ա. ՋԱՄԱԼԵԱՆ

Բանախօսութիւն, խմբերդ, մեներդ, հայկական, կովկասեան եւ եւրոպական պարեր, թառ եւ անակնկալներ,

Ճոխ պիւֆէ ժողովրդական դիներով։

Հաղորդակց. միջոցներ.—Թրամուէյ՝Թիւ 2 եւ 25 իջնել terminus Սէն Քլու, շոգենաւ՝ իջնել Սէն Քլու, շոգեկառք՝ Gare St. Lazarէն իջնել Սէն Քլու։ Առաջնորդները կը սպասեն Pavillon Bleuի մօտ առաւօտեան ժամը 11էն մինչեւ 4։

Դաշտահանդէսը տեղի կ՚ունենայ անցեալ տարուան հանդէսին վայրը, Սէն Քլուի փարքին մէջ, երեք աւազաններէն վեր, la Grande Gerbe կոչուած տեղը։

ԵՐԵԿՈՅԹ ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԷՋ

Հ. Յ. Դ. Մ. ՄԻՆԱՍԵԱՆ ԵՆԹԱԿՈՄԻՏԻ ԿՈՂՄԷ

Այսօր Շաբաթ իրիկուն ժամը 8.30ին

148 Rue Villeneuve, Քաղաքապետարանի սրահին մէջ

Կը խօսի՝ ՏԻԿ. ԷԼԷՆ ԲՐԻԶԱՆԴ

Կը ներկայացուի Պ. Դուբեանի «ՄԵՐ ՀՈՂԵՐԸ»

Նուագ Մանտիկեանի կողմէ *Գինն 5 եւ 7 ֆրանք*

ՄԱՅԻՍ 28Ը ԿԸ ՏՕՆՈՒԻ

Շ Ա Ս.— Նախաձեռնութեամբ Ռոստոմ խումբի

Վաղը Կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին

Կը նախագահէ ընկ. Մ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Կը խօսի Ընկ. Բ. ԱՂԱԲԷԿԵԱՆ

Գեղարուեստական բաժին

Ընկ. Կ. ՄՈՒՐԱՏԵԱՆ կը ներկայացնէ զաւեշտ մը

Լ Ի Ո Ն.— Այսօր Շաբաթ իրիկուն, ժամը 8.30ին

Գ. Թաղապետարանի սրահին մէջ։

Կը խօսի՝ Ընկ. ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ

Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ։

ԵՐԵԿՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Սթանոգի Հայր. Միութեան կողմէ եւ աջակցութեամբ Նոգի երիտասարդաց միութեան այսօր Շաբաթ իրիկուն ժամը մինչեւ առաւօտ Harolah սրահներուն մէջ, 3 Rue Lavieuville Nord Sud, Abbesses։

Ղեկավարութեամբ Պ. Վ. ԱԼԹՈՒՆԵԱՆԻ

Կը ներկայացուի՝ **«ԱՇԽԱՐՇԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ»**

Եւրոպական եւ արեւելեան նուագ, գեղարուեստական ճոխ բա

Պարի մրցում եւ անակնկալներ

Ճոխ պիւֆէ ժողովրդական գիներով

Գինն՝ 5, 10, եւ 15 ՖՐԱՆՔ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ԱՅՍՕՐ ՇԱԲԱԹ ԳԻՇԵՐ. ԺԱՄԸ ՃԻՇԴ 9ին ՍՕՍԻԷԹԷ ՍԱՎԱՆԹԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

8 Rue Danton, PARIS Métro: Odéon եւ St. Michel

Մեծ պատրաստութեամբ կը բեմադրուի Փարիզի մէջ առաջին անգամ ըլլալով

ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ

ԱՐՑՈՒՆՔԻ ՀՈՎԻՏԸ (4 ԱՐԱՐ)

(ԱԶԳԱՅԻՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

Մասնակցութեամբ՝ Տիկ. Ս. Ալիքսանեանի, Օր. Անահիտի, Տիկ. Լաթիֆեանի եւ Պ. Պ. Գմբէթեանի, Լաթիֆեանի, Մարիմի, Գրիգոր Վահանի, եւայլն։

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ *կը կատարէ «ԱՍԼԱՆ»ի դերը*

ԱՐՄԱՆ ԿՈՓԻԿԵԱՆ *կը կատարէ «ՋԻՆՆԻ»ի դերը*

ԳԻՆԵՐԸ՝ 20, 15, 10 եւ 7.50 ՖՐԱՆՔ

Հ. Ց. Դ.

ՓԱՐԻԶ

Անիէռի փոթորիկ խումբի ժողովը այսօր Շաբաթ իրիկուն ժամը 8.30ին, ծանօթ հաւաքատեղին, ներկայանալ անդամատոմարով։

Իսի Լէ Մուլինօի մուրատ խումբի ժողովը վաղը առաւօտ ժամը 8.30ին սովորական հաւաքատեղին, Ave. de Verdun. կարեւոր օրակարգ։ Պարտաւորիչ ներկայութիւն։

ԴԱՒԱՌ

Ս. ՇԱՄՈՆԻ ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները վաղը կիրակի ժամը 2ին «վարուժան» Ակումբին մէջ։ Պարտաւորիչ ներկայութիւն։ Ներկայանալ անդամատոմարով։

ՎԻԼՆԻ շրջ. կոմիտէի ներկայացուցչական ժողովը այսօր շաբաթ ժամը 2ին Հ. Յ. Դ. Խաժակ Ակումբին մէջ, 139 Rue Lafayette. Կը խնդրուի բոլոր խումբերու (Ռոստոմ՝ Շաս, Մոկացի՝ Գրիգոր Սէն Ռամպէր, Ապառաժ Բասկալ, Քրիստափոր՝ Վիէն) ներկայացուցիչներէն ներկայ գտնուիլ որոշեալ ժամուն։

Հ. Յ. Դ. Լիոնի ժողովրդային Գրադարանը բաց է՝ Բշ. երեկոյները ժամը 7—8, իսկ Դշ. Եշ. եւ Ուր. երեկոները ժամը 7էն 8.30։ Նոր բաժանորդագրուիլ փափաքողները դիմեն B. Sahatjianի, 262 Rue Duguesclin, Lyon.

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Լիոնի Փոքր-Հայքի ընդհ. Հայր. միութեան ժողովը՝ այսօր Շաբաթ իրիկուն ժամը 8,30ին, Էմիլ Զոլայի վերնայարկը (Rue Boileau 127—129)։ Օրակարգ՝ ծրագիր կանոնագրի ընթերցում եւ վաւերացում, վարչութեան ընտրութիւն։

Հ. Կ. Խ. Մարսէյլի մասնաճիւղի ընդհ. ժողովը՝ վաղը կիրակի ժամը 3ին, մանկապարտէզի սրահին մէջ, 3 Rue Eclipse։ Օրակարգ՝ հաշուետքննիչ յանձնախումբի զեկոյց եւ վարչութեան ընտրութիւն։

Ն. Գ. Բ.ի ժողով այս երեքշաբթի իրիկուն ժամը 9ին մէթրօ Odéon, La Petite Source. *Պարտադիր ներկայութիւն։*

IMPRIMERIE - **MASSIS** - ÉDITIONS

208bis, Rue Lafayette Paris (10)

Le Gérant H. STEPHAN

ԱԶԳ

Ի յարգանս Պօղոս Նուպարի յիշատակին, վաղը, կիրակի Պալաքեան եպիսկոպոս պատարագ - հոգեհանգիստ պիտի կատարէ Մարսիլիոյ Ս. Յարութիւն մատրան մէջ։ Կը հրաւիրուի հայ բարեպաշտ հասարակութիւնը։

Մարսէյլի Ազգ. Կեդր. Վարչ.

Կ՚ուզուի ժէռսէ կարող լաւ գործաւորուհիներ։ Դիմել առաւօտները 8.30—9.30 եւ կէս օրէ վերջ 1.30—3, Պ. Մինասեանի, 42 Rue Compans, մէթրօ՝ Place des Fêtes.

ԱՌԱՆՑ ԳՈՐԾԱԿԱԼԻ ԵՒ

առանց լանձնարարողէջի վարձու կը տրուին տուներ, յարկաբաժիններ, փավիյոններ, փարիզի եւ արուարձաններու մէջ 1400ի եւ 2200-4500 ֆր.ի։ Դիմել՝ Nouroloux, 65 Rue Mélay ամէն օր 9—12 եւ 2—7 իսկ կիրակի օրեր 9—12։

EMPIRE միզիք-հոլ՝ 37 Av. Wagram

Ծախու է *քիչ գործածուած «Տիամանտ» վաճառանիշով մէկ մէթր երկարութեամբ թրիքոթաժի մեքենայ մը։ Կը տանձնենք սովրել ցնել պարզ եւ ֆանթէզի հիւսուածեղէններու շինութիւնը։ Դիմել՝ Պ. Յակոբ Պէճիտեանի առջեւ օր (բացի կիրակիէ) 43 Rue Tourtille, 4րդ յարկ, Փարիզ։ Մէթրօ՝ Պէլվիլ։*

ՎԵՐԱԲԱՑՈՒԱԾ Է

ՃԱՆԿԷՕՋԵԱՆԻ

ՃԱՇԱՐԱՆԸ

202 Rue Boileau, Lyon

Entreprise Générale Serruries

ՀԱՅ ԳՈՐԾԱՐԱՆ ԵՐԿԱԹԵՂԷՆԻ

Կը ստանձնեմ երկաթեայ փեղկերու, դուռներու, վանդակորմերու, ձողերու եւն. շինութիւնը մինչեւ 15 քիլոմէթր հեռաւորութեան վրայ։ Արագ, աժան եւ մաքուր գործ։ Դիմել կամ գրել Մ. Ժամկոչեանի, 52 Rne de Gorge, Sarcelles (S.etO.).

ԲԺՇԿ. ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ

10 Rue Beaugrenelle, Paris (15)

Մէթրօ՝ Beaugrenelle

Միզանցքի, փրոսթաթի, մորթի, արիւնի, կանանց հիւանդութիւններ եւ Փրանկախտ։ Ամէն օր ժ. 10—12 եւ 3 9։ կիր. եւ տօն օրեր 10-12։

STUDIO D'ART MANOUK

Մարսէյլի գեղարուեստական լուսանկարչատունը՝

116 La Canebière

ուր պիտի գտնէք արուեստի կատարեալ բաւարարութիւն, ինչպէս նաեւ ամառնային բացօդեայ ժամանցներու համար ընտիր մեքենաներ ամէն պիտոյքներով։ Վճարումներու դիւրութիւն։ Ջափաւոր գին։

ՄԱՆՈՒԿ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Վառան Գրասենեակ, դ 233 Fbg. St. tin, Paris 10, Պալենց գրատ

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ

96 r. Rivoli, մէթ. Շաթլէ։ Ամէն եւ նոր մեթոտով դարմանումն ար եւ կանանց մորթի, արիւնի եւ վէ հիւանդութեանց (ֆրանկախտ, մամիզ.) եւ վարիսի։ Մասն. լաբորատուար։ Ախտամիտ եւ արագ հրդացկութ. ամէն օր 9—12, կիրակի 9—12։

ՄՕՏ ՕՐԷՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄՆԷ

ՍՊԱՆԵՐԷՆԷ ՀԱՅԵՐԷՆ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Բ Ա Ռ Ա Ր Ա Ն Ը

ՅՕՐԻՆԵՑ

Յ. Ս. ԱԿԱՅԵԱՆ



ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ

ՓԼԱՍ ՏԸ ԹՐԻՆԻԹԷ



En vacances : emportez un

Hawk-Eye Kodak

anastigmat f : 6,3 - 250 frs

On connaît la triple joie de prendre les photos, de les faire admirer à tous, d'y revoir enfants, parents, amis, excursions et ses belles heures de liberté.

Ուշադրութիւն

Յուլիս 1ին կը բացուի ԵՂԲԱՐՔ ՍԱՊՈՆՋԵԱՆՆԵՐՈՒ արեւելեան մաճ նպարավաճառատունը՝

ԱՐԱՐԱՏ

որ Մարսէյլէն փսխադրուած է փարիզ

39 Rue de Trévise, Paris (9). Մէթրօ՝ Cadet, Tél. Prov. 05-91

Մեր վաճառատունը պիտի աշխատի գոհացնել իր բոլոր յաճախորդները իր պատրաստած ընտիր *սուրճով* եւ ամէն տեսակի ընտիր նպարեղէններով։ Անմրցելի գիներ

ՅԱՌԱՋ

LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԲԱԺԱՆԵԳԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ		20 շլ.	40 շլ.
ԵԳԻՊՏՈՍ		»	»
ԻՏԱԼԻԱ		250 ֆրանք	
ԱՄԵՐԻԿԱ		6 տլ.	10 տլ.
ԵՒՐՈՊԱ		100 ֆ.	200 ֆ.

"HARATCH"

Directeur-Propriétaire SCH. MISSAKIAN
Խմբագիր՝ Ե. ՄԻՍԱՔԵԱՆ

Rédaction et Administration
Խմբագրութիւն եւ վարչութիւն
235, Faub. St.-Martin
PARIS (10e)

MÉTRO : LOUIS-BLANC OU JAURÈS
Téléphone : NORD 67-23
R. C. SEINE 376.286

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 3 ֆրանք

ԿԻՐԱԿԻ
6
ՅՈՒԼԻՍ
1930

6 JUILLET 1930

Զ. ՏԱՐԻ ԹԻՒ 1307

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԴԱՂՈՒԹՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Յունիս 22ի Գահիրէի ընտրութիւններու մէջ յաղթական ելան Հ.Ց.Դ. Դաշնակցութիւնը եւ ժողովրդական Միութիւնը՝ժողովրդական յաղթանակ մըն էր, որ կ'արձանագրուէր Գահիրէի ազգային կեանքին մէջ։

Իրաւացի է ցուսաբեր՝ գրելով հետեւեալ տողերը.— «Գահիրէի ընտրութիւնը տեղական աքթ ըլլալէ աւելի ընդհանուր, ազգային եւ համագաղութային նշանակութիւն ունի։ Եթէ այս պարտութեամբ բարոյապէս վերածնի, գաղափարօրէն վերափոխուի եւ հիմէն մաքրուի իր հիմնական ախտերէն մեր հակառակորդը, ատկէ շահողը նաեւ մենք պիտի ըլլանք»։

Իրօ՛ք, եթէ հայկական կեանքն իր բնականոն ընթացքն ունենար, եթէ մեր ազգային կեանքն ամէն տեղ, գոնէ ազգային Սահմանադրութեան սահմաններու մէջ, կազմակերպուած ըլլար. տեղական այդ ընտրութիւնները պիտի այնքան արժէք ներկայացնէին,որքան կատարուած աքթը կրնար նպաստել ազգային տեղական կազմակերպութեան զարգացման։

Մինչդեռ հիմա, գաղութներու մէջ ծաւալ գտած պայքարը չի սահմանափակուիր տուեալ մարմնի բարեփոխութեամբ, կամ այս ու այն հոսանքի յաղթանակով։ Այդ պայքարը ընդհանուր, համազգային հանգամանք մը ունի։ Հայ ժողովուրդը բաժնուած է երկու անհաշտ ճակատներու։ 1.— Դաշնակցական - ժողովրդական, 2.— Հակադաշնակցական - Ռամկավար - Բոլշեւիկ։ Առաջին թեւը, տասը տարիներէ ի վեր գաղութներու կազմակերպման եւ միացման մասին կը քարոզէ եւ այդ ուղղութեամբ կը գործէ, իսկ երկրորդ թեւը, ամէն գնով ազգային կեանքը կը կազմալուծէ, միութեան կապերը կը քանդէ, հաւաքական կամքին դէմ կը ծառանայ։ Մէկ խօսքով, անգլուխ հօտի մը կ'ուզէ վերածել ամբողջ գաղթահայ ժողովուրդը, որպէս զի հայութիւնը կազմակերպուած ուժ մը չդառնայ, ու թերեւս ատոր շնորհիւ տակաւնայ նաեւ Հ. Ց. Դաշնակցութիւնն ալ։ Ռամկավարի մտահոգութիւնը Դաշնակցութեան տկարութիւնն է, ու այդ կիրքէն տարուած, ան կ'ուզէ որ հայ կեանքը փլի, հայ ժողովուրդը այդ փլատակներուն տակ ոչնչանայ, որպէսզի... Դաշնակցութիւնն ալ վերջնանայ։

Իսկ բոլշեւիկեան ձգտումներն աւելի հեռուն կ'երթան, յեղնարան գտնելով ռամկավար խաւը. — Տկարացնել Դաշնակցութիւնը, կազմալուծել գաղթահայ կեանքը, կը նշանակէ մեռցընել հայ ազգային կամքը, քայքայել զայն զօրացնող օղակները եւ այդպիսով տէր դառնալ անդաւանանք ու ապազգայնած բազմութիւններուն, որոնք Ձեկայի սանդրանքներուն պէտքական են, բայց երբեք Հայոց ազգային հաւաքականութեան։

Այս հիմնական տարբերութիւնն է պատճառը, որ ամէն տեղ հայ ժողովրդական հոսանքը կը հանդիպի դժուարութիւններու։ Երբ տեղ մը կայ օրինական բացայայտ թելադրանքն ու հարկադրանքը գաղութը կազմակերպելու, այդ տեղ, մեր հակառակորդները կը դիմեն ապօրինի միջոցներու, օրէնքը զգեստելու։ Իսկ երբ գաղութը նոր է եւ տուեալ երկրի օրէնքները պարտադրութիւն մը չունին հայ համայնքի վերաբերմամբ, եւ հետեւաբար համայնքը կրնայ իր տեղական պայմաններու համաձայն կանոնադիր մը ստեղծել՝ իր կեանքը կազմակերպելու, մեր հակառակորդները զէմ կուգան համայնքին, օրէնքի եւ ազգային Սահմանադրութեան սրբութիւններէն ճառելով։

Այս պայմաններուն մէջ լաւագոյնը այն է, որ գաղութներու մէջ, Դաշնակցութիւնն եւ ժողովրդական տարրերը, իրենք իսկ ձեռնարկեն իրենց գաղութի կազմակերպութեան, ամէն տարի վերանորոգ աշխատանքներ կատարելով ու համաձայն տեղական պայմաններուն ու պահանջներուն, չվարանին նետուելու ասպարէզ, ամէն դժուարութեանց ու խոչընդոտներու յաղթելու մտադրութեամբ։

Անշուշտ հակառակորդները պիտի աղմկեն, իրենք դիրենք հայ ազգ պիտի հոչակեն, շատ զօր տեսնեն՝ այլազգի պիտի դառնան, բայց, վերջ ի վերջոյ հայկական կեանքը պիտի մտնէ իր կազմակերպուած ճանապարհին մէջ։

Պայքարի այս ըմբռնումներով է որ մենք կը կարծենք թէ Գահիրէի ժողովրդական յաղթանակը ազգային ընդհանուր նշանակութիւն մը ունի եւ կրնայ թելադրական ըլլալ միւս գաղութներուն համար։

Կ. Ս.

ՍԵԼԱՆԻԿ Կ'ՈՂՈՂՈՒԻ

Հինգշաբթի օր, կէս օրէն վերջ տեղատարափ անձրեւը ողողեց Սելանիկի հարաւ-արեւելեան թաղամասը։ Իտալիա փողոցին մէջ, հեղեղը տարաւ բազմաթիւ խրճիթներ ու տնակներ։ Արդ մը փողոցներու մէջ, հեղեղին բարձրութիւնն էր 1,50 մեդր։ Տուներու նկուղներն ու գետնայարկերը ողողուեցան։ Ջուրը քանդեց երեք կամուրջներ։ Շնորհիւ ոստիկանութեան եւ անհատներու ջանքերուն, կարելի եղաւ փրկել կիներ ու մանուկներ, որոնք իրենց անկողիններուն հետ, քշուած տարուած էին։ Ջուրերը քաշուեցան կէս գիշերէն յետոյ։

ՕՐ Ը ՕՐԻՆ

ՔՐՏԱԿԱՆ ԿՌԻԻՆԵՐԸ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ

«Թայմզ»ի Պոլսէն ստացած վերջին տեղեկութեանց համաձայն, քիւրտ յեղափոխական ուժերը, Արարատի լեռնային շրջանին մէջ պաշարուած են թրքական զօրքերու կողմէ։

Զրոյց կը շրջի թէ թուրք կառավարութիւնը հրաւիրած է Պարսկաստանը որ գործակցի քրտական ուժերը զսպելու գործողութիւններուն։

Թրքական մամուլը կը յաւտագովէ կառավարութեան որոշումը՝ ծայրայեղ խստութեամբ վարուելու քիւրտ ըմբոստ ցեղախումբերուն հետ։ Այս նպատակով ալ, զինուորական նոր ուժեր ղրկուած են դէպի Արարատ։

Մուսթաֆա Քէմալ, որ այս միջոցիս կը գտնուի Եալովա, մասնաւոր հետաքրքրութեամբ կը հետեւի քիւրտական կռիւներուն և ամէն վայրկեան տեղեկութիւններ կը ստանայ։

*** Թրքական «Վաքթ» թերթի քաղած տեղեկութեանց համաձայն, Արարատի շուրջ առաջին կռիւները սկսած են յունիս 10ին։ Երկրորդ կռիւ մը սկսած է յունիս 19ին, որուն ակնարկելով, «Թայմզ» կը գրէ թէ Քիւրտերը պաշարուած են։*

Վաքթ» կը գրէ.—

«Անատոլու գործակալութեան լուրերէն կը հասկցուի որ, գործին մէջ քաղաքական կազմակերպութիւն մըն ալ կայ։ Զեռք անցուած վաւերագրերէ կը հասկցուի որ Զիլանի շուրջը յետադիմական շարժում մը արթնցնելու համար պատրաստութիւններ կատարուած են։ Այսպէս, Արարատի աւազակներուն մէջ կը հաստատուի թէ Շէյխ Սայիտի ապստամբութենէն Պարսկաստան փախչողներն ալ խառնուած են։»

«Վաքթ» այս տեղեկութեանց վրայ կ'աւելցնէ.

«Յունիս 19ին Արարատի եւ Պայազիտի կուսակալութեան հարաւակողմէն վանի սահմանագլխին վրայ գտնուող գիւղերու դէմ զօրաւոր աւազակախումբեր յարձակած են։

«Շաբաթէ մը ի վեր աւազակները Զիլանի շուրջբոլորէն եւ անպաշտպան տեղեր յարձակելով բռնի կուսակիցներ ճարելու փորձ կ'ընեն։ Կառավարութեան ձեռք առած միջոցները պիտի արգիլեն որ աւազակները Պարսկաստան չկարենան ապաստանիլ։»

Ռուսիա կը վարձէ ուսանողները

Խորհրդային կառավարութիւնը որոշեց ուժ տալ ուսանողներու զինուորական պատրաստութեան։ Այս մտքով ալ, խորհրդակցութեան հրաւիրեց «քաղաքային մեծ վարժարաններու զինուորական պատրաստութեան պետերը»։ Խորհրդակցութեան մասնակցողներէն մէկը յայտնեց թէ նախատեսուած պատրաստութիւնը կը պահանջէ ուսանողներու յատուկ մարզադաշտերու ստեղծումը, որովհետեւ զինուորական մարզբանները չպիտի կրնան տեղ տալ այդքան բազմաթիւ գանգուածներու։ Ատկից զատ, պէտք է որ քաղաքային վարժարանները ունենան զինուորական միայուն մարզիկներ։ Ուրիշներ պահանջեցին որ ուսուցչական կազմերուն կցուին սպաներ, որոնք կարգ սպահական իրաւունքներ ունենան ուսանողներուն վրայ։

Գերման ազգայնականները կը գործեն

Դաշնակից բանակներու կողմէ Հռենոսի պարպուած քաղաքներուն մէջ, գերման ազգայնականները կը շարունակեն հալածել անջատողականները եւ բոլոր անոնք, որ հաւակրութեամբ դիտեր էին Դաշնակիցներու ներկայութիւնը այդ քաղաքներուն մէջ։ Երէկ գիշեր դարձեալ, Մայանս թատերաբեմը հանդիսացաւ վայրագութիւններու։ Փսանեւմկ բնակարաններ կամ վաճառատուներ թալանի տրուեցան երիտասարդներու կողմէ, որոնք հեռուներէն եկած են։ Վիսպատէնի մէջ ալ, բազմաթիւ խանութներ բոլորովին կողոպտուեցան եւ թերթի մը խմբագրատունը քարկոծուեցաւ։

Ոստիկանութիւնը անկարող է զսպելու խռովարարները, որոնք կը գործեն փոքր խումբերով եւ միեւնոյն ժամանակ քաղքին զանազան կէտերուն վրայ, արագօրէն տեղափոխուելով։ Քանի մը հոգիներ միայն ձերբակալուած են ցարդ։

Կարմիր հասագումարը Ռէհարկեց

Բոլշեւիկեան 16րդ համագումարը՝ երկիւղածութեամբ լսելէ եւ խանդավառութեամբ ծափելէ յետոյ Ստալինի ճառը, միաձայնութեամբ քուէարկեց բանաձեւ մը, որուն գլխաւոր կէտերը կուտանք ստորեւ.—

Արտաքին քաղաքականութիւն.— Ջատագովելէ յետոյ Ռուսիոյ արտաքին քաղաքականութիւնը, որուն շնորհիւ «Խորհրդային կառավարութիւնը յաջողեցաւ պահպանել խաղաղութիւնը», «Համագումարը կը յանձնարարէ կեդր. կոմիտէին որ ապագային շարունակէ նոյնքան ամուր եւ կորովի քաղաքականութիւն վարել,խաղաղութեան եւ քաղքենի պետութեանց ու գաղութներու բանուորներուն եւ Խորհրդ. Միութեան աշխատաւոր զանգուածներուն միջեւ՝ համերաշխութեան եւ եղբայրութեան ամրացման համար։

Արտաքին առեւտուր.— Համագումարը անհրաժեշտ կը նկատէ զարգացնել Խորհրդ. Միութեան առեւտրական յարաբերութիւնները դրամատիրական աշխարհին հետ, արտաքին առեւտուրի մենաշնորհը անխախտպահելու և դրամապետական զարգացած երկիրներու արհեստագիտութիւնը լայնօրէն օգտագործելու հիման վրայ։

Խ. Մ.ի պաշտպանութիւնը.— Համագումարը գոհունակութեամբ կը հաստատէ թէ կարմիր բանակը նորէն ցոյց տուած է իր ուժը և մարտական ընդունակութիւնը և վճռապէս կը շեշտէ թէ պէտք է որ կուսակցութիւնը իր ուշադրութիւնը կեդրոնացնէ գիւղացիական և բանուորական բոլոր ուժերու զօրահաւաքման վրայ, որպէս զի Խորհրդ. Միութեան պաշտպանողական ուժը եւ կարմիր բանակի, նաւատորմի եւ օդային տորմիղի մարտական ուժերը զօրանան։

Ընկերվարական շինարարութիւն.— Համագումարը կը յանձնարարէ կեդր.կոմիտէին զարգացնել ծանր ճարտարարուեստը, ստեղծելով ածխահանքային և մետաղագործական ուժեղ խարիսխներ Կուզնէցկի աւազանին եւ Ուրալի մէջ, ուժեղացնել թեթեւ ճարտարարուեստը, բարեփոխել փոխադրական միջոցները, եւայլն։

Լէնինեան գիծ.— Համագումարը լիովին հաւանութիւն կը յայտնէ կեդր. կոմիտէի ձեռք առած միջոցներուն տրոցկիզմի եւ աջ հակումի պայքարին մէջ։ Այդ միջոցները կ'ապահովեն կուսակցութեան միասնականութիւնը։ Համագումարը կը յայտարարէ թէ աջ ընդդիմադիրներու տեսակէտները անհաշտելի են համայնավար կուսակցութեան հետ։ Բոլոր անոնցմէ որ կ'ընդունին իրենց սխալները, կուսակցութիւնը պէտք է պահանջէ որ իրենց անկեղծութիւնը փաստեն գործնապէս պաշտպանելով կուսակցութեան ընդհ. գիծը։ Այն պարագային որ այս պահանջը չկատարուի,պիտի կիրարկուին կարգապահական ամէնէն խիստ միջոցները։

Ի վերջոյ, համագումարը կը յանձնարարէ կեդր.կոմիտէին շարունակել կուլակներու հաշուեյարդարը՝ Խորհրդային Միութեան ամբողջովին համայնացման հիման վրայ։

Անգլիա՝ Իրաքի մէջ

Իրաքի թագաւորը Ֆէյսալ՝ Լոնտոն կը հասնի դէպի յուլիս 25։ Այս այցելութեան ընթացքին՝ պիտի ճշդուին պատասխանները եւ Հայֆայի միջեւ երկաթուղիի շինութեան ծրագրին կէտերը։ Այս գծի շինութեան նպատակն է Պաղեստինի միացումը Հնդկաստանի Պարսից ծոցով, ինչ որ կը նուազեցնէ Սուէզի ջրանցքին կարեւորութիւնը։ Երկաթուղին պիտի գործէ անգլիական հակակշռի տակ։

Ընկ. ապահովագրութեանց օրենքը

Յուլիս 1ին ի վեր արդէն, ընկ. ապահովագրութեանց օրէնքը կը կիրարկուի ամբողջ Ֆրանսայի մէջ։ Մինչ հիմա արձանագրութեան քարտեր բաժնուած են 7 միլիոն 169,000 հոգիի, որոնց 1 միլիոն 600,000ը Սէնի նահանգին մէջ։

Այսուհանդերձ, կարգ մը վայրերու մէջ, ընկ. ապահովագրութեանց դէմ բողոքի ցոյցեր կը կատարուին։

Լիլի շրջանի բժիշկները մերժեցին իրենց օժանդակութիւնը բերել ապահովագրութեանց պաշտօնատան։

Փարիզի մէջ, մէկ քանի փոքր գործարաններու աշխատաւորները գործադուլ յայտարարեցին այս առթիւ, իսկ Տուն. քէրքի նաւահանգիստին բանուորները 48 ժամ դադրեցուցին աշխատանքը, մերժելով վճարել ապահովագրութեան սակագինը։ Ռուէնի մէջ եւս, բանուորները թափօր կազմած, շրջեցան թաղէ թաղ։

Սահմանափակ են բողոքի այս ցոյցերը, որոնց գլուխը կը գտնուի Ֆրանսայի համայնավար կուսակցութիւնը։

Նոր ցնցումներ

Երկրաշարժի նոր եւ զօրաւոր ցնցումներ տեղի կ'ունենան Հնդկաստանի եւ Պարսկաստանի մէջ։ Ռանկփուրի մէջ, ուր բազմաթիւ շէնքեր, քաղաքապետարանն ու դատական իշխանութեան պալատը քանդուեցան, եօթը անձեր վիրաւորուեցան ծանրապէս։ Նոյնպէս Մալտայի մէջ, բազմաթիւ վիրաւորներ կան,

Սաստիկ ցնցումներ տեղի ունեցած են նաեւ Թէհրանէն 150 քիլոմեդր դէպի հիւսիս-արեւմուտք։ Մարդկային կորուստ չկայ, բայց աւերը մեծ է։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

«ՏԷյլի Մէյլ» կը յայտնէ թէ Լոնտոնի խորհրդային դեսպան Սոկոլնիկոֆի վիճը կը պատկանի ռուս քաղաքային ոստիկանութեան։ Տիկին Սոկոլնիկոֆ, կը հաւաստէ թերթը, Ձեկայի ամէնէն գործունեայ լրտեսներէն մէկն է։ Սոկոլնիկոֆի հետ կարգուելէ առաջ, կինն էր բոլշեւիկ կեդր. կոմիտէ քարտուղար Սէրէպրիակոֆի։ Իբր Լոնտոնի դեսպան իր նշանակուժը՝ Սոկոլնիկոֆ կը պարտի իր կնոջ։

ԵԳԻՊՏՈՍԻ նախորդ վարչապետ եւ վաֆտ կուսակցութեան ղեկավար Նահաս փաշա, «Թայմզ»ի թղթակցին յայտարարեց թէ երկրին մէջ կացութիւնը չափ ազանց ծանր է։«Խորհրդարանը յետաձգելու իրաւունքը, ըսաւ, կը պատկանի միայն խորհրդարանական դահլիճի մը։ Յուլիս 21ին վերջ կը գտնէ յետաձգումը։ Այդ օրը, ներկայ դահլիճը պարտաւոր է վստահութեան քուէ ուզել կամ փակել Խորհրդարանը։ Այս վերջին պարագան դէմ է եգիպտական Սահմանադրութեան։ Եւ եթէ իրականանայ, կը նշանակէ թէ մինչեւ նոյեմբեր, երկիրը պիտի կառավարուի դահլիճի մը կողմէ, որ չի համարձակիր ներկայանալ Խորհրդարանին։

ՀԻՆԿԻՆՖՈՐԻ մէջ, հաժայնավար երեսփոխան մը ատրճանակի երկու հարուած պատկից Սուինհուտի վրայ, որուն յանձնուած է նոր դահլիճին կազմութիւնը։Սուինհուա ազատեցաւ, բայց ոստիկան մը որ կ'ուզէր ձերբակալել ոճրագործը, սպանուեցաւ ատրճանակի հարուածով մը։

Ծրագրի ալեկոծ ընդհանուր քննարկումներ ծավալվեցին նաև երեկ կայացած նիստում, որին ներկա էին նաև Ազգային ժողովի պատգամավորները։

Ելույթ ունեցավ նախ եւ առաջ Ազգային ժողովի նախագահ Ա. Ա. Ա.

ԻՐԻԿՈՒՆ

Հոգիս աշնան չոր ու տարտամ իրիկուն,
Թեթեւ իով մ'անվերջ կը սուլէ,
Լուռ ու աներգ սենեակիս մէջ՝ վիրաւոր:
Խեղճ ու նիհար ծառի մը ճիւղը վայրի,
Հոգիէս ներս կ'երկարի:
Աչքեր չկան, շրթներ չկան:
Ցոլվ իր մորկոտ կապոյտով
Սենեակիս մէջ կը ծփծրփայ, կը մեռնի:
Երանգ ու ձայն, լոյս ու իամբոյր՝
Որմերուն վրայ՝ սրտիս վրայ կը պարեն:
Աղերսող լացն իեռաւոր աղբիւրին,
Կը փշրըւի սրտիս մէջ՝ մեղմաիոս:
Ցերեւնե՛ր, տերեւնե՛ր շրջան կ'ընեն
Սրտիս վրայ՝ ծարաւահիւծ, տրտմագին:
Լճին ափն իոգեթով,
Կարապներ չեն գար լողալ,
Ու լուսընկան լոկ կը բացուի,
Անջրական ու խոշոր ծաղկի մը պէս —
Ջուրերու մուխ ծոցին մէջ:
Հոգիս աշնան չոր ու իւանդ իրիկուն...

Պ. ՄԻՆԱՍԵԱՆ

ՄԻՏՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

"ԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ,,

Հետաքրքրական է քննադատութիւնը, զոր կը կատարէ հայ բոլշեւիկ գրող մը «Խորհ. Հայաստանի» մէջ Գրական Դիրքերումի մասին, օրգան Պրոլետ Գրողներու Միութեան: Այդ քննադատութիւնը ցոյց կուտայ նախ գեղարուեստականարժէքի պակասը պրոլետ գրողներու գործերուն մէջ, յետոյ պրոլետ գրողներու մտայնութիւնն ու ըմբռնումը հաւաքական գիւղատնտեսութեան վերջին «յեղափոխութեան» մասին:

Գրական Դիրքերումին ապրիլի թիւը նուիրուած է գիւղատընտեսական կեանքին: Ակադեմական ժամագիրը կը բանայ փոքրիկ պատմուածքով մը, որ «անժշակ, մակերեսային պատկերացումն է գիւղի եւ գիւղում վարուող քաղաքականութեան»: Մեր նոր վիպագիրը կը կարծէ թէ «ձախ» թեքումը «թակարդ մըն է, որ լարուած է մկան պէս մարդ որսալու համար»:

Եւ քննադատը կ'աւելցնէ.

— «Հեղինակը, տարւելով տեղական քաղաքագէտութիւններով, կորցնելով լուրջ դատելու ընդունակութիւնը, շատերի հետ միասին ամբողջ գիւղատնտեսական շարժումը տեսնում է միայն պարելու եւ առաջին հերթին «քշելային» քաղաքականութեան մէջ: Մի կողմ թողնելով գրւածքի գեղարուեստական կողմը, որն ի սպառ բացակայում է, պատմուածքում կան մի շարք անյաջող ըստ էութեան անթոյլատրելի ձեւակերպումներ: Առաջին երեսում գրում է.

«Ախր էդ էլ դուրս է գալիս իսկական... ոնց որ ընկեր Ստալինն է իրաֆանգել, աչ թեքման տեղական կոնկրետացած երեւոյթի մէջ ընկնել»: *Տրամաբանօրէն ժառանգ մարդը սրանից կարող է հանել միայն մի եզրակացութիւն, որ Ստալինը հրահանգել է ընկնիլ աչ թեքման մէջ»:*

Նոյնքան խստութեամբ, քննադատը կը յարձակի Արագած եւ Զարեանի վրայ:

Քննադատը կը ցաւի, որ երիտասարդ գրողները իրենց պատմուածքը այնպէս մը պատրաստած են, որ անմիջապէս կը զգացուի թէ գիւղատնտեսութեան այդ «հակայական շարժումը հրահանգուած է միայն վերից», թէ «գիւղացիների ակտիվ նախաձեռնութեամբ չէ, որ սկսել ու ծաւալել է»: Ի՛նչ աւելորդ մեղադրանք, Հայաստանի իրագործած գրողները ինչո՞ւ չպատմէին իրականութիւնը: Պէտք է խոստովանիլ, որ այդ երիտասարդ գրողները շատ ալ անսեղ չեն: Տեսակ մը շնականութիւն կայ անոնց ոճին մէջ, երբ կը գրեն թէ «Մկոների, Մաքօների, Օհաննների հողերը ձուլւում են իրար հետ, հակառակ նրանց կամքին»:

— «Ի՛նչքան ալ կսկծան Օհաննների սրտերը ու դէռ հին սահմանները լիշեն, միեւնոյն է, պիտի ժողանան» կը գրէ Արագած:

Նոյն քննադատը կը նկատէ, որ ինչպէս գիւղի կոմունիստներուն, նոյնպէս Երեւանի գրողներուն համար սովորութիւն է դարձած «հարիւր տոկոսով» համայնացնել գիւղացիին ստացուածքները:

— «Ասել եմ, մինչեւ փետրուարի մէկը շրջանս հարիւր տոկոսով համատարած եմ դարձնելու, դրանից յետոյ ամբողջ մի շաբաթ կը մտնեմ անկողին ու քնի՛, հա՛, քնի՛», կը գրէ հայ պրոլետ գրողը:

Ն. Զարեան աւելի մեծ խոստովանութիւն մը կը դնէ իր գրուածքին մէջ: Անիկա կը պատմէ թէ գիւղատնտեսական այդ լայնատարած աշխատանքը կը կատարուի ժողովի հարուածներու տակ: Եւ «մտրակի հարուածը զգացել էին ամէնքը» կը գրէ ան: Եւ այս խոստովանութիւնը կը կատղեցնէ քննադատը, որ անմիջապէս յետոյ կը սկսի թուել չափածոյ կտորներուն բովանդակութիւնը, — «քաղաքագէտութիւնների դիւցազներգութի՛ւն»:

Մկրտիչ Արմէն կ'երգէ.

Հեռաւոր տեղում մի գիւղ...
Աչքաթող արւած կարծես թէ...

Ի՛նչպէս, ինչո՞ւ հատուցում չէ ենթարկուած այդ գիւղը: Եւ Մկրտիչ Արմէն, երգը շարունակելով կը պատմէ թէ, քաղաքէն կը մեկնի «Բրիգադը» դէպի այդ գիւղը, կը յայտարարուի «համատարած հաւայնացում», նոյն գիշերն իսկ կ'աքսորուին սեփականատէր գիւղացիները: Եւ ահա գիւղը սոցիալիզմի ճամբուն վրայ.—

Նախկին հարուստներ,
Զրկւած իողերից, լքւած բոլորից,
Գազանի նման սրած ատամներ,
Կ'ուզէին կայքին տիրանալ նորից:

Վ. Նորենց աւելի վճռական է: Հաւայնացումը կատարուած աւարտած կը համարէ: Լմնցաւ գնաց: Այլ եւս չկան սահմաններ, չկան առանձին գիւղացիներ, ամէն ինչ հարթուած:

. . . փլուում է իիմա
Եւ սահմանի քար, եւ վտիտ առուն,
. . . . . .
Չի մնում կանգուն եւ ոչ մի սահման:

Չօլա՛, մենք ետ ենք մնացեր, ամբողջ Հայաստանը փոխեր է այլեւս իր դէմքը, այնպէս որ Քաենոփոնն անգամ, կը պատմէ Դաշտենց, գիւղերուն մէջ կը շրջի, բայց չի ճանչնար «մշակների երկիր՝ Խորհրդային Հայաստանը»:

Ի՞նչ կը գրեն «ուղեկից»ները: Գիւղատնտեսական վերջին «յեղափոխութեան» մասին գաղափար չունին նաեւ ուղեկիցները, միշտ դժգոհը «Խորհ. Հայաստան»ի քննադատն է:

Դէմիրճեանի մկան, Զօրեանի ցիրունի բախտը «ոչինչ չասող եւ աւելորդ կտորներ են»: Երբ Դէմիրճեան պակասամիտ մը դէպի «սոցիալիզմ» կը քալեցնէ, եւ Զօրեան «կոլխոզին» ողորմի կուտայ նոր գրւածք մը առնելու համար, կը նշանակէ թէ, կ'ըսէ քննադատը, մակերեսային գաղափար մը ունին այնքողորքաներուն մասին, որոնք կը կատարուին իրենց շուրջը:

Մահարի երաժշտական կշռոյթով մը կուտայ «նոր գիւղի մը երգը»: Եւ փառքը կարդալով գիւղին, ինչե՛ր կ'ըսէ քաղաքին.—

Քաղա՛ք, քաղա՛ք, հրէշ ու դեւ,
Շազարաւեայ դու Թշնամի,
Որ ծառացար գիւղերի դէմ,
Որպէս սամում, ժանտաքարի:

Չի՛ն վէճ: Գիւղի եւ քաղաքի յարիտենական պայքար: Մահարին առաջինը չէ, որ անէծք կը կարդայ քաղաքին: Բայց կարելի՞ է արդիլել քաղաքային արդիւնաբերութեան զարգացումը: Երեւանի քննադատը այս անգամ կը բռնէ Մահարիին ականջէն, որովհետեւ անիկա կը յանդգնի պրոլետարիատին (քաղաք) դէմ զինել գիւղացիութիւնը: Եւ կ'ըսէ.— «Նարոտնիկ ուտոպիստներն էին, որ դուրս էին գալիս քաղաքի դէմ, եւ ամէն կերպ պարսաւելով կապիտալիզմի զարգացումը, հակադրում էին գիւղը»:

Նոյն քննադատը կը յարձակի նաեւ Պանփերովէն թարգմանուած մէկ կտորին վրայ, Ադէտը, որ կ'երեւի Գրական Դիրքերումին մէջ: Եւ կ'աւելցնէ. «Ի՛նչ անշնորհք ընտրութիւն»:

Վերջապէս, Գրական Դիրքերումի ապրիլի թիւը կը նմանի «երամէն ետ մնացած կռունկի մը, որ, բաւական ուշացած՝ կ'երգէ Հայաստանի քաղաքագէտների տրամադրութիւնները»:

ՀՆԴԿԱԿԱՆ ԴԱՏԸ

Հնդկաստանի անկախութեան հակառակորդ Անգլիացիները մտահոգ են Աշխատաւորական դասլիճին մէկ յայտարարութեան հետեւանքով:

Դասլիճը կը յայտնէ թէ պիտի մասնակցի հնդկական հարցը քննող Լոնտոնի խորհրդաժողովին, առանց պաշտպանելու որեւէ քաղաքականութիւն եւ առանց առաջարկներ ներկայացնելու, ծանօթ մայրութիւնը դիտելէն՝ ներողութիւն խնդրելու համար անկէ, որ մայրիկ կը պառաւ...

Սիրտը սկսաւ ուռիլ լեցուած անզօր զղջումէն ու աչքերուն մէջ հասաւ հեռաւոր մոռացօնքէն չորցած արցունքը: Պէրուհին խելագարի մը պէս գոռգոռաց իր տեղէն ու թաշկինակ մը փնտռելու համար տապլտկեցաւ սենեակին մէջ: Ցիշատակին անվերադարձ հեռուներէն իր ընկերուհիները կը նայէին անոր, մինչ ան կարօտալի իր անցեալին — մայրի՛կ... — կը կանչէր հեծկլտալէն կարծես խեղդելու համար հասնող ձայնը: Պայքարի ու պահանջներու արդարացումով տակաւին համոզուիլը ներկայիս անկարող գտաւ իր հոգին մխիթարուելու համար ու խոկացող իր խորքէն մայրական գորովն էր որ կ'ալեկոծուէր ու պարապ նաւու մը պէս կը տապլտկէր փոթորկոյզ ցասին ամայութեան մէջ:

Պահերն անցան դառնօրէն ու երբ հանդարտեցաւ ան, զգաց որ վիրաւոր էին իր ոտքերը կեանքի ծանր կառքին տակ ճնշած եւ վերադառնալու անկարող...

Պէրուհին դժկամակութեամբ սրբեց իր արցունքները, որովհետեւ առաւօտ էր եղած ու ծագող արեւուն հետ խելայեղ պայքարին դէմ ի զուր սեղմած իր պարտուած բռունգքը չուզեց իսկ խորհիլ վերադարձի մասին ու մխիթարութիւնը կրկին մոռացման մէջ փնտռեց ակամայ:

Հ. ՑԻՎԼԻԹԵԱՆ

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ Թղթակիցներէ եւ յօդուածագիրներէ իրենց գրութիւնները գրել Թուղթին մէկ երեսին վրայ:

Խոհ Սիմոնի տեղեկագրին մասին կը յայտնէ թէ խորհրդաժողովին օրակարգի միակ նիւթը չպիտի կազմէ ան:

Պահպանողականները կը հետեւցնեն թէ աշխատաւորականները կը պատրաստուին Հնդկաստանի գիւղը աւելի լայն իրաւունքներ, քան ինչ որ նախատեսուած է Սիմոի տեղեկագրին մէջ:

*** Փեշավերի մէջ պայթուցիկներ գտնուեցան երկաթուղիի կայարանին մօտ, այն գծին վրայ, ուրկէ կ'անցնի կալկաթայի սուրհանդակը:

Պոմպէյի մէջ օտար եւ մասնաւորաբար անգլիական ապրանքներու դէմ բոյկոտը կը շարունակուի նոյն սաստկութեամբ: Ոստիկան մը խշտանգուեցաւ ամբոխին կողմէ: Ոստիկանութիւնը յարձակում գործեց գուցարարներուն վրայ եւ անոնցմէ վիրաւորեց 14 հոգի:

Ջերքակալուեցաւ Պոմպէյի Ազգային կոմիտէին նախագահուհին, որ Միւնոյն տեղեկաւարն է այն կիներուն որոնք մասնակցեցան վերջին ցոյցերուն:

Կալկաթայի մէջ, ցոյցերը կը շարունակուին Սիմոնի տեղեկագրին դէմ: Ամբոխը կայն դրած դագաղի մը մէջ, թաղէ թաղ կը պտտցնէ:

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ համագումարի հաշուետուութենէն կ'երեւի որ մինչեւ յունիս, կարմիր բանակի մէջ կային 129,360 կոմունիստ պինուորներ, որոնց 60 առ հարիւրը բանուորական ծագում ունին, իսկ 29 առ հարիւրը գիւղացիներ են: Սպաներու 51 առ հարիւրը կոմունիստներ են:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

...Խմբագրութիւն «ցառաջ»ի «Ապագայ» Թերթին մէջ էնթերվիու մը հրատարակուած էր Թուականէս 15 օր առաջ, որուած իբր Թէ իմ կողմէս, Ադիսրոնեանի յոբելեանին առԹիւ:

Ներկայիս կը յայտարարեմ որ ես երբեք այդ տեսակ յայտարարութիւն մը չեմ ըրած «Ապագայ»ի խմբագրութեան եւ ոչ ոքի:

ԱՌԱՖԵԼ ՋԱՖԵՐԵԱՆ

RADIO - MÉCANIQUE
56 Rue Corvisart, Paris (13e),
Մէթրօ՝ Corvisart
ՄԻՄԻԱՅՆ 500 ՖՐԱՆԿՈՎ
Կը տանձնէ ձեզ տանը մէջ հաստատել T. S. F. որով պիտի կրնաք լսել բոլոր քաղաքներ: Օգտուեցէք առիթէն:

''ՅԱՌԱՋ,,Ի ԹԵՐԹՕՆԸ — 49 —

ԱՆԴՐԱՆԻԿԻ ՅՈՒՇԵՐԸ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

Զօրքը բոլորն ալ օտար երկիրներու զօրք են, տեղերնուն բոլորովին ծանօթութիւն չունին, հետերնին քիւրտ ալ չկայ»: «Ժողովուրդը մեզ հետ անհամաձայն է, ի՞նչպէս գարնենք»,— ըսաւ Սերոբը: «Եթէ գարնենք, մեզի շատ մրացողներ պիտի ըլլան ժողովուրդէն»: Էլի չհամաձայնեց մեր այս ըսածին:

Սակայն, Սերոբի այս բոլոր մերժումները կնոջ պատճառաւ էին: Մենք իրեն շատ լաւ կը ճանչնայինք. եթէ կռուի խօսք ըլլար՝ նա տեղէն վեր-վեր կը թռնէր եւ գլխաբաց կը վազեր դէպի կռիւ: Հապա ի՞նչպէս եղաւ, որ այդ մարդը այդ տեղերը մրիշտ կը մերժէր կռիւը: Հարցը այդպէս փակուեցաւ:

Սերոբի եղբայր Զաքօն կանչեց մեզ, 3-4 ընկեր եւ ըսաւ. «Տղերք, ձեզ խոստովանանք մը ընեմ. էս կինը իմ եղբօրս գլուխը պիտի ուտէ, մի օր չէ՝ մի օր անպատիւ պիտի մեռցնել տայ: Եթէ կուիւ մը սկսի՝ իմ առաջին գընդակս այդ կնոջ փորն է, որ իմ եղբօրս ոտքը ազատուի»: Ինչ որ ալ ըլլար՝ Սերոբըչէր ուզեր կողքից հեռացնել կինը: Մշեցի ցիգրանը դեռ չսպաննուած՝ կ'ըսէր. «Տղե՛րք, Սերոբը փոխուած է, առաջուան մարդը չէ. ես չէի տեսեր էսչափ կնոջ սիրելը: Կախարդական բաներ ես չէի հաւատար, բայց հիմա պիտի հաւատամ. կ'երեւի էս կինը կախարդութեամբ թուղթ մը շիներ է»:

95ին, Սերոբը Սարիղամիշ տրեխներ կարեց, հագցրեց ինձ մինչեւ վերջին շունչը ինձ իրեն վերցնէր իր գլուխը աւերուած եւսին մէջ եւ անոր դէմքը դարձած էր անցեալին: Ինքն իր խուսափող ձեւերէն կ'ակնածէր առանձնութեան մէջ, որ մերժեր էր այն մանուկը: Ներկային պահանջները խլեր էին իրմէ այն՝ որուն մեծութիւնը կ'ընկճէր հիմա իր վերզգաստացող սէրը եւ նահանջող որոնումները երբեմնի պատանեկութեան. հիմա կը խուժեն իրմէ նէրս: Ինչո՞ւ չկանչէին զինքը այնպէս, ինչպէս կը կանչէր տակաւին ձայնը հեռաւոր ու անոր դառնալու համար չէր կրնար վեր առնել իր գլուխը: Միանակ էր սենեակին մէջ, միանակ կեանքին մէջ տարիներէ ի վեր: Պահ մը մտաբերեց երբեմնի յղութիւնը, զոր վիժեցուցած էր ազատ ճլալու համար ու այդ ցիշատակը տարիներ առաջուան կը քշէր իր միտքը մինչեւ հոն ուր դեռատի էր ինք ընկերուհիներուն հետ եւ կը սիրէր փայփայել դրացի մանուկները: Մոռացութեան եւ խուսափումի մէջ անհետացած ցիշատակներըկը զգլխեին իրմէ ներս եւ անոնց յաղթանակին առջեւ կարծես պիտի լար պարտուած հոգին:

Ինչո՞ւ համար այն չէր ինք, ինչ որ կ'երազէր ըլլալ երբ երջանիկ էր իրեններով: Ցուզումը ստինքներուն խռովէն կը հեւար անդուլ եւ չարտասուելու համար կը խածնէր շրթները, մինչ անոնց կարմիր ներկը կը թթուեցնէր լեզուն եւ ան կրկին կը սրտնեղէր ճակատագրին հանդէպ: Մանկան ձայնը կը հասնէր ու սենեակին մէջ կը խժար՝ մինչ իր թուլցած թեւերը ի զուր կը փնտռէին զայն շոյելու համար, սիրելու համար զայն ու անոր փոքրիկ եւ վարանոտ աչքերուն մէջ իր անձնական ապագան տեսնելու համար:

Ամէն անգամ որ Սերոբ կը վերադառնար տուն, ինքզինքս կը գտնէի անոր ետեւէն կանչելու պատրաստ, բայց ամչնալէն կամ ուրիշ պատճառներէ կը զսպէի ինքզինքս: Ինչո՞ւ համար ես ալ չէի կրնար ըսել անոր որ ինչ ալ ըլլայ՝ ես հոս եմ, ես քեզ կը սիրեմ, ես քեզ կը հասկնամ, ես քեզ կը ներեմ, ես քեզ կը սիրեմ: Ինչո՞ւ համար ես ալ չէի կրնար ըսել անոր որ ինչ ալ ըլլայ՝ ես հոս եմ, ես քեզ կը սիրեմ, ես քեզ կը հասկնամ, ես քեզ կը ներեմ, ես քեզ կը սիրեմ: Ինչո՞ւ համար ես ալ չէի կրնար ըսել անոր որ ինչ ալ ըլլայ՝ ես հոս եմ, ես քեզ կը սիրեմ, ես քեզ կը հասկնամ, ես քեզ կը ներեմ, ես քեզ կը սիրեմ:

Ես, Գէորգ Ջաուշը քանի մը ընկերներով (Ցարութիւն, Համբարձում, Եւալը) գաղտնի գացինք այն բոլերու մէջ, որոնց առաջն էր ձիւնի հիւսքին: Զօրքը (600 հոգի) գրուեցաւ սարերը, քարերը, սկսեց խուզարկել. մատնիչը հետերնին էր: Զօրքի մի մասը ցածրացաւ ջրի եզերքը: Ձիւնի հիւսնին հասնելուն ճնացեր է 500 քայլ: Մենք իրար գիմաց էինք 800 քայլ հեռաւորութեամբ: Մէկ էլ լսեցինք՝ փողեր հնչեցին, բոլոր զօրքերը յետ կանչեցին, հաւաքեցին Ալուչակ: 2 օր ալ սպասելով՝ Մուշէն եկող զօրքը ճնացածնիս որոշուեցաւ մի 150 քայլ առաջ գնալ: Եթէ զօրքը ջուրի եզերքը հասնէր, ջուրէն անկարող էր անցնիլ, բայց գէշէսէյի հովիտը հիւսին ջուրը ծածկած, կամուրջ էր շինած, այդ ձեան կամուրջով զօրքը կրնար անցնիլ: Ուրիշ փախչելու տեղ չունէինք:

Ես, Գէորգ Ջաուշը քանի մը ընկերներով (Ցարութիւն, Համբարձում, Եւալը) գաղտնի գացինք այն բոլերու մէջ, որոնց առաջն էր ձիւնի հիւսքին: Զօրքը (600 հոգի) գրուեցաւ սարերը, քարերը, սկսեց խուզարկել. մատնիչը հետերնին էր: Զօրքի մի մասը ցածրացաւ ջրի եզերքը: Ձիւնի հիւսնին հասնելուն ճնացեր է 500 քայլ: Մենք իրար գիմաց էինք 800 քայլ հեռաւորութեամբ: Մէկ էլ լսեցինք՝ փողեր հնչեցին, բոլոր զօրքերը յետ կանչեցին, հաւաքեցին Ալուչակ: 2 օր ալ սպասելով՝ Մուշէն եկող զօրքը գնաց Մուշ, գածէն եկողը՝ գնաց գծ: Խուզարկութիւնը տեւեց 10 օր:

Իրօք, Ստալինի գլխոյցը համագումարին առջեւ, գլխագործոց մըն է փաստերու և վիճակագրական եղրակացութեանց խեղաթիւրման:

Եթէ Յորդր. Միութեան մասին, պէտք է հաւատալ բոլշեւիկեան թերթերու, ամէն օր, անոնք կը վխտան դժգոհութիւններով, ճարտարարուեստական և երկրագործական ձեռնարկներու մէջ՝ ձախողութիւններու թուական ապացոյցներով:

Պէտք կա՞յ կրկնելու աւելորդ անդրադարձում մը, և անգամ մըն ալ ցուցադրելու ինչ որ ծանօթ է բոլորին: «Յառաջ», յաճախ արձանագրած է հայոյնավար բռնի տնտեսութեան անանկութիւնը, տեղեկութիւնները քաղելով բուն աղբիւրէն իսկ:

Եւ սակայն, Ստալին որ 140 միլիոն գլուխներու հետ կը զուարճանայ խաղալիք փշրող տղու անփութութեամբ, նոր ճամարտակութիւն մը կը փորձէ թիւերով և տոկոսային համեմատութիւններով: Ծրագրային յայտոյութիւնները որ կ'աւետէ, գիտէ անշուշտ թէ տակաւին հեռու են սպասուած ակնկալութիւնները պսակելէ, նոյնիսկ հասնելէ՝ ցարական քայքայուն ու յետամնաց տնտեսութեան մակարդակին. գիտէ նաև թէ իր այս թափանցիկ շղարշները չեն կրնար աչքերը փակել արտաքին աշխարհին՝ իրական ողբերգութեան մը վրայ, որ տասներկու տարուան ձախողութիւն կը պատմէ: Կը բաւէ սակայն, որ ամբոխային համագումարի մը թելադրեն երկիւղած հիացում կամ գինովի ծափեր. անկէ խլեն նոր սպրանքներու հաւանութիւն և անոր մէջ ամուր բռնեն այլամերժ հաւատքի կուրութիւնը, մինչեւ յաջորդ շրջան:

Այս է որ կը փնտռէ Ստալին, խեղդելով ողջմտութեան վախկոտ փսփսուքները: Ու գերագրգռելու համար դիւրին հաւատքը իր երկրպագուներուն, կը դիմէ ամէն աճպարարութեան: Ցոյց կուտայ Ամերիկան, Եւրոպան, դրամապետական մեծ երկիրներու տնտեսական ու ելմտական տագնապը, կը մատնանշէ անգործներու հսկայ բանակը ու գործաւորութեան յարաճուն վտանգը: Ու ճիշտ, նման վարպետ ոճրագործի մը, որ ինքզինքը չմեղադրելու համար, մեղքը կը խօսի իր մեղսակիցներուն վրայ, Ստալին կը մոռնայ բազմամիլիոն ամբոխները՝ որոնք իր աչքին առջեւ, հեւասպառ կը վազեն պատառ մը հացի եռեւեռին:

Շատոնց կորսնցուցած միջազգային փոխանակութեան բնդունակութիւնը. գնելու անկարող, այսօր դեռ, Ռուսիա կը կիրարկէ ներքին պարենաւորման այն եղանակը, որ Մեծ Պատերազմէն ետք, — ուտեստեղէնի և այլ անհրաժեշտ պէտքերու բաշխում՝ անհատական տոմսերով: Ինչ որ կը փաստէ ներքին արտադրութեան անբաւարարութիւնը՝ բաղդատմամբ սպառման պահանջներուն: Կը փաստէ և սովի վտանգը որ այսօր թեթեւ, տանելի. բայց, առանց արտաքին-դրամատիրական աշխարհի օժանդակութեան, և ներկայ պայմաններու շարունակութեամբ, անհնար է որ չառնէ ողբալի աղէտի մը համեմատութիւնները:

Բայց եօթը ժամ տեւող իր գեկոյցին մէջ, Ստալին տող մը իսկ չի գտներ, սպրդեցնելու համար փախստական ակնարկ մը՝ Ռուսիոյ մէջ տիրող տագնապին և թշուառութեան վրայ:

Որովհետեւ, այդ չէ որ կը շահագրգռէ զինքը: Զէ՞ որ բազմութիւններն ստեղծուած են՝ իր ձեռքերուն մէջ իբր փորձանիւթ ծառայելու դաւանանքի մը, որ սաթաքուսէ սայթաքում կը հետապնդի. դեռ, լոկ աթոռի ամրապնդման համար:

Համագումարը իր միաձայնութեամբ ու բանաձեւերով՝ այդ կը մատնէ ու բոլշեւիկ կուսակցութեան ուժն ու միասնականութիւնը որոնցմով պարծենցաւ Ստալին, կուգան վաւերացնել ո՛չ թէ դաւանանքին հանդէպ մաքուր ու ամուր մոլեռանդութիւն մը, կամ ընկերային, իսկապէս աշխատաւորական նպատակներու անշահախնդիր հետապնդում, այլ փոքրամասնութեան մը բռնութիւնը մարդկային բազմութիւններու —տեսաբանութեան սիսերու վրայ...:

Տասնեւվեցերորդ համագումարը նոր ճամբայ մը չբացաւ. պարզապէս կրկնեց տասնեւհինգերորդը՝ ու բռնաւոր մը վերահաստատեց իր գահուն վրայ:

Ստալին յաղթեց: Կրնայ պահ մը գոնէ հանգիստ քնանալ իր դափնիներուն վրայ, որոնք անշուշտ, պիտի շարունակեն իրենց թարմութեան աւիշը քաղել արիւնէ եւ արցունքէ: Փշրեց ձախէն յետոյ, ալ ընդդիմադրութեան կուռքերը՝ Բուխարին, Ռիկով, Տոմսկի, Ուկլանով, եւայլն, որոնց ամօթալի մեղայականը հասկնալի կը մնայ երկրի մը մէջ, ուր կուսակցական-կարգապահական խստութեան նուազագոյն սպառնալիքը կը բացատրուի աքսորով:

Ստալինի յաղթանակը սակայն, նոր փաստերը կուտայ ուղղափառ բոլշեւիզմի նահանջին՝ միջազգային դրամատիրութեան առջեւ: Եւ անշուշտ, մի՛շտ յանուն յեղափոխութեան եւ բնութեան դասին...

ՄԿՐՏԻՉ ԵՐԻՑԱՆՑ

ՄԱՄՈՒԼ

ՆՈՐ ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆ ՄԸ

«Հայրենիք» այս խորագրով խմբագրականի մը մէջ կը գրէ (25 յունիս).

— «Հակառակորդ թերթ մը գզուելի զրպարտութիւն մըն ալ ըրաւ վերջերս Հայաստանի Հանրապետութեան օրերու հայկական բանակի հասցէին: Իբր թէ ինմնուելով «հայ եւ օտար իրազեկ անձերու» վկայութեան վրայ, այդ թերթը անամօթ կերպով իրեն հոյլ տուաւ ըսելու.

«Այդ օրերուն Հայկական բանակ գոյութիւն չունէր երբեք, բառին իրական իմաստով: կային աւարառութեամբ եւ յուղկահարութեամբ յղփացած ու ապականած մաուզերիստներու խումբեր՝ Բուբէն ետը մինասեանի պէս պատերազմական նախարարի մը եւ Սեպուհի պէս խմբապետներու հրամանատարութեան տակ: Այս խումբերուն մէջ ոչ կարգապահութիւնմնացածէր, ոչ զինուորական առաքինութիւն եւ ոչ ալ փշուր մը հայրենասիրութիւն, այլ կը տիրէր կողոպուտի եւ յափշտակութեան անյագ կիրք»:

Այսպիսի զրպարտութիւն մը ընելու համար, մարդ կամ պէտք է բացարձակապէս տգէտ ըլլայ Հայաստանի Հանրապետութեան բանակի հերոսական կռիւներու մասին եւ կամ խղճէ ու պարկեշտութենէ կատարելապէս զուրկ ըլլայ:

Արդարեւ, ինչպէ՞ս կարելի է հայրենասիրութենէ զուրկ եւ կողոպուտի ու յափշտակութեան միայն ընդունակ անուանել բանակ մը, որ մօտ երկու տարի դիւցազնական արիութեամբ ու անձնուիրութեամբ պաշտպանեց Հայաստանի սահմանները ամէն կողմէ յարձակող թշնամիներու դէմ եւ այդ ըրաւ գրեթէ ցնցոտիներով եւ կիսաքաղց վիճակի մէջ:

Ինչպէ՞ս կարելի է կարգապահութենէ, զինուորական առաքինութենէ եւ հայրենասիրութենէ զուրկ անուանել բանակ մը, որ տուաւ Սարդարապատի, Բաշ-Աբարանի եւ Քարաքիլիսէի դիւցազնական ճակատամարտները, որոնց ընթացքին հայ զինուորներու գործած քաջագործութիւնները խոստովանեցան նոյնիսկ Թուրք հայկեր փաշաները:

Ինչպէ՞ս կարելի է կարգապահութենէ, զինուորական առաքինութենէ եւ հայրենասիրութենէ զուրկ ինչակել բանակ մը, որ չախչախեց Թուրքերով, գէնքով, ռազմամթերքով եւ Թնքնիք ամէն յարմարութիւններով գերազանց վրացական բանակը Թիֆլիսի ճամբուն վրայ եւ իր յաղթական ընթացքը կանգնեցուց մլմիայն անգլիացիներու միջամտութեամբ:

Հայաստանի Հանրապետութեան բանակը չէ՞ր որ 1920 Թ. յուլիսին եւ օգոստոսին այնքա՜ն աիւսոր հարուածներ տուաւ Զանգիբասարի, Բոյուկ-Վեդիի եւ Նախիջեւանի Թուրքերուն, որոնց գլուխ կանգնած էին քէմալական սպաներ:

Սեպուհի պէս խմբապետներու զօրքը չէ՞ր որ 1920 Թ. մայիսէն մինչեւ դեկտեմբեր քանի մը անգամ ետ մղեց կարմիր բանակի կատաղի յարձակումները Ղազախի ճակատին վրայ,

եւ վերջապէս, «խմբապետ» Դրօի բանակը չէ՞ր որ 1920 Թ. Թրքական պատերազմի ատեն այնքա՜ն զմայլելի դիմադրութիւն ցոյց տուաւ քէմալական զօրքերուն՝ իգդիրի ճակատին վրայ եւ անձնուիրաբար արգելք եղաւ Երեւանի գրաւման Թուրքերու կողմէ 1920 Թ. Հոկտեմբեր եւ Նոյեմբեր ամիսներուն»

ՕՐ Ը ՕՐԻՆ

ՔՐՏԱԿԱՆ ԿՌԻՒՆԵՐԸ

(Մասնաւոր հեռագիր Յառաջի)

Յունիս 9ին սկսած են Արարատի ուժեղ կռիւները: Թուրքերը Սարտար-Բուլաղի կողմէ սկսան ուժեղ Թնդանօթային կռուի: Մօտ վեց սաւառնակներ մասնակցած են կռիւներուն: Կռիւը տեւած է քանի մը օր:

Նոր տեղեկութիւն առինք որ Արարատի Քիւրտերը ետ մղած են Թուրքերը որոնք շատ մեծ Թիւով սպաննուածներ և վիրաւորներ ունեցած են:

Թուրքերը Բայազիտի և այլ շրջաններու մէջ գտնուած Քիւրտերուն դէմ սկսած են ընդհանուր հալածանքի մը, որու հետեւանքով Օսման Աղա քանի մը աշիրէթներով ապստամբած և քաշուած է Արարատ:

Անգլեւիրաքեան դաշնագիրը

Անգլեւիրաքեան դաշնագիրը որ կնքուեցաւ վերջերս Պաղտատի մէջ, հետեւեալ գլխաւոր տրամադրութիւնները կը պարունակէ.

1.— Անգլիա կը ճանչնայ Իրաքի ամբողջական անկախութիւնը:

2.— Իրաքի կառավարութիւնը կը ստանձնէ երկրին վարչական ամբողջ հոգը, ինչպէս նաև ներքին ապահովութեան և արտաքին յարձակումներու դէմ պաշտպանութեան պատասխանատուութիւնը:

3.— Դաշնագրի գործադրութեան Թուականէն սկսեալ, վերջ կը գտնէ Իրաքի վրայ Անգլիոյ հոգատարութեան իրաւունքը:

4.— Դաշնագրին գործադրութեան Թուականէն հինգ տարի յետոյ, անգլիական ուժերը պիտի քաշուին Պաղտատէն և Մուսուլէն: Իրաք Անգլիոյ պիտի տրամադրէ երեք օդանաւային կայաններ Եփրատի արեւմտեան կողմը: Այս կայանները պիտի պաշտպանուին իրաքեան ուժերով, Անգլիոյ ծախքով:

5.— Դաշնագիրը կնքուած է 25 տարուան համար: Գործադրութեան Թուականէն 20 տարի յետոյ, ստորագիր կողմերուն միջեւ բանակցութիւններ կրնան սկսիլ, նոր դաշնագրի մը կնքման համար, օդային կայաններու և Անգլիոյ հակակշռին ենթակայ հաղորդակցութեանց միջոցներու մասին: Անհամաձայնութեան պարագային, խնդիրը կ'ենթարկուի Ազգերու Դաշնակցութեան իրաւարութեան:

Արմաշական դաւ Հունգարիոյ մէջ

Հակառակ արքայականներու և նախկին կայսրուհիին հաւաստիքներուն, հետզհետէ կը յայտնուի Թէ լուրջ պատրաստութիւններ կը տեսնուին Հապսպուրկները նստեցնելու Հունգարիոյ գահին վրայ: Հունգարացի արքեպիսկոպոս մը, երէցի մը հետ երէկ հասաւ Պրիւքսէլ և անմիջապէս գնաց այն դրդեակը ուր կը բնակի Զիթա կայսրուհին՝ իր զաւակներով: Այս այցելութեան կը վերագրուի քաղաքական նպատակ մը, Հապսպուրկներու գահակալութիւնը հետապնդող:

Պարսկաստանի երկաթուղիները

Թէհրանի պարսկական թերթերը կը գրեն Թէ պարսիկ կառավարութիւնը մերժեց երկաթուղիի շինութեան մասին գերման ընկերութեան մը առաջարկները: Այս ընկերութիւնը երկաթուղագծի մը հիւսիսային ճիւղը շիներ էր վերջերս: Ֆրանսական ընկերութեան մը ներկայացուցիչը որ այժմ կը գտնուի Թէհրան, առաջարկներ ներկայացուց եւ պաշտօն ստացաւ քննելու հարաւային երկաթուղագծի աշխատանքները, որոնք սկսուած էին Թերի պայմաններով, գերման ընկերութեան կողմէ:

Իտալիա եւ Համերտոպա

Իտալիոյ պատասխանը Եւրոպայի դաշնակցութեան մասին Պրիանի յուշագրին՝ հրատարակուեցաւ: Իտալիա հաւաստէլ յետոյ Թէ պատրաստ է աշակցելու գործին, հինգ գլխաւոր պայմաններ կը դնէ. Ա.) յաղթող եւ յաղթուած ժողովուրդներու միջեւ, ամէն տարբերութիւն պէտք է վերջ գտնէ: Բ.) Թուրքիա եւ Ռուսիա եւս, պէտք է որ հրաւիրուին Եւրոպայի Դաշնակցային Միութեան ծրագրին մշակման մասնակցելու: Գ.) Պէտք չէ որ աշխատուի իրականացնելու եւրոպական համերաշխութիւն մը միայն: Շրջանակը պէտք է ընդլայնուի, անոր տալով համաշխարհային բնոյթ մը: Դ.) Բոլոր այն պետութիւնները որ իրենց հաւանութիւնը կը յայտնեն, պէտք է որ իրենց ծնայուն ներկայացուցիչը ունենան Դաշնակցային Միութեան խորհուրդին մէջ: Ե.) Դաշնակցային Միութիւնը, յաջողելու համար, պէտք է որ իրեն մեկնակէտ ունենայ պետութեանց գինաթափումը: Իտալական կառավարութիւնը կը նկատէ Թէ, գինաթափումը իբր էական սկզբունք որ յստակօրէն չէ բանաձեւուած Պրիանի յուշագրին մէջ, պէտք է դառնայ հիմնական մեկնակէտը ազգերու միջեւ բարոյական կապակցութեան գործին:

Ֆինլանտիոյ յեղափոխութիւնը

ՀԵԼՍԻՆԿՖՈՐՍ, 7 յուլիս.— Ֆինլանտական բոլոր Թերթերը միաձայն կը պախարակեն հայկական երեսփոխանական

(Աւելի յառաջ նայեցէք Գ. էջ)



Հ. Յ. Դ.
ՓԱՐԻԶԻ ՏԱՆ ՀԱՄԱՐ

(Հանգանակութիւն Եւրոպայի կեդր. կոմիտէի)

ՑՈՒՆԿ 24

Տքթ. Երուանդ Թաթանասեան (Սուտան)	500
Վ.ԱԼԱՆՍԻՆ.—	
Յովհաննէս Պագայեան	100
Արսէն Տէր Սարգիսեան	100
Եղիա Շահպազեան	100
Շմաւոն Գալայճեան	100
Խնկիկ Գալայճեան	100
ԼԱՆՍԻՃԻՆ.—	
Անթուան Օհանեան	100
Ոսկիան Յակոբեան	100
Սիմոն Փափազեան	100
Արթաքի Թիրեէքեան	100
Աւետիս Յարութիւնեան	100
Պարգեւ Խաչիկեան	100
Սիմոն Ձէլալեան	100
ԿԱՐՏԱՆԷՆ.—	
Ընկերուհի Հնազանդ Քէշիշեան	50
Նշան Ալեմեան	50
Սարգիս Յովհաննէսեան	50
Նշան Մանուէլեան	50
Սեդրակ Միլտոնեան	50
Աբրահամ Գապատայեան	30
Գումար	1,930
Նախորդ գումար	27,700
Ընդհ. գումար	29,630
Հ. Աւետիսեան, Մ. Ղարիպեան եւ Ն. Գալպ. Ճեան նուէրները 100ական ֆրանք՝ սխալմամբ կրկնուած են ցանկ 19էն յետոյ, 22ին մէջ:	300
Ընդհ. գումար	29,330

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՄԸ

Այսօր, Ժընեւի մէջ բացումը կը կատարուի միջազգային հաւաժողովարի մը, որուն կը մասնակցին 200է աւելի անձեր, իբր ներկայացուցիչ 22 երկիրներու տնտեսագիտական, հանրային-վարչական եւ ճարտարարուեստական հաստատութեանց: Համագումարը կազմակերպուած է Ժընեւի աշխատանքի գիտական կազմակերպութեան կաճառին կողմէ:

Համագումարին նպատակն է ուսումնասիրել ելմտացոյցներու գիտական հակակշռի եղանակ մը: Այս նիւթին վրայ՝ մասնագէտները պիտի ունենան կարծիքի փոխանակութիւններ:

ՍՈԿՈՒՆԵՐՈՒ ԱՐԿԱԾԸ

Ազրիականի մէջ, իտալական նաւ մը ինկաւ սերպ նաւու մը վրայ, որ կը ճամբորդէր Թրիէսթէն դէպի Տուպրովնիք: Արկածին պատճառները դեռ անծանօթ կը մնան: Սերպ նաւը բաւական ծանր վնասներու ենթարկուեցաւ: Բախումին սաստկութենէն, սպանուեցան 4 հոգի եւ վիրաւորուեցան 7 անձեր: Բոլոր զոհերը երիտասարդ Սոկոլներ են չեխ եւ լեհ, որոնք կը դառնային Պելկրատ իրենց համագումարէն եւ շրջագայութիւն մը կը կատարէին Ազրիականի վրայ:

200 ՀՈԳԻ ՄԵՌԱԾ

Միացեալ Նահանգներու Անկախութեան տօնին օրը, 200 հոգի մեռան տեղի ունեցած արկածներէն: 100 հոգի Թեթեւ վիրաւորուեցան:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

ՕՏԱՐ ԲԱՆՈՒՈՐՆԵՐՈՒ ՀՈՍԱՆՔԸ

Ամէն տարի ամրան, դաշտային մեծ աշխատանքներու եղանակին, օտար բանուորներու ստուար կարաւաններ ներս կը հոսին ֆրանսական սահմաններէն։ Որովհետեւ ֆրանսացի բանուորը հետզհետէ կը քալէ դէպի քաղաք, նախընտրելով գործարանական յոգնութիւնները քան թէ դաշտային աշխատանքները։ Այնպէս որ կառավարութիւնը յաճախ կը ստիպուի օտար հողագործ բանուորներ բերել։ Վերջերս, սակայն, տեսնուած է, որ ֆրանսական մեծ գործարաններն ալ սկսած են օտար բանուոր բերել արտասահմանէն։ Որովհետեւ ֆրանսական ճարտարարուեստն ալ կ'ուզէ հետզհետէ աւելին արտադրել, այնպէս որ չի բաւեր միայն ֆրանսացի բանուորը։ Բայց ֆրանսացի գործարանատէրերը կը նախընտրեն օտար բանուորը, որ ոչ միայն արհեստաւոր է, որոշ ընդունակութիւններ ունի, այլ նաեւ աժան կ'աշխատի։

Այսպէս, ուրեմն, օտար բանուորներ կը բերուին Ֆրանսա, աշխատցնելու համար հողագործական եւ ճարտարարուեստական կեդրոններու մէջ։

Ու երբ աշխատանքը առատ է, երբ գանազան դիւրութիւններ կը գտնէ, օտար բանուորը կը մնայ ալատեղ եւ այլե՛ւս չի մեկնիր։ Ահա թէ ինչո՛ւ շատացած են օտար բանուորները, եւ կը գանգատին Ֆրանսացինները։

Սահմանին վրայ գլխաւոր ճամբաները (Թուլ, Մարսէյլ, Ժէնեւի, Մանթոն, Մոտան, Մէց, Հանտէյ) կը գտնուին խիստ հսկողութեան տակ, եւ եկուորները կը պահանջուի ոչ միայն անցագիր, աշխատանքի պայմանագրութիւն, այլ նաեւ առողջապահական վկայական։

Պելճիքայի, Սպանիոյ եւ Փորթուկալի բանուորները կը պայմանագրուին թղթակցութեամբ կամ «օտար բանուորներու ներգաղթի գրասենեակին» կողմէ։

Լեհաստանցի, Չեխեւլովաք ու իտալացի բանուորները Ֆրանսա կրնան մտնել միայն «օտար բանուորներու ներգաղթի գրասենեակին» հետ բանակցելէ յետոյ։

* * *

Այժմ տանք թիւերը։

Այս տարի 5 մայիսէն մինչեւ 7 յունիս Ֆրանսա բերուած են 24,921 բանուորներ, 13,885ը ճարտարարուեստի, 11,036ը հողագործութեան համար։

Անցեալ տարի նոյն ժամանակաժիջոցին՝ Ֆրանսա բերուած էին 13,063 բանուորներ ճարտարարուեստի, 10,459 բանուորներ հողագործութեան համար։

Ի՛նչ ազգութիւններ կը ներկայացնեն Ֆրանսա մտած բանուորները։ Մօտաւոր հաշիւով մը 300,000 հոգի ընդունելով ամէն տարի Ֆրանսա բերուած օտար բանուորները, Իտալացիները կը հաշուուին 75,000 Լեհերը՝ 50,000, Պելժերը՝ 45,000, Փորթուկալցիները՝ 24,000, Եւկոսլաւները՝ 20,000 Չեխոսլովաքները՝ 15,000։ Մնացեալները՝ Սպանիացիներ, Գերմանացիներ, Ռուսեր եւ Հայեր։

Այսպէս, ուրեմն, մեծամասնութիւն կը կազմեն Իտալացիները։

Միայն 5 մայիսէն մինչեւ 7 յունիս 1930 ժամանակամիջոցին՝ Ֆրանսա մտած են 5,931 Իտալացիներ, որոնց 461ը հողագործութեան, եւ 5,470ը ճարտարարուեստի մէջ աշխատելու նպատակով։ Ի՞նչ է պատճառը Իտալացիներու մեծաժանութեան։

Անշուշտ գործազրկութիւնը, որ զոյութիւն ունի Իտալիոյ մէջ, մեծ դեր կը խաղայ բանուորներու գաղթին տեսակէտէն։ Այսպէս յունիս 1ին իտալական պաշտօնական վիճակագրութիւն մը ցոյց կու տայ որ գործազուրկներուն թիւը կը հասնի 365,000ի։

Հետաքրքիր է դիտնալ նաեւ թէ ի՞նչ ճիւղերու մէջ կ'աշխատին օտարները։ Լեհերը եւ Իտալացիները կը բանին երկաթի և ածուխի հանքերուն մէջ, Փորթուկալցիները՝ քարահանքերու մէջ, Լեհերը եւ Փորթուկալցիները՝ մետաղագործութեան մէջ, Իտալացիները եւ Փորթուկալցիները՝ շինութեանց մէջ։

Դարձեալ օտար բանուրներուն հարիւրին 30ը կ'աշխատի կօշկակարութեան, հիւսուածեղէնի գործարաններուն մէջ, եւ շա՛տ քիչ մաս մը՝ իբրեւ ծառայ։

Հայերը եւս հետզհետէ լրացնելով իրենց պայմանագրութեան պահանջները, կը հեռանան գործարաններէն ու ագարակներէն։ Մասնաւորաբար հայ չափահաս որբերը բերուած էին հողագործութեան համար, եւ սակայն պայմանագրութիւնը լրացած չլրացած՝ անոնք եւս կը լքեն դաշտերը եւ կը քաշուին քաղաք։ «Ծանր է գործը, եւ աշխատավարձը քիչ», կ'ատարկեն որբերը, եւ մանաւանդ շատ չէզոքացուած ու սինակ են։

* * *

Ֆրանսերէն վիճակագրութիւն մը, նկատել կուտայ թէ մէկ կողմէ հետզհետէ կ'աճի օտար բանուորներու ներգաղթի հոսանքը, (նոյեմբերէն մինչեւ մայիս՝ չափաւոր է, իսկ մայիսէն հոկտեմբեր՝ աճուն), եւ միւս կողմէ, հակառակ գործի նուազութեան եղանակներուն, մեծ աշխատանքներու լրանալուն, քիչ է վերադարձողներուն թիւը։

Այսպէս, 5 մայիսէն մինչեւ 7 յունիս, ներս մտած են 24.921 բանուոր, իսկ վերադարձած են միայն 2.776 հոգի։ Տարեկան միջին հաշիւով, 1928ին, 1929ին վերադարձողներուն թիւն է 40,000, ընդդէմ 300,000 նոր հասնողներու։

Վերջապէս, մեր այս քաղին հետ, չենք մոռնար արձանագրել դոհունակութիւնը, զոր ցոյց կու տայ Ֆրանսացի գործատէրը օտար, եւ մասնաւորաբար հայ գործաւորին հանդէպ։

ՔԱՂԷԱՆ

ՔԱՆԵՐԵՔ ՕՐ ՕԴԻՆ ՄԷՋ

Հունտէր եղբայրները ստիպուեցան գամաք իջնել, 23օր անընդհատ, իրենց սաւառնակով օդին մէջ թռելէ յետոյ։ Ա.յս կերպով անոնք օդին մէջ մնացած կ'ըլլան 553 ժամ 40 վայրկեան։

Մտադրած էին աւելի երկարել իրենց օդագնացութիւնը բայց խողովակի մը պայթումը արգիլեց իրենց փափաքը։ Ա.յս օդային արշաւին ընթացքին, 23 օրուան մէջ, անոնք պաշար ստացան 223 անգամ օդանաւով, իրենց երկու եղբայրներուն կողմէ։

Հունտէր եղբայրները որ հանքի մէջ կ'աշխատէին, իրենց այս արշաւին հետեւանքով կը ստանան աւելի քան 5 միլիոն ֆրանք։ Քարիւղի ընկերութիւն մը անոնց կուտար ժամական 20 անգլ. ոսկի, իսկ անթելի գործարան մը՝ վայրկեանը մէկ տոլար։

Ցեւղութեան նախորդ մրցանիշն էր 420 ժամ, 21 վայրկեան։

ՎԷՐԼԷՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Կիրակի օր, Լի-քէն-պուրկի պարտէզին մէջ, Վէրլէնի արձանին առջեւ կատարուեցաւ յարգանքի արտայայտութիւն մը, որուն կը նախագահէր Կիւսթաւ Քան։

ԵՐԵՒԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՇՈՒՐՋ

Յօդուածագիր մը կը գրէ Խորհ. Հայաստանի մէջ (11 մայիս)։

— 1929 — 1930 ուսումնական տարին սկսած ըլլալով Սեպտեմբեր ամիսէն, Համալսարանի կեանքին մէջ առաջին տարին էր իր ամբողջականութեամբ։ Նախապատրաստական բոլոր աշխատանքները վերջացած են, կարգապահութիւնը ապահովուած եւ դասախօսական կազմը բարեկարգուած է։ Իբրեւ բախտաբեր դասախօսներուն մէկ մասը կրաւորական դիմադրութիւն մը ցոյց տուաւ, առանց անշուշտ որեւէ ազդեցութիւն ձգելու։

Աշխատանոցները հիմա բաւական օժտուած են գործիքներով։ Մէկ երկու տարի առաջ աշխատանոցներուն մէջ հազիւ 5—10 մանրադիտակ կար, 10—15 ուսանողին կ'ընծար մէկ մանրադիտակ։ Այս պատճառով կարգի կը սպասէին եւ աշխատանքները կը դժուարանային։ Այժմ միայն կենսաբանական աշխատանոցին մէջ կան 20 մանրադիտակներ, իսկ միւս աշխատանոցները ունին 5—10 ական մանրադիտակներ։ Եւ սակայն, նկատելով որ ուսանողներուն թիւը աւելցած է, մանրադիտակները նորէն չեն բաւեր։ Անհրաժեշտ է ամէն երկու ուսանողի մէկ մանրադիտակ։

Համալսարանը օժտուած է նաեւ բնագիտական, աստղաբաշխական, տարրաբանական գործիքներով։

Աշխատանոցներու մէջ ժրաջանութեամբ իրենց գործով զբաղած են ուսանողները։ Սակայն աշխատանոցներ ալ կան, ուր աշխատանքը թոյլ է, եւ նախաձեռնութիւն չկայ։ Յանցանքը դասախօսներուն եւ իրենց օգնականներուն վրայ կ'ինայ։ Ոմանք չեն ուզեր աւելի աշխատիլ, եւ ոմանք ալ պատրաստուած չեն։

Բացասական երեւոյթ մը վերջերս արդէն սկսաւ աչքի զարնել։ Դասախօսներուն մէկ մասը շատ առատաձեռն է փրոֆէսէօր կոչուելու մասին։ Դիւրին բան էր «փրոֆէսէօր» կոչել աս ու ան։ Օգնական-դասախօսի տիտղոս ստացողները դժգոհ էին եւ կը բողոքէին, այդ տիտղոսը անհամապատասխան գըտնելով իրենց մասնագիտական կարողութեան։ Ուզելով անպայման փրոֆէսէօր կոչուիլ, դասախօս մը «տէրորիստական» եւ խափանարար միջոցներու դիմեց։ Մէկ ուրիշը բոլոր ընկերներուն եւ պետական հաստատութիւններուն դիմելով, դռները մաշեցուց։

Եւ դեռ դասախօսներուն մէկ մասը անպարտաճանաչ է եւ անբարեխիղճ իր պարտականութիւններուն մէջ։ Մասնաւորապէս արհեստագիտական եւ գիւղատնտեսական վարժարաններուն մէջ։

Այդ երկու վարժարաններուն դասախօսներուն մէկ մասը շարունակ ճամբորդութեան մէջ են, վարչական գործերով զբաղած։ Եւ մատներուն արանքէն կը նային իրենց մանկավարժական աշխատանքներուն վրայ։ Անբարեխիղճ են եւ անպարտաճանաչ։ Իւրաքանչիւր կիսամեակի մէջ հազիւ 5—6 անդամ յաճախած են դասարան։ Մէկը ուսումնական տարուան մեծ մասը կ'անցընէ ճամբորդելով Մոսկուա եւ Լէնինգրատ, եւ ամէն անգամ Մոսկուա հասնելուն՝ «կը հիւանդանայ» եւ երկար արձակուրդ կը ստանայ։ Աւելորդ չէ յիշել, որ այսպիսի դասախօսները չափազանց բարեխիղճ են եւ ճշտապահութիւն ցոյց կու տան ամսականներու դանձումի ատեն։

Գովելի են ուսանողները, լաւ կ'աշխատին։ Բայց,

ա) Մեծ մը ուսանողներ կան, որոնք շատ ծոյլ են եւ լուսաւիւաց։ Անոնք կ'ուզեն որ եւ է ձեւով վկայական մը ստանալ, տաքուկ տեղ մը եւ թոշակ մը ապահովել։

բ) Ուսանողներ, որոնք ծանրաբեռնուած են կուսակցական գործերով, այնպէս որ յոգնած են եւ եւս կը մնան իրենց ուսանողական աշխատանքներէն։

Եւ վերջապէս համալսարանը իր բազմաբաժին ձեւով մեծ անպատեհութիւններ կը ներկայացնէ։ Աւելի լաւ կ'ըլլար եթէ ամէն բաժին (faculté) անկախ ուսթիւն ստանար իբրեւ վարժարան (institut)։

* * *

Ուրիշ յօդուածագիր մը եւս այս կարեւոր նիւթին մասին կը գրէ «Խորհ. Հայաստան»ի մէկ ուրիշ թիւին մէջ (1 յունիս)։

— «Դասախօսներու պատրաստութեան հարցը հետզհետէ լուրջ հանգամանք մը կը ստանայ։

Դասախօսներու ներկայ կազմը իր որակով ու քանակով կարելի չէ բաւարարնկատել։ Նախ մեր համալսարանին դասախօսներուն մէկ մասը դասախօս է վարժարանին մէջ եւ պաշտօնեայ որոշ հաստատութեան մը մէջ։ Եւ այսպէս հասկնալի բացակայութիւններով մեծ մասը կը հասցնէ կրթական կեանքին։

Վերջերս, երբ դասախօսներու այս հարցը քննութեան առնուեցաւ, շատեր տրտնջացին եւ ուրիշներ կ'ըսէին թէ «մեզ համար մխիթարական է», կամ «դէպի վերեւից տրւած հրահանգներ են, հարցը կերառելն է»։ Երկրորդ, կազմին որոշ մէկ մասը դեռ չի տիրապետեր գիտութեան նորագոյն նուաճումներուն։ Ալ չենք յիշեր դասախօսներուն այնմասը, որ կը փափաքի քշել հակաժարքսիստական, հակալէնինեան տեսակէտներ։ Վերջապէս կան դասախօսներ ալ, որոնք կղզիացած են, իրենց առարկաներէն դուրս բանի չեն խառնուիր, կրաւորականութիւն ցոյց կուտան ընկերային ու հանրային աշխատանքներու մէջ։

Անշուշտ ունինք դասախօսներու մեծ մաս մը, որոնք կ'արդարացնեն մեր ցանկութիւնները։

Դասախօսներու կազմին բարելաւումը, սակայն, օրուան հարց է։ Ինչպէս Ռուսիոյ ամէն կողմը, Երեւանի մէջ եւս պէտք է հակակշիռ մը անցընել դասախօսները, գտուիներ կատարել եւ արժանաւորներուն տալ մասնաւոր տիտղոսներ։

Վերջերս համալսարանի դասախօսները զանազան տիտղոսներ ստացան։ Ջափազանց հետաքրքրական է իմանալ թէ ի՛նչպէս, Համալսարանին մէջ, ուր կան մօտ 1500 ուսանողներ եւ 300 — 400 դասախօսներ և օգնականներ, նոր տիտղոսի մը շնորհումը կ'իմանան այն ատեն, երբ կը յայտարարուի Խորհ. Հայաստանի մէջ։ Այս ձեւը անբնական է, որովհետեւ կը կատարուի երբ ո՛չ ուսանողութիւնը եւ ո՛չ ուսուցչութիւնըլուր ունին։ Համալսարանի տնօրէնութեան եւ Լուսաւորութեան գործավարութեան այս ձեւի կարգադրութիւնը երբեք չի դիմանար քննադատութեան։ Մի՞թէ Համալսարանին երիտասարդ գիտական ներկայացուցիչները իրաւունք չունին թեկնածուներ առաջարկելու, դասախօսներու մասին կարծիք յայտնելու։ Մինչեւ այժմ ուսանողութիւնը եւ ուսուցչութիւնը քալած են Համալսարանին պոչին վրայ։ Պատճառը նախ այն է, որ Համալսարանին տնօրէնութիւնը կը սիրէ գրասենեակային աշխատանքը եւ կտրուած կ'ապրի ուսանողութենէն»։

Ուրիշ յօդուածագիր մը եւս այս խնդրին մասին բողոք կը բարձրացնէ նոյն թիւին մէջ։

— «Դասախօսներուն տիտղոս շնորհելու որոշումները կը տրուին սենեակներու մէջ։ Այս պէս շատեր դասախօսի տիտղոս ստացած են, երբ որեւէ կարողութիւն կամ արժանիք չունէին»։

Պէտք է անմիջապէս յայտնել, որ այս յօդուածագիրները փորի ցաւ ունին։ Իրենց ձիշդ ու արդար առարկութիւններէն յետոյ բերած առաջարկով կը մատնեն կուսակցամոլութիւն։ Այսպէս կ'ուզեն դասախօսի տիտղոս տալ միայն անոնց, որոնք կոմունիստ են։

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՂԵՍՏԻՆԷՆ

ՊԱՂԵՍՏԻՆԻ ԽՌՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

ԵՐՈՒՍԱՂԷՄ.— Անցեալ օգոստոսին «Լացի Պատ»ին թընճուկէն ծագում առած խռովութիւնները դեռ բոլորովին չհանդարտեցան։ Յունիս 17ին Աքքէի մէջ, կախաղան բարձրացած երեք Արաբներու պարագան, պահ մը հանդարտած կիրքերը դարձեալ ի յայտ բերաւ։ Ասոնք, ժահապարտները, վերջին խռովութեանց ընթացքին, Հեբրոնի եւ Սաֆեթի մէջ, անզէն ժարդոց, կիներու եւ երախաներու սպաննութեամբ ամբաստանուած էին։ Այս առթիւ, արաբական գործադիր կոմիտէն նոյն օրը ամբողջ Պաղեստինի հաժար սուգի օր յայտարարեց։ Քաղաքին, արար թէ քրիստոնեայ բոլոր խանութները գոց էին ի նշան սուգի։ Ա. Գ. կոմիտէն նոյն օրը հրապարակած իր մէկ թռուցիկով, արաբ ժողովուրդին հանդարտութեան հրաւէր կը կարդար եւ ի միջի այլոց կ'ըսէր.— «Վաղը յունիս 17, սուգի օր՝ մը պիտի ըլլայ ամբողջ Պաղեստինի համար. որովհետեւ երեք արաբ երստասարդներ իրենց հայրենիքին համար կախաղան պիտի բարձրանան։ Մենք զանոնք միշտ պիտի ունենք որպէս զոհաբերութեան խորհրդանշաններ։ Անոնք մեր անկախութեան հիմնաքարերն են։ Թող միւէզզինները մինարէներու կատարներէն Ալլահը կանչեն եւ թող ղօղանջեն եկեղեցիներուն զանգակները։ Մենք ամէն տարի սուրբ պիտի պահենք այս օրը։ Յիշեցէ՛ք, Արաբներ ձեր հերոսները եւ մի յուսահատիք, որովհետեւ ազգերը չեն կրնար ապրիլ առանց գոհաբերութեան եւ հաժբերութեան»։

Ամէն տեղ խաղաղ անցաւ, բացի Եաֆայէն. ուր անգլ. սպայ մը, գլխէն վիրաւորուած էր ցուցաբարները ցրուելու ատեն։ Այս առթիւ ձերբակալութիւններ կատարուեցան։

Ազգ. կեանք.— Ազգ. կեանքը տարբեր դաղութներու մէջ ըմբռնուած խաստով, գրեթէ զուլթիւն չունի հոս։ Կան միութիւններ, իւրաքանչիւրը ինք իր պատեհանին մէջ։ Կենդանութեան ոչ մէկ նշոյլ։ Հետաքրքրական է ծանօթանալ ասոնց գործունէութեան։

«Սիոն» կրթասիրաց Միութիւն.— Այս Միութիւնը, իր կազմութեան առաջին շրջանին, վայելելով Դուրեանի հովանաւորութիւնը, բաւական եռանդուն, իր բազմաթիւ անդամներով լաւ գործ տեսաւ։ Բայց, ինչպէս սովորութիւն է մեր մէջ, հետզհետէ կարծես մարեցաւ այդ եռանդը եւ այժմ ինքնամփոփման շրջան մը կը բոլորէ։ Ժիջտխտաբար ատկից կը ծնաւ Երուսաղէմի հայութիւնը, քանի որ միակ միութիւնն էր որ իր լսարաններով ոգեւորութիւնկը ստեղծէր գաղութին մէջ։

Երուսաղիմացի Հայոց բարեսիրական Միութիւն.— Ահա Միութիւն մը, որուն այլազերժ անունն իսկ սոսկում կը պատճառէ։ Այս Միութիւնը կազմուած է միմիայն քաղաքացի Հայերէ։ Ունին սրահ մը, միշտ դոց պահելու համար։ Բնաւ չեն ուզեր գաղթական Հայերու հետ գործ ունենալ։ Եղած է ատեն մը որ սկսան ընթերցասրահի վերածել իրենց հաւաքատեղին, ժիջտխտաբար ասոր կեանքն ալ չունենալ այդ քաշալերելի ձեռնարկը։ Ասոնք թէ իրենց տուներուն մէջ եւ թէ իրենց ժողովներուն մէջ արաբերէն կը խօսին։ Հետաքրքրուողը ո՛վ, որո՞ւ հոգ. եւ ըսել թէ Ս. Յակոբեանց վանքին հովանիին տակ կը գտնուին...։

Հայկական Միութիւն.— Մօտ 60 — 70 անդամներէ բաղկացած այս Միութիւնը, իր գոյութիւնը արդարացնող ոչ մէկ գործ տեսած է մինչեւ այսօր, մոռ երեք տարիներէ ի վեր։ Ունի սրահ մը, ուր կարելի գտնել մի քանի թերթեր եւ սրճարաններու յատուկ խաղ։ Արդեօք իր անդամներուն ճարանային խաղեր սորվեցնո՞ւ համար կազմուած է Միութիւնը։ Իր անդամներու հոգեկան պահանջներուն գոհում տալիք եւ ոչ մի ձեռնարկ։ Ունի ֆութպոլի խումբ մը։

«Արծիւ» ֆութպոլի խումբը։ Այս խումբը, թէ Անգլիացիներ եւ թէ Հրեաներու հետ տարած մրցումներով, միշտ պատուաբեր եղած է ազգին մար։ Կը բաղկանայ մշտանեայ անդամներէ. բախտաբեր պէտք եղած չափ երութիւնը չի գտներ դեկավարներէն։

Կան նաեւ Զէյթունի, Բրաշի Հայրենակցական Միութեանց մասնաճիւղեր եւ Լաթիոյ Կրթասիրաց Միութիւն։

Պատր. ընտրութիւն.— Վերջերս տաւ հին պատրիարքի մահով պատրիարք ընտրութիւնը։ Դժբախտաբար «Հովուական սրինգ»ի հեղինակը, հակառակ յատուկ փափաքներուն, իր կենդանութեան, իր յաջորդին ընտրութեան հաժար պէտք եղած դադրութիւններ չըրաւ։ Յունիս 19ին, Միաբանական ընդհ. ղովը Պատրիարքին եւ Տեղապահի ընտրութեանց ծանուցիր պատրաստեց։

Կը լսենք թէ, Միաբանութեան կանոնադրին 23 եւ յօդուածները, որոնք պատրիարքի ընտրութեան կը վերաբերին որոշ փոփոխութեանց ենթակուած են։

Նախապէս, ընդհ. տրամադրութիւնը Միաբանութեան անդամներէն պատրիարք ընտրելու միտումն ունէր. վերջին պահուն կը տեղեկանանք թէ, միաբանական ընդհ. ժողովը, միայն երկու անուններու ձեռնպահութեամբ, ընտրած է, թեկնածուներ ընդունելէն ալ, պայմանաւ որ պատրիարքի ընտրութիւնը ո՛ւ եւ է ընտրելիի, նախապէս պէտք է ուղղակի անդամակցիլ Միաբանութեան։ Ատկէ յետոյ է որ հինգ անդամներէ կազմուած յանձնախումբ մը վրայէն, գաղթականութեամբ կ'ընտրի պատրիարքը։ Այս կը հակասէ Ընդհ. Հայրապետութեան. կարգ մը ստացուած վաւերացուցիչներ կ'ենթարկուի Անգլ. Վեհապետին վաւերացումին։

Այս նոր փոփոխութիւնները երէկ Տեղապահին միջոցաւ պաշտօնապէս հաղորդուեցաւ կառավարութեան։

Տօքթ. Պարոնիկեան ոտկածելի ընթացքով դաղթեցան հայ թերթերը, հոս կը գտնուի եւ հիւրընկալուած է վանքին կողմէ։ Կը լսենք թէ իր պատկանած գերմաներէն կերութեան ծախքով «Արիմաթիա» ճամարան մը պիտի բանայ Գերմանիոյ մէջ կղերականներ պատրաստելու համար։ Իր մէջ ներկայացուած այս ա... կարկը հաւանութեան արժանացած է վանքին տնօրէնութեան։

Ս. Խ.— Երուսաղէմի մէջ թերթ չե՞ն կարդար եւ իմացած այս մարդուն չի՞ հիւսուած պատմութիւնները։

Անգլիացի օդանաւորդ երէկ թռիչքի մը պատրաստուեցաւ։ Ուղեւորդը փորձեր կը կատարէր տանելն Ամերիկա, Ատլանտեան կտրելու համար։

ԹՈՒՐՔԻԱ

ՇԱՔԱՐԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ

Շաքարի մեծ գործարան մը բանալու համար նորընկերութիւն մը կազմուելու վրայ է: Ալփուլլուի գործարանին տնօրէնը էնկիւրի գացած եւ տնտեսական գործավարութիան հետ շփումներ ունեցած է այս մասին: Ալփուլլուի գործարանի մասին գեռ որոշում մը չէ տրուած, յայտնի չէ թէ նոր ընկերութեան մէջ պիտի առնուի այս գործարանը որ 3,5 միլիոն ոսկի դրամագլուխ ունի:

ԶԿՆՈՐՍՈՒԹԵԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ

Կառավարութիւնը եւրոպացի մասնագէտ մը հրաւիրած է, ձկնորսութիւնը զարգացնելու համար: Մասնագէտը էնկիւրիի մէջ իր քննութիւնները սկսած է եւ մէկ ամիսէն տեղեկագիրը պիտի տայ: Կնքուած պայմանագրութեան համաձայն, երեք տարի իբր ուսուցիչ պիտի պաշտօնավարէ ձկնորսութեան դպրոցին մէջ:

Ձկնորսները քնաւ գոհ չեն եղած այս կարգադրութենէն եւ մասնագէտ բերուելէն: Փորձառու ձկնորսները այս առթիւ գանգատած են թէ մասնագէտը ընելիք բան մը չունի, եթէ ձուկ բռնելու կերպերը սովրեցնելու եկած է: Ճաշակաւոր ձուկ կ'որսան, բայց տիպուած կ'ըլլան մէկ մասը ծովը թափելու, որովհետեւ զանոնք անվաճառ պահելու եւ ներքին քաղքները փոխադրելու միջոցներ չկան:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԳԻՐՆԵՐ

Թուրքիոյ առեւտրական դաշնագրի բանակցութիւնները, որոնք Մոսկուայի մէջ տեղի կ'ունենան, քանի մը շաբաթէն պիտի աւարտին, ինչպէս կը հաւաստուի: Գերմանիոյ հետ կնքուած դաշնագրին վաւերացուած պատճէնները գեռ չեն փոխանակուած: Թուրքիոյ եւ Թուրքիոյ հունգար դաշնագիրներուն վաւերացման գործողութիւնը աւարտած է, բայց անոնց գործադրութեան մէկ երկու ամիս վերջ կարելի պիտի ըլլայ սկսիլ:

Թուրքիոյ պարսիկ առեւտրական դաշնագրին բանակցութիւնները նոր սկսած են:

ՄԱՐԱԽՆԵՐԸ ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

Պոլսոյ մօտակայ վայրերը մարախներու արշաւին ենթարկուած ըլլալով, պատկան իշխանութիւնները միջոցներ ձեռք առած են զանոնք ոչնչացնելու համար: Մարախները ամէնէն աւելի վնասներ սկսած են պատճառել Ցարքոյի եւ Կէպզէի շրջանակներուն մէջ: Կէպզէի գայմագամը անձամբ պայքարին գլուխը տնցած է եւ յաջողած են շատ տեղերու մէջ մարախները ոչնչացնել:

Ցրուած տեղեկութեանց համաձայն, մարախները այս տարի շատ երկար ճամբորդութիւն մը ըրած եւ մինչեւ վիեննա գացած են: Մարախի շատ խիտ ամպ մը անցեալները վիեննան պաշարեր եւ մինչեւ իսկ շոգեկառքերու երթեւեկը դադրեցուցեր է: Երկու կառախումբեր մարախի ամպին մէջ մնացած են եւ չեն կրցած ոչ առաջ ոչ ալ ետ երթալ: Հրշէջ գունդերու օժանդակութեամբ, մարախները ոչնչացուած են եւ միլիոնաւոր միջատներու դիակներ փռուած են գիծերուն վրայ: Սպանըւած միջատները այնքան շատ եղած են, որ շոգեկառքին անիւները չեն կրցած առաջանալ, այնպէս որ պէտք եղած է այրել մարախները:

Այս մարախները երկու ժամուան մէջ բոլորովին մերկացուցին արօտավայրերն ու գետնախնձորի պարտէզները:

ԽՈՐՀՐԴ. ՄԻՈՒԹԻՒՆ

ԻՆՉՊԷՍ ԿԸ ԳՆԴԱԿԱՀԱՐԵՆ

Բոլշեւիկները ինքնատիպ են նաեւ իրենց մահապատիժի գործադրութեան մէջ:

Ամբաստանեալին կը հաղորդեն —բարեւ մը տալու պէս— թէ մահուան դատապարտուած է: Բոլոր ձեւակերպութիւնները կատարելէ յետոյ, գժբախտ մարդը կը տանին կը դնեն փոսին գլուխը: —կրա՛կ: Ու կը ճալճատին հրացանները, բայց... պարապ: Լեղապատառ զոհը այս ձեւով կը ժղեն խոստովանութիւններ ընելու, կամ ընդունելու եղած ամբաստանութիւնները: Ցետոյ կը կատարուի իրական գնդակահարութիւնը, յայտարարելով թէ մահապարտը խոստովանած է իր ոճիրները վերջին պահուն: Բայց բոլշեւիկները գնդակահարութեան առաջին խաբէական արարողութիւնը երբեմն քանի մը անգամ կը կատարեն նոյն անձին վրայ, մոմի պէս հալեցնելով սարսափէն:

Այս տեղեկութիւնները մինչեւ այժմ կը քաղենք հակաբոլշեւիկ աղբիւրէ: Ինչ, ընթերցողներ, ահա ձեզի փաստը... բոլշեւիկ աղբիւրէ: Սովետ Հանրապետութեան ընդհանուր դատախազը, Կրիլենկօ, ինքն իսկ կուգայ «Պրավդա»ի մէջ (25 յունիս) խոստովանելու մեր տեղեկութեանց ճշտութիւնը... քննադատելով գնդակահարութեան ինքնատպութիւնը:

— «Ի՞նչպէս կը բռնաբարուին «յեղափոխական օրինականութիւնները», ի՞նչպէս կ'եղծուին ու կը չափազանցուին: Կուլակներուն դէմ պայքարիլ՝ կը նշանակէ զանոնք կողոպտել: Գիւղատնտեսութիւնը համայնացնել՝ կը նշանակէ գրաւել հաւն ու վառեակը: Եւ եթէ մէկը չհնազանդի, գայն կ'ահաբեկեն՝ սուտ գնդակահարութեան արարողութիւններով, որոնք ի վերջոյ կը հասնին իսկական գնդակահարութեան»:

ՓՐՈՖԷՍԷՕՐՆԵՐՆ ԱԼ ԿԸ ԴԱՏԵՆ

Կը պահանջուի, որ Ռուսիոյ բոլոր փրոֆէսէօրները ունենան քաղաքական կարծիքներ, անշուշտ կառավարութեան ուզած ձեւովն ու կաղապարով: Ով որ չէզոք է, չի կրնար գործել: Դոյն պէս պարբերաբար բոլոր փրոֆէսէօրները կը հրաւիրուին քննութեան, որ տեսակ մը դատ է:

Բայց մի կարծէք թէ այս տեղեկութիւններն ալ հակաբոլշեւիկ աղբիւրէ են: «Կրասնոյէ Ստուդէնտչէստվո» ուսանողական բոլշեւիկ ամսագիրը (թիւ 25) կը պատմէ եւ կը նկարագրէ թէ ի՞նչպէս տեղի կ'ունենան այդ քննութիւնները, երբ փրոֆէսէօրներուն կը հարցուին մարքսիստական խնդիրներ:

Մոսկուայի փրոֆէսէօրներէն, կիներու հիւանդութեանց դասախօս կակուշկին, նման հրապարակային քննութեան մը ընթացքին կ'ըսէ.

— Վերջերս սկսայ ուսումնասիրել մարքսիզմը: Կրօնքին ոչ պաշտպան եմ, ոչ ալ դէմ:

— 1923ին յայտարարած էիր թէ արդի վարչաձեւէն օգուտ չկայ:

— Չեմ յիշեր:

Քննիչը յետոյ կը հարցնէ թէ փրոֆէսէօրը ի՞նչ կը խորհի կինեռու կազմակերպման, գիւղատնտեսութեան համայնացման մասին: Հարցաքննութիւնը կը տեւէ մինչեւ կէս գիշեր: Դասախօսը կը ջղայնոտի եւ կը յայտարարէ.

— Ւսելորդ է խուզարկել ուղեղս: Խուզարկեցէք գրպաններս, բայց հանգիստ ձգեցէք գլուխս:

Եւ այսպէս փրոֆէսէօրը կը գրկուի իր դասախօսական աթոռէն:

Մոսկուայի մէջ Դորգոմիլովի քիմիական նիւթերու գործարանին գիտուններէն տարրաբան Չէլինսկի եւս քննութեան է կանչուած:

— Ի՞նչ կը խորհիս կրօնքի մասին.

— Ժամանակին կրօնասէր էի:

— Եկեղեցի կ'երթա՞ս:

— Տարին մէկ անգամ, այն ալ Միայն շարական մտիկ ընելու փափաքով:

— Ի՞նչ կը խորհիս պապին մասին:

Չէլինսկի չի կորսնցներ իր պաշտօնը, որովհետեւ, եթէ ժամ կ'երթայ, սովետական բանակը օժտած է հեղձուցիչ կազերով:

Հարցաքննուած են նաեւ փրոֆէսէօրներ Գոլուբով, Բոռև, Սվէշնիկով: Մէկը առարկած է թէ, իբրեւ մաթեմաթիքի դասախօս, հարկ չի տեսներ մարքսիզմ սորվելու, որովհետեւ մաթեմաթիքը գոյութիւն ունի հազար տարիներէ իվեր. իսկ մարքսիզմը գեռ հազիւ տասը տարիէ ի վեր:

ԿԸ ՓԱԽՉԻ՛Ն...

Ամէն օր մէկը կը փախի կարմիր դրախտէն, Սովետիստանէն: Սովորաբար արեւմտեան սահմանագլուխէն, լեհական, էսթոնական, լեթոնական, կամ միւս կողմէն՝ չինական սահմանագլուխէն: Վերջերս ալ 38 հոգի փախան Խրիմէն:

Պուլկար թերթերը կը գրեն թէ 38 փախստականները, — 16 այր, 15 կին, 4 երախայ եւ 3 նաւաստի, — սպիտակ դրօշ պարսպած առագաստանաւովը վառնա հասան: Փախստականները, որոնք կուգան Եւպատորիայէն, նաւ մտած էին՝ յայտարարելով, որ գէպի Եալթա զբօսական պտոյտ մը պիտի կատարեն: Բացերն հասնելէ յետոյ, նաւուն ղեկավարութիւնը դարձուցին դէպի պուլկարական եզերքները:

Կ'ըսեն թէ կեանքը անտանելի է Ռուսիոյ մէջ: Խրիմի մէջ վերջերս սկսած են հաւաքել հացի արտօնագիրները: Որեւէ անհնազանդութիւն կը պատժուի աքսորով: Փախստականները հաճարէ հաց մը գնած են քիլօն 60 կոպեկի (7 ֆրանք). միակ սնունդը ճամբու ընթացքին: Վառնայի մոքսատան մէջ, երբ ճերմակ հաց գտան, վայրենիի պէս նետուեցան վրան, համբուրեցին, խաչակնքեցին, լացին ու լափեցին: Երկա՛ր, երկա՛ր տարիներէ ի վեր ճերմակ հաց դրած չունէին:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գերմանիոյ մէջ ներկայիս կը բնակին 1,200,000 լեհեր, 160,000 սերպեր, 45,000 չեխեր, 180,000 Լիթուանացիներ, 20,000 Դանիացիներ, որոնք իրենց փոքրամասնութիւն, երկրին մէջ չեն վայելեր իրենց ազգային իրաւունքները: Փրուսիական կառավարութիւնը միայն լեհերու եւ Դանիացիներու դպրոցական հարցը լուծած է հրամանագրով մը, 1928ին: Այսու հանդերձ բացուած լեհական դպրոցները կը բախին բազմաթիւ դժուարութիւններու իշխանութեանց կողմէ եւ կը հալածուին գերման ազգայնամոլներու կողմէ:

Լիթուանիացիները եւ սերպերը չունին դպրոց: Փրուսիական կառավարութիւնը կը չանայ համոզել Սաքսի կառավարութիւնը որ ետ առնէ սերպերուն տրուած դպրոցական շատ համեստ իրաւունքներ, զորս կը վայելեն երկար տարիներէ ի վեր:

Լեհական թերթ մը դիտել կուտայ թէ փոքրամասնութեանց դիրքը Գերմանիոյ մէջ նշանակելի կը դառնայ Մանաւանդ անոր համար որ, Գերմանիա, Ազգերու Դաշնակցութեան մէջ, ինքզինքին կուտայ փոքրամասնութեանց պաշտպանի դերը:

ԵՐԿՐԱՇԱՐԺ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Պէնկալի եւ Ասսամի մէջ, առջի գիշերը զօրաւոր ցնցումներ տեղի ունեցան: Քանի մը տուներ փլան: Երկրաշարժը մեծ մնասներ տուած է Քուք Պէհարի մէջ, եւ բազմաթիւ շէնքեր վնասուած են: Շոգեկառքերու կանոնկարգութիւնը կարտ տարածութիւն վրայ, երկաթուղին քանդուած ըլլալով:

ԱՄԲՈՂՋ ԳԻՒՂԸ Կ'ԱՅՐԵՆ

Մեծ հրդեհ մը ծագեցաւ Պրսօ-Մարամուրէշ գիւղին մէջ (Ռումանիա), 250 տուներ այրեցան: Մարդու կորուստ չկայ: Հրդեհը ծագեցաւ բժիշկի մը տունէն, այն թաղին մէջ, ուր տուները ամբողջ փայտաշէն են: Բնակիչները հազիւ ժամանակ ունեցան խուճապահար փախչելու: Երեք հազար անձեր անապաստան կը մնան:

Ոստիկանական քննութիւնը երեւան բերաւ թէ հրդեհը դիտումնաւոր եղած է եւ կը վերագրուի հակահրէական շարժումի մը: Իրօք, այդ գիւղը մեծ մասամբ հրեաներ կը բնակին: Ռումանացի քահանայ մը եւ ուսանող մը երկար տեւնէ ի վեր, հրեաներուն դէմ գրգռութիւններ կը սերմանէին:

Հրդեհը ծագած է այն տունէն, որուն տէրը՝ հրեայ բժիշկ մը, սպառնական նամակներ էր ստացեր քանիցս:

Բոլոր ջրհորները լեցուած էին գանազան առարկաներով, այնպէս որ հրդեհը մարելու համար, կարելի չեղաւ բաւական քանակութեամբ ջուր գտնել:

Կարդացէք և Տարածեցէք ՅԱՌԱՋ

ՄՐՑԱՆԱԿ

Փարիզի Հայ Տիկնանց Միութեան Որբերու Օգնութեան Մասնաճիւղը անցեալ 1929 տարուան մէջ հրաւէր կարդացած եւ խոստացած էր մրցանակներ սահմանել այն հայ աշակերտներուն, որոնք փարիզի եւ կամ արուարձաններու թաղային վարժարաններուն մէջ առաջին, երկրորդ երրորդ, չորրորդ եւ հինգերորդ հանդիսացած են:

Անցեալ տարի իրենց դասարանին մէջ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ եւ հինգերորդ հանդիսացողներ արձանագրուած էին, բայց մրցանակ չէին ստացած:

Միութիւնս այս տարի եւս կը հրաւիրէ բոլոր այն աշակերտները, որոնք առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ եւ հինգերորդ հանդիսացած են, որպէս զի արձանագրուին:

Արձանագրուողները պէտք է ունենան դպրոցի տնօրէնին կողմէ տրուած պաշտօնական թուղթը:

Թէ՛ 1929ին եւ թէ 1930ին արձանագրուողներուն մրցանակները պիտի բաշխուին այս տարուան ամառնային արձակուրդէն վերջ:

Մրցանակաբաշխութեան թուականը պիտի ծանուցուի թերթերու միջոցաւ: Արձանագրութիւնք առաւօտները ժամը 9 12,եկեղեցւոյ խորհրդարանը:

(Կընէք)

ԱՆԳԼԻՈՅ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹԻՒՆԸ

Անգլիոյ աշխատաւորական դահլիճը՝ Խորհրդարանին պիտի ներկայացնէ ստիպողական օրէնքի նախագիծ մը ընդդէմ անգործութեան:

Այս օրինագծով կառավարութիւնը կը պահանջէ. 1.— Երկրին ամէնէն աւելի մնասուած մասերուն մէջ, աշխատանքներուն վրայ ունենալ բացարձակ հակակշռի իրաւունք. նաեւ, հանրօգուտ ձեռնարկներու մէջ, աւելի կարեւոր գումարներ տրամադրելու արտօնութիւն. 2.— Իրաւունք ունենալ հողեր դնելու, հանրային ձեռնարկներ կատարել պալու համար. 3.— Փութացնել երեսփոխանական ժողովի մէջ այս առթիւ կատարելիք ձեւակերպութիւնները, որպէսզի կարելի ըլլայ ձեռնէն առաջ գործի սկսիլ:

Ազատականները հաւանութիւն յայտնած են օրինագծին: Լոյտ Ճորճի նախագահութեամբ կազմուած յանձնախումբ մը կ'ուսումնասիրէ գործատուութեան սկզբնական պահանջները...

ՍՏԱՑԱՆՔ

La Mort de Byzance, A. Navarian, Edit. Jouve et Cie., Paris, գին 12 ֆր.: Դիմել գրատուն Հրանտ Սաժուէլ, 51 Rue Monsieur le Prince, Paris (6):

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ — 5 —

ԱՆԴՐԱՆԻԿԻ ՅՈՒՇԵՐԸ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

45 հայ կուգան սերօրին կը անգատին երկու քրդու վրայ, նք այդ օրը հոգ կը գտնուին: երօրը Գալէին, Ցագէին եւ երու Հերթինցիներու կ'ըսէ, որ րնան, սպաննեն այդ երկու ւրտը:

Տղերքը կ'ելլեն կ'երթան իւրտերու սահմանը, ուրկից պին անցնէին այդ երկու քիւրտը, կու տեղ դիրք կը բռնեն եւ ք քիւրտերը կ'անցնին՝ Գալէն Ցագէն երկու հրացան կը զարՒ: Մէկը կ'ընկնի, իսկ միւսը կը աքչի: Փախչողը բաւական կը ռանայ, յետ կը գառնայ անմ մը կը զարնէ իրեն չախչիով եւ կը փախչի: Տղերքը նին կը վերցնեն ընկած քիւրտի չամախչըն ու խանչալը ու կը հեռանան:

Խալիլի գեղը կուգայ կը տանի դիակը եւ սպանութիւնը կը վերագրէ Բողբկցոց, որովհետեւ բողբկցիք եւ խարզանցիք թշնամի էին եւ միշտ իրարու մարդ սպաննած էին: Խնդիրն այնպէս էր, որ այդ երկու գեղերը պիտի միմեանց զարնէին: Հեթինցի եղբօր ըսուած մարդը, որ 94ին ալ մասնութիւններ ըրած էր սասունցիներու վերաբերմամբ՝ կ'երթայ կ'ըսէ Խէրզանցոց՝ Խալիլի գեղին թէ՝ Բողբկցոց գնդակը ձեր մարդուն ըրած չէ», եւ մանրամասն կը պատմէ Սերօբի Սպաղանք գալը եւ քիւրտերու սպաննել տալը:

Էդ սպաննուող քիւրտերու մասին գիւղացիք կը պատմէին, որ 94ի կռուին էգոնք Շէրինիկայ քով կայնած քիւրտերու կը զարնէին, կը քթրէին Բէկրանցի Էմէրիկ կիաքոյի: 94ին Խալիլի ցեղը Հայ մը չէ սպաննած, բայց Հայերուն ըսեր են. «Հայե՛ր, ձեզ պիտի թալնեն, աւելի լաւ է մենք թալնենք, քան ուրիշները, դուք մեր Հայերն էք, չենք սպաննի ձեզ»:

Եղօյի մատնութենէն վերջ, քիւրտերը 50 հոգուց խումբ կը կազմեն եւ գիշերով կուգան Հեթինք գիւղը: Հեթինքցիներէն 7 կ'ընկնին քիւրտերու ձեռքը, որոնց կը տանին Հոնոյ առաջ գետի եզերքը կը սպաննեն եւ կը թափեն ջուրը: Մնացած գիւղացիք ալ կը փախչին: Խրթի հետ կ'ըլլան նաեւ մաս մը քիւրտեր, որոնք թալան կը վերցնեն: Երկրորդ օրը Ախպերցիք կ'երթան, կը վերցնեն դիակները եւ կը թաղեն:

Սերօբ ժողով մը կ'ընէ ժողովրդով, ուր կ'որոշեն Հեթինք գիւղը վառել, որպէսզի Հարցաքննութիւն ըլլայ, գիւղի վառելն ալ քիւրտերու վրայ ընկնի: Կ'որոշեն, որ Ղազարն ու Ցարութիւն 3-4 երիտասարդ գիւղացիների հետ գիւղի գլուխը քանի մը Հրացան զարնեն, գիւղի մէջ գտնուածներն փախնին, ապա նաւթածեն եւ վառեն գիւղը:

Մենք Հաւատորիկէն Հասանք Խտան, ուր եկան նաեւ Հեթինք վառող տղերքը, որոնք պատմեցին մեզի Ցալուրիկի Հեթինքի մէջ անգած գարձածները: Իմացանք նաեւ որ մեր ղրկած 40 կոտ ալիւրը Հատեր էր. մնացեր էր միայն 10 կոտ, որովհետեւ ժողովի առեն սերօբը ժողովրդին ալ կերցուեր էր:

Աքօյի գրած նամակը ձմեզայիրի սպանելու վերաբերմամբ, Մշու կոմիտէի գրածն ալ աղչկան եւ տղի վերաբերմամբ յանձնեցի սերօբին: Նա կարդա տուաւ նամակները, եւ Հարցը՛ վճռուեց, որ ձէզայիրը անպատճառ սպաննուի:

Ձէզայիրի սպանութեան խընդիրը դեռ Գուրգէնի կենդանութեան օրով էր դրուած: Մենք երկու անգամ գացինք սպանելու, բայց Հրայրը արգելք եղաւ. եւ մենք չկրցինք սպանել: Հրայրը խոստացեր էր իր գիւղի ընկերներից մէկի ձեռքով սպաննել տալու, նոյն խոստումը ըրեր էր Սաքոյին, երբ մօտ 20 օրուան բանտարկութիւն ունեցաւ, սակայն իր խոստումը չկատարեց: Խտանէն այնպէս պիտի երթայինք սպանելու այդ մարդը, որ Հրայրը չիմանար:

Մենք երկու տասնապետ վեր կեցանք, վերցրինք Համբարձումը, Գէորգը, Ցարութիւնը, Հլօն, Բուլանըխցի Գէորգը եւ Սեդրակը: Տղերքը զէնքերնին կապեցին, Սերօբը ըսաւ.

«Անդրանիկ, այս Բուլանըխցի Գէվին, Հասօն, եւ այդ քանի մը տղաներ, որոնք մինչեւ Հիմա քովս մնացած են, էլի՛ իմ քովս պիտի մնան, ուրիշ տեղ չպիտի երթան»:

Այդ ըսած տղերքը 9 ամիս իրեն քովը նստած՝ ոչ մի տեղ գացած չէին:

«Պարոն Սերօբ, ըսի ես, մենք այդ մարդու քէօշքի վրայ պիտի գնանք, պէտք է ճարպիկ տղաներ ըլլան»:

«Չէ, չպիտի երթան իմ քովէս»:

«Ուրեմն, ըսի, Հաւասար աչքով նայիլ չկայ, մաս մը միայն գնայ, չարաչար տանջուի, իսկ միւս մասը նստի եւ ոչինչ ընէ»:

«Ինպէս է, ըսաւ՝ ձեր Հաշուին գայ՝ ըրէ՛ք, ձեր Հաշուին չի գար, մի ընէ՛ք»:

Նոխ քան իմ Հաւատորիկ գնալս՝ ես Սերօբին ըսի:

(Շար.)

րու ձերբակալումը եւ կը նախատեսեն թէ կացութիւնը պիտի ծանրանայ այս պատճառով։ Հակահամաչնավար շարժման պետերն իսկ կը բողոքեն այս ձերբակալումներու դէմ եւ կը մերժեն ստանձնել որեւէ պատասխանատուութիւն։ Այս վերջինները հրատարակեցին իրենց ծրագիրը, որ Սահմանադրութեան մէջ, որեւէ փոփոխութիւն մտցնելու չի ձգտիր, ո՛չ ալ դիկտատորութիւն հաստատելու։

Յարդ մայրաքաղաք հասած են 12,000 գիւղացիներ, մասնակցելու համար հակաբոլշեւիկ ցոյցին։ Բոլոր ցուցարարները իրենց թեւին վրայ կը կրեն սեւ-կապոյտ շղարշներ եւ իրենց կողմէ նշանակուած խմբակներով կը պահպանեն կարգը։ Ցուցարարներուն արգիլուած է թափառիլ բանուորական թաղերուն մէջ։ Յարդ, որեւէ խռովութեան տեղի չէ տրուած։ Ցուցարարները մեծ հաւաքոյթ մը կազմակերպեցին, հանրապետութեան նախագահին, նախարարներու եւ դեսպաններու ներկայութեամբ։ Ցուցարար գիւղացիներէն զատ, հաւաքուած էր նաեւ 20,000է աւելի բազմութիւն մը։

Համաչնավար երկու երեսփոխաններ, որոնք երէկ առեւանգուած էին, յանձնուեցան ոստիկանութեան։

Հնդկաստանի խռովութիւնները

Պոմպէյի կառավարական խորհուրդին նիստը արգիլելու համար, հազարաւոր կամաւորներ, սեւ դրօշներ պարզած, գացին ժողովասրահին առջեւ, միւս կողմէ, բազմաթիւ կամաւորներ մինչեւ լոյս ապասեցին Խորհուրդի անդամներուն տան առջեւ, արգիլելու համար զանոնք դուրս ելլելէ։ Անմիջապէս որ այս կամաւորները կը ձերբակալուէին, ուրիշներ կուգային անոնց տեղը բռնելու։ Այս առթիւ բազմաթիւ կռիւներ տեղի ունեցան ոստիկանութեան եւ կամաւորներուն միջեւ։ Չարիւրաւոր ձերբակալումներ կատարուեցան։

Նոր խռովութիւններու վախով, ոստիկանութեան հրաման տրուեցաւ կազմուպատրաստ կենալու, եւ հրազէն ստանալու։

Փէշավէրի խռովութիւններու քննիչ յանձնախումբը վերջացուց իր աշխատանքը։ Յանձնախումբը դատապարտելով մէկտեղ խռովութիւնները զսպելու համար զրահապատ ինքնաշարժներու գործածութիւնը, գովելի կը գտնէ կառավարութեան ընթացքը որ երկու անգամ, ոստիկանութեան հրամայած է զէնք գործածել ամբոխին դէմ։

Փէշավէրի խռովութիւններու ատեն, սպաննուած են 30 հոգի եւ նոյնքան ալ վիրաւորուած։

Բոլշեւիկները յոյն բանակին մէջ

Աթինական թերթ մը կը յայտնէ թէ, ըստ պատերազմական նախարարութեան քաղած տեղեկութիւններուն, համայնավարական կոչեր գրաւուած են յունական զօրանոցներուն մէջ։ Գ.Միջազգայինը, մեծ չանքեր կը թափէ ամբողջ Յունաստանի մէջ, թէեւ ապարդիւն։ Համայնավարները կը չանան գրգռել նաեւ ծովային զինուորները։ Սելանիկի մէջ, համայնավարական կոչեր ցրուող եօթը զինուորներ բռնուեցան։

Բուխարին ախտորուած

ԼՈՆՏՈՆ, 7 յուլիս.— «Մորնինկ Փոսթ» կ'իմանայ Ռիկայէն թէ Բուխարին ղրկուած է հարաւային Ռուսիա, իբր թէ ապաքինելու համար, բայց իրականութիւն է թէ աքսորուած է։ կը սպասուի որ աջակողմեան ուրիշ պարագլուխներ եւս հրաւէր ստանան՝ ապաքինման մեկնելու...։

Գերման ալիքատողականներուն դէմ

Գերման ազգայնականները կը շարունակեն իրենց հալածանքները անջատողականներու դէմ։ Վորմսի մէջ, 32 ընտանիքներ, իսկ Քայզերլաուտէնի մէջ 19 ընտանիքներ, բողոքեցին ոստիկանութենէն թէ յարձակման ենթարկուեցան, անծանօթներու կողմէ։ Թրէվի մէջ նոր միջադէպեր ալ պատահեցան։ Ամբոխը հաւաքուեցաւ անջատողականի մը տան առջեւ, եւ փորձեց աւարի տալ։ Զանազան վայրերու մէջ ալ, փոքր զրկռումներ կը շարունակուին։

Պերլինի քաղաքական շրջանակները կը յայտնեն թէ ֆրանսական թերթերը սխալ ճամբու մէջ ինկան, այս միջադէպերը նկատելով իբր բռնաբարում կնքուած համաձայնութեանց։ Աննշան միջադէպեր են կ'ըսեն անոնք, առանց ծաւալի, զորս կարելի չէր նախատեսել։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ԼԵՀԱՍՏԱՆի մէջ, համայնավարներու կողմէ կազմակերպուած հրապարակային հաւաքոյթի մը ընթացքին, ոստիկանութիւնը յարձակման ենթարկուեցաւ սրճաղացով, երբ կը փորձէր հարբիւր հոգինոց բազմութիւն մը ցրուել։ Ոստիկաններն ստիպուեցան զէնքի դիմել։ Ոստիկան մը եւ ցուցարար մը սպաննուեցան։ Տասն անձեր ձերբակալուեցան։

ԳԵՐՄԱՆԻՈՅ վերջս քաղաքին մէջ, ցոյցէ մը դարձող համայնավարներ, խռովութեան ժամանեցին շրջանը։ Յարձակեցան տան մը վրայ եւ դաշունահար բրին բնակիչներէն մէկը։ Պէնհայմի մէջ կանոնաւոր ճակատամարտ մը ժղեցին ոստիկանական խումբի մը դէմ։ Ութը վիրաւորներ կան։ Ֆրանքֆորթի, Տարմշտատի եւ Մայեանսի ոստիկանները կապեցին ճամբանները եւ ձերբակալեցին 400 անձեր։

ՍԼՆ-Է ՈՒԱՋ նահանգին երեսփոխանը հարցս պէդման խնդրագիր մը ներկայացուց կառավարութեան թէ ինչ պատճառներով չեն վերսկսած բանակցութիւնները որոնք ընդհատուած էին 1928ին, ռուսական պարտքերու կարգադրութեան համար։

ԸՆԿԵՐԱՅԻՆ ապահովագրութեանց դէմ, Փարիզի խումբ մը կարուհիներ բողոքի ցոյցեր ըրին։ Երէկ, Ֆրանսայի գանազան վայրերուն մէջ, բողոքի 21 նոր ցոյցեր կատարուեցան։

ՄԱՐԱԽԻ սկսած է մեծ փնտռներ հասցնել Ֆրիոլիի (Իտալիա) շրջանի ագարակատէրերուն։ Արժոիքի գործով զբաղող ամբողջ ազգաբնակչութիւնը կազմակերպուած կռիւ սկսած է մարախը մաքրելու հարաբ։ Քաղաքապետարանները մէկ փիլօ մարախ բնաջնջողին 40 սէնթ խոստացած են։

«ՅԱՌԱՋ» կը ծախուի ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ
Գրատան մէջ, 51 Rue Monsieur le Prince

Հ. Յ. Դ. ՓԱՐԻԶԻ ԿՈՄԻՏԷՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԿԱՆ

ժողովի կը հրաւիրէ բոլոր խումբերու ներկայացուցիչները այս ուրբաթ իրիկուն ժամը 8.30ին Chope Parisienneի վերնայարկը, 64 Rue des Ecoles.

Հ. Յ. Դ. ՄԱՐՍԷՅԼԻ ԿՈՄԻՏԷՆ ՍՏԻՊՈՂՍԲԱՐ ԺՈՂՈՎԻ

կը հրաւիրէ՝ *Բրիստափոր, Ռոստոմ* եւ *Իշխան* ենթակոմիտէի բոլոր ընկերները, վաղը Հինգշաբթի իրիկուն ժամը 8.30ին սովորական հաւաքատեղին։ Ներկայանալ անդամատետրով։

Հ. Մ. Ը. Մ.

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՀԱՅ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

Սկաուտներու բանակում-ցուցահանդէսը, Meudonի *անտառին մէջ,* Patte d'Oie *վայրը, 12—13—14 յուլիս։ կը մասնակցին 250 հայ սկաուտներ իրենց ձեռական աշխատութիւններով։*

Հրաւիրուած են օտար անձնաւորութիւններ եւ սկաուտներ։

ԼՈՅՍ ՏԵՍՍԻ

ՎԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Գրեց՝ Օն. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Գեղեցիկ տպագրութեամբ եւ 220է աւելի մեծադիր էջերով այս գիրքը կը բովանդակէ ամբողջական եւ վաւերական պատմութիւնը

ՎԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ, *որուն 15 ամեակն է այս տարի,*

որ մեր պատմութեան փառաւոր մէկ էջը կը կազմէ։

Հեղինակը, Զինուորական Խորհուրդի քարտուղար, այս գիրքը կազմած է օր օրին. 1915ի Վանի ապրիլեան կռիւներու ընթացքին։

Ծրանասյի համար կ'արժէ միայն 20 ֆրանք

Բացարձակապէս կանխիկ *Դիմել ՅԱՌԱՋի վարչութեան*

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՐԴՈՒ ՅԱԿՈՐԵԱՆԻ

ՓՆՏՌԵՑԷՔ

ՀԱՅԿ ԱՃԷՄԵԱՆԻ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

«ՆՈՒԱԴՈՂ ՎՇՏԻՑ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՅՈՑ»

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ, ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

(Հայր Սիմոն Երեմեան. Ատրուշանի Յառաջաբանով)

Բազմաթիւ լուսատիպ պատկերներով եւ գունաւոր շապիկով։ Ալիտիպ էջեր, յուշեր, նամակներ, դէմքեր եւ դէպքեր եւայլն։ Մեծածաւալ հատոր, էջ՝ 858։

Ատրպատականի Հայոց Թեմական տպարան, Թաւրիզ։ Գինն է՝ Պարսկաստան՝ 20 դրան, Ֆրասան՝ 50 ֆրանք, Ագիւան եւ գաղութներ՝ 9 շիլին, Ամերիկա՝ 2 տոլար 50 սէնթ։ Ձամբու ծախքը ստացողին հաշուոյն։ Ստանալու համար դիմել՝ Haik Adjémian, Tauris, (Perse).

Հ. Ց. Դ.

ԼԻՈՆի Պատ. միութեան վիճաբանական ժողովը՝ վաղը Հինգշաբթի իրիկուն, ժամը 8.30ին, Գրադարանի սրահը։ կը հրաւիրուին կենդանի անդամները։

ՑՈՒՇԱՏԵՏՐ

Զ. Ե. Ո. Միութեան Փարիզի մասնաճիւղին վիճաբանական ժողովը, վաղը Հինգշաբթի իրիկուն, ժամը 9ին Ժլորիայի վերնայարկը։ Նիւթ՝ Հայրենասիրութի՞ւն թէ աշխարհաքաղաքացիութիւն։ Մուտքը ազատ է։

Շաւիլիի երիտ. երկ. միութեանը ժողովը այս շաբաթ իրիկուն, ժամը 8.30ին ճանօթ հաւաքատեղին։

ԿԸ ՓՆՏՌԻՒԻ

— կը փնտռուի Սիվրիհիսարցի Թագուհի Կիլէմիրեանի աղջիկը Հայկանուշ Թէքէեան որ երկու տարի առաջ կը գտնուէր Պոլիս իր ամուսնոյն Պրուսայի ձէրախ գիւղացի Յովհաննէս Թէքէեանի հետ։ կը կարծուի թէ այժմ կը գտնուին Յունաստան։ Իմացնել՝ Missak Nichanian, 3 Rue Victor Hugo, Bourgoin, Isère, France.

— Ֆիկին Ալնիձա Հիւսէմեան եւ իր որդին Սիրական (Մարգուանցի), կը փնտռեն իրենց մօտիկ ազգականները Մարիամ եւ Ֆլորինա Թաշճեանները, որոնք կը գտնուին Ամերիկա։ Ցեղեկացնել՝ A. Gulbenkian, 35 Rue Dunoir, Lyon։ *կը խնդրուի ամերիկահայ Թերթերէն արտատպել։*

— կը փնտռուի Էնկիւրի նահանգին Ստանօս գիւղէն Յակոբ Զօպանեան 27—28 տարեկան, հօր անուն՝ Պողոս, մօր՝ անուն Մարիամ։ 1920ին կը գտնուէր իր մեծ մօրը քով Մերսինի։ Այդ թուականին մեկնած է Դամասկոսէն Պոլիս երթալու համար։ Կիլիկիոյ ճամբուն վրայ տեսնուած է հայրենակիցի մը կողմէ։ Իր մասին ստոյգ տեղեկութիւն տուողին 1000 ֆրանք կուտէր։ Իմացնել իր եղբօրը Գրիգոր Զօպանեանի 31 Rue de Fossé-Issy-les-Moulineaux (Seine) France կամ Թերթիս վարչութեան։

կը խնդրուի արտասահմանի Թերթերէն արտատպել։

— կը փնտռեմ Քէվախի վերի բագարիճէն Խոսրով Իլպիգեան եւ գաւակները Ղազարոս, կաթիկ, Ագատուհի, եւ Հօրեղբօրդուկոյսգաւակները՝ Աւագ, Մատթէոս եւ Ծաղիկ, որոնք աքսորուած են 1915ին։ Իզմիրի դէպքէն ամիս մը առաջ Մալաթիայէն լուր առնուած է աղջիկը կաթիկէն։ Անկէց ի վեր լուր չկայ։ Իրենց մասին ստոյգ տեղեկութիւն տուողին 500 ֆր. նուէր, իմացնել՝ H. Hougasian, Mazagan, Maroc։ կամ «Յառաջ»ի։ կը խնդրուի սուրիահայ եւ յունահայ Թերթերէն արտատպել։

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ

96 r. Rivoli, մէթ. Շաթլէ։ Ամբատ. եւ նոր մեթոտով դարմանում արանց եւ կանանց մորթի, արիւնի եւ վէներ. հիւանդութեանց (ֆրանկախտ, ջերմամիզ.) եւ վարիսի։ Մասն. լապօռատուառ։ Ազճամիտ եւ արագ խորհրդակցութ. ամէն օր 9—12, 2—8 Կիրակի 9—12։

կ'ուզուի վարպետ գործատուր մը, որ գիտնայ կօշիկի նորոգութեան վերաբերեալ բոլոր մանրամասնութիւնները։ Ֆրանսերէն խօսիլը պարտաւորիչ է։ Լաւ պայմաններ։ Դիմել՝ 79 Rue Rébéval, Belleville.

EMPIRE Միգիթ-շօլ՝ 37 Av. Wagram

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ Է
ՃԱՆԿԷՕՋԵԱՆԻ
ՃԱՇԱՐԱՆԸ
202 Rue Boileau, Lyon

Վարձու գրասենեակ, դիմել 233 Fbg. St. Martin, Paris 10, Պալենց գրատուն։

STUDIO D'ART MANOUK
Մարսէյլի գեղարուեստական լուսանկարչատունը՝
116 La Canebière
ուր պիտի գտնէք արուեստի կատարեալ բաւարարութիւն, ինչպէս նաեւ ամառնային բացօդեայ ժամանցներու համար ընտիր մեքենաներ ամէն պիտոյքներով։ Վճարումներու դիւրութիւն։ Չափաւոր գին։

ՄԱՆՈՒԿ ՄԱՐԿՈՍԵԱՆ

IMPRIMERIE - MASSIS - ÉDITIONS
208bis, Rue Lafayette Paris (10)
Le Gérant H. STEPHAN

ԲԱՑՈՒԱԾ Է
ԳՐԱՏՈՒԻՆ ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ
ՓԱՐԻԶԻ ԿԵՆԴՐՈՆԸ (Քարթիէ Լաթէն) 51 Rue Monsieur-le-Prince
Հեռաձայն՝ Danton 88 65
ուր պիտի գտնէք ամէն տեսակ հին ու նոր գիրքեր, հայերէն, ֆրանսերէն, անգլիերէն եւ այլ լեզուներով, գրական, գիտական գրպրոցական, վիպական եւայլն, նաեւ ամէն լեզուով պարբերականներ
ՀԱՄԱՁԱՅՆ ԵՆ ԲԱԳՓԻԻ ԲՈԼՈՐ ԳՈՐՁԵՐԸ
Արտասահմանէն եւ գաւառէն եղած ապսպրանքները օրին օրին կը դրկուին։
ԳՐԱՏԱՆ ԿԻՑ ԲԱՑՈՒԱԾ Է ՆԱԵԻ ԿԱԶՄԱՏՈՒՆ ՄԸ
Բոլոր գրավաճառները, հրատարակիչներն ու հեղինակները կրնան դիմել սեւէ գործի համար՝
LIBRAIRIE H. SAMUEL, 51 rue Monsieur-le-Prince, Paris

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ
ՃԱՇԱՐԱՆ ՓԼՕՐԻԱ
61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)
Մէթրօ Օտէոն եւ սէն Միշէլ Հեռաձայն Littré 38—43
Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ

ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ (Հաստատուած 1923ին)
CABINET V. YARJANIAN
Հասցէ՝ 5 rue du Cardinal Mercier, PARIS (9e)
Tél. CENTRAL, 97-39 եւ 96.70
կը ստանձնէ պատժական, քաղաքային եւ առեւտր. դատ. պաշտպանելով Ֆրանսացի Հանրածանօթ պաշտօնակիցներու հետ, վարչական եւ հիւպատոսարանական գործերու արագ հետապնդում։ Արկած դատերու մասնաւոր ձիւղ, առանց կանխավճարի։ ԳՐԱՆՈՒԱ մանուկ համար, ձեռնհաս իշխանութիւններէ արտօնագրի ստացում։ (ԱՆԻՒՎՐԻԹ)։ Քաղաքային ամուսնութեան արագ գործողութիւն։ Վճարը ամէն երկրի համար։
Գաւառներէն եւ արտասահմանէն եղած դիմումներուն կը պատասխանուի անմիջապէս։ Խորհրդակցութիւնները ձրի են։
Դիմել ամէն օր, 9էն 12 եւ 2էն 7, բացի Կիրակիէ

Նրբաճաշակ տիկիններ
Մի մտահոգուիք թէ ձեր հագուստները ո՞վ պիտի կարէ ո՞վ ձեզ լիովին պիտի գոհացնէ։ Դիմեցէք B. Jaret ֆիրմայի հայկական հաստատութեան որ մեծ խնամքով կը պատրաստէ ձեր փափաքածամէն տեսակ հագուստները՝ղեկավարութեան ծանօթ վկայեալ դերձակուհիի եւ ՀՆԱՐՈՂ ՄՕՏԵԼԻՍԿ տիկնոջ ցասիկ Դաւիթօֆի։ Բաց աստի հոն կը գտնէք ամենավերջին նորաձեւութեամբ պատրաստուած հագուստներ անհատական գիներով։ Հասցէն շատ դիւրին, 4Rue de la Collegiale Ա.յ. (86 Bld. St. Marcel). Métro Gobelinsէն 40 քայլ։

ՓԱՐԻԶԻ ԱՄԵՆԱՄՕՏԻԿ ՀԱՒԱՔՈՒԹԱԿԱՆ ՀԱՅ ԱԳԱՐԱԿ
Ապահովութեան քննութեան ենթարկուած օրուան թարմ կթներ, ազատութեան մէջ պարարտացած նապաստակներ խորովելու համար առաջնակարգ հաւեր մատչելի գիներով։
Խիստ կանոնաւոր առաքում։ Յարգելի յաճախորդներն խնդրուի իրենց ապսպրանքները մէկ երկուտասնեակէ պակաս չ
Դիմել կամ գրել՝ Hachmanian, 285 Fbg. St. Antoine, P (XI), կամ ուղղակի ագարակին, Hachmanian, Elevage du P Perroy, Fouquerolles par Beauvais (Oise).

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ PRINKIPO
VERTANÈS MAHDJOUBIAN et A. VITCHEN
24 Rue des Carmes, Paris (5) մէթրօ՝ Place Maubert
Խնամքով պատրաստուած արեւելեան և եւրոպական ամէն տեսակ կերակուրներ ամէն ժամ։ Մասնաւոր կերպով պատրաստուած տէօներ-քէպապ։
Այցելեցէք, համոզուելու համար։ Հարսնիքի, ժողովներու, հաւաքոյթներու եւայլնի համար տրամադրելի սրահ։

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE
ՁԵՐ ԵՒ ՁՆՕՐԷՆ՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՑԵԱՆ
29, Rue (Place) des Fêtes, Paris, XIX. Tél. Nord 96-61
Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուի ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Գշ., Եշ. եւ Շաբաթ օրերը ժամը 4—6։ Քթի, կորդի ու ականջի մասնագէտը ամէն Երեք. եւ Շաբաթ օրերը ժամը 2—3։ ԱՏԱՄՆԱԲՈՅԺԸ ամէն օր ժամը 9էն 19։



Գ. ՇԷՔԷՐԵԱՆ
փաստաբան Պոլսոյ Պառոյէն, վաւերացեալ հաշուակալ, անդամ Société des Comptables (E. C. I.),
150 Rue du Fbg. St. Denis, Paris. Téléphone: Trudaine 76-
ԿԸ ՍՏԱՆՁՆԵՄ այցելու տոմարակալութիւն փոքր ամսավճարով
ԿԸ ԿԱՏԱՐԵՄ Régistre du Commerce, Patente, Chiffre d'affaires, Bénéfices Commerciaux *և* Impôts sur le revenu *գործողութիւններ։*
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ԿԱԶՄԵՄ ԵՒ ԿԸ ԼՈՒԾԵՄ
Կրնամ ձեզ զերծ պահել Chiffre d'Affaires *եւ* Bénéfices Commerciaux *տուրքերէն եթէ արհեստաւոր էք, զոր օրինակ* Lapidaire, Sertisseur, monteur de bijoux, lingère, *շապկագործ, ժամագործ, գերձակ, կօշկակար, առաղձագործ, եւայլն, պայմանաւ որ ձեզմէ եւ ձեր տանիքի անդամներէն զատ միայն մէկ գործաւոր եւ մէկ* apprenti *նենաք։*

ՅԱՌԱՋ

LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԲԱԺԱՆԵԳԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70ֆ.	140ֆ.
ԱՆԳԼԻԱ		20 շլ.	40 շլ.
ԵԳԻՊՏՈՍ		»	»
ԻՏԱԼԻԱ		250 ֆրանք	
ԱՄԵՐԻԿԱ		6 տլ.	10 տլ.
ԵՒՐՈՊԱ		100 ֆ.	200ֆ.

"HARATCH"

Directeur-Propriétaire SCH. MISSAKIAN
Խմբագիր՝ Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Rédaction et Administration
Խմբագրութիւն եւ վարչութիւն
235, Faub. St.-Martin
PARIS (10e)

MÉTRO: LOUIS-BLANC OU JAURÈS
Téléphone : NORD 67-23
R. C. SEINE 376.286

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 3 ֆրանք

ՀԻՆԳՇԱԲԹԻ 10 ՅՈՒԼԻՍ 1930
10 JUILLET 1930

Զ. ՏԱՐԻ ԹԻՒ 1310 — ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ — ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՈՒԺԵՐՈՒ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ

(ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐԸ)

Հայ քաղաքական կեանքը վերջին տասնամեակի ընթացքին բաժնուած է երկու գլխաւոր ճակատներու, Դաշնակցական և Բոլշեւիկ: Մնացած բոլոր խնդիրները և ներքին կոմիտակի պայքարները դասաւորուած են այդ երկու հոսանքներուն շուրջը և գունաւորուած անոնցմէ:

Արդ, կ'արժէ քննութեան առնել այդ երկու քաղաքական հոսանքներու ուժերու փոխ-յարաբերութիւնները:

Հայաստանի կոմունիստական կուսակցութեան այս տարուան համագումարին մէջ յայտնի եղաւ որ 1929 ին, կոմունիստներու թիւը կը հասնէր 10,064 ի:

Հ. Յ. Դաշնակցութեան 11րդ ընդհ. ժողովը, որ գումարուեցաւ 1929 ին, հաստատեց թէ միայն գաղութներու մէջ, կազմակերպուած և անառարկելի Դաշնակցականներու թիւը շատ աւելի է քան Հայաստանի կոմունիստներն ունին:

Իրարու հակադիր այս երկու ուժերը կշռել հարկ է:

Հայ բոլշեւիկներն ի՞նչ պայմաններու մէջ և ի՞նչպէս հասած են այսօրուան վիճակին:

Ռուսական սուիններու շնորհիւ երբ անոնք մտան Հայաստան, տէր դարձան միապաղաղ Հայաստանին և մօտ մէկ միլիոն հայութեան: Այս պատրաստ շէնքին մէջ անոնք միակ և բացարձակ տէր հռչակեցին իրենց կուսակցութիւնը և պատերազմական դրութեան մէջ պահեցին երկիրը մինչեւ այսօր: Տասը տարուան դիկտատուրայի և ամէնօրեայ զօրակոչի արդիւնքն է 10,064 կոմունիստներու կազմակերպութիւնը:

Անոնք որ հետեւած են Հայաստանի կոմունիստական կուսակցութեան թուական զարգացման փուլերուն, գիտեն թէ մինչեւ 1926 ի վերջերը կազմակերպուած բոլշեւիկներու թիւը կը տատանէր 2000 - 2500 ի միջեւ: Նեպի շրջանին, հակառակ բոլոր ջանքերուն, կոմունիստական կուսակցութիւնը ակընյայտնի աճում մը չկրցաւ արձանագրել: Սակայն, երբ 1927 ին բոլշեւիկեան քաղաքականութիւնը հրաժարեցաւ Նեպէն և թեքուեցաւ դէպի ռազմական կոմունիզմը, ու հասաւ մինչեւ այս տարուան հաւաքական տնտեսութեան գլխապտոյտ փորձերը, որոնք յարատեւ քաղաքացիական պատերազմի բնոյթն ունէին, մենք կը տեսնենք որ 2500 կոմունիստներու թիւը, երկու տարուան մէջ, կը բարձրանայ 10,064 ի:

Այս, արդէն հիւանդագին երեւոյթ է, գլխաւորաբար առաջացած կեանքի անապահովութենէ: Ապահով վայրը բոլշեւիկեան կուսակցութիւնն էր, ուր մտնող անդաւանանք անհատը կը գտնէր լաւագոյն պաշտօնը: Ու այսօր, մօտ 5000 հայ բոլշեւիկներ կոմունիստական կուսակցութեան անմիջական պաշտօնեաներն են, իսկ մնացած 5000ն ալ պետական այնպիսի պաշտօններու կամ աշխատանքներու վրայ են, որոնք կէս կուսակցական նշանակութիւն ունին:

Ինչպէս կը տեսնենք, այստեղ գոհոդութեան կամ անձնագոհութեան խնդիրը իսպառ կը բացակայի: Ընդհակառակը, այս հաւաքականութիւնը հիմնուած է բացառապէս շահադիտութեան և շահախնդրութեան վրայ: Քաղաքական հայեացքներն ու հերթական ելոյթները զարգանկարի դերը կը կատարեն միայն:

Հ. Յ. Դաշնակցութեան տարագիր հատուածը միայն բաղդատութեան կը դնենք մեր հայրենիքի վրին նստած կոմունիստներուն հետ, այդպիսով մեր հաշուէն դուրս կը մնան Հայաստանը, Ռուսաստանի հայկական գաղութները և օրէնքէ դուրս Թուրքիան: Այս խոշոր և հիմնական կայաններէն տարագրուած հայութեան ծոցին մէջն է, որ կազմակերպուած Դաշնակցականները իրարու շղթայուած են խումբերով, ենթակոմիտէներով, կոմիտէներով և կեդր. կոմիտէներով, որոնց կը գլխաւորէ Դաշնակցութեան վերին մարմինը, Բիւրօն:

Այս կազմին վրայ մենք չենք ուզեր աւելցնել այն խոշոր գանգուածը, որ Դաշնակցական կենքուած է, կուսակցութեան մէջ թրծուած և այսօր, օժանդակ Դաշնակցականի դերը կը ստանձնէ՝ առանց կուսակցութեան տեսակէտ ունենալու: Զենք խօսիր համակիրներու և կանանց կազմակերպութիւններու մասին, որոնք Դաշնակցութեան քաղաքական մթնոլորտը կը մարմնաւորեն: Կ'առնենք միայն զուտ կորիզը, կազմակերպուած բանակ մը, իրարու շաղկապուած կուսակցութեան հիմնական գաղափարներով և մշտատեւ զոհողութեան առաջադրութիւններով:

Կազմակերպուած տարագիր Դաշնակցականներու, 80 տոկոսը (մտաւորական ուժերն ալ մէջը հաշուելով) բանուորներ և աշխատաւորներ են, 15 տոկոսը սեփական աշխատանքն ունին, 5 տոկոսն ալ մշակոյթային և այլ ազատ ասպարէզներու կը հետեւին:

Ինչպէս կը տեսնուի, Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմակերպած գանգուածի անհատական ապրուստն ու երջանկութիւնը ապահովելու ոչ մէկ միջոց ունի: Այլ կազմակերպուած զոհողութեամբ, ընդհանրութեան երջանկութեան նուիրուած է: Այս ամբողջ կազմը շարժման մէջ դրուած է նուիրուած բազմաթիւ Դաշնակցական աշխատաւորներու կողմէ:

Այս է ֆիզիքական և բարոյական պատկերը հայկական կեանքը գունաւորող երկու հոսանքներուն:

Ու ասկէ կը բխի Դաշնակցութեան գերակայութիւնը:

Կ. Ս.

ՄԱՄՈՒԼ

ՆՈՐ ՓՐՈՎՈՔԱՏԻՈՆ ՄԸ

«Հայրենիք» այս վերնագրով խմբագրականի մը մէջ կը գրէ (22 յունիս).

— «Թամկավար - Ազատական եւ Ս. Դ. Հնչակեան կուսակցութեանց Սուրիոյ շրջանային մարմինները վերջերս խառն ժողով մըն են ունեցեր եւ որոշեր են միասին հրապարակ գալ յայտարարութեամբ մը, որով կ'ըսեն, թէ Հայերը հիւր են Սուրիոյ մէջ, թէ ազգային օճախի գաղափարը Սուրիոյ մէջ իրենցմէ շատ հեռու է եւ թէ Հայերու միակ ազգային օճախը Հայաստանն է, եւայլն:

Այս «յայտարարութիւնը» իբր թէ նպատակ ունի փարատելու այն կասկածներն ու զրպարտութիւնները, որոնք վերջերս եղան Հայերու հասցէին արաբական կարգ մը թերթերու մէջ:

Դժբախտաբար, «յայտարարութիւնը» եղած է այնպիսի ձեւով մը, որ ոչ միայն իր նպատակին չի ծառայեր, այլ եւ նոր կասկածներու եւ փրովոքասիոններու տեղի կուտայ:

Արդարեւ, եթէ Թամկավարներն ու Հնչակեանները իրապէս կ'ուզէին փարատել Սուրիոյ Արաբներուն մէջ Հայերու մասին եղած կասկածները, ատոր ամենէն տրամաբանական եւ բնական միջոցն էր յայտարարութիւն մը ընել Սուրիոյ *բոլոր* Հայերը ներկայացնող մարմնի մը կամ մարմիններու կողմէ:

Այդպիսի մարմին մը կրնար բլլալ, օրինակ, Սուրիոյ հայոց ազգային իշխանութիւնը: կամ, եթէ մասնաւորապէս կ'ուզուէը շեշտել հայ քաղաքական կուսակցութեանց դիրքը, պէտք էր յայտարարութիւնն ընել հայկական *բոլոր* կուսակցութեանց կողմէ: Մինչդեռ այժմ Թամկավարներու եւ Հնչակեաններու այս անջատ «ելոյթը» կարծես նպատակ ունի հակցնելու արաբներուն, թէ կասկածելի տարրերը իրենք՝ Թամկավարներն ու Հնչակեանները չեն, այլ Դաշնակցականներն են, որոնց անունը չկայ «յայտարարութեան» տակ:

Աւելորդ է ըսել, թէ ասիկա ինքնին փրովոքասիոն մըն է: Արդէն Թամկավարներն ու Հնչակեանները ի՞նչ կ'ընեն որ Դաշնակցութեան դէմ ուղղուած չըլլայ՝ ուղղակի թէ անուղղակի կերպով: Հէնց իրե՞նք չէի՞ն արդեօք, որ վերջին տարիներուն ամէն զրպարտութիւն, մատնութիւն, լրտեսութիւն ըրին Դաշնակցութեան դէմ եւ շարունակ գէնք տուին Սուրիոյ մէջ վխտացող Թրքական եւ բոլշեւիկեան գործակալներուն ձեռքը՝ արաբները ոչ միայն Դաշնակցականներու, այլ եւ առհասարակ Հայերու դէմ գրգռելու համար:

Եթէ Թամկավար եւ Հնչակեան պարոնները ատելութեամբ կուրացած չըլլային Դաշնակցութեան հանդէպ, ապահովաբար պիտի ըմբռնէին, թէ Դաշնակցութիւնը ամէն գնով ոչ միայն Հայերու, այլեւ օտարներու աչքին վարկաբեկելու իրենց մոլեգին ձգտումը ուրիշ արդիւնք չի կրնար տալ, բայց եթէ այն, որ այդ օտարները կը մոլին Դաշնակցութեան վերագրուածը ամբողջ հայութեան վերագրել, քանի որ ամէնքն ալ գիտեն թէ Հայերու մեծ մասը Դաշնակցականներ կամ Դաշնակցութեան համակիրներ են:

Դաշնակցութեան դէմ իրենց մղած պայքարի մէջ ամէն չափ ու սահման անցնելով եւ այդ սանձարձակ պայքարի միջոցներու մէջ խտրութիւն չդնելով՝ Թամկավարներն ու Հնչակեանները իրապէս հայ ազգին եւ հայ ազգային դատին է որ ծանր հարուածներ կը հասցնեն անդադար:

ՕՐԸ ՕՐԻՆ

ՔԻՒՐՏԵՐԸ ԿԸ ՅԱՐՁԱԿԻՆ

Կ. ՊՈԼԻՍ, 8 Յուլիս.— Քիւրտ յեղափոխական խումբերու եւ Թուրք զինուորականկանոնաւոր ուժերու միջեւ կռիւները կը շարունակուին եւ Արարատէն դուրս՝ ուրիշ շրջաններու մէջ ալ կը տարածուին: Վերջին 48 ժամուան ընթացքին, բուռն բախումներ տեղի ունեցան Ուրմիոյ սահմանագլուխին վրայ, (Պարսկաստան) արեւմտեան զանազան կէտերուն եւ Կոզուրի մէջ, Արարատէն 140—250 քիլոմեթր հեռու:

Թրքական աղբիւրէ առնուած լուրերու համաձայն, Թուրք զօրախումբերը առաւելութիւններ ունին յարձակող Քիւրտերուն վրայ եւ աստիճանաբար, ետ կը մղեն զանոնք: Իրր թէ բազմաթիւ քիւրտ պետեր սպաննուած են: Այսուհանդերձ չի կարծուիր թէ կարճ ժամանակի մէջ, Թուրքերը պիտի կարենան յաղթել եւ վերջապէս չախչախել քիւրտ յեղափոխական շարժումը:

Թուրքիոյ Արեւելեան սահմաններու դէպքերուն մասին *Ազգամ* հետեւեալը կը գրէ.— Արեւելեան սահմաններու վերջին դէպքերու մասին խօսած ատեն, գրած էինք թէ Պարսկաստանի կառավարութիւնը մեծ պատասխանատուութեան մը տակ կը գտնուի: Վերջին պահուն առնուած լուրերը ցոյց կուտան թէ այս դէպքերուն հետ Պարսկաստանի կապն ու պատասխանատուութիւնը կարծուածէն աւելի մեծ է: Պարսկաստան ոչ միայն անզօր դիրք մը առած է հրոսակներուն հանդէպ, այլ զէնք ու ռազմանիւթ տալով բացէ ի բաց օգնած է անոնց:

Հրոսակներուն ուտելիքն անգամ Պարսկաստանի մէջ կը հայթայթուի եւ անոնց կը դրկուի: Անատոլու գործակալութեան մասնաւոր թղթակցին կողմէ վանէն դրկուած հետեւեալ հեռագիրը շատ ուշագրաւ տեղեկութիւններ կուտայ:

«Պարսկաստանի մէջ պատրաստուած եւ զինուած Պարսկաստանի ցեղերէն խալիքանլը խալիտ աղա 100ի չափ արբանեակներով մեր սահմաններէն ներս մտած ու Զրզքէօյի կողմերը ցրուած են: Հրոսակները կ'աշխատին իրենց միացնել գիւղացիները, որոնք լեռները կը փախչին եւ մեր պահակագունդերուն կը միանան:

Պարսկաստանի ցեղերէն պելիքալըներն ալ սահմանագլխուն 5 քիլոմեթր մօտերը, տեսնուած է որ վրան կը լարեն: Հաւաստի աղբիւրէ առնուած լուրերու համաձայն, Պարսկաստանի կողմէ բացէ ի բաց օժանդակութիւն կ'ընծայ հրոսակներուն, որոնց պարենաւորումն ալ Պարսկաստան կը կատարուի»:

Այս զեկոյցէն կը հասկցուի որ, կը շարունակէ «Ազգամ», վերջին դէպքերը հանդիսացողները բոլորն ալ պարսկական ցեղեր են, որոնք Պարսկաստանի մէջ զինուելէ վերջ, սահմանէն ներս կը մտնեն եւ Պարսկաստան ձեռքէ եկած օգնութիւնը կ'ընէ ապստամբներուն:

Թրքաուրիական բանակցութիւնները

ԵՒ ՀԱՅՈՑ ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Թրքաուրիական սահմանագծման յանձնախումբի ֆրանսացի անդամները Պէյրութ վերադարձան Ատանայէն, ուր գումարած էր յանձնախումբը իր ժողովները, նախագահութեամբ Սուրիոյ Մարզպանութեան Հալէպի պատուիրակ Պ. Լավասթրի:

Յանձնախումբը զբաղած է միմիայն սահմանային խնդիրներով եւ տուած է հետեւեալ որոշումները.

1.— Մահապարտներու յանձնում, եթէ ոճիրի գործադրութեան վայրը մինչեւ 10 քիլոմեթր սահմանամերձ տեղ մը ըլլայ:

2.— Երկու սահմաններու վրայ գտնուող դաշտերու սահմանագծումը:

3.— Ցեղախումբերու գինաթափումը:

4.— Երկու երկիրներու սահմանամերձ բնակիչները, առանց անցագրի մինչեւ 10 քիլոմեթր պիտի կրնան երթալ միւս տէրութեան երկրամասին մէջ:

Իսկ Սուրիացիներու Թուրքիա ունեցած կալուածներու հարցերով չէ զբաղած յանձնախումբը—բայց կը կարծուի թէ պիտի փոխանակուին Սուրիացիներու կալուածները՝ Թուրքերու Սուրիոյ մէջ ունեցած կալուածներով: Այս մասին որոշում պիտի տրուի յառաջիկային:

Հայերու Թուրքիա ունեցած կալուածներու շուրջ եղած հարցումներուն պատասխանելով, յանձնախումբի մէկ անդամը վճռականօրէն յայտարարեց որ, Հայերու կալուածները չեն կրնար անջատուիլ Սուրիացիներու կալուածներէն եւ տարբեր լուծում չեն կրնար գտնել, հակառակ Թուրք պատուիրակներու մերժումին:

Պաղեստինի խռովութիւնները

«Տէյլի Մէյլ»ի քաղած տեղեկութիւններուն համաձայն, Ժընեւի Ազգերու Դաշնակցութեան կողմէ կազմուած՝ Պաղեստինի խռովութեանց քննիչ յանձնախումբը կը գտնէ որ, անգլիական կառավարութիւնը որոշ չափով պատասխանատու է դէպքերու ծագման եւ անոնց հետեւանքներուն մէջ:

∴ Դամասկոսէն արաբ պատուիրակութիւն մը մեկնեցաւ Պաղեստին, նախագահութեամբ ազգայնական պետ Ֆախրի պէյ Պարուտիի: Ասոնք պիտի ներկայացնեն սուրիական ազ-

(Լուրերու դարունակութիւնը կարդա Դ. էջ)



Հ. Յ. Դ.

ՓԱՐԻԶԻ ՏԱՆ ՀԱՄԱՐ

(Հանգանակութիւն եւրոպայի կեդր. կոմիտէի)

ՑԱՆԿ 25

Ֆիլիբ Վանեան (Սուտան)	2500
Հրաչ Սարգիսեան	200
Զաքար Բարսեղեան	100
Լեւոն Իլպիզեան (Սէթիֆ, Ալճերիա)	100
Մինիկ Աւետիսեան Սարսել, (Բ. անգամ)	100
Գումար	3000
Նախորդ գումար	29,630
Ընդհ. գումար	32,630

«ԿՈՒՏԵՊՈՎ ՍՊԱՆՆՈՒԱԾ»

«Օբշչաւա Դէլա» ռուսական ամսաթերթը վերջին համարին մէջ կը գրէ.—

«Երկար ատեն հաւատացինք թէ կուտեպովը ողջ է: Այժմ վճռական կերպով կը յայտարարենք որ սպաննուած է բոլշեւիկներու կողմէ իր առեւանգուած օրն իսկ, յունուար 26ին փարիզի մէջ: Անոնք ջանացին ողջ բռնել զայն, սակայն դիակը միայն ձեռք անցուցին:

«Մենք կը հաւատանք, որ բոլշեւիկները կուտեպովի ճակատագրի գաղտնիքը չպիտի կրընան պահել:

«Շուտով ձեզ կը յայտնուի իր բոլոր մանրամասնութիւններով թէ ո՞վ ծանոթեցուէ ի՞նչպէս սպաննեցին կուտեպովը»:

ԴԱՏԱՐԿԱՊՈՐՏ

ԹՈՒՐՔ ԻՇԽԱՆԱԶՈՒՆԸ

Հիքմէթ Նուրուլլահ որ կ'ըսէ թէ կը պատկանի Թուրքիոյ սուլթանական գերդաստանին, իբր դատարկապորտ, նիսի դատարանին կողմէ դատապարտուեցաւ 15 օր բանտարկութեան: Այս մարդը որ գրական եւ քաղաքային գիտութեանց վարժարաններէն վկայականներ ունի, եւ դեսպանատան կցորդ եղած է, կ'ապրէր քովնտի միջոցներով:

ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՑՆՑՈՒՄՆԵՐ

Երէկ գիշեր պենկալի (Հնդկաստան) հիւսիսային կողմը երկրաշարժի 100 ցնցումներ համրուեցան: Մարդկային կորուստ չկայ, բայց բազմաթիւ շէնքեր քանդուեցան: Կ'ըսուի թէ ճուկրիի շրջանին մէջ, գիւղ մը ամբողջ անհետացած է երկրաշարժէն:

∴ Սպանիոյ հարաւային կողմը Մոնթէլլայի մէջ, երկրաշարժը քանդեց բազմաթիւ տուներ: Երկու կիներ վիրաւորուեցան ծանրօրէն: Երկնաքար մը ինկաւ Էսթէրժօ գիւղին մէջ, Մոնթէլլայէն 25 քիլոմեթր հեռու:

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Հէլսինկֆորսի վրայ քալող գիւղացիները, կատարելէ յետոյ իրենց ցոյցը որ վերջացաւ հրապարակային մեծ հաւաքոյթով մը, քաղաքէն հեռացան հանդարտօրէն:

∴ Սպանիոյ մէջ, բանուորական վերջին գործադուլներուն հետեւանքով, իբր խռովարար ամբաստանուած 60 համայնավարներ ձերբակալուեցան:

ՀՈՒՐՔ - ՓԱՐԱՁԱԽՍԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Մարդիկ հոգնել են ամեն տեսակ դժբախտություններից, որոնք տեղի են ունենում ամեն քայլափոխի։ Ամեն օր լսում ենք, որ մեկը մեկին սպանել է, մյուսը ինքնասպան է եղել, երրորդը ինքնասպանության է դիմել, չորրորդը ինքնասպանության է մղվել, հինգերորդը ինքնասպանության է պատրաստվում։ Ամեն օր լսում ենք, որ մեկը մեկին թունավորել է, մյուսը ինքն է թունավորվել, երրորդը ինքն է թունավորվում։ Ամեն օր լսում ենք, որ մեկը մեկին կողոպտել է, մյուսը ինքն է կողոպտվել, երրորդը ինքն է կողոպտվում։ Ամեն օր լսում ենք, որ մեկը մեկին ծեծել է, մյուսը ինքն է ծեծվել, երրորդը ինքն է ծեծվում։ Ամեն օր լսում ենք, որ մեկը մեկին խաբել է, մյուսը ինքն է խաբվել, երրորդը ինքն է խաբվում։ Ամեն օր լսում ենք, որ մեկը մեկին ստել է, մյուսը ինքն է ստվել, երրորդը ինքն է ստվում։ Ամեն օր լսում ենք, որ մեկը մեկին գողացել է, մյուսը ինքն է գողացվել, երրորդը ինքն է գողացվում։ Ամեն օր լսում ենք, որ մեկը մեկին ավազակել է, մյուսը ինքն է ավազակվել, երրորդը ինքն է ավազակվում։ Ամեն օր լսում ենք, որ մեկը մեկին սպանել է, մյուսը ինքն է սպանվել, երրորդը ինքն է սպանվում։

Ամեն օր լսում ենք, որ մեկը մեկին սպանել է, մյուսը ինքն է սպանվել, երրորդը ինքն է սպանվում։ Ամեն օր լսում ենք, որ մեկը մեկին թունավորել է, մյուսը ինքն է թունավորվել, երրորդը ինքն է թունավորվում։ Ամեն օր լսում ենք, որ մեկը մեկին կողոպտել է, մյուսը ինքն է կողոպտվել, երրորդը ինքն է կողոպտվում։ Ամեն օր լսում ենք, որ մեկը մեկին ծեծել է, մյուսը ինքն է ծեծվել, երրորդը ինքն է ծեծվում։ Ամեն օր լսում ենք, որ մեկը մեկին խաբել է, մյուսը ինքն է խաբվել, երրորդը ինքն է խաբվում։ Ամեն օր լսում ենք, որ մեկը մեկին ստել է, մյուսը ինքն է ստվել, երրորդը ինքն է ստվում։ Ամեն օր լսում ենք, որ մեկը մեկին գողացել է, մյուսը ինքն է գողացվել, երրորդը ինքն է գողացվում։ Ամեն օր լսում ենք, որ մեկը մեկին ավազակել է, մյուսը ինքն է ավազակվել, երրորդը ինքն է ավազակ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՐԹԻԿ-ՏՈՒՖԻ ՀԱՆՔԵՐԸ

Հիմա արտօնուած են Հայաստանի թերթերը գրել բոլոր այն թերութիւններուն ու «սխալ»ներուն մասին, որոնք կատարուած են կոմունիստներու կազմակերպութեան մէջ։ Եւ խորհ. Հայաստան շարունակ քննութիւն կը կատարէ ամէն անդին եւ ցոյց կու տայ թերութիւնները։

Այսպէս կը գանգատի (15 Նոյեմբեր), որ հանքերու արդիւնաբերութիւնը չի հասնիր նախատեսուած չափին, որովհետեւ կը պակսին կառքերը, շարունակ կը փոխուին բանուորները, եւ չկան մասնագէտ բանուորներ։

Մասնաւորաբար շատ դէշ է տեղափոխութիւնը, եւ քարը կը դիզուի քարին վրայ, դժուարացնելով բանուորներուն շարժուելը։

Այստեղ կ'աշխատին 1400—1500 բանուոր, որոնց մէջ անկարգապահութիւն կը տիրէ։

Բանուորներուն մեծամասնութիւնը կու գայ շրջակայ գիւղերէն, այնպէս որ բոլորովին տարբեր են իրենց նկարագիրով։ Անոնց մէջ շատ են բանուորները, իրենց ուղած ժամուն կը ձգեն գործը ու կ'երթան։

Երբեք խնայողութիւն չկայ, այս պատճառով մեծ ինասներու հանքարկուի հանքերու մատակարարութիւնը։

Հսկողութիւնը այնքան պակաս է, որ բանուորները գանգատ կարդախութիւններ կ'ընեն, որոնց պատրաստած քարերը երկու անգամ կը չանձնեն, կամ տարերը կը փշրեն, որպէսզի օգտագործուին։ Կամ բանուորն ու գիւղացին կը գրգռեն իրարու դէմ։

Թէեւ երկու տարուան կեանք ունի այս հանքահորը, բայց եւ այնպէս տակաւին կը պակսին արհեստաւոր բանուորները։ Ոչ միայն մասնագէտները կը պակսին, այլ նաեւ բանուորները չեն հիննար իրենց գործին։ Լուրը։ Վեց օրուան մէջ ճամբու դրուած են 36, եւ գործի անչուած են 28 բանուորներէ

Թէ Թոյնը կարող է ներգործել անմիջապէս։

Անասուններին եւ առհասարակ արածող հօտերին Թոյնով թարկուած տարածութիւնից զերծ պահելու համար պէտք է գնել անաձողեր, գունաւոր դրօշակներ։ Հարկաւոր է նախապէս ուշացնել ազգաբնակչութեանը, 4-5 շաբաթ այդ տեղերում կարելի կենդանիներ արածացնել, առանց համապատասխան տեխնիկական հսկողութեան կարելի՛ քան իմանալու եւ մինչեւ ծնած բոլոր հրապուրիչ նիւթերի աւերքումը։

Ց. Ս.

օր յետոյ ճամբուած են 25 հոգի, եւ գործի կանչուած են 23 հոգի։ Բանուորներու այս մակընթացութիւնը արդիւնք է մասնաւորապէս բնակարաններու պակասին։

ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Երեւանի բանուորական համալսարանը այս տարի կունենայ իր 5րդ տունձքը։ Շրջանաւարտներուն թիւն է 71։

Բանուորական համալսարանը մաս կը կազմէ, զէթ անուանապէս համալսարանական կրթութեան։ Եւ սակայն համալսարանը ոչ մէկ կապ կը պահէ բանուորական վարժարանին հետ։ Մասնաւորաբար առողջապահական եւ նիւթական վիճակը աննախանձելի է։ Ուսանողներուն հարիւրին 40,3ը վարակուած է զանազան հիւանդութիւններով։

Ուսուցչական կազմը (34 հոգի) լաւ է, սակայն միայն 5 դասախօս մնալուն կերպով կը դասաւանդեն։ Անգամ մը մտածելին 6 թեկնածու դրկել Մոսկուա, ուսուցիչ պատրաստելու համար բանուորական վարժարանին, բայց այդ թեկնածուները երբեք ալ յարժար չէին։

ԱՐՀԵՍՏԱՒՈՐ ԲԱՆՈՒՈՐՆԵՐ

Արհեստաւորներու մեծ պահանջ կայ Հայաստանի մէջ։ Այս պատճառով բացուած են զանազան արհեստի դասընթացքներ։

Շինարարական 3 դասընթացքներու կը հետեւին 800 հոգի, հանքագործութեան՝ 228, հիւսուածեղէնի՝ 809, մեքենաշարժ արօրի՝ 340, էլեկտրականութեան՝ 55, քնագիտութեան՝ 290, գիւղատնտեսութեան՝ 7443, եւ ուրիշ դասընթացքներու, ընդամէնը 12,005 հոգի։

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Այս տարի շերամապահութեան նուիրուած շրջանները ընդարձակուած էին։ Մասնաւորապէս Մեղրիի, Աշտարակի, Վաղարշապատի շրջաններուն մէջ։ Այսպէս ժշակուած են թթենիի նոր պարտէզներ։

Կը կարծուի, թէ Հայաստանի այս տարուան խոզակը լաւ է։

ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ

Երեւանի գիտութեան եւ արուեստի կաճառի տնօրէնութիւնը կը յայտարարէ թէ Ա. Մոաւեանի անունով 300 րուբլի մրցանակ մը պիտի տրուի այն գրագէտին, որ մասնաւոր ժիւրիին պիտի ներկայացնէ վէպ մը, թատերգութիւն մը կամ պոէմա մը մինչեւ 1 յունուար 1931։

ՍԱՍՏ ԳՈՐԾԻՔի ՄԸ

Հայաստանի հասարակաւոր գործիչներէն Թումչեան վերջերս կուսակցական ժողովներու մէջ քննադատած էր Հայաստանի կեդր. կոմիտէն։ Ան արարքը թէեւ վտանգի պատիժ ստանալու չափ ծանր է, բայց Անդրկովկասի կեդր. կոմիտէն բաւականացած է խիստ յանդիմանութեամբ մը։

ԳԱՂՈՒԹՆԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՆ

Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցը այցելութիւնը ընդունեց Ամերիկեան Րլուիֆի Արեւելքի ներկայացուցիչ Պ. Էյիսընի եւ իր տիկնոջը։

Հիւրերը պտտեցան Հիւանդանոցի բոլոր բաժինները եւ հետաքրքրուեցան ամենափոքր մանրամասնութիւններով։

Հիւանդանոցի մէջ տիրող կազմակերպութիւնն ու կանոնաւորութիւնը շատ գոհ ձգեց զիրենք։

Մեծ հետաքրքրութիւն գոյց տուին նաեւ թոքախտաւորներու, յիմարներու եւ ծերանոցի բաժիններու հանդէպ եւ շնորհաւորեցին Հիւանդանոցի տնօրէնը, տիրող մաքրութեան համար։

Նոյն գոհ տպաւորութիւններով աչքէ անցուցին նաեւ Ռէօնթկէնի բաժինը, խոհանոցը, մառանը, կովերու գոմը եւլլն։

20 ԳԱՂԹԱԿԱՆ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Պոլսէն, սեպտեմբեր 20 գաղթականներ պաթում մեկնեցան, անկէ Հայաստան անցնելու համար։ Ասոնց համար մասնաւոր «վիզէ» տտպուած է, ասկէ առաջ կատարուած դիմումներուն հետեւանքով։

ՌՈՒՄԱՆԻԱ

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

Պուքրէշի մէջ վերջերս կազմակերպուած Հայ Արուեստի ցուցահանդէսը պէտք է ըսել, անսպասելի յաջողութիւն գտաւ՝ մանաւանդ Ռումանիոյ բարձր դասուն կողմէ, կը շարունակէ մնալ հետաքրքրութեան առարկան արուեստով հետաքրքրուող բոլոր շրջանակներուն։

Նկատի ունենալով այս պարագան եւ մանաւանդ հնարաւորութիւն տալու համար գաւառի արուեստասէրներուն այցելել ցուցահանդէսը, մանաւանդ քաղաքապետ Պ. Ցօպրէսքուի թելադրութեամբ եւ ուրիշներու պընդումով, ցուցահանդէսի կազմակերպիչ յանձնախումբը որոշեց ցուցահանդէսը երկարաձգել մինչեւ յուլիս 15 եւ այս պարագան ծանուցուեցաւ մամուլով եւ ռատիոյով։

Պուքրէշի ռատիօ-կայանի վարչութիւնը պատրաստակամութիւն յայտնած է ռատիոյով եւս ծանօթացնելու հայ արուեստն ու մշակոյթը։

Բացի Փրօֆ. Ցօքթ. Սէվէրիանուէ որ ցուցահանդէսի բացման առթիւ Պուքրէշի ռատիօ կայանէն աչքառու խնամուած բանախօսութիւն մը ըրաւ հայ արուեստի եւ գուցահանդէսի մասին, եւ բացի ռատիոյով տրուած պարբերական տեղեկատուութիւններէն, յաջորդաբար տեղի պիտի ունենան նաեւ ուրիշ բանախօսութիւններ եւս Պուքրէշի ռատիօ-կայանէն։

Քանի մը օր առաջ Պուքրէշի ռատիօ-կայանէն սարքուեցաւ երաժշտական երեկոյ մը՝ նուիրուած հայ երաժշտութեան եւ այս առթիւ խօսեցաւ յայտնի երաժշտագէտ Պ. Պրայլօու՝ հայ երգին ու երաժշտութեան մասին։

Դարձեալ նոյն կայանէն բանախօսութիւն մը ըրաւ յայտնի դրագէտ Պ. Պրայլօու՝ նիւթ ունենալով հայ գրականութիւնը։

ԵԳԻՊՏՈՍ

ԳԱՀԻՐէի ԹԵՄԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ամիսներէ ի վեր Գահիրէի հայ համայնքին մէջ բուռն պայքար մը կը մղուէր՝ տեղւոյն թեմական խորհուրդի 18 հոգինոց կազմը լրացնելու համար, կատարուելիք 7 նոր անդամներու ընտրութեանց շուրջ։ Հրապարակ հանուած էին երկու ցանկեր,— մին՝ ժողովրդական— դաշնակցականը, իսկ միւսը՝ ռամկավար-Հնչակ-«չէզոք» խառնիճաղանճ պլօքինը։

Ինչպէս գրեր էինք ասկից առաջ, ընտրութիւնները տեղի ունեցած են յունիս 22 օրը, եւ վերջացած ժողովրդական դաշնակցական պլօքի յաղթանակով։

Ընտրութիւնները սկսան առաւօտ ժամը 7ուկէսին եւ փակուեցան կէսօրէ ետք ժամը 4ուկէսին, կանոնաւորութեամբ եւ կարգապահութեամբ։

Քուէարկութեան իրաւունք ստացած էին 2513 հոգի։

Քուէարկութեան մասնակցած են 2309 հոգի։

Քննիչ յանձնախումբին կողմէ վաւերական նկատուած են 2137։

Աւելցնենք որ անձամբ բերուած էին 1092 քուէներ, փոխանորդաբար 757 եւ փոստով 433, որոնցմէ մէկ մասը չնչուած է։

ՍՈՒՐԻԱ

ՀԱՅԵՐուի ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԽՆԴիրը ՄԵՐԺՈՒԱԾ

Ակռ քանի մը ամիս առաջ Էնկիւրիի մէջ սկսած թրքեւ-ֆրանսական բանակցութիւնները՝ Սուրիացիներու Թուրքիոյ մէջ գտնուած կալուածներուն շուրջ, անհամաձայնութեամբ վերջացած էր Թուրքերու ցոյց տուած ընդդիմութեան են անհաշտ ընթացքին պատճառաւ։ Սոյն պատուիրակութեան թուրք անդամները մերժած էին զբաղիլ Սուրիա եւ Լիբանան գտնուող Հայերու՝ Թուրքիոյ մէջ ունեցած կալուածներու խնդրով, իսկ ֆրանսացի անդամները պնդած էին որ Հայերու պատկանող կալուածները եւս օրակարգի նիւթ կազմեն եւ քննութեան ենթարկուին։ Ի վերջոյ երկու կողմերուն ալ ցոյց տուած յամառութեան հետեւանքով՝ ժողովը յետաձգած էր իր նիստերը եւ ֆրանսական պատուիրակութեան պետ Պ. Պրիւէր վերադարձած էր Պէյրութ։

Այժմ, ըստ «Էլ Ահրար»ի աշխատակցին քաղած տեղեկութեանց, յանձնախումբը դարձեալ պիտի շարունակէ իր աշխատանքները։ «Ահրար» կը տեղեկանայ նաեւ որ ժարպպանութիւնը էնկիւրիի ֆրանսական դեսպանին միջոցաւ Թուրքիոյ արտաքին նախարարութեան իմացուցած է որ համաձայն է Հայերու կալուածներուն խնդրին նկատի չառնուելուն։ Ոյով Թուրքերու պահանջն ու պայմանը յարգուած ըլլալով, յանձնախումբը իր յաւարտական գումարման մէջ պիտի լուծէ Սուրիացիներու եւ Լիբանանցիներու կալուածային խնդիրները։

ՁԱՅՆԵՐ ԳԱՒԱՌԷՆ

ՄԱՅԻՍ 28Ը ՊԱԼԷՆի ՄԷՋ

Ինչպէս ամէն տարի այս տարի ալ Պոլէնի Հ. Ց. Դ. Անդրանիկ եպիսկոպոսի նախաձեռնութեամբ, Սալըն Էլտորատոյի մէջ մեծ շուքով տօնուեցաւ Հայաստանի անկախութեան 12րդ տարեդարձը։

Ժամանակէն առաջ սրահը լեցուած էր կոկիկ բազմութիւնով մը։ Բեմին մէջտեղ դրուած էր Հ. Ց Դաշնակցութեան զինանշանը։ Ձախ եւ ձախ կը ծածանէին ֆրանսական եւ հայկական դրօշները։ Հանդէսը բացուեցաւ յոտնկայս «Մեր Հայրենիք»ով, որմէ յետոյ օրուան նախագահը ընկեր Խաչիկ Աւետեան հակիրճ կերպով բացատրեց Մայիս 28ի մեծ արժէքը։ Ցետոյ բեմ հրաւիրուեցաւ ընկեր Արամ Գառնէ, որ մանրամասնօրէն խօսեցաւ անկախութեան եւ ազատագրութեան ճամբուն վրայ հայ ժողովուրդի զոհողութիւններուն եւ յեղափոխական կորովին մասին։ Ընկերը աւելի շատ ծանրացաւ մանուկներու այլասերման վտանգին դէմ, նաեւ պարտականութիւն դրաւ որ մանուկներու ծնողքները զոհողութիւն ընեն իրենց գաւակներուն համար, որպէս զի գոնէ իրենց մայրենի լեզուն չմոռնան։

Ցաջող կերպով արտասանութիւններ ըրին ընկերներ Ներսէս Ներսէսեան եւ Հայկունի «Զէյթունցիներ» խմբերգէն վերջ ներկայացուեցաւ կենդանի պատկեր մը Ս. Ահարոնեանի «Ծոյր Աշուղը»։ Հանդէսը փակուեցաւ «Ցառաջ Նահատակ» խմբերգով եւ ժողովուրդը մեկնեցաւ գոհ եւ ուրախ։

Թ. Մալէզեան

ՄԱՅԻՍ 28Ը ԵՐԻՍԱՂԷՄի ՄԷՋ

(Ցատագած)

22 յունիս, կիրակի կէս օրէ վերջի երուսաղէմի մէջ եւս տեղի ունեցաւ մեր անկախութեան 12րդ տարեդարձը։ Հանդէսին կը նախագահէր քաղաքիս Բժիշկներու Միութեան ատենապետ Տօքթ. Վահան Գալպինեան։ Ներկայ էր նաեւ Հայ-կաթոլիկ յարանուանութեան Հովիւ Հ. Ցակոբ Կիրակոսեան։

Հանդէսին նախագահ Պ. Կ. Ղազարեան, հանդէսը բացուած յայտարարեց «Մեր Հայրենիք»ով, որ յոտնկայս երգուեցաւ ժողովուրդին կողմէ։ Օրուան բանախօսներ էին՝ Պ. Պ. Ցօնօեան եւ Տօքթ. Ս. Էթեէմէզեան։ Տօքթ. Էթեէմէզեան, որ մասնաւորապէս Սալթէն հրաւիրուած էր օրուան տօնին առթիւ խօսելու համար, փաստագիրքէն հերքեց կարգ մը մարդոց յայտարարութիւնը թէ Մայիս 28ը կուսակցական տօն է։

Հ. Ց. կիրակոսեան որ այդ միջոցին Թիֆլիս է եղած, որպէս ականատես վկայ իր տպաւորութիւնները պատմեց։

Փակման խօսքը ըրաւ օրուան հանդէսին նախագահը։ Թելադրեց համերաշխութիւն եւ ուժերու կեդրոնացում, յաջորդ տարիներուն աւելի հանդիսաւոր կերպով տօնելու համար Մայիս 28ը Մայր երկրին մէջ։

Արտասանեցին Պ. Պ. Կ. Հրաչ Արփիարեանի «Օրհնեալ Գերդաստանը», Ց Մզրագճեան՝ Սիմանթոյի «Կոոկաս»ը, եւայլն։ Այնթապլըեան Ակէքսի եւ Բիւզանդ եղբայրներ իրենց ջութակով, մէջ ընդ մէջ նուագեցին հայկական եւ եւրոպական կտորներ, որոնց Պ. Ց. Հէրվաճեան դաշնակով կը մասնակցէր։ Պ. Գ. Պարթեւեան մեներգեց կոմիտաս վրդ.ի «Գարուն ա»ն եւ Սրուանձտեանցի «Ցըլէ Եաման»ը։

Հանդէսը փակուեցաւ «Մշակ Բանուոր»ով եւ անգլ. քայլերգով։

Քրիս

ԱՄԲՈՂՋ Փարիզի ամէնէն սիրուն գլխարկները։ Գիները անմրցելի F. SORBIER, 11 Rue Lafayette, Օփերայի մօտ։

ԱՆԴՐԱՆԻԿԻ ՅՈՒՇԵՐԸ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

«Կինը մեզ հետ պտիլը՝ բովին անյարմար է։ Մխօն ըրացած է, նա, Սօսէն, երեան, տղաղ Յակոբը դնենք պաղանք գիւղը, երկու հատ ով ունինք Գուրգէնէն մնացած, 0 կոտ ցորեն կ'առնենք, կուանք իրենց, մի կին աղախին ճարենք, կուտանք. դու Սաւնը կը պատիս կազմակերելու, մենք կ'երթանք Դաշտ»։

Այդ բանը չըրաւ, որովհետեւ նը չհամաձայնեց։ Սերոբն իր կինը եւ մենք բոլոր ուորներս միեւնոյն ժարագի Ջ կը պառկէինք Խտան։

Այդ առեն եկաւ Տալւորիկի ղամանք թաղի տէրտէրի տղայ քորը, որը 15 տարի մնացած Ս. կարապետ վանքը։ Դա նտարկուած էր եւ բանտից ատուած՝ ամուսնացեր էր Չիարէթցի մի աղջկայ հետ եւ եկաւ Խտան։ Սաքօն բանտի մէջ շարք մը բանաւոր պատուէրներ էր տուեր մեզ ըսելու։ Սաքօն կը հարցնէր Մճելէու զօրքի չզարնելու պատճառը։

Երբ վեր կեցանք Դաշտ գնալու՝ Սերոբ ըսաւ. «Տղե՛րք, եթէ կրնաք ճարեցէք քանի մը կոտ ցորեն, 15 զոյգ սօլ, 6 լիտր աղ, դաթուկ նաւթ»։ Սօսէն ալ տեսեր էր Մակարի կնոջ ժառերի թելերը և ինձկը պատուիրեր. «Տե՛ս, էս թելերու պէս ծամի թել կը բերես, պատին կախելու հայելի մըն ալ կը բերես»։ 20 քայլ հեռացած էինք, Սօսէն նորէն պոռաց. «Տե՛ս, Անդրանիկ, չմոռնաս հա՛»։

* * *

Գացող ընկերներս Սերոբի մաս մը ընկերներու այդպէս նկատեցին մեզ եւ եկան դէպի մեզ։ Հովիւ Սետոյի եղբայր Օհան եկաւ շների հետ։ Մենք պոռացինք. «Օհա՛ն»։ «Ի՞նչ է», ըսաւ։

— Արի՛, արի՛։

— Տղե՛րք, դո՞ւք էք։

— Հա՛, մենք ենք, վանքը մարդ կա՞յ։

— Կայ 6 գինուոր։

— Ի՞նչ գործով են եկած։

— Վանքից 15 ոսկի տուրք կ'ուզեն։ Եթէ վարդապետները տան՝ վաղն եւ ետ կ'երթան։

— Դէ՛ Օհա՛ն, գնա՛ մեզի քիչ մը հաց եւ մածուն բեր։

Այդ եղբայրները շատ ազնիւ էին, Տաժատեանի եւ Մուրատի ժամանակներէն մինչեւ այժմ այդպէս ազնիւ մնացած են։

Լուսնալուն դեռ 1ուկէս ժամ կար։ Օհանը գնաց մեզի հաց ու մածուն բերելու, իսկ մենք երկու պահապան կայնեցուցինք եւ անտառի մէջ կանաչ խոտի վրայ պառկեցինք։ Քիչ մը քնանալնուս վերջը՝ Օհանը բերաւ հաց, մածուն, կաթ։ Մեր ատամները ցրտից իրար կը վարէին։ Մեր ամենագրսի շորերն անդամ կը քամէինք, որովհետեւ այնչափ արագ քալած էինք, որ շատ էինք քրտներ։

Արեւը ծագեց, փոքր չոր փայտեր հաւաքեցինք, կրակ վառեցինք, վատ թէ լաւ մեր շորերը ցամքեցուցինք։ Արսիքցի մի մարդ, որ մեզ ծանօթ էր, Հեղինցի Մկրտիչ վարդապետի քոյրը բերած էր վանք։ Մկրտիչ վարդապետը վարքով, բարքով, ամէն բանով վատ էր, կեղտոտ էր։ Երկար դրել էդոր մասին պէտք չէ։

Վանքի անտառապահը՝ ղըզըլաղաճցի Աւօն եկաւ մեզ տեսաւ եւ ըսաւ.

— Տղե՛րք, ես պիտի Ղըզըլաղաճ երթամ, ի՞նչ ըսեմ Հրայրին։

— Ոչինչ, ըսինք, ինչ պիտի ըսես, Դաշտէն կուգանք, կ'երթանք Սասուն։

Աւօն տեսեր էր Հրայրը եւ ըսեր, թէ տղաքը անտառն է տեսած։ Հրայրը մեր գաղտնի գալէն հասկցեր էր, որ ճէգհիրը սպաննելու համար ենք գացած եւ մէյ մըն ալ տեսանք, երկու օր վերջ նամակ մըն էր ղրկեր թէ՝ «տղե՛րք, ինչպէս ընկերի, ինծի ալ ըսէք ձեր դալու պատճառը»։ Մենք չպատասխանեցինք։ Նամակ մը եւս գրեց, թէ՝ «տղե՛րք, ըսէ՛ք, ինչի՛ համար էք եկած, կարելի է ես ալ բարի խորհուրդ տամ»։ Էլի չպատասխանեցինք։

Մինչեւ էդ առեններդ մենք զանազան գիւղերէն մարդ կը փնտռէինք, որ ճէգհիրի քէօշքը լրտեսէր եւ մեզ առաջնորդէր նրա վրայ։ Երկու օր առաջ ես կանչած էի Մուշէն Կոսոհաճին, Մըչօն, նրանք եկան, հետերնին բերին ուրիշ երկու ընկեր ալ։ Երկար խօսեցի հետերնին եւ անոնք խոստացան Մուշէն հանգանակութիւն ընել եւ ղրկել մեզ 50 կոտ ցորէն, 20 զոյգ սօլ, աղ, նաւթ, քանի մը զօտի, լուցկի, ծխախոտ, թուղթ եւայլն։ Նրանք մանր մունր իրերը պիտի փոխադրէին փէֆթար, իսկ ցորենը Առաքելոց վանքը եւ ապա մենք ինքներս պիտի տանէինք Սասուն։ Նրանք վերադարձան Մուշ։

(Շար.)

գայնականները այն յանձնախումբին առջեւ, որ պաշտօն ունի ճշդելու իրաւասութիւնները «Լացի Պատ»ի հարցին մէջ։

Սոյն Յանձնախումբը, որուն անդամները չէզոք տէրութեանց քաղաքացիներ են՝ նշանակուած անգլ. կառավարութեան կողմէ, մասնաւորաբար ճշդելու համար «Լացի Պատ»ի իրաւասութեանց խնդիրները, եկած են Պաղեստին եւ ուսումնասիրութեան սկսած։ Իսլամ Արաբներ բոլոր երկիրներէն պատուիրակութիւններ կը ղրկեն ի նպաստ Արաբներու լուծել տալու համար խնդիրը։ Պէյրութէն եւս մեկնած է պատուիրակութիւն մը։

Եգիպտոս կի խռովի

ԳԱՀԻՐԷ, 8 Յուլիս.— Հակառակ ոստիկանութեան խիստ արգելքին, ազգայնական վաֆտ կուսակցութեան գործադիր մարմինը որոշած էր հրապարակային հաւաքոյթ մը սարքել Մանսուրայի մէջ։ Այս պատճառով ալ, արիւնահեղ միջադէպեր տեղի ունեցան, Մանսուրայի մէջ, ուր ազգայնական բազմաթիւ երեսփոխաններ գացեր էին, նախորդ վարչապետ Նահաս փաշայի հետ։ Նահասի ինքնաշարժը կոխոտեց ոստիկան մը որ կ'ուզէր խափանել ճամբան։ Քիչ անդին, սուլինաւոր ոստիկաններուն վրայ, որոնք ստիպուեցան զէնքի դիմել։ 6 մեռեալներ եւ 40ի չափ վիրաւորներ կան ժողովուրդէն։ Իսկ ոստիկանութեան կողմէ՝ 2 մեռել եւ 27 վիրաւոր։

Նահաս փաշա եւ իր կուսակիցները ստիպուեցան փակուած մնալ ոստիկանութեան հրամանով՝ այն տան մէջ ուր իջած էին եւ ուրկէ դուրս ելան, Գահիրէ վերադառնալու համար։

Կարգը Լեհաստանի՛ն եկաւ

ՎԱՐՇԱՒԻԱ, 8 յուլիս.—Տոմպինայի բնակիչներէն մէկը սպաննուեցաւ հարկահաւաքի մը կողմէ, որ կ'ուզէր անոր ինչքերէն մաս մը գրաւել։ Այս դէպքը պատճառ դարձաւ որ բնակչութեան մեծ մասը ցոյցեր կատարէ ոստիկանութեան եւ քաղաքային վարչութեան դէմ։

Խումբ մը գիւղացիներ յարձակեցան ոստիկանատան վրայ, զոր գրաւեցին։ Քաղաքին բնակչութիւնը սարսափի ենթակուած է։ Վաճառատուները ամբողջ փակուած են։ Տեղական իշխանութիւնները ստիպուեցան զինուորական ուժեր կանչել օգնութեան։

Բոլշեւիկեան հաւատգուարդ

Համագումարը միաձայնութեամբ քուէարկեց բանաձեւ մը, որով կատարեալ հաւանութիւն կը յայտնէ Գ. Միջազգայինի քաղաքականութեան եւ գործունէութեան։ Բանաձեւը կը հաստատէ համաշխարհային տնտեսական տագնապին յարաճուն սաստկութիւնը եւ կազմակերպուած դրամատիրութեան տեսաբանութեանց անանկութիւնը, եւ Ամերիկայի բացառիկ կացութիւնը։ Կը շեշտէ նաեւ քաղքենի պետութեանց միջեւ շարունակական հակամարտութիւնը եւ դրամատէրներու ջանքերը՝ սեղմելու համար աշխատաւորներու ապրուստի պայմանները։

Հնդիկ ուսանողներու դասադուլը

Յիսունի չափ կիներու խումբ մը խուժեց կալկաթայի համալսարանին այն սրահը, ուր ուսանողները քննութիւն կ'անցընէին, եւ ստիպեց զանոնք որ դասադուլ յայտարարեն, հակառակ ոստիկաններու միջամտութեան։

Դպրոցական դասադուլը հետզհետէ մեծ ծաւալ կը ստանայ։ Բազմաթիւ քաղաքներու մէջ, դպրոցները ստիպուեցան փակել իրենց դռները։

*** Երեք հազար հոգինոց ուժ մը, բաղկացած միմիայն երիտասարդներէ, հաւաքուած է Ռազմոքի շրջանին մէջ և մտադիր է յարձակիլ Սորզայի վրայ, որ կը պաշտպանուի 500 բնիկ զինուորներու կողմէ։ Արդէն ըմբոստները քանդեցին քանի մը կամուրջներ եւ կը քալեն Սորզայի վրայ։

*** Սիմլայի մէջ, մահմետական Հնդիկներու Գործադիր Մարմինը որոշեց մասնակցիլ հոկտեմբեր 20 ին Լոնտոնի մէջ գումարելի Աշխրդաժողովին, հակառակ որ, կը յայտարարէ թէ Սիմոնի տեղեկագիրը գոհացում չտար մահմետականներու նուազագոյն պահանջներուն իսկ։

Վեսուվ քորքոմած

Վեսուվը դարձեալ սկսաւ բորբոքիլ։ Հեղուկ լաւան կը հոսի բորբոքման կոնի բերնէն, որ երեսուն մղոնի վրայ ճեղքուեցաւ զօրեղ պայթիւններով, եւ առատօրէն ժայթքելով ատրաշէկ նիւթեր։ Փոքր կոնին արեւմտեան խարիսխին վրայ բացուած է ճեղք մը, ուրկէ լաւայի յորդ հեղեղ մը կը հոսի։

Հիւսիսային կողին վրայ, երկու ճեղքեր եւս բացուած են, բայց նուազ վտանգաւոր։ Կը կարծուի թէ հրաբուխին բորբոքումը պիտի տեւէ մէկ քանի շաբաթ, եւ որովհետեւ ճեղքերը դանդաղօրէն կը լայննան, հաւանական է որ լաւան կարծրանայ հրաբուխի բերնին շուրջ կամ Դժոխքի հովտին մէջ, սոռանց հեռուները տարածուելու եւ վնասելու գիւղերուն, ինչպէս 1927ին։

Գերմանիա եւ Համերոպա

Գերման դահլիճը սկսաւ խորհրդակցիլ Պրիանի յուշագրին արուելիք պատասխանին մասին, զոր կարելի պիտի ըլլայ յանձնել Ֆրանսայի արտաքին Նախարարին, յուլիս 15ին առաջ։

Իր պատասխանին մէջ, Գերմանիա կը նկատէ որ Համերոպայի իրականացման համար, անհրաժեշտ է որ բոլոր ազգերուն համար, ընդհանուր բացարձակ հաւասարութեան սկզբունքը եւ բոլոր պետութիւններուն ապահովութիւնը հաւասարապէս երաշխաւորուի։ Պէտք է նաեւ հաստատել բոլորին յատուկ տնտեսական եւ մաքսային քաղաքականութիւն մը։

Գերմանիա իր կողմէ, պայման կը դնէ նաեւ որ բոլոր պետութեանց մուտքը Եւրոպայի Դաշնակցային Միութեան մէջ, ապահովուի։

Հ. Յ. Դ. ՓԱՐԻԶԻ ԿՈՄԻՏԷՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԶԱԿԱՆ

ժողովի կը հրաւիրէ բոլոր խումբերու ներկայացուցիչները վաղը ուրբաթ իրիկուն ժամը 8.30ին Chope Parisienneի վերնայարկը, 64 Rue des Ecoles.

Հ. Յ. Դ. ՄԱՐՍԷՅԼԻ ԿՈՄԻՏԷՆ ՍՏԻՊՈՂՈՒԹԻՒՆ

կը հրաւիրէ՝ Քրիստափոր, Ռոստոմ եւ Իշխան ենթակոմիտէի բոլոր ընկերները, այսօր Հինգշաբթի իրիկուն ժամը 8.30ին սովորական հաւաքատեղին։ Ներկայանալ անդամատետրով։

Հ. Մ. Ը. Մ.

ՀԱՅ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

Սկաուտներու բանակում-ցուցահանդէսը, Meudonի անտառին մէջ, Patte d'Oie վայրը, 12—13—14 յուլիս։ Կը մասնակցին 250 հայ սկաուտներ իրենց ձեռական աշխատութիւններով։

Հրաւիրուած են օտար անձնաւորութիւններ եւ սկաուտներ։

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

ՄԱՐՍԷՅԼԻ ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Այս կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին

84 Rue Chapeի թատերասրահին մէջ

Մուտքը 5 ֆր.

ՀԱՄԱԽԱՐԵՐԴՅԱԿԱՆ ՖԷՕՖԹԱՅԻ ԱԻԱՆԴԱԿԱՆ ՏՕՆԸ ՄԷՏՈՆԻ

անտառին մէջ, այս երկուշաբթի առաւօտ ժամը 9էն մինչեւ իրիկուն, աղբիւրին մօտ։ Կը նախագահէ Հ. ՍՐԱՊԻՈՆ վրդ.։ Բանախօսութիւն, երգ, հայկական եւ կովկասեան պարեր, նուագ եւ ճոխ պիւֆէ։

Փափաքողները կրնան իրենց ճաշը միասին բերել։

Շաղորդկց. միջոցներ.— Փոքր վէրսայլէն առնել հանրակառք թիւ 89 եւ իջնել վերջաւորութեանը, Քլամառ, ուր պիտի սպասեն առաջնորդները։

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ԴՊՐՈՑԱՍԷՐԻ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

20 Յուլիս կիրակի ժամը 2էն 10 վարժարանին պարտէզին մէջ

1 Boulevard du Nord, Le Raincy-Pavillons

Ճոխ գեղարուեստական բաժին Մուտք՝ 5 Ֆրանք

«ՅԱՌԱՋ» կը ծախուի ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

Գրատան մէջ, 51 Rue Monsieur le Prince

Հ. Ց. Դ.

ՓԱՐԻԶ

Պէլվիլի Ռոստոմ ենթակոմիտէի ժողովը՝ այս կիրակի առաւօտ ժամը 10ին Ռոստոմի սրահին մէջ, 131 Fbg. du Temple։ Կարեւոր օրակարգ։ Պատասխանատուութիւն։

ԳԱԻԱՌ

Լիոնի պատ. միութեան վիժաբանական ժողովը՝ այսօր Հինգշաբթի իրիկուն, ժամը 8.30ին, Գրադարանի սրահը։ Կը հրաւիրուին անդամներն ընկերներուն համակիրները։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ջ. Ե. Ո. Միութեան Փարիզի մասնաճիւղին վիճաբանական ժողովը, այսօր Հինգշաբթի իրիկուն, ժամը 9ին Ֆլորիայի վերնայարկը։ Նիւթ՝ Հայրենասիրութի՛ւն թէ աշխարհաքաղաքացիութիւն։ Մուտքը ազատ է։

ՇԱՒԻԼԻ երիտ. երկ. միութեանը ժողովը այս շաբաթ իրիկուն, ժամը 8.30ին ճանօթ հաւաքատեղին։

Պէլվիլի Ռոստոմ Գրադարանի դաշտահանդէսը յետաձգուած է Յուլիս 27ին։ Կը խնդրուի նկատի ունենալ այս թուականը։

ՓԱՐԻԶԻ Վասպուրականի Հայր. Միութեան ընդհ. ժողովը՝ այս կիրակի ժամը 3ին Ֆլորիայի ճաշարանին վերնայարկը։ Կը հրաւիրուին անդամ եւ ոչ անդամ բոլոր հայրենակիցները։ Կարեւոր օրակարգ։

Ջ. Ե. Ո. Միութեան Պիյեանքուրի մասնաճիւղը ժողովի կը հրաւիրէ իր ընկերները վաղը ուրբաթ իրիկուն ց. Մինասեանի ճաշարանը։ Կարեւոր օրակարգ։

ՆԱՄԱԿԱՏՈՒԻՓ

ՍԷՆԹ ԱՆԹՐԷ (Մարսէյլ). Բ. Մ.— Փնտուուած անձը ներկայացաւ։

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Կը փնտռուի Սիվրիհիսարցի Թադուհի Կիլէմիրեանի աղջիկը Հայկանուշ Թէքէեան որ երկու տարի առաջ կը գտնուէր Պոլիս իր ամուսնոյն Պրուսայի ճէրթա գիւղացի Յովհաննէս Թէքէեանի հետ։ Կը կարծուի թէ այժմ կը գտնուին Յունաստան։ Իմացնել՝ Missak Nichanian, 3 Rue Victor Hugo, Bourgoin, Isère, France.

— Տիկին Աննիթա Հիւսէմեան եւ իր որդին Սիրական (Մարգուանցի), կը փնտռեն իրենց մօտիկ ազգականները Մարիամ եւ Ֆլորիթա Թաշճեանները, որոնք կը գտնուին Ամերիկա։ Տեղեկացնել՝ A. Gulbenkianի, 35 Rue Dunoir, Lyon։ կը խնդրուի ամերիկահայ թերթերէն արտատպել։

— Կը փնտռուի Էնկիւրիւ նահանգին Ստանօս գիւղէն Յակոբ Զօպանեան 27—28 տարեկան, հօր անուն՝ Պօղոս, մօր՝ անուն Մարիամ։ 1920ին կը գտնուէր իր մեծ մօրը քով Մերսինի։ Այդ թուականին մեկնած է Դամասկոսէն Պոլիս երթալու համար։ Կիլիկիոյ ճամբուն վրայ տեսնուած է հայրենակիցի մը կողմէ։ Իր մասին ստոյգ տեղեկութիւն տուողին 1000 ֆրանք նուէր։ Իմացնել իր եղբօրը Գրիգոր Զօպանեանի 31 Rue de Fossé, Issy-les-Moulineaux (Seine) France կամ թերթիս վարչութեան։

Կը խնդրուի արտատպել թերթերէն արտատպել։

ՀՐԱՊԱՐԱԿ ԵԼԱՒ

ՄԻՒՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆԻ

Նոր գիրքը

ԲԱՆԱՍՏԵՂԾ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ (իր գրական գործունէութեան քառասնամեայ յոբելեանի առթիւ)։

Դիմել՝ L. Kévonianի, 235 Fbg. St Martin։ Գինը՝ 5 Ֆրանք, փոստի ծախք չկայ

Հ. Յ. Դ. Լիոնի ժողովրդային Գրադարանը բաց է՝ Չր. երեկոյները ժամը 7—8, իսկ Դշ. եւ Ուր. երեկոները ժամը 7էն 8.30։ Նոր բաժանորդագրուիլ փափաքողները դիմեն B. Sahatjianի, 262 Rue Duguesclin, Lyon.

կ'ուզուի վարպետ գործաւոր մը, որ գիտնայ կօշիկի նորոգութեան վերաբերեալ բոլոր մանրամասնութիւնները։ Ֆրանսերէն խօսիլը պարտաւորիչ է։ Լաւ պայմաններ։ Դիմել՝ 79 Rue Rébéval, Belleville.

EMPIRE միգիք-շոլ՝ 37 Av. Wagram

ՎԵՐԱԲԱՑՈՒԱԾ Է

ՃԱՆԿԷՕԶԵԱՆԻ

ՃԱՇԱՐԱՆԸ

202 Rue Boileau, Lyon

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Միշտ ունենալու համար ապուխտի եւ երշիկի ընտիրը, համեղը եւ մաքուրը, դիմեցէք ուղղակի հանրածանօթ պուխտագործ եւ ապուխտավաճառ

HAIG MARACHLIANի

Fabrique des salaisons Orientales

16 Rue des Hortensias St. Just, MARSEILLE

որ իր յարգելի յաճախորդներուն դիւրութիւն տալու համար բացած է նաեւ մասնաճիւղ մը (կայարանին մօտ) 55 Rue des Petites Maries MARSEILLE.

Կ'ընդունի ապսպրանքներ ամէն երկիրներէ, մեծ քանակ եւ փոքրաքանակ եւ կ'ուղարկէ կատարեալ ճշտապահութեամբ։

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

ցէր եւ ցնօրէն՝ Տ Օ Քթ. Գ Ր Գ Ո Ց Ե Ա Ն

29, Rue (Place) des Fêtes, Paris, XIX. Tél. Nord 96-61

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուի ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Ակնաբոյժ գէտը կ'ընդունի Գշ., Երք. եւ Շաբաթ օրերը ժամը 4—6։ Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երեք. եւ Շաբաթ օրերը ժամը 2—3։ ԱՏԱՄՆԱԲՈՅԺԸ ամէն օր ժամը 9էն 19։

ՓԱՐԻԶԻ ԱՄԵՆԱՄՕՏԻԿ ՀԱՒԱՔՈՒԹԱԿԱՆ ՀԱՅ ԱԳԱՐԱԿԸ

Այժմեական քննութեան ենթարկուած օրուան թարմ կիթեր, ազատութեան մէջ պարարտացած նապաստակներ, խորովելու համար առաջնակարգ հաւեր ժաւչելի գիներով։

Խիստ կանոնաւոր առաքում։ Յարգելի յաճախորդները խնդրուի իրենց ապսպրանքները մէկ երկուտասնեակէ պակաս չ

Դիմել կամ ղրկել՝ Hachmanian, 285 Fbg. St. Antoine, P (XI), կամ ուղղակի ագարակին, Hachmanian, Elevage du B Perroy, Fouquerolles par Beauvais (Oise).

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

ՃԱՇԱՐԱՆ Ֆ Լ Օ Ր Ի Ա

61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)

Մէթրօ Օտէոն եւ Սէն Միշէլ Հեռաձայն Littré 38—43

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ



ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ ԲԱՑՈՒԱԾ Է

Կ. ՅԱԿՈԲԵԱՆԻ

ՄԱՍԻՍ ԳՈՇԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

57A Rue Nationale, MARSEILLE

ՅԱՐԳԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

ԵԹԷ Կ'ուզէք բերնի համով մաքուր եւ անարատ սուրճ խմել, դիմեցէք հիւսկաւոր

CAFÉ SULTANի

Ս. ԹՈՐՈՍ (Քէժաքցի)

92 Rue d'Angoulême Métro: Couronne, Tél. Ménil. 56-

Ամենավերջին դրութեամբ մեքենաներով օժտուած մեծ վաճառատան մէջ պատրաստուած սուրճը կը գոհացնէ ամէն նրբաճաշակները։

Ձոխ տեսակներ, գիները անմրցելի, փորձեցէք անգամ եւ պիտի տեսնէք տարբերութիւնը ձեր գործածած եւ մեր պատրաստած սուրճին։ Կ'ընդունինք ապսպրանքներ արտասահմանէն եւ գաւառներէն։ Փափաքողներու կը ղրկենք գիներու ցանկը, փոքրաքանակ եւ մեծաքանակ վաճառուներ

կեանքի, հիւղեհի, գոդութեան, աշխատանքի եւ անձնական արկածներու (ի մասնաւորի օթօմոպիլի արկածներու) ապահովագրութեանց համար դիմեցէք

Յ. ՍՈՒՃԵԱՆԻ

Ապահովագրական գործակալ Ֆրանսական եւ անգլիական ամենագլխաւոր ընկերութեանց։

H. Soudjian, 56 Rue Lafayette, Paris (9e)

Téléph. Provence 88-59 եւ 68-86

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ

96 r. Rivoli, մէթ. Շաթլէ։ Արմատ. եւ նոր մեթոտով դարմանում արանց եւ կանանց մորթի, արիւնի եւ վէներական հիւանդութեանց (ֆրանկախտ, ջերմահիզ.) եւ վարիսի։ Մասն. լապօռատուռ։ Ախտաճանաչում եւ արագ խորհրդակցութիւն ամէն օր 9—12, 2—9 Կիրակի 9—12։

IMPRIMERIE - MASSIS - ÉDITION
208bis, Rue Lafayette Paris (10)

Le Gérant H. STEPHAN

Վարձու գրասենեակ, 233 Fbg. St tin, Paris 10, Պալենց գրա

ԲԺՇԿ. եւ ՎԻՐԱԲՈՒԺԱԿ

ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ

10 Rue Beaugrenelle, Paris

Մէթրօ՝ Beaugrenelle

Միզանցքի, փրոստատ մորթի, արիւնի, կանանց հիւանդութիւններ եւ Ֆրանկախտ։ Ամէն օր ժ. 10—12 3 9։ կիր. եւ տօն օրեր 10

ՅԱՌԱՋ

LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԲԱԺԱՆԵԳԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70ֆ.	140ֆ.
ԱՆԳԼԻԱ		20 շլ.	40 շլ.
ԵԳԻՊՏՈՍ		»	»
ԻՏԱԼԻԱ		250 ֆրանք	
ԱՄԵՐԻԿԱ		6 տլ.	10 տլ.
ԵՒՐՈՊԱ		100 ֆ.	200ֆ.

"HARATCH"

Directeur-Propriétaire
SCH. MISSAKIAN
Խմբագիր՝
Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Rédaction et Administration
Խմբագրութիւն եւ վարչութիւն
235, Faub. St.-Martin
PARIS (10e)

MÉTRO: LOUIS-BLANC OU JAURÈS

Téléphone : NORD 67-23

R. C. SEINE 376.286

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 3 ֆրանք

ՈՒՐԲԱԹ
11
ՅՈՒԼԻՍ
1930

11 JUILLET 1930

Զ. ՏԱՐԻ Թիւ 1311 — ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ — ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հ. Յ. Դ. ԵՒ ՀԱԿԱԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ

Երբ Դաշնակցական և Բոլշեւիկ հակադիր ճակատներէն մեր աչքը կը դարձնենք արտասահմանի կեանքին, հոդ կը տեսնենք միայն Դաշնակցութիւնը, որպէս կազմակերպուած քաղաքական ուժ մը: Հակադաշնակցական մթնոլորտը, քաղաքական որոշ հոսանք մը չէ, ո՛չ իր ամբողջութեան մէջ և ո՛չ ալ իր խմբական արտայայտութեամբ:

Այսպիսով, հակառակ իր կամքին, Հ. Յ. Դաշնակցութիւնը հետզհետէ կը դառնայ մենատէր արտասահմանի հայ կեանքին: Ու այդ արդիւնքն է հակադաշնակցական պայքարին:

Լուսաբանենք այս երեւոյթը:

Հայաստանի Հանրապետութեան անկումէն ասդին, դաշնակցական և հակադաշնակցական ուժերու փոխ-յարաբերութեան մրցադաշտ մը եղաւ գաղութահայ կեանքը: Հայաստաննէն, Ռուսաստանէն և Թուրքիայէն դուրս, աշխարհի չոլս կողմը ապաստանած հայութիւնը բնականօրէն պիտի ունենար իր ազգային-քաղաքական, տնտեսական և մշակութային խնդիրները, որոնք կազմակերպութեան և դեկավար ձեռքի պիտի կարօտէին:

Անցած տասնամեակը ազգային ճգնաժամի պատկեր մը կը պարդէր: Քաղաքական փոթորիկէն բռնուած հայութիւնը ենթակայ էր յուսալքման: Հ. Յ. Դաշնակցութիւնը գիտակ իր կոչումին, անվարան կուրծք տուաւ փլուզումին, ու այդ աշխատանքին ուզեց լծակից դարձնել բոլոր այն հոսանքները ու խմբակները, որոնք հայ ազգային կեանքի մէջ որևէ դեր ու կոչում ունէին: Դաշնակցութիւնը երբեք յաւակնութիւն չունէր մինակը վարելու ամբողջ հայ կեանքը: Մանաւանդ վտանգը համազգային էր. հետեւաբար՝ անհրաժեշտ բոլոր ուժերու համախմբումը:

Դաշնակցութիւնը իր այդ բարեացակամ ու համերաշխ ոգիին դէմ գտաւ անբարեացակամ ու խառնակ հաւաքականութիւն մը, ձեռնհասի քաղաքական ծրագիրներէ, ազգային քաղաքականութենէ և կազմակերպական ոգի է: Սակայն, միացած հակադաշնակցական մտայնութեամբ:

Դաշնակցութիւնը կ'ուզէր վերակազմել գաղութները, կարգաւորել այդ գաղութներու փոխ-յարաբերութիւնները տիրող պետութեանց հետ, զարկ տալ կրթական մշակութային գործին և համախմբել հայութիւնը ազգային և քաղաքական հաստատութեանց շուրջ, որպէս զի տարագիր հայութիւնը շուտով կ'ազդուրուէր, պահպաներ իր ազգային դիմագիծը և հետապնդէր հայ ժողովուրդի վերածնունդը:

Մեր հակառակորդները բոլշեւիկեան յաղթանակներէն շլացած, ոչ միայն ձեռնհասի եղան հայ հաւաքական կեանքէն, այլ ջերմեռանդութեամբ միացան բոլշեւիկեան արշաւանքին՝ ընդդէմ Հ. Յ. Դաշնակցութեան, ժտածելով որ ճիշտ ատենն է քանդելու Դաշնակցութեան կազմակերպուած ուժը: Անոնք համբայ ելան այն հաշուով, որ Դաշնակցութիւնը չպիտի կրնայ դիմանալ այլ ու ձախ այս անյարիր միութեան, ու պիտի չաշուի ասպարէզէն: Այդ հաշուով, հակադաշնակցական խմբակները ամէն շինարար ձեռնարկի, մանաւանդ ազգային կեանքի կազմակերպութեան գործերուն հանդէպ բացասական իրք բռնեցին և գոհացան միայն քննադատութեամբ:

Երբ աչք կը պտտցնէք անցած տարիներու քննադատութիւններուն վրայ, դուք կուգաք այն եզրակացութեան թէ՝ Հ. Յ. Դաշնակցութիւնն է միակ տէրն ու տիրականը հայ կեանքին, իսկ հակադաշնակցականները կը կազմեն միացեալ բայց անպատասխանատու ընդդիմադրր հոսանք մը: Մինչդեռ իրականութիւնը այդպէս չէր: Դաշնակցութեան բարոյական ուժը, մշանձրացեալ ձեւով մարմին առած չէր գաղութահայ կեանքին մէջ: Ուրեմն, ընդդիմութիւնը ուղղուած էր կուսակցութեան դէմ, առանց զայն փոխարինող ծրագիր և գործելակերպ մը հրապարակ դնելու:

Դաշնակցութիւնը յամառեցաւ իր կազմակերպական ջանքերուն մէջ: Հայ մտաւորականութեան բացարձակ մեծամասնութիւնը անոր շուրջ համախմբուեցաւ, թարմ ուժեր եկան խտացուցին անոր շարքերը: Կուսակցութիւնը յստակ և ձեւակերպուած քաղաքական և ազգային առաջադրութիւններով դարձաւ հակակշիռ իշաւ և աւելի զօրացաւ քան կարող էր յուսալ:

Դաշնակցութիւնը քայքայելու ծրագիրը վերջնականապէս նախկացաւ: Ամէնէն առաջ այդ իրողութիւնը հասկցան հայ բոլշեւիկները, սակայն անոնց ողորմելի հետեւորդները դեռ մինչեւ այսօր, կը շարունակեն իրենց ճղակոտոր պայքարը, արգելով այլապէս խիստ նշանակալից պատկեր մը: Հայ բոլշեւիկները սահմանափակուեցան իրենց տիրապետութեան շրջանին մէջ, ու յայտարարեցին թէ իրենք գաղութահայ խնդիրներով չեն զբաղիր: Մէջտեղը մնաց հակադաշնակցական բազմազան խմբակը, անյեղարան ու անծրագիր, մանաւանդ անպատասխանատու:

Հայ հասարակութիւնը վարժուեցաւ տեսնել բոլոր ղրկական շխատանքներու մէջ Դաշնակցութեան մասնակցութիւնը և արիւն կամքը: Հայ ազգն ու Դաշնակցութիւնը հոգեբանական միութիւն մը կազմեցին:

Այսօր, Դաշնակցութիւնը մեացած հայ ժողովուրդի ողջմիտ մեծագոյն դանգուածին հետ, կարող է ընթացք տալ հայ կեանքի բազմաթիւ պահանջներուն, առանց ուշադրութեան առնելու կոչումէ և պարտականութենէ խուսափող հակառակորդները:

Կ. Ս.

ՄԱՄՈՒԼ

ՑԵՂԱԿԻՑ ԱԶԳԵՐԸ

«Յուսաբեր» այս խորագրով խմբագրականի մէջ կը գրէ (26 յունիս).

— «Իրանէն եկած ամէն ձայն մեր ականջին հասնելէ առաջ նախ մեր սրտին կը հասնի: Շամակ ուշ ու լսողութիւն դարձած, մենք կը հետեւինք այն շարժումներուն, որ դէպք-դէպք ձեւ ու կերպարանք կ'առնեն ցեղակից Իրանի մէջ:

Հիմնապէս տարբեր վերաբերում ունինք մենք դէպի Պարսկաստանը: Բարեկամութենէ եւ երախտագիտութենէ շատ աւելի խոր, շատ աւելի ուժեղ եւ իրաւուստ զգացումներ մեզ կը կապեն այս երկրին, ուր մենք, մեր պատմութեան ինագոյն օրերէն մինչեւ այսօր, այնքան դառն ու քաղցր յուշեր ունինք ամբարած: Եւ, վերջապէս, կապ մը ունինք այս երկրին հետ, որուն արձագանգները մեր հոգիէն, մեր սրտէն ու մեր երակներէն կուգան՝ իբրեւ ցեղակից եւ արեւնակից ազգ մը Իրանի ազգութեան: Այս կապը դէպքէ-դէպք աւելի ու աւելի պիտի ամրանայ՝ անխզելի դարձնելով մեր եւ մեր երկրորդ հայրենիքի՝ Իրանի եղբայրութիւնը:

Մեր դարը *ազգութեանց* վերածնութեան դարն է, ու ոչ միայն ազգութեանց, այլեւ *ցեղերու: Ցեղը* ինն — ու շատերու համար Թերեւս «մեռած» — պատմական մեծարժէք ազդակ մըն է, որ *ազգութեանց* զուգահեռ եւ անոնց հետ միաժամանակ պիտի արթննայ, պիտի ձեւաւորուի եւ իր շուրջը համախմբէ արեւնակից ժողովուրդները՝ ազգային այլ միութեանց դէմ հակադրելով իրական ազգերու մրութիւնը:

Սակայն ինչո՞ւ ձեռաճալ գալիքին սպասել: Ինչո՞ւ գէպքերը չնախապատրաստել, փոխանակ ծոյլ տալու, որ դէպքերը գան եւ իրենք մեզ *նախապատրաստեն:*

Ցոքթ. Ազշարները — պարսիկ եւ հայ — կոչուած են նախախնամական դեր կատարելու մերձաւորագոյն Արեւելքի պատմութեան եւ յատկապէս իրանական ազգերու կեանքին մէջ:»

ՍԻՊԵՐԻՈՅ մէջ հանքային պայթուցմի մը զոհ գացին բազմաթիւ գործաւորներ: Փլատակներուն տակ մնացած են երկու հարիւրի մօտ հանքագործներ: Ցարդ կարելի եղած է երեւան հանել 62 դիակներ:

ՕՐ ԸՍՏ ՕՐԻՆ

ՔԻՒՐՏԵՒԹՈՒՐՔ ՊԱՅՔԱՐԸ

ԼՈՆՏՈՆ 9 յուլիս.— «Տէյլի Թելէկրաֆ»ի Պոլսոյ Թղթակիցը կը հեռագրէ.—

«Տակաւին մէկ շաբաթ առաջ, Թուրք պաշտօնական մամուլը, արեւելեան սահմանագլուխի դէպքերը կը նկատէր իբր փոքր աւազակախումբերու սովորական արշաւներ: Բայց հիմայ, ըստ նոյն, ժամուլին այդ դէպքերը այնքան կարեւոր են որ կրնան վտանգել միջազգային յարաբերութիւնները:

«Հասած տեղեկութիւնները ցոյց կուտան թէ Արարատ լեռան միջադէպերը աւազակային պարզ արարքներ չեն, այլ աւելի, քաղաքական բնոյթ կրող շարժուձեւեր են: Թուրքիոյ կողմէ Պարսկաստանի ուղղուած բուռն բողոքի մը պատասխանին կը սպասուի: Բայց դէպքերը նկատի ունենալով, Թուրքերը շատ չեն վստահիր պարսկական խոստումներուն»:

Թուրքիոյ բողոքագիրը Պարսկաստանի

ԼՈՆՏՈՆ, 9 յուլիս.— Էնկիւրիէն կը հաղորդեն թէ, քիւրտ ձիաւորներու արշաւին հետեւանքով, որ վերջերս տեղի ունեցաւ Թրքական հողամասին վրայ, Թուրք կառավարութիւնը Պարսկաստանի ուղղեց վերջնագիր մը, որով կը խնդրէ որ պարսիկ կառավարութիւնը երաշխաւորէ Թուրք սահմանագլուխին վրայ հաստատուած պարսիկ (?) ցեղախումբերու զսպումը, հակառակ պարագային, Թուրք կառավարութիւնը ինքն իսկ պիտի հետապնդէ զանոնք, մինչեւ պարսկական սահմանէն անդին:

ԴԷՊՔԵՐՈՒՆ ԸՆԹԱՑՔԸ

Ահա դէպքերուն ընթացքը, համաձայն Թրքական աղբիւրներէ առնուած տեղեկութեանց.—

«Քիւրտերը առաջին անգամ Արարատի շրջակաները կուկան եւ կ'աշխատին դէպի Պարսկաստան քշել գիւղացիներու հօտերը: Թրքական սաւառնակները, սակայն, յունիս 10ին, կը յարձակին անոնց վրայ եւ կը ստիպեն որ Պարսկաստան փախչին:

Յունիս 19ին, Պարսկաստանէն եկող աւազակները, կը յարձակին Հանիք գիւղին վրայ, բայց Թուրք ուժերուն տուած ծանր հարուածներուն վրայ՝ նորէն Պարսկաստան կը փախչին:

Յունիս 19—20ի գիշերը, Պարսկաստանի էքվալ գիւղին մէջ զինուած 110 հրոսակներու խումբ մը, սպաննուած Քէօր Հիւսէյինի տղուն՝ Եուսուֆ Ապտալի եւ ուրիշներու ղեկավարութեամբ, Զէվրիշվայեանի ժօտէն կ'անցնին Թրքական սահմանը, մինչեւ Հայտարանցի աշիրէթը կը հասնին, եւ Զիլանի շուրջ կը յարձակին անպաշտպան գիւղերու վրայ: Բայց Թըրքական ոստիկան-զինուորներու եւ ուժերու կողմէ ծանր կորուստներ կը ստանան:

Յուլիս 1ին, Պարսկաստանի աշիրէթներէն Պէլիքանցիները Թրքական սահմանէն հինգ քիլոմէթր հեռաւորութեան վրայ վրան կը զարնեն:

Յուլիս 2ին, Պարսկաստանի աշիրէթապետներէն Հալիքանլը Խալիտ աղա, իր 100 արբանեակներով կ'անցնի Թրքական սահմանը եւ Զըղըլքէօյի շուրջը կը տարածուի»:

Ինչպէս կը տեսնուի, Թուրքերու կողմէ սահմանագլուխի դէպքերուն տրուած կարեւորութիւնն իսկ կուգայ հերքել Թէ շարժուձը շատ աւելի մեծ է եւ լուրջ, եւ Թէ յարձակող Քիւրտերը միայն 600 չեն, այլ շատ աւելի ուժեղ եւ բազմաթիւ, քան ինչ որ ցոյց կուտան Թուրքերը:

Հնդկաստանի տագնապը

Կանտիի կաւաւորներէն եօթը բանտարկեալներ որոնք իրենց պատիժը կը քաւէին Պոկրիի բանտին մէջ (Պէնկալ), յաջողեցան փախիլ, ոստիկան մը և պահապան մը զգետնելէ վերջ: Փախստականներէն մէկը միայն կարելի եղաւ բռնել:

.·. Պոմպէյի մէջ, ոստիկանութիւնը գրաւեց բոլոր գործիքներն ու մեքենաները այն տպարանին, որ լոյս կ'ընծայէր յեղափոխական երկու թերթեր:

.·. Փէշավէրէն Լոնտոն տրուած լուրերու համաձայն, հրնդիկ ցեղախումբեր յարձակում գործեցին սահմանագլուխի երկու պահակակոցներու վրայ եւ այրեցին անոնցմէ մէկը: Այս ցեղախումբերուն պատկանող 400 մարտիկներ քանդեցին Մաբրոպի կամուրջը:

Զինուորական օդանաւեր սպառնալիքի ցոյցեր կատարեցին և ազդարարութիւններ բրին ըմբոստացած գիւղերուն:

.·. Հնդկաստանի Օրէնսդիր երկու ժողովներուն առջեւ, փոխարքան ճառ մը արտասանեց և յայտնեց այն կարծիքը թէ Սիմոնի տեղեկագիրը նպաստաւոր պիտի ըլլայ Լոնտոնի Խորհրդաժողովին, առանց սահմանափակելու վիճաբանութեանց ազատութիւնը: Այս խորհրդաժողովը միջոց մը պիտի ըլլայ եզրակացութեան գալու բոլոր կուսակցութեանց հետ: Իսկ այդ եզրակացութիւնները հիմը պիտի կազմեն կառավարութեան առաջարկներուն, որոնք պիտի ներկայացուին անգլիական Խորհրդարանին:

(Ուրեքրու դարձուածութիւնը տարդա Գ. էջ)



Հ. Յ. Դ.
ՓԱՐԻԶԻ ՏԱՆ ՀԱՄԱՐ

(Հանգանակութիւն եւրոպայի կեդր. կոմիտէի)

ՑԱՆԿ 26

ՓՈՆ Տ'ՕՊՆԱ.—

Մարգար Բարխեան	105
Հրանտ Աւշարեան	105
Սիսակ Մարալեան	105
Մկրտիչ Թէրզեան	105
Մարտիրոս Կարապետեան	105
Մանուկ Գրիգորեան	100
Գրիգոր Գարամանեան	110
Ասատուր Շէկէրեցեան	100
Նիկողոս Կրկրգեան	100
Գուրգէն Պէյեան	115
Պետրոս Մելիտոսեան	50
Մկրտիչ Տօլպաշեան	50
Մարկոս Շահպազեան	50
Խնկիկ Գարաճեան (ր. անգամ)	50
Ընկերուհի Հայկանուշ Գալուստեան	25
Ընկերուհի Սիրարփի Զօպանեան	25
Գումար	1300
Նախորդ գումար	32,630
Ընդհ. գումար	33,930

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍԵՐԳԵՐՄԱՆ վերձեցման յանձնախումբը որ իր նիստերը կը գումարէր Մոսկուայի մէջ վերջացուց իր աշխատանքները յուլիս 9ին, չորեքշաբթի: Արդիւնքը պիտի տեղեկագրուի երկու կողմերու կառավարութիւններուն:

ՎԵՍՈՒՎԻ բորբոքումը կը սաստկանայ հետզհետէ: Հրաբուխի ղիտարանին դեկոյցը կը յայտնէ թէ լաւայի ժայթքումը կը շարունակուի, միայն մէկ բերնէն, որուն տրամագիծը մեծացած է 12 մեդրի չափ:

Լաւային բռնած շրջանը կրկին չափով տարածուած է 24 ժամուան մէջ:

ԵՐԵՍՓՈԽԱՆԻ մը հարցման պատասխանելով, Անգլիոյ արտաքին նախարարը յայտնեց թէ զինաթափութեան նախապատրաստական յանձնախումբին նիստը որ տեղի պիտի ունենայ նոյեմբեր 3ին, կը լուսացուի որ վերջինը պիտի ըլլայ եւ թէ Ազգերու Դաշնակցութեան խորհուրդը պիտի կրնայ թուական մը նշանակել, հրաւիրելու համար զինաթափութեան ընդհանուր խորհրդաժողով մը:

ԵԻՐՈՊԱՅի գեղեցկութեան թագուհիները մեկնեցան դէպի Ամերիկա, մասնակցելու գեղեցկութեան մրցումին: Առանց մէջ են Ռուսիոյ եւ Թուրքիոյ գեղեցկութեան թագուհիները:

ՕԴԱՆԱՒՈՐԴ Մէբժոզի փորձը՝ կտրելու Հարաւային Ատլանտեանը Նաթալէն Տաքար, ձախողեցաւ: Օդանաւորդը ճամբայ ելեր էր յուլիս 8ին, ժամը՝ իրիկուան 7.30ին: 15 ժամ թռռիչքէ յետոյ 2400 ք.մեդր կըտրած էր, երբ ստիպուեցաւ վար իջնել Սննեկալեան Սէն-Լուիէն 700 քիլոմեթր հեռու, կանանչ Հրուանդանի կղզիներուն հարուստ արեւելեան կողմը, Շոգենաւ մը ազատեց օդանաւորդը եւ իր երկու ընկերները:

ԵԼՄՏԱԿԱՆ ԱՍՈՒԼԻՍ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՆՈՒԿԷՍ ԱՌՀԱՐԻՒՐ 1930Ի ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆԸ

Յունիս 13ին Ամսդէրտամի, Պրիւքսէլի, Պերլինի, Լոնտոնի, Նիւ Եորքի, Փարիզի, Հռոմի, Ստոքհոլմի եւ Ցուրիխի հրապարակներուն վրայ շրջաբերութեան հանուեցաւ գերմանական նոր փոխառութիւնն, որ որոշուած էր Ընդդի ծրագիրով, միջազգային երկարատեւ եւ դժուարին բանակցութիւններէ վերջ։

Փոխառութեան ընդհանուր գումարն էր կլոր թիւով 351 միլիոն տոլար, որուն 51 միլիոնը պիտի ծախսուի իբր դրամատնից յանձնարարողէջք, ծախք, տուրք եւ այլն եւ մնացեալ 300 միլիոն տոլարը (7 ու կէս միլիառ ֆրանք) պիտի բաժնուի պահանջատէրերուն մէջ, միջազգային հաշուեյարդարի դրամատան միջոցաւ, պետութեանց հաւանութեամբը որոշուած սակով։ Այսպէս ուրեմն իւրաքանչիւր 1000 ֆրանքնոց պարտաթղթէ 850 ֆր. գումար պիտի մնայ պահանջատէրի հաշուոյն։

Վերոյիշեալ ինը հրապարակներէն իւրաքանչիւրին յատկացուած էր որոշ գումար մը. Ֆրանսայի 100 միլիոն, Ամերիկայի նոյնչափ, Անգլիոյ 60 միլիոն, Հոլանտայի 30 միլիոն, Շվէտի նոյնչափ, Զուիցերիոյ 17 միլիոն, Գերմանիոյ 8 ու կէս միլիոն, Իտալիոյ 5 ու կէս միլիոն եւ Պելճիքայի 5 միլիոն, իւրաքանչիւր հրապարակի հաւասար, տեղական դրամով եւ հաշուուած ոսկիի արժէքով։ Ֆրանսայի համար տրամադրուած էր այսպէս 2 ու կէս միլիոն պարտաթուղթ իւրաքանչիւրը 1000 ֆրանքնոց։

Հրապարակման դին որոշուած էր ամէն շուկաներու համար 90 առ հարիւր, այսինքն 1000 ֆրանք մալը գումարնոց պարտաթուղթը 90 ֆրանքի. միայն Ֆրանսայի մէջ 98 1)4ի հրապարակ հանուեցաւ, բայց Միջազգային դրամատունը այդ աւելորդ 8 1)4 ֆրանքը ամբողջ ֆրանսական բաժնի գումարին համար միանուագ վճարեց Ֆրանսայի պետական գանձին իբր տուրք, որով այդ փոխառութիւնն այլեւս 35 տարի դերծ պիտի մնայ որ եւ է պետական հարկէ եւ պիտի բերէ իր տիրոջ 5 ու կէս առ հարիւր գուտ տոկոս։

Տոկոսները (կտրօն) եւ մայր գումարներն, ինչպէս ըսինք, վճարելի են ոսկեդրամի հաշուով, մինչեւ իսկ այն պարագային երբ տեղական դրամը անկում ունենայ որ եւ է պատճառաւ։

Ընդհանուր առմամբ կարելի է ըսել թէ փոխառութիւնն յաջողութեամբ փակուեցաւ. այսպէս օրինակ. Ֆրանսայի բաժինը եռապատիկ ստորագրուեցաւ մէկ օրուան մէջ, այսինքն ֆրանսացի դրամատէրները երեք անգամ աւելի գումարի մը համար առձանագրուեցան եւ 3000 ֆր. ուզողին 1000 ֆր. պարտաթուղթ միայն տրուեցաւ։ Պելճիքայի մէջ արձանագրութիւնն ութ օր տեւեց, Հոլանտայի մէջ առաջին շաբաթը 40 առ հարիւր միայն ստորագրուած էր եւ վերջ ի վերջոյ հրապարակ հանելու գործողութիւնն ստանձնող խմբակն ստիպուեցաւ իր յանձնարարողէջքի մէկ մասը գնորդներուն տրամադրել։ Նիւ Եորքի մէջ, դրամատէրները շատ տրամադիր չերեւցան ստորագրելու եւ մեծ մաս մը մնացած է տակաւին դրամատանց ձեռքը։ Լոնտոնի մէջ 90 առ հարիւրով հրապարակ հանուած պարտաթուղթերն արդէն կարելի է 88 առ հարիւրով գնել սակարանին մէջ։

Ինչպէս նախապէս ալ ակնթարկած ենք ըսելու, 5 ու կէս կամ 6 ու կէս տոկոսը ներկայ պարագաներուն մէջ շատ հրապուրիչ եկամուտ մը չէ ամէնքին համար, նամանաւանդ որ պարտապանը Գերմանիան է եւ ամէնքը միեւնոյն վստահութիւնը չունին անոր բարի կամեցողութեան եւ վճարելու կարողութեան վրայ։ Ամենայաղող արդիւնքը Ֆրանսայի մէջ միայն ձեռք բերուեցաւ եւ ատոր ալ պատճառն այն էր որ Ֆրանսայի հրապարակը շատ տրամադրելի գումար ունի եւ այսօր համեմատաբար իր թիւին, Ֆրանսան ամենահարուստ երկիրն է։ Անգլիոյ մէջ պաշտօնապէս արձանագրուած անգործներու թիւը երկու միլիոնի կը մօտենայ, Գերմանիոյ մէջ 2 ու կէս միլիոն է, Ամերիկայի մէջ ատոնց կրկինը։ իսկ Ֆրանսայի մէջ անգործ Ֆրանսացի գործաւոր գրեթէ չկայ։

Այս փոխառութիւնն, ինչպէս ըսինք, հետեւանքն էր Ընդդի ծրագրին, որուն ամենագլխաւոր եւ կենսական նպատակն էր Գերմանիոյ քաղաքական եւ պատերազմական տալիքը վերածել վաճառականական տալիքի. ընդհրցողներն անշուշտ կ'ըմբռնեն տարբերութիւնը, որ շատ կարեւոր է եւ որուն վրայ կ'արժէ երկարօրէն անդրադառնալ։

Պետական պարտք մը բռնադատուած է պարտաւորին, որ ստիպուած է ընդունիլ յաղթողի ամէն պայմանները, սրչափ ալ որ ծանր ըլլան անոնք. vae victis... բայց այդ պարտաւորը, որ կը ստորագրէ 10, 20, 30 կամ աւելի տարիներ վերջը վճարելի պարտաժուրհակներ, այլգան երկար ժամանակուան միջոցին կրնայ զօրանալ, բուժել իր վէրքերը եւ յարմար առիթի մըն ալ կրնայ ջնջել իր պարտքը, պէտք էր միջազգայնացնել փոխառութիւնը, այսինքն միայն այնպիսի շուկաներու մէջ հրապարակ հանել այդ պարտաթուղթերն, որոնց երկիրներուն հետ որ եւէ հաւանականութիւն չկայ թէ Գերմանիա կրնայ պատերազմի բռնուիլ։ Որչափ ալ որ տարամաբանական ըլլայ այս ձեւը, իրականին մէջ անզործադրելի է, որովհետեւ փոքր տէրութիւնները երբէք չեն կրնար այդչափ դրամ դանել եւ երկրորդ 5 ու կէս առ հարիւր տոկոսի մը սիրոյն ոչ մէկ պետութիւն պիտի ուզէ յառաջիկայ անպատահութեանց կամ բարդութեանց մատնել իր քաղաքացիները։

Պէտք էր մրագ ձեւով փոխառութիւն մը կնքել միակ դրամական հիմքով մը, եւ ոչ թէ բնը տարբեր պետութեանց հրապարակներուն վրայ բնը տարբեր դրամներով։ Այդպիսով դոնէ դժուար կ'ըլլար դիտնալը թէ այսինչ պարտաթուղթը ո՞ւր հրապարակ հանուած է. մինչդեռ հիմա ֆրանքով նշանակուած պարտաթուղթը զուլուի մը ձեռքն ալ որ դտնուի, Ֆերմանիա գիտէ թէ այդ պարտաթուղթը Ֆրանսայի մէջ ստորագրուած է եւ անոր առաջին տէրը Ֆրանսացի մըն է։

Եթէ մէկ տեսակ պարտաթուղթ հրապարակ ելած ըլլար, Գերմանիա մինչեւ իսկ պատերազմի պահուն կը վտանգուին եղած կարգադրութիւնները, բայց անկարելի էր, կ'ըսեն, ուրիշ կերպ կարգադրել։ Կամ պէտք էր մինչեւ ամբողջական վճարումը բանակները պահել Թշնամի հողին վրայ, ինչպէս ըրաւ Գերմանիա 1870ին եւ կամ յանձնառու ըլլալ ամէն հետեւանքներու։

Եթէ մինչեւ իսկ, կ'ըսեն անոնք, միայն մէկ տեսակ դրամով փոխառութիւն կնքուէր եւ Գերմանիա չդիտնար թէ ո՞ր դուռը որ երկրէն եկած է, պատերազմի պահուն ան կրնայ նախ վճարել ամէնը կրցածին չափ եւ յետոյ ժորթորիոմ պահանջել եւ պատերազմէն վերջն ալ, եթէ յաղթական ելնէ, ամբողջ իր պարտքերը բռնութեամբ փոխանցել Թշնամիներուն, իսկ եթէ յաղթուի, արդէն հասած կ'ըլլայ անանկութեան դուռը եւ խնդիրը ինքն իրեն կարգադրուած կ'ըլլայ։

Ամէն անոնք որ բիւզանդականն վէճերու կը մասնակցին ժոռաւոր թէ հեռաւոր ապագայի մը պատահելիքին վրայ, աւելորդ ժամավաճառութիւն է որ կ'ընեն անտարակոյս, որովհետեւ այսօր ինչ երաշխիք ալ որ առնուի, ինչ տեսակ վաւերաթուղթեր ալ որ ստորագրուին և կնքուին, չէ՞ որ կարելի է մէկ գրչի հարուածով այդ ամէնը քուրջի կտոր յայտարարել։

Որչափ առեն որ բիրտ ուժն եւ զէնքերն են որ պիտի ըլլան վերջին իրաւարարները, աւելորդ է արդարութիւն եւ պարկեշտութիւն սպասել իշխողներէն եւ դրամատէրներէն...։

Մ. Տ.

ՀԱՐԱՒ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԵՐԸ

(Շրջուն քարոզիչի մը վաւերական տեղեկութիւնները)

Արժանթինի Հայոց Թիւը

Դլխաւոր դաղութը ամփոփուած է Պուէնոս Այրէսի եւ անմիջական շրջանակներուն մէջ։ Պուէնոս Այրէս մայրաքաղաքն է Արժանթինի։ Հոս կը բնակին մօտ 10,000 Հայ, իսկ արուարձաններուն մէջ՝ 1 — 2000։ Գորտովա քաղաքը կը բնակին 2000 Հայեր։ Ռոզարիօ քաղաքին մէջ 400ի չափ, եւ Պորիսոլի մէջ ալ մօտ 100։

Արժանթինի Հայոց տնտեսական վիճակը

Արժանթինի հայ գաղութը եօթը կամ ութ տարուան կեանք ունի, թէեւ ասկէ 30 տարի առաջ Հայեր գացած էին հոն։ Այս հին Հայերէն կան յայտնի վաճառականներ, ինչպէս Սուքիասեան եւ Պերկամալի, որոնք մասնիֆաթուրայի գործ կ'ընեն, կայ նաեւ Նաչիկեան անուն ճարտարապետ մը։

Միւս Հայերը կը զբաղին արհեստներով, ինչպէս կօշկակարութիւն, դերձակութիւն։ Գործաւորները քիչ են։

Նոյնիսկ հայ դրագիրներ ալ կան արժանթինեան մեծ վաճառատուններու մէջ։ Զարմանալի կը թուի որ Հայերը շուտ կը սորվին սպանիերէն լեզուն։ Կան նաեւ երկու-երեք հայ բժիշկներ, որոնք վկայեալ են արժանթինեան բժշկական համալսարանէն։ Կը հաստատին նմանապէս քանի մը հայ փաստաբաններ։ Արժանթինի գոլէճները յաճախող հայ ուսանողներու թիւը 10էն աւելի է։

Ջուլումի վտանգը

Հայ կիներ եւ ընտանիքներ հոն ալ կան, բայց շատ շուտով կը ձուլուին եւ կ'արժանթինանան։ Ջնայելով որ վեց հատհատ մանկապարտէզ կայ միմիայն Պուէնոս Այրէսի մէջ, նոր սերունդը արագօրէն կը մոռնայ հայութիւնն ու հայերէնը։ Կարծես հայութիւնը ամէնէն առաջ եւ ամէնէն շուտ պիտի ձուլուի Արժանթինի մէջ։

Արժանթինի հայ մամուլը

Թերթ մը կը հրատարակուի «Արժանթինի» անունով, խմբագրութեամբ կեսացի Սերգօ Դասի, որ 20 տարի առաջ հաստատուած է հոն։ Այս թերթը երեք տարիէ ի վեր կը հրատարակուի պարբերաբար, այսինքն 15 օրն անդամ մը, եւ ունի հայերէն ու հայատառ թուրքերէն բաժիններ։

Ուրուկուայի Հայերը

Ուրուկուայի Հայերը կեդրոնացած են երկրին մայրաքաղաք Մոնթէվիտէոյի մէջ, որ Պուէնոս Այրէսի դիմացի եզերքը կ'իյնայ, Ռիօ տը լա Փլաթայի գետաբերանին անդիի կողմը, դիշերուան մը շոգենաւային ճամբու հեռաւորութեամբ։ Հոս կան 2000ի չափ Հայեր։ Բողոքականներու թիւը 200 է։ իսկ հայ կաթոլիկները աւելի քիչ են։ Այս վերջիններու պետն է Դեր. Քէչէճեան, Մարաշցի։

Մոնթէվիտէոյի լուսաւորչականն Հայերը ո՛չ եկեղեցի ունին եւ ո՛չ ալ քահանայ։ կը զբաղին խանութպանութեամբ, դերձակութեամբ, պատդուածոութեամբ։ կան նաեւ քանի մը հայ լուսանկարիչներ։ Քաղաքին սպանդանոց-դործարաններու մէջ կ'աշխատին հայ գործաւորներ։ Մոնթէվիտէոյի մէջ կը գտնուին Ամասիոյ Հասան Պէյլի գիւղէն եւ Հաճընէն Հայեր։ Հայ կաթոլիկները մեծ մասով Էնկիւրիցի են, նաեւ Մարաշցի։ Խարբերդի եւ Բալուի կողմերէն ալ Հայեր կան։

Պրազիլիոյ Հայերը

Սան Փաւլօ քաղաքը գլխաւոր կեդրոնն է Պրազիլիոյ հայ գաղութին։ Հոս կան 2500ի չափ Հայեր։ Յետոյ կուգայ Մանթոս, ուր հաստատուած են քանի մը հարիւր հայրենակիցներ։ Ռիօ տը Ժանէյրօ, որ Պրազիլիոյ մայրաքաղաքն է, ունի 50ի չափ Հայեր։ Հոս հոն ցրուած եւ շրջուն մանրավաճառութեամբ զբաղող քանի մը հազար Հայեր ալ կան։ Հայ լուսաւորչականները ունին եկեղեցի մը, Ռըզգալա Ճորճի տրամադրած տան մէջ։ 2 — 300 բողոքականներու եկեղեցին ես կազմակերպեցի, իսկ կաթոլիկ Հայերը կազմակերպութիւն չունին։

Պրազիլիոյ Հայերուն տնտեսականը

Այս ուղեւորութեանս ընթացքին երկու անգամ այցելեցի Պրազիլ։ Հայերը ամուր տնտեսական մը ստեղծած են իրենց համար։ Սան Փաւլոյի մէջ կան 20 հատ կօշիկի հայ գործարաններ, որոնց տէրերը մեծ մասով Մարաշցի են։ Հոն Հայերը խանութպանութիւն ալ կ'ընեն եւ արդուզարդի կամ հագուստեղէնի վերարկուներ ալ կը պատրաստեն։

Պէտք է ըսեմ թէ կօշիկի գործը որ երկար ատեն է ի վեր հոն եւ ստուարաթիւ Սուրիացիներու (անոնց թիւը 1,000,000 ցոյց կուտային ամէէ առաջուան մարդահամարները, Սուրիացին եկող եւ Պրազիլի մէջ ծնածներով միասին) ձեռքն էր, այժմ անցած է Հայերու, որոնք շատ ուժեղ մրցում մը ստեղծած են եւ գրաւած են հրապարակը, վաղելով լաւ վարկ, եթէ շարունակեն այսպէս։

Հալէպցի արաբախօս Հայը, Պ. Ռըզգալա Ճորճ, մըլիոնատէր մըն է եւ ունի արտերի մեծ գործարան մը։ Այս Հայը հարստացած է թէ՛ իր գործարանին եւ թէ կալուածային առեւտուրի միջոցաւ։ Պ. Ռըզգալա Ճորճ, Հայկական օգտակար եղած է անց եալին մէջ, եւ օգտակար է ներկայիս։ Միւս միլիոնատէրն է Միհրան Լաթիֆ, որ այժմ մեռած է։ Ասոր կինը իտալացի ըլլալով, զաւակները հետզհետէ կը մոռնան իրենց հօր ազգութիւնը եւ գրեթէ կապ չունին Հայերու հետ։

Պէտք է յիշեմ նաեւ անունը Լազարօ Նազարեանի, որ թէեւ միլիոնատէր չէ, բայց շատ օգտակար անձ մը եղած է Հայերու, շարունակ ի նպաստ իր ազգակիցներուն դիմումներ կատարելով պրազիլեական կառավարութեան մօտ։ Պ. Լազարօ Նազարեան շատ ազդեցիկ բարեկամներ ունի Պրազիլցիներէն։ Ինք բնիկ Խարբերդցի է եւ հայրը՝ նախկին քարոզիչ Հայկակ Խազոյեանի, որ զորգավաճառութիւն կ'ընէ Գալիֆորնիոյ Փասատենա քաղաքին մէջ։ Լազարօ Նազարեան 40 տարիէ ի վեր Սան Փաւլօ կը գտնուի և բարեկեցիկ է։

Յիշենք նաեւ Գիւտ Մխիթարեանը (նախկին եպիսկոպոս) որ տեղւոյն խելահաս եւ ուշադրաւ Հայերէն է։ Այս երկու Հայերը փերեզակութեան (պաղիրկեան) խանութներ ունին։

Արժանթինի Հայերուն Թիւը կը դնահատեմ մօտ 15 հազար, Ուրուկուայի Հայերունը՝ 2000, իսկ Պրազիլիոյ Հայերունը՝ 5000։ Ուրեմն այս երեք երկիրներու Հայոց Թիւը շուրջ 21,000։ Ա-ստնք գնահատութիւններ են։ Մնայ եւս աւելցնեմ որ Հարաւային Ամերիկայի հայ գաղութները տնտեսապէս աւելի կը բարգաճին, բաղդատելով իրենց հաստատման տարիներուն հետ, քանի բարգաւաճած են Միացեալ Նահանգաց Հայերը։ Միայն ցաւն հոն է, որ Հարաւային Ամերիկայի Հայերը շուտով կը կորսնցնեն իրենց ինքնութիւնը եւ նոր սերունդները այլեւս գրեթէ կը դադրին Հայ ըլլալէ։

ԹՈՒՐՔԻՈՅ ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Մեր աշխատակիցներէն Պ. Թորոսեան՝ որ մի քանի տարի մաս կը կազմէ «Էնցիփորմասիոն» խմբագրութեան, սոյն թերթի մէջ յօդուած մը գրած է Թուրքիոյ մէջ վերջերս հաստատուած պետական պանքային կազմակերպութեան մասին։ Յօդուածը կ'ամփոփուի հետեւեալ կերպով.

«Թուրք կառավարութեան պատրաստած օրինագիծը եւ կազմած գուհերիացի մասնագէտի մը քննութեան, մ'ապահովեցուցիչ Լոզանի Համաժողովին եւ նախկին տնօրէն երկրագործական պանքային։ Այս պարագային մասնագիտական մանրամասնութիւնները հիմնապէս ուսումնասիրուած են։ Հարկ է միայն նալ թէ՝ մասնագէտին բոլոր լազրութիւնները ալ նկատի առած են։ Ընոնք՝ որոնց ծանօթ է Թուրք դեկավարներուն մտածելակերպին մէջ ունեցած անփոխարինելի դերը, իրաւունք ունին սկսելու քիչ մը կասկածոտ։

Օրէնքներն ու կազմակերպութեան կանոնագիրները — որքան ալ տարեալ ըլլան — չեն բաւեր ջոգապէս կառավարելու ընկերութիւն մը կամ դրամատուն մը։ Ինչ որ կարեւոր է, այդ օրէնքներն ու կանոնագիրները յարուցանելու կամեցողութիւնն է։ Պարագայի մէջ, իրողութիւնը կայ մէջտեղը, որ փոփոխութիւն մը գոյց կուտայ Թուրք վարչականներու մտածելակերպին մէջ։ Դարեր, ինչպէս որ մեր փորձած վերոյիշեալ օրէնքը կուտայ, Թուրք կառավարիչները, հակառակ իր սկզբնական ծրագրին, բարեյաջող գաղափարներ ունեցած է պարտաւորիչ չդրամատան համար անհրաժեշտ դրամագլուխին ստորագրութեան։ Ասկէ զատ, օրէնք բացատրելի սահմանած չէ ստոր դրամատներուն՝ զորս ազատ Թողած է տական նոր դրամատան հետ նեղնելիք իրենց յարաբերութիւններուն մէջ։ Ուրախ ենք տեսնելու այս պարագան որ միայն կատարելապէս նպաստաւորէօսմ.ազգային տնտեսութեան այլ նաեւ համաձայն է շրջուն այն կազմակերպութեան եւ հաստատութեանց՝ Թուրքիոյ հետ ելմտական յարաբերութիւններու մէջ ունեցած։»

ԳՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՄԷՋ

Ամբողջ Պաղեստինի մէջ շարունակուին զրզռութիւնները Աքքայի շրջաններուն մէջ։ Նուագ Հրեաները սկսած են թել դէպի երուսաղէմ։ Զինուորական պաշարման գրութիւն կը մնայ Աքքայի մէջ ամէնէն աւելի գրգռուած բարբառները։ Երուսաղէմի մէջ բարբառներու խանութները գոցուն եւ բոլոր հրէական շաններն ու արձանագրութիւնները վար կ'առնուին։ Զինուորականներ կը հսկեն ջրքին մէջ ընդհանուր ապստամբեան։ Անգլիացի ոստիկանութիւնը խիստ միջոցներ ձեռք առած է դտնելու համար այս գրութիւններուն հեղինակները։

ԿԻԼԻՊԷՆԿԵԱՆ ԿՏԱԿ ԿԱ՞Ց

Նիւ Եորքէն կը հաղորդեն թէ յայտնի չէ թէ հանգուցեալ Պատրիկ Կիլպէնկեան որ եւ է կտակ ըրա՞ծ է ազգին թէ ոչ։ Բայց եւ այնպէս, կը կարծուի որ կարեւոր գումար մը յատկացուցած է ազգային կարիքներուն, եւ մասնաւորապէս Հալէպի մէջ մայրանոցի մը հաստատման, ի յիշատակ իր հանգուցեալ տիկնոջ։

Այս առթիւ յիշենք թէ հանգուցեալին եղբայրը, Կիլպէնկեան, որ եղերական պարագաներու տակ սպաննուեցաւ, Պատրիկ Կիլպէնկեանի զաւկին՝ Սերովբէի հետ, 400,000 տոլարի կտակ մը թողուց ազգին։

ՀԱՅԱՍՏԱՆ

ՍԻՖԻԼԻՍ

Ազբաբա (Լէնինականի շրջան) վարակուած է սիֆիլիսով, զոր բերած էին թուրքերը իրենց զինուորներուն հետ: Վերջերս այդ շրջանը ղրկուեցաւ բժշկական խումբ մը, պայքարելու համար սիֆիլիսին դէմ:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Այս միջոցիս Երեւանի Հայ Թատերախումբը ամբողջութեամբ կը գտնուի Մոսկուա, ուր կը կատարուի գեղարուեստական ողիմպիական մը: Միւս կողմէ Մոսկուայի գեղարուեստական երկրորդ Թատերախումբը Հասած Էնբեւան, ուր պիտի խաղայ «Ծղրիթը վառարանի վրայ» (Ցիքընս), «Ձուկակ» (Պիւնոգենոֆ): Այն ատեն Հայ Արուեստի Տան մէջ պիտի տայ երկու գեղարուեստական երեկոյթներ, առաջինը նուիրուած Լ. Տոլստոյի, Դոստոյեւսկիի, Ա. Չեխովի ստեղծագործութեանց (արտասանութիւն, ընթերցում ևլն.), իսկ երկրորդը արտասանութիւններու՝ այս կամ այն թատերգութիւններէն (Լ. Տոլստոյի «Իվան Ահեղի մահը»). Ա. Տոլստոյի «Պետրոս Ա.»ը, Սուխովօ Կոբիլի «Գործը», Բերդերի «Հեղեղը»), զոր կարելի չափի ըլլայ ներկայացնել Երեւանի բեմին վրայ ազգային պակասութիւններու պատճառով:

Քանի մը տեղեկութիւններ այս Թատերախումբին մասին.—

Մոսկուայի գեղարուեստական երկրորդ Թատերախումբը հիմնուած է 1903ին, առաջին անգամ ներկայացնելով Հուլսմանի «Յոյսին կործանումը»: Ղեկավարն էր Ստանիսլավսկին, իսկ բեմավարը՝ Սուլերժիցկին (Լ. Տոլստոյի քոռտուզրը): Թատերախումբին կը մասնակցէր նաեւ Չեխով, որ խաղացած է Համլէթ: Դարձեալ, այս խումբին մէջ կայ նաեւ Հայ մը, Սուրէն Խաչատրեան:

ԱՐՈՒԵՍՏՆԵՐՈՒ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ

Ինչպէս գրեցինք, յունիս 15ին Մոսկուայի մէջ բացուեցաւ արուեստներու ողիմպիականը, որ պիտի տեւէ մինչեւ յուլիս 15ը: Մասնակցին 18 Թատերախումբեր 14 լեզուով, 10 երաժշտախումբեր, 9 շարժանկարի կազմակերպութիւններ: Բացման խօսքին մէջ ծերունի Ֆէլիքս կոն ողջունած է «ագգերը» իբրեւ «երկրի տէրեր» եւ ոչ թէ հիւր: Լուսնարսկի եւս խօսք առնելով, անդրադարձաւ «ազգային հարցի» մասին.—

«Երէք տարագ կայ ազգային մշակոյթներու բնորոշման: Առաջին տարազն է՝ ազգային մշակոյթ թէ ըստ ձեւի եւ թէ ըստ բովանդակութեան:

Երկրորդ տարազն է՝ միջազգային մշակոյթ թէ ըստ ձեւի եւ թէ ըստ բովանդակութեան:

Երրորդ տարազն է՝ մշակոյթ ձեւով ազգային, բովանդակութեամբ միջազգային: Այս վերջին տարազն է, զոր կ'իւրացնէ կոմունիստ կուսակցութիւնը:»

Հայ Թատերախումբն ալ կը մասնակցի այս ողիմպիականին:

ԻՆՖՆԱՇԱՐԺԻ ՎԱՐԻՉՆԵՐՈՒՆ

Բժշկական կաճառը տեղեկագիր մը ներկայացնելով, կը խօսի այն արկածներուն մասին, որոնք յաճախագէպ դարձած են, քանի կը շատնայ ինքնաշարժներու թիւը:

Բժիշկները կը նկատեն որ ինքնաշարժի արկածները արդիւնք են մեքենավարներու գինովութեան, ջղային թաքուն հիւանդութեանց յառաջգման, պատերազմի վէրքերուն (գանկի վրայ), գարաշրջանի անհանգիստ ու խռովահար ոգիին, արագութեան մարմաջին, գոյութեան պայքարի սրութեան: Նոյն ատեն կը յիշեցնեն, որ փողոցներու ձեւը ճնշելով նոյնը, երբեք բարեփոխութիւն մը չի նշմարուիր քաղաքաշինութեան մէջ, որ համապատասխան ըլլար տեղափոխութեանց արագութեան կամ դիւրութեան կշռոյթին: Այսպէս փողոցները կը շինուին խաչաձեւումներով, որոնք աւելի եւս կը նպաստեն արկածներուն: Փողոցներու գիծին տալով տարբեր ուղղութիւն մը, պարզապէս փոխելով քաղաքներու երկրաչափական պատկերը, թերեւս նուազ պատահէին արկածները:

Բժշկական կաճառին տեղեկագիրը, սակայն, իբրեւ անմիջական պահանջ կը ներկայացնէ հետեւեալ կէտերը.—

Կառք վարելու արգելք դնել բոլոր անոնց վրայ, որոնք 1—20 տարեկան չեն դեռ, 2.—ջղային կամ երակային հիւանդութիւններ ու վէրքեր ունեցած են, 3.—անդամատեաց են եւ բնախօսապէս տկար:

Արտօնագիրները փոխել երեք տարին մէկ անգամ, ամէն արկածէ վերջ, եւ գինովութեան պարագային:

Որպէսզի հասկցուի այս տեղեկագրին արժէքը, աւելցնենք որ փրոֆ. Քլօտ կ'ըսէ թէ «բազմաթիւ են խեղութերը, որոնք կը պտրտին փողոցներուն մէջ, թէեւ ոչ ոք խեղի կը կարծէ զանոնք»:

ՎԱՆԻ ՄԷՋ 50 ԸՆՏԱՆԻՔՆԵՐ ՄԻԱՅՆ ԿԸ ԲՆԱԿԻՆ

Վերջերս վանէն Մուսուլ ապաստանած հայ մը հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ վասպուրականի եւ վանի այժմու վիճակին մասին.—

Մինչեւ օրս Հայերու բացակայութեամբ, վան-վասպուրական ամայի եւ աւերակ պատկեր ունի:

Քէմալական եւրոպականացումը ոչէ ձեւով մուտք գտած չունի վանի մէջ վերաշինական աշխատանքներ գոյութիւն չունին: Եղած բնակչութիւնը հաւաքուած է քանըրշին եւ շրջակայքը: Ռուն քաղաքին մէջ հազիւ յիսունի չափ ընտանիքներ կան նստած:

Պատերազմի ընթացքին աւերակ դարձած տուները եւ փողոցները նոյն աւերակ վիճակին մէջ են: Միակ նոր կառուցուած շէնքը կարելի է համարել կառավարչատունը, որ աւերակ տան մը վերանորոգումով եղած է:

Ամբողջ վասպուրականի բնակչութիւնը խիստ գանգատ է: Ամէնէն բազմամարդ գաւառը Հայոց Ձորն է, որու բնակիչներուն մեծագոյն մասը թաթարներ են եւ դժգոհ իրենց վիճակէն: Հայկական հարիւրաւոր գիւղեր գրեթէ ամայի են դեռ:

Կառավարութիւնը, ըստ իր բարի սովորութեան, տուրքերու տակ կը ճնշէ ժողովուրդը: Բացի հազար ու մէկ անուան տակ գանձած տուրքերէն, այժմ ալ կենդանիները ապնուացնելու մտօք «ընտիր տեսակէն» «պուղա»ներ կը ղրկէ գիւղերը ու փոխարէն՝ հակառակ ժողովրդի գանկութեան՝ 120 մէճիտիէ վարձք կ'առնէ: Վերջապէս, հազար ու մէկ «վէր սօրմա»ներ կան, գատարկ գանձը լեցնելու համար:

Մոխրաբերդ եւ Աղթամար վանքի դրսի տուները ծովի ջուրերով ծածկուած է: Աղթամարի շէնքերու աւերակ պատերէն մէկ քանին միայն զերծ մնացած են այդ աղէտէն: Միւնոյն բախտին արժանացած են Հայոց Ձորի խարականոց գիւղը եւ Խորգոմը:

Վանայ ծովի յառաջխաղացումներու պատճառաւ յիշեալ գիւղերու շրջապատի 5-6 կոտոր գիւղերը անբնակելի դարձած են: Ռուն քաղաքի աւերակ պարիսպներու առջեւ հասած է ծովը եւ ժամանակ մը ի վեր Զայիրլը կոչուածը ծածկուած է ջուրով:

Ոչէատեն վանի ծովը այսքան գգալի խաղացք չէր ունեցեր: Ըստ ծերունիներու պատմածին՝ 50-60 տարի առաջ Ատրամետի եւ գերաշէնի ճամբան Ւանի խոկէլէն 100 քալէ անդին կը գտնուէր. իսկ մօտ 80 տարի առաջ Խորգոն եւ Նարականց գիւղէն, ուղիղ գծով ղաթամար կ'երթեւեկէին:

ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԱՐԶԱԿԱՆ ՓՈՐՁԵՐԸ

Շաբաթ 5 յուլիս, կէս օրէ յետոյ, Սեւրի Մուրատեան վարժարանի մարզարանին մէջ տեղի ունեցան աշակերտներու տարեկան մարզական ընդհանուր փորձերը ուսուցիչներու, ծնողքներու ինչպէս նաեւ համակիրներու ընտիր բազմութեան մը առջեւ:

Պատերազմական նախարարութեան կողմէ տրամադրուած մարմնակրթանքի ուսուցիչ Հարիւրապետ Gauglinի առաջնորդութեամբ, աշակերտները իրենց մարզական համազգեստներով ասպարէզ իջան «Ցառաջ Նահատակ» քայլերգով, եւ գեղեցիկ ու համաչափ տողանցք մը կատարելէ յետոյ, իրենց հոգւմէական բաբեւը տուին ներկաներուն:

Ցետոյ յայտագրին համաձայն, վարժարանին երկու մարզական խումբերը փոխն ի փոխ կատարեցին շուէտական, գործնական եւ մարմնի ազատ մարզանքներ՝ներկաներուն ջերմ գնահատանքին եւ ծափերուն արժանանալով: Տիճերու խումբը սարքեց նաեւ voley-ballի հետաքրքրաշարժ մրցում մը: Մասնաւոր ուշադրութեան արժանացաւ պ. Յակոբ Ճինկէնգեան, իր ճկունութեամբ ձեռք բերած յաջողութեանց համար:

Ժամը 6ին ծնողքները եւ ներկաները մեկնեցան խանդավառ՝ պատանիներուն յաջողութեամբ, վարժարանի ցեսչութիւնը ա՛յնքան փութկոտ ու բծախնդիր է սաներուն մարմնական զարգացման, որքան անոնց կրթութեան եւ դաստիարակութեան գժուարին գործին:

Ց. Տոպաճեան

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Գերմանական թերթ մը պատրաստած է գուգակը բոլոր այն գիրքերուն, որոնք կը խօսին պատերազմի մասին: Եւ շատ են այդ գիրքերը: Եւ շա՜տ է սպառումը: Կը նշանակէ թէ, հակառակ խաղաղութեան ճառերուն, մարդիկ աւելի կը սիրեն պատերազմը: Թնդանօթներուն պում—պումը քան գինեձօնքի պահերու փրփուրին ֆշֆշումը:

Ռէմարքի գիրքը 910,000 օրինակ, Ռէնի գիրքը (պատերազմ) 125,000, Ս. Զուայգի գիրքը 80,000, պէօմէլկուրկի գիրքը 70,000, Եունգէրի գիրքը (պողպատի փոթորիկներ) 45,000: Եւ գնո ուսանողներ, որոնք կը պատմեն իրենց պատերազմի յուշերը, Պրոննէօյի մի շատակներըը, ֆոն տէր Վրինկի գիրքը, ամէնէն քիչը 20,000 օրինակ սպառած: Եւ նկատի ունենալ, որ բոլոր այս վերջին գիրքերը կը փառաբանեն պատերազմը:

ՔՕՆԸՆ ՏՈՅԼ ՄԵՌԱՒ

Ծնած էր 1859ին Էտիմպուրկի մէջ: Զաւակն է եկեղեցականի մը: Բժիշկ էր: Բայց 1887ին յայտնուեցաւ իբրեւ գրող, տալով ուսումնասիրութիւններ: Ցետոյ հրատարակեց վէպեր, որ ծանօթ են հիմա բոլոր պատանիներուն: Արդարեւ, ո՛ր պատանին չէ կարդացած «Շէրլոք Հոլմսի արկածները»: Իբրեւ գինուորական բժիշկ, մասնակցելով պօէրներու դէմ բացուած պատերազմին, երկու գիրք եւս տուաւ այդ կռիւներուն մասին:

Վերջին տարիներս, ինքզինքը նուիրած էր ոգեհարցութեան, եւ նախագահն էր ոգեհարցներու Դաշնակցութեան կեդր. վարչութեան:

Անգրագառնալով իր վէպերուն, աւելցնենք, որ անոնք կը կազմեն գրական սեռ մը, «ոստիկանական վէպ» անունով: Ի՜նչ է արժէքը կամ յատկանիշը այդ սեռին, — ուշադրութեան վէպն է այդ, որ կը սրէ գիտելու եւ հետեւութիւն մը հանելու կարողութիւնը: Այսպէս մաթեմաթիքական աշխատանք մը կը դառնայ իր վէպը, որ ընթերցողին կուտայ ոչ միայն սրատեսութիւն, այլ նաեւ տրամաբանական երեւակայութիւն:

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԻԱՆԴԱՆՈՑ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Մզկիթէն յետոյ, Փարիզ կ'ունենայ նաեւ իր իսլամական հիւանդանոցը: Արդէն հիմնուած են բուժարան մը, գործի զետեղման գրասենեակներ, ճաշարաններ եւ ապաստաններ իսլամներուն, մասնաւորապէս հիւսիսային Ափրիկէի բնակիչներուն համար:

Եւ ահա փարիզի քաղաքապետութիւնը առաջարկ մը եւս կը ստանայ, հիմնելու համար հիւանդանոց մը, մօտ 200 անկողինով: Հիւանդանոցը պիտի շինուի փանթէնի գերեզմանոցին հիւսիսային կողմը:

Ֆրանսայի մէջ հիւսիս-ափրիկեան իսլամներուն թիւն է 150 հազար:

ՍԱՐՇԱՏ ՈՂՋ Է

Հիմնուելով տրուած սխալ լուրի մը վրայ, «Ցառաջ»ի 26 յունիսի թիւով, հաղորդեր էինք մեր վաստակաւոր ընկերոջ Սարհատի մահուան լուրը: Ափ, իր ձեռքով իսկ գրուած նամակ մը, ուրախ ենք յայտնելու թէ կը հերքէ ցաւալի լուրը, որուն տուն տուած է ինքնաշարժի արկած մը որմէ բարեբախտաբար, անվնաս ազատած է ընկերը Սարհատ եւ ներկայիս կը գտնուի Թիրանա (Ալպանիա):

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ցոյլ տուէք ձեր Ցերթի միջոցով շնորհակալութիւն յայտնելու Ռանկունեաքնակ (Հնդկաստան) ցիար Աւաքել կ. Մարտիրոսեանին, որ մեր վարժարանին այցելելով խանդավառեց մեր աշակերտութիւնը եւ 5 ստերլին նուիրեց դպրոցին:

Պուլվար-Օտտոյի նախակրթ. մանկապարտէզի տնօրէնը
Մարսէյլ 6 յունիս ԱԶԳԻՆ

ՅՈՒԻՍԻ ՓԱՐԻԶԻ ՎՐԱՅ

Երբ փարիզցիները փողոց ելլեն, ժամ մը փողոցներուն մէջ պտրտին եւ յետոյ թաշկինակը տանին իրենց քիթին, կը սեւնայ թաշկինակը: Ծուխի սեւ ու մանրտրտիկ հատիկներ կը թրթռան փարիզի օդին մէջ:

Մաքրելու համար փարիզի օդը, հազար միջոցներ են խորհած գիտուններն ու քաղաքապետութիւնը: Ի զո՞ւր: Գործարանները, հինգշաբթիները օրէ օր աւելի կը թանձրացնեն օդը, եւ ծուխը կախուած կը մնայ փարիզի երկինքին վրայ:

Եւ փարիզի ոստիկանական տեսուչը, քիւփ, հրահանգ տուած է գործարանատէրերուն, որպէսզի միջոցներ գտնեն արգիլելու համար ծուխը:

1929Ի ԾՆՈՒՆԴՆԵՐԸ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

Սուրիական կառավարութեան կողմէ կատարուած սթաթիսթիք մը գոյց կուտայ որ 1929 տարուայ ընթացքին Սուրիոյ մէջ ծնած են 47182 երկսեռ երեխաներ, 35,535 մահմետական սիւննի, 251 ոչ սիւննի մահմետական, 3030 Օրթոտոքս, 1757 կաթոլիկ, 586 Հրեայ, 2864 Տրուզ, 562 Ալաուիթի, 579 իսմայիլացի եւ 1333 Հայ:

Իսկ օտար ծնունդները եղած են 73 ֆրանսացի, 6 իտալացի, 3 ամերիկացի, 55 պարսիկ, 40 յոյն, 236 թուրք եւ 356 զանազան ազգութիւններէն:

Կարդացէք և Տարածեցէք ՅԱՌԱՋ

ԱՆԴՐԱՆԻԿԻ ՅՈՒՇԵՐԸ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

Հոգւոյ նամակներուն չպատասխանելնուս՝ նա եկաւ մեր քովը հետը բերելով 500 բերդանի փամփուշտ: Մինչեւ էդ ատեն մեր 95ին տարած ղէնքերէն 1 բերդանկա, 1 ատրձանակ ու բերդանի 150 փամփուշտ բռներ էր Թուֆուռնի մը զօշին, երկու հրացան ալ, ինչպէս վերը յիշեցինք, Տիգրանն ու Մկրօն տարած էին Ցոռնք, մեզի Ղզըլ Աղաճ ձնացեր էր 4 բերդանկա, 1750 փամփուշտ եւ 6 ատրճանակ:

Հոգւոյը նստեցաւ քովերնիս: Մենք ըսինք. «Ա՛յ մարդ, դուն եկար Ռումանիա 93ին (գրեթէ 94ին), կազմակերպեցիր բաւական տղայ, 50 հոգի բերիր կռիւ: Այդ տղաներու գրեթէ մեծամասնութիւնը սպաննուաւ. դուն բռնուար, բանտարկուեցար՝ ապատուեցար: Մաս մը ընկերներդ բանտերու մէջ կը հեծեծեն: Մէկ խօսքով մեզ խմցուցիր, գինովցուցիր, ձգեցիր գեհերու մէջ, հիմա ալ դուն նստած հեռուէն մեր վրայ կը խնդաս: Մենք կը խնդրէինք քենէ, որ ընդհ. ազգի շահը քո անձնական եւ տնային շահերուդ հետ չփոխես, գաս անգնիս գործի գլուխ, շարունակես թղթակցութիւնդ: Ես գրիչէն տկար եմ, Սերոբը գրել կարդալ չգիտէ»:

Սարի Սերոբի ունեցած գործունէութիւնը պատմեցինք: Նա սկսեց աչքերից արտասուք թափել եւ լալ: Նա որ լաց եղաւ, մենք ալ բոլոր ընկերներովս սկսանք լալ: Բոլորիս մէկ լուութիւն կը տիրէր:

Այդ ատեն եկան գոմերցի տղայ մը եւ գառնեցի երիտասարդ մը: Նամակ մը դրին ձեռքս՝ հասցէն իմս էր: Բաց արի, տուի Հրայրին՝ «կարդա՛յ, տե՛ս ի՛նչ է» ըսի:

«Սիրելի պարոյր (այն ժամանակուան իմ անուս),— այդպէս էր գրուած նամակի վէրջ,— Հաւատորիկ գրած նամակներդ Մշոյ Հարուստներուն՝ բոլորը յանձնուած են իրենց տէրերուն: Քեզ Մուշ կը կանչեմ: Այս գրաբերիս հետ երկու բջիկ մածուն կը շալկես, շորեր կը փոխես, ծպտեալ կուգաս Մուշ, Առաջնորդարան: Վարդան վարդապետը խոստացաւ թէ՝ «Թէկուզ կախաղան ելլամ՝ ես ալ ձեռքէս եկածը պիտի ընեմ, ես խօսամ էդ հարուստներուն»: Երբ Առաջնորդարան գաս՝ ինծի լուր կուտաս, ես, դուն եւ բանտարկեալ Սաքօն պիտի խորհրդակցինք եւ գրաւոր յանձնեն Հարուստներուն»:

Այդ նամակը գրողը Մշոյ կազմած կոմիտէն էր: Իմ խօսակցութիւնս ոչ մչեցոց Հայերէնին էր նման, ոչ Թուրքերէնս այդտղի Թուրքերէնին, քիւրտերէն ալ չգիտէի: Այդ պատճառաւ ընկերներս, նաեւ Հրայրը Թոյլ չտուին Մուշ գնալու: «Ուրեմն, ըսի, ամէնից յարմարը դուն ես, պ. Հրայր, մեր կողմից դուն պիտի խօսաս մեր պահանջների մասին»: Հրայրը համաձայնեց, միայն ըսաւ, որ նամակ մը գրեմ եւ գինքը ներկայացնեմ իմ տեղս՝ ես համաձայնեցի եւ գրեցի այսպէս.

«Սիրելի եղբայրներ, իմ հետս խումբ մը կար, այդ խմբի եւ հոս ունեցած գործերուս պատճառաւ ես չկրցայ գալ, ուստի որոշեցինք մեր նախկին խմբապետ Հրայրին, որը աւել հմուտ եւ փորձառու է քան թէ ես եւ որը կը խօսայ ամէն բան ձեզի: Ինչ որ խօսայ, մեզնից խօսացած կ'ըլլայ եւ ինչ համաձայնութեան գաք՝ գրաւոր տեղեկացրէք Սերոբին եւ ինձ»:

Նամակը ուղարկեցինք այդ սուրհանդակի հետ:

* * *

Ինչ կը վերաբերի ճէպայիրի սպանութեան՝ հոդ եղած 2-3 գիւղերէն երկու լրտես չկրցայ գտնել: Որոշեցի այսպէս եւ խօսագի ընկերներուս.

«Ցղե՛րք, մեր ունեցած փամփուշտները կը կապենք շորերի տակից, մի-մի կարգ ձգենք ժակէտներու տակից. բերել կուտամ 8 հատ զօրքի շոր, 8 հատ փէս, երկու տղայոց ալ քիւրտական շոր, գլուխին մի-մի քօլոզ՝ իբրեւ մեզ առաջնորդող: Երեկոյեան ժամ մը մնացած մութին՝ կը հասնինք ճէպայիրու Ուզա-Աղբիւր գիւղը (Պղղըլ-Աղաճէն կէս ժամ է. մեր նստած տեղէն Ուզա-Աղբիւր կ'երեւար): Ճանապարհից դուրս կ'ելլանք. եթէ մարդ պատահեցաւ ճանապարհին սէլամ ալէօքիւմ կ'ըսենք եւ կ'անցնինք: Հոն հասնելնուս՝ եթէ բախտաւոր ըլլանք, արդէն ճէպայիրը հոն կ'ըլլայ, իսկ եթէ նա քէօշքը չըլլայ, կը սպաննենք տղան, կինը, կը վերցնենք նաեւ մեզի եղած 4 հրացանը, եթէ կրցանք՝ կը վերցնենք նաեւ դրամը, որ լսելով 1000 ոսկու կը հասնէր, զուվերնուս նաեւով քէօշքը կը վառենք ու կը հեռանանք: Քիւրտ հաւարը հեռու է, նա մեզ չի հասնիր, հայերը արդէն տեղերնուց չեն շարժիր»:

Ընկերները համաձայնեցին այս բանին, եւ լուր ղրկեցինք Մուշ շորերի համար: Այդ պիտով մենք վրէժն առած կ'ըլլայինք Սաքոյի եւ իր ընկերոջը:

(Եար.)

Նոր կռիւներ Եգիպտոսի մէջ

Գահիրէէն հասած տեղեկութեանց համաձայն, հակակառավարական մեծ ցոյցի մը ընթացքին, Թանթայի մէջ, ամբոխը յարձակում գործեց ոստիկանատան մը վրայ եւ վիրաւորեց տասնրհինգ ոստիկաններ։ Այս դէպքին հետեւանքով քաղաքին մէջ, խռովութիւնները սաստկացան։ Ժողովուրդէն 70ի չափ անձեր ձերբակալուեցան։

Հռենոսի միջադէպերը

Ֆրանսական թերթերը կը շարունակեն արձանագրել, Հռենոսի պարպումին հետեւանքով՝ կարգ մը քաղաքներու մէջ գերման ազգայնականներու կողմէ անյատողականներու վրայ գործուած յարձակումներ։

Մասնաւորաբար Թրէվի մէջ (Մոզել գետին վրայ), ժանքերը չափազանց գրգռուած են եւ նոր խռովութիւններու կը սպասուին։ Կառավարութիւնը կը ջանայ ուժեղացնել կարգապահական միջոցները։ Ոստիկանները զինուած են հրացաններով եւ արտասուաբեր թունաւորումբերով։ Առջի գիշեր, հազարաւոր անձեր հաւաքուած էին քաղաքին կեդրոնի հրապարակը։ Ամբոխը սպառնալիք կարդաց ոստիկանութեան, որ ստիպուեցաւ պարպել բազմաթիւ փողոցներ։ Զինուորական ուժ կը ղրկուի, պահպանելու համար կարգը։

Թրէվի արուարձաններէն մէկուն մէջ, ամբոխը քանդեց վաճառականի մը տունը, իբր համակիր դաշնակիցներուն։

Յուցարարներու պետերը, ինքնաշարժով կը շրջին քաղաքին մէջ, ամբոխին կը ժամանչեն կողոպտուելիք տուներն ու խանութները եւ ոստիկանութիւնը չհասած, կը հեռանան կ'երթան։

Ընկ. ապահովագրութեանց դէմ

Մինչեւ երէկ, Ֆրանսայի զանազան քաղաքներուն եւ ճարտարուեստական կեդրոններուն մէջ՝ արձանագրուած բողոքի ցոյցերը՝ ընդդէմ ընկերային ապահովագրութեանց օրէնքին, կը հասնին 111ի։

Դժգոհութեան շարժումը մասնաւորաբար աւելի սաստիկ է երկրին հիւսիսային մասերուն մէջ։

Սոմի շրջանին մէջ, 4000 բանուորներ, մերժեցին գործադրան մտնել եւ թափօր կազմած՝ թաղէ թաղ պտտեցան բողոքելով օրէնքին դէմ։ Գործատէրերը եւ բանուորական ներկայացուցիչները բանակցութիւններ ունեցան։ Բանուորները կը պահանջեն ապահովագրութեանց սակին համապատասխան օրավարձքի յաւելում։ Ժամանակաւոր համաձայնութիւն մը գոյացաւ եւ գործաւորները սկսան աշխատիլ։

Լիլի մէջ, երկու համայնավարներ ձերբակալուեցան։

Անգլիա կը զօրացնէ նաւատորմը

Պատերազմական նաւերու շինութեան յատկացուելու համար, հրատարակուած տեղեկագիր մը պահանջ կը դնէ 208,200 անգլ. ոսկիի յաւելուածական վարկի մը, որ չէ մտած ընթացիկ տարուան ելմտացոյցին մէջ։

Այս նոր վարկերը պիտի յատկացուին 1929ի ծրագրով նախատեսուած երեք ընդծովեաներու, որոնց շինութիւնը յետաձգուած էր, Լոնտոնի նաւային խորհրդաժողովին պատճառով։ Իսկ 1930ի նաւային ծրագրին պիտի յատկացուի 24000 անգլ. ոսկի։

1930ին շինուելիք նաւերը, ըստ Լոնտոնի համաձայնութեան պիտի ըլլան երեք յածանաւեր, ինը թորպիլահալածներ, 1929ին նախատեսուած երեք ընդծովեաներ։

«ՅԱՌԱՋ» կը ծախուի ՀՐԱՆՏ - ՍԱՄՈՒԷԼ
Գրատան մէջ, 51 Rue Monsieur le Prince

ԲԱՑՈՒԱԾ Է
ԳՐԱՏՈՒԻՆ ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ
ՓԱՐԻԶԻ ԿԵԴՐՈՆԸ (ՔԱՐԹԻԷ ԼԱԹԷՆ) 51 Rue Monsieur-le-Prince
Հեռաձայն՝ Danton 88 65
ուր պիտի գտնէք ամէն տեսակ հին ու նոր գիրքեր, հայերէն, ֆրանսերէն, անգլերէնէն եւ այլ լեզուներով, գրական, գիտական գրոցական, վիպական եւայլն, նաեւ ամէն լեզուով պարբերականներ։
ՀԱՍԱՆԵ ԵՆ ԲԱԳԱԻԻ ԲՈԼՈՐ ԳՈՐԾԵՐԸ
Արտասահմանէն եւ գաւառէն եղած ապսպրանքները օրը օրին կը դրկուին։
ԳՐԱՏԱՆ ԿԻՑ ԲԱՑՈՒԱԾ Է ՆԱԵԻ ԿԱԶՄԱՏՈՒՆ ՄԸ
Բոլոր գրավաճառները, հրատարակիչներն ու հեղինակները կրնան դիմել ոեւէ գործի համար՝
LIBRAIRIE H.SAMUEL, 51 rue Monsieur-le-Prince, Paris VIe

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԿԵՐՊԱՍԵԼԻՆԱՑ
SIROUNAK ARABIAN & Cie
155 Rue Montmartre (1er étage)
Ֆրանսական եւ անգլիական խիստ ճոխ եւ ճաշակաւոր nouveautéներ այրերու համար։ Մետաքսեայ եւ բրդեղէն ամէն տեսակ ընտիր կերպասեղէններ կիներու համար։
ԱՐՏԱԿԱՐԳ ԱԺԱՆԻԹԻՆ
Ջեռք մը կարուած հագուստը ձեզի պիտի արժէ՝ Ցրանս. առաջնակարգ գեղեցիկ կերպասով 500 ֆրանք փոխանակ 700ի։ Իսկ Անգլ. կերպասէ 700 փոխանակ 1000ի։
փափաքողներու (այր եւ կանանց) կը տրամադրենք անձերի coupe ունեցող եւ à façon աշխատող վարպետ — դերձակ։

ՁԵՐ ԳՆՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԴԻՄԵՑԷՔ
MAISON VARTERESSIAN
1bis Rue Hautefeuille, ՄԷԹրօ St. Michel
Արեւելեան եւ եւրոպական ամէն տեսակ նպարեղէններ
Ցոր պտուղներ, լաքէրտա, երշիկ, ապուխտ, եւայլն
ԱՄԵՆԱԼԱՒ ՄԱՔՈՒՐ ԱԺԱՆ
Մասնաւոր սպասարկութիւն բնակարաններու համար
Կ'ընդունինք ապսպրանքներ գաւառներէն և արտասահմանէն

Հ. Յ. Դ. ՓԱՐԻԶԻ ԿՈՄԻՏԷՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԱԿԱՆ

ժողովի կը հրաւիրէ բոլոր խումբերու ներկայացուցիչները այսօր ուրբաթ իրիկուն ժամը 8.30ին Chope Parisienneի վերնայարկը, 64 Rue des Ecoles.

Զ. Ե. Ո. ՄԻՈՒԹԵԱՆ ՑԵՐԵԿՈՅԹԸ

ՄԱՐՍԷՅԼ, ՍԱԼՈՆ ԷՍՓԱՆԵՈՒԻ ՄԷՋ Rue du Tapis Vert
14 Յուլիս երկուշաբթի առաւօտ ժամը 9.30ին
կը խօսի՝ ՇԱՒԱՐՇ ՆԱՐԴՈՒՆԻ
նիւթ ունենալով՝ «Ի՞ՆՉ Է ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ»

ԴԱՇՏԱՅԻՆ ԽՆՋՈՅՔ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ Զ. Ե. Ո. ՄԻՈՒԹԵԱՆ
ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ԿՈՂՄԷ

Այս կիրակի առաւօտէն մինչեւ իրիկուն, ՍԷՆԹ-ԱՆԹՈՒԱՆի անտառին մէջ։ երեք անգամ ճաշ պիտի տրուի, ըմպելիով միասին։ Մասնակցութիւն 20 ֆրանք։ Ներկայ պիտի ըլլայ Զ. Ե. Ո. Միութեան կեդր. վարչութեան ներկայացուցիչը։

Ժամադրավայր Փլաս տ'Էքոսի կամարին տակ, առաւօտուն ժամը 7ին։

Շ. Մ. Ը. Մ.

ՀԱՅ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

Սկաուտներու բանակում-ցուցահանդէսը, Meudonի անտառին մէջ, Patte d'Oie վայրը, 12—13—14 յուլիս։ Կը մասնակցին 250 հայ սկաուտներ իրենց ձեռական աշխատութիւններով։
Հրաւիրուած են օտար անձնաւորութիւններ եւ սկաուտներ։

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

ՄԱՐՍԷՅԼԻ ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
Այս կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին
84 Rue Chapeի թատերասրահին մէջ
Մուտքը 5 ֆր.

ՀԱՄԱԹԱՐԲԵՐԴՅԱԿԱՆ ՔԼՈՖԹԱՅԻ ԱԻԱՆԴԱԿԱՆ ՏՕՆԸ ՄԷՏՈՆի անտառին մէջ, այս երկուշաբթի առաւօտ ժամը 9էն մինչեւ իրիկուն, աղբիւրին մօտ։ Կը նախագահէ Հ. ՍՐԱՊԻՈՆ վրդ.։ Բանախօսութիւն, երգ, հայկական եւ կովկասեան պարեր, նուագ եւ ճոխ պիւֆէ։

Փափաքողները կրնան իրենց ճաշը միասին բերել։

Շաղորդկց. միջոցներ.— փոքր վէրսայլէն առնել հանրակառք թիւ 89 եւ իջնել վերջաւորութեանը, Քլաժառ, ուր պիտի սպասեն առաջնորդները։

ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԷՍ

Պօլուի եւ Շրջ. երիտասարդաց միութեան կողմէ
վաղը իրիկուն ժամը 8ին Գ. Թաղապետարանի սրահին մէջ
կը նախագահէ Գ. ՏԻՐԱՏՈՒՐԵԱՆ
կը ներկայացուի՝ «ԵՐԵՔ ՍԱԼՈՐՆԵՐԸ»
Երգ, խմբերգ, արտասանութիւն, պարերգ, եւայլն
20 հոգինոց երգչախումբ *Մուտքը ազատ է*

Հ. Ց. Դ.

ՓԱՐԻԶ

Պէլվիլի Ռոստով ենթակոմիտէի ժողովը՝ այս կիրակի առաւօտ ժամը 10ին Ռոստովի սրահին մէջ, 131 Fbg. du Temple։ Կարեւոր օրակարգ։ Պարտաւորիչ ներկայութիւն։

ԱԼՖՈՐՎԻԼԻ Սարգիս Մինասեան ենթակոմիտէն ստիպողաբար ժողովի կը հրաւիրէ վաղը շաբաթ իրիկուն ժամը 8.30ին 21 բիս էմիլ Զոլա, պիւրօ թապաքի սրահը։

ՇԱՎԻԼԻ Արղուեթեան խումբի ժողովը այս երկուշաբթի ժամը 4ին ընկ. բժ. ՏԷր Դաւեթեանի բնակարանը, 27 Ave. Bellevue, Chaville.

ԻՍԻ - ԼԷ - ՄՈՒԼԻՆՕի Մուրատ խումբի ժողովը վաղը շաբաթ իրիկուն ժամը 8.30ին ճանօթ հաւաքատեղին, Ave. Verdun. կարեւոր օրակարգ։ Պարտաւորիչ ներկայութիւն։

ԱՆԻԻ-ՊՈՒԱ-Քալոնպի Զէյթունն ենթակոմիտէի ընդհ. ժողովը՝ այս երեքշաբթի իրիկուն ժամը 8.30ին ճանօթ հաւաքատեղին։ կարեւոր օրակարգ։ Բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտաւորիչ է։ Ներկայանալ անդամատետրով։

ՈՒրբաթ իրիկուն ց. Մինասեանի ճաշարանը։ կարեւոր օրակարգ։

Զ. Ե. Ո. Միութեան Մարսէյլի մասնաճիւղին ընդհ. ժողովը վաղը շաբաթ իրիկուն ժամը 9ին23Placede Comèteի սրահը,կը հրաւիրուին անդամներն ու համակիրները։ Ներկայ պիտի ըլլայ կեդր. վարչութեան ներկայացուցիչը։

Զ. Ե. Ո. Միութեան Անիէռ Պուա Քոլոնպի մասնաճիւղին դաշտահանդէսը 27 յուլիս կիրակի։ կը խնդրուի նկատի առնել այս թուականը։

ՉԱՐՍԱՆՃԱԿԻ Հայր. Միութիւններու Բ. Պատգամաւորական ժողովը այս կիրակի առաւօտ Լիոնի մէջ։

Շ. Ց. Դ. Ս. Շամոնի Գրադարանը, 15 Rue Jeanne d'Arc, բաց է ամէն շինգշաբթի 7—8 իսկ կիրակի օրեր 11—12։

ՖՈՒՏԲՈԼԻ ԲԱԺԱԿԻ ԱԻՍՅԵԱՆԱԿԱՆ ՄԵԾ ՄՐՑՈՒՄ

կազմակերպուած ցէսինի Շ. Մ. Ը. Մ.ի կողմէ, մասնակցութեամբ 12 գուտ հայ խումբերու, այս կիրակի ցէսինի Stade Paul Valayerի դաշտը, խաղերը կը սկսին առաւօտեան ժամը 8ին։ Առնել Լիոնէն հանրակառք թիւ 16 եւ իջնել La Soie.

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ՇԱՎԻԼԻ երիտ. երկ. միութեանը ժողովը վաղը շաբաթ իրիկուն, ժամը 8.30ին ճանօթ հաւաքատեղին։

ՊԻԼՎԻԼԻ Ռոստով Դրադարանի դաշտահանդէսը յետաձգուած է Յուլիս 27ին, կը խնդրուի նկատի ունենալ այս թուականը։

ՓԱՐԻԶԻ վասպուրականի Հայր. Միութեան ընդհ. ժողովը՝ *այս կիրակի ժամը 3ին Ցլորիայի ճաշարանին վերնայարկը։ կը հրաւիրուին անդամ եւ ոչ անդամ բոլոր հայրենակիցները։ Կարեւոր օրակարգ։*

Զ. Ե. Ո. Միութեան Պիյեանքուրի մասնաճիւղը ժողովի կը հրաւիրէ իր ընկերները այսօր

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Լեւոն Տիլանեան կը փընտրէ իր հօրեղբայրը Թադէոս Տիլանեան եւ հօրեղբօրորդին Ռուբէն Տիլանեան։ Լուր ունեցողներէն կը խնդրուի իմացնել՝ Լեւոն Տիլանեանի, 29 Rue Etienne Dolet, Alfortville, Seine,

— Կը փնտռուի Էնկիւրիի նահանգին Ստանօս գիւղէն Յակոբ Զօպանեան 27—28 տարեկան, հօր անուն՝ Պօղոս, մօր՝ անուն Մարիամ։ 1920ին կը գտնուէր իր մեծ մօրը քով Մերսինի։ Այդ թուականին մեկնած է Դամասկոսէն Պոլիս երթալու համար։ Կիլիկիոյ ճամբուն վրայ տեսնուած է հայրենակիցի մը կողմէ։ Իր մասին ամէն տեղեկութիւն տուողին 1000 ֆրանք

նուէր։ Իմացնել իր եղբօրը Գրիգոր Զօպանեանի 31 Rue de Fossé, Issy-les-Moulineaux (Seine) France կամ թերթիս վարչութեան։

Կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել։

Ծախու է կարի մեքենայ մը (Singer) մոթէօրով միասին։ Նոր վիճակի մէջ։ Տեսնելու համար դիմել՝ 36 Uue Damesme (Paris 13), մէթրօ Tolbiac.

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ
96 r. Rivoli, մէթ. Շաթլէ։ Աբմատ. եւ նոր մեթոտով դարմանում արանց եւ կանանց մորթի, արիւնի եւ վէներ. հիւանդութեանց (ֆրանկախտ, կարմրախտ.) եւ վարիսի։ Մասն. լապոռաթուառ։ Ընդհարիտ եւ արագ խորհրդակցութ.ամէն օր 9—12, 2—8 Կիրակի 9—12։

IMPRIMERIE - MASSIS - ÉDITION
208bis, Rue Lafayette Paris (10)
Le Gérant H. STEPHAN

ՏՕՔԹ. ՄԻՀՐԱՆ Կ. ՔԷՇԻՇԵԱՆ
Նախկին բժշկապետ մերսինի Ֆրանս. հիւանդանոցներուն
Պատուոյ մէտալ Ֆրանսայի Աւողջպ. նախարարութենէն
Կ'ընդունի ամէն օր ժամը 10էն 12 եւ ժամադրութեամբ, 134 Rue Blomet, Բէօնթգէնեան հաստատութեան մէջ։ Կը կատարէ Ռ. ճառագայթներով ամէն կերպ քննութիւն, շողանկարում (radiographie), դեղամանիշակագոյն, յետկարմրագոյն եւ բէօնթգէնեան դարմանում (radiothérapie profonde), ՏԻԱԹԵՐՄԻԻ բոլոր կերակուրները եւ էլեկտրաբուժական բոլոր ձեւերը որ բազմաթիւ հիւանդութիւններու դարմանման լաւագոյն աղդակներն են։
Թոքախտաւորներու pneumothoraxի գործողութիւն, մասնաւոր շիջուկ եւ պատուաստ։
Զղայի եւ հոգեկան կարգ մը հիւանդութիւններու դէմ թելադրական, քնեցածական եւ փոէօտեան մէթոտներ։
Հասցէ՝ 134 Rue Blomet, Laboratoire de Radiologie. Métro Convention, Autob. X. եւ AG.
Հեռաձայն՝ Vaugirard 29—55, 47—86.

ԽՆԱՅԵՑԷՔ ՁԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՒ ԴՐԱՄԸ
Հարիւրին 45 զեղջ ամերիկեան առաջնակարգ գրի մեքենաներու եւ հաշուեմեքենաներու։
Remington թիւ 10, 11 գին՝ 1400 ֆրանք։
Underwood թիւ 5, 12, 14 գին՝ 1800 ֆրանք։
վճարաման դիւրութիւններ։
Դիմել կամ գրել Ս. Նալասարդեանի, 366 Rue Vaugirard, Հեռաձայն՝ Vaugirard 28—89 եւ 05—93։

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ PRINKIPO
VERTANÈS MAHDJOUBIAN et A. VITCHEN
24 Rue des Carmes, Paris (5) մէթրօ՝ Place Maubert
Խնամքով պատրաստուած արեւելեան և եւրոպական ամէն տեսակ կերակուրներ ամէն ժամ։ Մասնաւոր կերպով պատրաստուած տէօնէր-քէյթրինկ։
Այցելեցէք, համոզուելու համար։ Հարսնիքի, ժողովներու, հաւաքոյթներու եւայլնի համար տրամադրելի սրահ։

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ
ՁԱՁԱՐԱՆ ՓԼՕՐԻԱ
61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)
Մէթրօ Օտէոն եւ սկէն միշէլ Հեռաձայն Littré 38—43
Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ

EMPIRE Միւզիք-Հոլ՝ 37 Av. Wagram

ՎԵՐԱԲԱՑՈՒԱԾ Է
ՁԱՆԿԷՕԶԵԱՆԻ ՁԱՇԱՐԱՆԸ
202 Rue Boileau, Lyon

Կ'ուզուի վարպետ գործատոր մը, որ գիտնայ կօշիկի նորոգութեան վերաբերեալ բոլոր մանրամասնութիւնները։ Ֆրանսերէն խօսիլը պարտաւորիչ է։ Լաւ պայմաններ։ Դիմել՝ 79 Rue Rébeval Belleville.

ՍԻՄԻԹ
Անուան արժանի է միայն այն սիմրիթը որ պատրաստուած է A. LA GARDE, 1 Rue St Lazare, PARIS (9e) Nord Sud N. D. de Lorette. Téléphone Trudaine 95.21

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE
ՑՏԸ եւ ՑՆՕՐԷՆ՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՑԵԱՆ
29, Rue (Place) des Fêtes, Paris, XIX. Tél. Nord 96 - 61
Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Գշ., Եշ. եւ Շաբաթ օրերը ժամը 4—6։ Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երեք. եւ Շաբաթ օրերը ժամը 2—3։ ԱՏԱՄՆԱԲՈՑԺԸ ամէն օր ժամը 9էն 19։

ՓԱՐԻԶԻ ԱՄԵՆԱՄՕՏԻԿ ՀԱԻԱՔՈՒԹԱԿԱՆ ՀԱՅ ԱԳԱՐԱԿԸ
Ամենախիստ քննութեան ենթարկուած օրուան թարմ հրատարակութիւններ, ազատութեան մէջ պարարտացած նպաստաւոր խորհելու համար առաջնակարգ հաւեր ժատչելի գիներով։
Խիստ կանոնաւոր առաքում։ Յարգելի յաճախորդներէն խնդրուի իրենց ապսպրանքները մէկ երկուտասնեակէ պակաս չընել։
Դիմել կամ գրել՝ Hachmanian, 285 Fbg. St. Antoine, PARIS (XI), կամ ուղղակի ագարակին, Hachmanian, Elevage du Bois Perroy, Fouquerolles par Beauvais (Oise).



ՅԱՌԱՋ

LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԲԱԺԱՆԵՑԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70ֆ.	140ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԻՏԱԼԻԱ			250 ֆրանք
ԱՄԵՐԻԿԱ		6 տլ.	10 տլ.
ԵՒՐՈՊԱ		100 ֆ.	200ֆ.

"HARATCH"

Directeur-Propriétaire
SCH. MISSAKIAN
Խմբագիր՝
Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Rédaction et Administration
Խմբագրութիւն եւ վարչութիւն
235, Faub. St.-Martin
PARIS (10e)

MÉTRO: LOUIS-BLANC OU JAURÈS

Téléphone: NORD 67-23

R. C. SEINE 376.266

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 3 ֆրանք

ՇԱԲԱԹ
12
ՅՈՒԼԻՍ
1930

12 JUILLET 1930

Ջ. ՏԱՐԻ ԹԻՒ 1312

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Այս կիրակի Սեւրի Սամուէլ - Մուրատեան վարժարանի մրցանակաբաշխութեան հանդէսը տեղի պիտի ունենայ: Վրատահ ենք թէ ուսումնասէր բազմութիւն մը կրկին պիտի երթայ ներմօրէն շրջապատելու այդ վերահաստատուած կրթականն մեծ օջախը:

Կրթական գործին հանդէպ մեր վերաբերմունքը պարզ է և յստակ: Այս առթիւ կ'ուզենք քանի մը խորհրդածութիւններ յանձնել հանրութեան ուշադրութեան: Ներկայիս հայութեան խիստ կարեւոր մէկ հատուածը դատապարտուած է իր գոյութիւնը պահպանել զանազան երկիրներու մէջ: Ու այս վերիվայրումի հետեւանքով, գերազանցապէս տուժած է ուսման գործը, մասնաւորաբար միջնակարգ կրթութիւնը:

Հայութեան պահպանման ամէնէն կարեւոր ազդակը տոհմային կրթութիւնն է: Հայութիւնը ներկայ պարագաներուն մէջ, գերագոյն ջանքեր պիտի թափէ, որպէսզի կարողանայ միայն նուազագոյն չափով մը ընդառաջ երթալու այս կենսական պահանջին: Հետեւաբար, ամէն մէկ ձեռնարկ որ կուգայ ապահովելու հայ տոհմային կրթութիւնը, մենք կը նկատենք մեր սրտին ժօտիկ եւ արժանի անվերապահ քաջալերանքի:

Սեւրի հայ վարժարանը այդ ձեռնարկներէն մէկն է:

Սամուէլ-Մուրատեան վարժարանը որ անցեալ դարուն հանքան մեծ անուն հանեց եւ կրցաւ մտաւորական հոյլ մը նուիրել հայ ազգին, այսօր, նորէն իր խարիսխը կը ձգէ Սէնի ափերուն վրայ, տեւական ու ազգային գործ մը կատարելու: Բայց այսօր ա՛լեվի մեծ է անոր ղերը եւ ա՛լեվի ապահով՝ անոր յաջողութիւնը: Աւելի մեծ է անոր ղերը, որովհետեւ միջնակարգ կրթութեան պահանջը մեծ է, նման դպրոցներու բացակայութեան բերումով: Յաջողութիւնն աւելի ապահով, որովհետեւ հայկական հոծ զանգուածներն այսօր կը շրջապատեն զայն եւ ջերմութիւն ու կեանք կուտան անոր:

Մենք ուրախութեամբ այս էջերուն մէջ արձանագրեցինք Պէյրութի Հայ Ճեմարանի հիմնումը, ու կոչ ըրինք հայ ունեւոր դասին՝ պահպանելու տոհմային կրթութեան այս խիստ կարեւոր հաստատութիւնը: Նոյն համակրանքով ու ջերմութեամբ մենք հանրութեան ուշադրութեան կը յանձնենք Սամուէլ-Մուրատեան վարժարանը, որու աղեսէրն ինքնին մեծագոյն երաշխիքը կուտայ թէ հաստատութիւնն ազգային է. ու հետեւաբար՝ ազգին գուրգուրանքին առարկայ պիտի դառնայ:

Այն մեծահարուստ եւ ազգասէր Հայերը, որ հարիւրաւոր տարիներ առաջ իրենց բոլորանուէր կտակովը հիմքը դրին Մուրատ-Մխիթարեան մեծ հաստատութեան, կը սպասեն որ իրենց ճանապարհով ընթանան այս օրուան հարուստներն ալ, աւելի զօրացնելու, աւելի ընդարձակելու և աւելի ժողովրդական դարձնելու Սամուէլ-Մուրատեան կրթական վառարանը:

ՄԱՐՍԷՅԼԻ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

Այլապէս սրտառուչ երեւոյթ մը կը պարգուի երբ մեր ակնարկը կը դարձնենք Մարսէյլի գաղութի կողմը: Հոն ալ, այս կիրակի տեղի պիտի ունենայ Ազգ. Կեդր. Վարժարանի տարեվերջի հանդէսը: Նոյնպիսի հանդէսներ ունին Մարսէյլի և շրջակայ նախակրթարաններն ու մանկապարտէզները:

Ազգային գոյութեան պահպանման գեղեցիկ պատկեր մը, անշուշտ պայմանները նկատի առնելով: Ճիզերը որ կը թափուին, դեռ հեռու են կրթական պահանջներուն լիովին գոհացում տալու: Բայց առանց հիմնադրամի, զուտ ժողովրդական զոհողութիւններով, այս արդիւնքն իսկ գնահատանքի արժանի է:

Երբ չքաւոր ժողովուրդը, հազիւ հաստատուած, կը ձեռնարկէ գաղութին մէջ գոնէ ա. և բ. տարրերուն զայն շրջապատելու հայ տղաներուն, երբ զանազան հաստատութիւններն ու մտաւորականութիւնը ամէն ջանք կը թափեն փողոցէն ազատելու հայ մանուկները, իրենց այս անհնարին աշխատանքին մէջ՝ մինակ պէտք չէ թողուին: Անոնք թէեւ տեղական գործ մըն է որ կը կատարեն, բայց այդ գործը համահայկական նշանակութիւն ունի:

Ու այս պատճառով մենք կը կարծենք թէ ժամանակը եկած է, որ իւրաքանչիւր գաղութ իր պատեհանին մէջ չփակուի և ոչ ալ մոռացութեան տրուին այնպիսի գաղութներ, որոնք հայութեան հաւաքական օժանդակութեան կը կարօտին:

Ժողովուրդը գրեթէ պարտադիր տուրքով մը իր կարելին կ'ընէ: Կան բազմաթիւ երջանիկ մարդիկ, որոնք կապուած են այս ու այն գաղութին և գերծ են նոյն իսկ այս տուրքէն: Ասոնք գրեթէ առանց բացառութեան ազգային, քաղաքական մեծ ձեռնարկներուն չեն հաւատար և չեն օժանդակեր: Գոնէ, որպէսզի թեթեւութեան համար, լիաբուռն ժամանակցին կրթական գործին, այս ճանապարհով կատարելու իրենց ազգային պարտականութիւնները:

Եթէ պետութիւն և պարտադիր օրէնքներ չունինք, պէտք գիտակցինք վերջապէս, թէ կայ անգիր օրէնք մը, որ պարտադիր տուրք մը կը դնէ ամէնուն վրայ: Անխուսափելի տուրք:

Կ. Ս.

ՄԱՄՈՒԼ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄՂՁԱՒԱՆՋԸ

«Հայրենիք» այս վերնագրով խմբագրականի մը սկզբ կը գրէ (յուշիս 26).

— «Թորիդային կառավարութիւնը խիստ յատկանշական գլուխը ինքզինք մը ուղղած էր վերջերս աշխարհի ամենէն աչքի ընկնող գլոգոներուն: Հարցումն էր. «ի՞նչ պիտի ըլլայ ձեր դիրքը այն պարագային, եթէ պատերազմ օգտ թորիդային միութեան դէմ»:

Շատ մը գլոգոներէ պատասխանները ստացուած են արդէն, եւ թորիդային ներկան, ինքզինքը հաստատելով գաւառ, բաւականին ընդարձակ եւ հետաքրքրական մեկնութիւնները կ'ընես այդ առթիւ: Պէտք է ըսել, որ օտար գլոգոներու պատասխաններէն շատ աւելի շահեկան են այդ մեկնութիւնները: Մասնաւոր ուշադրութեան արժանի է բոլշեւիկներու ամենէն տաղանդաւոր ինքնապաշտպանութիւնը պատերազմի մասին:

Ինքնակ կը պնդէ, թէ պատերազմը ոչ միայն հաւանական է, այլ ուղղակի անխուսափելի է: Ինչո՞ւ, որովհետեւ դրամատիրական պետութիւնները աննախընթաց եռանդով պատերազմի կը պատրաստուին եւ յարմար ատենի մը անպայման յարձակում պիտի գործեն թորիդային միութեան վրայ:

Ձիդ է, կ'ըսէ Ինքնակ, դրամատիրական պետութիւնները տակաւին հաւասարակշռութեան մը եկած չեն միացեալ ճակատով մը թորիդային միութեան դէմ կռուելու համար: Սակայն, այդ ուղղութեամբ գաղտնի աշխատանք կը թափուի շատ յաւար կերպով եւ օր մը անկասկած դրամատիրական պետութիւնները պիտի ընեն նոյնը, ինչ որ 1914 թ. ըրաւ Գերմանիա: Այն է՝ վաննալով թէ թորիդային միութիւնը իրենց վրայ պիտի յարձակի, դրամատիրական պետութիւնները իրենք՝ պիտի նախայարձակ ըլլան, ժամանակ չտալու համար թորիդային միութեան պատրաստուելու եւ յարձակման յարմար վայրկեան ընտրելու:

Գաղտնիք չէ, որ թորիդային կառավարութիւնը կը դաւէ դրամատիրական ամբողջ աշխարհի ներկայ կարգ ու սարքի եւ խաղաղութեան դէմ, հետեւաբար, գարմանալի ոչինչ պիտի ըլլայ, եթէ դրամատիրական պետութիւնները ալ, փոխանակ հաւքերութեամբ սպասելու որ Մոսկուա պայթեցնէ զանոնք ներսէն թէ դրսէն, փորձուին կանխելու բոլշեւիկները եւ ընդհանուր գրոհով մը վերջ տալու կարմիր փտանգին:

Հարկաւ, շատ բան կախուած է թորիդային կառավարութեան ապագայ ընթացքէն: Եթէ ան չհրաժարի դրամատիրական աշխարհի գլխուն մշտնջենական սպառնալիք մը ըլլալէ եւ փորձէ իր փրովոքասիոններն ու դաւադրական աշխատանքները հասցնել այնեւս անտանելի չափերու, այն ատեն դրամատիրական պետութեանց ուրիշ բան պիտի չմնայ, բայց եթէ համաձայնութեան մը գալ իրարու հետ եւ միացեալ ուժերով վերջ դնել աշխարհի խաղաղութիւնը վրդովող բոլշեւիկեան չարիքին:»

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ այցելեց տաղանդաւոր դրագէտ Ռէնն, որ Փրակայէն Փարիզ փոխադրուած է:

ՕՐԸ ՕՐԻՆ

ՔՐՏԱԿԱՆ ԱՊՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Կ. ՊՈԼԻՍ, 9 Յուլիս («Թայմզ»էն). — *Բիւրտաւթուրք բախտաւմները փոխադրուած են Վանի հիւսիս-արեւելեան կողմը, և կը հաստատուի թէ Բիւրտերը կը ջանան կտրել Վանի ճանապարհը: Այս կռիւին մասնակցող Բիւրտերու սպայակոյտը կը գտնուի Սիփան լերան վրայ: Ուրիշ տեղերու մէջ քրքական զօրքերը կ'ըսուի թէ կ'առաջանան: Այս առաւօտ լուր տարածուեցաւ թէ ոստիկանները խուզարկած են Հայերէ ոմանց տուները: Կասկած կայ թէ անոնք կապ ունին քրտական ապըստամբութեան հետ:*

ԹԷՀՐԱՆ, 9 Յուլիս («Թայմզ»էն). — *Արարատի Բիւրտերը, որոնք շատ ուժեղ դիմադրութիւն ցոյց տուին Թուրքերուն, կասկածէ դուրս է որ կը վայելեն պարսկական Բիւրտերու համակրանքը: Թուրքերը կը պնդեն որ կռուող Բիւրտերէն ոմանք անցած են Պարսկաստանէն, ինչ որ կը ստեղծէ բաւական փափուկ կացութիւն մը: Ամէն զատ, անհամաձայնութիւն ծագած է ռուս եւ պարսիկ կառավարութեանց միջեւ, խորհրդային զօրամասի մը պատճառով, որ վերջերս, Կովկասէն Պարսկաստան մտած էր, հետապնդելու համար հոն ապաստանած տարագիրներ: Ռուսիա իր այդ քայլը կ'արդարացնէ 1921ի դաշնագրին 5 եւ 6 յօդուածներով: Պարսկաստան մերժեց ընդունիլ այդ պատճառաբանութիւնը և կը պահանջէ երաշխաւորութիւն, նման դէպքի մը կրկնութեան դէմ:*

Քաղաքական այդ ձգտուած վիճակը կը ստեղծէ առեւտրական դժուարութիւններ:

Կ. ՊՈԼԻՍ, 8 Յուլիս.— *Արտաքին գործավար Թէվֆիք Բիւշտի պէյը յայտնեց թէ Թէհրանի դեսպան Մէխտուհ Շէվքէթ պէյը շարունակական յարաբերութեան մէջ է պարսկական կառավարութեան հետ, որ դեռ չէ պատասխանած Թուրքիոյ ծանուցագրին:*

Որոշ շրջանակներ կը մտածեն թէ Թուրքիա ներկայ խռովութիւնները պատրուակ կրնայ ծառայեցնել, պահանջելու համար Թուրք-պարսկական սահմաններու ճշդում մը, այն մտադրութեամբ որ սահմանամերձ քրտաբնակ վայրերը դրուին Թուրքիոյ հակակշռին տակ:

Այս առտուան Պոլսոյ Թերթերը կը յայտնեն թէ Հայերը կը գործակցին ապստամբ Բիւրտերուն: Նաեւ 150նոց վտարուած Թուրքերէն ոմանք՝ իբր թէ կ'օգնեն խռովարարներուն: Ոմանք կը կարծեն թէ նշանաւոր հրոսակ Զէրքէզ Էհդէմ պէյը եւս կը գործակցի:

Խորհրդ. կառավարական կազմը

ՊԵՐԼԻՆ, 10 յուլիս.— *Գերման Թերթ մը կը հաւաստէ թէ կարեւոր եւ հիմնական փոփոխութիւններ պիտի կրէ խորհրդային կառավարական բարձր պաշտօնատարութիւնը:*

Ստալին պիտի հրաժարի իր այժմու կուսակցական պաշտօնէն, ստանձնելու համար Գործավարներու Խորհուրդի նախագահութիւնը եւ այս կերպով իր ձեռքին մէջ պիտի բռնէ Խորհրդային Միութեան արտաքին եւ ներքին ամբողջ քաղաքականութեան ղեկը: Գործավարներու Խորհուրդին շնորհազուրկ արդի նախագահը Ռիկով, պիտի ստանայ վեց ամսուան արձակուրդ մը...: Համաձայնաւար կուսակցութեան փոխքարտուղարը, պիտի գրաւէ Ստալինի այժմու պաշտօնը, իսկ պատերազմական գործավար Վորոշիլով՝ իր դիրքը պիտի զիջի զօրավար Պլիւխէրի, (զօրապետ Արեւելեան բանակին): Տնտեսական Գերագոյն Խորհուրդին պետը՝ Կուպիչէֆի պիտի յաջորդէ Օրճոնիքիձէ: Իսկ Կուպիչէֆ եւ Քաղաք. Դիւանի փոխքարտուղար Անտրէյեւ պիտի նշանակուին Գործավարներու Խորհուրդի փոխ-նախագահներ՝ Ստալինի կողքին:

Իսկ ըստ «Եուինէյթըտ Փրէս»ի, Ռիկով որուն տեղ կ'անցնի Ստալին, պիտի նշանակուի արտաքին գործավար, Լիտվինով պիտի վարէ Պերլինի դեսպանութիւնը, Մկոյեան կը ստանձնէ Տնտեսական Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը, Կէփէուի նախագահ կը նշանակուի Օրճոնիքիձէն, Մէնճէնսկիի տեղ:

Բոլշեւիկեան համագումարը կը վճռէ

Բոլշեւիկեան «Թաս» Գործակալութիւնը կը հաղորդէ թէ 16րդ համագումարը քուէարկեց համաձնաւոր Միջազգայինի գործունէութեան մասին բանաձեւը, որուն, ստորեւ կուտանք գլխաւոր գիծերը:

— Ընդհանուր գիծէն շեղումներուն դէմ, անողոք պայքար մղելով, Համաձնաւոր Միջազգայինը եւ իր մասնաճիւղերը ժառանգու հարուած տուին տրոցկիզմի և աջակողմեան պատեհապաշտ շեղումներուն: Համագումարը լիովին հաւանութիւն կը յայտնէ Միջազգայինի կիրարկած կազմակերպական միջոցներուն, ընդդէմ ած եւ ձախ պատեհապաշտներուն»:

Համագումարը, հրաւիրելէ յետոյ Գ. Միջազգայինը որ իր ուշադրութիւնը դարձնէ «ընկերվարական-ֆաշիստ»ներու և ֆաշիստներու վրայ, հրահանգներ կուտայ որ Միջազգայինի մասնաճիւղերը (արտասահմանի կ'ակնարկէ) չզանգատին կազմակերպելու իրենց տեսաբանութեան ծաւալումը, եւ մանաւանդ, զանգուածային կազմակերպութիւններու մէջ սաստկա-

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)



Հ. Ց. Դ.
ՓԱՐԻԶԻ ՏԱՆ ՀԱՄԱՐ

(Հանգանակութիւն Եւրոպայի կեդր. կոմիտէի)

ՑԱՆԿ 26

Տօքթ. Նորայր	250
Սահակ Տէր Գոմասեան	150
Եղիշէ Միրանգուլեան	150
Զգօն Պարսամեան	100
Գումար	650
Նախորդ գումար	33,930
Ընդհ. գումար	34,580

ՄԵԶՄԷ ԴՈՒԻՐՍ

ՓԼԱՒՐԿԱՅՈՅՋ ԵԳԻՊՏՈՍԸ

Թուովքի օրեր կ'անցընէ Եգիպտոս, ուր իր ասպաս ճամբուս վրայ, արքնալ դասք մը կը սգէ նախորդ կայսրապետը Նահաս փաշա ղեկավարը ազգայնական վաքտ կուսակցութեան: Ժողովուրդը կուշծք կուտայ իր սիրական մեղադրել իբրեւ տեսակ մը ամուսամալան, կ'իյնան արագ դատաստանի սխալին մէջ

Պայքարին բուն դրդապատճառը սակայն, շատ աւելի խոր է, քան ինչ որ ցոյց տրուեցաւ, Սահմասադրական տագնապ: տնտեսական ու ելմտական նեղ կացութիւն, անշուշտ, լուրջ պատրուակներ էին, արդարացնելու որ եւ է դահլիճի անկում, բայց կը ծառայէին քօղարկելու վէրքը որ կը բանի եգիպտական կազմին մէջ, սպառնալով զայն ցնատել:

Եգիպտոսի խռովութիւնները կը ծածկեն քաղաքականութիւն մը, որուն թելը կը մնկնի Լոնտոնէն եւ ամբողջ Եգիպտոսի վրայ կը փռէ ցաւց մը տնտեսական, ելմտական ու քաղաքական լարերով հիւսուած:

Անգլիա չի կրնար հրաժարիլ Սուէզէն եւ Սուտանէն, որոնք կ'երաշխաւորեն իր գերակշռութիւնը Ափրիկէի եւ Ասիոյ մէջ:

Եգիպտոս՝ իր ձեռքերով իսկ վարելու համար իր ճակատագիրը, պէտք ունի անկախօրէն տիրանալու իր բնական սահմաններու ամբողջութեան:

Եգիպտոսի աշխարհագրութիւնն է ուրեմն, որ դէմ կը կը կանգնի Անգլիոյ աշխարհակալութեան:

Շակամարտ երկու կենսական շահեր, որոնց միջեւ, դժուար թէ կարելի ըլլայ միջին եզրեր ձարել,

Ահա թէ ինչո՞ւ ձախողեցան անգլեւեգիպտական բանակցութիւնները եւ ահա թէ ինչո՞ւ— կարելի է ըսել— ազգայնական Նահաս՝ վարչապետութենէն կամովին հրաժարման պատրուակ ստեղծեց, ազատ ձեռքերով նետուելու պայքարին մէջ, եւ ժողովուրդ ստեղծելու... իր դասին շուրջ:

Եւ Անգլիա, որ իր գլխաւոր գաղութներուն մէջ, ներկայիս կը գտնուի ազգայնական հոսանքի բռնկումի մը առջեւ: դժուար թէ կարենայ ուշ, կանուխ, ելքի ճամբայ մը գտնել, առանց անպայման զիջումի:

Դարաւոր քունէ մը յետոյ, փարաւոններու հոգին է որ կ'արթննայ Եգիպտոսի մէջ եւ կը պահանջէ իր կասկուած իշխանութեան վերահաստատումը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՊԱՐԱԿՎՈՒՄ Է

Նամակներ, լուսանկարներ, ձեռագրեր, ինչպես նաև Հայկական հանրապետության հետ կապված այլ նյութեր, որոնք ունեն պատմական արժեք, կարող են ուղարկվել Հայկական հանրապետության արտաքին գործերի նախարարության հասցեով (Երևան, Կառավարական տուն № 1):

Հայկական հանրապետության արտաքին գործերի նախարարությունը հայտնում է, որ նյութերի ստացման մասին անհատական ծանուցագրեր չեն ուղարկվելու:

Հայկական հանրապետության արտաքին գործերի նախարարություն

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ուղարկում է հետևյալ գրքերը՝

Ա. Ա. Ժդանով, Ռուսական երաժշտության պատմության հարցերի շուրջ, Երևան, 1948, 1 օրինակ:

են որոնք, Շէյխ Սայիտի ըմբոստութեան զսպումի ատեն, ազատուեցան մեր ուժերէն եւ Պարսկաստան ապաստանեցան:

«Բայց արդեօք միայն ատոնք էի՞ կը բազկանան զրդռութեան ցանցին մէջ կազմող մարդիկը: Թէ՞ ոչ այս զրգռիչները ուժ կ'առնեն կարգ մը օտար երկիր. ներէ:

«Ծանօթ իրողութիւն է որ, Մուսուլի խնդրին լուծումէն յետոյ, տարակարծութեան հարց չմնաց Թուրքիոյ եւ Անգլիոյ միջեւ, ինչպէս որ Թուրքիա ամէն առթիւ շիտակ ընթացք մը բռնեց Անգլիոյ հանդէպ: Անգլ. կառավարութիւնն ալ բարեկամութիւն ցոյց տուաւ մեր երկրին հանդէպ, ամէն ատեն որ առիթ ներկայացաւ: Բայց հակառակ անոր որ երկու երկիրներու ընդհանուր քաղաքականութիւնը այսպէս ազէկ ընթացքի մը կը հետեւի, Միջագետքի հոգատար եղող Անգլիան քրտական քաղաքականութիւն մը կը վարէ Մուսուլի մէջ, ինչ որ մութ կէտ մըն է, մեր Արեւելեան Նահանգներու անդորրութեան տեսակէտով:

«Անգլիական կառավարութիւնը երբեք չէ ծածկած թէ նպատակ ունի Քիւրտիստէն կազմուած անկախ ազգ մը առաջ բերել հիւսիսային Միջագետքի մէջ: Վերջերս ալ կարեւոր ձեռնարկներ ըրաւ, այս նպատակը իրականացնելու համար:

«Հակառակ Միջագետքի կառավարութեան ընդդիմութեան, Անգլիա ընդունիլ տուաւ մասնաւոր օրէնք մը, որուն համաձայն քիւրտերէնն ալ արաբերէնի կարգին՝ իբր պաշտօնական լեզու պիտի գործածուի:

«Արդեօք ունէ կապ կա՞յ հիւսիսային Միջագետքի մէջ քիւրտ անկախ ազգ մը կազմելու ձգտող այս կազմակերպութեան, եւ Արարատի շուրջ երեւան հանուած զրգռութեանց փաստաթուղթերուն միջեւ:

«Ահա այս պարագան է որ կասկած կը ներշնչէ մեզի: Խնդիրը համեմատաբար պարզ կը դառնայ, եթէ քաղաքական պարզ դաւադիրներ են այն անձերը որոնք կ'աշխատին Արարատի աւազակները քաղաքական նպատակներու համար գործածել: Ոչ, եթէ այսպէս չէ, այլ գործը կապ ունի քրտական կազմակերպութեան հետ, զոր Անգլիա կ'աշխատի առաջ բերել մեր Արեւելեան Նահանգներուն մէջ, այն ատեն այս տեսակէտով պէտք է քննել խնդիրը:

«Լոնտոնէն կը հաղորդեն թէ կնքուած է անգլեւիրաք նոր դաշնագիր մը, որուն համաձայն Անգլիա իբր կառաւարող անկախ երկիր կը ճանչնայ Միջագետքը: Ուրեմն ասկէ վերջ Միջագետքի կառավարութիւնը պատասխանատու պիտի ըլլայ Մուսուլի շրջաններու որ եւ է անուններով կատարուելիք գործերուն:

ԱՄԵՆ. ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Էջմիածնի մէջ պատասխանատու պաշտօն ունեցող անձնաւորութեան մը 11 յունիս թուակիր նամակէն, «Յուսաբեր» կ'իմանայ թէ, ըստ Ազգային եկեղեցական ժողով գումարելու յատուկ կանոնագրութեան, զոր պատրաստած էր Գէորգ Ե. կաթողիկոսը, կաթողիկոսական ընտրութիւնը պիտի կատարուէր կաթողիկոսի մահուընէն վեց ամիս յետոյ եւ կամ վեցամսեայ ժամանակամիջոցին մէջ: Այս կանոնագիրը հիմ առնելով, Էջմիածնի մէջ արդէն ձեռնարկած են ընտրութեան նախապատրաստական աշխատանքի:

Սկզբունքով որոշուած է ընտրութիւնները կատարել Էջմիածնի մէջ, ինչպէս նաեւ կաթողիկոսական աթոռը պահել հոն, ուր կը մնար դարերէ ի վեր: Հայաստանի կառավարութիւնը, ըստ այս նամակի, կաթողիկոսական ընտրութեան դէմ չէ եւ արտասահմանեան պատգամաւորներու ժամանումը եւ վերագարձը ելբեք արգելքի չպիտի հանդիպի:

Այդ կանոնագրութեան մէջ ըսուած է, որ իւրաքանչիւր թեմ, որքան ալ փոքրաթիւ ժողովուրդ ունենայ, բացի թեմին առաջնորդէն, պիտի տայ ընտրեալ պատգամաւոր մը, իսկ մեծ թեմերը այնքան պատգամաւոր պիտի տան, որքան 25 000 ժողովուրդ ունին թեմին մէջ:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը պիտի փութացնէ ընտրական հրահանգները, որպէսզի վեց ամսուան ընթացքին կարելի ըլլայ ընտրութիւնները կատարել:

Այս հաշուով, Ազգային Եկեղեցական ժողովը Հաւանօրէն կը հրաւիրուի Հոկտեմբերի վերջերը եւ կամ Նոյեմբերի սկիզբները:

Հայաստանի ժողովուրդը երբեք համաձայն չէ Աթոռի տեղափոխութեան, իսկ Էջմիածնի Միաբանութիւնը կը ցանկայ, որ արտասահմանի գաղութները անպայման ժամանակին ղրկեն իրենց պատգամաւորները՝ կաթողիկոսի ընտրութեանց մասնակցելու համար:

Այս առիթ փափաք կայ Ազգային եկեղեցական ժողովի ուշադրութեան յանձնելու նաեւ ուրիշ հարցեր:

Այս ընտրութիւնը կը նկատուի նաեւ առիթ մը ծանօթանալու Հայաստանի կացութեան եւ ճշգրիտ տեղեկութիւններ տալու արտասահմանի հայոց եւ կապ ստեղծելու հայրենիքի եւ գաղթահայութեան միջեւ:

ՀԱՅԱՍՏԱՆ

ԳՐԱԿԱՆ ՎԷՊ

Ներկայացուցինք քննադատութիւն մը «Գրական Դիրքերում»ի բովանդակութեան մասին: Այնտեղ ծանրապէս կը քարկոծէին Ալապանը, Թարգիւլը, Մկրտիչ Արմէնը եւ ն. Զարեանը: Եւ ահա Զարեան կը պատասխանէ արդարացնելով եւ գովաբանելով պրոլետ գրողները եւ... ինքզինք: Վերջաբանին մէջ, կը խոստովանի որ թերութիւններ շատ ունի «Գրական Դիրքերում»ը, (բայց թերեւս ըսել կ'ուզէ թէ ինք չունի, միամի՞տ պատանի):

—« Թերութիւններն ու սխալները լայն առումով այնքան շատ են «Գրական Դիրքերում»ի այդ եւ առհասարակ բոլոր համարներում, որ բարեխիղճ ընթերցողը խօսելու նիւթ շատ կը գտնէր», կ'ըսէ ու կը վերջացնէ:

Եւ յանկարծ իր յօդուածին տակ կը յայտնուի նորէն քննադատ Վահանեան, որ այս անգամ Զարեանը կը լուայ ոչ միայն ջուրով, այլ նաեւ քացախով: Եւ կը պնդէ նորէն, թէ պրոլետ գրողները միայն «քեալլագէօզութիւն» կ'երգեն: Զարեան կը բարկանայ եւ կը պոռայ թէ գրականութիւնը «քաղաքական ընթացիկ յօդուած ու բանաձեւ չէ», այլ գեղարուեստական պատկերացում: Եւ կը փափաքի ազատութիւն տալ գրագէտին: Ընդհակառակն Վահանեան կը պաշտպանէ այն գրականութիւնը, որ «նպաստում է սոցիալիզմի կառուցման մեծագոյն գործին»: Եւ «Խորհ. Հայաստան»ի խմբագրութիւնը, յօդուածին տակ կ'աւելցնէ թէ համամիտ է Վահանեանի տեսակէտներուն, եւ այսպէս վէճը կը համարի փակուած:

Ընդունելով Ն Զարեանի տեսակէտին Աշդութիւնը,— թէ գրագէտը ծառայ չէ այս կամ այն քաղաքական վարչաձեւին,— կը կարծենք թէ, որպէսզի ազազային որեւէ թիւրիմացութիւն արգիլուի թէ Անգլիոյ եւ թէ Միջագետքի հետ, պէտք է լուծել քարոզութեան եւ գրզռութեան խնդիրը, որ ներկայիս գոյութիւն ունի: Անցեալի մեր փորձառութիւնը կը հարկադրէ մեզ արթուն դանուիլ այս մասին»:

50,000 ԲՆԱԿԱՐԱՆ

Փարիզի քաղաքապետութիւնը պատրաստած է «Հնգամեայ ծրագիր» մը բնակարաններու շինութեան համար: Փարիզի մեծագոյն հոգն է բնակարանի տագնապը: Ըստ այս հնգամեայ ծրագրին, 50 հազար բնակարաններ պիտի շինուին, աժան գինով, հինգ տարուան ընթացքին: Փարիզի մէջ 7000 բնակարաններ, չափաւոր վարձքով, 18 ամսուան ընթացքին: 6000 բնակարաններ, աժան վարձքով, երկու տարուան ընթացքին: Սէն նահանգին մէջ, 146 տաղաւարներ, չափաւոր վարձքով, 18 ամսուան ընթացքին: 1300 բնակարաններ, աժան վարձքով, կ'աւարտին այս տարի: 7000 բնակարաններ, նոյն շարքէն, 3 տարուան ընթացքին:

Այս շինութիւնները պիտի կատարուին ըստ «Լուշէօրի օրէնքին»:

Այս բնակարանները պիտի շինուին հետեւեալ շրջանակներուն մէջ.—

Փորթ ո'Խթալի, փորթ Պրանսիոն, փորթ տը Մէնիլմոնթան, փորթ տիւ Փրէ-Սէն-Ժէրվէ. փորթ տը Շանփէրէ, փորթ տ'Օրլէան, փորթ տը Սէն-Քլու, փորթ տ'Անվէր, փորթ տը Շաթիյեոն, Ռիւ տը Ցանցիկ, Ռիւ տը Մորիյեոն եւլլն.:

Այսպէս կը տեսնուի որ Փարիզ կը մեծնայ իր դուռները բանալով:

Գիները.— 2 սենեակով յարկաբաժին մը պիտի արժէ 4.520 ֆր., 4 սենեակով յարկաբաժին մը 6,508 ֆր.:

Մի կարծէք թէ այսքան շինութիւն կը բաւէ: Բնակարանի տագնապը կարելի չէ մեղմացնել եթէ այս հնգամեայ ծրագրով այլ քաղաքապետութիւնը ստացած է 80 հազար բնակարանի խնդրանք ներկայիս, անշուշտ 5 տարի յետոյ խնդրանքը պիտի կրկնապատկուի: Մտածել որ բազմաթիւ տուներ կը քանդուին ամէն օր, հին ըլլալով կամ առողջութեան պատճառով:

Այնպէս որ ներկայիս 100 հազար բնակարան պէտք է, փարատելու համար տագնապը:

Վիճակագրութեան մը հեղինակը կը գրէ.

Եթէ ընդունինք որ Ֆրանսայի մէջ գոյութիւն ունին 10 միլիոն բնակարաններ, եւ իւրաքանչիւր բնակարան կը դիմանայ 200 տարի, այն ատեն ամէն տարի կը քանդուի 50 հազար բնակարան: Այս հաշիւէն մեկնելով, Լուշէօրի օրէնքը հինգ տարուան մէջ կը ծրագրէ շինել 260 հազար բնակարան ամբողջ Ֆրանսայի մէջ:

Բնակարանի խնդրանքները կ'արձանագրեն (բնակարան հայթայթելու համար՝ եթէ կարելի ըլլայ) հետեւեալ հասցէները. 49 Rue du Cardinal - Lemoine, 32 Quai des Célistins.

ՁԱՅՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

ՄԱՅԻՍ 28Ը ԼԻՈՆԻ ՄԷՋ

Լիոն— Անկախութեան տարեդարձը տօնուեցաւ յուլիս 5ի երեկոն, երրորդ Թաղապետարանի սրահին մէջ: Օրուան նախագահ պ. Վարդան Զուլէրեան «Մեր Հայրենիք»ով հանդէսը բացուած յայտարարեց եւ պաշմական ակնարկով մը ներկայացուց մեր դարաւոր անցեալը, ըմբոստացումները, մեր սորուկ վիճակը, եւրոպացիներու խոստումները ու անոնց խաբեութիւնները:

Ատենաբանութիւններ ըրին Հրանտ Շիշմանեան, Նահապետեան, Օր. Մարի Զէյթմեան եւ Սիրականեան. ջութակի վրայ նուագեցին պ պ Մելքոնեան եւ Ղազարեկեան:

Օրուան բանախօս ընկ. կ Սասունի կուռբանախօսութիւնով պարզեց օրուան տօնին նշանակութիւնը. «Այսօր մենք կը տօնենք մեր ըմբռնումներէն շա՛տ վեր տօն մը: Նկատի առնելով մեր 500 տարուան պատմութիւնը, այնքան անհրաժեշտ սերունդը մենք մեզ պէտք է համարենք, որ ապրեցանք ու տեսանք մեր անկախութեան օրը, այնքան գարեր սորուկ մնալէն յետոյ: Ազգերը պատմութեան բեմին վրայ կուի. ւի բռնուած էին. անոնցմէ ոմանք յաղթական եղան, իսկ ուրիշները պատմութեան բեմէն հեռացան: Այսպէս մեր կողքին գտնուող շատ մը ազգեր վերջնապէս անհետացած են: Իսկ մենք այսօր անկախութեան դրօշը պարկեշով՝ Մայիս 28ը կը տօնենք: Այս վերականգնած դրօշակը արդէն կ'ըսէ թէ հայութիւնը նորէն եկած է պատմութեան բեմին վրայ, ապրելու հաստատուն կամքով մը: պատմութիւնը երբեք չի հարցներ որեւէ ազգի թէ՝ պատրաստ ես, այլ դժնդակ մէկ վայրկեանին մէջ կուգայ ու քեզմէ կը պահանջէ որ արդարացնես քու գոյութեանդ իրաւունքը: Մեր ամենադժնդակ օրերուն Հայոց պատմութեան ուղտը եկաւ ու ծունկի չոքեցաւ մեր առջեւ: Ու հայ ժողովուրդը իր վերջին կորովով դուրս եկաւ ծովածաւալ թշնամւոն դէմ, արիւնլուայ եղաւ, տէր եւ տիկին անուշաւան Գաբիկեան կը ծանուցանեն ծրնունդը իրենց անդրանիկ զաւկին՝ ԵԴՈՒԱՐԴի:

Փարիզ, 8 Յուլիս 1930

տկարացաւ, բայց կրցաւ բեմին վրայ մնալ, ու իր տեղը որոշել: Այս տեղը ներկայ Հայաստանն է, անոր օրը Մայիս 28ն էր, ու անկախութեան յայտարարութիւնը այս հայկական դրօշակն էր: Մենք երկու բան կրցանք կերտել, առաջին մեր հայրենիքը եւ երկրորդ, մեր անկախութիւնը: Հիմա մեր անկախութիւնը կորսնցուցած ենք, բայց մեր հայրենիքը կը մնայ: Հայրենիքը հիմնական է, անկախութիւնը առնո՛ւ ետեւէն պիտի գայ»:

Պատշաճ խօսքերով նախագահը փակեց հանդէսը ու ժողովուրդը չրուեցաւ շա՛տ գոհտպաւորութեամբ:

Մ. Տէր Պետրոսեան

ՔՈՆԸՆ ՏՈՅԼ. ԵՐԿԻՆՔ ՀԱՍԱՒ

Քոնըն Տօյլ, «Շէրլոք Հոլմսի արկածներ»ուն հեղինակը, որուն մահը ծանուցեր էինք, իր հետերորդ ոգեհարցներուն խոստացեր էր անդրշիրիմեան լուրեր տալ իր մասին: Նիւ-Եորքի ոգեհարցական եկեղեցիին քարոզչուհին Տիկին Թոմսըն կը յայտնէ թէ արդէն լուրեր ստացաւ Քոնըն Տօյլէն: Ոգեհարցական նիստի մը ընթացքին, կրցաւ յարաբերութեան մտնել Ֆլորանս անուն հոգիի մը հետ, որ յայտնեց թէ «մեծ լոյս» մը հասաւ անդրշիրիմ: Տիկին Թոմսըն համոզուած է թէ հոգիին ակնարկութիւնը Քոնըն Տօյլի մասին է:

Ուրիշ ոգեհարց մը կրցաւ յարաբերութեան մտնել Քոնըն Տօյլի հոգիին հետ, որ յայտնած է թէ լաւ ճամրորդութենէ մը յետոյ հասած է անդրշիրիմ, թէ շատ գոհ է, եւ թէ ներկայիս կը հանգչի այս աշխարհի յոգնութիւններէն...:

Երանի՛ հաւատացելոց:

ԱՂԷՏ ՄԸ ՀԱՆԳԵՐՈՒԻ ՄԷՋ

Պրեսլաւէն կը հեռագրեն թէ յուլիս 9ին շրջանի հանքահորերուն մէջ պայթիւնի մը հետեւանքով, տեղի ունեցաւ փլուզում մը: Այսպէս 67 բանուորներ մնացին փլատակներուն տակ եւ բոլորն ալ ողջունեցան:

Կան նաեւ բազմաթիւ վիրաւորեալներ: Հանքահորին մէջ կ'աշխատէին 200 գերմանացի բանուորներ:

Կարդացէք և Տարածեցէք ԱԱՌԱՋը

''ՅԱՌԱՋ,,Ի ԹԵՐԹՕՆԸ — 54 —

ԱՆԴՐԱՆԻԿԻ ՅՈՒՇԵՐԸ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

Այդ քիւրտ ձէզդայիրը շրջակայ ժօտ 8-10 հայ գիւղեր դրեթէ փչացուցած էր, իսկ 3 գիւղը՝ Ղզղըլ-Ագաճ, Ասլա-Աղբիւր եւ Քիւրտ-Մէյդան՝ իւրաքանչիւրի 4 բաժնէն 3ը խլել էր ձեռքէն:

Հրայրը դեռ եկած չէր, երբ այդ բանը որոշեցինք: Իսկ երբ Հրայրը եկաւ, հետիս 2-3 գիտակից ընկերները ըսին.

«Եկո՛ւր ըսենք Հրայրին, գուցէ նա մեզ 2-3 լրտես գտնէ»:

«Տղե՛րք, ըսի, նա մեզ թոյլ չի տար, որ մենք էդ բանը ընենք, որովհետեւ եթէ իրիկունը մենք էդ ընենք, առաւօտուն Հրայրը փախստական պիտի ըլլայ:

Բայց նա չէր ուզեր փախստական ըլլալ, պատճառները ինքը գիտէր:

Վերջապէս. ըսինք Հրայրին՝ ն ք քսիթիզադով ըսաւ.

«Տղե՛րք, ձեզ մատաղ, այդ տէօրը մի հատ մարդով ես ընել տաւ: Նա ամէն օր մեր գիւղը կուգայ եւ իրիկուն մութ առեն տուն կը վերադառնայ: Նա ունի իրեն հաւատարիմ ձեւացնող հայ տղաներ, եւ անոնց ձեռքով, ձեզի ազնիւ խօսք կուտամ, նրան 5-10 օրէն սպաննել տամ: Եթէ Սաքօն ձեզ ընկեր է, չէ՞, ան իմ ընկերս ալ է: Ես տասը տարիէն ի վեր գիտեմ մեր գիւղացիներուն տուած չարիքը էդ քիւրտի ձեռքով»:

«Չէ՞ դուն Սաքոյի խոստումները ըրեր ես այդ քիւրտը սպաննել տալու: Երկու անգամ ալ Գուրգէնի օրօք մենք եկանք եւ նոյն խոստումներն ըրիր, բայց խոստումդ չկատարեցիր»:

«Թէկուզ հիմա փախստական ալ ըլլամ՝ պիտի ընել տաս»,— խօսք տուաւ Հրայրը:

Մենք ալ համոզուեցանք այդ ըսածներուն: Իրիկուն ինքը գընաց Ղզղըլ-Ագաճ, իսկ մենք դացինք Սասուն: Սակայն, պէտք է նկատել, որ Հրայրը էլի սպաննել չտուաւ այդ ճարպայիրը, որ Սաքոյի էրզրում գնալէն 3 ամիս վերջ սատկեցաւ իր բնական մահով:

* * *

Յաղթութիւն եւ թորօն ղրկեցինք Փէթար, որպէսզի Մուշէն բերուած տպրանքները փոխադրեն Սէվալ, ուր եւ հասանք մենք:

Այդտեղից 25 հոգի ղրկեցինք Առաքելոց վանքը, որպէսզի բերեն ցորենը: Շալակաւորները բերին 38 կոտ ցորեն, ժաքրել տուինք: Պակսեց, մնաց 34: Ջաղաց ղրկեցինք, ալիւր բերինք: Յարութիւնն եկաւ Փէթարէն, բերաւ իրեղէնները: Ղազարն ու Գէորգ ղրկեցի Շուշնամերկ եւ Մխիթար, շալակաւոր ուղարկելու ալիւրը Ստան Սերոբի քով փոխադրելու համար: Գէորգին եւ Ղազարին պատուիրեցի Տաղերդնի Ստանի կածի դիմաց, մէջտեղից կը վազէ Կէլիկուզանի գետը: Բարձր պոռալով Ստանի կածէն Տաղերդնի ձայն կը հասնի:

Վանքէն Սէվալ եկած ատենները՝ ճանապարհին ընկերներս առաջէս կը քալէին, ես ալ ետեւնուց կուգայի: Յանկարծ մի նեղ տեղ հեղհղ կ'երթար, խաբուեցայ, ոտքիս մէկը ներս գնաց: Մինչեւ Սէվալ հասնելնիս մէջքիս ցաւը կը շատնար, իսկ Սէվալ մ'լ աւելի շատացաւ: Ընկերս համբարձում ըսաւ թէ եկուր քաշենք: Ինձ պատկեցուցին, ոտքերս կապեցին սիւնի մը, մէկ ընկերս նստեց չոքերուս, իսկ Համբարձումը կած առաւ, գցեց վիզս եւ ուժով վեր քաշեց: Քաշած ատեն կարծեցի մարմինս բոլոր ոսկորները մէկ մէկուց փրթան: Ոտքերս քանդեցին եւ 10 րոպէ այդպէս պառկած մնացի, ապա վեր կացայ, բայց մէջքս չկըրցայ շտկեցնել: Ալլեւս չէի կըրնար քալել: Հէնց այդ օրէն փայտ մը առի ձեռքս, զէնքերս տղաքը:

Այդ օրը Ստան զարհուրելի դէպքեր էին կատարուեր, մենք տեղեկութիւն չունէինք:

Գէորգը Աւօ անուն հօրեղբայր մը ունէր, որ 15 տարի ձրի ծառայեր էր Առաքելոց վանքը: Զուխուրայ Ասլա Աղբիւրից կին մը, որու էրիկը 10 տարիէ ի վեր պանդխտութեան գացեր էր եւ կնոջը ոչ մի օգնութիւն ըրած չէր՝ խեղճութեան պատճառաւ կը դիմէ Մշու Վարդան վարդապետի եւ կը յայտնէ իր նեղութիւնը: Վարդան վարդապետը խղճահարուելով նամակ մը կը գրէ Առաքելոց վանքի վանահայր Յովհաննէս վարդապետին թէ «Աս ընդունէ տնտեսներու շարքը, թո՛ղ վանքին ծառայէ ու հաց ուտէ»:

Այդ կինը վանքին մէկ տարի կամ տարիուկէս կը ծառայէ, ապա Աւօն էդ կինը կը փախցնէ, կուգայ Ստան: Ես այդ կինը տեսած չէի, բայց եւ քանի մը ընկերներ տեսած են Առաքելոց վանքը: Սեդրակը էդ կինը կը տեսնէ Ստան, կը ճանաչէ, կուգայ կ'ըսէ Սերոբին թէ՝ «Դէորգի հօրեղբայրը մի կին փախցուցեր, բերեր է հոս»:

Սերոբի հրամանով Աւօն կը բերեն Սերոբի քով: Սերոբը կը հարցնէ. «Ո՞ւմ կը տանիս որ էս կինը»: «Ինձ համար», կ'ըսէ Աւօն ծիծաղելով: Մարդը մի կողմ կը տանին՝ կինը կը կանչեն, եւ կը հարցաքննեն. «Իմ մարդու հետ ինչի՞ փախար, ո՞ւմ հաժար կ'երթայիր, մարդո՞ւ հաժար՝ չէ նէ ուրիշի մը համար»: «Իմ մարդու հետ կ'երթայի իրեն հաժար: Էրիկս էսչափ ժամանակ է դուրբաթ գացեր է, ես մնացեր էի վանք խեղճութեան մէջ: Հիմա էս մարդու հետ կ'երթամ»: Կնոջը քանի մը հատ կը զարնեն եւ մի կողմ կը տանին:

Կ'երթան կը բերեն մարդը եւ կ'ըսեն. «Դու էս էրիկ ունեցող կինը ինչո՞ւ կը փախցնէիր. դու պառաւ՝ էս չահիլ (ըսելով կ'ըսէին թէ 25 26 տարեկան եղած է)»:

(Շար.)

ցընեն իրենց գործունէութիւնը, այսինքն, մասնաւորաբար բանուորական սէնդիկաներու մէջ, ջանան անկախաբար կազմակերպել եւ դեկավարել գործադուլային շարժումը:

— Հաշտգումարը անհրաժեշտ կը նկատէ անողոք պայքար մը մղել պատեհապաշտութեան դէմ, որ գործնականին մէջ, երեւան կուգայ՝ չգործադրելով յեղափոխական գործելակերպը — դասակարգ դասակարգի դէմ— հաշտարար վերաբերմունքով հանդէպ ընկերվարութեան, ինչպէս նաեւ յաժառ աշխատանքի եւ անընդհատ պայքարի մերժումով:»

Փարիզի Սուրիացիներու ընդդիմութիւնը

Փարիզի արաբ Սուրիացիներու ընկերակցութիւնը, երեսփոխաններուն ուղղեց Սուրիոյ սահմանադրութեան դէմ բողոքագիր մը:

Սուրիական ընկերակցութիւնը Սահմանադրութեան վերջին փոփոխութիւնները կ'որակէ իբր շարունակութիւն «գրաւումէն ի վեր, Ֆրանսայի կողմէ կիրարկուած բաժանումի եւ ստրկացման քաղաքականութեան»:

«Քաղաքականութիւն մը, որ, կը յայտնէ բողոքագիրը, Սուրիոյ կը պարտադրէ իր կամքին հակառակ Սահմանադրութիւն մը եւ առանց առնելու անոր հաւանութիւնը, աւելի կը ծանրացնէ կացութիւնը եւ զայրոյթը կը գրգռէ անոնց իսկ, որոնք կ'ուզեն հաւատարմօրէն գործակցիլ Ֆրանսայի:

Բողոքագիրը կ'անդրադառնայ նաեւ ֆրանսական մամուլին, որ կը ջանայ հաւատացնել թէ սուրիական նոր սահմանադրութիւնը նպաստաւոր ընդունելութիւն գտած է ամբողջ սուրիական ժողովուրդին կողմէ: Եւ յիշելէ յետոյ թէ ժողովուրդը իր բողոքը կը յայտնէ Դամասկոսի Հալէպի եւ Սուրիոյ զանազան քաղաքներուն մէջ, հրապարակային հաւաքոյթներով, կ'աւելցնէ.— Անգլիա Իրաքի հետ կնքից համաձայնութիւն մը այս երկրին ազատութեան եւ անկախութեան վրայ հիմնուած:

«Անգլիա համոզուած է որ հոգատարութիւնը անկարելի է կիրարկել Իրաքի վրայ, եւ հաստատելով Իրաքի ժողովուրդին ընդդիմութիւնը այդ վարչաձեւին, մղուեցաւ հոգատարութիւնը փոխել Իրաքի անկախութեան դաշինքով: Ի՞նչ կը սպասէ Ֆրանսա հետեւելու համար Անգլիոյ օրինակին»:

«ՅԱՌԱՋ» կը ծախուի ՀՐԱՆՏ - ՍԱՄՈՒԷԼ

Գրատան մէջ, 51 Rue Monsieur le Prince

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

ՋԱՇԱՐԱՆ ՖԼՕՐԻԱ

61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)

Մէթրօ Օտէոն եւ Սէն Միշել — Հեռաձայն Littré 38—43

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ

ՓԱՐԻԶԻ ԱՄԵՆԱՄՕՏԻԿ ՀԱՒԱՔՈՒԹԱԿԱՆ ՀԱՅ ԱԳԱՐԱԿԸ

Ամենախիստ քննութեան ենթարկուած օրուան թարմ հաւկիթներ, ազատութեան մէջ պարարտացած նապաստակներ եւ խորովելու համար առաջնակարգ հաւեր ժամչելի գիներով:

Խիստ կանոնաւոր առաքում: Յարգելի յաճախորդներէն կը խնդրուի իրենց ապսպրանքները մէկ երկուտասնեակէ պակաս չընել:

Դիմել կամ գրել՝ Hachmanian, 285 Fbg. St. Antoine, PARIS (XI), կամ ուղղակի ագարակին, Hachmanian, Elevage du Bois de Perroy, Fouquerolles par Beauvais (Oise).

ՀԱՑԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

ցեր եւ ցնօրէն՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՑԵԱՆ

29, Rue (Place) des Fêtes, Paris, XIX. Tél. Nord 96 - 61

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ: Աչքի մասնագէտը կ'ընդունի Գշ., Եշ. եւ Շաբաթ օրերը ժամը 4—6: Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երեք. եւ Շաբաթ օրերը ժամը 2—3: ԱՏԱՄՆԱԲՈՅԺը ամէն օր ժամը 9էն 19:



ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Միշտ ունենալու համար ապուխտի եւ երշիկի ընտիրը, համեղը եւ մաքուրը, դիմեցէք ուղղակի հանրածանօթ ապուխտագործ եւ ապուխտավաճառ

HAIG MARACHLIANի

Fabrique des salaisons Orientales

16 Rue des Hortensias St. Just, MARSEILLE

որ իր յարգելի յաճախորդներուն դիւրութիւն տալու համար բացած է նաեւ մթերանոց մը (կայարանին մօտ) 55 Rue des Petites Maries MARSEILLE.

Կ'ընդունի ապսպրանքներ ամէն երկիրներէ, մեծ աքանակ եւ փոքրաքանակ եւ կ'ուղարկէ կատարեալ ճշտապահութեամբ:

ԽՆԱՅԵՑ�էՔ ՁԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՒ ԴՐԱՄԸ

Հարիւրին 45 գեղջ ամերիկեան առաջնակարգ գրի մեքենաներու եւ հաշուեմեքենաներու:

Remington թիւ 10, 11 գին՝ 1400 ֆրանք,

Underwood թիւ 5, 12, 14 գին՝ 1800 ֆրանք,

վճարաման դիւրութիւններ:

Գիմել կամ գրել Ս. Նաւասարդեանի, 366 Rue Vaugirard, հեռաձայն՝ Vaugirard 28—89 եւ 05—93:

Ջ. Ե. Ո. ՄԻՈՒԹԵԱՆ ՑԵՐԵԿՈՅԹԸ

ՄԱՐՍԷՅԼ, ՍԱԼՈՆ ԷՍՓԱՆԵՈՒԻ ՄԷՋ Rue du Tapis Vert

14 Յուլիս երկուշաբթի առաւօտ ժամը 9.30ին

Կը խօսի՝ ՇԱՒԱՐՇ ՆԱՐԴՈՒՆԻ

Նիւթ ունենալով՝ «Ի՞ՆՉ Է ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ»

ԴԱՇՏԱՅԻՆ ԽՆՋՈՅՔ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ Ջ. Ե. Ո. ՄԻՈՒԹԵԱՆ

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԿՈՂՄԷ

Վաղը կիրակի առաւօտէն մինչեւ իրիկուն, Սէնթ-Անթուանի անտառին մէջ: Երեք անգամ ճաշ պիտի տրուի, ըմպելիով միասին: Մասնակցութիւն 20 ֆրանք: Ներկայ պիտի ըլլայ Ջ. Ե. Ո. Միութեան կեդր. վարչութեան ներկայացուցիչը:

Ժամադրավայր Փլաս տ'Էքսի կամարին տակ, առաւօտուն ժամը 7ին:

Հ. Մ. Ը. Մ.

ՀԱՑ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

Սկաուտներու բանակում-ցուցահանդէսը, Meudonի *անտառին մէջ,* Patte d'Oie *վայրը, 12—13—14 յուլիս: Կը մասնակցին 250 հայ սկաուտներ իրենց ձեռական աշխատութիւններով:*

Հրաւիրուած են օտար անձնաւորութիւններ եւ սկաուտներ:

Մէթրօ Javelէն առնել շոգեկառք եւ իջնել gare Meudon, *ուր կը սպասեն առաջնորդներ:*

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

ՄԱՐՍԷՅԼԻ ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

վաղը կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին

84 Rue Chapeի *թատերասրահին մէջ*

Մուտքը 5 ֆր.

ՀԱՄԱԽԱՐԲԵՐԴՅԱԿԱՆ ՓԼՕՖԹԱՅԻ ԱԻԱՆԴԱԿԱՆ ՏՕՆԸ ՄԷՏՈՆԻ

անտառին մէջ, այս երկուշաբթի առաւօտ ժամը 9էն մինչեւ իրիկուն, աղբիւրին մօտ: Կը նախագահէ Հ. ՍՐԱՊԻՈՆ վրդ.: Բանախօսութիւն, երգ, հայկական եւ կովկասեան պարեր, նուագ եւ ճոխ պիւֆէ:

Փափաքողները կրնան իրենց ճաշը միասին բերել:

Հաղորդկց. միջոցներ.— փոքր վէրսայլէն առնել ֆոնթենպլօ թիւ 89 եւ իջնել վերջաւորութեանը, բլաւառ, ուր պիտի սպասեն առաջնորդներ:

ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԷՍ

Լիոնի Պօլուի եւ Շրջ. երիտասարդաց միութեան կողմէ

Այս իրիկուն ժամը 8ին Գ. Թաղապետարանի սրահին մէջ

Կը նախագահէ Գ. ՏԻՐԱՏՈՒՐԵԱՆ

Կը ներկայացուի՝ «ԵՐԵՔ ՍԱԼՈՐՆԵՐԸ»

երգ, խմբերգ, արտասանութիւն, պարերգ, եւայլն

20 հոգինոց երգչախումբ *Մուտքը ազատ է*

ՀԱՆԴԷՍ

Սէվրի Սամուէլ Մուրատեան վարժարանի մրցանակաբաշխութեան հանդէսը վաղը կիրակի կէսօրէ վերջ ժամը 4.30ին 26 Rue Troyon, վարժարանին պարտէզին մէջ, նախատեսուած Պ. ՀԱՆՐԻ ՊՈՐՏՈՅԻ:

Հ. Յ. Դ.

ՓԱՐԻԶ

Պէլվիլի Ռոստով ենթակոմիտէի ժողովը վաղը կիրակի առաւօտ ժամը 10ին Ռոստովի սրահին մէջ, 131 Fbg. du Temple: Կարեւոր օրակարգ: Պարտաւորիչ ներկայութիւն:

Ալֆորվիլի Սարգիս Մինասեան ենթակոմրտէն ստիպողաբար ժողովի կը հրաւիրէ այսօր Շաբաթ իրիկուն ժամը 8.30ին 21 բիւ Էմիլ Զոլա, պիւրօ Թապաքի սրահը:

Նավիլի Արդուճեան խումբի ժողովը այս երկուշաբթի ժամը 4ին ընկ. Բժ. Ցէր Դաւճեանի բնակարանը, 27 Ave. Bellevue, Chaville.

Իսի - Լէ - Մոուլինօի Մուրատ խումբի ժողովը այսօր Շաբաթ իրիկուն ժամը 8.30ին ծանօթ հաւաքատեղին, Ave. Verdun. կարեւոր օրակարգ: Պարտաւորիչ ներկայութիւն:

Անիէր-Պուա-Քլոնպլի Զէյթուն ենթակոմրտէի ընդհ. ժողովը՝ այս երեքշաբթի իրիկուն ժամը 8.30ին ծանօթ հաւաքատեղին: կարեւոր օրակարգ: բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտաւորիչ է: Ներկայանալ անդամատեառով:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Նավիլի երիտ. երկ. միութեանը ժողովը այսօր Շաբաթ իրիկուն, ժամը 8.30ին ծանօթ հաւաքատեղին:

ՓԱՐԻԶԻ *Վասպուրականի Հայր. Միութեան ընդհ. ժողովը՝ վաղը կիրակի ժամը 3ին Զոլա-բիայի ճաշարանին վերնայարկը: Կը հրաւիրուին անդամ եւ ոչ անդամ բոլոր հայրենակիցները: Կարեւոր օրակարգ:*

Ջ. Ե. Ո. Միութեան Մարսէյլի մասնաճիւղին ընդհ. ժողովը այսօր Շաբաթ իրիկուն ժամը 9ին 23 Place de Comète ի սրահը, հրաւիրուին անդամները ու համակիրները: Ներկայ պիտի ըլլայ կեդր. վարչութեան ներկայացուցիչը:

ՋԱՐՍԱՆՃԱԴԻ Հայր. Միութիւններու բ. պատգամաւորական ժողովը վաղը կիրակի առաւօտ Լիոնի մէջ:

Կ'ուզուի ֆրանսերէն գիտցող գրագիր մը

Նախապատուութիւն պիտի տրուի անգլիերէն եւս գիտցողին: Դիմել՝ Մազըմեան եղբարք, 22 Rue d'Hauteville Paris:

Ցէր եւ Տիկին Նշան Ջիւրիւքտիշեան եւ զաւակները, Այրի Տիկին Սրբուհի Ջիւրիւքտիշեան եւ զաւակները, Գրիգոր, Գէորգ եւ վերգին Հարոնեան (Նիւ Եորք) եւ Մարգուանեան, Ապաճեան, Ջիւրիւքտիշեան (Ազէնք), Կարապետեան (Նիւ Եորք), Տիւբէկ (Նիւ Եորք) ընտանիքները շնորհակալութիւն կը յայտնեն հայրենակիցներու եւ բարեկամներու որոնք անձամբ, նամակով, հեռագրով եւ ծաղկեպսակով իրենց ցաւակցութիւնը յայտնեցին

ՕՐ. ԱՐՄԷՆ ՉԻՒՐԻՒՔՏԻՇԵԱՆ

դառնակսկիծ ժահուան առթիւ, որ տեղի ունեցաւ 14 տարեկան ծադիկ հասակին մէջ յուլիս 1ին, յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ յուլիս 3ին Սէն-Ժիւլիէնի (Մարսէյլ) մէջ:

ՖՈՒԹՊՕԼԻ ԲԱԺԱԿԻ ԱԽՈՅԵԱՆԱԿԱՆ ՄԵԾ ՄՐՑՈՒՄ

կազմակերպուած ֆէսթինի Հ. Մ. Ը. Մ-ի կողմէ, մասնակցութեամբ 12 զուտ հայ խումբերու, վաղը կիրակի ֆէսթինի Stade Paul Valayerի դաշտը, խաղերը կը սկսին առաւօտեան ժամը 8ին: Առնել Լիոնէն հանրակառք թիւ 16 եւ իջնել La Soie.

EMPIRE Սիգիք-Շոլ՝ 37 Av. Wagram

Այրի Տիկին Հոռիթսոս Շիւսէյինեան, Ցէր եւ Տիկին Մանուէլ Բէյիզեան. Օր. Նատիա Բէյիզեան, Ցէր եւ Տիկին Զարեհ Ցէտէեան, Պ. Հրանտ Ցէտէեան ինչպէս նաեւ Ցէտէեան, Մուրատեան, Գարաֆիսարեան, Նազիկեան, Քէօլէեան ընտանիքները սրտի խորունկ կսկիծով կը ծանուցանեն իրենց սիրեցեալ որդւոյն, եղբօր, աներձագին, եղբօրորդւոյն, քեռորդւոյն եւ ազգականին

ՎԱՀՐԱՄ ՀԻՒՍԷՅԻՆՃԵԱՆԻ

դառնակսկիծ մահը՝ որ տեղի ունեցաւ յուլիս 9ին 28 տարեկան երիտասարդ հասակին:

Յուղարկաւորութիւնը տեղի կ'ունենայ այսօր շաբաթ կէսօրէ վերջ ժամը 1.30ին փարիզի Հայոց եկեղեցին (15 Rue Jean Goujon): Հանգուցեալին մարմինը պիտի ամփոփուի փանթէոնի գերեզմանատունը:

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Լեւոն Տիլանեան կը փընտրէ իր հօրեղբայրը Թադէոս Տիլանեան եւ հօրեղբօրորդին Ռուբէն Տիլանեան: Լուր ունեցողներէն կը խնդրուի իմացնել՝ Լեւոն Տիլանեանի, 29 Rue Etienne Dolet, Alfortville, Seine.

— Կը փնտռուի Էնկիւրի նահանգին Մահնօս գիւղէն Յակոբ Զօպանեան 27—28 տարեկան, հօր անուն՝ Պօղոս, մօր՝ անուն Մարիամ: 1920ին կը գտնուէր իր մեծ մօրը քով Մերսին: Այդ թուականին մեկնած է Դամասկոսէն Պոլիս երթալու համար: Կիլիկիոյ ճամբուն վրայ տեսնուած է հայրենակիցի մը կողմէ: Իր մասին ստոյգ տեղեկութիւն տուողին 1000 ֆրանք նուէր: Իմացնել իր եղբօրը Գրիգոր Զօպանեանի 31 Rue de Fossé, Issy-les-Moulineaux (Seine) France կամ թերթիս վարչութեան:



ԳՆԵՑԷՔ ՔՈՏԱՔ ՄԸ ԳԻՆ՝ 250 ՖՐԱՆԲ

Place de Trinité

Châteaudun No. 59

Լուսանկարելով ֆաճոյքը կ'ունենանք վերատեսնելու ձեր զաւակները, ազգականները, բարեկամները եւ վերյիշելու ձեր զբօսանքի գեղեցիկ վայրերը եւ արձակուրդի օրերը:



En vacances : emportez un

Hawk-Eye Kodak

anastigmat f : 6,3 - 250 fr

On connaît la triple joie de prendre les photos, de les faire admirer à tous d'y revoir enfants, parents, amis, excursions et ses belles heures de liberté

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ PRINKIPO

VERTANÈS MAHDJOUBIAN et A. VITCHEN

24 Rue des Carmes, Paris (5) Մէթրօ՝ Place Maubert

Խնամքով պատրաստուած արեւելեան և եւրոպական ամէն տեսակ կերակուրներ ամէն ժամ: Մասնաւոր կերպով պատրաստուած տէօնէր-քէյթրինկ:

Այցելեցէք, համոզուելու համար: Հարմարիքի, ժողովներու, հաւաքոյթներու եւայլնի համար տրամադրելի սրահ:

Նրբաճաշակ տիկիններ

Մի մտահոգուիք թէ ձեր ֆոգուստները ո՞վ պիտի կարէ եւ ո՞վ ձեզ լիովին պիտի գոհացնէ: Դիմեցէք B. Jaret ֆիրմային հայկական հաստատութեան որ մեծ խնամքով կը պատրաստէ ձեր փափաքածին տեսակ ֆաւստոնները՝ դեկավարութեամբ ճանօթ վկայեալ դերձակուհիի եւ ՀՆԱՐՈՂ ՄՕԴԵԼԻՍՏ տիկին Յասմիկ Դաւիթօֆի: Բաց աստի հոն կը գտնէք ամենավերջին նորաձեւութեամբ պատասխան ֆագուստներ անհաւատալի ժամանակի գիներով: Շասցէն շատ դիւրին, 4 Rue de la Collegiale Ա. յարկ (86 Bld. St. Marcel). Métro Gobelins էն 40 քայլ:

ԼԻՈՆԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Զատկի տօնի առիթով KYSA կօշիկի վաճառատան մէջ

209 Rue Duguesclin (angle rue Dunoir), Lyon



պիտի գտնէք սեփական արհեստանոցի մէջ մասնաւոր խնամքով պատրաստուած այրերու եւ կիներու ֆանթէզի եւ ամէն տեսակ տոկուն կօշիկներ:

ԳԻՆԵՐԸ ԱՆՄՐՑԵԼԻՕՐԷՆ ԱԺԱՆ

Կը բաւէ անգամ մը այցելել հաւտզուելու համար ԾԱՆՕԹ.— Նոյն կօշիկները կը գտնուին մեր երկրորդ վաճառատունը 217 Rue Garibaldi, angle rue Paul-Bert.

Ամէն տեսակ կօշիկներ խնամքով կը նորոգուին մեր արհեստանոցին մէջ

Ցէր եւ Ցնօրէն ՍՈՂՈՄՈՆԵԱՆ ԵՂԲԱՐՔ

LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

ԲԱԺԱՆԵԳԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70ֆ.	140ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԻՏԱԼԻԱ	250 ֆրանք		
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200ֆ.	

"HARATCH"

Directeur-Propriétaire
SCH. MISSAKIAN
Խմբագիր՝
Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Rédaction et Administration
Խմբագրութիւն եւ Վարչութիւն
235, Faub. St.-Martin
PARIS (10e)
MÉTRO: LOUIS-BLANC OU JAURÈS
Téléphone: NORD 67-23
R. C. SEINE 376.286

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 3 ֆրանք

ԿԻՐԱԿԻ
13
ՅՈՒԼԻՍ
1930
13 JUILLET 1930

ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

Զ. ՏԱՐԻ Թիւ 1313

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԾՐԿՈՒ ԽՕՍՔ

ՀԱՅ ՄՏՔԻ ՄԾԱԿՈՒՄԸ

Հայ քննադատ մը, գրական դատողութիւններու շարքի մը մէջ, Երուխանի «Ամիրային Աղջիկը» վէպին ակնարկելով կ'ըսէ,— «Նոր սերունդը, ան որ գրել կը յաւակնի, վստահ եմ որ չէ հասկ կարդացած այդ գեղեցիկ գործը:»

Մենք պիտի աւելցնենք, — ոչ միայն նոր սերունդի մեծ մասը, այլ նոյն իսկ հին սերունդին պատկանողներն ալ մեծ մասամբ չեն կարդացած այդ երկը: Ու անմիջապէս ըսենք, որ այս պարագային, խնդիրը գրական եւ մասնակի հանգամանքէն դատ, շահեկան է իր բարացուցական կողմով:

Հայ մտաւորականութիւնը (խնդրոյ առարկայ չդարձնենք թէ ո՞վ է մտաւորականը) միայն գրական իսկական արժէքներու անդիտութեամբ չէ որ կը փայլի, այլ նոյն աստիճանին վրայ կը գտնուի, երբ հարցը փոխադրենք ազգային, քաղաքական եւ գիտական ըմբռնումներու շուրջը:

Խնդիրը պարզաբանելէն առաջ, հարկադրական պարտականութիւն մը կատարենք, ըսելու թէ «բացառութիւնները յարգելի են»:

Կասկածէ դուրս է որ հայ մտաւորականութիւնը հարուստ է բազմապիսի ծանօթութիւններով, բայց ազդատ է այն քիչ ծանօթութեամբ, որ իր իրական արժէքը պիտի կազմէր:

Գրականութեամբ հետաքրքրուող հայ մարդը (հին եւ նոր սերունդը միասին առած) շատ բան գիտէ օտար բազմաթիւ հեղինակներու մասին (որոնցմէ ոմանք կասկածելի արժէքով), բայց գրեթէ բան չի գիտեր հայ անվիճելի արուեստագէտին վրայ: Դուք ամէն քայլափոխի, կրնաք հանդիպիլ հայ մտաւորականներու, որոնք առաջին բառը երբ արտասանեն այ եւ ելա- հայ գրականութեան մասին, կրյիշեն Ս. Աբովեանի անունը: Բայց դուք կրնաք ապահով ըլլալ որ 90 տոկոսը այդ խօսողներէն չէ կարդացած «Վէրք Հայաստանի»ն:

Աւելի առաջ տարէք ձեր հետազօտութիւնը: Հայ մտաւորականը ձեզի կրնայ ճառել, առաւել կամ պակաս գիտութեամբ, ամէն ազգի պատմութենէն, քաղաքական խնդիրներէն, նոյնիսկ չնչին մանրամասնութիւններ գիտէ Նափոլէոնի կամ Քլէմանսօի կեանքի դրուագներէն, բայց բացարձակապէս անտեղեակ է հայոց պատմութենէն:

Դուք զարմանքով կրնաք մտիկ ընել հանրագիտական ծանօթութիւն ունեցող հայ մարդը, երբ ան խօսի Զէննաստանի, Նոր Զէլանտայի, Ամերիկայի կամ այլ երկրի աշխարհագրական, տնտեսական կամ ազգագրական մանրամասնութիւններու մասին, բայց կատարեալ տգէտ մըն է երբ կարգը կուգայ մեր հայրենիքին, մեր դրացիներուն եւ մեր տնտեսական վիճակին:

Չեմ ուզեր երկարել այս շարքը, վստահ որ իւրաքանչիւր ընթերցող իր կարգին արգէն ընդարձակ ցանկ մը ի մտի ունի:

Հետաքրքիր է գիտնալ թէ այս երեւոյթը ի՞նչպէս է յառաջացած հայ մտաւորականութեան մէջ:

Իմ համոզումով, հայ մտաւորականութեան այդպիսի մտային կազմութիւնը արդիւնքն է 50 եւ աւելի տարիներու կրթութեան: Հայ մտային վերածնունդի շրջանը կարելի է բնորոշել իր ձգտումով դէպի «Եւրոպական Լոյս»ը: Եւ 60ական թուականներէն ասդին, իրարու յաջորդող հայ մտաւորականները կը վազէ եւրոպական լոյսին ետեւէն: Այդ վազքի ընթացքին, ինչ որ տեղական էր, ինչ որ մեր շրջապատին կը պատկանէր, նկատուեցաւ ասիական ու արհամարելի: Այս հիմնական կէտէն կը սկսի «բանգիտութեան» դէմ չվերաքրքնուած ցաւը, եւ «արժէք»ի թիւր ըմբռնումները: Այդ կրթութեան արդիւնքն է, որ տակաւին հայ մտաւորականը իր «բանգիտութեան» փառասիրութիւնը կը փնտռէ խեղճուկ ուսումնասիրութիւն մը ներկայացնել Իբսէնի վրայ (ուրիշներէն առած հաւաքածոյ մը), երբ Շանթի երկերու մասին գաղափար չունի: Այդ իսկ կրթութեան արդիւնքը պէտք է նկատել, երբ ընկերային գիտութեամբ զբաղուող հայ երիտասարդը կ'ուսումնասիրէ «հողային հարցը Նոր Զէլանտայում», երբ Հայաստանի հողային հարցի մասին կատարելապէս անգէտ է:

Օրինակները շատ են: կանգ առնենք: Խնդիրը վերագնահատութեան մը շուրջ կը դառնայ: Հիմնական վերագնահատանքի կը կարօտի հայ մտային զարգացման հարցը: Հայ մտաւորականը պիտի ըմբռնէ որ համալսնագիտական կամ բառգրքային ծանօթութիւնները տակաւին գիտութիւն չեն: Պէտք է գիտակցի, որ եթէ Պլատոն, Արիստոտէլն ու Բէրգսոնը գոց գիտնայ (ինչ որ կասկածելի է) այդ դեռ չի նշանակեր որ կուտ մը փիլիսոփայութիւն ունի, եթէ իր սեփական դատողութիւնը չսկսի գործել:

Այս համառօտ դիտողութիւնը պահանջ մըն է որ մենք վերագտնենք մեր իսկական խարիսխին: Եւրոպական մտքի մեր անճարակ միջնորդի դերը վերջ պէտք է գտնէ: Այդ չի նշանակեր որ եւրոպական միտքը պէտք չէ իւրացնենք, ընդհակառակն, իւրացումն անհրաժեշտ է, պայմանաւ սակայն որ, այդ «բանգիտութեան» օժանդակութեամբ մեր արմատին վրայ ստեղծագործող միտք մըյայտնելու ճիգին նուիրուինք:

Հայ մտաւորականութիւնը, օտար փառքերու կամ միջավայրերու ճնշումէն ազատ, իր հոգեկան անկախութեան պէտք է գտնայ, սեփական դատողութեամբ եւ ինքնուրոյն դիմագծովարժէքաւորելու: Հին կրթութեան ընձեռած շլացումները, այսօր արժէքազուրկ եղած են:

կ. Ս.

ՕՐԸ ՕՐԻՆ

ՔՐՏԱԿԱՆ ԿՌԻՒՆԵՐԸ

Թրքական լուրերու համաձայն, զսպողական շարժումը յաջողութեամբ կը տարածուի: Ըմբոստները երեք կողմէ պաշարուած են եւ բաց կը մնայ միայն Պարսկաստանի ճամբան: Բայց սաւառնակները գոցած են նաեւ այս ճամբան: Ըմբոստները օգնութիւն կը ստանան այս միակ ելքէն: Բայց եւ այնպէս, կ'ըսէ «Ագշամ», մեր սաւառնակները եւ ոստիկան զինուորները վճռապէս պիտի շարունակեն հետապնդումը, մինչեւ որ վերջին ըմբոստը փճանայ: Այնպէս որ հրոսակներու բնաջնջումը հաւանաբար լրանայ մէկ շաբաթէն: Արդէն հիմակուընէ շատ նեղ դիրքի մատնուած են անոնք եւ զոհեր կուտան: Ամէնէն աւելի կորուստ տուած են Ձէլալիները:

Սպանուած իւրտ պետեր

Ջսպումի գործողութեանց ընթացքին, սպաննուած են Ալշէշի ըմբոստներու պետերէն Հիւչիւք Իպրահիմ, Ձէպէքէճիի Աիմէտ օղլու Թահսին, Սէվլի Պէտրի եւ Ձաֆէր, իսկ Մուրատիէի շրջանին մէջ՝ Ջուպուքլըցի Մուսթաֆա:

«Քայմգ»ի Պոլսոյ Թղթակցին ճամածայն, պայազիտի շրջանին մէջ կռիւը լուրջ ձանգամանք ստացած է եւ զիւրտերը բաւական գերի տուած են: Քանի մը Թուրք զինուորներ ալ գերի տարուած են զիւրտերու կողմէ:

Յուլիս 14ի տարաողութիւնները

Ֆրանսական Ազգ. տօնին առթիւ պաշտօնական արարողութիւնները պիտի սկսին յուլիս 14ի առաւօտեան ժամը 8ին, Էնվալիտի հրաթափարը եւ Շան զ'Էլիզէի Փոքր Պալատին շրջակայքը: Հանրապետութեան նախագահը, ընկերակցութեամբ Թունուզի պէյին եւ նախարարներու, ներկայ պիտի ըլլայ զօրանոցքին, որուն կը մասնակցին Այճերիական զօրամասեր:

Սալմաս կը վերաշինուի

ԹԻՒՐԱՆ, 11 յուլիս, (Անթել).— Պարսկական Մէճլիսը ընդունեց ելմտական նախարարութեան ծրագիրը, մայիսին երկրաշարժի հետեւանքով քանդուած Սալմաստի տեղ նոր քաղաքիմը շինութեան համար: Նոր քաղաքը պիտի կոչուի Շահփուր:

Գերմանի ազգայնականները զինուած են

Փոցտամի ոստիկանութենէն քննիչ մը, որ կնոջ մը ընկերակցութեամբ եւ ինքնաշարժ հեծելանիւով տուն կը վերադառնար, զոհ գնաց ինքնաշարժի արկածի մը:

Արկածը քննող ոստիկանները իրենց պաշտօնակցին գրպաններէն դտան բազմաթիւ նամակներ, եւ փաստաթուղթեր: Երեւան ելաւ թէ զոհը կը պատկանէր Հիթլէրի ազգայնամոլ կուսակցութեան: Իսկ նամակներու ընթերցումը ոստիկանութիւնն առաջնորդեց երեւան հանելու կատարեալ գաղտնի զինարան մը, ազգայնականներու կողմէ կազմուած: Պերլինի մէջ խուզարկուեցան կարգ մը տուներ, ուրկէ գտնուեցան մեծ քանակութեամբ զէնք եւ ռազմանիւթ: Տասներկու անձեր ձերբակալուեցան: Գրաւուած զէնքերուն մէջ կան ամէն տեսակի գնդացիրներ, պատերազմական հրազէններ, ատրճանակներ, դաշոյններ եւ ձեռնառումբեր:

Զինադադարի պայքարում Թուրքիոյ մէջ

Պոլսէն կը հեռագրեն թէ, իզմիտի մօտերը, Տէրինճէիգինուրական կայանին մէջ, ռազմանիւթի մեծ պահեստ մը պայթեցաւ:

Պայթիւնները որոնք տեւեցին 7էն 9, կը լսուէին 20 քիլոմեթր հեռաւորութենէ: Էնկիւրիի կառավարութիւնը ստիպուեցաւ կանգ առնել իզմիտի կայարանը, մինչեւ որ երկրաշափներ աւարտեցին երկաթուղիի քննութիւնը եւ հաստատեցին թէ չէ վնասուած:

Եգիպտոսի կացութիւնը

Գերմական «Ֆորվէրց» թերթը վերապահութեամբ կը հաղորդէ Գահիրէէն ստացուածդլուր մը, թէ կացութիւնը Եգիպտոսի մէջ չափազանց ծանր է, թէ Եգիպտոսի անկախութիւնը հետապնդող վաֆտ կուսակցութիւնը հրաւէր ուղղած է Սըտքը փաշայի դահլիճին՝ հրաժարելու եւ թէ մտադիր է յուլիս 21ին հանրապետութիւն հռչակելու Եգիպտոսի մէջ: Բանակին սպաները մեծ մասամբ վաֆտ կուսակցութեան հետ են:

Ամերիկա եւ մախայիլ օրեվը

Ամերիկեան կառավարութիւնը, սկսած է մտահոգուիլ, մաքսային վերջին օրէնքին հետեւանքով, եւրոպական կարգ մը պետութեանց կողմէ, ձեռք առնուած փոխ-վրէժի միջոցներէն: կը կարծուի թէ Անգլիոյ յարումը Եւրոպայի դաշնակցութեան գաղափարին, մեծապէս պիտի վնասէ Ամերիկայէն դէպի անգլիական երկիրներ արտածման գործին:

Նոյնպէս, Իտալիոյ կողմէ ինքնաշարժներու տուրքին վրայ վերջերս դրուած յաւելումը կը նկատուի ուղղուած Ամերիկայի դէմ: Եւ վերջապէս, անցեալ շաբթու 14 պետութեանց ներկայացուցիչներու, Փարիզի մէջ ունեցած հանդիպումը՝ քննելու համար ամերիկեան մաքսային նոր օրէնքին հետեւանքները, կը մտատանջէ Ամերիկան:

ՅՈՒԼԻՍ 14Ի ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԻՆ ՊԱՏՁԱՌՈՎ,
«Յառաջ»ի յաջորդ Թիւը լոյս կը տեսնէ ՀՈՐԵՔՇԱԲԹԻ օր:

Հնդկաստանի դեպքերը

Պոմպէյէն հասած լուրերու համաձայն, Մատրասէն 150 քիլոմեթր, կուտիատով վայրին մէջ ըմբոստութիւններ ծագած են, յեղափոխական պետերու ձերբակալման առթիւ: Ոստիկանները գաւազանի յարձակումներով չկրցան ցրուել ամբոխը որ կը քալէր բանտին վրայ: Ոստիկանութիւնն այնատեն կրակ բացաւ, սպաննեց մէկը եւ վիրաւորեց 14 անձեր: Մատրասի բնակչութիւնը զերագրգռուած է:

Հովրահի մէջ ձեռնառումբ նետուեցաւ ոստիկան-քննիչի մը տան վրայ: փէշաւէրի մէջ նոյնպէս, դատաւորի մը տան վրայ: վէլլօրի մէջ, վեց յեղափոխականներու ձերբակալման հետեւանքով, ժողովուրդը որոշեց չվճարել տուրքերը եւ խուժեց հարկահաւաքին գրասենեակը: Ոստիկանութիւնը կրակ բացաւ, վիրաւորելով շատերը: Բազմաթիւ վաճառատուններ կրակի տրուեցան եւ հեռագրական թելերը կտրուեցան:

Կալկաթայի մէջ, Մահատմա ցեղախումբը որ լեռնային թնդանօթներով յարձակում գործեր էր հիւսիս-արեւմտեան սահմանագլուխի զինուորական պահակախումբերուն վրայ, մեծ վնասներ կրեց:

Կառավարական զօրամասերը անոնց դէմ գործածեցին գնդացիրներ. օդանաւերը կը մասնակցէին գործողութեան:

Ըմբոստները քաշուեցան լեռ, ուրկէ կը շարունակեն որոշ բակոծել զօրախումբերը:

Մեծն Ստալին կը փառաբանուի

Բոլշեւիկեան 16րդ համագումարը կը վերջանայ Ստալինի ճակտին կապելով փառապսակ մը:

Կրէմլինեան շրջանակներուն մէջ կը կատակեն թէ արքայական թագադրութեան հանդէս մըն է որ կատարուի՝ ի փառս կարմիր ցարին:

Ցայտնի էր թէ Ստալին զգետնելէ յետոյ իր հակառակորդները, իր ձեռքին մէջ էր կեդրոնացուցեր քաղաքական զարհուրելի ուժի մը սանձերը: Բայց կարմիր բռնաւորը, ցարդ կը նախընտրէր մութին մէջ գործել՝ դէմքին անցուցած հանմեստութեան դիմակ մը: Բայց հիմա, ամէն ինչ փոխուած է: Ստալին այլեւս կը դառնայ բոլշեւիկեան ամբողջ վարչաձեւին կեդրոնական դէմքը, տեսակ մը կիսաստուած, որուն առջեւ ամէն մարդ կ'երկրպագէ ահով ու սարսափով:

Արդէն երեք քաղաքներ, հարիւրաւոր գործարաններ, բազմաթիւ «կոլխոզ»ներ եւ դպրոցներ մկրտուեցան իր անունով:

Պաշտօնական բոլոր ճառախօսները, ամէն տեղ, անոր ճառերն ու գրութիւնները կը յիշատակեն եւ իրենց բանախօսութիւնը կը սկսին Ստալինի նուիրուած ներբողականով մը: Անհամար նամակներ եւ հեռագրեր կը ստանայ Ստալին, իբր «համաշխարհային համայնավարութեան փառապանծ պետ»ը:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ՊՈՒԿԱՐԻՈՅ վարչապետը ճասաւ Պուտափէշդ, ուր գտաւ խանդավառ ընդունելութիւն. Այս առթիւ Հունգարիոյ մամուլը ջերմ փափաքներ կը յայտնէ Պուլկարեւհունգար մերձեցման: կիսապաշտօնական «Փեշթէր Լոյտ» թերթը կը գրէ.— Պէտք է յուսալ թէ Լիտվինովի հետ սկսած բանակցութիւնները օգտակար պիտի ըլլան երկու պետութիւններուն:

ՍՊԱՆԻՈՅ Մոնթէլլա քաղաքին մէջ, երկրաշարժը մեծ աւերներ կը գործէ: վնասուած տուներու թիւը ճասած է 250ի: փլելու վիճակին են թարկուած են եկեղեցին եւ հիւանդանոցին տանիքը ինչպէս նաեւ վանք մը փլան: շնորհիւ ընդերկրեայ աղմուկներուն, որոնք լսուեցան ցնցումէն առաջ, ժողովուրդը ժամանակ ունեցաւ դուրս թափելու տուներէն եւ այս կերպով, առաջքն առնուեցաւ մարդկային կորուստներու:

ԵԳԻՊՏՈՍԻ Ֆուատ Թագաւորը գաճիրէէն մեկնեցաւ Աղեքսանդրիա ուր պիտի անցընէ ամառը: վերջին խռովութիւններու պատճառով, ապահովութեան միջոցներ ձեռք առնուած էին, իսկ Թագաւորին կ'ընկերանար գինուորական պահակախումբ մը եւ գինուորներ բռնած էին գաճիրէէն Աղեքսանդրիա երկաթուղիին երկայնքը:

ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ կարեւոր փաստաթուղթերու ծրար մը որ ճրաճանգներ կը բովանդակէր Գերմանիոյ լեհական հիւպատոսներուն համար, գողցուեցաւ խորհրդաւոր պարագաներու մէջ: Այս գողութեան հետեւանքով, Թղթատարական բազմաթիւ պաշտօնեաներ հանուեցան իրենց պաշտօնէն:

ԵՐԿՈՒ շաբթուան դատավարութիւններէ յետոյ, Պուտափէշթի դատարանը գանազան պատիժներ տուաւ 13 համայնավարներու, որոնք մեղադրուած էին երկրին մէջ խռովութիւն ձգելու յանցանքով:

ՍԻԼԻԶԻՈՅ մէջ, հանքային փլուզման զոհերու թիւն է 162: Միայն 46 հանքագործներ կարելի եղաւ փրկել, հակառակ ինժեներներուն փրկելու համար թափուած բոլոր ջանքերուն: 102 աշխատաւորներ որոնք թաղուած էին հանքի փլատակներուն տակ, թողուեցան իրենց բախտին, որովհետեւ, հանքին մէջ տարածուած կրիզուն, անկարելի կը դարձնէր փրկարարութեան գործը:

ՃԻՊՐԱԼԹԱՐի ընդհովանի փաստագրին շինութեան համար, ուսումնասիրութիւններ եւ խորաչափումներ սկսան կատարուիլ ափրիկեան ծովեզրէն:

Թարիֆայի մէջ արդէն, սպանիական եզերքէն խորաչափումներ կատարուեցան 250 մեդրի չափ: Ուսումնասիրութիւնները պիտի կատարուին մինչեւ 400 մեդր խորութեամբ:

ՄՈՒՏՔԻ ՈՍՏՈՒԹ

Մեծ անուն մը ելի Բաց ոչ մեր էջէն կրնայ ներկայանալ այնքան ուժեղ ներգործութեամբ մը, ինչպէս Մուտքի ոստուն անունը։ Ան ինքնին ամբողջ պատմութիւն մըն է, ամբողջ ժողովուրդի մը կեանքին ամենէն ողբերգական շրջանը։ Ան կը ներկայացնէ ոչ միայն ահռելի ոճրագործութիւն մը, այլ նաեւ ոճրագործութեան ենթարկուած ժողովուրդի մը հոգեբանութիւնը։ Ան կը ներկայացնէ ոճրագործութեան ենթարկուած ժողովուրդի մը հոգեբանութիւնը։ Ան կը ներկայացնէ ոճրագործութեան ենթարկուած ժողովուրդի մը հոգեբանութիւնը։

Մուտքի ոստուն ամենէն առաջ կը ներկայացնէ Օսմանեան կայսրութեան մէջ 1912 - 13 թուականներուն տեղի ունեցած բալքանեան պատերազմները։ Ան կը ներկայացնէ այդ պատերազմները, որոնք ամբողջ աշխարհի ուշադրութիւնը գրաւած էին։ Ան կը ներկայացնէ այդ պատերազմները, որոնք ամբողջ աշխարհի ուշադրութիւնը գրաւած էին։ Ան կը ներկայացնէ այդ պատերազմները, որոնք ամբողջ աշխարհի ուշադրութիւնը գրաւած էին։

Մուտքի ոստուն ամենէն առաջ կը ներկայացնէ Օսմանեան կայսրութեան մէջ 1912 - 13 թուականներուն տեղի ունեցած բալքանեան պատերազմները։ Ան կը ներկայացնէ այդ պատերազմները, որոնք ամբողջ աշխարհի ուշադրութիւնը գրաւած էին։ Ան կը ներկայացնէ այդ պատերազմները, որոնք ամբողջ աշխարհի ուշադրութիւնը գրաւած էին։

Մուտքի ոստուն ամենէն առաջ կը ներկայացնէ Օսմանեան կայսրութեան մէջ 1912 - 13 թուականներուն տեղի ունեցած բալքանեան պատերազմները։ Ան կը ներկայացնէ այդ պատերազմները, որոնք ամբողջ աշխարհի ուշադրութիւնը գրաւած էին։ Ան կը ներկայացնէ այդ պատերազմները, որոնք ամբողջ աշխարհի ուշադրութիւնը գրաւած էին։

Մուտքի ոստուն ամենէն առաջ կը ներկայացնէ Օսմանեան կայսրութեան մէջ 1912 - 13 թուականներուն տեղի ունեցած բալքանեան պատերազմները։ Ան կը ներկայացնէ այդ պատերազմները, որոնք ամբողջ աշխարհի ուշադրութիւնը գրաւած էին։ Ան կը ներկայացնէ այդ պատերազմները, որոնք ամբողջ աշխարհի ուշադրութիւնը գրաւած էին։

Մուտքի ոստուն ամենէն առաջ կը ներկայացնէ Օսմանեան կայսրութեան մէջ 1912 - 13 թուականներուն տեղի ունեցած բալքանեան պատերազմները։ Ան կը ներկայացնէ այդ պատերազմները, որոնք ամբողջ աշխարհի ուշադրութիւնը գրաւած էին։ Ան կը ներկայացնէ այդ պատերազմները, որոնք ամբողջ աշխարհի ուշադրութիւնը գրաւած էին։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԲԱՐՏԻՆԵՐԸ

OB AMOREM CRUOR

Բարձրաբերձ բարտինները կ'ազօթե՛ն, ոտքի վրայ։
Եւ անոնց արծըթուն տերեւները նման են մանրանկար ձեռքերու,
Որոնք, անբարբառ ազօթքին ընկերանալով,
Դողդողային կը կցուին իրարու։
Բարձրաբերձ բարտինները կ'ազօթե՛ն, ոտքի վրայ։
Առուներուն, ջրանցքներուն, ճամբաներուն երկայնքը,
Անոնք կանգնած են ուղիղ, զեղուղէշ եւ ամուր՝ հակառակ հովերուն։
Կամ Ֆիւրնի եւ Սէվիլի ապաշխարողներուն պէս,
Երկա՛ր թափօր մըն է, որ, լո՛ւռ,
Կանգնած է անտառներուն, ճամբաներուն եզերքէ։
Կամ ուխտաւոր հսկաներու խումբն է,
Որ երբեք չպիտի հասնի հեռաւոր սրբատունը,
Եւ որ տարիներէ ի վեր նո՛յն ազօթքը կ'ըսէ։
Բարտինե՛ր։ Դաշտի եւ անտառներու բարտինե՛ր,
Աշաձեւ ճամբաներու եւ ջրանցքներու բարտինե՛ր,
Անթիւ բարտինե՛ր, որ կանգնած էք կարծես պատերազմի մէջ,
Ես ցաւե՛ր ունիմ ձեր հասակէն ալ մեծ,
Ցաւե՛ր, զորս զգայ երկար ճամբուս վրայ, ուր սէր կը փնտռէի։
Կը տեսնէ՞ք, ինչպէ՛ս կ'անցնիմ ծանր ճակատս հակած,
Բարտինե՛ր, որ կանգնած էք մեծ ճամբաներուն եզերքը։
Վիթխարի եւ տպա՛ւոր բարտիններ, բարտինե՛ր ուխտաւոր,
Եթէ երբեք չպիտի հասնիմ հեռաւոր սրբատունը,
Զոր իմ բաղձանքս օծած է ուրախութեամբ եւ լոյսով,
Կ'ուզեմ ե՛ս ալ կցել ձեռքերս, եւ երգե՛լ ձեզի հետ,
Բարտինե՛ր, երգէ՛ք որ ե՛ս ալ ազօթեմ ոտքի վրայ։

Թարգմ. Շ. Ն. — ՕՐ. ԿԻՒԼԻ Տ'ԷՐՊՄՈՆ

ԹՈՒՐՔԻՈՅ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

ՎՏԱՆԳՈՒԱԾ ԹՈՒՐՔԵԻՊԱՐՍԻԿ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Ցէյլի Թելէկրաֆ»ի Պոլսոյ Թղթակիցը կը հեռագրէ իր Թերթին.— Թուրքեւպարսիկ սահմանագլուխի դէպքերը, զոր տակաւին չբաւեն մը առաջ Թուրք մամուլը կը ներկայացնէր իբրեւ սովորական աւազակային ընդհարումներ, ծանր բնոյթ ստացած են վերջերս՝ համաձայն Թուրք մամուլին տեղեկութեանց եւ կրնան ծանրակշիռ հետեւանքներ ունենալ միջազգային յարաբերութեանց վրայ։ Թուրքիա համոզուած է որ այդ «աւազակախումբերը» մեծ քանակութեամբ ռազմամթերք ունին՝ պարսիկ կառավարութեան անհոգութեան կամ անկարողութեան պատճառաւ։ Ենթադրողներ կան նոյնիսկ որ պարսիկ կառավարութիւնը կրաւորական աջակցութիւն գոյց կուտայ անոնց, հակառակ սահմանագլուխի հարցերու առթիւ իր տուած յանձնառութեանց։

Ներգոյն լուրերու համաձայն, որոշապէս յայտնի է հիմա, որ Արարատեան շրջանի դէպքերը աւազակային հանգամանք չունին, այլ քաղաքական շարժումի գոյն ստացած են։

Թուրք կառավարութիւնը կը կասկածի Թէ կապ մը գոյութիւն ունի այս դէպքերուն եւ քիւրտ յեղափոխական կազմակերպութեան, ինչպէս նաեւ Շէյխ Սայիտի տղուն՝ Սէլահէտտինի գաղտնի կազմակերպութեան աշխատանքներուն մէջեւ։

Զօրաւոր կասկածներ կան նոյնպէս, որ սահմանագլուխի կարգ մը ցեղերը եւ քիւրտ բնակչութիւնը դրդուած են 150 հոգինոց անբաղձալիներու խմբակի մը կողմէ — որոնք կրօնական պրոպագանդով կը զբաղին այդ շրջաններուն մէջ — խռովութիւն ստեղծելու Թուրքիոյ մէջ։ Ցիշեալ ցեղերը մեծ քանակութեամբ դէնք եւ ռազմամթերք կը ստանան։

Նէքի առջեւ ունենալով խռովութեանց վայրը՝ այսինքն Թուրք պարսիկ եւ ռուսական սահմաններու հանդիպումի կէտը, դժուար չէ եզրակացնել Թէ որո՞ւ կ'ուզեն ակնարկել իբրեւ «դրդիչ»։

Թուրքիա խիստ միջոցներու դիմած է այդ շրջանին մէջ, բայց դժուար է իր կացութիւնը, որովհետեւ ըմբոստները մօտիկ ապաստան ունին։

Վերջին պահուն վանէն ստացուած հեռագրի մը համաձայն, Հարիւրի չափ պարսիկ քաղաքներ գրաւած են նաւմուրի բարձունքները եւ պարսկական հողը քշած են ըմբոստներու ընտանիքները։ Բազմաթիւ գեղախումբեր դէպի Թուրք սահմանագլուխը կ'երթան դիմադրելու Թուրք սահմանապահ ուժերուն։

կարդացէք և տարածեցէք ՅԱՌԱՋԸ

ՄԻՏՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ՆՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՉԿԱՅ

Անտրէ Պիլլի կը պոռայ.— «Քնարերգութիւնը մեռա՛ւ»։ Եւ քննադատները, ասդիէն անդիէն, ձայն կուտան Թէ երբեք նոր բանաստեղծութիւն չեն կարդացած... Ռէնպոյէն ի վեր։ Սթանիսլաս Ֆիւմէ կը հաստատէ Թէ 1920-1930 ոչ մէկ նոր եւ ինքնատիպ բանաստեղծ երեւան եկած է գրական աշխարհի վրայ։ Եւ կ'աւելցնէ Թէ արդի բանաստեղծութիւնը նմանագրութիւն (pastiche) մըն է, տեսակ մը բանագողութիւն։ Մանաւանդ կ'ըսեն Թէ կոմս Լոթրէամոնն է, որ նմանագրութեան կ'ենթարկուի։ Ուրիշներ եւ Ֆիւմէ, հաստատելով որ Լոթրէամոնի աշակերտները չափազանց միջակ են, կը յայտնէ Թէ յաջող նմանագրութեան մը կ'ենթարկուի Ռէնպոն։ «Ֆրանսայի ինչպէս բոլոր երկիրներու արդի երիտասարդ բանաստեղծութիւնը կը ստորագրէ ինքը, Ռէնպո»։

ԽՕՍՈՒՆ ՇԱՐԺԱՆԿԱՐ

«Աննալ» Հարգարան մը բացած է, հասկնալու համար բանաստեղծներուն կարծիքը Թէ կարելի՞ է դաշնակագութիւն մը բանաստեղծութեան եւ խօսուն շարժանկարին միջեւ։

Փօլ Վալէրի կ'ըսէ.— Ձեմ գիտեր Թէ ի՛նչ է խօսուն շարժանկարը, լուր չունիմ։ Բանաստեղծութիւնը, իմ կարծիքովս, լեզուի արուեստ մըն է, որ պէտք է կամ ապրի ինքն իրմով, կամ կորսուի երթայ»։ Ֆրանսուա Փորշէ — «Գրուած բանաստեղծութիւնը եւ խօսուն շարժանկարը տարբեր բաներ են։ Բայց եւ այնպէս կը սպասեմ ու կը յուսամ»։ Ժան Քոքթօ.— «Խօսուն շարժանկարը գոյց կուտայ, որ բանաստեղծութեան առջեւ կը պարզուի նոր աշխարհ մը»։

ՄԱՔՍՈՒՏԵԱՆ

«Ընքսէլսիօր» կը գրէ հայ դերասան Մաքսուտեանի մասին.

— Մաքսուտեան այն դերասանն է, որ այս բառին կու տայ տաղանդ, անկեղծութիւն եւ գիտակցութիւն։ Մէկն է անոնցմէ, որ կը ներկայացնեն Ֆրանսական շարժանկարին եւ Թատերական արուեստին պետիւը։

20 տարի առաջ, ան կը խաղար Սարա Պէրնարի կողքին, փառքի ընկերն էր անոր, որ ժուռ կուգար երկիրէ երկիր։ Ցառաջդիմութեան գիծով, Մաքսուտեան եկաւ մասաւ շարժանկարին մէջ, եւ իր անունը, որ ժողովրդական դարձած էր հեռաւոր երկիրներու մէջ, ապահովեց յաջողութիւն մը բազմաթիւ ֆիլմերու համար։

Երկար տաեն չերեւցաւ Մաքսուտեան։ Պատճառը յագնութիւնը չէր, այլ ֆրանսական շարժանկարին մեղաւոր քունը։

Ցանկարծ խօսուն շարժանկարը արթնցուց յոյսեր, շարժեց կարողութիւններ։ Եւ Մաքսուտեան, որ երբեմնկօրէն խօսեցաւ բեմէն, պիտի խօսի նաեւ սպիտակ վարագոյրին եռեւէն։

Մաքսուտեան, որ դեռ երիտասարդ է, մեր «հիներէն» է, այն հանգամանքով որ տեսած է փակուած շրջան մը, շրջանը Սարա պէրնարի թատերական պտոյտներուն։ Իր յիշատակները մեծապէս պիտի նպաստեն նոյն շրջանի թատրոնի պատմութեան։

ԲԺԻՇԿՆԵՐԸ ՇԱՏՑԱԾ ԵՆ

Շատցա՜ծ են, շատցա՜ծ, սա բժիշկները։ Փողոցէն անցնողը բռնես, բժիշկ է։ Եւ գանգատողներն ալ շատցած են նոյնքան։

Կը գանգատինանախբժիշկները, որոնք երէկ դիւրին քննութիւններով եւ քանի մը տարուան ուսանողութեամբ վկայական մը կորզած են, իսկ հիմա կը պահանջեն խստացնել քննութիւնները եւ երկարել բժշկական ուսանողի շրջանը։

Կը գանգատին նաեւ պաշտօնական մարմինները։ Փարիզի բժշկական համալսարանը ամէն տարի կ'ընդունէր 500 ուսանող, վերջերս ամէն տարի՝ 1000։ Իսկ Ֆրանսայի մէջ գործող բժիշկներուն թիւը, որ 16,815 էր, այժմ հասած է 27,500ի։

Բժիշկներու արհեստակցական ընկերութիւնը այս պարագան յիշեցուցած է ծնողքներու որ չփորձուին բժիշկ դարձնել իրենց զաւակները, հասկցնելով որ այսուհետեւ «ալ հաց չկայ բժիշկներուն համար»։

Եւ վերջապէս կան գանգատողներ ալ, որ կ'ըսեն Թէ օտար բժիշկները շատցած են Ֆրանսայի մէջ։

Այս գանգատողները կ'ըսեն Թէ օտար բժիշկը երկրորդական կանոնաւոր կրթութիւն չէ ստացած, յաճախ բժշկական համալսարան կը մտնէ կասկածելի վկայականներով։ Փրոֆ. Պալթազար, Փարիզի բժշկական համալսարանին ներկայ տեսուչը, կը յայտարարէ Թէ օտարական բժիշկներուն Թիւը, որ 1911ին կը ներկայացնէր 12 առ հարիւր համեմատութիւն մը, այժմ հասած է 25 առ հարիւրի։ Մասնաւորաբար շատցած են ռուս բժիշկները, որոնց արտօնութիւն տրուած է խնամել միայն ռուս հիւանդները։

Նկատուած է, որ ուսանողութիւները հետզհետէ կը պակսին։ 1911ին ուսանողներուն Թիւն էր 8 779, եւ 1929ին՝ 14,574, ուսանողուհիներուն Թիւը, որ քանի մը տարի առաջ 30 առ հարիւր համեմատութիւն մը կը ներկայացներ, իջած է 10 առ հարիւրի։

Փոփի Լէվիէր եւս կը գանգատի, որ ամէն տարի 250 նոր բժիշկներ կը հաստատուին Փարիզի մէջ։ Միւս կողմէ հիւանդ յաճախորդներու Թիւը կը պակսի, որովհետեւ դեղարանները պարտաւոր դեղեր (specialité) կը ծախեն առանց դեղագիրի։ Եւ ոչ ոք կ'արգիլէ պատրաստ դեղերու վաճառումը, որ կը զարգացնէ երկրին ճարտարուեստը։ Ընկերային ապահովագրութեան օրէնքը, սակայն, նպաստաւոր կը Թուի բժիշկներուն։

ՄԻՇՏ ԴԵՂԵՑԻԿ

Գողեցկութիւնը դարձած է հոմանիշ երիտասարդութեան։ Ահա Թէ ինչո՛ւ շատեր, երբ իրենց տարիքը կ'առնեն, կ'ուզեն անհետացնել կարգ մը նշաններ, որոնք տգեղ են։

Գողեցկութիւնը, սակայն, գաղափար մըն է։ Ճաշակի խնդիր, կ'ըսեն ոմանք։ Բայց այսօր իտալական գրական դպրոց մը, որ 900 կը կոչուի, աւելի իտէական կը նկատէ տգեղութիւնը։ Եւ կը պայքարի հելլենական ըմբռնումին դէմ գեղեցկութեան մասին։

Ինչ որ ըսուի, գեղեցկութեան գաղափարը այնքան ընդհանրացած է ժողովուրդին մէջ, որ ուժ դարձած է։ Մագնիսական ուժ մը, որ կը նպաստէ յաջողութեան,— բախտին։ Իսկապէս, որքա՜ն գեղեցիկ դէմքեր, որ յաջողած են կեանքի մէջ, եւ որքա՜ն տգեղներ, որ ձախողած են։

Այսպէս գեղեցկութիւնը ընդհանրական բաղձանք մը դարձած է։ Մասնաւորաբար կիները, եւ պառաւցածները, կը վազեն դէպի աղբիւրը գեղեցկութեան։ Անոնց, որ կը խոստանան գեղեցկացնել։ Արդարեւ մեծ քաղաքներու մէջ բազմաթիւ են կախարդները, որ գեղեցկութիւն կը ծախեն, եւ... վիրաբոյժները, որ կը խոստանան։

Ահա վերջին տարիներս վիրաբուժութիւնը, մասնաւորաբար գեղեցկագիտական վիրաբուժութիւնը առանձին ասպարէզ մը կը դառնայ արդէն, որ կը փորձէ քնքշութիւն մը տալ խորշոմած մորթին, անհետացնել ստորին թարթիչներու բոյնի ձեւ ուռեցքը, կպակին տակ կախուած դրօշաձեւ մորթի պաստառները, որ Թագուհիի մը պատկառանքը կուտան յաճախ, լերկ գանկերու վրայ բուսած միսէ սխեռները, վերջապէս վերգնել տոպրակի պէս կախուած փորերը, պնդութիւն տալ Թուռմած լսիկի (տօմաԹէս) պէս Թուշերուն, ջուրի պէս հոսուն եւ առատ ստինքներուն։

Հռչակաւոր վիրաբոյժներ հիմա կը յայտարարեն Թէ կարելի է բուժել տգեղութիւնն ալ, ճիշդ հիւանդութեան մը պէս։ Ուրեմն, Թող մեծամաղձութեան ու անձնասպանութեան չմղուին տգեղները, եթէ... գրամ ունին։

Ի ՑԻՇԱՏԱԿ ՔՈՆԸՆ ՏՕՅԼԻ

Սան-Ֆրանչիսքոյէն կը հեռագրեն Թէ պուտտայական ոգեհարց մը, որ 105 տարուան է, կը ջանայ հաղորդակցութեան մտնել քոնըն Տօյլի հոգիին հետ։

Ուրբաթ գիշեր Լոնտոնի մէջ ի յիշատակ քոնըն Տօյլի մեծ արարողութիւն մը տեղի ունեցաւ, որուն ներկայ գտնուեցան 16 հազարէ աւելի անձեր։ Այս հաւաքոյթին ընթացքին համբաւաւոր ոգեհարց Ռոպըրթ ջանագ յարաբերութիւն հաստատել քոնընն Տօյլի հետ։ Ներկայ էին նաեւ քոնըն Տօյլի կինը եւ պարագաները։ Հանգուցեալ վիպագրին սովորական աթոռը ձգուած էր պարապ։

ԴԱՆԻՈՑ ընկերվարական կառավարութիւնը մտադրած է հաստատել նոր նախարարութիւն մը, որուն միակ գործը պիտի ըլլայ պայքարիլ գինեմոլութեան դէմ։

ԼՈՆՏՈՆԷՆ կ'իմացնեն Թէ անգլիոյ եկեղեցական գլխաւոր հաստատութեանց ներկայացուցիչները, ժողովի մը ընթացքին հաստատեցին արտասահմանէն նեբածուած բոլոր ապրանքներէն մաքսատուրք գանձելու որոշումը։

RADIO - MÉCANIQUE
56 Rue Corvisart, Paris (13e),
ՄԷԹրօ՝ Corvisart
ՄԻՄԻԱՅՆ 500 ՖՐԱՆՔՈՎ
կը տանձնէ ձեզ տանը մէջ
հաստատել T. S. F. որով
պիտի կրնաք լսել բոլոր քոնսէրներ։ Օգտուեցէք առիթէն։

ԱՆԴՐԱՆԻԿԻ ՅՈՒՇԵՐԸ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՅՍ

Աւօն կ'ըսէ. «Մեր երկիրը էապէս 1000 բան է պատահեր, Թող աս ըլլայ 1001»։ Սերոբը կ'ըսէ Հասոյին. «Ջա՛րկ դրան»։ Հրացանի դունդաղով կը սկսէ զարնել կոնակը։ «Շիտակ ըսէ՝ կը ստիպեն ըսելու Աւօն՝ քեզի՞ համար կը փախցնէիր, չէ նէ Գէորգի համար»։ Մարդու քթէն, բերնէն արիւն կ'երթայ, կը ձգեն սի կողմ։

Երկրորդ օրը նորից կը բերեն։ Սերոբը կը կանչէ Աղբու ոէս Սենօն, Խէչօ-Ըսքօն, Կէչիկուզանի Բսէ-Ջուէն, տէր Քալ ք ահանան, նաեւ քանի մը իշխաններ, խնդիրը կը պարզէ նրանց։ Նրանք կ'ըսեն. «Սրանց դատը մեզ յանձնի՛ր, կամ մենք ի՛նքներս կը դատենք, կամ 3 4 տղայ հետերնին կը ղրկենք Մուշ Առաջնորդի քով. Թո՛ղ Ա.աջնորդը ի՛նչ ուզէ՝ էն ընէ»։

Այդ րոպէին Սերոբը կ'իմանայ, որ Գէորգը Ախած է Տաղուրնի (ուր ես ղրկած էի շալակաւորի հաւար)։ Երկու զինուոր կ'եկլեն Խտանայ կաժը եւ կը պռոան Գէորգին Թէ՝ «եկուր, պարոնը կը կանչէ քեզի»։ Մինչեւ Գէորգի գալը կրկին երկու անգամ հարցուցեր են Թէ՝ «չիտակ ըսէ՛, քե՞զ համար կը փախցնէիր, չէ նէ Գէորգի համար. եթէ չիտակը չըսես՝ կը սպանենք»։ Մարդը տանջուած կամացուկ կ'ըսէ, Թէ Գէորգի համար։

Գէորգը կը վերցնէ իր հրացանը եւ կուգայ Սերոբի քով։

Խտան հասնելուն՝ ժողովուրդէն մէկը կը պատմէ հոն անցած դարձածը իր հօրեղբօր մասին։ Գէորգը կուգայ, կը տեսնի հօրեղբօր քիթը-բերանը ուռած, արիւնոտած։ Ներս կը մտնի, բարեւ կուտայ բոլորին... Թէ՛ տէրտէր, Թէ՛ ժողովուրդ հոդ են։ Հրացանը կը կախէ սիւնի վրայ՝ կը նստի։

Սերոբը խնդիրը կը պարզէ Գէորգին եւ կ'ըսէ. «Ահա՛ քո հօրեղբօր ըրածները. քո կարծիքդ ի՞նչ է»։ Ինչ որ պէտք է՝ դուն կ'ընես», — կ'ըսէ Գէորգը. — Սերն ու մածունը կերեր ես՝ ջուր Թանին ի՞նձ ես կանչեր»։ Սերոբը կնոջ մօտ նստած ձեռքը կը նետէ խանչալին՝ Գէորգին զարնելու, բայց Սօսէն կը բռնէ։ «Ի՞նչ սերն ու մածուն եմ կերեր», կ'ըսէ Սերոբը։— «Եթէ քովդ փոքրի չափ պատիւ ունենայիր՝ այդպէս չէիր ընէր, կը սպասէիր ընկերներուդ գալուն»։

Ժողովուրդը կ'ըսէ «Խընդրենք, ախպէր էդ խնդիրը մեզի յանձնեցէք»։ «Ես Գէորգին եմ յանձներ», կ'ըսէ Սերոբը։ Իսկ Գէորգը կ'ըսէ. «Ես իմ խըմբապետիս եմ յանձներ»։ «Ես քո խմբապետը չեմ, կը պատասխանէ Սերոբը.— եթէ ես քո խմբապետը ըլլայի՝ դուն ինձի չէիր ըսի Թէ՝ սերն ու մածուն ես կերեր, ջուր Թանին ինձի կանչեր»։

Այդ «յանձներ ես, յանձներ եմ» խնդիրը 7 անգամ կը դառնայ կուգայ։ Վերջը Գէորգը Սերոբին կ'ըսէ. «Ինձի՛ ես յանձներ»։ «Չա՛, քեզի եմ յանձներ», կ'ըսէ Սերոբը։ Գէորգը հրացանը վար կ'առնէ, մէջը մի փամփուշտ կը դնէ. դուրս կուգայ՝ կը զարնէ հօրեղբօրը, գետին կը փռէ. փամփուշտ մը եւս կը դնէ՝ կը զարնէ կնոջը։ Կինն ալ կ'ընկնի ցեխերու մէջ։ Հօրեղբօր լեզուն այլեւս չի դառնար, որովհետեւ գնդակը դիպեր էր արտին։ իսկ կնոջը կողքին էր բռներ եւ կինը կը սկսէ Թափլտիլ։

Սերոբը կ'ըսէ Հասոյին. «Գնա՛ լրացո՛ւր, եկուր»։ Հասօն կ'երթայ, երկու խաչալ կը զարնէ, կինն ալ կը վերջացնէ։

Գէորգը ներս կուգայ։ Սերոբը կ'ըսէ. «Դէ՛ եկուր քովս նստի՛ր, է՛լ ոչինչ չկայ քեզի»։ Գէորգը չի գար, այլ կը վերադառնայ Տաղուրնի։ 15 օր վերջը, Գէորգը հոդ կը հիւանդանայ եւ կը պառկի տէրտէրի տանը։ Իսկ Խտան՝ շորերը կը հանեն դիակներուն եւ այդ շորերը կուտան Ախպու ոէս Սենոյին։ Սենօն շորերն ու ոտքի ամաններն կը տանի, կը հագցնէ իր ընտանեաց։ Ժողովուրդը կը հաւաքուի, որպէսզի դիակները վերցնեն տանին գերեզմանը պահեն։

Սերոբն ու ընկերները Թոյլ չեն տար գերեզման տանելու։ Այդ պատճառաւ, 200 քայլ հեռու հովիտ մը գը գտնուի, հոն քիչ մը հող կը փորեն, մէջը կը ծածկեն։ 10 հոգի խտանցի կը վերցնեն իրենց հրացանները, կը քաշուին Խտանայ դիմացի տանձի ծառի տակ եւ կ'ըսեն. «Մենք չենք ընդունիր այդպէս բան. մեր Թաղէն հեռացի՛ր, եթէ ոչ մենք կը դառնանք մեր տանեցւոց, Թո՛ղ Խտանը քեզ սնայ»։

* * *

Դառնանք Սէմալ։ Ես անկարող էի քալել՝ Սէմալէն Խտան գնալու համար։ Բիրը քեաթիբ Մանուկի ձին հեծուցին ինձ, բայց ցաւի պատճառով ձիու վրայ ալ չէի կրնար կայնիլ։ Աւլիւրի շալակաւորներ ճանապարհին պատահեցին՝ ես քանի մը ընկերներով հասայ Ղարիբշանալի վերեւ։ Հող դրուած էին Մխիթարաց եւ Ղարիբշանաց խուղեր։ Ինձ իջեցուցին ձիուց, կրակի մը քով պառկեցուցին։

Ես եւ քովիս ընկերները տեղեկութիւն չունէինք Խտանցած զարձածի մասին։ Ժողովրդի մէջ փսփսոց մը ընկաւ։ Էղոնց սովորական բան է. երբ մեզի ոչխար մորթել ուզենան՝ կը փսփսան. ես ալ դիտեմ էդպէս բան է։ Փսփսոցը կը շարունակուէր։ Կանչեցի. «Մաքօ՛, էդ ինչ կը փսփսաք, ի՞նչ է պատահեր»։ «Վալլահ, բան մը չկայ», ըսաւ։ Քիչ մը վերջ եկաւ, կողքիս պառկաւ եւ ինձի դաղտնի ըսաւ, Թէ Խտան էապէս բան է պատահեր։ Հետիս ընկերներն ալ իմացան։

Մութ էր, մէկ ձեռքիս փայտառայ, միւս ձեռքովս բռնած ընկեր մը՝ մի կերպ իջայ Տաղուրնի։

(Շար.)

Հ· Մ· Ը· Մ·

ՀԱՅ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

Սկաուտներու բանակում-ցուցահանդէսը, Meudonի անտառին մէջ, Patte d'Oie վայրը, 12—13—14 յուլիս: կը մասնակցին 250 հայ սկաուտներ իրենց ձեռական աշխատութիւններով: Հրաւիրուած են օտար անձնաւորութիւններ եւ սկաուտներ:

Մէթրօ Javelէն առնել շոգեկառք եւ իջնել gare Meudon, *ուր կը սպասեն առաջնորդներ:*

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ԴՊՐՈՑԱՍԷՐԻ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

20 Յուլիս կիրակի ժամը 2էն 10 վարժարանին պարտէզին մէջ

1 Boulevard du Nord, Le Raincy-Pavillons

Մարզական խաղեր, կովկասեան եւ եւրոպական պարեր եւ անակնկալներ:

Կը մասնակցին Պ. Վ. Սվաճեան, պարուհի Օր. Գավուքճեան եւ վարժարանի սանուհիները

ձոխ գեղարուեստական բաժին

Մուտք՝ 5 ֆրանք

ԲԱՑՈՒԱԾ Է

ԳՐԱՏՈՒՆ ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ՓԱՐԻԶԻ ԿԵԴՐՈՆԸ (Քարթիէ Լաթէնէն) 51 Rue Monsieur-le-Prince

Հեռաձայն՝ Danton 88 65

ուր պիտի գտնէք ամէն տեսակ հին ու նոր գիրքեր, հայերէն, ֆրանսերէն, անգլիերէն եւ այլ լեզուներով, դրական, դիտական դրսեւորական, վիպական եւայլն, նաեւ ամէն լեզուով պարբերականներ:

ՀԱՍԱՆ ԵՆ ԲԱԳՓԻԻ ԲՈԼՈՐ ԳՈՐԾԵՐԸ

Արտասահմանէն եւ գաւառէն եղած ապսպրանքները օրը օրին կը դրկուին:

ԳՐԱՏԱՆ ԿԻՑ ԲԱՑՈՒԱԾ Է ՆԱԵԻ ԿԱԶՄԱՏՈՒՆ ՄԸ

Բոլոր գրավաճառները, հրատարակիչներն ու հեղինակները կրնան դիմել ուէ գործի համար՝

LIBRAIRIE H.SAMUEL, 51 rue Monsieur-le-Prince, Paris VIe

ՏՕՔԹՕՐ Մ. Տ. ՆՈՐԱՑՐ

8 RUE BUFFAULT, PARIS (9e)

Հեռաձայն, PROVENCE: *20—37*

Կը խնամէ ներքին եւ կիներու հիւանդութիւնները

Կ'ընդունի ամէն օր կէսօրէ վերջ ժամը 2—7 եւ ժամադրութեամբ: կիրակի եւ տօն օրեր, առաւօտեան ժամը 10—12:

ALLO, ALLO

Tél. TRUDAINE 81-07

Այս է թիւը մեր թէլէֆոնին

ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՁԷՆԱԶԵԱՆ եւ ԳԱՍԱՆՃԵԱՆ

8, Rue de Chateaudun, PARIS (9e)

Métro Cadet, Peletier եւ Notre Dame de Loretteի խիստ մօտ

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

ՋԱՇԱՐԱՆ ՖԼՕՐԻԱ

61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)

Մէթրօ Օտէոն եւ Սէն Միշէլ Հեռաձայն Littré 38—43

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ

ՅԱՐԳԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

Եթէ կ'ուզէք բերնի համով մաքուր եւ անարատ սուրճ խմել, դիմեցէք հռչակաւոր

CAFÉ SULTANի

Ս. ԹՈՐՈՍ (Բէժահի)

92 Rue d'Angoulème Métro: Couronne, Tél. Ménil. 56—06

Ամենավերջին դրութեամբ մեքենաներով օժտուած մեր վաճառատան մէջ պատրաստուած սուրճը կը գոհացնէ ամէնէն նրբաճաշակները:

Ձոխ տեսակներ, գիներ անմրցելի, փորձեցէք անգամ մը եւ պիտի տեսնէք տարբերութիւնը ձեր գործածած եւ մեր պատրաստած սուրճին: կ'ընդունինք ապսպրանքներ արտասահմանէն եւ գաւառներէն: փոխադրողներու կը դրկենք գիներու ցանկը: փոքրաքանակ եւ մեծաքանակ վաճառում:

ՓԱՐԻԶԻ ԱՄԵՆԱՄՕՏԻԿ ՀԱԻԱՔՈՒԻԶԱԿԱՆ ՀԱՅ ԱԳԱՐԱԿԸ

Այժմեական քննութեան ենթարկուած օրուան թարմ հաւկիթներ, ազատութեան մէջ պարարտացած նապաստակներ եւ խորովելու համար առաջնակարգ հաւեր ժամչելի գիներով:

Խիստ կանոնաւոր առաքում: Յարգելի յաճախորդներէն կը խնդրուի իրենց ապսպրանքները մէկ երկուամսեակէ պակաս չընել:

Դիմել կամ գրել՝ Hachmanian, 285 Fbg. St. Antoine, PARIS (XI), *կամ ուղղակի ագարակին,* Hachmanian, Elevage du Bois de Perroy, Fouquerolles par Beauvais (Oise).

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ PRINKIPO

VERTANÈS MAHDJOUBIAN et A. VITCHEN

24 Rue des Carmes, Paris (5) Մէթրօ՝ Place Maubert

Խնամքով պատրաստուած արեւելեան և եւրոպական ամէն տեսակ կերակուրներ ամէն ժամ: Մասնաւոր կերպով պատրաստուած տէօնէր-քէպապ:

Այցելեցէք, համոզուելու համար: Հարսնիքի, ժողովներու, հաւաքոյթներու եւայլնի համար տրամադրելի սրահ:

ՏԱՆՏԵՐ ԸԼԼԱԼ ԵՒ ՎԱՐՁՔԷ ԱԶԱՏԻԼ

Ամենադիւրին եւ նպաստաւոր պայմաններով, Պէքոնի մէջ Սէն Լազարի կայարանէն 8 վայրկեան, ելեքտրական գնացքով, ժամը 10 թրէն, երթեւեկ 0.90 սանթիմ օրական, 2, 3 եւ 4 սենեակով ափարթըմաններ, ամենավերջին Confortով, ամառ ձմեռ տաք եւ պաղ ջուր խոհանոցին եւ բաղնիքին մէջ, կեդրոնական ջերմութիւն եւ վերելակ (ascenseur): 50 հազարէն 100 հազար ֆրանք —միայն մէկ քառորդը կանխիկ, մէկ քառորդը մէկուկէս երկու տարիէն, իսկ մնացեալ կէսը 5, 10 կամ 15 տարիէն վճարելի, ըստ կամս, պետական տոկոսի սակով, հարիւրին 7: Դիմել Archambault et Delacourt, 14 Rue de la Pépinière, կամ Սէն Լազարի մօտ: Ամէն հինգշաբթի ժամը 4էն 6 հայ թարգման մը պիտի տայ պէտք եղած բոլոր բացատրութիւնները:



ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ (Հաստատուած 1923ին)

CABINET V. YARJANIAN

Հասցէ՝ 5 rue du Cardinal Mercier, PARIS (9e)

Tél. CENTRAL, 97-39 եւ 96.70

Կը ստանձնէ պատժական, քաղաքային եւ առեւտր. գատեր *պաշտպանելով ֆրանսացի հանրաժանօք պաշտօնակիցներու հետ, վարչական եւ հիւպատոսարանական գործերու արագ հետապնդում: Արկածի դատերու մասնաւոր ճիւղ, առանց կանխավճարի: ԺԱՌԱՆԱԳ մտնելու համար, ձեռնհաս իշխանութիւններէ արտօնագրի ստացում: (ԱՖԻՏԱՎԻԹ), Քաղաքային ամուսնութեան արագ գործողութիւն: Վիզա ամէն երկրի համար:*

Գաւառներէն եւ արտասահմանէն եղած գիմումներուն կը պատասխանուի անմիջապէս: Յարհրդակցութիւնները ձրի են:

Դիմել ամէն օր, 9էն 12 եւ 2էն 7, բացի կիրակէ

ՀԱՆՐԱԹԱՆՕԹ ԳՈՀԱՐԱՎԱՃԱՌ-ԺԱՄԱԳՈՐԾ

ՀՐԱՉ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Նախկին վարիչ հռչակաւոր ՕՄԷԿԱ ժամացոյցներուն

ժընեւի գործարանին

261 Fbg. St. Martin, Paris (10): Մէթրօ՝ Louis Blanc եւ Jaurès. Հեռ. Nord 85—63 եւ 95—50: Հանրակառք՝ 5, 50, 51, 52, 21, 26, 29, Omnibus՝ W. M.

Պատի եւ գրպանի ամէն տեսակ ժամացոյցներ, քարիյոններ, նշանտուքի, հարսնիքի ժամանիներ եւ ամէն տեսակ ոսկի եւ արծաթ զարդեղէններ եւ Թանկարժէք գոհարեղէններ: Ոսկերչութեան եւ ժամացոյցի վերաբերեալ խնամով նորոգութիւններ:

Նախքան ձեր գնումները այցելեցէք մեր խանութը:

PLOMBERIE-COUVERTURE

ՋՈՒՐ ԿԱԶ

ԼՈԳԱՐԱՆի, ԵԻՆ.ի ՉԵՏԵԼՈՒԻՄ



Կը ստանձնէ կապարի եւ գինկի ամէն տեսակ գործեր, մասնաւորաբար Ջուրի խողովակներու զետեղուս եւ նորոգութիւն: Դիմել նամակով՝

A. TATOULIANի

12 Rue Elie, Gentilly, (Seine)

Հ· Ց· Դ· Լիոնի ժողովրդային Գրադարանը՝ իր անդամուհիներէն

ՕՐ· ՍԻՐԱՆՈՒՇ ՄԱՍՏԻԿԵԱՆԻ

ժամուան առթիւ իր ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալին պարագաներուն:

Ցուղարկաւորութիւնը կատարուեցաւ Յուլիս 2ին Լիոնի մէջ:

BRASSERIE HAROLA

3 Rue la Vieuville

Place des Abbesses

Métro: Abbesses, Tél. Marc. 39-88

ՎԱՐՁՈՒԻ ՍՐԱՀՆԵՐ

պարահանդէսի, հացկերոյթի, երեկոյթներու եւայլնի համար, մասնաւոր գին Հայերու

EMPIRE Միգիք-Շոլ՝ 37 Av. Wagram

IMPRIMERIE - MASSIS - EDITION

208bis, Rue Lafayette Paris (10)

Le Gérant H. STEPHAN

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ

96 r. Rivoli, *մէթ·* Շաթլէ: *Արմատ. եւ նոր մեթոտով դարմանում արանց եւ կանանց մորթի, արիւնի եւ վէներ. հիւանդութեանց (ֆրանկիստ, ջերմամիզ.) եւ վարիսի: Մասն. լապօռաթուառ: Խղճամիտ եւ արագ խորհրդակցութ.մէն օր 9—12, 2—5 Կիրակի 9—12.*

STUDIO D'ART MANOUK

Մարսէյլի գեղարուեստական լուսանկարչատունը՝

116 La Canebière

ուր պիտի գտնէք արուեստի կատարեալ բաւարարութիւն, ինչպէս նաեւ ամառնային բացօդեայ ժամանցներու համար ընտիր մեքենաներ ամէն պիտոյքներով: վճարումներու դիւրութիւն: Չափաւոր գին:

ՄԱՆՈՒԿ ՄԱՐԿՈՍԵԱՆ

ՎԵՐԱԲԱՑՈՒԱԾ Է ՁԱՆԿԷՕԶԵԱՆԻ ՁԱՇԱՐԱՆԸ

202 Rue Boileau, Lyon

ՀՈՂԱԲԱԺԻՆՆԵՐ ՓԱՐԻԶԻ ՇՐՋԱԿԱՆԵՐԸ ԱՄՍԱՎՃԱՐՆԵՐՈՎ՝

Շոգեկառքով կամ ինքնակառք՝ 15—30 վայրկեան, ջուր, կազ, ելեկտրականութիւն: Ամսավճար՝ սկսեալ *200* ֆրանքէ: Տուներու կառուցում, վճարման մեծ դիւրութիւններ. *15—20* տարուան մէջ: 15 տարի տուները ազատ են տուրքէ: Պատրաստի villaներ, նոր բնակարաններ գնելու կամ վարձելու համար, ամէն տեսակ գործողութիւններ, կալուածներու առու ծախ, գրաւ դնելու, ապահովագրութեան եւայլն:

ԲԱՑԱՌԻԿ ՊԱՏԵՀՈՒԹԻՒՆ՝ սկսուած է նոր հողաբաժիններու վաճառումը, Versaillesի մօտ Bois d'Arsyի մէջ շրջապատուած գեղեցիկ անտառով: Հաղորդակցութիւնը փարիզի հետ Gare Mont Parnasseէն ուղղակի, իսկ Gard Invalideէն եւ St. Lazareէն Versaillesի գիծով: Ցեսնել կարելի է ամէն օր ինքնաշարժով՝ նախ՝ մանրամասնութիւններու համար դիմել

ՏԱՐԱՍՈՎ ՏԷՐ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Գրասենեակը, 18 Rue Chaussé d'Antin, Métro Opéra եւ Chaussé d'Aantin, ամէն օր ժամը *10—12* առաւօտները եւ *4—7* կէսօրէ վերջ, կիրակի եւ տօն օրեր ժամը *10—1*: Հեռաս. Provence *87—32 եւ 82—48:*

Տուներու շինութեան համար նախ խորհրդակցութիւն մասնաւոր գարտարապետի մը կողմէ Գ. եւ Շբ. օրերը ժամը 4-5

ՏՕՔԹ. ՄԻՀՐԱՆ Կ. ՔԷՇԻՇԵԱՆ

Նախկին բժշկապետ Մերսինի Ֆրանս. հիւանդանոցներուն պատուոյ մէտալ Ֆրանսայի Ազգ. նախարարութենէն

Կ'ընդունի ամէն օր ժամը 10էն 12 եւ ժամադրութեամբ, 134 Rue Blomet, *Բէօնթկէնեան հաստատութեան մէջ: Կը կատարէ Ռ. ճառագայթներով ամէն կերպ քննութիւն, շողանկարում* (radiographie), *գեր-մանիշակագոյն, յետ-կարմրագոյն եւ բէօնթկէնեան դարմանում* (radiothérapie profonde), *ՏԻԱԹԵՐՄԻԻ բոլոր կիրառումները եւ ելեկտրաբուժական բոլոր ձեւերը որ բազմաթիւ հիւանդութիւններու դարմանման լաւագոյն ազդակներն են:*

Թոքախտաւորներու pneumothoraxի *գործողութիւն, մասնաւոր շիջուկ եւ պատուաստ:*

Զղային եւ հոգեկան կարգ մը հիւանդութիւններու դէմ թելադրական, քնեցածական եւ ֆոէօտեան մէթոտներ:


Հասցէ՝ 134 Rue Blomet, Laboratoire de Radiologie. Métro Convention, Autob. X. եւ AG.

Հեռաձայն՝ Vaugirard 29—55, 47—86.

ԼԻՈՆԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Ջատկի տօնի առիթով KYSA կօշիկի վաճառատան մէջ

209 Rue Duguesclin (angle rue Dunoir), Lyon



պիտի գտնէք սեփական արհեստանոցի մէջ ժամանակաւոր խնամքով պատրաստուած այրերու եւ կիներու Ֆանթէզի եւ ամէն տեսակ տոկուն կօշիկներ:

ԳԻՆԵՐԸ ԱՆՄՐՑԵԼԻՕՐԷՆ ԱԺԱՆ

կը բաւէ անգամ մը այցելել համոզուելու համար

ՇԱՆՕԹ.— Նոյն կօշիկները կը գտնուին մեր երկրորդ վաճառատունը 217 Rue Garibaldi, angle rue Paul-Bert.

Ամէն տեսակ կօշիկներ խնամքով կը նորոգուին մեր արհեստանոցին մէջ

ՑԵՐ եւ ՅՈՎՍԷՓ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ ԵՂԲԱՐՔ

Նրբաճաշակ տիկիններ

Մի մտահոգուիք թէ ձեր հագուստները ո՞վ պիտի կարէ ո՞վ ձեզ լիովին պիտի գոհացնէ: Դիմեցէք B. Jaret ֆիրմայ հայկական հաստատութեան որ մեծ խնամքով կը պատրաստ ձեր փափաքածէն տեսակ հագուստները՝ դեկավարութեամբ ճանաչ վկայեալ դերձակուհի եւ ՀՆԱՐՈՂ ՄՕՏԵԼԻՍՏ տիկնոջ ցասիկ Դաւիճեանի: Բացատրի հոն կը գտնէք ամենավերջին նորաձեւութեամբ պատրաստուստիագուստներ անհաւատալի ժամանակներով: Հասցէն շատ դիւրին, 4Rue de la Collegiale Ա.յարկ (86 Bld. St. Marcel). Métro Gobelinsէն 40 քայլ:

Գ. ՃԷՔԷՐԵԱՆ

փաստաբան Պոլսոյ Պառոյէն, վաւերացեալ հաշուակալ, անդամ Société des Comptablesի (E. C. I.).

150 Rue du Fbg. St. Denis, Paris. Téléphone: Trudaine 76-4

ԿԸ ՍՏԱՆՁՆԵՄ այցելութեամբ տարաբնակութիւն փոքր ամսավճարով *ԿԸ ԿԱՏԱՐԵՄ* Registre du Commerce, Patente, Chiffre d'affairesի, Bénéfices Commerciaux*ի և* Impôts sur le revenu *գործողութիւններ:*

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ԿԱԶՄԵՄ ԵՒ ԿԸ ԼՈՒԾԵՄ

Կրնամ ձեզ ղերծ պահել Chiffred'Affairesի եւ BénéficesCommerciaux *տուրքերէն եթէ արհեստաւոր էք, գոր օրինակ* Lapidaire, Sertisseur, monteur de bijoux, lingère, շապկագործ, ժամագործ, դերձակ, կօշկակար, առաղձագործ, եւայլն, պայմանաւ որ ձեզմէ եւ ձեր ընտանիքի անդամներէն զատ միայն մէկ գործաւոր եւ մէկ apprenti ունենաք:

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԿԵՐՊԱՍԵԳԻՆԱՑ

SIROUNAK ARABIAN & Cie

155 Rue Montmartre (1er étage)

Ֆրանսական եւ անգլիական խիստ ձոխ եւ ճաշակաւոր nouveautéներ այրերու համար: Մետաքսեայ եւ բրդեղէն ամէն տեսակ ընտիր կերպասեղէններ կիներու համար,

ԱՐՏԱԿԱՐԳ ԱԺԱՆՈՒԹԻՒՆ

Ջեռք մը կարուած հագուստը ձեզի պիտի արժէ՝ *Ֆրանս. առաջնակարգ գեղեցիկ կերպասով 500 ֆրանք փոխանակ 700ի: Իսկ Անգլ. կերպասէ 700 փոխանակ 1000ի:* փափաքողներու (այր եւ կանանց) կը տրամադրենք անձերի coupe ունեցող եւ à façon աշխատող վարպետ — դերձակ:

ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

ՑԵՐ եւ ՅՈՎՍԷՓ՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՑԵԱՆ

29, Rue (Place) des Fêtes, Paris, XIX. Tél. Nord 96-61

Բաց է ամէն օր, ուր չատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուի ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ: Ազգի մասնագէտը կ'ընդունի Գշ., Երշ. եւ Շաբաթ օրերը ժամը 4—6, Քիթի, կոկորդի եւ ականջի մասնագէտը ամէն Երեք. եւ Շաբաթ օրերը ժամը 2—3, ԱՏԱՄՆԱԲՈՑԺԸ ամէն օր ժամը 9էն 19:

ՅԱՌԱՋ

LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԲԱԺԱՆԵՑԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70ֆ.	140ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շ.	40 շ.	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԻՏԱԼԻԱ	250 ֆրանք		
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200ֆ.	

"HARATCH"

Directeur-Propriétaire
SCH. MISSAKIAN
Խմբագիր՝
Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Rédaction et Administration
Խմբագրութիւն եւ վարչութիւն
235, Faub. St.-Martin
PARIS (10e)

MÉTRO: LOUIS-BLANC OU JAURÈS
Téléphone : NORD 67-23

R. C. SEINE 376.286

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 3 ֆրանք

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
16
ՅՈՒԼԻՍ
1930
16 JUILLET 1930

Գին՝ 50 ՍԱՆԹԻՄ

Ջ. ՏԱՐԻ ԹԻՒ 1314

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՀԱՅՈՑ ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

ՖՐԱՆՔՕՓՈՒՐՔ ԲԱՆԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

Թուրք-Սուրիական սահմանագծման յանձնախումբի ֆրանսացի անդամները Ատանայէն-Պէյրութ վերադարձին, երբ կալուածական խնդիրներու մասին անոնց հարցումներ եղած է, մէկ անդամը պատասխանած է թէ Հայոց կալուածական խնդիրը չի կրնար անջատուիլ Սուրիացիներու կալուածական խնդրէն։

Այս հարցը, գրեթէ միշտ, ֆրանքօֆրքական բանակցութեանց օրակարգի վրայ երեւցած է, երբ խօսք եղած է Թուրք-սուրիական սահմաններու ճշդման մասին։ Ասկէ քանի մը ամիսներ առաջ Էնկիւրիի մէջ սկսած բանակցութիւնները դժուարութեան մատնուեցան, որովհետեւ ֆրանսացի պատուիրակները պնդած էին Սուրիոյ մէջ բնակող Հայերու կալուածներու փոխանակութեան իրաւունքին վրայ։ Թուրք պատուիրակները մերժած էին զրաղիլ այդ խնդրով, որովհետեւ բանակցութիւնները ընդհատուած էին։

Նորագոյն լուրերը հակասական են։ Եթէ հաւատանք ֆրանսական յանձնախումբի մէկ անդամի անպաշտօն յայտարարութեան, Ֆրանսացիները պիտի պնդեն հայկական կալուածներու փոխանակութեան իրաւունքին վրայ։ Մինչդեռ «Էլ Ահրար» արաբերէն թերթը լաւատեղեակ շրջաններէ կ'իմանայ որ Էնկիւրիի ֆրանսական դեսպանը Թուրքիոյ արտաքին գործոց գործավարին յայտնած է թէ Ֆրանսացիները համաձայն են Հայերու կալուածներու խնդիրը նկատի չառնելուն։

Ըստ երեւոյթին համաձայնութեան ճանապարհը հարթուած է։ Թուրք-սուրիական համաձայնութիւնը կրնայ կնքուիլ երկու կողմերու շահերուն համաձայն, հայկական կալուածներու կարեւոր խնդիրը միայն սակարկութեան նիւթ ծառայեցնելով։

Լօզանէն սկսած, հայ ժողովուրդը իր զարմանալու կարողութիւնը կորսնցուցած է, և միջազգային անիրաւութիւնները սովորական դարձած են իրեն համար։ Թուրքիոյ հետ, իրաքանչիւր պետութիւն իր հաշիւները կը կարգադրէ ոչ միայն անտեսելով հայկական տնտեսական իրաւունքները (քաղաքականի մասին խօսք չենք ըներ), այլ, շատ յաճախ, այդ անիրաւուած ժողովուրդի ազատակոչ իրաւունքները բանակցութեանց նժարին մէջ կը դրուին, որպէս սպառնալիք մը՝ Թուրքիայէն աւելի բան մը կորզելու համար։

Մենք այդ բոլորը կը տեսնենք, բայց լուռ ու անզօր հանդիսատեսի դերին մէջ կը մնանք։ Անզօրութիւնն այլ խնդիր է, որու մասին կ'արժէ մտածել։ Բայց մենք ամէն անգամ երբ առիթը ներկայանայ, պիտի բացատրենք մեր լռութեան իմաստը։

Առաջին և վճռական յայտարարութիւնը այն է թէ լռութիւնը համաձայնութեան նշան չէ։ Հայ ժողովուրդը չէ հրաժարած և չպիտի հրաժարի ոչ իր քաղաքական պահանջներէն և ոչ ալ իր կալուածական իրաւունքներէն։ Խօսքը մասնաւորելով սիւրիայի կալուածական խնդրին, կ'ուզենք որ՝ թէ Թուրքերը և թէ իրենց հետ համաձայնութիւն կնքողները գիտնան միանգամ ընդ միշտ որ նման բարդ հարց մը կարճ ժամանակի ընթացքին չի կրնար մեռնիլ։

Դեռ անցած ամսուն էր, երբ Անտրէ Մանտէլշտայմ, Սորպոնի մէջ այնքան կորովի ու գիտական դասախօսութիւն մը կ'ընէր, ըսելով թէ՝ «եթէ հայ ժողովուրդին իր արդար իրաւունքը չվերադարձուի, այդ պիտի նշանակէ յուսահատիլ մարդկութենէն։ Հայկական հարցը փակուած չէ։ Ան իր լուծումին կը սպասէ՝ ժողովուրդներու հաշտութեան եւ խաղաղութեան ոգիով»։

Բայց այս ոգիին այժմ տիրական չէ։

Ազգերու Դաշնակցութիւնը և անոր անդամակցող պետութիւններն անզօր ու լուռ հայ բազմութիւններու վրայէն կոխկրտուելով՝ կարող են հասնիլ մինչեւ Թուրքիա։ Կարող են անտեսել իրենց որոշումները, ու ծաղրանքի նիւթ դարձնել միջազգային իրաւունքի և մարդու իրաւունքի սրբութիւնները։ Եթէ հայ անզօր բազմութեան առելութիւնը նշանակութենէ զուրկ է, հիասթափութիւնն ու անհաւատութիւնը որ կ'արմատանայ հայ ժողովուրդին մէջ, մեզի համար արժէք մըն է։

Դալով Թուրքիոյ, որպէս առնելիք-տալիք ունեցող կողմերու, ան կարող է իր բոլոր գործերը կարգադրել աշխարհի մերու, ան կարող է իր բոլոր գործերը կարգադրել աշխարհի հզօրներուն հետ, իր ուզածին պէս։ Բայց պիտի գիտակցի (և մենք կը կարծենք թէ օմը պիտիգիտակցի) որ աշխարհիս մէջ ունի անզօր պահանջատէր մը, հայ ժողովուրդը, որմէ չպիտի կրնայ խուսափիլ, մինչեւ որ, օր մը, ողջմտութեամբ (ինչ որ կասկածելի է) կամ հարկադրանքով՝ կարգադրէ անոր հաշիւը։

Այո՛, այսօր, Թուրքը սուրով մեր հաշիւը կարգադրած է, բայց որպէս զի Թուրք ժողովուրդը հանդիստ քնի և մարսէ այդ հաշիւը, առնուազն հարիւր տարի անքուն պիտի հսկէ, միշտ սուրը ձեռքին։

Մենք չենք հաւատար այդ լարուած վիճակին։ Ու լաւ կ'ըլլար, որ Թուրքերն ալ օր առաջ այսպէս մտածէին։

Կ. Մ.

ՄԱՄՈՒԼ

ԵՐԷԿ ԵՒ ԱՍՍՕՐ

«Նոր Օր» այս խորագրով համբագրական մը մէջ կը գրէ (յուլիս 4)։

— «Անցեալ շաբաթ, բանուորներուն աւելի մօտենալու եւ անոնց կենցաղին վրայ հսկելու անհրաժեշտութիւնը կը շեշտէինք այս սիւնակներուն մէջ։

Ենթադրուածէն աւելի մեծ կարեւորութիւն ունի այս խնդիրը։ Ընկերային ամէն հարց, որքան ալ մօտիկ ըլլայ մեր ըմբռնումներուն ու նպատակներուն, մեզ այնքան չէր խանդավառեր երէկ։

Ունէինք աղէկ-գէշ տնտեսութիւն մեր հայրենիքին մէջ, տուն տեղ, դաշտ ու լծկան, մաճ ու արօր։ Թէեւ ազգովին բանուոր ու գիւղացի, մեր մէջ մուտք գտած չէին դասակարգային տարբերութիւնները եւ շերտաւորումները։ Տաճկահայաստանի մէջ հայ բանուորին, հողի չարքաշ աշխատաւորին մեծագոյն իտէալը հայ ժողովուրդի ազատութիւնն ու բարօրութիւնն էր։

Այսօր փոխուած ես հրմնովրս պայմանները։ Խռնուրէն եւ կոպտօրէն դուրս նետուեցանք մեր դարաւոր օճախներէն, մէկէն ի մէկ կտրուեցանք մեզ անցեալին կապող աւանդութիւններէն ու ընտանեկան մաքուր բարքերէն։

Աիւաւոր փոթորիկ մը, ծառի պէս արմատախիլ ըրաւ ցեղը ու բեկոր բեկոր զայն նետեց Ակրոբոլի ստորոտը, Սէնի ափերը եւ Արժանթինեան հալոցին մէջ։ Երբ աչքերնիս բացինք, նոր կեանք, նոր մարդեր, նոր պայմաններ տեսանք մեր շուրջը։

Տիրող ընդհանուր շփոթութեան մէջ մէկ ճշմարտութիւն անուրանալի է որ երէկուան ցեղը չենք ու չենք կրնար ըլլալ։ Լաւ թէ գէշ, այսպէս է։

Ազգովին այս անորոշութեան վիհին մէջ գլտորելէ զատ, նոր արեւներու տակ կրեցինք նաեւ ազգեցութիւնը նոր վարդապետութիւններու եւ դաւանանքներուն, որովհետեւ մեծամասնութեամբ ինկանք գործատուներու, հանքերու եւ սեւ գործերու մէջ։

Կողք կողքի ապրելով յոյն եւ ֆրանսացի բանուորներու հետ անզգալաբար իւրացուցինք անոնց խորհրդակերպը, կենցաղային գիծերը, աստիճանաբար կորսնցնելով ցեղայինը, որուն տեղը բռնել կոչուած է միջազգայինը։

Աիա, հոս է որ գործունէութեան նոր ասպարէզ կը բացուի Դաշնակցութեան առջեւ, բանուորական լայն զանգուածներուն պէտք է բացատրել ընկերվարութեան գլխաւոր սկզբունքները, պարզել մեր կուսակցութեան բանուորական քաղաքականութիւնը, կէտ առ կէտ լուսաբանել մեր ծրագրի այն մասերը, որոնք կը վերաբերին բանուորութեան եւ մեր ըմբռնումով տալ աշխարհի բանուորական շարժման գլխաւոր գիծերը։

Ցտարութեան մէջ հաստնցող սերունդ մը կայ՝ որ կը հետաքրքրուի այս հարցերով։ Ու եթէ մենք չհբաւարարենք, այդ սերունդը կամ մաս մը այդ սերունդէն, պիտի իյնայ հաժայնավարներու գիրկը։

Պէտք է ըմբռնել ժամանակին արժէքը եւ հաժոզուիլ վերջապէս թէ երէկուան նշանաբանները ամէն տեղ եւ ամէն ատեն իրենց ազդեցութեան տակ չեն պահեր այսօրուան սերունդները։

Երէկին տանք իր տեղը պատմութեան մէջ, իսկ այսօր դարցնենք մեծ ուշադրութեան առարկայ։

ՕՐԸ ՕՐԻՆ

ՔԻՒՐՏԵՐԸ ՊԱՐՏՈՒԵՑԱ՞Ն

Էնկիւրի, 13 յուլիս.— Քիւրտերու դէմ ձեռնարկուած զինուորական գործողութիւնները վերջ գտան։ Ըմբոստները բնաջնջուած են։

Էնկիւրի, 13 յուլիս.— Անատոլու գործակալութիւնը կը հաղորդէ թէ ըմբոստական շարժումը որ յետադիմական եւ քաղաքական բնոյթ կը կրէր ու Զիլանի շրջանը կը խռովէր, բոլորովին զսպուեցաւ։ Ըմբոստները իրենց յարձակումները ուղղած էին Մուրատիյէի, Պայազիտի, Պաթնոսի եւ Արճէշի դէմ։ Զինուորական ուժ չունենալով, իրենց ձեռնարկները կարգ մը ուրիշ վայրերու դէմ՝ ձախողեցան, շնորհիւ ընդդիմութեանը գիւղացիներուն, որոնք իրենք իսկ կազմակերպեցին իրենց պաշտպանութիւնը։ Այս կերպով, ըմբոստներու շարժումը ձախողեցաւ եւ սահմանափակուեցաւ Զիլանի շրջանին մէջ։

«Որովհետեւ անհրաժեշտ էր ըմբոստներու շարժումը յանձնել զինուորական ուժերու, առաջին արշաւախումբ մը անոնց դէմ ղրկուեցաւ յուլիս 5ին. այս արշաւը յաջողութեամբ վերջացաւ 10ին։ Ըմբոստներու թիւը կ'անցնէր 1500ը։ Բազմաթիւ պետեր եւ ըմբոստներ սպաննուեցան եւ շատ քիչերը յաջողեցան փախիլ»։

Ներելի է անշուշտ կասկածիլ Թրքական աղբիւրէ հաղորդուած այս լուրերու ճշտութեան վրայ, նկատի առնելով հակասական լուրերը, որոնք քանի մը օրուան մէջ, յաջորդաբար տրուեցան նոյն աղբիւրներէն իսկ։

Եգիպտական դաւիճը

Ցուատ Թագաւոր հրովարտակով մը երեք շաբաթ յետաձգեց խորհրդարանի վերաբացումը։

Դահլիճին մէջ, կարգ մը փոփոխութիւններ տեղի ունեցան։ Չաֆրզ Աֆիֆի փաշա, արտաքին նախարարը՝ նշանակուեցաւ Լոնտոնի դեսպան. իրեն տեղ պալտօնի կ'անցնի Ապտիւլ Ֆեթթահ։ Դատական նախարար պիտի նշանակուի Ալի Մահիր փաշա։

Իսմայիլ Սրտքը՝ վարչապետը, յայտարարեց թէ Լոնտոնի նոր դեսպանը անմիջապէս չպիտի վերսկսի ընդհատուած բանակցութիւններուն։ Բայց եգիպտական կառավարութիւնը առաջին առիթէն պիտի օգտուի, բանակցելու համար Անգլիոյ հետ։

Չաֆրզ Աֆիֆի ջերմ կուսակից է Անգլիոյ հետ համաձայնութեան մը կնքման։

«Տէյլի Մէյլ» անդրադառնալով եգիպտական ներկայ տագնապին կը գրէ.— Եգիպտոս կը գտնուի յեղափոխութեան մը նախօրեակին։ Վաֆտ՝ հականգլիական կուսակցութիւնը վճռած է գերագոյն իշխանութիւնը ձեռք ձգել ամէն գնով։ Լոնտոնի եւ Գահիրէի մէջ, կարեւոր վաֆտիստներ բացէ ի բաց կը խօսին յեղափոխութեան մասին։ Նահաս փաշայի վարչապետութեամբ՝ հանրապետութեան մը օգուտները կը ջատագովեն։ Իրրեւ ներկայ տագնապէն ելքի միջոց, կը խօսին նաեւ գահընկեցութեանը վրայ Ցուատ Թագաւորին, որուն պէտք է յաջորդէ իր զաւակը, տասնամեայ Ֆարուք իշխանը։ Այդ պարագային՝ երկիրը պիտի կառավարուի խնամակալ մարմնի մը կողմէ, որ պէտք է բաղկացած ըլլայ վաֆտի անդամներէն»։

Անգլիական թերթերը եգիպտական հարցով կը զբաղին երկարօրէն։ Համաձնաւար թերթ մը կը կարծէ թէ Անգլիոյ դահլիճը նկատի առած է Ադեքսանդրիոյ ռմբակոծման հաւանական կանութիւնը եւ թէ անգլ. թերթերը հանրային կարծիքը կը պատրաստեն ի նպաստ եգիպտական յեղափոխութեան դէմ գոպիչ խստութիւններու։

Բոլշեւիկեան հարուցը աւերելով

Մոսկուայի գերման դեսպանը բողոքեց խորհրդային իշխանութեան թէ բոլշեւիկեան ռատիօ-կայանները գերմաներէն լեզուով պրոպագանդ կը մղեն Գերմանիոյ մէջ, ի նպաստ հաժայնավարութեան։ Բողոքը որեւէ արդիւք չտուաւ, որովհետեւ Մոսկուա կը նկատէ թէ ուզածը իր ուզած լեզուով տարածելու իրաւունք ունի։

Յայտնի թէ նման բողոքներ ալ ասկից առաջ ըրած են զանազան պետութիւններ, բայց միշտ իզուր։ Միայն Իտալիա է որ կրցած է վերջ տալ անթելով բոլշեւիկեան պրոպագանդին։

Վերջ բոլշեւիկեան համագումարին

Բոլշեւիկեան համագումարը փակուեցաւ նոր կոմիտէի ընտրութենէն յետոյ։ Ընտրուած են 71 անդամներ եւ 67 փոխ անդամներ։

Ընտրուածներուն մէջ կան Ստալին, Քալանովիչ Մոլոտով, Կալինին, Վորոշիլով, Ռուցուտաք, Կույպիշէֆ, Միկոյեան, ինչպէս նաեւ Ռիկով, Տոմսկի, Բուխարին, հակառակ վարկածներուն որուն ենթարկուեցան։

187 հոգի անդամ ընտրուեցան հակակշռի կեդրոնական յանձնախումբին։

Իսկ քաղաքական դիւանին անդամ ընտրուեցան հետեւ-

(Լուրերու դարունակութիւնը կարդայ Դ. Էջ)



Հ. Ց. Դ.

ՓԱՐԻԶԻ ՏԱՆ ՀԱՄԱՐ

(Հանգանակութիւն Եւրոպայի կեդր. կոմիտէի)

ՑԱՆԿ 27

ԼԻՈՆԷՆ.—	
Ղազար Քէնտիրեան	100
Յարութիւն Նիկողոսեան	100
Մամբրէ Տէր Պետրոսեան	100
Տիգրան Չէքեան	100
Յակոբ Այտընեան	100
Սերոբ Բարսեղեան	100
Ե. Վարդանեան	100
Ջօհրապ Պօյաճեան	100
Յովհաննէս Տէօքմէճեան	100
Ժիրայր Թառուկեան	100
Մարտիկ Թառուկեան	100
Թաչատուր Խանլեան	100
Գումար	1200
Նախորդ գումար	34,580
Ընդհ. գումար	35,780

ԱՃՈՒՐ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՄԵԾ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Ֆրանսա երկու օրէ ի վեր կը պարզէ ի խանդավառութիւն մեծ յեղափոխութեան։ Այս սովորական ու ասպրմասո դրութիւնը ու պատերը դուրս, ֆրանսական մեծ յեղափոխութեան տօնը, ժամամարդկային տօն մըն է իր անցեալ աշխատասիրութեամբ։

1789ի ֆրանսական մեծ յեղափոխութիւնը հաստաշխարհային նշանակութիւն ունեցաւ, եւ աշտանորոգ թափով մը կրկնուեցաւ աշխարհի բազմաթիւ ազգերուն վրայ, որու ալիքները կը կլանուին մարդկային ազատութեան նոր եւ աւելի իսկայական փոթորիկներու մէջ, աւելի արմատական ու աւելի ժամամարդկային։ Մասնաւորապէս, հաժաշխարհային պատերազմէն յետոյ, մարդկութիւնը կը մտնէ ընկերային յեղաշրջումներու գործօն շրջանի մը մէջ, 19րդ դարու քաղաքակրթութեան հաշուեյարդարը կատարելու համար,

Եթէ ֆրանսական մեծ յեղափոխութիւնը արդիւնքն էր միջին դարէն սկսած դասակարգերու եւ դասերու լարուած փոխյարաբերութեանց, այսօրուան ընկերային հրաբուխները, աւելի ցնցող ու աւելի ընդհանրական, ծնունդն են վերջին մէկուկէս դարու ընկերային եւ տնտեսական բարդ յարաբերութիւններու որոնք կուտակուած կիրք ամբարած են աշխարհի մէջ։ Նոր պահանջներ ու ազատութեան նոր հորիզոններ ստեղծելով այսօրուան ու վաղուան մարդկութեան համար։

Յուլիս 14ին ֆրանսացի ժողովուրդը, աննմաս կորովով գրաւեց Բաստիլը, խորտակելով բռնակալութեան պողպատէ շղթաները։ Ու անկէ յետոյ յեղափոխութեան շունչէն հարուածներուն տակ, իրարու ետեւէ ինկան հարիւրաւոր Բաստիլներ, չդիմանալով ժողովրդական սրբազան ցասումին...

Բայց այսօր աշխարհին ամբողջ Բաստիլ մը դարձած է, նոյն իսկ շատ տեղեր՝ յանուն ֆրանսական մեծ յեղափոխութեան։ Ու կասկած դուրս է որ համամարդկային Բաստիլն ալ պիտի խորտակուի յաւերժ մարդկութեան հաւաքական գրոհին առջեւ։

ԲԻՒԱՐԵՆՑ

ՆԱՄԱԿՆԵՐ ԼՈՆՏՈՆԷՆ

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԱՆԳԼԻՈՅ ՄԷՋ

ԱՇԽԱՏԱՒՈՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՋԵՒԸ.— ԱՆԳՈՐԾՈՒԹԻՒՆ.— ԱԶԱՏ ԱՌԵՒՏՈ՛Ւ ԹԷ ՄԱՔՍԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ։

Քաղաքական կացութիւնը այնքան աննախընթաց տագնապի մէջ է այժմ որ, ինչպէս դիտել կուտայ երեկոյեան թերթի մը աշխատակիցը, ամէն անակնկալի կարելի է սպասել մէկ ժամէն միւսը։

Բացառիկ է արդարեւ ներկայ տագնապը։ Անգլիա, հայրենիքներուն ամէնէն պահպանողականը եւ աւանդապաշտը, հսկայ յեղաշրջումի մը առջեւ է եւ եթէ դէպքերը չեն գահավիժիր յանկարծօրէն, առիկա ապահովաբար հետեւանքէ բրիտանական պաղարիւն նկարագրին։

Ճիշդ տարի մըն է որ իշխանութեան ղլուխ կը գտնուի ընկերվարական կուսակցութիւնը փառաւոր յաղթանակէ մը ետք, որ թերեւս, վարձատրութիւնը չէր իրենց վայելած համակրութեան՝ ժողովուրդին խաւերէն ներս։ Դէպքերու դասաւորումը տարի մը առաջ փութացուց այդ յաղթանակը, որուն համար սպասուած պատրաստութիւնը չունէին տակաւին։ Յաջորդող անցուդարձերը կ'ապացուցանեն նոյն իրողութիւնը։

Ամէն ինչ վարդագոյն էր դեռ անցեալ ամառ, քաղաքական հորիզոնին վրայ։ Ելեւժտական նախարարին վերադարձը Լահէյի ժողովէն ծափերով ողջունեցին Լոնտոնի մէջ, որովհետեւ Մնօտընի քաղաքականութիւնը պարտքերու հարցին լուծման մէջ մօտիկ էր ամէնէն ուղղափառ անգլիացի դրամատէրերու սրտին ու ներշնչումներուն։ Նոյնքան սրտագին շնորհաւորութիւններու արժանացաւ վարչապետ Մաքտոնըլտ որ կրցաւ «սիրալիր մտերմութիւն» մը ստեղծել Ամերիկայի մէջ, նախադէպ Հուվըրի հետ ծովային զինաթափութեան խնդրին առիթով։ Այս երկու յաջողութիւններէն յետոյ, ընկերվարական դահլիճը դիւանագիտական յարաբերութեանցկապ խորհրդային Ռուսիոյ հետ, ձեռնարկ մը որուն չէին կրնար ժամեննալ իր նախորդները։ Հետաքրքիր չէ իմանալ թէ ընդդիմադիր հոսանքները ուզեցի՞ն իսկապէս որ այդ բանը պատահի. հետաքրքիրը այն է որ հակառակ բազմաթիւ հարցապնդումներու եւ քննադատութիւններու, անգլեւռուս յարաբերութիւնները վերահաստատուեցան հաժաձայն աշխատաւորական իշխանութեան բազձանքներուն։

Եկաւ նաւային խորհրդաժողովը՝ յունուարին։ Ընկերվարական վարչութիւնը գրեթէ չշեղեցաւ այն ուղղութենէն և սկզբունքներէն, որոնք հիմը կը կազմեն Մեծն Բրիտանիոյ ծովային քաղաքականութեան։

Այն կրճատումները որոնց յօժարեցան խորհրդաժողովին մէջ, ոչինչով չեն փոխեր անգլիական նաւային զօրութիւնը. որովհետեւ անոնք կատարուած են հաժաձայն ամէնէն մանրակրկիտ հաշիւներու եւ համապատասխան ուրիշ ժողովուրդներու ըրած զիջումներուն։ Ինչպատութիւններ լսեց օրուան կառավարութիւնը, բայց ընդդիմադիր տարրերը ծանօթ էին քուն իրականութեան։ Նաւային խորհրդաժողովի փակման զուգադիպեցաւ եգիպտական խնդիրը որուն մէջ արտաքին գործերու նախարարը վարուեցաւ այնպէս, ինչպէս պիտի ընէր որեւէ պահպանողական նախարար։ Առաջարկուած դաշնագրին հիմնական մասերէն բան չփսխեցին ու Եգիպտոսի ներկայացուցիչը մեկնեցաւ լուսաւորուած։

Հնդկաստանի խռովութեանց մէջ, Մաքտոնըլտ այժմ կը վարէ զուտ բրիտանական ազգային շահերէն ներշնչուած քաղաքականութիւն մը, առանց ամաչելու, ինքնավստահ եւ սառն, որովհետեւ ինչ որ տեղի կ'ունենայ հիմա այդ վիթխարի երկրին քանի մը կէտերուն վրայ, յեղափոխութիւն չէ, պատերազմ չէ, այլ «հասարակ դէպք»։

Կը տեսնուի հետեւաբար որ արտաքին քաղաքականութեան հետ կապ ունեցող խնդիրներու մէջ, աշխատաւորական իշխանութիւնը որդեգրած է ուղղութիւն մը, որ իր ընդհանուր յատկանիշներով, բրիտանական է աւելի քանէ առաջ եւ համապատասխան դրամատիրական շահերուն։ Մանրամասնութիւնները էական չեն որքան ատեն որ չեն վնասեր հիմնական սկզբունքներուն։

Ընդդիմադիրները չպիտի խօսէին աշխատաւորական իշխանութեան տապալումին մասին, եթէ ներքին քաղաքականութեան մէջ եւս դահլիճը ունեցած ըլլար այնքան յաջողութիւն որքան ունեցաւ արտաքին խնդիրներու կարգադրութեան մէջ։ Դժբախտաբար դրութիւնը չափազանց աննպաստ է այդ իմաստով եւ պէտք չէ զարմանալ, երբ արդէն շատեր մանաւանդ կը նկատեն օրուան կառավարութիւնը։

Անգլիոյ ներքին գլխաւոր ցաւն է անգործութիւնը եւ ընդհանուր առեւտուրի եւ ճարտարարուեստի տագնապը։ Տասներկու ամիսներ առաջ գործազուրկ բանուորներու թիւը կը հասնէր մէկ միլիոն երկու հարիւր հազարի, մինչդեռ հիմա արդէն բարեւ կուտայ երկու միլիոնին. ուրեմն, մօտ 800,000ի յաւելում մը ընկերվարական վարչաձեւէն ասդին։ Վախ կայ որ յառաջիկայ աշնան, այդ պատկառելի համրանքը աճի, դառնալով իսկական աղէտ մը երկրին գլխուն։ Երկու միլիոն անգործ բանուոր կը նշանակէ երկու միլիոն Անգլիացիներու բազմութիւն մը, որ իր օրուան ապրուստը կը ստանայ պետական դանձէն եւ փոքր թիւով ունեցող պաշտօնէութեան քսակէն։ Սլսինքն տարեկան 80-100 միլիոն անգլիական ոսկի, որուն ամբողջ բեռը կը տանի ժողովուրդը։

Ինչո՞ւ կայ այս գործազրկութիւնը. որովհետեւ երկրին ճարտարարուեստական արտադրութիւնը նուազած է եւ վաճառականութիւնը կորսնցուցած է իր բարգաւաճ վիճակը։ Անգլիա շատ աւելի կը ներածէ հիմա քան կ'արտածէ։ Շատ աւելի կը գնէ քան կը ծախէ, որովհետեւ երկրին դրամը սուղ է եւ օտար երկիրներու մրցակցութիւնը շատ մեծ։ Կառավարութիւնը դանագան ծրագիրներ մշակեց կացութիւնը դարմանելու համար. մասնաւոր նախարարութիւն մը հաստատեց այդ հարցով զբաղելու համար, զանազան յանձնախումբեր կազմուեցան թեւադրութիւններ ընելու եւ միջոցներ առաջարկելու համար, բայց ո՛չ մէկ դրական արդիւնք ձեռք բերուեցաւ եւ, ինչպէս ըսինք, կացութիւնը վատթարացաւ հետզհետէ։ Կարելի է ըսել անշուշտ որ օրուան կառավարութիւնը անուղղակի կերպով միայն պատասխանատու կրնայ նկատուիլ այդ դժբախտութեան մէջ, սակայն ընդդիմադիր տարրերը տրամադրութիւն չունին այդ իմպատով մեղադրելու ստեղծուած կացութիւնը։ Ընդհանուր է այն տպաւորութիւնը որ ընկերվարական վարչաձեւն է չարիքներուն արմատը, թէեւ չափազանց դժուար պիտի ըլլար, նոյնիսկ ամէնէն թունդ անդլիացիներուն համար, զանազանութիւն տեսնել այսօրուան եւ երէկուան իշխանութեանց միջեւ։ Այսպէս կամ այնպէս, դահլիճն է մեղաւորը, կ'ըսուի, եւ դահլիճէն կը սպասեն փրկութիւնը։ Ամբաստանողները միայն ընդդիմադիրները չեն. աշխատաւորական շարքերէն ներս դժգոհութիւնը աւելի մեծ է այս հարցի առթիւ։ Բացայայտ է կառավարութեան վտանգուած դիրքը. որովհետեւ գործազրկութեան հարցին լուծումէն կախուած է վարչաձեւին տեւողութիւնը։ Ընդդիմադիրները քննադատելով հանդերձ օրուան կառավարութիւնը, իրենք եւս կը խորհին արմատական միջոցներու մասին։ Ամիսներէ ի վեր կը խօսին ու կը գրեն բրիտանական կայսրութիւնը տնտեսական սիւթեան մը վերածելու եւ «կայսերական ազատ առեւտուր»ի դրութիւն մը հաստատելու մասին։

Անգլիական օրաթերթերու սեփականատէր երկու լորտեր՝ Պիվըրպրուք եւ Բաթըրմիր կահակիրներն են այդ շարժման։

Համաձայն առաջադրուած ծրագրին կայսրութեան զանազան հողամասերէն Անգլիա նետուած ուտեստեղէնի բոլոր նիւթերը ենթակայ չպիտի ըլլան մաքսային տուրքի եւ փոխադարձաբար, Անգլիայէն այգ հողամասերը արտածուած ճարտարուեստական նիւթերը դերծ պիտի ըլլան տուրքէ։ Այսպիսով Գանատա, Աւստրալիա, Նոր Զէլանտա եւ այլն, ազատ կերպով պիտի վաճառեն իրենց երկրագործական արտադրութիւնը Անգլիոյ եւ ստիպուած՝ իրենց ճարտարարուեստի նիւթերը պիտի գնեն Անգլիայէն։ Անշուշտ, էական պայման է որ օտար երկիրներէ Անգլիա նետուած իւրաքանչիւր ուտեստեղէնները ենթարկուին մաքսային տուրքի. տեսակ մը արգելք անոնց արտածման։

Պարզ է որ այս ձեւով, երկրին ճարտարարուեստը պիտի ստանայ նոր զարկ եւ Անգլիոյ ու գաղթավայրերու առեւտուրը պիտի զարգանայ շուտով՝ դարմանելով հետեւաբար տիրող դործազրկութիւնը։

Ծրագիրը մըն է ասիկա որ պիտի ունենայ շատ խոշոր հետեւանքներ, մանաւանդ որ տրամադրութիւն կայ նաեւ միանգամ ընդմիշտ չնչելու Ազատ Առեւտուրը եւ մաքսային դրութիւն հաստատելու այս երկրին մէջ։

Ազատ առեւտուրը չնչել կը նշանակէ դիծ քաշել աւանդական քաղաքականութեան մը վրայէն. կը նշանակէ աննախընթաց յեղաշրջումի մը ենթարկել Անգլիոյ արդիւնաբերական եւ առեւտրական քաղաքականութիւնը։ Նոր ստեղծուելիք կացութեան համաձայն են պահպանողականները, հինգ մեծագոյն դրամատուններու վարիչները եւ ընդհանրապէս, բոլոր անոնք որոնք մտահոգ են երկրին տնտեսական վիճակի բարելաւման հարցով։ Ռուսն կերպով հակառակ են անշուշտ Ազատականները, որոնց գոյութիւնն իսկ կը վտանգուի եթէ իրագործուի ծրագիրը։ Աշխատաւորականները սկզբունքով չեն կրնար որեւէ կերպ ընդդիմանալ մաքսային դրութիւնը. կառավարութիւնը դեռ չէ պարզած իր տեսակէտը։

Պատմական շրջան մը կ'ապրի անգլիական քաղաքականութիւնը՝ անակնկալներով լեցուն։

Ժ. Մ.

ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՒՂ ՄԸ

Սպանիոյ մայրաքաղաքին՝ Մատրիտի շրջակայքը կատարուած ճամբու աշխատանքներու ընթացքին, հետքերը գտնուեցան նախապատմական գիւղի մը, որ ըստ մասնագէտներու քննութեան, քրիստոսէ 2—3000 տարի առաջ պէտք է հիմնուած ըլլայ։ Հաւաքուած իրերը պիտի ենթարկուին մանրակրկիտ ուսումնասիրութեան

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

(Բ. եւ վերջին մաս)

Եւ սակայն, հակառակ իր անկեղծ ճիգերուն՝ դէթ փոքր ինչ ժամեննալու դեմոկրատ ու ընկերվարական շրջաններուն, դեմոկրատիզմը դժուարութեամբ կը պատուաստուէր այդ grand Seigneurի հոգիին վրայ։ Կը դգայինք այդ՝ ամէն վայրկեան ժողովներու, վիճաբանութիւններու ընթացքին։ Երկար ատեն Պատուիրակութեան պրոպագանդի աշխատանքը — որու հոգին նա ինքն էր, Պօղոս Նուպարը — կը տանէինք երեքով. մէկ թրքահայ՝ ինքը նախադահը. մէկ կովկասահայ — «Դաշնակցութեան» ներկայացուցիչը եւ մէկ պարսկահայ — Յովհաննէս խան Մասեհեանը, նախկին դեսպան Հերլինի, նոյնպէս անդամ կաթողիկոսպատուիրակութեան Պարիզ եկաւ մեծ պատերազմի ընթացքին։ Ամէն անգամ, երբ խօսք կը հանէինք ժողովուրդի իրաւունքներու մասին եւ կը շեշտէինք աւելի լայն խորհրդակցութեան անհրաժեշտութիւնը այս կամ այն հրատապ խնդրի շուրջը, նախագահը դժկամած կը բացականչէր — «Mais c'est du soviet!c'est du soviétisme! »... ի վերջոյ, այնուամենայնիւ, կը զիջէր, յանուն համերաշխութեան։

Ռուս բոլշեւիզմը աղտոտեր էր բոլոր վսեմ գաղափարները եւ դեմոկրատիզմը Նուպարի աչքին ստէպ հոտանիշ էր սուվոտականութեան...

Առհասարակ, Պօղոս փաշայի դլխին մէջ ամուր նստած էր իր մեծ հայրիկի այս նշանաւոր boutadeը.

— Մէկ Հայ արժէ երեք Ֆրանսացի. երեք Հայ չարժեն մէկ Ֆրանսացի։

Մեծ Նուպարը, սակայն, «մէկ Հայ» ըսելով, կը հասկնար, անշուշտ, ուժեղ հայ ժարդ մը, հեղինակաւոր, իրագեկ, ըստ առնայնի ձեռնհաս։ Պօղոս Նուպարի աչքին, ստէպ գերակշռող, գրեթէ տիրական արժէք մըն էր դիւրքը, տիտղոսը։ Հայոց կաթողիկոսը անոր համար աւելի մեծ արժէք էր, քան հարիւր հազարաւոր անդամներ ու համակիրներ ունեցող քաղաքական կուսակցութիւն մը, որ տասնեակ տարիներ ապրեր է ժողովուրդի ցաւերով եւ նահատակուեր է ժողովուրդի համար։ Եւ նա ամենաբուռն նախանձախնդրութեամբ կը պաշտպանէր Հայոց Կաթողիկոսէն ստանձնած իր իրաւունքները՝ ընդդէմ ամէն տեսակ «ոտնձգութիւններու»...

Մանաւանդ կասկածոտ աչք մը ունէր դէպի Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ, սակայն, առաջին իսկ օրերէն, — 1912 թուականէն — առանց կուսակցական որ եւէ միտումի, ամէն ճիգ ըրաւ՝ վստահութեան ու համակրանքի մթնոլորտ մը ստեղծելու փաշային շուրջը՝ թէ Կովկասի ու Թուրքիոյ մէջ եւ թէ արտասահմանում։ Մեծ էր անշուշտ — պէտք է խոստովանիմ — իր վստահութիւնը իմ հանդէպ, բան մը, որ արտայայտեր է նաեւ բազմաթիւ նամակներուն մէջ, ինծի ուղղած — եւ ինքս ալ, ամենաքաղցր յիշողութիւններ կը պահեմ մեր երկարատեւ աշխատակցութեան օրերէն։ Մեծ էր իր վստահութիւնը եւ դէպի շարք մը ուրիշ դաշնակցական ընկերներ, դէպի մեր քրիստոսանման բժ. Զաւրեանը, որու անունը չէր կրնար արտասանել առանց ջերմ յարգանքի։ Եւ այնուամենայնիւ, հակառակ մեր բոլոր հոմերաշխութեան հաւաստիքներուն, հակառակ նաեւ Յովհաննէս խանի ջանքերուն — չէզոք մարդ մը, որ տեսեր է նոյն կուսակցութեան դեկավարները Պարսկաստանի մէջ եւ անձամբ ծանօթ էր Ռոստոմի ու Եփրեմի հետ — Պօղոս Նուպարի սրտի խորքում կը մնար միշտ կասկածի ստուեր մը հանդէպ Դաշնակցութեան։ Շա՛տ էին թուրքերը հակադաշնակցական դրոյցներով այդ ժարդը, որ հայերէն թերթ չէր կարդար եւ հեռաւոր գաղափար միայն ուներ հայկական իրականութեան մասին... Հակադաշնակցական տենդը, որ անցած կ'երեւէր 1913էն մինչեւ 1919, վերսկսաւ այդ թուականին, երբ նոր դէպքերը հիմնապէս յեղաշրջեցին հայութեան կեանքը և երբ վերակազմուեցաւ Պօղոս Նուպարի շուրջը — այդ դէպքերու բերումով — նոյն մարդկային շրջապատը...

Այնուհետեւ շատ բան փոխուեցաւ մեր յարաբերութեանց մէջ։ Հիմնուեր էր Հայոց անկախ պետութիւնը, վեց դարու դերութենէն յետոյ, եւ հրապարակ եկեր էր Եւրոպայի մէջ նոր հայկական պատուիրակութիւն մը, նոր իրաւունքներով եւ պատասխանատուութիւններով։ Պատուիրակութիւնն էր Հայաստանի Հանրապետութեան, որ ստեղծուեր էր բովանդակ հայ ժողովուրդի արիւնոտ ճիգերով եւ հանդէս կուգար յանուն բովանդակ հայութեան ու Միացեալ Հայրենիքի, որու անունով եւ ստորագրեց Սեվրի դաշնագիրը։ Դարձեալ, անշուշտ, երկու պատուիրակութիւնները ունացին քով քովի, աւելի ճիշտ, ընթացան զուգահեռաբար եւ մէկ ճակատ կազմելով՝ պաշտպանեցին Միացեալ Անկախ Հայաստանը Պարիզի ու Սան Րէմոյի վեհաժողովին առջեւ։ Բայց իր յարաբերութիւնները, տարաբախտաբար, պաղեցան։

Այստեղ պէտք է վերջակէտ դնենք։ Գալոց անաչառ պատմութեան կը մնայ դժուարին պաշտօնը քննելու եւ գնահատելու դէպքերն ու դերակատարները։

***

Հայ ժողովուրդը ապերախտ չէ։ Ա՛ն։ անշուշտ քննադատութիւնը կը պահպանէ միշտ իր սրբազան իրաւունքները եւ ոչ մի ժահկանացու մեծ ու փոքր ազգերու մէջ չէ խուսափեր անոր անողոք հարուածներէն։ Պօղոս Նուպարն ալ քննադատուեցաւ իր կենդանութեան օրով, բայց եւ քանիցս արժանացաւ համակրանքի ցոյցերու։ Ոչ միայն իբրեւ նախկին անխոնջ քարոզիչը հայկական դատի, այլեւ իբրեւ ազգային մեծազոյն բարերարներէն մէկը— իր նիւթական առատաձեռն զոհաբերութիւններով — իբրեւ հիմնադիրը Բարեգործականի, հեղինակը շարք մը ուրիշ հաստատութիւններու եւ ձեռնարկներու, երկրի մէջ ու արտասահմանում, հաստատութիւններ եւ ձեռնարկներ՝ զորս ամէն հայ ողջուներ է երախտագիտութեամբ, զորս մենք եւս ողջուներ ենք, քննադատելով հանդերձ անոնց ստուերոտ կողմերը։

Ո՛չ, հայ ժողովուրդը ապերախտ չէ։ Նա կը պարծի անդամ իր խորթ, հեռացած, օտարացած զաւակներով, որոնք կ'երթան իրենց բեղուն հանճարը ի սպաս դնելու օտար ազգերուն ու պետութիւններուն եւ անուն ու հռչակ կը հանեն աշխարհի մէջ։— Այվազովսկի, Լորիս-Մելիքով, Նուպար փաշա։

Հայ վատաբախտ ժողովուրդը, որ իր ահաւոր Golgothaի ճանապարհին շա՛տ անգամ է աղիողորմ գանգատներ հնչեցուցեր իր վերին բարեկեցիկ դասակարգերու քարասիրտ անտարբերութեան առթիւ, եւս առաւել կը սիրէ ու կը գնահատէ իր այն զգայուն զաւակները — հասարակական բնազդի տէր — որոնք կ'իջնեն նոյն այդ վերին խաւերու բարձունքներէն դէպի վար, որպէս քաւող, ապաշխարհող մեղապարտներ, կը ժամեննան խոնարհ ու հեզ զանգուածրուն եւ կը ջանան անձնուիրաբար կապել անոնց վէրքերը, ժեղմել անոնց տառապանքը։

Ա՛յդպիսի մէկն եղաւ Պօղոս Նուպար եւ այդ անունը դիւրութեամբ չպիտի մոռցուի։ Ինչպէս շատ ուրիշ գործիչներ, այդ մարդն եւս ունեցաւ իր ողբերդութիւնը։ Ի՛նչ երջանիկ օրեր էին ասկէ 17 տարի առաջ, երբ նա իր եռուն աշխատանոցին մէջ օրն ի բուն կը տքնէր վերաթուղթերուն ու յուշագիրներուն վրայ, կը դիմաւորէր քաղաքական գործիչներուն, խմբագիրներուն, երեսփոխաններուն եւ անդուլ կը մղէր հայ դատի պրոպագանդը. կը խօսէր, կը գրէր, կը յուզուէր, տենդանքուն գիշերներ անցնելով, կը թափառէր երկրէ երկիր, Պարիզէն, Լոնտոն, Հռոմ, Բերլին, մինչեւ Պետերբուրգ, կը զբօսցէր աշխարհի զօրաւորներու հետ, կը թեւաւորուէր անոնց տուած խոստումներով եւ կը վերադառնար ուրախ, զուարթ, լաւատես, պատանիի պէս խանդավառուած — մէկտեղ ապրինք այդ օրերը— ի՛նչ վարդագոյն պատրանքներ...։ Անոր կ'թուէր, թէ ահա՛, վերջապէս իր մասնակցութեամբ պիտի լուծուի այն անիծապարտ «գորդեան հանդոյցը», որու շուրջ հիսուն տարիէ ի վեր անճարօրէն տքներ են Խրիմեաններն ու Վարժապետեանները, Զերաֆներն ու յեդափոխական կուսակցութիւնները։

Եւ մեռա՛ւ խորապէս յուսահատ ու հիւանդաթափ ժարդկութենէն ու ժարդկային քաղաքակրթութենէն։

Sit tibi terra livis!

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

ՊԱՐՍԻԿՆԵՐԸ

Կ'ՕԳՆԵ՞Ն ՔԻՒՐՏԵՐՈՒՆ

Թուրք թերթերը կը հրատարակեն ցուլիս 6 թուականէն վանէն եւ պայազիտէն ստացուած հեռագրեր, շեշտելով որ անոնք կը հաստատեն թէ պարսիկները բացէ ի բաց կ'օգնեն քիւրտ տարակներուն։

Այսպէս, 150ի չափ իրանական «խազախ»ներ (դինուոր), եւ քանի մը գիւղէն 4 քիլոմեթր դէպի հիւսիս սահմանային արեւմուտք, ճիշդ սահմանին վրայ գտնուող Նավուր բլուրները գալով, հրոսակներուն ընդունելութիւնը պարսկաստանի ներքին փոխադրած են։

Միւս կողմէ, պարսկաստանի աշիրէթներէն Հալիքանլը եւ Քանհօլու աշիրէթները սահմանը եկած են ու կ'օգնեն աւազակներուն։ Պուլաքպալըի թրքական պահակատի դիմացի Այպէյ յերդվրայ ալ պարսիկ աշիրէթներ կը հաւաքուին։

Ըսկէ զատ, պարսիկ սահմանապահ իշխանութիւնը թոյլ տուած որ պարսկաստանի նեղ մասերու եւ Արարատի շրջակայքի աշիրէթները արօտավայրերը բարձրանան։ Այս կարգադրութիւնը եղած է անոր համար, որ այդ աշիրէթները ի հարկին օգնեն քիւրտ տարակներուն։

ՈՒՐԻՇ ՈՐՈ՞Ն Կ'ՕԳՆԵՆ

Վանի ու պայազիտի մէջտեղ ունեցած դէպքերը գոյց կուտան թէ — կ'ըսէ «Վագըթ», — շարժումը միւնուորական կազմակերպութեան մը ձեւով պատրաստուած էր եւ միաժամանակ տեղի կ'ունենար քանի մը ուղղութեամբ։

*** Ո րիթայի «Միլլի կազէթէ» թերթն ալ կը գրէ թէ 150նոց ներկէն քիրազ Համտի վերջերը պաղատած այցելած եւ նամակ մը յանձնած է ֆէյսալ Թագաւորին։ Ցետոյ երկարօրէն տեսակցած Թագաւորին հետ եւ այցելած նաեւ անգլիական ընդհ. բանակատեղին։

ՉԵՐՔԷԶ ԷՏՀԷՄ ԱԼ ՀԻՒՍԱՅԻ

Միջագետք կը գտնուի եւ ժողովուրդի կուտայ քրտական շարժմանը ձեւ մը։ Ինչպէս շատ ուրիշ գործիչներ, այդ մարդն եւս ունեցաւ իր ողբերգութիւնը։ Ի՛նչ երջանիկ օրեր էին ասկէ 17 տարի առաջ, երբ նա իր եռուն աշխատանոցին մէջ օրն ի բուն կը տքնէր վերաթուղթերուն ու յուշագիրներուն վրայ, կը դիմաւորէր քաղաքական գործիչներուն, խմբագիրներուն, երեսփոխաններուն եւ անդուլ կը մղէր հայ դատի պրոպագանդը. կը խօսէր, կը գրէր, կը յուզուէր, տենդանքուն գիշերներ անցնելով, կը թափառէր երկրէ երկիր, Պարիզէն, Լոնտոն, Հռոմ, Բերլին, մինչեւ Պետերբուրգ, կը զբօսցէր աշխարհի զօրաւորներու հետ, կը թեւաւորուէր անոնց տուած խոստումներով եւ կը վերադառնար ուրախ, զուարթ, լաւատես, պատանիի պէս խանդավառուած — մէկտեղ ապրինք այդ օրերը— ի՛նչ վարդագոյն պատրանքներ...։ Անոր կ'թուէր, թէ ահա՛, վերջապէս իր մասնակցութեամբ պիտի լուծուի այն անիծապարտ «գորդեան հանդոյցը», որու շուրջ հիսուն տարիէ ի վեր անճարօրէն տքներ են Խրիմեաններն ու Վարժապետեանները, Զերաֆներն ու յեդափոխական կուսակցութիւնները։

Եւ մեռա՛ւ խորապէս յուսահատ ու հիւանդաթափ ժարդկութենէն ու ժարդկային քաղաքակրթութենէն։

Sit tibi terra livis!

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

ՆԱՀԱՊԱՏԱԿ ՅՈՒՇԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հայ տառասիրի մը պիտի ըլլար (մտածեցի ես անոր տեսութենէն վերջ) որ Նահապետ Քուչակի մասին ուսումնասիրութիւն մը չունենայ։ Ընկերներ կան որոնք կը կարծեն թէ Քուչակ ամէն բանէ առաջ ազգային բանաստեղծ մըն է, որ հայրենասիրական երգեր գրած է իր ժամանակի համար։ Ուրիշներ կան որոնք կը կարծեն թէ Քուչակ ամէն բանէ առաջ սիրային բանաստեղծ մըն է, որ սիրային երգեր գրած է իր ժամանակի համար։ Ես ալ կը կարծեմ թէ Քուչակ ամէն բանէ առաջ սիրային բանաստեղծ մըն է, որ սիրային երգեր գրած է իր ժամանակի համար, բայց որ ունի նաեւ հայրենասիրական երգեր, որոնք սակայն ամէն բանէ առաջ սիրային երգեր են։ Ուրիշ խօսքով, Քուչակ ամէն բանէ առաջ սիրային բանաստեղծ մըն է,

եալները.— Ստալին, Քականովիչ, Մոլոտով, Կալինին, Վորոշիլոֆ, Կիրով, Կույպիշէֆ, եւն.: Փոխանդամներուն մէջ կան Զուբար եւ Մխկոյեան:

Ստալին վերընտրուեցաւ կեդր. կոմիտէի ընդհ. քարտուղար:

Ռուսաստանական ձգտում

ՄՈՍԿՈՒԱ, 13 Յուլիս.— Պարսկաստանի խորհրդային դեսպանը եւ երկու խորհրդականներ Մոսկուա կանչուեցան: Զրոյց կը շրջի թէ հաւանական է որ Խորհրդային Միութեան եւ Պարսկաստանի դիւանագիտական յարաբերութիւնները խզուին:

Հնդկաստանի խռովութիւնները

Առջի օր Պոմպէյի մէջ, ժողովուրդին և ոստիկանութեան միջեւ բախումի մը ընթացքին վիրաւորուեցան 500 անձեր, որոնց 150ը կը մնան հիւանդանոցները: 30 անձերու վիճակը ծանր է:

Հնդիկ համագործարի պատերազմական յանձնախումբին նախագահը, փոխ-նախագահը եւ կամաւորներու հրամանատարը դատապարտուեցան Հական ամիս բանտարկութեան:

Հնդիկները սուգ կը բռնեն, բողոքելու համար ոստիկանութեան դէմ, որ իրենց դէմ գաւազան գործածեց:

Տնտեսական տագնապին հետեւանքով, որ խռովութեանց սկիզբէն ի վեր կը տիրէ ամբողջ երկրին մէջ, Պոմպէյի եօթը բամպակեղէնի գործարաններ պիտի փակեն իրենց դռները օգոստոս 1էն սկսեալ, անգործ ձգելով 20,000 բանուորներ:

*** Սիվլայի Օրէնսդիր Ժողովուրդը իր վերջին նիստին մէջ, վիճաբանութիւն մը ունեցաւ բանաձեւի մը մասին, որ կ'առաջարկէ «նկատի առնելով ներկայ ծանր կացութիւնը, եւ Հնդկաստանի մէջ կարգն ու խաղաղութիւնը հաստատելու անհրաժեշտութիւնը, ազատ արձակել կանխին՝ ամենակարճ ժամանակի մէջ»:

Խօսողներէն շատերը ի նպաստ արտայայտուեցան բանաձեւին և պահանջեցին որ, ազատ արձակուելէ յետոյ, կանխի և Նէհրու մասնակցին Լոնտոնի Ժողովուրդի ժողովին:

*** Անգլիական կառավարութիւնը 35,000 սակի վարկ մը պահանջեց, անգլհնդկական խորհրդաժողովին համար, որ տեղի պիտի ունենայ հոկտեմբերին Լոնտոնի մէջ: Որոշուած է որ Ժողովին ծախքերը կէս առ կէս բաժնուին անգլիական եւ հնդկական կառավարութիւններուն միջեւ:

Հակաֆաշիստ թուրքիկներ օդանաւով

Պուրժէի կայանէն (Ֆրանսա) մեկնած օդանաւ մը, ֆաշիստական կառավարութեան դէմ թռուցիկներ ցրուեց Միլանի վրայ եւ շրջակայքը:

Ըստ «Ճիորնալէ տ'Իտալիա» թերթին, երբ օդանաւը հասաւ Պելլինցոնէ, երկու օդանաւորդ ունէր, մէկը ֆրանսացի, միւսը իտալացի՝ Պասանէզի: Պելլինցոնէէն օդանաւով մինակ մեկնեցաւ Իտալացին եւ իջաւ Լոտրինօ փոքր գիւղը, ուր առնելէ յետոյ թռուցիկները տպուած են Լոքարնօ, ուրկէ ինքնաշարժով փոխադրուած են Լոտրինօ գիւղը:

Միլանէ դարձին, օդանաւը ինկաւ Սէն-կօթարի վրայ եւ չախչախուեցաւ: Օդանաւուն մէջէն գտնուեցան թռուցիկները: Օդանաւորդը վիրաւորուած է:

Պասանէզի որ այժմ կը դարմանուի Պէռնի մէջ, խոստովանեցաւ թէ ինքն է որ Միլանի վրայ ցրուեց թռուցիկները:

Պուրժէի օդանաւային կայանը կը հերքէ թէ Պասանէզիի օդանաւը չէ մեկնած յիշեալ կայանէն:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ՊՈՒԷՆՈՍ-ԱՅՐԷՍի հանրակառքերէն մէկը ինկաւ գետակի մը մէջ: Թանձր մառախուղին պատճառաւ, կառավարը չէր նշմարած թէ, նաւու մը անցք տալու համար, այդ միջոցին վերցուած էր կամուրջը: Հանրակառքին մէջ կային 60է աւելի ճամբորդներ, որոնք բոլորն ալ խեղդուեցան:

ՖՐԱՆՍԱԶԻ ազգային պաշտպանութեան համար, կառավարութեան ուղած յաւելուածական վարկերը կարելի չէր եղած են. թարկել Ժողովրդարանի քուէարկութեան, նախաշրջանի փակման պատճառով:

Այս վարկերը, որոնց արդէն հաւանութիւն տուած էին Ծերակոյտի եւ Երես. ժողովի իրաւասու յանձնախումբերը, դրուեցան կառավարութեան տրամադրութեան տակ, մանաւոր հրովարտակով:

ԵՐԿՐԱՇԱՐԺի ցնցումները կը շարունակուին Պարսկաստանի կարգ մը վայրերուն մէջ, Շահփուրի, Պաղիրի եւ Խոյի մէջ: Յայտնի չէ դեռ թէ մարդու եւ ինչքի մեռածներ կան:

ԱՆԳԼԻՈՅ արտաքին նախարարը խորհրդարանին յայտնեց թէ կազմուած է յանձնախումբը, որ պիտի զբաղի Ռուսիոյ նախապատերազմեան պարտքերու կարգադրութեամբ:

Կազմուած են նաեւ երեք մասնախումբեր, որոնք պիտի զբաղին ա) Ժողովրդ. Միութեան կողմէ ազգայնացած մեծաշնորհներու եւ արտօնութեանց կապուած պահանջներով, բ) ռուսական բաժնեթուղթեր ունեցող անգլիացիներու պահանջներով, գ) անձնական պարտուպահանջի հարցերով:

ԱԹԻՆՔ, 13 յուլիս.— Ծերակոյտի յատուկ յանձնախումբը երկու տարի բանտարկութեան դատապարտեց զօր. Փանկալոսը, գործարանի մը կողմէ բանակին հայթայթելի կատւեղէններու պայմանագրութեան մը համար, եւ անպարտ արձակեց զօր. Նիտէրը՝ նախկին ծովային նախարար:

ԿԱԼԿԱԹԱՅէն հասած լուրերու համաձայն, հնդիկներու եւ ժանիետականներու միջեւ, ծանր կռիւներ տեղի ունեցած են Պէնկալի մէջ: Մանրամասնութիւնները կը պակսին: Յայտնի է միայն թէ բազմաթիւ հնդիկներու տուներ կողոպուտի ենթած են. հակառակ ոստիկանութեան բուռն ջանքերուն, կողոպուտը կը շարունակուի: Ինը հնդիկներ սպաննուած են:

ԱՄԵՐԻԿԱՅի կարգ մը շրջաններուն մէջ, տաքը կը շարունակուի անտանելի սաստկութեամբ՝ քանի մը օրուան ընթացքին, 76 անձեր խեղդուեցան գետերու եւ լճակներու մէջ, ուր ժողովուրդը կ'երթայ լոգնալու: Միսուրիի կողմերը, ջերմաչափը 48ի բարձրացաւ: Շատ քաղաքներու մէջ խանութները փակ կը մնան:

«ՅԱՌԱՋ» կը ծախուի ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

Գրատան մէջ, 51 Rue Monsieur le Prince

Հ. Յ. Դ. ՓԱՐԻԶԻ ԿՈՄԻՏԷՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԿԱՆ

ժողովի կը հրաւիրէ բոլոր խումբերու ներկայացուցիչները այս ուրբաթ իրիկուն ժամը 8.30ին Chope Parisienneի վերնայարկը, 64 Rue des Ecoles.

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ԴՊՐՈՑԱՍԷՐԻ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

20 Յուլիս կիրակի ժամը 2էն 10 վարժարանին պարտէզին մէջ

1 Boulevard du Nord, Le Raincy-Pavillons

Մարզական խաղեր, կովկասեան եւ եւրոպական պարեր եւ անակնկալներ:

Կը մասնակցին Պ. Վ. Սվաճեան, պարուհի Օր. Գավուքճեան եւ վարժարանի սանուհիները

Ձոխ գեղարուեստական բաժին

Մուտք՝ 5 ֆրանք

Հ. Ց. Դ.

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ԼԻՈՆի Պատ. Միութեան վիճաբանական ժողովը՝ վաղը Հինգշաբթի իրիկուն ժամը 8.30ին, գրադարանի սրահը: Կը հրաւիրուին ընկերներն ու համակիրները:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այրի տիկին Հոռիճանս Հիւսէյինեան, տէրեւ տիկին Մ. Բէիզեան շնորհակալութիւն կը յայտնեն Քիպարեան սրբազանի, քահանայից, դպրաց դասուն եւ ամէն անոնց որոնք անձամբ, նամակով, հեռագրով եւ ծաղկեպսակով ցաւակցութիւն յայտնեցին իրենց սիրնեցեալ որդւոյն, եղբօր եւ աներձագին

ՎԱՀՐԱՄ ՀԻՒՍԷՅԻՆՃԵԱՆ

Դառնացեալ մահուան առթիւ:

ՆԱՄԱԿԱՏՈՒԻՓ

ՍՏԱՑԱՆՔ

Ռոան, կ. Պ.— 35:
Եքզտրա, ց. ե.— 100:
Լա Ռոշէլ, Ա. Ս.— 35:
Ալֆորվիլ, Մ. Պ.— 35:
Մարսէյլ, Մ. Մ.— 100:
Իզօ, Տ. Ս.— 35:
Մարսէյլ,— Ի. Ք.— 35:
Վալանս, Գործ.—410, ցանծնեցինք
Ալֆորվիլ, Մ.Պ.—35:
Մարսէյլ, Մ. Մ. 70:
Լանսէյ, Գործ.— 300:
Իսի լէ Մուլինօ, Ն. Դ.— 70:
Քլամառ ժ. Ա.— 35:
Վիէննա, Գ. կ.— 30:
Սէթիֆ, Լ. Ի.— 140:
Նանթէր, Մ. Ք.— 100:
Փարիզ, Պետր.— 100:
Սէն Շամոն, Գործ.— 164.25:
Մարսէյլ, Գործ.— 978.80:

ՆԱՄԱԿ ուղին Տիկին Շահինեան, Պ. Պ. Մխրան Քէշիշեան, Արա Պարթեւեան, Ա. րամ Քամալիկեան եւ Զիլէցի Լեւոն Ալթունեան:

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Լեւոն Տիլանեան կը փընտրէ իր հօրեղբայրը Թադէոս Տիլանեան եւ հօրեղբօրորդին Ռուբէն Տիլանեան: Լուր ունեցողներէն կը խնդրուի իմացնել՝ Լեւոն Տիլանեանի, 29 Rue Etienne Dolet, Alfortville, Seine

— Կը փնտռուի Էնկիւրի նահանգին Ստանօս գիւղէն Յակոբ Զօպանեան 27—28 տարեկան, հօր անուն՝ Պօղոս, մօր՝ անուն Մարիամ: 1920ին կը գտնուէր իր մեծ մօրը քով Մերսինի: Այդ թուականին մեկնած է Դամասկոսէն Պոլիս երթալու համար: Կիլիկիոյ ճամբուն վրայ տեսնուած է հայրենակիցի մը կողմէ: Իր մասին ստոյգ տեղեկութիւն տուողին 1000 ֆրանք նուէր: Իմացնել իր եղբօրը Գրիգոր Զօպանեանի 31 Rue de Fossé, Issy-les-Moulineaux (Seine) France կամ թերթիս վարչութեան:

Կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել:

WAGRAM AUTO
73 Ave. de Wagram
63 Ave. Gde. Armée
149ter Bd. Villette
Ամբողջ դասընթացքը՝ սկսեա 100 ֆրանքէն:

ՄԻՄԻԹ

Անուան արժանի է միմիայն այն սիմիթը որ պատրաստուած է A. LA GARDE, 1 Rue St. Lazare, PARIS (9e) Nord Sud, N. D. de Lorette. Téléphone Trudaine 95.21

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ

96 r. Rivoli, մէթ. Շաթլէ. Աբմատ. եւ նոր մեթոտով դարմանում արանց եւ կանանց մորթի, արիւնի եւ վէներու հիւանդութեանց (ֆրանկախառ, ջերմախտ.) եւ վարիսի Մասն. Լաբօրատորաւոր: Ախտաճանաչում եւ արագ խորհրդակցութ. ամէն օր 9—12, 2—8 Կիրակի 9—12,

STUDIO D'ART MANOUK

Մարսէյլի գեղարուեստական լուսանկարչատունը՝
116 La Canebière
ուր պիտի գտնէք արուեստի կատարեալ բաւարարութիւն, ինչպէս նաեւ ամառնային բացօդեայ ժամանցներու համար ընտիր մեքենաներ ամէն պիտոյքներով: Վճարումներու դիւրութիւն: Չափաւոր գին:

ՄԱՆՈՒԿ ՄԱՐԿՈՍԵԱՆ

EMPIRE Միգիք-Շօլ՝ 37 Av. Wagram

IMPRIMERIE - MASSIS - ÉDITIONS
208bis, Rue Lafayette Paris (10)
Le Gérant H. STEPHAN

ALLO, ALLO
Tél. TRUDAINE 81 07
Այս է թիւր մեր թէլէֆոնին
ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ՁԷՆԱԶԵԱՆ, եւ ԳԱՍԱՆՃԵԱՆ
8, Rue de Chateaudun, PARIS (9e)
Métro Cadet, Peletier եւ Notre Dame de Lorette խնտ

ՏՕՔԹ. ԱՍԼԱՆ
38 Rue Rochechouart մէթրօ Cadet և Anvers Autobus J.
Tél. TRUDAINE 56 - 58
Թոքերու, Ստամոքսի, Լեարդի եւ Աղիքի հիւանդութիւնն ցաւուկ յարկաբաժին վէներական եւ Մորթի հիւանդութեան ULTRA - VIOLET ճառագայթներով կը դարմանէ նկորթի, ջղային, արեան հիւանդութիւնները եւ ցօղացաւ:
կ'ընդունի ամէն օր ժամը 9—12 եւ 3—7, կիր. մինչեւ կէս

ԽՆԱՅԵՑԷՔ ՁԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՒ ԴՐԱՄ
Հարիւրին 45 գեղջ ամերիկեան առաջնակարգ գրի մեքենաներու եւ հայուեմեքենաներու:
Remington թիւ 10, 11 գին՝ 1400 ֆրանք
Underwood թիւ 5, 12, 14 գին՝ 1800 ֆրանք
Վճարման դիւրութիւններ:
Գիմել կամ գրել Ս. Նաւասարդեանի, 366 Rue Vaugirard
Հեռաձայն՝ Vaugirard 28—89 եւ 05—93:

ՀԱՑԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE
ցէր եւ ցնօրէն՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՑԵԱՆ
23, Rue (Place) des Fêtes, Paris, XIX. Tél. Nord 96-61
Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամ ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ: Աչքի մասնագետը կ'ընդունի Գշ., Երկ. եւ Շաբաթ օրերը ժամը 4—6, Քթի, կորդի ու ականջի մասնագէտը ամէն Երեք. եւ Շաբաթ օրերը ժամը 2—3, ԱՏԱՄՆԱԲՈՑԺը ամէն օր ժամը 9էն 19,

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԿԵՐՊԱՍԵԳԻՆԵՐ
SIROUNAK ARABIAN & Cie
155 Rue Montmartre (1er étage)
Ֆրանսական եւ անգլիական խիստ ճոխ եւ ճաշակաւոր nouveautéներ այրերու համար: Մետաքսեայ եւ բրդեղէն ամէն տեսակ ընտիր կերպասեղէններ կիներու համար:
ԱՐՏԱԿԱՐԳ ԱԺԱՆՈՒԹԻՒՆ
Ձեռք մը կարուած հագուստը ձեզի պիտի արժէ՝ Ֆրանս. առաջնակարգ գեղեցիկ կերպասով 500 ֆրանք փոխանակ 700ի: Իսկ Անգլ. կերպասէ 700 փոխանակ 1000ի
փափաքողներու (այր եւ կանանց) կը տրամադրենք անթե coupe ունեցող եւ à façon աշխատող վարպետ — դերձա

ՅԱՐԳԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ
Եթէ կ'ուզէք բերնի համով մաքուր եւ անարատ սուրճ խմել, դիմեցէք հին ու փակաւոր
CAFÉ SULTANի
Ս. ԹՈՐՈՍ (Բէժախցի)
92 Rue d'Angoulème Métro: Couronne, Tél. Ménil. 56—
Ամենավերջին դրութեամբ մեքենաներով օժտուած մ վաճառատան մէջ պատրաստուած սուրճը կը գոհացնէ ա նէն նրբաճաշակները:
Ձոխ տեսակներ, գիներ անմրցելի, փորձեցէք անգամ եւ պիտի տեսնէք տարբերութիւնը ձեր գործածած եւ պատրաստած սուրճին: կ'ընդունինք ապսպրանքներ արտ սաֆմանէն եւ գաւառներէն: փափաքողներու կր ղրկ գիներու ցանկը, փոքրաքանակ եւ մեծաքանակ վաճառու

ՏՕՔԹ. ՄԻՀՐԱՆ Կ. ՔԷՇԻՇԵԱՆ
Նախկին բժշկապետ մերսինի Ֆրանս. հիւանդանոցներ Պատուոյ մէտալ Ֆրանսայի Առողջ. նախարարութենէն
կ'ընդունի ամէն օր բացի Կիրակիէ-ը 10էն 12ը ժամադրութեամ 134 Rue Blomet, Բէօնթգէնեան հաստատութեան մէջ: կը կատարէ ճառագայթներով ամէն կերպ քննութիւն, շողանկարում (radiograph դեր-մանիշակագոյն, յետ-կարմրագոյն եւ բէօնթգէնեան դարմանո (radiothérapie profonde), ՏԻԱԹԵՐՄԻԻ բոլոր կիրառումները եւ էլեկտրաբուժական բոլոր ձեւերը որ բազմաթիւ հիւանդութիւննե դարմանման լաւագոյն ազդակներն են:
Թոքախտաւորներու pneumothoraxի դործողութիւն, մասնա շիջուկ եւ պատուաստ:
Ջղային եւ հոգեկան կարգ մը հիւանդութիւններու դէմ թելադր կան, քնէածական եւ ֆոէօտեան մէթոտներ:
Որպէս ներքին հիւանդութեանց մասնագէտ, կ'այցելէ նաեւ տ ւանդներու:
Հասցէ՝ 134 Rue Blomet, Laboratoire de Radiologie. Mét Convention, Autob. X. եւ AG.
Հեռաձայն՝ Vaugirard 29—55, 47—86.

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ
ՀԱՅԱՐԱՆ ՖԼՕՐԻԱ
61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)
Մէթրօ Օտէոն եւ Սէն Միշէլ Հեռաձայն Littré 38—43
Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ



ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Միշտ ունենալու համար ապուխտի եւ երշիկի ընտիր համեղ եւ մաքուր, դիմեցէք ուղղակի հանրածանօթ ապուխտագործ եւ ապուխտավաճառ
HAIG MARACHLIANի
Fabrique des salaisons Orientales
16 Rue des Hortensias St. Just. MARSEILLE
որ իր յարգելի յաճախորդներուն դիւրութիւն տալու համար բացած է նաեւ մէթերանոց մը (կայարանին մօտ) 55 Rue de Petites Maries MARSEILLE.
կ'ընդունի ապսպրանքներ ամէն երկիրներէ, մեծ աքանակ եւ փոքրաքանակ եւ կ'ուղարկէ կատարեալ ճշտապահութեամբ

ՅԱՌԱՋ

LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԲԱԺԱՆԵԳԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70ֆ.	140ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ԵԳԻՊՏՈՍ		»	»
ԻՏԱԼԻԱ		250 ֆրանք	
ԱՄԵՐԻԿԱ		6 տլ.	10 տլ.
ԵՒՐՈՊԱ		100 ֆ.	200ֆ.

"HARATCH"

Directeur-Propriétaire
SCH. MISSAKIAN
Խմբագիր՝
Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Rédaction et Administration
Խմբագրութիւն եւ վարչութիւն
235, Faub. St.-Martin
PARIS (10e)

MÉTRO: LOUIS-BLANC OU JAURÈS
Téléphone : NORD 67-23
R. C. SEINE 376.286

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 3 ֆրանք

ՀԻՆԳՇԱԲԹԻ
17
ՅՈՒԼԻՍ
1930

17 JUILLET 1930

Ջ. ՏԱՐԻ ԹԻՒ 1315 — ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ — ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԱՆՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ «Նոր Լուր» թերթը հրատարակած է «Զգուշացէ Պարոն Դաշնակցականներ» վերնագրով յօդուած մը որ ստորագրուած է Պ. Արտաշէս Գալփաքճեանի կողմէ: Յիշատակենք որ Փարիզի ռամկավար թերթը պէտք զգացած է արտատպել այդ յօդուածը, իբրեւ «հեղինակաւոր չէզոքի մը ձայնը»: Նմաններն իրար գտած են «չէզոք» գետնի վրայ:

Մարդը կը զգուշացնէ Դաշնակցականները, որովհետեւ «հայ դաղութներու մէջ Դաշնակցութիւնը գործունէութեան վերսկսած է», որովհետեւ «Զափտհաո Որբերը Դաշնակցութեան հովանիին տակ են», որովհետեւ Դաշնակցութիւնը տասը տարիէ վեր գաղափարական պայքար մղած է բոլշեւիզմի դէմ...: Ու այլ բազմաթիւ և բազմապիսի ակնարկութիւններ, ու «զգուշացէք»ներ, որոնք արտասահմանի համար ոչինչ նշանակութիւն ունին և կը ծառայեն միայն Պոլսոյ այժմու խեղճուկ մթնոլորտն աւելի ապականելու:

Դաշնակցութեան դէմ եղած արտայայտութիւնները արժէքէ զուրկ են, ու մենք այդ անկշիռ խծբծանքներուն չէ որ պիտի պատասխանենք: Իսկ ազդարարութիւնները տղայական են եւ պարզօրէն անպատասխանատուութենէ կը բխին:

Ուշադրութեան արժանի պարագան երկուք է: Առաջին, որ հակադաշնակցական խմբակներն ու անհատները, հեռուէ հեռու իրարու կը միանան, սուտի ու զրպարտութեան միջոցաւ թոյն սրսկելու հանրութեան մէջ, շահագործելով չէզոք անունը: Եւ երկրորդ, իրենց հրատարակութիւններով պարզ տեղեկատուներ (աւելի ծանր բառը չգործածենք) կը հանդիսանան: Անվայել, եթէ չրսենք անբարոյական ընթացք մը, որ Դաշնակցութենէն աւելի, հայութեան կը վնասէ:

Քանի մը խօսք չէզոքութեան մասին: Հայ ժողովուրդի մէջ խոշոր զանգուած մը կայ որ իրօք չէզոք է: Այդ չէզոք զանգուածը կապուած է հայ ազգային կեանքին և կ'արտայայտուի այս կամ այն կողմը, երբ պարագաները ներկայանան, երբ ան կարող է օգտակար հանդիսանալ և երբ համոզուի թէ այս ինչ ձեռնարկը նպաստաւոր է հայ ժողովուրդին:

Չէզոք մտայնութիւնը կարող է թեքուիլ այսօր այս, վաղը միւս կուսակցութեան կողմը, նայելով հրապարակ դրուած խնդիրներուն, և տուեալ կուսակցութեան վստահելիութեան: Այս զանգուածին հետ գործածենք և ասկէ յետոյ ալ պիտի գործենք:

Բայց կան բազմաթիւ անհատներ որոնք «չէզոք» անունը կը կրեն, սակայն իրականութեան մէջ անոնք հակադաշնակցականներ են: Օրինակ, Պ. Արտաշէս Գալփաքճեանը, որ մօտ 25 տարիէ ի վեր կը գրէ և կը գործէ Դաշնակցութեան դէմ: Հետաքրքիր է գիտնալ թէ նման անհատներու չէզոքութիւնը ի՞նչ բանի մէջ կը կայանայ: Ա՞յն որ կուսակցութեան մը անդամ չեն: Այդ դեռ բաւական չէ: Չեզոք մը երբ իր անհատական անկախութիւնը կը կորսնցնէ, կը դառնայ մէկ մասնիկը հակադաշնակցական հոսանքներուն, ու հետեւաբար իրաւունք չունի շահագործելու չէզոք խոշոր զանգուածին անունը: Մինչդեռ մենք ամէն քայլափոխին կը հանդիպինք կեղծ ու դիմակաւոր այդ անհատներուն, որոնց դէմ պիտի պայքարինք, որպէս հայ ազգային մթնոլորտը պղտորողներու:

Երկրորդ պարագան աւելի ծանրակշիռ է: Պոլսոյ ջուրերուն վրայ նստած մարդիկ, որոնք միայն զբաղուած են եկեղեցական խնդիրներով եւ ոճիր-արկածներով, երբեմն, բոլորովին անտեղի կերպով, քաղաքական ջրապտոյտի մէջ կը նետուին, ու դուք կարող էք վստահ ըլլալ որ «ունքը շինելու տեղ, աչքը կը հանեն»: Այս յիմարութենէն արդիւնքը շատ ենք տեսած, բայց որպէս «յիմարութիւն» դեռ կարելի է ներել: Բայց կան ո՛չ-յիմարներ ալ, որոնք գործի վրայ երեւնալու համար (բարի ըլլանք այդպէս կարծելու) սարէն ձորէն տեղեկութիւններ իրարու քով կը շարեն, հեռաւոր խնդիրները տեղական կեանքին կը կապեն, նոյնիսկ տեղական չնչին ու անժեղ խնդիրներու շուրջ խօսած ժամանակ՝ քաղաքական ակնարկութիւններ կ'ընեն, պղտոր ջուրի մէջ ձուկ որսալու համար:

Այս, արդէն սայթաքուն ճանապարհ մըն է, մանաւանդ իրենց ապրած միջավայրի բերումով: Այդ սայթաքուն ճամբուն վրայ կեցած էր, ժամանակին, Հմայեակ Արամեանցը, որ հետզհետէ հասաւ այնտեղ, ուր անդունդ էր:

Պէտք է խնդրել այս պարոններէն, որ հանգիստ նստին ա՛յդ անհանգիստ երկրին մէջ եւ օրն ի բուն գրեն ոճիր-արկածներու մասին: Կարելի է ներել անոնց որ իրենց ամբողջ ժամանակը յատկացնեն Մ. Քէմալի գովքն ընելու: Այո՛, կարելի է... Քալեցէք ձեր ճանապարհով, այնպէս, ինչպէս կը թելադրեն ձեր գոյութեան պայմանները:

Բայց մէկ կողմ դրէք սա «զգուշացէք»ները:

Եթէ զգուշացման խօսք մը հարկաւոր է, ամէնէն առաջ պէտք է ուղղել անոնց, որ Արամեանցներու ճանապարհին վրայ կը գտնուին:

Կ. Ս.

ՄԱՄՈՒԼ

ՄԵՐ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Յուսաբեր» այս վերնագրով խմբագրականի մը մէջ կը գրէ (յուլիս 3).

— «Մեր ունեցած տեղեկութիւնները կուգան վկայելու, որ Խորհրդային Իշխանութիւնը արգելք պիտի չհանդիսանայ կաթողիկոսական ընտրութեանց: Մեր խօսքը *արգելքի* մասին է, բայց ոչ *միջամտութեան*: Երեւանը անկարող է չմիջամտել կարգադրութեանը իրըցի մը, որ կենսական նշանակութիւն ունի իրեն համար: Այս պարագան նկատի առնելով՝ այժմէն իսկ կարելի է յայտարարել, որ կաթողիկոսական ընտրութեանց հարցին մէջ վատթարագոյն ելքը բնաւ *արգելքը* չէ: կան դէպքեր, երբ երեւանը, արգելք չհանդիսանալով հանդերձ, իր միջամտութեամբ շատ աւելի ծանր հարուած կարող է տալ էջմիածնին:

Անսահմանօրէն ուրախ պիտի ըլլայինք, եթէ մեր յոռի ենթադրութիւններէն եւ ոչ մէկը իրականութիւն չդառնար, թող մենք չարաչարօրէն սխալինք, բայց թող ընտրութիւնները տեղի ունենան այնպէս, ինչպէս կը պահանջէ այդ հայ եկեղեցիի մշակած կանոնագիրը:

Մենք ո՛չ կաթողիկոսական թեկնածու ունինք եւ ո՛չ ալ կաթողիկոսական պատուիրակ: Աւելորդ է ըսել, որ այս հարցին մէջ մենք պիտի մնանք պարզ հանդիսատեսի դերին մէջ: Սակայն մենք պիտի փափաքէինք, որ արտասահմանեան բոլոր թեմերը յայնօրէն օգտագործէին իրենց ընծայուած դիւրութիւնները եւ պատուիրակներու լրիւ քանակով մասնակցէին կաթողիկոսական ընտրութեանց: կը հաւատանք, որ այս մասնակցութիւնը իր բարերար ազդեցութիւնը պիտի ունենար հարցի բարենպաստ կարգադրութեանը մէջ:

Թող տարօրինակ չթուի ընթերցողին, երբ մենք, կաթողիկոսական ընտրութեանց անմասն մնալով մէկկողմ, այսքան կը հետաքրքրուինք այդ ընտրութեանց ելքով: ըսած ենք ու կը կրկնենք, որ էջմիածինը բացառաբար կրօնական կեդրոն չէ հայութեան եւ յատկապէս անոր գաղութաբնակ հոծ հատուածին համար: մենք «ամենայն հայոց կաթողիկոս» ունեցանք (եւ ունինք), բայց «ամենայն հայոց իշխանաւոր» չունեցանք (եւ չունինք): Ու քանի որ «ամենայն Հայերը» անհրաժեշտ է ո՛ եւ է շաղկապով իրարու զօդած եւ օղակած պահել, ուստի անհրաժեշտօրէն պէտք է նաեւ էջմիածինը պահել: Պահել, սակայն, իր այսօրուան իրաւական դիրքին եւ բարոյական հեղինակութեանը մէջ:

Ահա *ազգային* այն մտահոգութիւնները, որ մեզ կը հարկադրեն գաղութահայութեան լուրջ ուշադրութիւնը հրաւիրել կաթողիկոսական ընտրութեանց վրայ.

Այս ընտրութեանց ապահովաբար պիտի մասնակցի ամբողջ հայ ժողովուրդը իր բոլոր հոսանքներով, բացառութեամբ Շ. Ց. Դաշնակցութեան:

Անոնք, որոնք մեր մասնակցութիւնը խորհրդահայ կեանքի հանրային խնդիրներուն խոչընդոտ կը նկատեն այդ խնդիրները լուծման, ամէն պատեհութիւն ունին կաթողիկոսական հարցի մէջ լուծման լաւագոյն ձեւը կիրառելու, քանի որ մենք հոս քնաւ չկանք»:

ՕՐԸ ՕՐԻՆ

Բռնական շարժումը զսպուած

Թրքական աղբիւրէ առնելով, երէկ հաղորդեցինք քիւրտ յեղափոխական շարժումի զսպման մասին կարգ մը լուրեր: Թուրք հեռագրական գործակալութիւնը կը շարունակէ հետեւեալ լուրերը հաղորդել շարժումին մասին:

ՏՐԱԳԻԶՈՆ, 11 յուլ.— Երգրուժի ճամբով հոս հասած տեղեկութեանց համաձայն, վերջին 5.10 օրուան ընթացքին, Քիւրտերը կարգ մը յանդուգն ձեռնարկներ ըրած են: Անոնց մէկ մասը նոյնիսկ եկած է Արճէշ, եւ փորձած է թալլել գիւղը: Բայց թուրք ուժերուն միջամտութեան վրայ, աւազակները չեն յաջողած իրենց ձեռնարկին մէջ եւ փախած են:

Թրքական ուժերուն ձեռք առած խիստ միջոցներուն հետեւանքով, աւազակներուն այս քայլը շատ սուղի նստած է իրենց: Մասնաւորապէս վերջին յարձակուժին, սեւ կորուստ կրած եւ լեռ քաշուած են:

ՎԱՆ, 9.— Արճէշէն կը հաղորդեն թէ Զիլանի ձորին մէջ գործող հրոսակներուն փճացումը աւարտելու վրայ է: Եւ արդէն, աւազակներու ձեռքէն լեռները փախած գիւղացիները իրենց տեղերը վերադարձած են:

∴ «Երբրն»ի համաձայն քիւրտերը մեծ պարտութիւն մը կրած են Վանի ծովի հիւսիս. արեւմտեան կողմը: Անոնք կը համախմբուին անտառիկ շրջանակներու մէջ եւ կը հասկցուի թէ սքանչելի կերպով գինուած են:

∴ «Վագրը» ալ կ'ըսէ թէ թուրք գինուորները կը յառաջանան Ախլաթի վրայէն: Կ'ենթադրուի թէ այս շրջանին մէջ գինուորական գործողութիւնները մէկ շաբաթէն պիտի աւարտին: (Ախլաթը՝ Արճէշի արեւմուտքը կը գտնուի):

Անգլիա եւ թուրք նաւատորմը

Անգլիական թերթերը կը գրեն թէ թրքական նաւատորմը հրաւէր ստացած է բրիտանական ծովակալութենէն, նաւաբաժին մը ուղարկելու Մալթա, յառաջիկայ աշնան: Թուրք պետական շրջանակներուն մէջ մեծ գոհունակութիւն պատճառած է այս հրաւէրը եւ արդէն պատրաստութիւններ կը տեսնուին «ներկայանալի» վիճակի մէջ դնելու հոչակաւոր «Եավուզ»ը և «Համիտիէ»ն՝ Թուրքիոյ նաւային ուժին երկու նժոյգները:

Եգիպտոսի արիւնահեղ կռիւները

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, 15 Յուլիս.— Ծանր խռովութիւններ ծագեցան այսօր, Եգիպտոսի մէջ: Տասնեւեօթն անձեր՝ որոնց ութը Եւրոպացիներ, սպաննուեցան և 250 անձեր ալ վիրաւորուեցան Աղեքսանդրիոյ մէջ՝ բժրոստութեան մը ընթացքին: Եւրոպացիներն ապաստանեցան Սակարան: Ոստիկանութիւնը՝ դատական նախարարութեան պալատէն՝ կրակ բացաւ ժողովուրդին վրայ,

Մանսուրայի ցոյցին առթիւ սպանեալներուն ի յարգանս, ազգայնականները կազմակերպած էին երկու ժամուան ընդհ. գործադուլ մը: Բանթողները թափօր կազմած, Աղեքսանդրիոյ թաղերը պտտեցան, ցոյցեր կատարելով ի պատիւ նախորդ վարչապետ Նահաս փաշայի եւ երբ կը հասնէին Մուհամմէտ Ալի հրապարակը, ոստիկանութիւնը փորձեց ցրուել զանոնք: Այբոյր զայրացած, նախ յարձակեցաւ ոստիկանութեան եւ յետոյ եւրոպական վաճառատուններու վրայ, կոտրտելով ապակիները: Զարհուրելի տեսարաններ պարզուեցան: Առանձին որ եւ է ոստիկան որ կ'իյնար ամբոխին ձեռքը, կը քարկոծուէր, մինչեւ որ մեռած իյնար գետին: Յուցարարները յետոյ յարձակեցան հանրակառքերուն վրայ, ջարդուփշուր ընելով զանոնք:

Ոստիկան ուժերու հազարապետ մը Ֆից Փաթրիք, վիրաւորուեցաւ ամէնէն առաջ, որմէ յետոյ, ոստիկանութիւնը գործեց վարանքով, անկազմակերպ գրեթէ, մինչեւ որ եգիպտական բանակէն ուժ հասաւ եւ կրակ բացաւ հրապարակը հաւաքուած ժողովուրդին վրայ: Սակարանը եւ առեւտրական մեծ տուները դադրեցուցին ամէն գործառնութիւն: Բոլոր խանութները փակ են: Եւրոպական գաղութը ահուսարսափի մէջ է:

Կը հերքուի սակայն թէ շարժումը զսպելու համար, դիմում է կատարուած անգլիական ուժերուն:

Կռիւներ Մարոքի մէջ

Մարոքեան ցեխախումբ մը յարձակում գործեց Ակուկէօրի եւ Թակէնտուզի ֆրանսական զօրախումբերուն գծին վրայ: Հրոսակները որ յաջողած էին ոչխարի հօտեր եւ պատանդներ յափշտակել, յարձակման ենթարկուեցան ֆրանսական ուժերու եւ օդանաւերու կողմէ եւ ծանր կորուստներու ենթարկուելով, ստիպուեցան լքել իրենց կողոպուտները:

Կռիւի ընթացքին, սպաննուեցան սպայ մը եւ ենթասպայ մը ինչպէս նաեւ եւրոպացի զինուոր մը: Կան նաեւ 13քնիկ զինուորներ վիրաւոր կամ սպաննեալ:

Զորս հարիւր հոգիէ բաղկացած ուրիշ հրոսախումբ մը ևս, որ մեկներ էր Թաֆիլալէդէն, եւ կը գործէր Ալճերիոյ հարաւ, անակնկալ յարձակման ենթարկուեցաւ ֆրանսական զօրախումբերու կողմէ եւ մեծ վնասներով քաշուեցաւ Ովասիս:

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

Հ. Ց. Դ. ՓԱՐԻԶԻ ՏԱՆ ՀԱՄԱՐ

(Հանգանակութիւն Եւրոպայի կեդր. կոմիտէի)

ՑԱՆԿ 29

Հայկ Եաղճեան Ցէլընտորֆ (Գերմանիա)	400
Մկրտիչ Մեզպուրեան	150
Գասպար Գասպարեան	150
Լիմնէն	
Յովհաննէս Գայաճանեան	100
Յարութիւն Խազնէճեան	100
Սարգիս Սիրականեան	100
Բաբկէն Աղաբէկեան	100
Վահան Շահինեան	100
Գումար	1200
Նախորդ գումար	35,780
Ընդհ. գումար	36,980

ՍՊԱՆՆՈՒԱԾ ԸՄԲՈՍՏՆԵՐԸ

Արճէշի կռուին մէջ շատ մը քիւրտ գեկավարներ սպաննուած են, բայց եւ այնպէս, ըմբոստները կտրած են մաս մը դիակներու գլուխները եւ հետերնին տարած, որպէս զի դիակներուն ինքնութիւնը չճանչցուի: Գլուխը կտրուած դիակին մէկը կը պատկանի Քէօր Հիւսէյին փաշայի տղուն:

ԱՍԿԷ ԱՌԱՋ ՀԱՅԵՐԸ ԿԸ ՃՆՇԷԻՆ

Արճէշի դէպքերու մասին խօսելով, «ձիւմհուրիէթ» կը գրէ.— Հին ատենները, ձէլալի աշիրէթին քիւրտերը կը յարձակէին Արճէշի եւ Ալճաւազի հայկական գիւղերուն վրայ, բայց հայ գիւղացիները նուէրներ տալով կը պատուէին յարձակողները: Եւ երբ հետապնդում սկսուէր կառավարութեան կողմէ, աւազակները սիփան լեռը կ'ապաստանէին:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ՔԻՒՐՏԵՐՈՒՆ

Վանէն եկած յուլիս 8 թուակիր հեռագրի մը համաձայն, յունիս 10ին, Հասան խան, Թաւրիզէն քալէվի կուգայ, եւ եուսուֆ Ագտալի եւ Հիւսէյին օղլու Պոհոյի հետ տեսնուելէ յետոյ, գործի կը սկսի նախապէս պատրաստուածհրոսախումբերը: Այս կարգադրութիւնները ընելէ յետոյ, Հասան խան Թաւրիզ կը վերադառնայ թոյի ճամբով եւ ուտելիք, դրամ եւ եքմալի խագախներուն գէնքերը կը ղրկէ եուսուֆ Ագտալի: Ասկէ զատ, խանութեան տիտղոս կուտայ անոր:

Միւս կողմէ, Պարսկաստանի Զաղըրշան աշիրէթէն 60 հոգի կը յարձակին Զաղրը, Ձիրան եւ Իրանկանիշ գիւղերուն վրայ, բայց դիմադրութեան հանդիպելով ետ կը մղուին: Ըմբոստները յետոյ կը յարձակին Թօշապի փանիսիփի գիւղին վրայ եւ անասունները յափշտակելով Պարսկաստան կ'երթան:

Սարայէն ալ կը հաղորդեն թէ մէհմէտ աշիրէթը կը նեղէ այդ շրջանի սահմանային գիւղերը:

ՍԻՈՆԻՍՏՆԵՐՈՒ համագումարը որ տեղի կ'ունենար Լվովի մէջ, բանաձեւով մը, պահանջեց որ սիոնականներու գործադիր մարմինէն հրաժարի համբաւաւոր հրեայ գործիչ Վայցմանը: Սիոնականներու կեդրոնը հաստատուեցաւ Պերլին, 30 անդամներով:

ՆԱՄԱԿՆԵՐ ԼՈՆՏՈՆԷՆ

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԱՆԳԼԻՈՅ ՄԷՋ

Բ.

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԱՆ.— ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԴԱՊ.— ԱԶԱՏ ԱՌԵՒՏՈՒՐ ԵՒ ՄԱՔՍԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ.— ՀԱՄԱԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԱԶԱՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆ.—

Ընդհանուր դիծերով պարզեցինք երէկ, քաղաքական տագնապի ծանրակշիռ հանգամանքը, շեշտելով որ Մեծն Բրիտանիա կը գտնուի այժմ տնտեսական քաղաքականութեան յեղաշրջումի նախօրեակին։ Արդարեւ, եթէ ձեւ ու գոյն ստացան մշակուած ծրագիրները որոնք տակաւին ակադեմական են, հիմնովին պիտի կերպարանափոխուի առեւտրական եւ արդիւնաբերական Անգլիոյ դիմագիծը։

Համաբրիտանական ազատ առեւտուրի եւ մաքսային դրութեան բանավէճը, որ սաստկացաւ վերջին քանի մը ամիսներու ընթացքին, հեւ ի հեւ աշխատանքի լարած է քաղաքական երեք գլխաւոր խմբակցութիւնները։

Շարժումը որուն ազդանշանը տուին քաղքենի դրամատիրական ժամուլի երկու մեծահարուստ լորտերը, արտայայտութիւններէն մէկն է յետպատերազմեան Անգլիոյ ընդհանուր աշխարհաւեացքի յեղաշրջման։ Դանդաղ բայց յարատեւ ձգտում մը կայ զինադադարէն ասդին մասնաւորաբար, արդիական պայմաններուն պատշաճեցնելու ընկերային եւ տնտեսական կեանքի բոլոր երեւոյթները։ Աւանդական սովորութիւնները ուժգնօրէն հաւատարիմ երկրի մը համար, այդ ուղղութեամբ կատարուող ամէն փորձ չափազանց յատկանշական է, որովհետեւ անցողակի տագնապ մը դարմանելու համար չէ որ հրապարակ նետուած են այդ ծրագիրները. երկրին եւ կայսրութեան ապագան է գլխաւոր մտահոգութիւնը օրուան պատասխանատուներուն, այլապէս չպիտի աճապարէին խօսիլ արմատական փոփոխութիւններու մասին։

Համաշխարհային վաճառականութեան եւ ճարտարարուեստին կը տիրապետէր Անգլիա մինչեւ պատերազմ։ Ամէնէն հարուստն էր, ամէնէն զօրաւորը և հեղինակաւորը։ Եկաւ 1914 թուականը։ Եւրոպայի ժողովուրդները ձանձրացեր էին խաղաղ աշխատանքի միօրինակութենէն. գիրար սպաննելու հեշտանքը անդիմադրելի էր. պատերազմ խաղացին չորս տարի շարունակ. ու չորս տարի վերջ ո՛չ յաղթող կար ո՛չ յաղթուող։ Բանակները տուն վերադարձան։ Թնդանօթ, արիւն, աւերակ փոխեր էին ժողովուրդներու հոգեբանութիւնը, ներշնչումները, ժառանգելու եւ գործելու ձեւը։ Զարթօնք ամէն տեղ։ Տեսակ մը քէն եւ արհատարհանք մեծերուն, հին փառքերուն հանդէպ եւ հեւ ի հեւ աշխատանք ազգային ինքնագիտակցութեան պահպանումի եւ տնտեսական բարգաւաճման համար։ Արդի՞նք։ Համեմատական ինքնաբաւ վիճակ փոքր եւ լետաւնաց ժողովուրդներու եւ սրարշաւ մրցում մեծերուն հետ՝ տնտեսական գետնի վրայ։ Իրերու այս յանկարծական դասավիժումին մէջ ամէնէն աւելի վնասուողը եղաւ Մեծն Բրիտանիան, հակառակ այն վիթխարի բաժինին զոր ստացաւ պատերազմի աւարէն։

Եթէ թղթատէք 1918էն իվեր պատրաստուած վիճակագրութիւնները, պիտի տեսնէք որ անգլիական ճարտարարուեստը եւ վաճառականութիւնը ո՛չ մէկ տարի չեն հասած պատերազմի նախորդ տարիներու յաջողութեան։

Այն բոլոր կողմնակի միջոցները որոնց մասին խորհեցան, չարդարացուցին ակնկալութիւնները։ Ու հիմա, երբ սեղանի վրայ են ազատ առեւտուրի եւ մաքսային դրութիւն հաստատելու ծրագիրները, պատասխանատու վարիչներուն նպատակն է գտնել այն ապահով միջոցը, որով կարելի պիտի ըլլայ կասեցնել արտաքին մրցակցութիւնը եւ վերանորոգել երկրին քայքայուած տնտեսական վիճակը։

Երկու գլխաւոր ճակատի բաժնուած է այժմ Անգլիոյ քաղաքական ընկերային պայքարը՝ — Ազատ Առեւտուրի (Free Trade) կողմնակիցները եւ անոնք, որոնք կը չատագովեն Մաքսային Դրութիւնը (Protection)։

Այս երկուքին զուգընթաց կը զարգանայ «Համաբրիտանական ազատ փոխանակութեան» (Empire Free Trade) տեսակէտը որ միջին ճամբան է, գրեթէ, նախորդներուն։

Մաքսատուրքէ զերծ են Անգլիա ներածուած բոլոր առեւտրական եւ արդիւնաբերական նիւթերը, բացի քանի մը տեսակներէ, ինչպէս, մետաքսեղէն, ալքօլ, ծխախոտ, ինքնաշարժ, լուսանկարչական գործիքներ, չոր պտուղներ եւ այլն։ Բացառութիւն չեն կազմեր բրիտանական գաղթավայրերէն ներածուած ապրանքները, որովհետեւ տնտեսական իմաստով այդ գաղթավայրերն ալ կը նկատուին օտար երկիրներ։ Այս դրութիւնը որ մասնաւորաբար զարգացաւ վերջին հարիւր տարուան մէջ, հիմնական չիղն է երկրին տնտեսական քաղաքականութեան, այնքան զօրաւոր, որ միշտ ձախողութեան հանդիպած են այն տարրերը, որոնք փորձած են որոշ բարեփոխումներով մեղմացնել զայն։ Գլխաւոր չահակիրն է Ազատական կուսակցութիւնը որ բուռն կերպով կառչած է այդ սիսդէմին իբրեւ մեկնակէտ իր քաղաքական ծրագրին։ Ազատ փոխանակութեան կուսակիցները կը պնդեն որ Մաքսային դրութիւնը արգելք է երկրին արդիւնաբերական արտադրութեանց զարգացման. աննպաստ է վաճառականութեան եւ կը թուլացնէ մրցակցութիւնը։ Սահմանափակելով ներածութիւններու քանակը, ինքնաբերաբար յառաջ կը բերէ գիներու սղութիւն. կը նուազեցնէ անգլիական արտածումները որոնք յաճախ կը վճարեն Անգլիա ներածուած հում նիւթերու եւ ուտեստեղէններու արժէքը։

Մաքսատուրքի կողմնակիցները՝ պահպանողականները ընդհանուր առումով, կը բացատրեն թէ ճարտարարուեստի կարգ մը ճիւղերու ազատ զարգացման համար անհրաժեշտ է տուրքի ենթարկել օտար արտադրութիւնները։ Այդ ձեւով երկիրը կը սպառէ այն նիւթերը որոնք պատրաստուած են Անգլիոյ մէջ. ազգային ճարտարարուեստը մեծ գործ կը տեսնայ, արտադրութիւնը կը շատնայ, գիները կ'ժամանեն եւ կը նուազի անգործներու թիւը։ Վիճակագրութիւն մը ցոյց կուտայ որ 1880էն 1929 թուականը, Անգլիոյ ճարտարարուեստի արտածումները աճած են հարիւրին 186 համեմատութեամբ, մինչդեռ մաքսային դրութիւն ունեցող Ֆրանսայի արտածումները շատցած են 265 առ հարիւր, Գերմանիոյ 352 առ հարիւր եւ Միացեալ Նահանգներունը 2099 առ հարիւր։

Այս երկու տեսութիւններուն միջեւ ճամբան է ըսին ք «Համաբրիտանական Ազատ Փոխանակութիւնը» որ անմիջական վճռի առարկայ է այս օրերուն։ Ամէնէն էականն է, կ'ըսեն այդ շարժումին գեկավարները, նախ եւ առաջ համաձայնութեան մը գալ գաղթավայրերուն հետ եւ Ազատ Առեւտուրը սկսիլ կայսրութեան ներսէն. քանի որ Անգլիա իր ուտեստեղէնին գլխաւոր մասը կը ստանայ իր գաղութներէն, ազատ անցք տանք այդ նիւթերու ներածումին, որպէսզի գաղթավայրերն ալ ստիպուին Անգլիայէն գնելու իրենց պէտք եղող արդիւնաբերական նիւթերը՝ առանց մաքսատուրքի ենթարկելու զանոնք։ Այս պարզային տուրք հաստատել օտար երկիրներէ Անգլիա ներածուելիք ուտեստեղէնին վրայ։

Տեսակ մը հակազդեցութիւն օտար մրցակցութեան, որ թերեւս պիտի դարմանէ տիրող գործատութիւնը, թէեւ յոռետեսներու համարանքը զանցառելի չէ։ Որպէս զի դրական արդիւնք տայ այս ծրագիրը, անհրաժեշտ է գիտնալ ի հարկէ, որ բրիտանական կայսրութիւնը ինքնաբա՞ւ է իսկապէս. վիճակագրութիւնները շատ ալ նըպաստաւոր չեն այս մասին։

Պահպանողականները մասամբ համաձայն են միայն առաջադրուած ծրագրին. կը թուի թէ տրամադիր են աւելի մաքսատուրքի հաստատումին, մանաւանդ այն արտադրութեանց վրայ, որոնք մեծապէս ազդուած են տիրող տագնապէն. բայց տեսակ մը վարանում ունին երբ հարց կը դրուի իրենց վճռապէս յայտնելու իրենց տեսակէտը։ Ճարտարարուեստական եւ դրամատիրական շրջանակներու հաւանութիւնը անշուշտ մեծ դեր պիտի խաղայ այդ իմաստով։

Ազատականները, չեն ուզեր, ինչպէս ըսինք վտանգաւոր որոշումի տակ մտնել ու ճիգ կը թափեն պահպանելու իրենց դասական քաղաքականութիւնը իբրեւ Ազատ Առեւտուրի կուսակիցներ։

Աշխատաւորականները տակաւին չեն արտասանած իրենց վերջին խօսքը. գօրաւոր է Ազատ Առեւտուրի տեսութիւնը պաշտպանողներու թիւը իրենց շարքերէն ներս։

Զափազանց լուրջ շարժում մը ստեղծեցին ուրեմն ծանօթ երկու լորտերը, շարժում մը որ բնական հետեւանքն էր տնտեսական կացութեան. դժուար թէ մաժուլով ու ճառերով կարելի ըլլայ որոշել ուղիղ ճամբան։ Տնտեսական նոր քաղաքականութեան հարցը պիտի փութացնէ խորհրդարանական ընտրութիւնները, անկասկած ուրիշ բազմաթիւ խնդիրներէ, որոնք արդէն իսկ վտանգաւոր դրութեան մէջ դրած են ներկայ դահլիճը։

Ժ. Մ.

ՎԵՐԱԴԱՐՁ ԴԷՊԻ ՌԱՋՄ. ԿՈՄՈՒՆԻԶՄԸ

(ԼԷՆԻՆ ԵՒ ՍՏԱԼԻՆ)

Բ. եւ վերջին մաս

«Յեղափոխական պրոլետարիատը» մի պահ հանգստացել էր, ուստի պէտք է անցնէր գրոհի։ Էլ չենք խօսում գիւղացիութեան ամէնօրեայ (սկսած 1928 թուից) թալանի ու հարստահարման եւ Բուխարինի իբրեւացի խոստովանանքի մասին։— Բուխարին այդ արարքները որոնում էր «ռազմա-ֆիոդալական շահագործում» անուանելով։

Սոցիալիզմի պահանջը — օր ըստ օրէ մեծանում էր։ Ստալինը զգազգած, «ճեպընթաց սոցիալիզմի» զանգն էր հնչեցնում, «համատարած հաւաքականացում» եւ «կուլակի հաշւեյարդար»։ Ինչ որ նշանակում էր, այսպէս կոչուած, «համատարած գիւղացիութեան հաշւեյարդար»։ «Մենք անցել ենք Նեպի գերագոյն յարձակման գրոհին» յայտարարում էին Ե. Բեւեանի Աբռվեան փողոցի հոդագրասիւներից կախուած բարձրախօսները, առանց նկատի առնելու «գրոհի» հետեւանքները, որոնց մասին այնքան քիչ են մտածում կոմունիստները։

Ստալինը Լէնինի հնացած արինդի վրայ սկսեց նետազել Նեպի հնացած եղանակները։ Բանդուած օձախը (Նեպը) սկսեց լուսաւորուել եւ ջանքեր թափեց վերակենդանացնելու փոշիացած Լէնինի տենդային դառանցանքները։ Բայց աւա՛ղ, նրանք հանդիպեցան գիւղացիական ապստամբութիւններին եւ փշրուելով տեղի տուեցին Ստալինի «գլխապտոյտներին»։

Ի՞նչ է մնում եզրակացնել այդ բոլորից. հարց է ծագում... Այն, որ «համատարածից» առաջացած «գլխապտոյտը» Լէնինի նետած գազափարների եւ Ստալինի ցնորամտութիւնների եւ անհիմն դատողութիւնների այդ խօսքն էր։ Եւ այսպէս, Ստալինը վերջին անգամ եւս պարտութեան ժամնելով գլուխը կորցրած, նորէն կանգնեց հին կոտրուած դաշտակի առջեւ»։ Ստալինը դարձաւ հասարակական պարապանքի մի կենդանի. ստորադաս կոմունիստները, գլխաւորապէս ժառանգականութիւնը, զգացին, որ այդ բոլորի պատճառը Ստալինն էր — նրա կենտկոմի բերանով արտայայտուած բանաձեւերն էին որոնք առաջացրին Ռուսաստանի, Տամրովի, Հայաստանի, Վրաստանի, Ազրբեջանի արիւնոտ դէպքերը։

Թող ամենաին զարմանալի չթուի քեզ ընթերցող, որ ներկայիս, Լենինային Հայաստանի լայնածաւալ ապստամբութիւնների մասնակցողներից շատերը բոլշեւիկ կուսակցութիւնից հեռացած կոմունիստներն են, որոնք Չեկայի գաժանների հետ յուսահատական պայքար են մղում եւ յօշոտում իրար։ Թողնենք այդ բոլորը։ Մաւալի փոքրութիւնը արգելք է հանդիսանում կանգ առնել դրանց վրայ։

Մնում էր Ստալինին միջոցներ գտնել իր երերուն դիրքն ապահովելու համար։ Իրաւի, այդ նրան յաջողուեց։ Ահա նրա «պատասխան ընկեր կոլտնտեսականներին» յօդուածների մէջ, նա գտնում էր որ պետութեան ամենաուժեղ վտանգը դա ալ թեքումն է»։ Հարց ու պատասխանի այդ յօդուածը Ստալինը դիտաւորեալ կերպով ինքն էր գրել, կլլելով Ռուսաստանի տնտեսական այդ տագնապից։ Իսկ ուրիշներին խաբելու համար պատճառաբանում էր թէ այդ հարցերը զանազան կոլտնտեսականներից է ստացել եւ ստիպուած է պատասխանել, որովհետեւ «արդիական խնդիրներն են շօշափում»։ Այս անգամ եւս Ստալինը ժամնեց. որովհետեւ այն հարցերը որ Ստալինը գրել էր թերթում, դա հարցեր չէին։ Տգէտ գիւղացին, որ մինչեւ օրս խարխափում է խալարի ճիրաններում, երբեք այդպիսի բարդ հարցերի մասին չի կարող մտածել, եւ բացի այդ համատարածի հարւածներից խելագարած գիւղացին զզուում էր, երբ Ստալինի արիւնոտ անունն էր լսում։ Միւս յօդուածը դա «գլխապտոյտը յաջողութիւնների ընթացքում» վերնագիրն էր կրում։ Այդ յօդուածով Ստալինը աւելի խայտառակուեց։ Հրաժարուելով իր ասածներից, Ստալինը մեղքը փորձեց փաթաթել աւելի ստորադաս կոմունիստների վզին։ «Անդրկովկասի ազգաբնակչութեան համար,—գրում է Ստալինը, կոլլեկտիվացման համար ժամանակ ունէին մինչեւ 1934 թիւ, կամ «տեղական քեալլագէօզ կոմունիստներն են որոնք թիւերի ետեւից ընկնելով՝ խեղաթիւրել են կուսակցութեան գիծը եւ բռնի ուժով կազմակերպել կոլլեկտիւներ»։

Ապա ո՞ւր մնացին իր կենտկոմի բերանով՝ սեւով սպիտակի վրայ արտայայտուած բանաձեւերը.— «Ոչ մի միջոցի առաջ չկենալ, գործադրել ամէն միջոցով եւ կազմակերպել համայնական տնտեսութիւններ»։ Արդեօք այս եւս Ստալինի նահանջը չէր։ Բայց ով կարող է ստակէտը։ Ճարտարարուեստական եւ դրամատիրական շրջանակներու հաւանութիւնը անշուշտ մեծ դեր պիտի խաղայ այդ իմաստով։

Ազատականները, չեն ուզեր, ինչպէս ըսինք վտանգաւոր որոշումի տակ մտնել ու ճիգ կը թափեն պահպանելու իրենց դասական քաղաքականութիւնը իբրեւ Ազատ Առեւտուրի կուսակիցներ։

Աշխատաւորականները տակաւին չեն արտասանած իրենց վերջին խօսքը. գօրաւոր է Ազատ Առեւտուրի տեսութիւնը պաշտպանողներու թիւը իրենց շարքերէն ներս։

Զափազանց լուրջ շարժում մը ստեղծեցին ուրեմն ծանօթ երկու լորտերը, շարժում մը որ բնական հետեւանքն էր տնտեսական կացութեան. դժուար թէ մաժուլով ու ճառերով կարելի ըլլայ որոշել ուղիղ ճամբան։ Տնտեսական նոր քաղաքականութեան հարցը պիտի փութացնէ խորհրդարանական ընտրութիւնները, անկասկած ուրիշ բազմաթիւ խնդիրներէ, որոնք արդէն իսկ վտանգաւոր դրութեան մէջ դրած են ներկայ դահլիճը։

Ժ. Մ.

Ստալինի բերանը սանձ դնել։ Այդ բոլորը ապացոյց է որ ապրիլեան կատաղութեան այդ խառնակիչը Ստալինն էր, որի պատճառով, ժողովրդի տնքոցը արեան ճապաղիքի մէջ խեղդուած՝ երկինք է բարձրանում։ Իսկ սուտ ասելը վնասանը, ապրելու միակ աղբիւրը։

Իւր այդ անօրինակ յատկութեամբ, Ստալինը կարողացաւ աւելի հրամայողական բարձունքներ գրաւել, եւ աւելի ստորին կոմունիստներին լարել մէկը միւսի դէմ, կուռեցնելով նրանց, ինքն էլ հեռու կանգնած Քաղ Նաղարի նման քահ-քահ անելով՝ ծիծաղում էր Ռուսաստանի միացած կոմունիստների վրայ։ Նրանք որոնք, Ստալինի պահանջները կատարել էին համայնական աշխատանքների ժամանակ, այդպիսիներին Ստալինը անուանելով «կուս. դժի խեղաթիւրողներ», «քեալլագէօզներ», «հաշտուղականներ» եւ որպէս աջ թեքման որոշակի արտայայտիչներ, նոր հրամանագրերով կուսակցութեանը կարգադրեց նրանց հեռացնել և պաշտօնից եւ կուս. շարքերից։ Ռուսաստանի միամիտ կոմունիստները, մանաւանդ հայերը, սկսեցին թուխթակաբար կրկնել Կրէմլի-Սարդի խօսքերը, եւ սկսեցին սրան նրան անուանել «քեալլագէօզներ», «կուս. դժի խեղաթիւրողներ», «հաշտուղականներ» եւ այլն։ Երկու ամսից աւելի «Խ. Հայաստան» թերթը անընդհատ գրում էր նոր «քեալլագէօզների» մասին, մինչդեռ կոմունիստներից շատերին երբ մենք համալսարանի ուսանողներս հարցնում էինք. «Ձէ՞ որ դուք մեղաւոր չէք, դուք միայն Մոսկուայի հրամանն էք կատարել, Ստալինի կոլլեկտիվացմանը նաւիրուած յօդուածներով ղեկավարուել էք, ինչո՞ւ են ձեզ հալածում». Նրանց բոլորի պատասխանը լինում էր. «Մենք չգիտենք ինչ ենք անում, մեր գլուխը մերը չէ, մենք ստիպուած ենք կրկնելու ուրիշի ասածները»։

Ահա այդպիսի յուսալքուած պատասխաններ էինք ստանում կոմունիստներից։ Հայ մեծամեծ կոմունիստները եւս այդ բոլորը զգում են իրենց կաշուի վրայ, բայց ստիպուած՝ այս անգամ նա Ստալինի նոր փիլիսոփայութեան թեւ ու թիկունք տալով, մրցան նրա երեխայական մտածումների հետ։

Հայ կոմունիստները բեմ բարձրանալիս դառնում են երեւանում առիւծներ եւ սկսում են Դաշնակցութեան հասցէին ցնորամիտ ու լկտի ճառեր արտասանել, մինչդեռ Ստալինը նրանց որպէս ձեռքի մի թաշկինակ խաղացնելով ծիծաղում է իրանց վրայ, այդ չեն նկատում։

Եթէ նրանք գէթ իրանց կօշիկների չափ ինքնուրոյն մտածողութիւն ունենային եւ այդքան կոյր չլինէին, իրենց արածներն հաշուի կ'առնէին ու Մոսկուայի կարգադրութեամբ արիւնաթաթախ չէին անի ամբողջ Լեռնահայաստանը։ Եթէ սեփական մտածողութիւն ունենային, ապա՝ չէին հարցնի «կուլակի լիկվիդացիան» որն է, իսկ նրանց տների վերադառնալը ի՞նչ նպատակ ունէր։ Եթէ Ստալինը յայտարարեց «կուլակի լիկվիդացիա», ապա ինչո՞ւ նրա կարգադրութեամբ նորից զանազան քաղաքներից յետ են ուղարկում գիւղացի աքսորականներին, եւ վերադարձնում նրանց գոյքի որոշ մասերն, այգիներն ու կանաչ ցանքսերը։

«Բոլշեւիզմը թաթախուած ցարիզմ է» իսկապէս որ։ Եւ զարմանալի թող չթուայ որ բոլշեւիզմը, որտեղ աշխատում է իր արնոտ արմատները տարածել, առաջին հերթին իրեն նպատակ է դնում այդ երկրում վերջ տալ ամէն տեսակի մարդկային ազատութիւններին, եւ սեւ ոչակցիայի մութ քողի տակ, վերահաստատել այս կամ այն հին ֆէոդալական հասարակակարգը։ Սա է բոլշեւիզմի միակ նպատակն աշխարհի երեսին։ Բոլշեւիզմը, դա անհիմն, տոտ ապականութիւն է, հիմնուած է չհկալի արիւնի կացինի ու սուրի վրայ, փոխական սրբութիւններու, բայց միշտ էլ այդ անշահադործելով։

Այսպէս, 12 երկար ու տարիներ է որ բոլշեւիզմը լով Ռուսաստանում, ռուս խաւարութեան արիւն քրտինքը ծծելով, աշխ իր բաշիբոզուկութիւնն ծել ալուր, դրամի օժանդ թեամբ, բայց միշտ էլ անյ

Համաշխարհային յեղ խութիւնից յոյսը կտրելով մունիստական իշխանութ կանգնել է, գլուխը կորց անկման ճանապարհի վրայ բաւ այսօրուայ չտեսնուած վը, ապրանքային ճգնաժամ գիւղացիութեան յեղափոխ տրամադրութիւնների հա նացումը, ներքին կուրը, բան կի լքուածութիւնը, կոմս տական կուսակցութեան ղ ժալուծումը, պատճառ են դա բոլշեւիկեան անարդ կարգ փլուզման։ Այդ է բազմահա ժողովուրդի ազատութեան կ քը։ Մեր թշնամին այդ ի տովանում է։

Մնում է որ, Խորհ. Մ թեան բոլոր ծայրերում ար յայտուած այս հակայ տրո դրութիւնը պայթի միակա միեւնոյն ատեն։

ՅԱԿՈԲ ԱՐԱՐԱՏՅԱՆ

ՔՐՏԱԿԱՆ ԱՊՏԱՍԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«ՀԱՅՈՒ ՄԱՏ ԿԱՅ» Կ'ԸՍԵՆ ԹՈՒԽԻՐ ԹԵՐԹԻՆ

Վագրթէն.— Արարատի դ քին շուրջ եղած քննութիւն կը հաստատեն թէ ան արդի տարիներէ ի վեր արտասա մէջ կատարուած քաղաքակ գաղտնի ձեռնարկներուն։ Ն ձեռնարկներուն հիմը կը կա Հալէպի «Հոյիւրուն» ընկերու նը, որ հիմնուած է 8ոքթ. Շ րիւ պէյի կողմէ եւ նպատակ նի քիւրտիստանի անկախու Այս ընկերութիւնը քանի մասնաճիւղեր ունէր նաեւ ւելեան նահանգներուն մէջ։

Մասնաւորաբար Մուշի քնուած յայտարարութիւնն որոնք հոն բերուած են Հալ մէջ տպուելով, երեւան կը բե Արարատի դէպերուն հանգամ քը։ Յայտարարութիւնը կը հ ւիրէ ժողովուրդը զինուիլ եւ ները բարձրանալ եւ կը հաւա թէ դուրսէն աջակցութիւն պ հասնի։ Միայն շատ մարդ չէ տասխանած այս հրաւէրին. հիւ մէկ կողմէ ժողովուրդ ողմտութեան, եւ մ'իւս կող կառավարութեան աջակցութ

Հիմա կը հասկցուի թէ է անցեալ աշնան, եւրոպա թերթերու հրատարակած լուրը, որուն համաձայն անգլ ցի լրտես Լօրէնս մեր հարա յին սահմանը եկած է, հաւան կան է որ Լօրէնսի գալը հրա մը վրայ եղած ըլլայ։

Կը կարծուի թէ Շէյխ Մ յիտի տգան, որ անգլիական հ մանատարութեան միջնորդ թեամբ պաղատի զինուորակ վալժարանը դրուհգալ, ուր էր իր հօրը օրինակին հետեւ կը ցոյցնեն թէ Հայերէ քա կացեալ խառն պետութիւն կազմել։

***«Ագշամ» եւ «Փօլիթ քա» բառ առ բառ արտագր են «Ազգ»ի այս գրածներ Եւ մինչդեռ առաջինը տեւէ վ նագիր չէ գրած Հայերու մասի երկրորդը ընդհակառակն Հայ րու յատկագրած է խոշոր խոր գիրներ. «ՀԱՑԵՐՆ ԱՆ «Ձեռք ձգուած փաստաթուղթ րը կը ցուցընեն թէ Հայերն

ՆՅՈՒԹԵՐ ՎԻՎԱՍՈՒԹՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ա. Ա. Ա. ԱՐՇԱԿՈՒՆԻ

Ամերիկահայ ասող ոսոխ ունի, որ ամենից ավելի կը նախանձի մեր ազգային միասնության վրա, որ մեզ ամենից ավելի կը զորացնէ։ Ուստի ամեն միջոցի կը դիմէ, որ մեր միասնութիւնը խանգարէ։ Ամենից ավելի կը ջանայ մեր մէջ կուսակցական ոգին զարգացնել, որ ամենից ավելի մեզ կը թուլացնէ։ Ամերիկահայ ասող ոսոխ ունի, որ ամենից ավելի կը նախանձի մեր ազգային միասնության վրա, որ մեզ ամենից ավելի կը զորացնէ։ Ուստի ամեն միջոցի կը դիմէ, որ մեր միասնութիւնը խանգարէ։ Ամենից ավելի կը ջանայ մեր մէջ կուսակցական ոգին զարգացնել, որ ամենից ավելի մեզ կը թուլացնէ։

Բոլշեւիկեան ներքին փոխառութիւն

Խորհրդային կառավարութիւնը հրատարակեց ներքին փոխառութեան վերաբերեալ հրովարտակ մը, «հնգամեայ ծրագրի պետական ներքին փոխառութիւն» անունով։

Այս փոխառութիւնը որ մէկ անգամուան համար պիտի ըլլայ, պիտի յատկացուի ընկերվարական շինարարութեան։ Նախապէս կատարուած փոխառութեանց տոմսերու փոխանակութիւնը դիւրացնելու համար, (ճարտարարուեստացման և ազգային տնտեսութեան փոխառութիւններ) կառավարութիւնը հրապարակ կը հանէ 500 միլիոն րուբլիի պարտաթուղթեր։Իսկ 1930 - 31ին, հրապարակ պիտի հանուին 850 միլիոն րուբլիի պարտաթուղթեր՝ 10 տարիէն վճարելի։

Հակաբաշխաս թռուցիկներու խնդիրը

Զուիցերիոյ Թէսսէն նահանգին ոստիկանութիւնը վերջացուց հարցաքննութիւնը իտալացի օդանաւորդ Պասանէզիի, որ կը մեղադրուէր թէ Միլանի վրայ ցրուած է ֆաշիստական կառավարութեան դէմ թռուցիկներ։

Պասանէզի կ'ուրանայ իրեն վերագրուած կարգ մը արարքներ։

Ոստիկանութիւնը իր տրամադրութեան տակ ունի միայն մէկ թռուցիկ եւ չի գիտեր թէ յարեւնմա՞ն է այն թռուցիկներուն, որոնք նետուեցան Միլանի վրայ։ Այդ թռուցիկը քաղաքական մեծ նշանակութիւն չունի։ Պարզապէս կը հրաւիրէ ժողովուրդը որ այլեւս չծխէ, այդ կերպով վնասելու համար իտալական ծխախոտի մենաշնորհին։

Թռուցիկներու բաղդատութիւնը միայն պիտի կրնայ երեւան բերել թէ միջազգային օրէնքի դէմ գանցառում մը գործա՞ծ է։

Եւրոպայի Միացեալ-Նահանգները

Եւրոպայի Միացեալ-Նահանգներու կազմութեան մասին, Ֆրանսայի արտաքին նախարար Պրիանի յուշագրին պատասխանեց Գերմանիա։ Գերմանիա եւս համամիտ է ձեռնարկին, որուն իրականացման կը բերէ իր գործակցութիւնը։ Կը կարծէ թէ «վերջնական նպատակը պէտք է ըլլայ, հաշտեցման ոգիով ձեռնարկել յանգուցն բարեխոհմանը այն պայմաններուն, որոնք անհանդուրժելի կը նկատուին եւ այս կերպով, յաջողցնել եւրոպայի ճշմարիտ խաղաղեցումը, որ միայն, արդարութեան եւ հաւասարութեան սկզբունքներու վրայ կրնայ հիմնուիլ»։ Գերմանիա իր պատասխանով, պահանջ կը դնէ նաեւ որ Թուրքիա եւ Ռուսիա եւս մասնակցին։

Պրիանի յուշագրին իրենց պատասխանները յանձնեցին նաեւ Շուէյտ, Նորվեկիա, Եսթոնիա, Չեխոսլովաքիա։ Իսկ Ճապոնի կառավարութիւնը պատասխանեց թէ որ եւ է ընդլայնումը ցոյց չի տար Եւրոպայի Դաշնակցային Միութեան ծրագրին, պայմանաւ որ, ան իբր հակառակորդ չկանգնի Եւրոպայէ դուրս ծնացած երկիրներուն դէմ։

Ֆինլանտիոյ խորհրդարանը լուծուած

Ֆինլանտայի Խորհրդարանը որ բացառիկ նիստի հրաւիրուած էր քուէարկելու համար հակահամայնավար օրէնք մը, լուծուեցաւ կառավարութեան կողմէ, ընկերվարականներու բռնած դիրքին հետեւանքով։ Ընկերվարականները չքուէարկեցին օրէնքը այն առարկութեամբ թէ՝ պէտք է սպասել նոր ընտրութիւններու ելքին, օրինականացնելու համար նման խիստ միջոց մը, որ համայնավարները կը վտարէ հանրային-քաղաքական գործունէութենէ։

Նոր ընտրութիւնները պիտի կատարուին հոկտեմբեր 1ին, որմէ յետոյ, նոյն ամսուն 20ին, խորհրդարանը պիտի վերաբացուի։

Հիւսիսային կը մերժէ Հունաց երթալ

Գերման հանրապետութեան նախագահը Հինտէնպուրկ մերժեց երթալ Հունաստան նահանգները, մասնակցելու համար ազատութեան հանդէսներուն։

Փրուսիական կառավարութեան ուղղուած նամակով մը, Հինտէնպուրկ կը բացատրէ թէ հանդէսներուն մասնակցութեան համար, իր կողմէ պայման դրած էր որ Փրուսիա վերցնէ «Պողպատէ Սաղաւարտ»ներուն դէմ դրած արգելքը։ Այդ արգելքը վերցնելու համար, Փրուսիա դրած էր պայմաններ, զորս Հինտէնպուրկ անընդունելի կը գտնէ եւ կը նկատէ թէ Նախագահի իր սահմանադրական իրաւունքը եւ իր անկողմնակալութիւնը թոյլ չեն տար մասնակցելու հանդէսներու, որոնցմէ վտարուած կը մնայ նախկին պատերազմիկներու կազմակերպութիւն մը։

Ֆրանսական մամուլը՝ յոռի մեկնութիւններ կուտայ Հինտէնպուրկի այս քայլին։

*** *Վերջին լուրի մը համաձայն, Հինտէնպուրկի եւ Փրուսիական կառավարութեան միջեւ ծագած վէճը կարգադրուելու վրայ է։*

«Պողպատէ Սաղաւարտ»ները յանձն կ'առնեն չկատարել դինուորական մարզանքներ, իսկ Հինտէնպուրկ չի հրաժարիր դէպի Հունաստ իր ճամբորդութենէն։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ՍՊԱՆԻՈՅ ՄԻՋ հանրապետական կուսակցութիւն մը կազմուեցաւ։ Կուսակցութեան գլուխը կը գտնուի նախկին միապետական մը Ալքալա Զամօրա, որուն հետ կը գործեն նաեւ քաղաքական կարեւոր անձնաւորութիւններ։

ՍԻԼԷՋԻՈՅ հանքային աղէտին զոհերէն շատերը դեռ կը մնան փլատակներուն տակ։ 44 դիակներ տակաւին կարելի չէ եղած դուրս հանել։ Փլատակները մաքրելու գործողութիւնները դանդաղ կ'ընթանան, ածխային թթուին պատճառով, որ վտանգի կ'ենթարկէ փրկարար խմբակներուն կեանքը։

ՎԵՍՈՒՎ դեռ չէ հանդարտած բոլորովին։ երկու օր տեւող Թանձր մառախուղէ մը վերջ, կարելի եղաւ հաստատել թէ վեսուվ դեռ կը շարունակէ բորբոքիլ, բայց հանդարտօրէն։

«ՅԱՌԱՋ» կը ծախուի ՀՐԱՆՏ - ԱՄՈՒԼ

Գրատան մէջ, 51 Rue Monsieur le Prince

Հ. Յ. Դ. ՓԱՐԻԶԻ ԿՈՄԻՏԷՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԿԱՆ ժողովի կը հրաւիրէ բոլոր խումբերու ներկայացուցիչները վաղը ուրբաթ իրիկուն ժամը 8.30ին Chope Parisienneի վերնայարկը, 64 Rue des Ecoles.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԱՐ ՅԱԿՈԲԵԱՆԻ

ՓՆՏՌԵՑԷՔ

ՀԱՅԿ ԱՃԷՄԵԱՆԻ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

«ՆՈՒԱԳՈՂ ՎՇՏԻՑ ՀԱՅՐԵՆՆԵԱՑ ՀԱՅՈՑ»

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ, ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

(Հայր Սիմոն Երեմեան - Ատրուշանի Յառաջաբանով)

Բազմաթիւ լուսատիպ պատկերներով եւ գունաւոր շապիկով։ Ընտիպ էջեր, յուշեր, նամակներ, դէմքեր եւ դէպքեր եւայլն։ Մեծածաւալ հատոր, էջ՝ 858։

Ատրպատականի Հայոց թեմական տպարան, Թաւրիզ։ Գինն է՝ Պարսկաստան՝ 20 դրան, Ֆրանսան՝ 50 ֆրանք, Ագիան եւ գաղութներ՝ 9 շիլին, Ամերիկա՝ 2 տոլար 50 սէնթ։ Ձամբու ծախքը ստացողին հաշուոյն։ Ստանալու համար դիմել՝ Haik Adjémian, Tauris, (Perse).

"ԴՐՕՇԱԿ,, Ի

Թիւ 6-7 (Յունիս-Յուլիս)։

Նահանջը եւ իր պատճառները (խմբագրական)։ *Հերթական խնդիրները* (Ա. Ջամալեան)։ *Ապրիլեան Եղեռնը քննական ակնոցով* (Կ. Սասունի)։ *Խորհրդային Հայաստանի տնտեսութիւնը* (Ա. Աբծրունի)։ *Կուկունեանի արշաւանքին մասին, Ինտերնասիօնալ, Մեր գոհերը, Թղթակցութիւններ, Գին 2,50 ֆրանք։*

Հ. Ց. Դ.

ՓԱՐԻԶ

Ինքնավիր Ազբիւր Սերոբ խումբի ժողովը՝ այս Շաբաթ իրիկուն ժամը 8ին, 184 Ave. d'Italie, Métro: Porte d'Italie. Բացակաները պատասխանատուութեան պիտի ենթարկուին։

ԳԱՒԱՌ

Լիոնի Պատ. Միութեան վիճաբանական ժողովը՝ այսօր Հինգշաբթի իրիկուն ժամը 8.30ին, գրադարանի սրահը։ Կը հրաւիրուին ընկերներնու ճամակիցները։

Տէօինի կոմիտէի ընկերական ընդհանուր ժողովը, այս կիրակի ժամը 2ին, Սօսիէթէ Լիոնեզի սրահը։ կարեւոր օրակարգ։ Պարտաւորիչ ներկայութիւն։

ՄԱՐՍԷՅԼԻ Քրիստափոր ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերներն ու ընկերուհիները վաղը ուրբաթ իրիկուն ժամը 8.30ին սովորական հաւաքատեղին։ Պարտաւորիչ ներկայութիւն։ Ներկայանալ անդամատետրով։

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— *Կը փնտռուի Օրտուցի Ա-րաքսի Ջաքարեան (ծնեալ Քիւրտեան), ամուսնոյն անունը Յովհաննէս։ Երեք ամիս առաջ Պոլսէն մեկնած են Ֆրանսա, իմացնել ֆիկ. Ջուարթ Անգեանի, Quartier St. Joseph, Le Bocca, Cannes, A. M.*

— *Կը փնտռուի Լինկիւրի Նահանգին Մահնօս գիւղէն Յակոբ Զօպանեան 27—28 տարեկան, հօր անուն՝ Պօղոս, մօր՝ անուն Մարիամ։ 1920ին կը գտնուէր իր մեծ մօրը քով Մերսինի։ Այդ թուականին մեկնած է Դամասկոսէն Պոլիս երթալու համար։ Կիլիկիոյ ճամբուն վրայ տեսնուած է հայրենակիցի մը կողմէ։ Իր մասին ստոյգ տեղեկութիւն տուողին 1000 ֆրանք նուէր։ Իմացնել իր եղբօրը Դրիգոր Զօպանեանի 31 Rue de Fossé, Issy-les-Moulineaux (Seine) France կամ թերթիս վարչութեան։*

Կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել։

ՀՐԱՊԱՐԱԿ ԵԼԱԻ

ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆԻ

Նոր գիրքը

ԲԱՆԱՍՏԵՂԾ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ (իր գրական գործունէութեան քառասնամեայ յոբելեանի առթիւ)։

Դիմել՝ L. Kévonian, 235 Fbg. St Martin։ Գինն 5 ֆրանք, փոստի ծախք չկայ

ԲԺՇ. եւ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ

10 Rue Beaugrenelle, Paris (15)

Մէթրօ՝ Beaugrenelle

Միզանցքի, փրոսթաթի, մորթի, արիւնի, կանանց ճիւանդութիւններ եւ Ֆրանկախտ։ Ամէն օր ժ. 10—12 եւ 3 9։ կիր. եւ տօն օրեր 10 12։

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ

96 r. Rivoli, մէթ. Շաթլէ։ Արմատ. եւ նոր մեթոտով դարմանում արանց եւ կանանց մորթի, արիւնի եւ վէներ. հիւանդութեանց (Ֆրանկախտ, Ջերմամիզ.) եւ վարիսի։ Մասն. լապօռաթուառ։ Խզճամիտ եւ արագ խորհրդակցութ. ամէն օր 9—12, 2—8 Կիրակի 9—12։

MONDE

Միջազգային մեծ շաբաթաթերթ՝ գրական, գեղարուեստական, գիտական եւ ընկերային տեղեկութեանց

Կը հրատարակուի ամէն ուրբաթ։ Գին 1.50 ֆրանք, տարեկան բաժնեգին 50 ֆր., վեցամսեայ՝ 25 ֆրանք (Ծրանսայի համար)։

Հասցէ.— Administration de Monde», 50 Rue Etienne Marcel, Paris (2e).

EMPIRE Միգնիք-Շօլ՝ 37 Av. Wagram

IMPRIMERIE - MASSIS - ÉDITIONS

208bis, Rue Lafayette Paris (10)

L-e Gérant H. STEPHAN

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

ՋԱՁԱՐԱՆ ՖԼՕՐԻԱ

61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)

Մէթրօ Օտէոն եւ Սէն Միշէլ Հեռաձայն Littré 38—43

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ

Գ. ԾԷՔԷՐԵԱՆ

փաստաբան Պոլսոյ Պառոյէն, վաւերացեալ հաշուակալ, անդամ Société des Comptablesի (E. C. I.),

150 Rue du Fbg. St. Denis, Paris. Téléphone: Trudaine 76-42

ԿԸ ՍՏԱՆՁՆԵՄ այցելու տոմարակալութիւն փոքր ամսավճարով։

Այս գլխակորոյս նահանջը կուսակցութեան հիմնական գծից, կամ ստալինեան նախկին դիրքերից՝ անխուսափելի հարկադրանքի նշաններ էին կրում իրենց վրա։ Ամենքի համար պարզ էր, որ ինչ որ բաներ էին տեղի ունենում Թ. Հ. Միութեան մէջ, որոնք խուճապի էին մատնել բոլշեւիկներին։ Բայց թէ ի՛նչ բաներ էին սրանք՝ հաստատապէս ոչ ոք չգիտէր։

Շուտով, սակայն, կոմունիստական կուսակցութեան պաշտօնական հաղորդագրութիւնների եւ դեկավար անձանց զեկուցումների մէջ երեւան եկան կարմիր զօրքի դրամադրութիւնների եւ գիւղացիական խռովութիւնների մասին, խուլ ակնարկներ, որոնք կարող էին քանալի դառնալ նահանջի առեղծուածը լուծելու համար։

Ըստ այդ հաղորդագրութիւնների, ներկայ դէպքում մենք գործ ունենք ոչ թէ բոլշեւիկների երեթական յիմարութիւններից մէկի հետ — յիմարութիւններ, որոնցով լիքն է նրանց կենտրվարական փորձերի տասներկուամեայ պատմութիւնը — այլ մի իսկական *ոճիրի* հետ, որին զոհ է գնացել մեր երկրի բովանդակ ազգաբնակութեան 80 առ հարիւրը կազմող գիւղացիութիւնը։

Այս զարհուրելի բարբարոսութիւնը, որ ֆիւրքահայկական տարագրութեան դժոխք օրերն էր յիշեցնում, լրացրեց դառնութեան բաժակի վերջին կաթիլը եւ ժողովուրդը, ոչ մի ուրիշ միջոց չգտնելով խօսք հասկացնելու իր մեծ ու պստիկ դահիճներին՝ զէնքի դիմեց,

ՕՐԸ ՕՐԻՆ

Քիւրտերուրմ բախտուվճռերը

ԼՈՆՏՈՆ, 17 յուլիս.— «Թայմզ»ի Պոլսոյ թղթակիցը կը հեռագրէ իր թերթին.—

«Արարատի վրայ, կատաղի կռիւներկը շարունակուին։ Բախտուճեր տեղի կ՛ունենան նաեւ Թուրքեւպարսիկ սահմանագլուխին վրայ։ Դէպի խորհրդային սահմանագլուխ փախող մէկ քանի Քիւրտեր, ոուս սահմանապահ զօրքի կրակին ենթարկուեցան։

«Վերջին 15 օրերու ընթացքին, երկու կողմերու կրած կորուստները կը Թուի թէ մեծ են։ «Միլլիյէթ» թերթին թղթակիցը կը հաւաստէ թէ Քիւրտերը առնուազն 3000 սպանեալներ ունեցան։

«Կ՛ըսուի թէ մօտ 200 գիւղեր ամբողջովին հրդեհի տրուեցան եւ կ՛երեւի, ստոյգ է թէ գոպումի շատ խիստ միջոցներ նախատեսուած են»։

Ասջի օր, հաղորդեր էինք Թրքական «Անատոլու» հեռագրական գործակալութեան 11 յուլիսի լուրը, Թէ քրտական շարժումը բոլորովին զսպուած է եւ Թէ ըմբոստները ընաջնջուած են։ Բացայայտ սուտով ու խեղաթիւրումով հինուած Թրքական լուրերը, իրաւունք կուտան վերապահուելու համար ընդունելու հաղորդուած տեղեկութիւնները։ Ցեղափոխական շարժումին կարեւորութիւնը նուազեցնելու համար, նախապէս, ըմբոստներու Թիւը ցոյց կը տրուէր 600 միայն.փոքր յաջողութենէ մը վերջ,այդ Թիւը բարձրացուցին 1500ի, իսկ այսօր արդէն, միայն սպանեալ ցոյց կուտան 3000 ? Եթէ առաջին Թիւն է ճիշդը, պէտք պիտի ըլլայ ընդունիլ Թէ՝ 600էն աւելիին մէջ կը մտնեն այն անմեղները որոնք կ՛ենթարկուին Թուրքին սովորական վայրագութեան, անգէն գիւղացիներ, կիներ, ծերեր, ու մանուկներ։ Իսկ 200 գիւղերու հրկիզումը, եթէ դեռ ստոյգ ալ չըլլայ, կը նշանակէ պարզապէս Թէ մոտդրուած է իրականացնել։ Թուրքը ուրեմն, ազատօրէն, Քիւրտերուն վրայ կը ջանայ կիրարկել այն միջոցները, որոնց փորձառութիւնը ձեռք ձգեց Հայերու վրայ. մանաւանդ որ եղբայրական Ռուսիան կունակէն կը զարնէ ըմբոստները, յանուն ազգերու ազատութեան եւ եղբայրութեան...։

Աղեքսանդրիոյ դէպքերէն յետոյ

ԳԱՀԻՐԷ, 17 Յուլիս.— Քիչ մը հանդարտութիւն կը տիրէ. Թէեւ, կարելի չէ հաւաստել Թէ տեւական է։ Նոյնիսկ նոր շարժումներու կարելի է սպասել եւ կարգ մը շրջանակներ նոր անկարգութիւններ կը նախատեսեն Թէ Աղեքսանդրիոյ եւ Թէ Գահիրէի մէջ, այս երկուշաբթի օր, երբ վերջ կը գտնէ Խորհրդարանի յետաձգման Թուականը։

∴ Ընդհ. դատախազը արգիլած ըլլալով պետական հիւանդանոցէն դուրս հանել զոհերու դիակները, քիչ մնաց որ նոր խռովութիւն մը եւս ծագէր։ Դիազննութիւնները ու պաշտօնական ձեւակերպութիւնները աւարտելէ յետոյ միայն, կառավարութիւնը զոհերու դիակները յանձնեց իրենց ընտանիքներուն, զանոնք դնելէ յետոյ դագաղներու մէջ։ Զոհերու Թաղումը կատարուեցաւ երէկ։ Աւելի քան 10,000 հոգի կը մասնակցէին յուղարկաւորութեան։ Արարողութիւնը կատարուեցաւ հանդարտութեամբ, որէ յետոյ, ամբոխը ցրուեցաւ, առանց ցոյց կատարելու։

∴ Վերջին լուրի մը համաձայն, նոր խռովութիւններ ծագած են Աղեքսանդրիոյ մէջ։ Մանրամասնութիւնները կը պակսին։

∴ Անգլիական կառավարութեան կոդմէ Եգիպտոսի վրայ ղրկուած մարտանաւերը կը յածին Եգէականի բացերը, մէկ քանի ժամ հեռու եգիպտական ծովեզրէն։ Երկու մեծ զրահաւորներ են 27500 եւ 25700 թոնօ տարողութեամբ. իւրաքանչիւրը կը փոխադրէ 1000ական ծովային զինուոր։

Երէկ, լուր տարածուեցաւ Թէ՝ վերջին դէպքերուն հետեւանքով՝ Սրտքը փաշայի դահլիճը հրաժարած է։ Լուրը չէ հաստատուած։

Անգլիա եւ Եգիպտոսի դէպքերը

Լոնտոնի աշխատաւորական մամուլը, աւելի Ֆուատ Թագաւորն է որ պատասխանատու կը բռնէ վերջին դէպքերուն, քան Թէ Նահաս փաշան։ «Ֆուատ Թագաւորը, կը գրէ «Տէյլի Հէրալտ», Եգիպտոսի ամէնէն ազիտաբեր մարդերէն մէկն եղաւ։ Անդադար դաւից Խորհրդարանին եւ խորհրդարանական կառավարութեան դէմ եւ ամենամեծ չափով պատասխանատու է վերջին բանակցութեանց ձախողման մէջ։ Կ՛ազդարարենք իրեն Թէ պէտք չէ վստահի Անգլիոյ, զինքը փրկելու համար իր սխալներուն հետեւանքներէն»։

Ազատական Թերթերը կը հաստատեն Թէ Ֆուատ Թագաւոր չէ սիրուած Եգիպտոսի մէջ եւ Թէ ընդհակառակն, վաֆտ իր հետ ունի ընտրողներու հարիւրին 90ը։

Իսկ պահպանողական կարեւոր Թերթ մը կը գրէ.— Պէտք է կառավարել եւ կամ առնել քալել։ Կառավարել կը նշանակէ զարնել եւ զարնել ուժգին, երբ պէտք ըլլայ։ Պէտք է ջարդել եւ կամ ետ քաշուիլ։ Այս երկու եզրերուն միջեւ, վարչապետը կը փորձէ երթեւեկել։ Այսօր, անոր տեղ ուրիշ որեւէ վարչապետ նոյնը պիտի ընէր։ Պ. Մաքտոնալտ Աղեքսանդիա կը ղրկէ երկու մարտանաւեր։ Պիտի ղրկէ՞ նաեւ զինուորական արշաւախումբ մը»։

Պահպանողական Թերթը հաւակերպած կը Թուի ըլլալ Եգիպտոսէ վերջնական հրաժարման գաղափարին։

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ԻՆՉՊԷՍ ԿԸ ԽԵՂԱԹԻՒՐԵՆ ԵՒ ԿԸ ԳՐԳՌԵՆ

Թուրք Թերթերը լեցուն են քրտական ապստամբութեան վաղին զանազան ու զարմանազան լուրերով։ Քիւրտերը վարկաբեկելու համար Թուրք ժողովուրդի աչքին, կը ճիւարեն պատմութիւններ, զորս կարելի է կարդալ իբր գուարճալիք։ Ահա նմոյշ մը.—

Թէ՛ ձերբակալուած աւազակներու խոստովանութիւններէն եւ Թէ յարձակման պարագային, ժողովուրդին իրենց ըսած ափեղցփեղ խօսքերէն կը հասկցուի որ այդ Քիւրտերը, որոնք վայրենի ըսուելու չափ տգէտ են, չեն պատերազմիր կանոնաւոր քարոզութեան մը ենթարկուած են։ Այսպէս, անցեալները երբ կը յարձակին «քաժիոն»ի մը վրայ եւ կը սպաննեն շարժավարի օգնական Ահմէտը, նոյնութեամբ սա ծիծաղելի խօսքերը ըրած են շարժավարին.

«Դուք ձեր պեխերը կտրած էք, գլխարկ կը կրէք, ձեր կիները փողոցը հանած էք. մօտ ատենէն կը տեսնէք»։

Այս վայրենիները, որոնք զանազան դաւանութիւններու կը պատկանին, իրենց կռնակը կը կրեն ոչխարի մորթ մը, ունին ճերմակ վարտիք եւ ձեռքերնին ալ մէկ մէկ մավզէր։

Ծոյց տալու համար իրենց տգիտութեան աստիճանը, օրինակ մըն ալ յիշեմ։ Անցեալները ճամբուն վրայ կը բռնեն բժիշկ մը եւ մահուան սպառնալիքով կ՛առնեն անոր դրամները, իրենց մէջ բաժնելու հաւար։ Ցիսուն ոսկինոց մը ճիշտ ութը կտոր կ՛ընեն եւ մէկ մէկ կտոր կ՛առնեն...։

Դարձեալ, օր մը ճամբուն վրայ ուրիշ մը բռնելով կը հարցընեն. «Ո՞վ ես»։ — Տղոց դաս տուող ճօճա (ուսուցիչ) եմ, կը պատասխանէ։

— Եթէ հօճա ըլլայիր, փաթթոց կ՛ունենայիր.

Եւ իբր պատիժ իր «ստախօսութեան», գինքը մօրէ մերկ կ՛ընեն եւ լաւ մը ծեծելէ յետոյ կը ճամբեն։

Այդ կողմերէն եկող շարժավարները կը պատմեն Թէ, երբ Քիւրտերը ճամբաներու վրայ անցորդներ բռնեն, առաջին դրծերնին կ՛ըլլայ կտրել անոնց գլխարկներուն առջեւի մասը եւ եզերքները, ու քիւլահի վերածել։

Այդ մարդիկը, որ բուռ մը ձաւար եւ մի քանի խրտուիլով կ՛ուտեն, ճիշտ կը նմանին Ամերիկայի հին վայրենիներուն, որոնք սէնէժալի մէջ ցոյց կը տրուին։

ԱՄԵՐԻԿԵԱՆ դրամատուն մը Փարիզի մասնաճիւղին տնօրէնը որ մեծ յարաբերութիւններ ունէր բարձր դասու շրջանակներուն հետ, անհետացած է մէկ քանի օրէ ի վեր։

Հաշիւներու արագ քննութիւն մը երեւան հանեց Թէ դրամատուն տնօրէնը զանազան զեղծումներով՝ կողոպտած է իր յաճախորդներէն՝ 25 միլիոն ֆրանքի գումար մը։

ԱՄԵՐԻԿԵԱՆ Խորհրդարանի Ելմտական Յանձնախումբը կը քննադատէ նախագահ Հուվըրը Թէ շատ կը ծախսէ։ 1929.30ի նստաշրջանին, ազգային պէտքերու հաւար, ան քուարկել տուած է 125 միլիառ ֆրանք, այսինքն, նախորդ տարուան վրայ՝ 12,5 միլիոն աւելի...։

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

Հանդուցեալ Պօղոս Նուպար փաշայի անունը հայ նորագոյն պատմութեան մէջ, կապուած պիտի մնայ մեր դատի դիւանագիտական վերածնունդին հետ։ 1880ին սկսած յեղափոխական գործօնքը յանգեցաւ 1913-14ի միջազգային համաձայնութեանց, որոնց հետեւանքով Հօֆ եւ Վէսթէնէնք պաշտօնի կոչուեցան իբր Հայաստանի մարզպաններ։

Ապահովաբար հայութեան վիճակը այսչափ դառն չպիտի ըլլար այսօր, եթէ թուրքիոյ մասնակցութիւնը մեծ պատերազմին՝ իր սաղմին մէջ իսկ չխեղդէր հայկական նահանգներու համար պատրաստուած այդ բարենորոգմանց գործադրութիւնը։

Պօղոս Նուպար փաշա այդ առթիւ կարեւորագոյն դերը խաղաց եւրոպական դաշինքներու հետ տեղի ունեցած երկարատեւ բանակցութեանց միջոցին՝ իբր պաշտօնական ներկայացուցիչ ամբողջ հայ ազգին՝ լիազօրուած անոր գերագոյն հոգեւոր պետին Էջմիածնայ կաթողիկոսին կողմէ եւ արժանացաւ ազգի անկեղծ երախտագիտութեան։ Այնուհետեւ, ամբողջ պատերազմի ընթացքին, 1914էն 1919, ան շարունակեց իր ընդհատուած գործը, ամբողջովին նուիրուելով մեր դատի պաշտպանութեան եւ անոր ի սպաս դնելով իր հարստութիւնն ու իր անուան անվիճելի հմայքը։

Յառաջիկայ անաչառ պատմութեան կը մնայ գնահատել կամ քննադատել փաշայի դիւանագիտական գործունէութիւնը. յամենայն դէպս, 1920էն ի վեր անոր ըրած առատաձեռն եւ գիտակցօրէն կիրարկուած բարեգործութիւնները ազգային կրթական եւ այլ ամէն մարզերու մէջ եւ մանաւանդ Հայկ. Բարեգործական Ընդհ. Միութեան հաստատումը իբր անջնջելի կոթող իր ազգասիրական անխառն զգացումներուն, զայն կը դասեն ազգին ընտրելագոյն զաւակներու կարգին, որոնց անունները երախտագիտութեամբ պիտի յիշուին յաջորդ սերունդներուն կողմէ։

Իբր ռումանահայութեան պատուիրակ՝ 1919-1920 թուականներուն Փարիզի մէջ գումարուած արեւմտահայ հատգումարին, մօտէն առիթ ունեցայ ճանչնալու Պօղոս Նուպար փաշան եւ գնահատելու իր ելեւմտասարդական կորովը՝ հակառակ անոր հիւանդագին կազմութեան, իր բարձր զարգացումը, դատելու եւ խօսելու իր արագ եւ վայրկ ընդունակութիւնները եւ մանաւանդ մինչեւ իսկ իր զաղափարական հակառակորդներու հանդէպ ունեցած իր ուղղամիտ վերաբերումը։ Ան գիտէր իր բնածին արեւելեան բնապետական եւ անգիջող բնութիւնը հիանալի կերպով հաշտեցնել արեւմտեան խոհուն եւ կենցաղագէտ վարուելակերպին հետ։ Բառին բովանդակ իմաստովը, անզլիացի ճկնելիէնի մը մարմնացումն էր Պօղոս Նուպար փաշան։

1918ին, հայկական հանրապետութեան հռչակմամբ, իսկապէս պէտք էր վերջ դրուէր յաղնուն կաթողիկոսի վարուած այդ բանակցութեանց եւ փաշան պէտք էր լիազօրուէր նորահռչակ հանրապետութենէն. այսպէս կը պահանջէր պետականութեան իսկական ըմբռնումը եւ անոր դիւմումները կը ստանային այդպիսով աւելի ամուր եւ հաստատուն պատուանդան, բայց...

Պէտք է խոստովանիմ թէ ինչպէս ինծի, նոյնպէս եւ շատերուն համար բաւական ժամանակի եւ փորձառութեան պէտք եղաւ այդ պետական գաղափարին հմայքը ըմբռնելու համար։ Մէկ կողմը կը տեսնէինք փաշան, իր կորովի անհատականութեամբը, իր անուան անվիճելի ազդեցութեամբն ու բարձր շրջանակներու հետ ունեցած սերտ յարաբերութիւններով։ Էֆէնտին իր դիւանագիտական անցեալովն ու փորձառութեան համբաւովը, խաղերն ու պէյերը իրենց տիտղոսներով ու անբաւ հարստութիւններով, իսկ միւս կողմը, հինգ տասը հատ աղքատ ու անօթի վարժապետներ, եւ դիւցազի փաստաբաններ, որոնց շատերու անուններն իսկ անծանօթ էին մեզի... Պէտք էր ընդունէինք որ այս փորձառու դիւանագէտներն ու փաբլամէնթական պէյերը լիազօրուէին այս վերլիններէն եւ գործէին անոնց հրահանգներով։ Պետական փարատօքս մը...

Թրքահայութեան չափազանց ժեծամասնութիւնն, որուն համար աւելի խորթ էին Զանգեզուրն ու Դարալագեազը քան Զուլուլանդն ու Մատապասքարը, իր յոյսերն ու յոյզերը կապած էր փաշայի անձին հետ եւ մանաւանդ, Համակաւար կուսակցութեան ղեկավարները հայ դատին համար ադիտաբեր կը նկատէին Թրքահայ դատի միացումը՝ Կովկասահայաստանի վանդնուկ իրականութեան հետ։

Դիւանագէտ չըլլալով, լաւ չէի կրնար ըմբռնել այս նրբութիւնները. ինծի համար կար դարերէ հետէ թշնամիներէ բռնագրաւուած պատմական Հայաստանը, որու որ անկիւնէն ալ որ սկսէր ազատագրական շարժումը եւ յաջողէր, պէտք էր իրեն միացնէր ամբողջ հայութիւնը. ձերբազատուած մասի դրօշակը պէտք էր խանդավառէր ամբողջ ազգը եւ ան ցոյց տար թէ կը մերժէր թշնամիներու հաստատած բռնի սահմանագծումները իր պատմական միակ եւ անբաժանելի հայրենիքին մէջ։

Երբ 1919ի սկիզբներուն, Հայկ. Հանրապետութեան պատուիրակութիւնն հասաւ Փարիզ, երեւի ընդունեց այդ երկուութեան անհրաժեշտութիւնը կամ նպատակայարմար տեսաւ երկպառակութիւն չյարուցանել եւ Նուպար փաշայի հետ ստորագրեց Մեծ Չորսերուն մատուցուած յիշատակագիրն, ի մասին Հայաստանի պահանջներուն։

Կը սիրեմ հաւատալ թէ փաշան ալ անկեղծօրէն հաւատացած էր երկու դատերու միացման վտանգներուն, որովհետեւ այլապէս, չպիտի բողոքէր Հ. Հ. կառավարութեան մայիսեան յայտարարութեան դէմ, որով ան ինքզինք Միացեալ Հայաստանի կառավարութիւն կը կոչէր։ «C'est une annexion...» բացագանչեց փաշան, երբ իմացաւ այդ «ակտ»ի բովանդակութիւնը։

Երբ, կ'ըսէին ռամկավար դիւանագէտները, վերակազմուած Ռուսաստանի բանակները նորէն կովկաս արշաւեն, կանդ կ'առնեն Թրքական նախկին սահմաններուն վրայ... մինչդեռ եթէ Թրքահայ ժողովուրդը կամովին ինքզինք միացեալ հոչակէ Ռուսահայաստանին, Ռուսիա իրաւունք կ'ունենայ Թրքահայաստանն ալ գրաւելու, իբր իր երկրի անբաժան մասը։

Հանրապետական եւ ազգային պատուիրակութեանց այս անջատ գոյութիւնը շարունակուեցաւ բաւական ժամանակ եւ Հանրապետութեան ներկայացուցիչները առանց քուէի իրաւունքի, յաճախ ներկայ կ'ըլլային մեր համագումարի նիստերուն։

*Մինչ այն՝ հետզհետէ մարմին կ'առնէր Հայաստանի Հանրապետութիւնը. պետութեանց դիւանագիտական ներկայացուցիչները պաշտօնապէս ներկայ կ'ըլլային խորհրդարանի նիստերուն, այցելութիւններ կը փոխանակէին եւ այլն, եւ Ազգային Պատուիրակութիւնը կը զգար թէ կը թուլնայ իր ոտքի տակի պատուանդանը։ Ռամկավար խմբակ մը հիշատակագիր մը տուաւ Ազգերու Դաշնակցութեան թէ «սովորաբար (communément) ձեր Հայաստան կոչուած անվիճելի ազդեցութեամբն ու բարձր շրջանակներու հետ ունեցած սերտ յարաբերութիւններով։ Էֆէնտին իր դիւանագիտական անցեալովն ու փորձառութեան համբաւովը, խաղերն ու պէյերը իրենց տիտղոսներով ու անբաւ հարստութիւններով, իսկ միւս կողմը, հինգ տասը հատ աղքատ ու անօթի վարժապետներ, եւ դիւցազի փաստաբաններ, որոնց շատերու անուններն իսկ անծանօթ էին մեզի... Պէտք էր ընդունէինք որ այս փորձառու դիւանագէտներն ու փար

ՀԱՅԱՍՏԱՆ

ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐՈՒՆ ՀՈԳԵՐԸ

ՀԱՅ ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐԸ

«Թորի. Հայաստան» խմբագրականի մը մէջ կը յայտնէ հետեւեալ գանգատը (17 յունիս).

— «... Վարանոս, ուղղակի կրաւորական վերաբերմունք մը ցոյց տուաւ Անդրկովկասի Երկրային կոմիտէն՝ Ադրբէջանի եւ Հայաստանի կազմակերպութիւններէ ղեկավարութեան փոփոխութեան ընթացքին: Ցայտնի է համամիութենական կոմունիստական (բոլշեւիկ) կուսակցութեան կեդր. կոմիտէն — Համ. կ (բ) կենդ.— դիտողութիւնը Անդրկովկասի Երկրային կոմիտէին կովկասի ղեկավարութեան մասին, որ տեսնուեցաւ Ադրբէջանի մէջ: Երկրային կոմիտէն ժամանակին եւ վճռական կերպով մը չուղղեց Ադրբէջանի հին ղեկավարութեան սխալները, եւ երբ Հայաստանի բոլշեւիկները գրոհ կը կատարէին հին ղեկավարութեան դէմ, անիկա իր գործնական պաշտպանութեան տակ չառաւ զանոնք:

Վերջապէս Անդրկովկասի Երկրային կոմիտէն (մինչեւ ղեկավարութեան վերջին փոփոխութիւնը) ետ կը մնար շարք մը կարեւոր խնդիրներու արագ լուծման մէջ»:

*** կը թուի, Հայաստանի կոմունիստ պատգամաւորները, Մուշեղ Զալեան եւ Բաննախեան, Անդրկովկասեան կոմունիստ կուսակցութեան Համագումարին մէջ,

---

Գրանա կամ Ամերիկա տնտեսապէս աւելի տանելի պայմաններ ստեղծած են, հակառակ որ պաշտեն Ցանդէն... կամ Ց'Անուշիօն:

Թէեւ զարմանալի թողչութիւն, երբ ըսեմ որ ժողովուրդները աւելի կը տարուին նիւթին տիրապետութենէն, որ կ'իշխէ երկրին իմացական արտադրութիւններու մէջ: «Խղճքը հետզհետէ կը միջազգայնանայ» կ'ըսէ Ռաժօ եւ զգացումները կ'ապգայնանան: Եւ ինչո՞ւ չըսենք որ նոյնիսկ Հայ ամբոխին համար, ոչ մէկ գրական հանճարեղ արտադրութիւն եւ դէզերով թերթեր չեն ազդեր այնքան, որքան գործարանի մը ծխնելոյզը երեւանի կուրծքին վրայ, կամ հսկայ շէնք մը ցցուած հայկական որեւէ փողոցի անկիւն:

Կ'արժէ որ Հայ ընկերաբաններ լուրջ ուսումնասիրութեան նիւթ դարձնեն այս երեւոյթը եւ պրպտեն անոր պատճառները:

ՀՐԱՉ ՍԱՐԳԻՍԵԱՆ

«Թերահաւատութիւն յայտնած են կուսակցութեան ղեկավարութեան մասին»: Ա. Խանջեան քննադատած եւ դատապարտած է զանոնք: Ի վերջոյ երկու ընդհմադիրները ճանչցած են իրենց սխալը եւ խոսք տուած են հաշտ երթալ:

ՆԵՐՔԻՆ ՎԷՃԵՐ

Անդրկովկասեան համագումարին մէջ էլիավա, ներկայացնելէյետոյ ճահճատենդին վնասները, — 2 միլիոն հոգի ճահճատենդէ վարակուած են Անդրկովկասի մէջ,— խօսեցաւ կուսակցական պատասխանատու մարմիններուն մասին.

— Անդրկովկասեան հանրապետութիւններու երկրային կոմիտէները կ'որոշեն հանդէս գալ համերաշխ, մեծ խնամքով ծածկելով ներքին տարակարծութիւնները: Մասնաւորաբար Հայաստանի մէջ, 1928ին երկրային կոմիտէն կը ծածկէր ներքին տարակարծութիւնները, մինչդեռ իրենք իրենց մէջ կատաղի պայքար են մղեր:

ԳԻՒՂԷՆ ԿԸ ՓԱԽԻՆ

Խանջեան կը գանգատի, որ գիւղերուն մէջ վերջացած չեն «քեալլագէօզութիւնները»: Եւ երբ կուսակցական ընկերներ գիւղ կը ղրկուին, անոնք գաւառի պէս կը փախին գիւղերէն: Կուսակցականութեան գագաթը շատ թուլցած է:

ԼԵԶՈՒԻ ՀԱՐՑԸ

Էլիավա խօսելով Անդրկովկասի ժողովուրդներուն լեզուին մասին, կը ցաւի որ ոչ մէկ ժողովուրդ կը փափաքի սորվիլ դրացի ժողովուրդին լեզուն:

— «Ժամանակ մը նախագիծ մը կար ստեղծելու անդրկովկասեան այբուբէն: Բաղդատելու կը մտածէր ստեղծել տեսակ մը անդրկովկասեան էսպէրանդօ: Ի հարկէ, անդրկովկասեան էսպէրանդոյով տարուած չենք, բայց կ'ուզենք որ ստեղծուի միջոց մը, որպէսզի իրար հասկնանք: Վրացիները, Հայերը եւ Թուրքերը ձուլել մէկ ազգութեան մէջ, որ ունենայ մէկ լեզու, ծայր աստիճան դժուար է, թերեւս դեռ մեր դարուն համար անկարելի: Բայց լեզուներու ուսումնասիրութիւնը պէտք է դրուի իբրեւ հիմնական խնդիր: (Մէկը կ'ընդմիջէ.— «Մենք ռուսերէնն ալ լաւ չենք գիտեր»): Ռուսերէնի մասին խայտառակ կարծիքներ կան: Ոմանք կ'ըսեն թէ աւելի լաւ է սորվիլ ֆրանսերէն եւ գերմաներէն, քան ռուսերէն: Ռուսերէնը այս շրջանիս չինարարութեան լեզուն է: Նոր գաղափարները աշխարհին տուողը ռուսերէնն է: Լէնին գրած է ռուսերէն, մինչդեռ մեր հանրապետութիւններուն մէջ այդ լեզուն կ'արհամարհեն: Հայերէնի, վրացերէնի կամ Թրքերէնի թարգմանելը դժուար բան է: Մենք պէտք է պարտադիր դարձնենք ռուսերէն սորվիլը:

ԸՄԲՈՍՏՈՒԹԻՒՆ

Էլիավա կը խոստովանի թէ որքա՜ն վտանգաւոր համեմատութիւն մը ստացաւ ապստամբութիւնը հողերու համայնացման առթիւ:

— Անդրկովկասիք ազգային կացութիւնը չափազանց լարուած է, չափազանց սուր,— այնպիսի վիճակ մը, որուն նմանը չէ տեսնուած ուրիշ ոչ մէկ կողմ:

Քաղաքներու կացութիւնը, հակառակ թերութիւններուն լաւ է, իսկ գիւղին մէջ չափազանց պրկուած է կացութիւնը եւ բարդ:

Վրաստանի մէջ գիւղին վիճակը կարելի է բնորոշել իբրեւ սպառողական: Դեռ տարաձայնուած չէ եղածը: Թրքական շրջաններուն մէջ, մասնաւորաբար Թիֆլիսի գաւառին եւ սահմանամերձ շրջաններուն մէջ, կացութիւնը ծանր է: Դժգոհութեան զանգուածային արտայայտութիւններ տեղի ունեցան Բորչալուի, Ախալթխայի մէջ: Այս սպասողական վիճակը ի՞նչ ձեւ պիտի ստանայ յետոյ, պիտի կրնանք վերստանալ գիւղացիներուն վստահութիւնը:

Աւելի ծանր է կացութիւնը Հայաստաեի մէջ, մասսաւորաբար Ջանգեզուրը, Դարալագեազի, Դիլիջանի, Լոռի-փամպակի շրջաններուն մէջ:

Շատ աւելի ծանր է կացութիւնը Ադրբէջանի մէջ, ուրկէ ապստամբական շարժման ալիք մը անցած է մինչեւ Նախիջեւան, սկսելով Ջաքաթալայէն ու Նուխիէն: Նոյն կացութիւնը Ղարաբաղի եւ Գանձակի գաւառներուն մէջ: Եւ սրտաշարժ համերաշխութիւն մը կը տեսնուի կուլակին, տէրտէրին, մոլլային, դաշնակին, մուսաւաթականին, մենշեւիկին ու իթթիհատականին միջեւ, ընդդէմ բոլշեւիկներուն:

ՀԱՅ ՕՐԻՈՐԴԻ ՄԸ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

Մեզի կը հաղորդեն թէ փարիզի եւ արուարձանի ֆրանսական նախակրթարաններու ընդհանուր մրցումին մէջ, առաջնութիւնը շահած է հայուհի մը՝ Օր. Հրանոյշ Գ. Գազագեան:

SITUATION.— Importante Compagnie d'assurances ayant quelques postes élèves Inspecteurs et Inspecteurs vacants, recherche personnes actives et de bonne tenus de nationalité arménienne. Conditions très avantageuses. Ne pas se présenter. Ecrire à Monsieur DESPREAU, 32 rue deMogadorqui convoquera.

ԹՈՒՐՔԻԱ

ԹՈՒՐՔ ԵԻ ԳԵՐՄԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պերլինի դեսպան Քէմալէտտին Սամի փաշա հետեւեալ յայտարարութիւնը ըրած է.

— Թուրքեւգերման յարաբերութիւնները ամէն առենուան պէս բնականոն վիճակի մէջ կը գտնուին: Առեւտրական նոր դաշնագիրը այս յարաբերութիւնները աւելի պինդ ամրապնդէ: Գերմանիա տարեկան 50 միլիոն քիլօ ծխախոտ կը գնէ, որուն 10 միլիոն քիլօն Թրքական արտադրութիւն են: Կ'աշխատինք որ այս տարի այս քանակութիւնը 15 միլիոնի բարձրացնենք:

«Մօտերս կ'աւարտին նաեւ ռաճրագործներու յանձնումի մասին տեղի ունեցող բանակցութիւնները եւ երկու երկիրներուն միջեւ ոչ մէկ առկախ խնդիր կը մնայ»:

ՌՈՒՄԱՆԻՈՅ ԹՈՒՐՔԵՐԸ

Ռումանիոյ հարուստ Թուրքերը 2 միլիոն լէյ դրամագլուխով դրամատուն մը հիմնելու ձեռնարկած են: Դրամատան նպատակն է օգնել Ռումանիոյ 160 եւ Եուկօսլաւիոյ 40 հազար Թուրքերուն, Թուրքիա գաղթելու եւ Արեւելեան նահանգներուն մէջ գիւղեր հիմնելու համար:

ԱԾՈՒԽԻ ՍՊԱՌՄԱՆ ՏԱԳՆԱՊԸ

Ջօնկուլտաքէն կը հաղորդեն թէ ածուխի հանքերէն մէկ մասը փակուած է, հրապարակի տագնապին հետեւանքով: Հանքերու շրջանի տնօրէնը այս առթիւ յայտարարած է թէ փակուելուն պատճառները երեք են, բայց գլխաւորը այն է որ ածուխի տեղ առատ քսրիւղ կը գործածուի նաւերու եւ գործարաններու մէջ:

ԱՆՏԷՐ ՑՂԱՓԸ

Պոլսոյ մէջ անտեր տղոց թիւը վերջերս կարեւոր չափի մը հասած է: Այս տղաքը որոնց միջին տարիքը 2 է, փողոցները ձգուած են անտէր, չքաւոր ծնողքներու կողմէ: Ամէն օր քանի մը տղաք կը աարուին Ընկերվարոգ ուր շատ կարեւոր թիւ մը կը կազմեն անոնք

ՁԿՆՈՐՈՒԹԵԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ

Նորվեկիական ընկերութիւն մը պոլսոյ մէջ ուսումնասիրութիւններ կ'ընէ, ձկնորսութեան եւ ձուկի առեւտուրի մասին: Ընկերութիւնը ծրագրած է գիտական միջոցներով կատարել ձուկի փոխադրութիւնը պոլսէն մօտակայ եւ մինչեւ հեռաւոր գաւառները: Մասնագէտ մը ներկայիս քննութիւն կը կատարէ ստոգելու համար թէ ո՞ր ձուկերը քանի օր կը դիմանան:

ՏԱՐՏԱՆԷԼԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Տարտանէլի մէջ մեռած թուրք զինուորներուն համար մեծ յիշատակարան մը պիտի շինուի: Յիշատակարանին շինութիւնը մըրգումի պիտի գրուի թուրք արուեստագէտներու միջեւ: Յիշատակարանին ծախք պիտի ըլլայ կէս միլիոն ոսկի, որ բոլոր կուսակցութիւններուն վրայ պիտի բաժնուի:

Որոշուած է որ թրքական յիշատակարանը նոյն տեղին մէջ գտնուած եւրոպականներէն աւելի մեծ, աւելի գեղեցիկ եւ տոկուն ըլլայ: Յիշատակարանին տեղը պին իշխանութիւնը պիտի որոշէ, բայց հաւանական է որ Չայիր Թէփէի վրայ կառուցուի:

ՌՈՒՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ԿԸ ՎԱՏԱՆԱՆ

Հակառակ բոլշեւիկեան 16րդ համագումարին մէջ, հնգամեայ ծրագրին շուրջ յարուցուած խանգաւառ աղմուկին, կարմիր սէնդիկաներու պաշտօնաթերթը «Ցարուդ» կը գրէ հետեւեալ յոռետես խմբագրականը, (10 յունիս):

Հնգամեայ ծրագրի իրականացման պայքարին մասին, կույպիշէվի կողմէ պարզուած ծրագիրը, համագումարին առջեւ դրաւ արտադրութեան որակի հարցը: Ճարտարարուեստի որակական նշանակները լուրջ մտահոգութիւն կը պատճառեն: Ոչ միայն որակը չի լաւանար, այլ կը վատանայ: Կույպիշէվ ստիպուած է հաստատելու թէ Ազգային Ցնտեսութեան գերագոյն խորհուրդը՝ ճարտարարուեստական աշխատանքի այս կարեւոր մարզին մէջ, որեւէ արդիւնք չէ ստացած:

Արտադրութեան վատ որակը սանձ կը դնէ ընկերվարական շինարարութեան: Կույպիշէվի յիշած թիւերը ամօթալի դատապարտութիւն են տնտեսական բազմաթիւ կազմակերպութիւններու: Թերի նկատուած արտադրութիւններու համեմատութիւնը հասած է աներեւակայելի մակարդակի մը:

Կրնա՞նք հանդուրժել ասոր: Կրնա՞նք աւելի երկար տեսն համբերել որ անօգտագործելի նկատուած ապրանքներու. կամ բոլորովին պակասաւոր արտադրութեանց համար, հսկայ վնասներու ենթարկուինք:

Պէտք է վերջ դնել այս չարաչար վատնումին: Առարկայականպատճառներ չկան, որոնք արդարացնեն արտադրութեան վատ որակը»:

Այս խոստովանութենէն յետոյ տանք բանի մը պերճախօս թիւեր: Համագումարին մէջ, կույպիշէվի տուած տեղեկութիւններուն համաձայն, ռուսականգործարաններու կողմէ արտադրուած երկաթուղիի գիծերու թերի մասը Յունուարին 26էն բարձրացած է 36ի: Դարձեալ ըստ կույպիշէվի, մետաղագործութեան մէջ, ռուս գործաւոր մը կ'արտադրէ 218 թօնօ, իսկ Ամերիկայի մը 1270: Հիւսկեղէնի մէջ, ռուս բանուորը կ'արտադրէ 4,4 թօնօ, իսկ Ամերիկայէն 15,4:

ՀԱՐԿԸ ԿԸ ԼՈՒԾԷ ՕՐԷՆՔԸ

Ոգելից ըմպելիներու արգելքի օրէնքը, Ամերիկայի նիւ Եորքի վայրին մէջ տեղի տուաւ զաւթալի միջադէպի մը:

Ոստիկանութիւնը գրաւած էր մաքսանենգութեամբ ցամաք հանուած գարեջուրի տակառներ եւ անոնց պաշտպանութիւնը յանձնած քանի մը ոստիկաններու: Հետաքրքիրներու բազմութիւն մը սկսաւ հաւաքուիլ տակառներուն շուրջ. բերնի ջուր թափելով: Օրը տաք էր ու սաստիկ ծարաւ մը կ'այրէր կոկորդները: Լեգուն տակառները, կարծես թելադրեցին բազմութեան որ խուժէն, ճեղքեն զերեզ եւ յագուրդ իրենց պապակին: Այդպէս ալ ըրին ներկաները: Հրեցին, հրմշտկեցին ոստիկանները ու խաղալով խնդալով, պահ մը մոռցած օրէնքի վախը, յառաջացան դէպի հանդարտ տակառները, գրաւեցին զանոնք եւ մէկ քանի վայրկեանի մէջ՝ իրենց ծարաւը յագեցնելէ յետոյ, դանոնք պարապ յանձնեցին ոստիկաններուն պահպանութեան:

ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Հ. Մ. Ը. Մ. ԿՐԸՆՕՊԼԸ

ԿՐԸՆՕՊԼԸ 15 յուլիս.— Անհաւասիկ մեր մարզիկներուն ձեռք բերած վերջին արդիւնքները:

Ցուլիս 13ին, Ընդսիի միջազգային մրցահանդէսին ժ. խմբիկեան երկրորդ ելաւ գունդ նետելու մէջ (12 մ. 10), եւ վազքէն՝ վեցերորդ բարձր ցատկելու մէջ (1 մ. 55):

Ցուլիս 14ին, Էքս-լէ-պէնի մարզահանդէսին, վազքէն երրորդ եկաւ բարձր ցատկելու մըրցումին մէջ (1 մ. 50) եւ առաջին՝ գունդ նետելու մէջ (բ. կարգի) 8 մ. 55ով:

Ցառաջիկայ կիրակի 20 յուլիս, մեր մարզիկները կը մասնակցին վիշիի մարզահանդէսին:

''ՅԱՌԱՋ,,Ի ԹԵՐԹՕՆԸ — 59 —

ԱՆԴՐԱՆԻԿԻ ՅՈՒՇԵՐԸ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

«Բղդօ, Թո՛ղ, Թո՛ղ խանչալը Անդրանիկի քով». ըսաւ Սերոբը:

«Պէտք չէ, առէք», եւ տուի իրենց:

Աւօյի կինը բռնեց Սերոբի ձեռքը եւ խնդրեց.

«Պարոն, ես կը խնդրեմ քեզնից, մի՛ առներ Անդրանիկի զէնքերը, տո՛ւր լուսահոգի Աւօյի խաչերը: Չէ՞ որ ես ալ ցամաքեանի, Մուրատի ժամանակներէն նայեր եմ ջոլորին՝ ինչպէս իմ պսակներուս, բոլոր յեղափոխականներուն գաւակիս պէս հագ եմ կեցուցեր»:

«Գլուխդ ուտէ քու կերցուցած հագդ», ըսաւ Սերոբը բարկանալով:

Հոգ կանգնած էին 5 6 երիտասարդ սասունցի, կայրն նաեւ տանտիրոջ թէ՛ համր եւ թէ՛ լեզուով տղաները: Եղօն եւ այդքան երիտասարդ եկան եւ ըսին.

«Անդրանիկ, մենք էդպէս չենք ընդունիր, որ գա՛յ մեր տան մարդը թալնէ գնա՛յ: Մենք կամ յետ կ'առնենք Թուանքը կամ մեզնից ալ երկու մարդ կը սպանէ, կ'երթա՛յ, Հօ էստեղ սարի գլուխը չէ՞»:

«Խելօք կեցէք տեղերնիդ, ըսի. Նա իրաւունք ունի մեր զէնքերը առնելու. մենք ընկերներ ենք, էսօր կ'առնէ, վազը նոլէն կուտա՛յ»:

Էդ րոպէին եկաւ կիարիկա՛յ Չօթօն, դրան առաջքը հասկցաւ խնդիրքը եւ ըսաւ.

«Պարոն Սերոբ, էգենց բան չեղնի կ'ընես. դուն ու քու Աստուած, երբ պատահեցաւ սարի մը գլուխ, ի՛նչ կ'ուզես ըրէ՛, մեր տան մէջ ինչո՞ւ ըրիր էդ բանը»:

Չօթօն 70 տարեկան էր: Ես վարտիկ չապիկով դուրս եկա՛յ, Չօթօյին ըսի. «կտրէ՛ ձէնդ»:

Չօթօյի տղան՝ հայրօն բարկացաւ իր հօր վրա՛յ եւ ըսաւ. «Քու ի՞նչ պէտքն է կը խառնուիս»:

Սերոբ իր ընկերներով գացին կէլիկուզան: Ես վեր կեցա՛յ, շորերս հագա՛յ: Հայրօն, Չօլօ Դօնէն, Գէվօյի տղան՝ դոնէն բռնեցին Թեւերս եւ կամաց կամաց կ'երթայինք գիւղ: Մաղրասէն անցանք: Առաջի հովիտէն խմեցի ջուր: 4-5 օր բերանս հագ գրած չէի. դեռ մորթի քրտինքը վրաս կը վազէր: Ջուրը խմելուն՝ ուշաթափ եղա՛յ: Հետս տղերքը գլուխս լուացին, կուրծքս շփեցին: Մի հինգ րոպէ վերջ՝ նորէն վեր կեցա՛յ: Բարձրացանք վերեւ: Մաղրասա՛յ գիմաց ծառերի տակ նստած էր Սերոբ իր խմբով: Ես բարեւ տուի: «Կեցի՛ր, ըսաւ, մէկտեղ գնանք»: «Ցե՛ս, հիւանդ եմ, ըսի, կսմաց կամաց կ'երթամ, դուք ալ եկէք: Ելա՛յ գերիքա՛յ կաժը. Սերոբը յետեւիցս ղրկեր էր հրացանս ու պատրոնտաշերս (փամփուշտակալ) հասցի եւ բարեւեցի հետ, ըսելով թէ՝ «կապի՛ր վրադ, մէկտեղ երթանք»: Սերոբն ալ հասեր էր մեզ: Ես ըսի. «Ա՛յ տղերք, ես ինքզինքս ալ չեմ կրնար տանիլ, զէնքն ո՞ւր տանիմ»: Հետս գրտնուած տղայոց մէկիններսաւ. «Գացէք գեղը (կէլիկուզան), ըսէ՛ք, Սերոբ կուգա՛յ, թո՛ղ տեղ պատրաստեն. բայց չըսէք, թէ Սերոբը Անդրանիկի զէնքերը առեր է, էսպէս է ըրեր, էնպէս է ըրեր: Ցես՝ ձենէ առաջ մարդ գացած չէ գեղ, եթէ էդ լուրը հոն ելնի՝ դուքըսած կ'ըլլաք»:

Չօլօ-Դօնէն գնաց գիւղ՝ տեղ պատրաստելու համար: Երբ կը հասնի խաչօ Մարտիրոսի քով, հոն կը գտնուի Կիրակոսը: Կ'ըսէ՝ «պարոնն ու Անդրանիկը կուգան, տեղը դրստեցէք»: Ցարութիւնն (Առաքելոց վանքի կռուին սպանուաւ) ու Թորօն հոն կ'ըլլան, տեղ կը պատրաստեն: Ես 20 քայլ կ'երթա՛յ, կը նստէի, չէի կրնար քալել: Ներանք բարձրացան տուն, ես նստա՛յ երէցփոխան Օհանի դուռը:

Մխիթարցի տղա՛յ մը ըսեր էր Թորոյին ու Ցարութիւնին, թէ Սերոբը Անդրանիկի ու Սարգսի զէնքերն առաւ: Գիւղի բոլոր ժողովուրդը կ'իմանա՛յ այդ: Ցարութիւնի ու Թորոյի զէնքերն ալ այդ տանն են եղած: Սերոբը հրաման կ'ընէ, որ այդ զէնքերն ալ վերցնեն: Ցարութիւնը սարսափելի ուժեղ տղա՛յ էր, մէկ տղա՛յ կը շպրտէ մէկ կողմ, մէկն ալ մէկ կողմ: Սերոբը կ'ըսէ. «Ցարութիւն, զէնքերդ բե՛ր տես»: Ցարութիւնը կը տանի զէնքերը, կը յանձնէ Սերոբին:

Այդ րոպէին ես ներս մտա՛յ: Ցարութիւնը սաստիկ բարկացած էր: Վրէն բարկացա՛յ, ձէնը կտրեց: Նա կ'ըսէր. «Չախմախլը ժըն ալ ձեռքս անցնի, էլի պիտի ընեմ յեղափոխութիւն, թո՛ղ բերդանկա չըլլա՛յ: Եթէ մարդ եմ, չախմախլըն շուտ այնալը կ'ընեմ»:

Գիւղի բոլոր գլխաւորները հաւաքուեցան հոդ եւ խնդրուան Սերոբին, որ տղա՛յոց զէնքը տա՛յ: «Էդ ձեր գիտնալու գործը չէ՛», ըսաւ Սերոբը:

Երեկոյեան ժամ էր: Մենք չորս ընկերս հասանք իրար, որոշեցինք Դաշտ գնալ: Աշուն էր: Բարձրացանք պետրոյի տան գոմի վերեւ, եւլանք Մըլէգրան կաժը, որը Մխիթարա՛յ գիմացն էր: Ես մեռած դրութեան մէջ էի: Տղերքը ըսին. «Դուն մնա՛յ՝ մենք կ'երթանք Դաշտ, Հրա՛յրի քով»:

(Շար.)

Անգլեւիտալական դաշնակցութիւնը

Պաշտօնապէս հրատարակութեան տրուեցաւ Անգլիոյ եւ Իտալիոյ միջեւ կնքուած դաշնագիրը։

Արդէն ծանօթ են գլխաւոր կէտերը այդ դաշնագրին, որ կնքուած է 25 տարուան համար, սկսեալ Իտալիի Ազգերու Դաշնակցութեան մէջ ընդունուելու թուականէն։ Գալով միջազգային բնոյթ կրող խնդիրներու կարգադրութեան, համաձայնուած են երկու պետութիւնները պիտի խորհրդակցին խաղաղ լուծում մը գտնելու համար, համաձայնժրնեւի Դաշինքի տրամադրութեանց։

Այն պարագային որ կողմերէն մէկը պատերազմի բռնուի, միւսը պիտի օգնէ անոր իբրեւ զինակից, համաձայն Ազգերու Դաշնակցութեան եւ 1928ի Փարիզի դաշինքներուն տրամադրութեանց։

Հնդիկ շարժումը մեղմելու համար

Սիմլայէն «Թայմզ»ի կը հեռագրեն թէ հնդիկ Օրէնսդիր ժողովի ընդդիմադիր պետը տեսակցութիւն մը պիտի ունենայ կանտիի հետ, զայն համոզելու համար որ դադրեցնէ «քաղաքացիական անհնազանդութեան» պայքարը։

«Տէյլի Թէլէկրաֆ» կը կարծէ թէ անգլիական կառավարութեան կողմէ ի գործ դրուած ճնշումին հետեւանքով, կանտի դադրեցնել պիտի տայ պայքարը։ Փոխարէն, իրեն պիտի տրուի Լոնտոնի խորհրդաժողովին մասնակցելու իրաւունք։ Թերթը կը կարծէ նաեւ թէ հակառակ աշխատաւորական դահլիճին մտադրութեան, Սիմոնի տեղեկագիրը քննութեան պիտի ենթարկուի Լոնտոնի խորհրդաժողովին մէջ. որովհետեւ, հնդիկ իսլամները, ուրիշ փոքրամասնութիւններ եւ իշխանները ուժ կուտան անոր, քանի որ իրենց իրաւունքները պաշտպանելու կը ձգտի։

Պատասխաններ՝ Պրիանի դաշնագրին

Համեւրոպայի կազմութեան ծրագրի մասին, Ֆրանսայի արտաքին նախարար Պրիանի դաշնագրին պատասխանը յանձնեց Անգլիա։ Ծրագրին իրականացման համամիտ գտնուելով մէկտեղ, անգլիական կառավարութիւնը վերապահ է եւ կասկածոտ՝ անոր յաջողութեան։

Իրենց պատասխանները յանձնեցին նաեւ Պելճիքա, Փորթուկալ, Եուկօսլաւիա, Ալպանիա ու նաեւ Հունգարիա, որ կարեւոր վերապահումներ կը բանաձեւէ։ Ըստ Հունգարիոյ տեսակէտին, էական է որ գերիշխանութեան եւ իրաւունքներու հաւասարութեան գաղափարը այնպէս մը մեկնաբանուի, որ Եւրոպայի Դաշնակցային Միութեան հաստատումով, վերնան այն բոլոր անհաւասարութիւնները, որոնք իրականին մէջ, կարգ մը պետութիւններու ազատութիւնը կը կապտեն։ Իր վերջաբանին մէջ, Հունգարիա հարցը կը յարուցանէ նաեւ ազգ. փոքրամասնութեանց։

Ռուս ապաներ կ'այցելեն Իտալիա

Խորհրդային զինուորական պատուիրակութիւն մը, զօրավարի մը գլխաւորութեամբ, հասաւ Սբէցցիա, ուր ընդունուեցաւ զինուորական եւ քաղաքային իշխանութեանց, եւ խորհրդային դեսպանատան զինուորական կցորդին կողմէ։

Զինուորական պատուիրակութիւնը այցելեց ռազմանիւթի եւ ծանր թնդանօթներու գործարանները։

Գերմանիոյ ելմտական տագնապը

Գերման խորհրդարանը մերժած ըլլալով կառավարութեան ելմտական ծրագիրը, դահլիճը որոշեց կիրարկել Սահմանադրութեան 48րդ յօդուածը, որուն համաձայն «Հանրապետութեան նախագահը, երբ հանրային ապահովութիւնն ու կարգը խանգարուած կամ վտանգի մէջ են, կրնայ անհրաժեշտ միջոցներու դիմել եւ եթէ պէտք ըլլայ, միջամտել բանակի ուժով»։

Ելմտացոյցին 755 միլիոն մարքի բացը գոցելու համար ուրեմն, վարչապետը պիտի հաստատէ նոր տուրքեր՝ մասնաւոր հրովարտակներով։ Սահմանադրութեան 48րդ յօդուածի կիրարկումը հաւանաբար պարտադրէ խորհրդարանի լուծումը։

«ՅԱՌԱՋ» կը ծախուի ՀՐԱՆՏ - ՍԱՄՈՒԷԼ

Գրատան մէջ, 51 Rue Monsieur le Prince

Վարձու յարկաբաժին Քլամարի մէջ

Շոգեկառքի եւ հանրակառքի կայարաններուն մօտ

Արեւոտ եւ լուսաւոր դիրք։ Երեք սենեակ, ձաշասրահ, խոհանոց, Cabinet de Toilette, ջուր, կազ, ելեկտրականութիւն, կեդրոնական ջեռուցիչ եւ հեռաձայն։ Դիմել ամէն օր՝ 27 Rue Lazare Carnol, Clamart.

ՏՕՔԹ. ԱՍԼԱՆ

38 Rue Rochechouart մէթրօ Cadet և Anvers Autobus J. JB.

Tél. TRUDAINE 56 - 58

Թոքերու, Ստամոքսի, Լեարդի եւ Աղիքի հիւանդութիւններ

ցատուկ յարկաբաժին *Վէներական* եւ *Մորթի հիւանդութեանց*

ULTRA - VIOLET ճառագայթներով կը դարմանէ *Ոսկորի*, ջղային, արեան հիւանդութիւններ եւ ցօդացաւ։

Կ'ընդունի ամէն օր ժամը 9—12 եւ 3—7, կիր. մինչեւ կէսօր։

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

ՁԱՁԱՐԱՆ ՖԼՕՐԻԱ

61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)

Մէթրօ Օտէոն եւ ՍԷն Միշէլ — Հեռաձայն Littré 38—43

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ

Հ. Յ. Դ. ԼԻՈՆԻ ՇՐՋ. ԿՈՄԻՏԷՆ ԺՈՂՈՎԻ ԿԸ ՀՐԱՒԻՐԷ ՀԵՏԵԻԵԱԼ ԽՈՒՄԲԵՐԸ

ՀԱՄԱԶԱՍՊ.— 22 Յուլիս երեքշաբթի իրիկուն ժամը 9ին Գրադարանի սրահը։

ԿՈՒԿՈՒՆԵԱՆ.— 22 Յուլիս երեքշաբթի իրիկուն ժամը 9ին Նիկողոսեանի ճաշարանը։

ԿԱՅԾԱԿ.— 23 Յունիս Չորեքշաբթի իրիկուն ժամը 9ին Գրադարանի սրահը։

ՔԵՌԻ.— 23 Յուլիս Չորեքշաբթի իրիկուն ժամը 9ին Ճանկէօզեանի ճաշարանը։

ՎՐԻԺ.— 25 Յուլիս Ուրբաթ իրիկուն ժամը 9ին, Գրադարանի սրահը։

ՔՐԻՍՏԱՓՈՐ.— 25 Յուլիս Ուրբաթ իրիկուն ժամը 9ին Նիկողոսեանի սրահը։

Բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտադիր եւ անհրաժեշտ է։

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ Ս. ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

կազմակերպուած Հ. Յ. Դ. Ս. Շամոնի ենթակոմիտէի կողմէ, վաղը Կիրակի առաւօտէն մինչեւ իրիկուն, հանրածանօթ Au Bon Coin *ի շքեղ պարտէզին մէջ։*

Կը խօսի՝ ԸՆԿ. Բ. ԱՂԱԲԷԿԵԱՆ

Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ։ Մուտքը ազատ է

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ԴՊՐՈՑԱՍԷՐԻ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

20 Յուլիս Կիրակի ժամը 2էն 10 վարժարանին պարտէզին մէջ

1 Boulevard du Nord, Le Raincy-Pavillons

Մարգական խաղեր, կովկասեան եւ եւրոպական պարեր եւ անակնկալներ։

Կը մասնակցին Պ. Վ. Սվաճեան, պարուհի Օր. Դաւուքճեան եւ վարժարանի սանուհիները

Ճոխ գեղարուեստական բաժին Մուտք՝ 5 ֆրանք

Հաղորդակց. միջոցներ.—Ա.նել ՕՒ իէրայէն կամ ժօռէսէն 21A Թրամուէյ, շոգեկառք կամ տր Լէսթէն կարկանի ուղղութիւն։ ժամը 8.56, 10.15, 11.40, 13 եւ 14ին։

Պարտէզը տրամադրելի է առաւօտեան ժամը 10էն սկսեալ։

ՌՈՍՏՈՄ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ ԵՒ ԲԱԺԱԿԻ ՄՐՑՈՒՄԸ

ՅՈՒԼԻՍ 27ԻՆ ՍԷՆ ՔԼՈՒԻ ԱՆՏԱՌԻՆ ՄԷՋ

Մանրամասնութիւնները մօտ օրէն

Մամուլի տակ է եւ շուտով լոյս կը տեսնէ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԳՈՐԾԸ

"ԻՄ ԳԻՐՔԸ", Բ. ՀԱՏՈՐ (ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆ)

Ա. հրատարակութիւն ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ ԴՐԱՏԱՆ

ԳԻՆ 20 ՖՐԱՆՔ

ՕԳՏՈՒԵՑԷՔ ԱՌԻԹԷՆ.— Մինչեւ 30 Յուլիս

30 ֆրանք կանխիկ վճարողները կը ստանան Ա. եւ Բ. հատորները միասին։

Այժմէն կարելի է դիմել Librairie H. SAMUEL, 51 Rue Monsieur-le-Prince, Paris (VIe), Հեռաձայն՝ Danton 88-65։

Հայերէն եւ ֆրանսերէն ամէն տեսակ գիրքեր, բառարան, գրական, վիպական, պատմական եւ դպրոցական գործեր։

Վերջին կատարելագործութեամբ օժտուած կազմատուն։ Արագ եւ մաքուր աշխատանք։ Գիրքերու ՎԵՐՆԱԳԻՐԸ ոսկետիպ։

Կը ստանձնենք տպագրական ամէն տեսակ գործեր։

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ՍԱՐՍԷԼԻ ՄԷՋ

Հ. Յ. Դ. ՀՐԱՅՐ ԽՈՒՄԲԻՆ ԿՈՂՄԷ

Օգոստոս 3ին *Մանրամասնութիւնները մօտ օրէն*

Հ. Յ. Դ.

ՓԱՐԻԶ

Իթալիի Աղբիւր Սերոբ խումբի ժողովը՝ այսօր Շաբաթ-Կիրակուն ժամը 8ին, 184 Ave. d'Italie, Métro: Porte d'Italie. Բացակաները պատասխանատուութեան պիտի ենթարկուին։

ԴԱՒԱՌ

Տէ-Սինի կոմիտէի ընկերական ընդհանուր ժողովը, վաղը Կիրակի առաւօտեան 9ին, Սոսիէթէ Լիոնէզի սրահը։ Կարեւոր օրակարգ։ Պարտաւորիչ ներկայութիւն։

ՌՈՍՏՈՄ Գրադարանը փակ է Օգոստոս 1 — Սեպտեմբեր 1։ Իրենց ժօտ գիրք ունեցողները կը խնդրուի շուտով վերադարձնել գիրքերը։

ՆԱՄԱԿԱՏՈՒԻՓ

ՍՏԱՑԱՆՔ

Քլաժաո, Յ. Շ.— 35։
Մարսէյլ, Դորթ.— 858.80։
Լա Սիոթա, Ա. Թ.— 160։
Թուլոն, Ա. Ա.— 100։
Տրակինեան, Ա. Հ.— 100։
Նաս, Թոր.— 75։
Լիվրի-Կարկան, Յ. Ա.— 35։
Վէննէս, Ա. Մ.— 35։
Յէլընաորք, Հ. Ե.— 200։
Տրակինեան, Վ. Զ.— 35։
Շավէլ, Վ. Հ.— 35։
Լիոն, Դորթ.— 630։
Լիոն, Ա. Ս.— 35։
Թաւրիզ, Դորթ.— 1000։
Փիէրֆէօ, Վարդ.— 35։

IMPRIMERIE - MASSIS - ÉDITIONS
208bis, Rue Lafayette Paris (10)
Le Gérant H. STEPHAN

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Կը փնտռուի Օրտուցի Ա. Բաքսի Ջաքարեան (ծնեալ Քիւրտեան), ամուսնոյն անունը Յովհաննէս։ Երեք ամիս առաջ Պոլսէն մեկնած են Ֆրանսա, իմացնել տիկ. Ջուաբթ Անգեանի, Quartier St. Joseph, Le Bocca, Cannes, A. M.

— *Կը փնտռուի Էնկիւրի նահանգին Ստանօս գիւղէն Յակոբ Զօպանեան 27—28 տարեկան, հօր անուն՝ Պօղոս, մօր՝ անուն Մարիամ։ 1920ին կը գտնուէր իր մեծ մօրը քով Մերսինի։ Այդ թուականին մեկնած է Դամասկոսէն Պոլիս երթալու համար։ Կիլիկիոյ ճամբուն վրայ տեսնուած է հայրենակիցի մը կողմէ։ Իր մասին ստոյգ տեղեկութիւն տուողին 1000 ֆրանք նուէր։ Իմացնել իր եղբօրը Գրիգոր Զօպանեանի 31 Rue de Fossé, Issy-les-Moulineaux (Seine) France կամ թերթիս վարչութեան։*

Կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել։

— *Խնուսի Սբբոյ գիւղացի Շուշան Քէօթիւկեանի (որ այժմ Տէր Զօր կը գտնուի) կը փնտռէ Խնուսի Սբբոյ գիւղացի իր ամուսինը Խաչատուր Քէօթիւկեանի, իր տագրերը Առաքել, Աղաճան եւ Գէորգ Քէօթիւկեանները, որոնք ընդհանուր պատերազմէն առաջ կարս (Հայաստան) կը բնակէին։ Իմացնել «Յառաջ»ի կամ Missak Sissérian-ի, B. P. 35, Dairez-Zor, (Syrie).*

EMPIRE Միւզիք-Հոլ՝ 37 Av. Wagram





ԳՆԵՑԷՔ ՔՈՏԱՔ ՄԸ ԳԻՆ՝ 250 ՖՐԱՆՔ

Place de Trinité

Château dun No. 59

Լուսանկարելով ֆաճոյքը կ'ունենաք վերաւեսնելու ձեր զաւակները, ազգականները, բարեկամները եւ վերյիշելու ձեր գրօսանքի գեղեցիկ վայրերը եւ արձակուրդի օրերը։

En vacances : emportez un

Hawk-Eye Kodak

anastigmat f : 6,3 - 250

On connaît la triple joie de prendre photos, de les faire admirer à to d'y revoir enfants, parents, amis, cursions et ses belles heures de liber

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ PRINKIPO

VERTANÈS MAHDJOUBIAN et A. VITCHEN

24 Rue des Carmes, Paris (5) Մէթրօ՝ Place Maubert

Խնամքով պատրաստուած արեւելեան և եւրոպական ամէն տեսակ կերակուրներ ամէն ժամ։ Մասնաւոր կերպով պատրաստուած տէօնէր-քէյպապ։

Այցելեցէք, համոզուելու համար։ Հարմարիքի, ժողովներու, հաւաքոյթներու եւալլնի համար տրամադրելի սրահ։

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Միշտ ունենալու համար ապուխտի եւ երշիկի ընտիր համեղը եւ մաքուրը, դիմեցէք ուղղակի հանրածանօթ ապուխտագործ եւ ապուխտավաճառ

HAIG MARACHLIAN

Fabrique des salaisons Orientales

16 Rue des Hortensias St. Just, MARSEILLE

որ իր յարգելի յաճախորդներուն դիւրութիւն տալու համար բացած է նաեւ մասնաճիւղ մը (կայարանին մօտ) 55 Rue des Petites Maries MARSEILLE.

Կ'ընդունի ապսպրանքներ ամէն երկիրներէ, մեծ եւ փոքրաքանակ եւ կ'ուզարկէ կատարեալ ճշտապահութեամբ։

ԼԻՈՆԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Ջատկի տօնի առիթով KYSA կօշիկի վաճառատան նոր

209 Rue Duguesclin (angle rue Dunoir), Lyon



պիտի գտնէք սեփական արհեստանոցի մէջ մասնաւոր խնամքով պատրաստուած այրուս եւ կիներու ֆանթէզի եւ ամէն տեսակ տոկուն կօշիկներ։

ԳԻՆԵՐԸ ԱՆՄՐՑԵԼԻՕՐԷՆ ԱԺԱՆ

Կը բաւէ անգամ մը այցելել համոզուելու համար ԾԱՆՕԹ.— Նոյն կօշիկները կը գտնուին մեր երկրորդ վաճառատունը 217 Rue Garibaldi, angle rue Paul-Bert.

Ամէն տեսակ կօշիկներ խնամքով կը նորոգուին մեր արհեստանոցին մէջ

Տէր եւ Տնօրէն ՍՈՂՈՄՈՆԵԱՆ ԵՂԲԱՐ



ՀԱՅԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

Տէր եւ Տնօրէն՝ **ՏՕՔԹ. ԳՐԳՈՑԵԱՆ**

29, Rue (Place) des Fêtes, Paris, XIX. Tél. Nord 96 - 61

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուի ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Գշ., Եշ. եւ Շաբաթ օրերը ժամը 4—6։ Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երեք. եւ Շաբաթ օրերը ժամը 2—3։ ԱՏԱՄՆԱԲՈՑԾը ամէն օր ժամը 9էն 19։

ՀՐԱՊԱՐԱԿ ԵԼԱԻ

ՄԻՒՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆԻ Նոր գիրքը

ԲԱՆԱՍՏԵՂԾ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ (իր գրական գործունէութեան քառասնամեայ յոբելեանի առթիւ)։

Դիմել՝ L. Kévonianի, 235 Fbg. St Martin։ Գին՝ 5 ֆրանք, փոստի ծախք չկայ

ԲԺՇԿ. ԵՒ ՎԻՐԱԲՈՒԹԱԿԱՆ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ

10 Rue Beaugrenelle, Paris (15)

Մէթրօ՝ Beaugrenelle

Միզանցքի, փրոսթաթի, մորթի, արիւնի, կանանց հիւանդութիւնները եւ ֆրանկախտ։ Ամէն օր ժ. 10—12 եւ 3 9։ կիր. եւ տօն օրեր 10 12։

STUDIO D'ART MANI

Մարսէյլի գեղարուեստա... լուսանկարչատունը՝

116 La Canebière

ուր պիտի գտնէք արուկ... կատարեալ բաւարարու... ինչպէս նաեւ ամառնային ցօղեայ ժամանցներու հ... ընտիր մեքենաներ ամէն տոյքներով։ Վճարումներու... րութիւն։ Ցածր գին։

ՄԱՆՈՒԿ ՄԱՐԿՈՍ

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ

96 r. Rivoli, մէթ. Շաթլէ։ Աչ... եւ նոր մեթոտով գարմանում... եւ կանանց մորթի, արիւնի եւ վ... հիւանդութեանց (ֆրանկախտ, մարիզ.) եւ վարիսի։ Մասն. լ... ականջաուռ։ Ներշմարիտ եւ արագ հրազակութ. ամէն օր 9—12, կիրակի 9—12։

ՅԱՌԱՋ

LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԲԱԺԱՆԵԳԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70ֆ.	140ֆ.
ԱՆԳԼԻԱ		20 շլ.	40 շլ.
ԵԳԻՊՏՈՍ		»	»
ԻՏԱԼԻԱ		250 ֆրանք	
ԱՄԵՐԻԿԱ		6 տլ.	10 տլ.
ԵՒՐՈՊԱ		100 ֆ.	200ֆ.

"HARATCH"

Directeur-Propriétaire
SCH. MISSAKIAN
Խմբագիր՝
Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Rédaction et Administration
Խմբագրութիւն եւ վարչութիւն
235, Faub. St.-Martin
PARIS (10e)

MÉTRO: LOUIS-BLANC OU JAURÈS
Téléphone : NORD 67-23
R. C. SEINE 376.286

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 3 ֆրանք

ԿԻՐԱԿԻ
20
ՅՈՒԼԻՍ
1930
20 JUILLET 1930

Զ. ՏԱՐԻ Թիւ 1318 — ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ — ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ռումանիոյ Առաջնորդ Յուսիկ եպիսկոպոսը Էջմիածնի Գեր. Մորհրդի շրջաբերականներէն զատ՝ ստացած է անձնական նամակ մը, որ լոյս տեսաւ հայ մամուլին մէջ: Հատուած մը այդ նամակէն.— «Ցուսալ եւ ցանկալ պէտք է, որ մեր արտասահմանի հայութեան ամբողջութեան մէջ զգաստութեան հոգին գերիշխող կը հանդիսանայ եւ կուսակցական քաղաքական հաշիւներով մեր եկեղեցական գործերի մէջ շփոթութիւն առաջ չի գար.»

Կուսակցութեան և քաղաքական հաշիւներու մասին երբ կը գրուի, և թերթ թերթ այդ մտքերը կ'արտատպուին, շատերու մտածումը կարող է երթալ Հ. Յ. Դաշնակցութեան: Մտքերու խաղաղութեան և գործի յաջողութեան համար բսենք մեր խօսքը:

Խօսքը կ'ուղղենք հայ քրիստոնեայ համայնքին, այս անգամ եկեղեցական երկու կարեւոր խնդիրներու մասին, կիրակնօրեայ խաղաղութեամբ և պարզութեամբ:

Շեշտենք անմիջապէս մեր վերաբերմունքի պարզութիւնը, որպէս զի մեր թելադրանքները իրենց տեղը գտնեն բոլոր անոնց քով, որոնք կոչուած են դեր մը կատարելու տուեալ խնդիրներու կարգադրութեան մէջ:

Առաջին, մենք կուսակցականօրէն մեր պարտականութիւններուն մէջ չենք նկատեր կրօնական և եկեղեցական խնդիրներու կարգադրութիւնը: Հետեւաբար, մեր կազմակերպութենէն էր, դուրս, հայ լուսաւորչական համայնքը պիտի ժամհոգուի և քայլեր առնէ ընդառաջելու իր բաղձանքներուն:

Երկրորդ, Էջմիածնի Կաթողիկոսի և Երուսաղէմի Պատրիարքի պաշտօնները, իրենց կրօնական եւ եկեղեցական համգամանքներէն զատ՝ մեծապէս ազգային կարեւորութիւն ունին, և համազգային բնոյթ կը կրեն: Որպէս այդպիսին, Հ. Յ. Դաշնակցութիւնը շահագրգռուած է որ այդ երկու խոշոր հաստատութիւններու պաշտօնակալներու ընտրութիւնները տեղի ունենան գոնէ անցեալի ընտրական իրաւունքներու սահմանին մէջ և պահպանուին ազգային աւանդութիւնները, որպէս զի հաստատութիւնները պահեն իրենց համազգային արժէքը:

Երրորդ, հակառակ իրենց համազգային բնոյթին, Հ. Յ. Դաշնակցութիւնը պաշտօնապէս չի պատրաստեր այդ երկու ընտրութիւններուն: Կուսակցութիւնը ոչ կաթողիկոսական և ոչ ալ պատրիարքական թեկնածուներ ունի ներկայացնելիք, և ոչ ալ պատգամաւոր՝ Հայաստան ղրկելիք: Այս պարզ կեցուածքին եթէ պէտք է լուսաբանութիւն մը, բսենք որ Դաշնակցութիւնը այս քայլով ընդդիմադիր դիրք մը չէ որ կը բռնէ: Եւ եթէ, առանց մեր մասնակցութեան, ընտրութիւնները կատարուին ազգային աւանդութիւններու սահմանին մէջ, մենք պիտի գոհանանք մեր դիտողի դերով, և մեզի պիտի վերապահենք քննադատելու իրաւունքը ամէն անգամ, երբ այդ հաստատութիւնները հայ ժողովուրդի շահերուն հակառակ ընթացքի մէջ գտնուին:

Այս պարզ ու բացայայտ արտայայտութենէն յետոյ, ինչ որ կը վերաբերի Դաշնակցութեան, կարող են հանգստանալ Էջմիածնի հոգեւոր եւ Երեւանի քաղաքական իշխանաւորները: Ասպարէզը բաց է հայկական թեմերու, գաղութներու և բոլոր խմբակցութիւններու առջեւ, օգտուելու Երեւանի «բարեացակամ» վերաբերմունքէն: Փորձութեան կ'ենթարկուի Խ. Հայաստանի եւ արտասահմանի հայութեան կապը: Մեր չեզոքութիւնն այս խնդրին մէջ, ամէն հնարաւորութիւն կ'ընձեռէ երկու կողմերուն ալ՝ լաւագոյն արդիւնքի մը յանգելու:

Երուսաղէմի պատրիարքութիւնը չունի այն կնճռոտ հանգամանքները, ինչ որ ներկայ պայմաններու մէջ ունի Էջմիածնի կաթողիկոսութեան խնդիրը: Այդ պատճառով, Երուսաղէմի Միաբանութիւնն ամէն հնարաւորութիւն ունի լիակատար ընտրութեամբ մը պատրիարքական աթոռին վրան նստեցնելու մէկը, որ ոչ միայն Միաբանութեան, այլ նաեւ գաղթահայ բոլոր թեմերու վստահութիւնը վայելէ:

Վերջապէս, ժամանակն է որ Երուսաղէմի հայկական փաստաւան վերջ գտնէ եւ այդ հարուստ ազգային հաստատութիւնը յաւիտենական շղթայակիրը չմնայ: Խիստ հին դարերու ընդմէջէն ճկուն հայութիւնը կրցած է իր կարգին մտնել սուրբ տեղիները եւ տիրապետել Սիոնին, սակայն հինգ հարիւր տարիներէ ի վեր պարտքերու շղթայի պատմութիւնն է որ կը լսենք: Մինչդեռ Ս. Յակոբի վանքը կրնար բռնել վէնետիկի եւ վիեննայի ճանապարհը: Հիմա, մանաւանդ, երբ հայութեան կրթական եւ մշակութային բազմաթիւ կեդրոնները քայքայուած են, մենք կը սպասենք որ Երուսաղէմի պատրիարքութիւնը կարգի դնէ իր վանական գործերը, եւ մշակութային ասպարէզի մէջ շինարար դեր մը ստանձնէ:

Ահա, կուսակցական և քաղաքական մարգերէն հեռու խընդիրներ, որոնք կը շահագրգռեն ամբողջ հայութիւնը, և մենք պիտի փափաքէինք որ այս ուղղութեամբ հաւաքական կարծք մը յայտ բերէին անոնք, որ օրն ի բուն ազգային շահերու մասին կը խօսին, բայց այնպէս ցոյց կուտան թէ իրենց ձեռքերը կապուղներ կան:

Անհաշտ պայքարներու առիթներ չկան: Ու մենք պատրաստ ենք ուրախութեամբ դիմաւորելու ժողովրդական ազատ կարծիքի արտայայտութիւնները:

Կ. Ս.

ՕՐԸ ՕՐԻՆ

ԱՐԱՐԱՏԻ ԴԷՊՔԵՐԸ

Թայմզի Պոլսոյ Թղթակիցը ցուլիս 17ին կը հեռագրէ.— Թրքական զօրաբանակը սաւառնակներու օժանդակութեամբ յարձակման ձեռնարկեց Քիւրտերուն վրայ և հանդիպեցաւ անոնց կորովի դիմադրութեան: Արալըղի մօտերը Քիւրտերը յարձակեցան Թուրքերու վրայ, բայց ետ մղուեցան:

Հասած տեղեկութիւններէն կ'երեւի որ, անցած չորս շաբաթներուն տեղի ունեցած կռիւները շատ ծանր եղած են երկու կողմերուն համար ալ: Քիւրտ կիները կը կռուին այրերու կողքին: Թուրքերը կը մեղադրեն Քիւրտերը, որ անոնք սպանած և չարչարած են իրենց ձեռքն ինկած գերիները:

Հազար կամաւոր ժողովուրդին

Թուրքերը կը շարունակեն հաղորդել հակասական լուրեր, որոնք ուշադիր ընթերցողին կը մատնեն իրենց բուռն մտահոգութիւնը: Միւս կողմէ, քօղարկուած խօսքերով կը յայտնեն թէ յաղթանակը տարած են քիւրտ անզէն ժողովուրդին վրայ..., ջարդելով «հրոսակներուն օգնող գիւղերու բնակիչները»: 3000 սպանեալ քիւրտերու մասին լուրը որ կուտային, ուրիշ կերպ չի բացատրուիր, երբ իրենք իսկ, պաշտօնապէս ըմբոստներու թիւը կը գնահատեն 1500: Եւ կամ, պէտք պիտի ըլլայ որ խոստովանին թէ շատ աւելի բազմաթիւ ուժի մը առջեւ կը գտնուին, ինչպէս բոլորովին զսպուած ցոյց տալէ յետոյ շարժումը, այսօր ալ պէտք կը տեսնեն յայտնելու թէ կռիւները փոխադրուած են Արարատի վրայ:

Նոյնութեամբ կուտանք Թրքական աղբիւրէ առնուած հետեւեալ լուրերը՝

ԷՐԶՐՈՒՄ, 14 (Ա).— Իպրահիմ Թալի պէյ երկրորդ զեկոյց մը հրատարակեց: Այս յայտարարութեան մէջ, Թալի պէյ կ'ըսէ թէ ըմբոստներուն ոչնչացումը ոչ միայն զինուորներուն, այլ նաեւ ժողովուրդին օժանդակութեամբ տեղի ունեցած է, 1000է աւելի քաղաքապահ զինուորներ արձանագրուած են. եւ հրսսակներուն օգնող գիւղերու բնակիչները ոչնչացուած են:

Յայտարարութեան մէջ կ'ըսուի նաեւ թէ Արարատի շարժումին համար հիմակուընէ ժողովուրդէն հազար անձեր կամաւոր արձանագրուած են:

Թուրք պաշտօնական զեկոյց մը

Քիւրտերու դէմ շարժող Թուրք զօրաբանակի իրամանատար Սալիհ փաշա տուած է հետեւեալ զեկոյցը, զոր կը հրատարակենք նոյնութեամբ.—

ԷՐԶՐՈՒՄ, 14 (Փ).— Զսպումի գործողութեանց վերջանալը մեծ ուրախութիւն պատճառեց հոս: Զօրաբանակի հրամանատար Սալիհ փաշա, որ յաջողութեամբ աւարտեց գործողութիւնները, հետեւեալ զեկոյցով պարզած է կացութիւնը.

1.— Յունիս 24ին, Արճէշի հիւսիսային կողմը, Զիլան ձորին մէջ ընդհարումները սկսան Քէօր Չիւսէյինի եւ Էմինի փաշայի տղոց ու արբանեակներուն միջեւ, որոնք Պարսկաստանէն եկած էին, եւ նպատակ ունէին զօրք չգտնուած վայրերու մէջ յեղափոխական շարժում մը յարուցանել եւ այս ձեւով օգնել Արարատի մէջ նեղ դրութեան մատնուած աւազակներուն: Պարսկաստանէն եկողներուն միացած էր նաեւ Զիլանի շրջանի ժողովուրդը:

2.— Ասոր վրայ, հազարապետ Եաշար Պէյի հրամանատարութեամբ դրկուեցան հեծեալ զինուորներ, որոնք Ակշորիկ լեռներուն մէջ զսպեցին աւազակները եւ հասան Արճէշի շրջանը:

Յունիս 26ի առաւօտէն սկսեալ, մեր ուժերը, առանց յոգնութեան ինչ բլլալը գիտնալու, կայծակի արագութեամբ հասան եւ յարձակեցան աւազակներուն վրայ, գանոնք բնաջնջելու եւ անոնց օճախը ամբողջովին մարելու համար:

3.— Զիլանի աւազակները երկու խումբի բաժնուեցան: Մէկ մասը, հրամանատարութեամբ Սէյիտ Ռիսուլի, Արճէշի շրջանը գնաց, իսկ միւսը՝ Քէօր Չիւսէյինի տղոցմէն Էմինի փաշայի հրամանատարութեամբ Տէտէլի և Բաղնոց առաջացաւ:

Մինչեւ մեր զօրքերուն կեդրոնացումը, ըմբոստները շաբունակեցին յարձակիլ. Մուրատիէի, Արճէշի և Բաղնոցի վրայ, բայց երեք վայրերու մէջ ալ մեծ հարուածներ կրեցին: Մասնաւորաբար սաւառնակներու ռմբակոծութիւնը շուարման մատնեց աւազակները: Յուլիս 5էն սկսեալ մեր 9րդ զօրաբանակի ուժերը եւ 7րդ զօրաբանակէն մեր հրամանին ղրկուած գունդերը հաւաքաբար յարձակումի ձեռնարկեցին և հրոսակները նետեցին Զիլան և Խաչիտիրի ձորերը, շատ քայքայուած վիճակի մէջ: Ի վերջոյ, բոլորը ջնջուեցան, մէկ հոգի իսկ չազատուելու պայմանով:

Յուլիս 10ի հինգշաբթի իրիկունէն սկսեալ, զսպումի գործողութիւնը վերջացաւ:

Շարժումին կարեւորութիւնը

Ցուրք թերթերը կը շեշտեն թէ Արարատի դէպքը շատ աւելի կարեւոր կը նկատուի քան Շէյխ Սայիտի ըմբոստութիւնը, որովհետեւ կազմակերպուած է արտասահմանի մէջ, աջակցութեամբ կարգ մը պետութիւններու եւ 150նոցներու, մասնաւորաբար Սուրիայէն եւ Միջագետքէն օժանդակութիւն ստացած են: Հալէպի մէջ կարգ մը քիւրտեր ժողով գումարած են եւ որոշած օգնութեան երթալ: Յունիս 29ին, 2000 աւազակներ կը փորձեն ինքնաշարժով սահմանը անցնիլ, սակայն բէս իւլ Այնէն լուր առնուելուն հետեւանքով, եւ զօրքերը ետ մղեցին եկողները: Կ'ենթադրուի թէ ասոնք միջագետքի քիւրտերն նին:

Ըմբոստները քիւրտերէն եւ Թուրքերէն յայտարարութիւններ տպած էին, եւ յոյս ունէին որ զանոնք ցրուելով պիտի կարենան ժողովուրդը ոտքի հանել, սակայն այս ծրագիրները վիժեցան, զօրքին արագ ու խիստ միջամտութեան վրայ:

Եգիպտոսի խռովութիւնները

Առջի օր, մինչեւ իրիկուն հանդարտութիւն կը տիրէր Աղեքսանդրիոյ մէջ, երբ ամբոխը դարձեալ սկսաւ հաւաքուիլ ու փողոցէ փողոց ցոյցեր կատարել: Քաղաքին գլխաւոր կէտերուն վրայ դիրք բռնած՝ զինուորական խումբերը ցրուեցին ցուցարարները: Քանի մը ձեռք հրազէն պարպուեցաւ: Մէկ հոգի միայն վիրաւորուած է:

Աղեքսանդրիոյ օտար հիւպատոսները յայտնեցին կառավարութեան թէ՝ կը վախնան որ խռովութիւնները սաստկանան եւ ատկից օտարները վնասուին, եթէ զինուորական ուժերը քաշուին քաղքէն:

ԼՈՆՏՈՆ, 18 Յուլիս.— Աղեքսանդրիայէն կը հեռագրեն թէ անգլիական երկու զրահաւորները մտան Նաւահանգիստ: Անոնց ներկայութիւնը հանդարտեցուցած է ժողովուրդը: Նոր միջադէպ չէ պատահած:

Գերմանի խորհրդարանը լուծուած

Երկար ու բուռն վիճաբանութիւններէ եւ բազմաթիւ ճառախօսներ լսելէ յետոյ Գերմանիոյ խորհրդարանը, 221ի դէմ 236 ձայնով ընդունեց ընկերվարականներու բանաձեւը, որով կը պահանջուէր ետ առնել կառավարութեան ելմտական ծրագրի կիրարկման վերաբերեալ հրովարտակները:

Անմիջապէս որ քուէարկութեան արդիւնքը յայտնուեցաւ, վարչապետը կարդաց հրովարտակը, որով լուծուած կը յայտարարուի գերման խորհրդարանը:

Յաջորդ ընտրութիւնները տեղի պիտի ունենան սեպտեմբեր 14ին եւ արդէն, կուսակցութիւնները սկսած են ընտրական բուռն պայքարի:

Կասեցի տեղի պիտի տա՞յ

Կը հաստատուի թէ փութացնելու համար յեղափոխական շարժման վերջը, Հնդկաստանի փոխարքան արտօնեց որ կարգ մը հնդիկ ականաւոր անձնաւորութիւններ, տեսակցութիւն ունենան Կանտիի եւ Նէհրուի հետ, անոնց բանտին մէջ եւ առանց վկայի: Ցոյս կայ որ այս տեսակցութիւններէն յետոյ, հնդիկ ազգային խորհուրդը պիտի հրահանգէ վերջ տալ քաղաքացիական անհնազանդութեան պայքարին. ատկից անմիջապէս յետոյ է որ կանտի եւ Նէհրու ազատ պիտի արձակուին:

«Մօրնինկ Փոսթ» խստիւ կը քննադատէ Հնդկաստանի փոխարքան, իր այս թոյլտուութիւններուն համար, եւ կ'ըսէ թէ որ եւ է կառավարութիւն որ կը զիջի բանակցիլ օրէնքը բռնաբարողներուն հետ, կը վարկաբեկուի:

Կալկաթայէն կ'իմացնեն թէ Պէնկալի շրջանին մէջ պատահած վերջին խռովութեանց ընթացքին, սպաննուած են 19 անձեր, վիրաւորուած են 6 ոստիկաններ:

Ռուսիոյ բողոքը Ֆինլանտայի

Սակայն, միայն տնտեսապէս չէ որ կը վնասուի հայ գիւղացիութիւնը այս քոչէորներու երեսէն։ Անոնք շատ յաճախ իրենց հետ կը բերեն անասուններու անխուսափելի վարակիչ հիւանդութիւնները, որոնք գրեթէ միշտ ճշմարիտ աղէտի կը մատնեն հայ գիւղացիութիւնը, կը բերեն իրենց կիսավայրենի բարքերը, որոնք նոյնքան անխուսափելիօրէն կ'ազդեն հայ գիւղի ու գիւղացիութեան վրայ, կուգան գինուած եւ իրենց հետ կը բերեն ցեղային ատելութիւններ ու գրեթէ միշտ անխուսափելի կը դառնան արիւնոտ ընդհարումները։ Ոչ միայն իրեն պատկանող բայց Թաթար քոչէորին տրուող արօտատեղիներէն չի կրնար օգտուիլ Հայաստանի «իսկական տէր հայ գիւղացին», այլեւ յաճախ չի կրնար օգտուիլ նոյնիսկ իրեն «շնորհուած» արօտատեղիներէն, տրուած ըլլալով որ Թաթար քոչէորը, մուԹ ամպի պէս սպառնական, ամբողջ ամառը աչ ու սարսափ կը տարածէ շրջակայ հայ գիւղերու մէջ՝ օգտուելով ոչ միայն իրեն «օրինաւորապէս»տրուած 173,000 հեկտար տարածութեամբ արօտատեղիներէն, այլեւ մնացեալէն...։

Ամբողջ աշխարհը հաւաքուած է

ՕՐ Ը ՕՐԻՆ

ՔՐՏԱԿԱՆ ԾԱՐԺՈՒՄԸ

Պոլսոյ Թուրք Թերթերը հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդեն քիւրտեւէժուրք բախումներու մասին, յուլիս 16 Թուականով.—

ԷՐԶՐՈՒՄ, 16 յուլիս.— Մեր սաւառնակները կը շարունակեն ռմբակոծել Աղրը Տաղի աւազակները։ Ասոր վրայ, բմբոստները աւելի բարձր տեղեր քաշուեցան։

Այժմ պատրաստութիւններ կը տեսնուին, զսպումի գործողութեանց ձեռնարկելու համար։ Զսպումը չպիտի սկսի, մինչեւ որ չվերջանան պատրաստութիւնները եւ ամբողջովին չփակուին փախուստի բոլոր միջոցները։ Զօրաբանակի հրամանատար Սալիհ փաշա անձամբ կը զբաղի պատրաստութիւններով։

Պարսկաստանէն կարգ մը ցեղեր Թէեւ նորէն ձեռնարկեցին սահմանը անցնելու եւ յարձակում գործելու, բայց ետ մղուեցան։ Յարձակող Քիւրտերուն մէկ մասը ամբողջովին բնաջնջուեցաւ։

Վանի եւ Զալտըրանի մէջտեղերը սկսած են մաքրագործման գործողութիւնները։ Այս գործողութեանց ընթացքին ամբողջովին պիտի զսպուին հոս հոն փախած հրոսակները։

Գրգռիչպաշներն ալ կը ռմբակոծուին

Հաստատուած ըլլալով որ Գրգռիչպաշները կ'օգնեն բմբոստներուն, անոնց վրայ ալ կրակ բացուեցաւ։

Արճէշի դէպքերու ընթացքին այրած գիւղերուն Թիւը 200էն աւելի է։

Սաւառնորդները մտադիր են յիշատակարան մը կանգնել իրենց այն ընկերներուն համար, որոնք վերջերս վար առնուեցան սաւառնակէ մը։

Օդային տորժիդի մը հրամանատարը, Արարատի բմբոստները լաւ մը ռմբակոծելէ յետոյ վար իջաւ եւ հետեւեալը յայտարարեց.

«Նախ 6000 մէթր բարձրանալով աչքէ անցուցինք ամբողջ լեռը։ Ցետոյ քալեցինք բմբոստներուն վրայ, որոնք կը գտնուին լերան հարաւային արեւմուտքը եւ մինչեւ 2000 մէթր վար իջնելով՝ նետեցինք առաջին ռումբը։ Անմիջապէս ողբեր բարձրացան, եւ աւազակները սկսան փախչիլ ու ժայռերու ետին ապաստանիլ։ Երկու ժամ շարունակելէ յետոյ փճացման գործողութիւնը, վերադարձանք»։

Արիւնոտ օր մը Եգիպտոսի մէջ

Ընդհարումներ ծագեցան Գահիրէի եւ Փորթ-Սայիտի մէջ։ Մայրաքաղաքին մէջ 89 անձեր վիրաւորուեցան եւ 323 հոգի ձերբակալուեցան։ Ցայտնի չէ դեռ ոստիկաններու եւ գինուորներու կորուստի քանակը։ Իսկ Փորթ-Սայիտի մէջ՝ մէկ մեռեալ, 21 ազգայնականներ եւ 59 ոստիկաններ վիրաւորուեցան։

Գահիրէի խռովութիւնները սկսան ցուցարարներու կողմէ գործուած յարձակումով մը։ Ամբոխը քար եւ աղիւս կը տեղացնէր ոստիկաններուն, որոնք նախ, փորձեցին զայն ցրուել օդին պարպուած համազարկով մը։ Բայց ամբոխին սպառնական դիրքին առջեւ, ստիպուեցան կրակ բանալ ցուցարարներուն վրայ։ Նոյն պահուն, յիսունի չափ ազգայնականներ յարձակում գործեցին ներքին նախարարութեան շէնքին վրայ, մինչ երրորդ խումբ մը կը փորձէր գրաւել Խորհրդարանը։ Բոլոր այս խումբերը հանդիպեցան ոստիկաններու կրակին։

Ի վերջոյ, երեք խումբերը միացան եւ պատնէշ կանգնեցին Ապիտին պալատին մօտերը։ Ծառերը արմատախիլ ըրին, եւ զետեղեցին փողոցին մէջտեղը։ Ոստիկանութիւնը ստիպուեցաւ օգնութեան կանչել գինուորական բնիկ ուժերը, որոնց մէկ մասը կը գործէր անգլիացի սպաներու հրամանին տակ։ Անգլիական զօրքերը դուրս չելան զօրանոցներէն։ Դժուարութեամբ կարելի եղաւ կարգը վերահաստատել։

Իսկ Փորթ-Սայիտի մէջ, պահ մը կարծուեցաւ Թէ ցուցարարները պիտի յաղթեն։ Ոստիկանութիւնն ու գինուորական ուժերը շղթայ կազմած էին եւրոպական Թաղին շուրջ։ Բայց ազգայնականները յաջողեցան ճեղքել գիծը եւ մտան Թաղը։ Միայն նոր ուժերու ժամանումով եւ ճշմարիտ ճակատամարտ մը վերջ, կարելի եղաւ ցրուել ամբոխը։

Գահիրէէն տրուած լուրի մը համաձայն, ազգայնականները գրաւած են Սուէզ քաղաքը։ Ոստիկանութիւնը օգնական ուժ կ'ուզէ։ Եգիպտական զօրամաս մը ճամբայ ելած է զսպելու համար շարժումը։

∴ *Անգլիոյ արտաքին նախարարը ընդունեց կարգ մը օտար պետութեանց ներկայացուցիչները, որոնք իրենց ժամադրութիւնը յայտնեցին Եգիպտոսի օտարականներու մասին, բայց որեւէ բողոք կամ պահանջ չներկայացուցին։*

∴ *Պահ առ պահ կը սպասուի Սրտքը փաշայի հրաժարման։ Արդէն իրրեւ անոր յաջորդ ցոյց կուտան Ծերակոյտի նախագահը Ադլի փաշա, որ քանիցս արդէն, վարչապետութիւնը վարած է։*

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՉԻՉԵՐԻՆԻ ՏԵՂԻ՝ ԼԻՏՎԻՆՈՖ

Բոլշեւիկ հեռագրական «Թաս» գործակալութիւնը կը հաղորդէ.—

Խ. Մ.ի Գործադիր կեդր. կոկիտէի նախագահութիւնը, Չիչերինի խնդրանքով իսկ, զինքը հանեց Խորհրդային Միութեան արտաքին գործավարի պաշտօնէն։

Արտաքին գործավար նշանակուեցաւ Լիտվինոֆ, առաջին օգնական՝ Պերլինի խորհրդային դեսպան Կրէստինսկի. երկրորդ օգնական՝ Գարախան։ Արտաքին գործավարութեան խորհուրդը կազմուած է Գարախանէ, Կրէստինսկիէ եւ Ստոմոնիակովէ։

ԵԳԻՊՏՈՍԻ ԴԷՊՔԵՐԸ

Վախճտ կուսակցութիւնը որ մտադրած էր մեծ հաւաքոյթ մը կազմակերպել բողոքելու համար խորհրդարանի փակման դէմ, հրաժարեցաւ իր ծրագրէն եւ որոշեց դիմում կատարել Ֆուատ Թագաւորին, որպէսզի քաղաքական կացութիւնը պարզելու համար, բացառիկ նիստի հրաւիրէ խորհրդարանը։

Անգլիական կարեւոր Թերթ մը կը գրէ.— Սահմանադրութեան 40րդ յօդուածին տրամադրութեամբ, Թագաւորը ստիպուած է գոհացում տալ, երբ երեսփոխաններու կամ ծերակուտականներու մեծամասնութեամբ ստորագրուած խնդրագիր մը կ'ընդունի։ Խորհրդարանի առաջին գործը պիտի ըլլայ՝ հաւանաբար հրաժարում պարտադրել դաշիլիճին, որ համաձայն 65րդ յօդուածին, պէտք է քաշուի։ կը Թուի ուրեմն որ, եթէ Թագաւորը եւ Սրտքը փաշա օրէնքը չբռնաբարեն եւ բռնի ուժի չդիմեն, ներկայ դաշիլիճին օրերը հաւրուած են։

«Տեյլի Թելեկրաֆ» կը գրէ.— Պատճառներ կան կարծելու որ խռովութիւններու պարագային, օտար պետութիւնները, մանաւանդ Ֆրանսա, Իտալիա եւ Միացեալ-Նահանգները պիտի միջամտեն Գահիրէի՝ եթէ ոչ Լոնտոնի կառավարութեան կով, որպէսզի պաշտպան կառավարութիւնը ապահովէ իրենց հպատակներուն անդորրութիւնը։

∴ Գահիրէի մէջ գինուորական ջոկատները գրաւած են կազի գործարանները եւ ելեկտրական ուժի կայանները, ինչպէս նաեւ Թերթերու, նախարարութիւններու գրասենեակներն ու ռազմական կէտերը։

Կ'ըսուի Թէ վախճտի անդամները զինուած են, մեծ քանակութեամբ արջասպ հաւաքած են եւ միտք ունին կարելու հաղորդակցութեան միջոցները, Զրոյց կը շրջի Թէ, իտալական յաճախաւ մը ճամբայ ելած է դէպի եգիպտական ջուրերը։

ՓՈՐԹ ԵՒ ՊԻԼՂՈՆԹ, ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՄԵԿՆԵԼՈՒ

Փորթ եւ Պիլղոնթ օդանաւորդները կազմ ու պատրաստ են մեկնելու, կտրելու համար Ատլանտեանը։ Անմիջապէս որ մթնոլորտային պայմանները նպաստաւոր ըլլան Թռիչքի, օդանաւը ճամբայ պիտի ելլէ անվտանգ փորձելու «մեծ ոստումը»։ Եթէ յաջողին հասնիլ Նիւ-Եորք, վերադարձը դէպի Փարիզ պիտի փորձէ ամերիկացի օդանաւորդ մը նոյն օդանաւով։

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ

ՁԱՅՆԵՐ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ

Կովկասի զանազան մասերում շարունակւում են իշխանութեան դէմ ծայր առած ըմբոստութիւնները: Բազմազան ճնշումներից զզուած խորհրդային քաղաքացիները որտեղ հնարաւոր է, գէնք են վերցնում ու լեռները ապաստանում. ինչպէս երեւում է համայնական տնտեսութեան վերաբերող ծանօթ հրամանները չեղեալ յայտարարելուց յետոյ իսկ, ըմբոստները չեն ուզում գէնքերը վար գնել: Մի կողմ թողնելով նախորդ ամիսների լուրերը, որ հրապարակեց պարսից մաժուլը, միշտ հիմք ունենալով արժանահաւատ աղբիւրները կամ Ռուսիա ու Կովկաս գտնուղ իր իսկ թղթակիցների փափկանկատ հաղորդագրութիւնները, թարմ՝ օրը օրին հասնող նորութիւնները ոչ պակաս մտահոգիչ են: Առանձնապէս Թրքական չրջաններում, աւելի ճիշտ է ասել Կովկասի Թրքութեան մէջ, ապստամբութիւնները չեն դադարում սպառնալ ներքին անդորրութեան: Անբացատրելի նեղութիւններով կովկասից ու թուրքմէնիստանից սահմանն անցնող պաբսիկ փախստականներ, հեռուքաղաք-կուսակցական դրդումներից, որոնք աւելի տնտեսական հարկադրանքի տակ երեւ են գարձնում տարիների իրենց բնակավայրերից, թողնում են տուն ու տեղ, շատ անգամ ընտանիք ու հարազատներ, սոսկալի գոյներով են պատկերացնում ստեղծած կացութիւնը: Տարբեր վայրերից եկող ու տարբեր սահմաններ կտրող միանգամայն անչահախնդիր անձնաւորութիւններ գրեթէ նոյնութեամբ հաստատում են մէկի կամ մի սի պատմածները:

Ամենէն թարմ եւ վստահելի այբիւրից քաղուած տեղեկութեան համաձայն, ի միջի այլոց Բարգուշատում՝ Զանգեզուրի Թրքաբնակ շրջանում, կառավարական ուժերի եւ զինուած ապստամբների մէջ երկու օր անընդհատ կռիւներ են տեղի ունեցել, որոնց ընթացքում սպանուել են 30ի չափ կոմունիստներ: Նոյնանման ընդհարումներ աւելի պակաս զօհերով տեղի են ունենում Ադրբէջանի մի քանի վայրերում: Ապստամբները ճնշող տոկոսով Թուրքեր են: Ուրիշ վստահելի լուրերի համաձայն ռուսական մի զօրախումբ անցել է Արաքս գետը, մտել Ղարատաղ, մինչեւ հայաբնակ Ողան գիւղը: Հաւանաբար Ադրբէջանի եւ Թրքաբնակ Զանգեզուրի ապստամբութիւնների ծայրը Ղարադաղում գտնելու ենթադրութեամբ, կարմիր արշաւախումբը հարկադրւել է այս անվայել ու անսպասելի քայլը առնելու, կամ Թերեւս ձեռք անցնելու այն Թուրք փախստականները, որոնք մեղադրւում են Բագուի շրջանի կոմունիստ զսպիչների սպանութեան գործով: Ինչ էլ լինի նպատակը, արշաւախումբը վերադառնում է ձեռնունայն, նախ քան մեկնումը սակայն տեսնուած բարբարոսութեան դիմելով: Երեքեան յայտնի Թումանեան առեւտրական տունը, որ Ղարադաղում կալւածներ ունի, դեռ պատերազմից առաջ հայաբնակ Վինա եւ Ողան գիւղերում երկու գեղեցիկ շէնքեր էր շինել: Ցայտնի չէ ի՞նչ պատճառներից դրդւած վերոյիշեալ արշաւախումբը այրում է այդ երկու շէնքերը. դժբախտաբար մանրամասնութիւնները պակասում են: Նոյնպէս ոչինչ կարելի է ասել շահագրգռւած պետութեան կողմից ձեռք առնուելիք վերաբերմունքի մասին այս ինքնատեսակ բարբարոսութեան նկատմամբ:

Անհանգիստ են նաեւ Թրքական սահմանները. Թուրք կառավարութիւնը հակառակ ձեռք առած բոլոր քաղաքական, պատժական ու զինուորական միջոցների չի կարողանում կարգ ու կանոնը վարականգնել իր Արեւելեան նահանգներում: Ապստամբ քրտութիւնը աւելի քան առաջ միակամ ու հաստատուն շարունակում է իր ազատագրական պայքարը: Այս րոպէիս կռիւներ կան Հեքեարիի տարբեր կետերում, ինչպէս եւ կողը-կողզուան ուղղութեամբ, այնպէս որ Թուրք կառավարութիւնը ստիպւած է նորանոր ուժեր կենդրոնացնել ըմբոստացած վայրերի մօտ, քրտական շարժումները զսպելու կամ գոնէ աւելի լայն տարածութիւններ բռնկելու առաջը առնելու մտահոգութեամբ: Արարատի շրջանը շարունակում է լուրջ ուշադրութեան առարկայ դառնալ. վերջերս Թուրքիան ուղարկում է զսպիչ զօրամասեր, որոնք չարաչար պարտութիւն են կրում եւ գլխիկոր նահանջում Արարատից ընդհարմաններում վայրերում սպանւածներ ու գերիներ Թողնելով:

Առանց դեպքերը խոշորացոյցով տեսնելու ցանկութեան — մանաւանդ որ մեր հայրենիքի հետ սերտօրէն կապւած անցուդարձեր են, որ անկախ այս կամ այն եղքից, պակաս մտահոգիչ չեն — չէ կարելի այս բոլորը սովորական դէպքերի շարքը դասել: Կովկասաբնակ Թուրքերի մէջ ծնունդ առած հակառուս տրամադրութիւնները, որոնք գինւած «ելոյթ»ների են յանգում մէկ կողմից, իսկ միւս կողմից, Թուրքիոյ քիւրտերի շարժումները յօգուտ ազգային անկախութեան, եթէ դատապարտւած չեն շուտափոյթ ու վերջնական զսպումի, ապա կարող են այս երկրին կից սահմաններում այսօր չէ վաղը լսելի դարձնել Թնդանօթի ձայնը աւելի մօտիկ, աւելի ուժեղ: Նկատի ունենալով այն իրողութիւնը, որ կարմիր, Թէ գեղին Հարեւան սահմաններում աղմուկը նոր չէ որ լսւում է սահմանից այս կողմ, առնուազն մի տասնեակ տարւայ հնութեան հետ գործ ունինք: Աւելորդ է խօսիլ տյս երկրում բնակւող հայութեան հայրենասէր, չրջահայեաց ու շիտակ վերաբերմունքի մասին մէկի կամ միւսի նկատմամբ: Բարեբախտաբար պարսիկ լաւատեղեակ շրջանակները փոխադարձաբար գիտեն տեսնել իրողութիւնները եղածին պէս. մի բարեբախտ անհրաժեշտութիւն, որի հովանու տակ հայ տարրը աւելի քան հաւատքով պիտի կարողանայ հայրենիքի առաջդիմութեան, զարգացման ու ուժեղացման մեծ գործին իր բաժինը բերել, միշտ բարձր գնահատելով իր ազգային արժանապատւութիւնը, միշտ յանուն հայրենիքի բարօրութեան:

Վ. ԻՐԱՆԵԱՆ

ՌՈՒՍԵՒՊԱՐՍԻԿ ՄԻՋԱԴԷՊ ՄԸ

Պոլսէն տրուած հեռագիր մը կը հաղորդէ Թէ միջադէպ մը պատահած է ռուսեւպարսիկ սահմանագլխին վրայ. Խորհրդային իշխանութիւնները կը մեղադրեն քիւրտ ըմբոստական խումբերը Թէ ռուսական սահմանէն ներս մտած են:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

"ՀԱՅՐԵՆԻ ԿՐԱԿԱՐԱՆ,,

(Բ. եւ վերջին մաս)

«Այդ ես եմ»... Մահն է այն հզօր գրիչ Փափիչինին պիտի ուղէր այդպէս երգել, ինչպէս երգած է Վարուժան իր «Պէգաս»ը հետեւելով Ատամ Մխոքէվիչի:

Իր «Թիֆեունիկ»ը ամբողջութեան մէջ շատ աննեղդաշնակ է, սակայն ինչ ինչ կտորները նման են դաշնանուշ նուագներու գանգիւններուն:

Բանաստեղծի խմաստասիրութիւն կայ իր «վիպական գրուն»ին մէջ, ուր ինծի համար ուշագրաւ են այս տողերը.

«Լըռիկ կանգնած կեանքին ֆանդեպ
կը յօրինեմ նոր երգ ու վէպ,
Մինչ դեռ Թերթերն իմ մատեանին
կը ֆոլովէ բախտի քամին:»

«Մի Թափթփեր»ը, *իմաստով զսպուած է, գաղափարներով կաշկանդուած, նկարն ամբողջովին շղարշուած:* «Կապոյտ ուլունքէն չեմ ուզեր մոռնալ իր այս երկու տողերը:

«Կաթիլ մ'աշխարհ ուր ամփոփուած է ֆոգիս
Ապրումներով իւր փարթամ»:

Ընթերցողը պիտի սիրէ, կրկին կրկին պիտի կարդայ «Մի մոռնար գիս»ը: ուր Հ. Վահան յայտնապէս կը յայտնէ իր միտքը այսպէս.

«Ի՛նչ տրխուր է վինակութիւնն
կարօտին մէջ սիրել ըզգալ.
Վիշտ ունենալ խոր ու Թաքուն
Ու չըկարել պատմել ու լալ»:

Եւ առանց չար մենկնութիւն տալու, կարդալու է աբեղայ բանաստեղծին այդ քերթուածին վերջին այս քառեակը:

«Ոչինչ Թէ գիս աշխարհ մոռնայ
Խոր մենութեան մէջն ֆոգիիս.
Մենարանս ալ դըրախտ կ'ըլլայ
Երբ դուն քոյր իմ, չըմոռնաս գիս:»

Հ. Վահան ծաղիկներուն քունը երգած ատեն, շատ արթուն չէ մնացած. դուք կարդացէք, դուք գտտեցէք, տեսէք ի՛նչ կը դրէ.

«Շաղակրատ ծաղիկներուն
վըրան ըստուեր ու լըռութիւն.
Երազն անոյշ ու քունն անոյշ.
Դուրսը ցերմակ արքայութիւն:»

Կարելի է՞ անոյշ քնացող, անոյշ երազող, լուռ ստուերին մէջ մնացող ծաղիկները շատախօսիկ շաղակրատներն: Ակադեմական հակաճառութեան մը ներկայ էի. Հ. Ալիշանին հետ ժամիկ կ'ընէի Մոլմէնտիի վրայ քննադատութիւն մը. հակաճառողը կը հարցնէր Մոլմէնտիի՝ Թէ ի՞նչպէս կրնար ապացուցանել Թէ Թիթեռնիկները կրնան երգել: Այո՛, հոմերներն ալ երբեմն կրնան քնանալ: Որով Հ. Վահան այդպիսի մէկ պահուն լսած պիտի ըլլայ լռակեաց, քնացող ծաղիկներուն շատախօսութիւնը,

Բարեմիտ եւ պարզամիտ է բանաստեղծ Հ. Վահանը. որով չկրնար անդրադառնալ որ «Աչքերուն իմայքը» երգած ատեն, Աստուծոյ հոգիէն մաս մը չկրնար ապրիլ հաշիշով զեղուն բաժակին մէջ: Հաշիշին հետ Աստուած հաշտուած չէ երբեք:

«Աչքերու իմայք»ի երկրորդ տպագրութիւնը պիտի ուղէի որ բծախնդիրներու աչքէն վրիպէր: Ես պիտի չվեղարեմ մեր բանաստեղծը, որ մեր հին աշուղներուն պէս անուշ երազներով զինովցած, կը խգէ սրտին լռութիւնը եւ նոյն աշուղներուն պէս, կ'ապաշխարէ եւ միւռոնաբոյր աստուածութեան մէջ ժամով ու սրտով կը լուծուի:

Աշխատուած ու սիրուած բնանկար մը կարելի է հաժարուի «կանայ օրեր» երկար քերթուածը. ուր կարելի է գտնել մերթ շքեղ, մերթ անշուք քառեակներ, երբեմն լալագող, երբեմն անյաջող մանրանկար պատկերներ: Ուր գիւտեր ունի, որոնք գեղեցիկ են, սակայն անոնք կազմին եւ հիւսուածքին մէջ կը կորսնցնեն իրենց գեղեցկութիւնը, իրենց շնորհքը, իրենց արժանիքը: Ըսածիս ապացոյց ահա մէկ քառեակը.

«Ջրերի շոյանք վէտ վէտ ալիք
Փոսոր կ'իյնան ափիս մէջէն,
Դէմքս շուշան ցերմակ ծաղիկ
Հայելացած գեղեցկօրէն:»

Ընդհակառակն փոքրիկ եւ շատ յաջող քերթուածներ են «Խորանիկ»ը, «Ես ու դուն»ն, «Նիրուանան»ն, Հ. Վահան իր «Ցուսահատը» երգովը աւելի յուսահատ է քան Պետրոս Դուրեանն:

Ծայրէ ծայր կարդալով «Հայրենի կրակարան»ը, ուզենք չուզենք կը զգացուինք. օտար երկիրներու մէջ, Թափառական ու գաղթական հալածյաշ այս վիճակին մէջ կը բռնկինք մեր կրակարանին կարօտովը:

Բանաստեղծը Թէեւ յուսահատ, սակայն յոյսերով եւ վառ երազներով մեր սիրտը կը կապէ մեր տաճարներուն հետ, մեր միտքը կը դարբնէ մեր ցեղին առաքինութեանց հետ:

Նկատի առնելու ենք որ «Հայրենի կրակարանը» Հ. Վահան Յովհաննէսեանի երիտասարդ տարիներու անդրանիկ քնարերգութիւնն է: Երիտասարդ կեանքի երազներու եւ գաղափարական ապրումներու անկեղծ պատմութիւնն է: Ան կը խոստովանի ճակատագրի առեղծուածներուն լուծութեան դառնութիւնը: Ան զեղեցիկ եւ միամիտ զգացումնեըրու յորձանքէն կը տարուի, մերթ յոռետես, մերթ լաւատես, գիտակցաբար կամ անգիտակցաբար կը յայտնէ որ իր մէջ տառապող հոգի մը կայ եւ այդ տառապանքը ժաքուր երգի եւ համբոյրի հաւասար բարդ է բարդ անուշութիւն ալ ունի:

Հ. Վահան՝ բնաշխարհի կրակարանին շուրջը կաշկանդուած չի կենար, իտալ. երկինքի տակ, գեղանկար լճակներու, գիւղակներու եւ տաճարներու գեղեցկութիւնը կ'երգէ: Առ հասարակ անուշ մելամաղձոտութիւն մը կը քնարերգէ. կը խորանայ իր ներքին լուռ ու տխուր վշտերուն մէջ: Ան կը մխայ, ան կը տենչայ. բայց կա՞յ ուժ մը որ սանձահարէ քերթողներու անսանձ փոթորկումը:

Մեր կրօնաւոր բանաստեղծը երազներու նեկտարներով դիւթական, Ծաուստի մը չափ միամիտ է, անփորձ Մարկրիտներու հաշիշով զեղուն ընծայաբեր բաժակներուն: Սակայն ո՞ր բանաստեղծը կրցած է փորձառութեամբ քալել անցնիլ երազներու խոտոր ճանապարհէն:

Հ. Վահան ուղիղ ժոքով, մաքուր սրտով կը քալէ դէպի հայրենի կրակարանը: Աչքը արուեստի լոյսին, Աչքը հայրենի յոյսերուն սեւեռած: Ան սիրահար է մէկ բանի, հայրենի կրակարանին: Արուեստի պահանջողները կարեւորութիւն չունին իրեն համար. ուխտաւորի սիրտն է որ կը մխայ իր մէջ, և մուխն անոր հայրենի կրակարանին մէկ ծխանէն, միեւնոյն ծխանէն աստղերէն վեր, հրեշտակներէն վեր մինչեւ երկինք կը բարձրանայ:

Ու ես կը հաւատամ որ Հ. Վահանին տրուած է շնորհք, սիրտ ու նուագող լեզու երգելու հայրենի կրակարանին զեուխն ծխանի եւ զառաւօտն նաւասարդի:

ԱՏՐՈՒՇԱՆ

ՁԱՐՕ ԱՂԱ Ի ՆԻՒ ԵՈՐՔ

Պոլսոյ Համբաւաւոր քիւրտը Զարօ աղա, 156 տարու, որ վերջերս Պոլսէն մեկներ էր, ուրբաթ օր հասաւ Նիւ Եորք: Իր անգագիրը որ կանոնաւոր է, Զարոյի ծննդեան թուական կ'արձանագրէ 1774: Նաւահանգստի առողջապահական պաշտօնեաները, հակառակ անոր տարիքին, առողջ գտան կազմը, եւ թոյլ տուին մուտքը Ամերիկա:

Զարօ յայտարարեց ամերիկացի լրագրողներու Թէ իր ճնգեալ կեանքին մեծագոյն մասը պիտի յատկացնէ ամուսնանալ գտնի՝ ընդդէմ իր 11րդ կնոջ:

ՔՐՏԱԿԱՆ ԿՌԻՒՆԵՐԸ

(Յառաջի սեփական Թղթակցէն)

...5 ՅՈՒԼԻՍ 1930

Թրքական բանակը մեծ պատրաստութիւններէ յետոյ, Մայիսի սկիզբէն սկսաւ արշաւանքի ընդդէմ Արարատի քրտական ուժերուն: Մինչեւ Յուլիս 5, ստացուած ստոյգ տեղեկութիւններէն կ'երեւի որ Թրքական զօրքերու բոլոր փորձերը ձախողած են Արարատի դէմ: Քիւրտերը տեսնելով որ Թրքական կառավարութեան պատրաստութիւնները լուրջ բնոյթ ունին եւ կը ձգտին վերջնական օրէն խեղդելու Արարատի ազատութեան բոյնը, դուրս եկան իրենց նեղ շրջանակէն եւ ձեռնարկեցին ամէն ուղղութեամբ կռիւներու: Կռիւները տարածուած են Արարատէն մինչեւ Սիփան, Չիլանի ձորը, Աբաղա, Արճէշ, Բերկրի, Ախլաթ, Ճուլամերիկ, Վան:

Յունիս 23ին Իգդիր Բայազիտի տաճկական ուժերը Բայազիտի երկաթուղիի կայարանէն շարժեցան Թանտուրիկ լերան (Ալա տաղ) ուղղութեամբ, Վանի շրջանն անցնելու համար: Այս շարժումը ծածկելու համար, Թուրքերը լուրեր տարածեցին Թէ պիտի յարձակին Արարատի վրայ, ու Յունիս 23ին երեք սաւառնակները սկսան ռմբակոծել Արարատի հիւսիսային կողմը: Սաւառնակներէն մէկ քիւրտերու հարուածներուն տակ վար ինկած է, մեքենավարը ծանր վիրաւորուած, ինկած է քիւրտերուն ձեռքը եւ քանի մը օր յետոյ մեռած է: Ասկէ զատ քիւրտերու հարուածներուն տակ ուրիշ երկու սաւառնակներ ալ փճացան:

Քիւրտ ապստամբները գրաւեցին Չիլանի ձորը: Յաճկիներէն սպաննուած են 50 հոգի, որոնց մէջ կար հարիւրապետ քեամիլ եւ քանի մը յիսնապետներ: Ապստամբութիւնները ձեռք ինկած է մէկ Թնդանօթ, երկու խոշոր գնդացիր եւ մեծաքանակ ռազմամթերք:

Չիլանի ձորի տաճկական զօրքերը նահանջած են, որոնց ետեւէն ապստամբները շարժած են դէպի Արճէշ: Ապստամբները Արճէշի մէջ ոչնգուցած են չորս հարիւր տաճկական զօրքեր: Սպաննուած են նաեւ հրամանատար քէմալ պէյը եւ Արճէշի գայմագամը:

Ճուլամէրիկի կռւին մէջ քիւրտերը Թուրքերէն գերի բռնած են մէկ սպայ եւ 31 զինուոր: Ապստամբութիւնները օր է օր կը ծաւալին եւ կը սպասուի նոր եւ կատաղի կռիւներու, որոնց ժամրամանութիւնը պիտի աշխատիմ օրը օրին տեղեկացնել, ստոյգ լուրեր առնելէ յետոյ:

Թղթակից

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐԸ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Շանկհայի մէջ, 24 համայնավարներ ձերբակալուեցան, երեք գոյներու հետեւանքով. Ցուցարարները քարկոծեցին հանրակառքերը, ինքնաշարժները: Ցոյցերը կազմակերպուած էին Շանկ քայՇէքի դէմ: Ոստիկանութիւնը շուտով վերահաստատեց կարգը: Սակայն ժողովուրդը վախի մէջ է:

* * Չինացի համայնավարները որոնք անգլիացի երկու միսիոնարուհիներ առեւանգեր էին, կը պահանջեն 930 հազար ֆրանք փրկագին: Եթէ պահանջուած գումարը չվճարուի մինչեւ 15 օր, կիները հրացանազարկ պիտի ըլլան:

Կարդացէք և Տարածեցէք
ՅԱՌԱՋԸ

Հ. Մ. Ը. Մ.Ի
ԲԱՆԱԿՈՒՄ - ՑՈՒՑԱՇԱՆՔ

Կառախումբը կը հասնի տօնի կայարանը. Ուրբաթ կը նառաջնորդող սկաուտ մը ալ լու համար, յանկարծ քովի կոնէն Թիթեռնիկներու եր մը դուրս կուգայ ուրախալաղաղակներով. «Շարք եղէ՛ Ձախ աջ, ձախ աջ»: Խումբ յառաջանայ դէպի անտառ խութեան արտասւքները մեր կարօտակէզ աչքերէն

«Նորափետուր»ները կ պղեղն «Ցառաջ ՆահաՀասած ենք անտառին ճիգ մը եւս եւ ահա կը պգեղեցիկ տեսարանը ընդբանակումին: Շարք շարք բաններու շուրջը մրջիւններ վխտացող մեր փոքրիկ սները՝ զինուորական մեծ կումի մը պատրանքը կուՀեռուէն դիտողին:

Բանակատեղին սահմանուած է ցանկապատով մը, մէջտեղի մուտքի կամարին կը ծածանի Ֆրանսիան դրօշը Հայկականը՝ դաշտին կեդկայմին գագաթը:

Վեց Թաղամասեր, ուր տեղուած խումբերը կը գաուին իրարմէ, իւրաքանչիւրբեն յատուկ մուտքի կամ եւ գեղեցիկ վերտառութիւ

Ամէն խումբ իր ձեռաշխատանքները գուգադրած դանի մը վրայ կամ կմուտքի կամարէն: Այսպէնշմարուին գաճէ Թափուած Բարձրացիր, բարձրացրէք փոքրիկ արձանիկներ, ջրանկ իւղաներկ բաւական յաջող խատութիւններ, մանրանկամէնքն ալ գեղեցիկ վերտաԹեամբ:

Կ'արժէ յիշատակել վրայ փորուած Հ. Մ. Ը. Մ նակը: Իսկ բանակումի մնկարը աւազի վրայ յարդաեւ վեր բռնուած փայտէրով՝ կը յիշեցնէր Շանկհայի կախեալ պարտէզները:

Կանաչ դղեակը իր ԹնՆով այցելութիւնը կ'ընդունլոր ներկաներուն, որոնք գուրախ իրենց փոքրիկներու ջողութիւններէն, կը շնորհմբապետները՝ Թափուած քերուն համար:

Քան եւ հինգ վրաններ դիրքի վրայ անխերի կլարուած, տղայոց կոկիկու կը յատկանշեն:

Դաշտին շուրջը ծնողքնեհետաքրքիրներու խումբերտեւին տղայոց խաղերու մարզանքներուն:

Խոհարարները երեք կներու կրակը կ'արծարծեն կուրը հասցնելու համար ժնակին:

Գեղեցիկ էր տեսարանը ձաշի փողը հնչեց. տղաք ին դէպի վրանները որոնք եւ թակի երեւոյթ առած էին մեր փոքրիկները ժրաջան ներու պէս կը մտնէին ու կխառնչակելով իրենց պայներբը:

Ժամը երեքին սկսաղանգը: Աղբեւէն Հ. Մ. Ը սկաուտական դրօշը կը երեք սկաուտները, որուն կտեւէին աղջիկ սկաուտներուբերը զեկավարութեամբ պետուհի օր. ԸնդապաՀանտոյ սկաուտներու հինգ խրը. իսկ ամէնէն վերջ կուգայլուկներու երեք խաշարժանկարի եւ լուսանգործները կը հետեւէին շարժումներուն:

ՏՈՄՍԵՐ

ՄԵՐ ԵՒԱԳՈՅՆԸ

Պուրսատ-Թաֆայէլեան վարժարանի հայերը, ու անոնց մէջէն Հ. Յաճիակ, վերջապէս նուիրագործեցին այն դրօշակը, որ տասներկու տարիէ ի վեր հայ ժողովուրդին ստուար մէկ մասին առաջնորդող աստղն է:

Սեվրի իրենց վարժարանին ճակատը անցեալ կիրակի օր կը զարդարէր մեր եռագոյնը, ֆրանսական կողքին,

Քաղաքացիական քաջութենէ աւելի, պարտականութիւն մըն էր, որ բարձրաղաղակ յայտարարուեցաւ. «Ընմահ Ալիշանն է ճեղինակը եւ՝ հայկական դրօշակին եւ՝ ազգային քայլերգ՝ «փառ փորոտանը»ին: Առանց կուսակցութեան խտրութեան, բոլոր Հայերուն համար նուիրական պարտականութիւն մըն է ճանչնալ, սիրել ու նուիրականացնել զանոնք: Մօտաւորապէս այս բառերով կը խտացնէր Հայր Սահակ իր միտքերը:

Մեզի պէս մտածողներուն համար նոր բան մը չէր եղածը: Մենք մեր բոլոր ճանչէսներուն մէջ, անվարան եւ աներկիւղ կը ճածանեցնէինք եռագոյնը, *Մեր Հայրենիքին* հետ կ'երգէինք նաեւ *Փառ Փորոտանը*: Նորութիւն մըն ալ եթէ կար, այդ այն էր, որ այդ ճանդէսին պաիուն, իրենց ստուերը կը ցուցադրէին քանի մը ռամկավար «շէֆեր»: Ու մանաւանդ ինն էր անխուսափելի պսակաւորը, ինչպէ՞ս եղաւ որ չառին չքալեցին, ու կեցան մինչեւ վերջը, լսեցին Հայր Սահակին խօսքերը, գոռոզասէր մը տարիներէ ի վեր չէ դադրած կրկնելէ մեր մոմուլը, եւ որուն համար, անտեղի կերպով, այնքան արիւն պղտորած է,

Սակայն ռամկավար օրկանը ինչպէս միշտ, այս անգամ ալ իր թիթու թանը թափեր էր մխիթարեան հայրերու հասցէին, որպէս թէ անոնք այդ քայլով քշնամական դիրք մը բռնած կ'ըլլան ներկայ Հայաստանի հանդէպ: Այս մարդիկը բացայայտ է որ շիտակ ճամբու չպիտի գան, Հետեւաբար ժողովուրդն իր ճամբան պիտի շարունակէ:

Կիրակի օր, աւելորդ անգամ մըն ալ հայկական եռագոյնը ժողովրդականացաւ. ներկայ եղողները իրենց անվերապահ ու բուռն ծափերով այդ բանին ապացոյցը տուին:

ՀԱՐԹՈՒԿ

Ցղանգքէն յետոյ սկաուտներու եւ գայլուկներու խաղեր, բուրգերու կազմութիւն, զանազան մարգանքներ եւայլն, ամէնքն ալ գոհացուցիչ էին բացի մի քանի աննշան թերութիւններէ:

Եոեկոյ է: Ներկաներէն մեծ մասը եւ աղջիկ սկաուտներու խումբերը մեկնած են, կը մնան խումբ մը ծնողներ դիտելու համար բանակումի կրակը, որուն շուրջը հաւաքուած սկաուտները կ'երգեն, կը պարեն, կ'արտասանեն եւ փոքրիկ ու զուարճալի ներկայացումներով մոռցնել կուտան ժամանակը: Այս առթիւ փոխ-խմբապետ աստիճան տրուեցաւ պէլվիլի խումբէն Ստեփան Սահակեանի եւ Ալֆօրվիլի գայլուկներու վարիչ Հայկին:

Կէս գիշերը մօտեցած է արդէն: Դժուարաւ կը բաժնուինք մեր հոգեհատորներէն եւ «Մեր Հայրենիք»ի ու «Արիք Հայկազունք»ի արձագանգները մեր թաղականներուն մէջ, կը հասնինք փարիզ:

ՀԱՑ ՀԱՑՐ ՄԸ

ՄԷԿ ՄԻԼԻՈՆ

Շարժանկարի ընկերութիւն մը՝ աւելի քան մէկ միլիոն ֆր.ի գնած է փիրանտէլոյի չորս թատերգութեանց ներկայացման իրաւունքը:

ՕՁԱԳՈՐԾ ԿԻՆ ՄԸ

Միսիսիփիի տեղական ոստիկանութիւնը յայտնեցաւ ձերբակալել կին մը, զոր ամերիկեան մամուլը հպարտութեամբ կը ներկայացնէր իբրեւ «գարուս ամէնէն մեծ ոճրագործուհին»: 22 տարի պէտք եղաւ երեւան հանելու համար այս գարհուրելի կնոջ հետքը:

Այս կինը, սեփական ագարակ մը ունէր, որով կը յայտնէր գրաւել կարգ մը այրերու սիրտը: Այս կերպով ամուսնացաւ 20 այրերու հետ, զորս յայտնադարձ սպաննեց՝ կողոպտելով անոնց դրամը: 1908ին, ոստիկանութիւնը այդ ագարակին մէջ երեւան հանեց ճշմարիտ գերեզմանատուն մը, ուր թաղուած կը ճնային 15 այրերու դիակները: Ոստիկանութեան այս գիւտէն յետոյ, ագարակը հրոյ ճարակ եղաւ շատ խորհրդաւոր կերպով: Ագարակին հրակէզ բեկորներու տակէն երեւան եկան չորս ուրիշ դիակներ, որոնցմէ մէկը կարծուեցաւ թէ ագարակի տիրուհիին էր: Սակայն ոստիկանութիւնը միշտ կասկածի մէջ էր եւ կարգ մը գաղտնի ոստիկաններ կը շարունակէին մասնաւոր հետաքրքրութեամբ, պըրպտուքներ կատարել, երկար տարիներու ընթացքին: Ու վերջապէս, յայտնեցան ձերբակալել ոճրագործ կինը, որ այսօր 70 տարու է:

ԳԱՂՈՒԹՆԵՐ

ՖՐԱՆՍԱ

ՆՈՒԻՊԱՐԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՆՈՒԻՐՆԵՐԸ

Շ. Բ. Ը. Մ.ը կը հաղորդէ.— *Կեդր. վարչ. ժողովը երախտագիտութեամբ արձանագրեց Նուպար փաշայի զաւակներուն, կոմսուհի տ'Ըրսքոթի, Ռաքել, Ջարեհ եւ Վահրամ պէյերու նուիրատուութիւնը, իրենց հօր յիշատակին, իւրաքանչիւրը 1000ական անգլ. ոսկիէն 4000 անգլ ոսկի:*

Միեւնոյն ատեն, Ջարեհ եւ Վահրամ պէյ Նուպար Նուպարեաններ Հանգանակութեան իրենց մասնակցութիւնը բերին 125,000 ական ֆրանքի գումարով մը (վերջինը իր անունէն 25,000 ֆրանքի յանձնառութիւնը բարձրացնելով այդ գումարին:

Շնորհակալութեամբ ստացած ենք նաեւ յօգուտ Մուրթեանս Ձեռնարկներուն 10000 ֆրանք Ցիկլին Նոյեմի գափամաճեանէ եւ 3000 ֆրանք վ. Վահրամ պէյ Նուպարէ, ինչպէս նաեւ Նուպարեան ընտանիքէն 5000 ֆրանք, յօգուտ Հայաստանի անապաստան երախաներուն:

Ըստ կտակի, փարիզի Հայ Եկեղեցիին յանձնուած է 50000 ֆրանք, Գահիրէի եւ Աղէքսանդրիոյ Հայ աղքատներուն եւս 50,000ական ֆրանք: Նաեւ, Նուպարեան ընտանիքը 3000ական ֆրանք նուիրած է Պպրոցասէր Ցիկնանց վարժարանին, Հայ կամաւորներու Մուրթեան, Հ. Մ Ը. Մ-ի, Հայ Սկաուտներուն եւ Ռուսահայ Ցիկնանց Մուրթեան:

ԵԳԻՊՏՈՍ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԱԶԳ. ԿԵԱՆՔԸ

Ցողդակցութենէ մը քաղուած.—

Քաղաքական ժողովի երկու անդամները բաւական ատենէ ի վեր հրաժարած ըլլալով, ժողովներն ալ կազդ ի կաղ կը գումարէին, եւ չենք տեսներ որեւէ հաղորդագրութիւն իր գործունէութեան մասին: Հարցերէն ամէնէն այժմէականը կրթարանն է. դպրոցը տարի մը առանց տնօրէնի անփառունակ կեանք բոլորելէ ետք, նոյն տխուր վիճակին կը մնայ դատապարտուած նաեւ այժմ: Իրենց իսկ խոստովանութեամբ՝ դպրոցի պաշտօնէութեան ապիկարութիւնը հաստատուած է այլեւս: Մարդիկը կը խոստովանին իրողութիւնը, սակայն բարոյական ուժ չունին իրենց խոստովանութենէն անհրաժեշտ եզրակացութիւնները հանելու:

Մեր համայնքին ծանօթ է նոյնպէս այն ապօրէն որոշումը, որ տրուած էր թխմ. ժողովի նիստերուն մէջ, ի բացակայութեան դաշնակցական երեսփոխաններուն (ասոնք բողոքելով հեռացած էին ժողովէն). փողոցին մէջ ծեծուած Խ. Ցովհաննիսեանը (թեմականի...ատենադպիր) պաշտպանելու համար: Թեմականի ընտրելու 9 անդամները լիազօրութիւն տուած էին քաղաքական ժողովին՝ կառավարական միջոցներով այս գործը հետապնդելու եւ ծեծողները պատժել տալու:

Արդ, ստոյգ աղբիւրէ կը լսենք, որ քաղաք. ժողովը, չփութելով ազգային սնտուկը իր անհատական գրպանին հետ, ինքնիրեն կը թոյլատրէ ազգային առաջնորդարանի սնտուկէն 25 ե. գիպտական ոսկի տրամադրել փաստաբանի մը՝ գատավարութեամբ պատժել տալու համար իր կողմէ կասկածելի նկատուած անհատները, իբր «Հնչակեան» խաչիկ Ցովհաննիսեանը ծեծողներ:

ՀԱՅԵՐԸ ԿԸ ՄԵՂԱԴՐՈՒԻՆ ԻՐ ՀԱՄԱՅՆԱՎԱՐ

Պէյրութի մէջ համայնավարական թռուցիկներ փակցուած են պատերուն վրայ: Ոստիկանութիւնը շուտով տեղեկացած եւ ժողված է զանոնք, որոնց վրայ հովանաւոր պետութեան հասցէին ուղղուած անարգական տողեր գրուած էին: Թուղթիկը ուղղուած էր գործաւոր եւ արհեստաւոր հասարակութեան եւ ստորագրուած «Երրորդ Միջազգայինի ենթակայ Սուրիոյ բոլշեւիկ կուսակցութեան կեդր. վարչութիւն»:

Բայց Ցովհաննէս Աղասեան անուն Հայ մը, որ շատ ուշ մնացած էր փակցնելու համար թռուցիկները, ոստիկանութեան կողմէ ձերբակալուած է եւ գրաւուած են իր մօտ գտնուող թռուցիկները:

Ցովհաննէս յայտարարած է որ ինք չէր գիտեր թէ՝ անոնք վնասակար թուղթեր են եւ ինք կարծած է թէ՝ վաճառականական ակիշներ են անոնք: Նմանապէս ըսած է որ ինք 100 Ս. Դ վարձք առած է զանոնք փակցնելու համար:

Ահա այս դէպքը նորէն բաւական ըսի ըսաւներ ստեղծեց եւ Հայոց վրայ յարձակելու առիթներ տուաւ: Ցեղական թերթերէն ոմանք ուղղակի Հայերուն կը վերագրեն հեղինակութիւնը այս թռուցիկներուն:

«Էլ Պայրագ» սակայն դիտել կուտայ թէ այդ թռուցիկներուն արաբերէն գեղեցիկ եւ անխառն շարադրութիւնն ու ուղղագրութիւնը ցոյց կուտան որ ասոր հեղինակները չեն Հայերը, այլ անոնք միայն գործիք եղած են:

ՌՈՒՍԻԱ

ԹԻԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ...

Այս բառով միայն կարելի է ներկայացնել այն վիճակը, ուր կը գտնուին կարմիր դրախտին աշխատաւորները, որոնք կոչուած են լրացնելու «Հնգամեայ ծրագիրը»: «Սոցիալիստիչէվսքի վէստնիկ» թերթին թղթակիցը կը գրէ (12 յուլիս) թէ Ռուսիոյ ամենամեծ գործարանին մէջ (Սարատով) գումարուած բանուորական ժողովի մը ընթացքին, տեսնուեցաւ որ ճարտարարուեստական բոլոր «Հնգամեայ ծրագիրները», ներկայ ընթացքով յոյս չեն ներշնչեր, որ իրագործուին: Այս պատճառով, որոշուեցաւ ձեռք առնել հերոսական միջոցներ, «ծուլացող» գործաւորներուն ի քննութիւն՝ ղրկել երեք հոգինոց մարմիններ (տրոյքա):

Այսպիսի տրոյքայի մը գլուխը անցած, կոմունիստ կեդրոնական դէմք մը, Պոլովսկի, քննութիւն կը կատարէ նաեւ Սարատովի մէջ, եւ անմիջապէս կը ձերբակալէ գործարանին տնօրէնը, ճարտարագէտը եւ վարչական քանի մը պաշտօնեաներ: Ցետոյ հրաման կուտայ, որ գործարանը բանի տասը ժամ անընդհատ *Բայց որպէսզի «Հնգամեայ ծրագիրը» իրագործուի անպայման*, այս կարգադրութիւններէն յետոյ կարդաց ճառ մըն ալ, որ ահաւասիկ.

— «Այս թերութեան պատճառը այն է, որ բանուորները կը պահուըտին եւ իրարու կռնակի եռեւ ծածկուելով չեն աշխատիր, առանց տեսնուելու հսկիչ խումբէն:

Ոչ խիղճ, ոչ գթութիւն, եւ ոչ ոքի համար: Անոնք, որ չեն ուզեր քալել մեզի հետ, պիտի ստիպենք որ քալեն մեզի հետ առանց իրենց կամքին: Այլապէս շատ գէշ պիտի ըլլայ անոնց վիճակը: Ամէն քաղաքի համար նշանակուած են «Տրոյքա»ներ, որոնք պիտի հըսկեն թէ հնգամեայ ծրագիրը յաջողութեան ճամբուն մէջ է: «Տրոյքա»յին մէջ կը գտնուի նաեւ չեկայի անդամ մը: կը յայտարարեմ ձեզի՝ թէ մենք կ'աշխատինք գործակցութեամբ չեկայի, որ մեզի կը խոստանայ լուրջ օժանդակութիւն մը: Ամէն բանուոր, որ չի լրացներ իրեն քաժին ինկած աշխատանքը, պիտի վտարուի կուսակցութենէն եւ գործարանէն: Ոչ մէկ զգացում կրնայ արգիլել մեզ, մենք այլեւս հասած ենք շրջանի մը, որ տարբերութիւն չունի պատերազմի շրջանէն: Պիտի կրճատենք օրավարձը, բայց պիտի աւելցնենք աշխատանքը:

Ես ձերբակալեցի Լենինի գործարանին մէջ խումբ մը բանուորներ, որոնք չէին գիտեր աշխատիլ: Երկաթուղիի բանուորներէն ալ մաս մը ձերբակալուած են արդէն: Անոնց հաշիւը թող չեկան տեսնէ: Եթէ տեսնեմ, որ տակաւին չաւելնար արտադրութիւնը, պիտի ձերբակալել տամ նորեր: Անցա՛ժամանակը, երբ մարդիկ կ'աշխատէին երգելով ու խաղալով: Պէտք է աշխատիլ այնպէս ինչպէս կը հրամայենք»:

Կատարեա՛լ թիապարտութիւն:

ՁԱՓՈՆԻ ՄԷՋ ՓԱԹՈՐԻԿ

Բուռն փոթորիկ մը հսկայ աւերներ գործեց Ճափոնի մէջ: Նակազաքի քաղաքը որ կը գտնուի կուիշիու կղզիին մէջ, ամէնէն աւելի վնասուած է. Հարիւրաւոր անհետացածներէ զատ, կան 70 մեռեալներ, 700 անձեր վիրաւորուեցան, 4000 տուներ քանդուեցան ամբողջ, իսկ 13,000 տուներ՝ մասամբ: Հարիւրաւոր նաւեր ընկղմեցան:

Որովհետեւ հաղորդակցութեան միջոցները խզուած են, դեռ յայտնի չէ թէ ի՛նչ վնասներու ենթարկուած է Քորէան, ուր փոթորիկը գործեց ամենամեծ սաստկութեամբ:

Վերջերս, Քորէայի մէջ պատահած ողողումներու ընթացքին պաշտօնական վիճակագրութիւն մը ցոյց կուտայ 258 մեռեալ, 155 անհետացած, 5400 վիրաւոր եւ 20,000 բնակարաններ քանդուած:

ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

Ամերիկեան Խորհրդարանի յատուկ յանձնախումբին առջեւ, Նիւ Եորքի Խորհրդ. առեւտրական ներկայացուցչութիւնը ամբաստանուեցաւ իբրեւ Միացեալ Նահանգներու մէջ, բոլշեւիկեան պրոպագանդով զբաղող մարմին:

Նիւ-Եորքի քաղաքական ոստիկանութեան պետը, որ ժամանակէ մը ի վեր պրպտումներ կը կատարէր, գոյց տուաւ փաստաթուղթեր որոնցմով կը հաստատուի թէ համայնավարները դաւեր սարքած են, տապալելու համար Ամերիկայի ներկայ կառավարութիւնը:

Խորհրդ. Առեւտրական ներկայացուցչութիւնը կը բողոքէ այս մեղադրանքներուն դէմ:

Ամերիկայի համայնավար շարժումին տրուած նպաստը բարձրացած է 80,000 տոլարի:

ԱՆԴՐԱՆԻԿԻ ՅՈՒՇԵՐԸ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

Ես հասեր էի Տաւրընի: Հրացաններու ձայնը դադրեցաւ եւ զօրքի մի մասը սկսաւ վերադառնալ: Ես ըսի թէ՛ ժողովուրդն թէ՛ զօրքը կոտորուեցաւ. Տղե՛րք, զօրքը կոտորուեցաւ կը դառնայ յետ»: Կռիւը տեւեց երեք քառորդ ժամ: Բուլանըխի Գէորգին կը սպաննեն Բէսրէ Տովիտի քով: Սեդրակի հրացանը կ'աւրուի, կը մնայ բուլի մը տակ, զօրքերը չեն տեսներ որ Մշեցի Փոթիկեան Արամը հրացանը տեղ մը կը պահէ եւ կը փախնի. կը հանդիպի հիւրտի մը, քիւրտի թուրը առնելով կ'առնէ եւ առանց նրան սպաննելու, թուրն ալ կը նետէ եւ կը փախնի ինքը: Քիւրտը վեր կ'ելլայ կը վերցնէ թուրը ու կ'երթայ:

Օր մը այդ հրացանը Տովիտի քերը զտեր էին եւ բերեր տուեր Պ. Վահանին: Փոթիկեան Արամը մոռցեր էր պահած տեղը:

Զըքօն եւ Մխօն Խոշոքայ տակը սպաննուած են: Սերոբի տղան Յակոբը Ռաշընկու վրեժը սպաննուած է: Սողոն ալ մի ուրիշ տեղ էր զարնուեր: Սերոբը առաջ վիրաւորուեր էր ոտքէն: Սօսէն վրան կ'երթայ ու կուգայ: Հեռուէն զօրքերն ու քիւրտերը կը նկատեն, որ էդ է Սերոբը, զալպերը կը խփեն եւ Սերոբը կը սպաննուի: Հասօն ալ հէնց էդ րոպէին կը զարնուի:

Այդ բոլորը տեսեց, ինչպէս ըսի, երեք քառորդ ժամ: Սերոբի գլուխը կը կտրեն, Սօսէն կը նատեցնեն ձիու մը վրայ, Սերոբի գլուխը կը վերցնեն հետերնին ու կը դառնան Մուշ: Սօսէն կը տանին Գեղաշէն: Մատնիչ Աւոյի կինը կ'ըսէ. «Դուն էիր լուրը բերողը մեզի, Հայաստա՞նը պիտի ազատէիր»: Սօսէն ստացած էր խանչալի երկու փոքրիկ վէրք: Ձիու իլարը կուտան մշեցի Նազարին, որ քաշէ, կը տանին Խասգիւղ, Խասգիւղէն Բաղէշ:

* * *

Ես այդ կռուի ժամանակ առանց գէնքի առաւօտուանից քալելով երկու ընկերոջ հետ, երեկոյեան ժամ հասայ Եղգարդ եւ Սպաղանք: Ըսի թէ՝ «կռիւ կայ Սերոբի վրայ, շուտ հասէք»: Հոն կար կանոնաւոր զէնք եւ փամփուշտ: Լուրը յետեւիցս եկաւ, թէ ամէն բան վերջացաւ: Հէնց էն ատենը, երբ հրացաններու ձայնը դադրեց՝ ամէն բան վերջացեր էր:

Սերոբի եղբայր Մխոյի կինը այդ ատենները Ախլաթէն եկած էր Սասուն: Նա հաղած էր սասունցի կանանց շոր եւ ազատած էր Սերոբի փոքրիկ երեխան: Յարութիւնն ու Սեդրակը երեխան շալակեցին բերին Սպաղանք:

Սերոբի մնացած ընկերները զանազան տեղեր կը փախչին եւ կ'ազատուին: Փախողները արդէն կռուող մարդիկ չէին, նոր 23 ամսուան եկած էին Սերոբի քով:

Այդ կռուին սպաննուեցան ութը ընկեր եւ վիրաւորուեցաւ Թշնամու կողմէն միայն մի զօրք, այն ալ առողջացաւ: Այդ օրը սպաննուան նաեւ Կէլիկուզանի Տէր-Քաջ քահանան, Քուռօ պապ Գէվոն: Զօլօ-Դօնէն վիրաւորուած էր թեւէն, վերջը առողջացաւ:

Կէլիկուզանի տաւարն ու ոչխարը տարեր էին Թալան:

Այդ օրը ոչ մի սասունցի կռուին չէր մասնակցած: Զէին հասեր նաեւ Դաշտի մեր չորս ընկերները:

Եթէ մեր ձեռքը զէնք ըլլար, երբ զօրքերը Մճերնին եկան՝ մենք կը զարնէինք եւ կ'արգիլէինք զօրքը Սերոբի վրայ գընալուն: Զօրքը պիտի կարծէր թէ Սերոբը հող էր, կռիւը հող պիտի ըլլար. Սերոբը պիտի հեռանար ազատուէր. շատ կարելի է ընկերներս ալ փախչէին ազատուէին, իսկ ես հիւանդ ըլլալուս պատճառաւ՝ կը սպասնուէի:

Երբ հրացաններու ձայնը եւ լաւ, Յարութիւնը վերցրեց չախմախլըն եւ ինց ժողովրդի մէջ, իսկ մենք արտասուք թափելով հեռացանք:

Մենք այն հաւատքն ունէինք Սերոբի եւ այդ քանի մը կռուող ընկերներու վրայ, որ այդ դիրքերն ունենալով պիտի կռուէին եւ ազատուէին: Բայց բան մը դուրս չեկաւ, որովհետեւ հիւանդ էին: Սերոբը կնոջ պատճառաւ չէր ուզեր մեն գալ. ուր որ երթար, անպատճառ ամիս երկու ամիս պիտի հոն մնար: Կռուից առաջ երկուքուկէս ամիս մնացեր էր Կէլիկուզան: Ամէն մարդ գիտէր նրա հոն ըլլալը:

Վերջին ժամանակները Սերոբը Սպաղանք եկած էր: Կէլիկուզանի քեաթիբ Կիրակոսը նամակ մը գրած էր, թէ «պատրոն, զօրքի, աշխրի ժամանակ պահեցինք, հիմա երբ էդոնք գնացին, գնացիր, հեռացար, խաղողը մինակ կ'ուտես»: Նամակին տակը զրեր էր իր ստորագրութիւնը, նաեւ գիւղի իշխաններու անունները:

Գիւղացիք տեղեկութիւն չունէին այդ նամակէն: Ինոնք վերջին ատեն կ'ըսէին. «Ա՛յ տղայ, մենք քեզ ինչ ատեն նամակ գրել տուինք, որ առանց մենէ հարցնելու մեր անունները գրեր ես նամակիդ տակ»:

Այդ նամակի պատճառով՝ Սերոբը՝ 4 օր Սպաղանք մնալով կը վերադառնայ Կէլիկուզան:

Չանցած չորս օր, Սպաղանքէն վերադառնալուց՝ պատահեցաւ այդ ճակատագրական կռիւը (1899ի աշնան):

Այդ նամակի նպատակն էր Սերոբին Կէլիկուզան պահել, որովհետեւ Սպաղանք հեռու ըլլալով, մինչեւ զօրքը հոն հասնէր՝ հարիւր մարդ լուր տարած կ'ըլլար Սերոբին: Այդ կիրակուան այդ ժամանակ եւ մինչեւ օրս ալ բարեկամ էր փոխս Հիւանի էֆէնտիին:

(Շար.)

Հնդկայիներեան Քաղաքական դատ մը

Սայկոնի ոճրագործ ատեանը այս շաբթու դատեց «գաղտնի ընկերակցութեանց» գործը, որուն մէջ կը մեղադրուէին 40 անձեր, պետութեան դէմ դաւադրութեան ամբաստանութեամբ։

Բոլոր ամբաստանեալները կը պատկանէին դաւադրական գաղտնի կազմակերպութեանց, որոնք զանազան անուններով եւ բոնի միջոցներով, կը ձգտէին յեղափոխական շարժում մը գրգռել, ընդդէմ ֆրանսական կառավարութեան։ Անոնցմէ շատերը կապ ունէին Քանթոնի համայնավարներուն հետ։

Դատարանը՝ ամբաստանեալներէն երեքը դատապարտեց մահուան, չորսը տաժանակիր աշխատութեան, եւ մնացեալները բանտարկութեան՝ զանազան տեւողութեամբ։

Կուէպովի դէպքը կը կրկնուի

Գերման թերթերը կը յայտնեն թէ, Համպուրկի մէջ յանձնակատարութեամբ եւ փոխադրութեամբ զբաղող ռուսական կարեւոր տան մը մէկ պաշտօնեային զաւակը Շէնհոլտ, 18 տարու, առեւանգուած է Չեկայի գործակալներուն կողմէ եւ բոնի փոխադրուած նաւ մը, որ անմիջապէս խարիսխ վերցուցած եւ մեկնած է դէպի Ռուսիա։

Զոհին հայրը, որ ռուսական դատարաններուն կողմէ, ի բացակայութեան մահուան դատապարտուած է, ոչ մէկ լուր ունի իր զաւկէն։

Գերման ոստիկանութիւնը քննութիւն բացաւ եւ ձերբակալումի մըն ալ կատարեց։

Սակայն, Պերլինի Ս.դեսպանատան մամուլի դիւանը կը յայտնէ թէ Շէնհոլտի հայրը մահուան չէ դատապարտուած, այլ անոր զաւակը կամովին հեռացած է հօրը տունէն։

Ռումեն նախարար մը վիրաւորուած

ՊՈՒՔՐԷՇ, 21 Յուլիս.— Զորս ուսանողներ ծագումով Մակեդոնացի, ներկայացան ներքին փոխ-նախարարին Անկելէսքոյի, յիշատակագիր մը ներկայացնելու պատրուակով։

Այն պահուն որ նախարարը կը սկսէր կարդալ յիշատակագիրը, ուսանողներէն մէկը հինգ ձեռք ատրճանակ պարպեց անոր վրայ, զայն վիրաւորելով դէմքէն, կուրծքէն, ուսէն եւ բազուկէն։ Ծանրօրէն վիրաւոր, նախարարը կրցաւ ոճրագործը հալածել եւ զգետնել, արգիլելով զայն նորէն կրակելէ։ Ուսանողները ձերբակալուած են։ Քննութիւնը երեւան հանեց թէ ոճրին պատճառը վրէժխնդրական է։ Անկելէսքօ որ Տոպրուճայի Քալեաքտա նահանգին գիւղացիական կուսակցութեան նախագահն է, ուսանողներուն կողմէ կը նկատուի գլխաւոր պատասխանատուն սեփականութեան վերաբերեալ օրէնքի մը։ Այդ օրէնքը ուանց վնաս պատճառելու Տոպրուճայի մէջ հաստատած մակեդոնական գաղութի շահերուն, գոհացում կուտայ նոյն տեղի պուլկար եւթուրք բնակչութեանց։

Ի՞նչպէս կարգի կը բերեն

Պերլինի Ս.-Դ.ներու թերթը կը գրէ թէ անցեալ ամիս, քիչ մնաց որ այլանդակ գործադուլ մը պայթէր Խորհրդ. Միութեան մէջ։ Հարիւրաւոր աշխատաւորներ, նեղսրտած ամէն տեսակ զրկանքներէ, ուտելիքի անկանոն հայթայթումէն, սովէն եւլլն, վերջնագիր մը ուղղեցին կառավարութեան. ու պահանջեցին որ բաւարար քանակութեամբ օտար արտադրութիւններ հայթայթեն իրենց։ Գործադուլը տեղի չունեցաւ, որովհետեւ կառավարութիւնը տեղի տուաւ, այն պատճառով որ բոլոր բողոքողները ամերիկացի ճարտարագէտներ եւ մասնագէտ-գործաւորներ են, որոնք մեծ թիւ մը կը կազմեն Խորհրդ. Միութեան մէջ։

Գայթակղութեան առարկայ եղած կառավարութիւնը տեղի տուաւ եւ հիմա. օտար աշխատաւորներու պարենաւորումը կը կատարուի Աշխատանքի գործավարութեան մասնաւոր շտեմարաններուն կողմէ, որոնք ուզուած ապրանքները կը գնեն արտասահմանէն եւ կը ծախեն Ամերիկացիներուն։

Ռուսիա եւ Համերոպա

Չի կարծուիր թէ Խորհրդ. Միութիւնը պատասխանէ Համբերոպայի ժասինՊրիանի յիշատակագրին, որ իրեն հաղորդուած է առ իգիտութիւն, առանց աշխատանքներուն մասնակցելու հրաւէրի։ Այսու հանդերձ, Խորհրդ. Միութեան հակառակութիւնը հանդէպ ծրագրին, արդէն կը յայտնուի յստակ կերպով։ Խորհրդ. Միութիւնը անոր մէջ կը տեսնէ իր դէմ ուղղուած դաշնակցութիւն մը եւ արդէն կը յայտնէ թէ համերոպական որ եւ է միութիւն կարելի չէ, քանի պետութիւնները բաժնուած են հարստահարող եւ հարստահարեալ դասակարգերու։

Սակայն, ստոյգ աղբիւրէ առնուած լուրերու համաձայն, կ'ըսուի թէ ժրնեւի նստաշրջանին բացումէն առաջ, Մոսկուա յայտարարութիւն մը պիտի ուղղէ փոքր պետութեանց, անոնց յայտնելու համար թէ միայն Խորհրդ. Միութիւնը կրնայ զիրենք պաշտպանել մեծ պետութեանց ոտնձգութիւններուն դէմ։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ԻՐԱՒԻ թագաւորը Ծէկսալ, Լոնտոն հասաւ երկուշաբթի իրիկուն եւ ընդունուեցաւ Անգլիոյ թագաւորին ներկայացուցիչին կողմէ։

ՄԱՀԱԹՄԱ ԿԱՆՏԻ, Հնդկաստանի փոխ-արքային արտօնութեամբ, բանտին մէջ տեսակցութիւններ ունեցաւ հնդիկ պետերու հետ։ Երկարօրէն խորհրդակցեցաւ Հնդկաստանի ներկայ կացութեան եւ ձեռք առնուելիք միջոցներուն մասին. տեսակցութեան արդիւնքը դեռ անձանօթ կը մնայ։

ԱՄԵՐԻԿԱ կը խեղդուի տիրող տաքէն։ Շաբաթ օր 54 տարիէ ի վեր չտեսնուած տաք կը տիրէր Նիւ Եորքի մէջ՝ ջերմաչափը բարձրացաւ 35 սանտիկրատի։ Հարիւրաւոր անձեր գիշերեցին բացօթեայ, ծովեզերը կամ լոգարանին մէջ, չխեղդուելու համար։ Զանազան վայրերու մէջ տաքէն մեռած են 24 անձեր։

ՀԱՅԻՆ ՔԻԼՕՆ Փարիզի մէջ բարձրացաւ 2 ֆր. 25ի, ցորենի եւ ալիւրի գիներուն յաւելման պատճառով։

ՆԱԽԱԳԱՀ Հինտէնպուրկ արդէն երկու օր է որ սկսած է այցելել Հոհենոսեան ազատագրուած երկիրները, ուր մեծ խանդավառութեամբ կ'ընդունուի ժողովուրդին կողմէ։

Պերլինէն կը հաղորդեն թէ կարգ մը վայրերու մէջ, անջատողականներու ղէմ ցոյցերը կը շարունակուին։

Հ. Յ. Դ. ՓԱՐԻԶԻ ԿՈՄԻՏԷՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԶԱԿԱՆ

ժողովի կը հրաւիրէ բոլոր խումբերու ներկայացուցիչները այս ուրբաթ իրիկուն ժամը 8.30ին Chope Parisienneի վերնայարկը, 64 Rue des Ecoles.

Հ. Յ. Դ. ԼԻՈՆԻ ՇՐՋ. ԿՈՄԻՏԷՆ ԺՈՂՈՎԻ ԿԸ ՀՐԱՒԻՐԷ

ՀԵՏԵԻԵԱԼ ԹՈՒՄԲԵՐԸ

ԿԱՅԾԱԿ.— Այսօր Զորեքշաբթի իրիկուն ժամը 9ին Գրադարանի սրահը։

ՔԵՌԻ.— Այսօր Զորեքշաբթի իրիկուն ժամը 9ին Ճանկէօզեանի ճաշարանը։

ՎՐԻԺ.— 25 Յուլիս Ուրբաթ իրիկուն ժամը 9ին, Գրադարանի սրահը։

ԲՐԻՍՏԱՓՈՐ.— 25 Յուլիս Ուրբաթ իրիկուն ժամը 9ին Նիկողոսեանի սրահը։

Բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտադիր եւ անհրաժեշտ է։

ՄԱՐՍԷՅԼԻ ԿՈՄԻՏԷՆ ԺՈՂՈՎԻ ԿԸ ՀՐԱՒԻՐԷ

Ռոստոմ, Քրիստափոր եւ Իշխան ենթակոմիտէները վաղը Հինգշաբթի, իրիկուն ծանօթ հաւաքատեղին։

Խիստ կարեւոր օրակարգ։

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ԽԱՆԱՍՈՐԻ ՏԱՏԵՂԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԱՐՂՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԻՆ ԿՈՂՄԷ

Այս կիրակի Շավիլի անտառին մէջ

կը նախագահէ ԸՆԿ. ԳԻՒԼԲԱՆԴԱՆԵԱՆ

ՌՈՍՏՈՄԻ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ ԵՒ ԲԱԺԱԿԻ ՄՐՑՈՒՄԸ

Այս կիրակի Սէն Քլուի անտառը առաւօտէն մինչեւ իրիկուն

կը նախագահէ Պ. ՎԱՀԱՆ ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆ

կը խօսի՝ Պ. Մ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Պարեր եւ անակնկալներ, ճոխ պիւֆէ մատչելի գինով

Բաժակի մրցման կը մասնակցին Սարսէլի, Իթալիի, Սէվրանի եւ Շավիլի խումբերը։

Ժամադրավայրը Pavillon Bleuի (Սէն Քլուի) առջեւ ժամը 9ին։ Առաջնորդներ պիտի սպասեն ժամը 9—3

Մամուլի տակ է եւ շուտով լոյս կը տեսնէ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԳՈՐԾԸ

"ԻՄ ԳԻՐՔԸ", Բ. ՀԱՅՈՐ (ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻԻՆ)

Ա. հրատարակութիւն ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ ԳՐԱՏԱՆ

Գ Ի Ն 20 Ֆ Ր Ա Ն Ք

ՕԳՏՈՒԵՑԷՔ ԱՌԻԹԻՆ.— Մինչեւ 30 Յուլիս

30 Ֆրանք կանխիկ վճարողները կը ստանան Ա. եւ Բ. հատորները միասին։

Այժմէն կարելի է դիմել Librairie H. SAMUEL, 51 Rue Monsieur le Prince, Paris (VIe), Հեռաձայն՝ Danton 88-65։

Հայերէն եւ ֆրանսերէն ամէն տեսակ գիրքեր, բառարան, գրական, վիպական, պատմական եւ դպրոցական գործեր։

Վերջին կատարելագործութեամբ օժտուած կազմատուն։ Արագ եւ մաքուր աշխատանք։ Գիրքերու ՎԵՐՆԱԳԻՐԸ ոսկեթիպ։

Կը ստանձնենք տպագրական ամէն տեսակ գործեր։



Հ. Յ. Դ.

ԳԱՐԱՂ

ԼԻՈՆԻ Պատ. միութեան ընդհ. անդամականժողովը՝ վաղը Հինգշաբթի իրիկուն, ժամը 8.30ին, Գրադարանի սրահը։ Ներկայանալ անդամատետրով։

ԼԻՈՆԻ Վրէժ խումբի ժողովը վաղը Զորեքշաբթի իրիկուն ժամը 8.30ին Գրադարանի սրահը։

ՄԱՐՍԷՅԼԻ Ռոստոմ ենթակոմիտէի ընդհ. ժողովը՝ այս Ուրբաթ իրիկուն ժամը 8 30ին սովորական հաւաքատեղին։ Բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտաւորիչ է։

ՌՈՍՏՈՄ Գրադարանը փակ է Օգոստոս1 — Սեպտեմբեր 1։ Իրենց ժամ գիրք ունեցողներէն կը խնդրուի շուտով վերադարձնել գիրքերը։

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դ. Վիէնի կոմիտէն եւ իր խումբերու բոլոր ընկերները ցաւակցութիւն կը յայտնեն ընկ. Յովհ. Ուզունեանի իր տիկնոջ ՎԵՐԳԻՒԼԻ ՈՒԶՈՒՆԵԱՆի դառնագէտ մահուան առթիւ։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՖՐԱՆՍԱՅԻ «Հայ Սկաուտներ» միութեան Մարսէյլի մասնաճիւղը հաւաքոյթի կը հրաւիրէ իր գալուկներն ու արձանագրուիլ փափաքողները վաղը առաւօտ ժամը 9ին, 90 Rue Stanislas Torrents.

EMPIRE Միւզիք-Հոլ՝ 37 Av. Wagram

ՀՐԱՊԱՐԱԿ ԵԼԱՒ

ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆԻ Նոր գիրքը

ԲԱՆԱՍՏԵՂԾ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ (իր գրական գործունէութեան քառասնամեայ յոբելեանի առթիւ)։

Դիմել՝ L. Kévonian, 235. Fbg. St Martin: Գինը 5 ֆրանք, փոստի ծախք չկայ

Կ'ուզուի վարպետ գործաւոր մը, որ գիտնայ կօշիկի նորոգութեան վերաբերեալ բոլոր մանրամասնութիւնները։ Ֆրանսերէն խօսիլը պարտաւորիչ է։ Լաւ պայմաններ։ Դիմել՝ Crepocuire, 71 Rue Rébéval, Belleville.

Կ'ուզուի հաւաքածոյի համար ընդհանուր պատերազմի միջոցին հրապարակ հանուած թերթական թղթադրամներ։ Դիմել՝ 4 Rue Pinel. Paris (13).

Ծախու է մեկնումի պատճառաւ դերձակի վերաբերեալ իրեղէններ (մեքենայ, սեղան եւլլն)։ Դիմել Պ. Յ. Ճէրմանեանի, 41 Rue Boucherie, Paris (5)։ Մէթրօ Մէն Միշել։

Վարձու է 100 քառ. մէթր տարածութեամբ լուսաւոր եւ օդասուն արհեստանոց մը որ ունի նաեւ երկու սենեակ, խոհանոց, լուր, կազ, ելեկտրականութիւն։ Յարմար ամէն գործի։ Պայմաններու մասին դիմել Պ. Մ. Աղաբէկեանի, 35 Rue Emile Desveaux, Մէթրօ՝ Place des Fêtes.

ԿԸ ՓՈԽԱՆՑՈՒԻ ԲՆԱԿԱՐԱՆ ՄԸ

2 սենեակ, entrée եւ խոհանոց, օդաւէտ, կեդրոն տեղ, մաշէի մօտ, Port de St. Cloudէն *8 վայրկեան։ Դիմել ամէն օր* Billancourt, 1 Rue Liot *4րդ յարկ (աջ) Լ. Սուրէնեանի, առանց հանդիպելու քոնսիէրժին։*

Ծախու է մեկնումի պատճառաւ դերձակի վերաբերեալ իրեղէններ (մեքենայ, սեղան եւլլն)։ Դիմել Պ. Յ. Ճէրմանեանի, 41 Rue Boucherie, Paris (5)։ Մէթրօ Մէն Միշել։

Վարձու է 100 քառ. մէթր տարածութեամբ լուսաւոր եւ օդասուն արհեստանոց մը որ ունի նաեւ երկու սենեակ, խոհանոց, լուր, կազ, ելեկտրականութիւն։ Յարմար ամէն գործի։ Պայմաններու մասին դիմել Պ. Մ. Աղաբէկեանի, 35 Rue Emile Desveaux, Մէթրօ՝ Place des Fêtes.

ՏՕՔԹ. ՄԻՀՐԱՆ Կ. ՔԷՇԻՇԵԱՆ

Նախկին բժշկապետ մերսինի Ֆրանս. հիւանդանոցին։ Պատուոյ մէտալ Ֆրանսայի Առողջ. նախարարութենէն

Կ'ընդունի ամէն օր բացի Կիրակիէ-ը 10էն 12եւ ժամադրութեամբ։ 134 Rue Blomet, *Բէօնթկէնեան հաստատութեան մէջ։ Կը կատարէ ճառագայթներով ամէն կերպ քննութիւն, շողանկարում* (radiographie), *գերմանիշ ակագոյն, յետկարմրագոյն եւ բէօնթկէնեան դարմանում* (radiothérapie profonde), *ՏԻԱԹԵՐՄԻԻ բոլոր կիրառումները եւ ելեկտրաբուժական բոլոր ձեւերը որ բազմաթիւ հիւանդութիւններու դարմանման լաւագոյն ազդակներն են։*

Թոքախտաւորներու pneumothoraxի *գործողութիւն, մանուկներու։*

Զղայնային եւ հոգեկան կարգ մը հիւանդութիւններու դէմ թելադրական, քնէածական եւ ֆէօտեան մէթոտներ։

Որպէս ներքին հիւանդութեանց մասնագէտ, կ'այցելէ նաեւ տուներու։

Հասցէ՝ 134 Rue Blomet, Laboratoire de Radiologie. Métro Convention, Autob. X. եւ AG.

Հեռաձայն՝ Vaugirard 29—55, 47—86.

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ PRINKIPO

VERTANÈS MAHDJOUBIAN et A. VITCHEN

24 Rue des Carmes, Paris (5) մէթրօ՝ Place Maubert

Մնամքով պատրաստուած արեւելեան և եւրոպական ամէն տեսակ կերակուրներ ամէն ժամ։ Մասնաւոր կերպով պատրաստուած տէօնէր-քէյթըրինկ։

Այցելեցէք, համոզուելու համար։ Հարսնիքի, ժողովներու, հաւաքոյթներու եւլլնի համար տրամադրելի սրահ։

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

ՃԱՇԱՐԱՆ ՖԼՕՐԻԱ

61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)

Մէթրօ Օտէոն եւ Սէն Միշէլ Հեռաձայն Littré 38—4

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ



Նրբաճաշակ տիկիններ

Մի մտահոգուիք թէ ձեր հագուստները ո՞վ պիտի կարէ ո՞վ ձեզ լիովին պիտի գոհացնէ։ Դիմեցէք B. Jaret Ֆիրմայի հայկական հաստատութեան որ մեծ խնամքով կը պատրաստէ ձեր փափաքածներէն տեսակ հագուստները՝ ղեկավարութեամբ ծանօթ վկայեալ դերձակուհիի եւ ՀՆԱՐՈՂ ՄՕԴԵԼԻՍՏ տիկնոջ։ Ցասմիկ Դաւիթօֆի։ Բաց աստի հոն կը գտնէք ամենավերջին նորաձեւութեամբ պատրաստուած հագուստներ անհաւատալի գիներով։ Շատ դիւրին, 4Rue de la Collegiale (86 Bld. St. Marcel). Métro Gobelinsէն 40 քայլ։

Թ. ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ

31 Ave. des Gobelins. Paris (13) Մէթրօ՝ Gobelins

Արեւելեան եւ եւրոպական նպարեղէններ՝ լաւ եւ ածած

Ապսպրանքները կը յանձնուին տուները

Գ. ԾԷՔԷՐԵԱՆ

փաստաբան Պոլսոյ Պաւոյէն, վաւերացեալ հաշուակալ, անդամ Société des Comptables (E. C. I.),

150 Rue du Fbg. St. Denis, Paris. Téléphone: Trudaine 76-

ԿԸ ՍՏԱՆՁՆԵՄ այցելու տոմարակալութիւն փոքր ամսավճարով։

ԿԸ ԿԱՏԱՐԵՄ Régistre du Commerce, Patente, Chiffre d'affaires, Bénéfices Commerciaux *և* Impôts sur le revenu *գործողութիւններ։*

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ԿԱԶՄԵՄ ԵՒ ԿԸ ԼՈՒԾԵՄ

Կրնամ ձեզ ղերծ պահել Chiffred'Affaires *եւ* BénéficesCommerciaux *տուրքերէն երթէ արշխատաւոր էք, ղոր օրինակ* Lapidaire, Sertisseur, monteur de bijoux, lingère, *շապկագործ, ժամագործ, դերձակուհի, կօշկակար, առաղաձագործ, եւայլն, պայմանաւ որ ձեզմէ եւ ձեր տանիքի անդամներէն զատ մէկ գործաւոր եւ մէկ* apprenti *նեղնաք։*

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՈՒՀԻ

STUDIO D'ART MANOUK

Մարսէյլի գեղարուեստական լուսանկարչատունը՝

116 La Canebière

ուր պիտի գտնէք արուեստի կատարեալ բաւարարութիւն, ինչպէս նաեւ ամառնային բացօդեայ ժամանցներու համար ընտիր մեքենաներ ամէն պիտոյքներով։ Վճարումներու դիւրութիւն։ Ցափաւոր գին։

ՄԱՆՈՒԿ ՄԱՐԿՈՍԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՈՒՀԻ

96 r. Rivoli, *մէթ.* Շաթլէ։ *Մ. եւ նոր մեթոտով դարմանումը եւ կանանց մորթի, արիւնի եւ հիւանդութեանց (ֆրանկոֆոն մամիզ.) եւ վարիկ։ Մասնաւոր աթոռաւոր։ Ազատիտ եւ արագ հրդացկութիւն։ Ամէն օր 9—12, եւ ուրբաթ օ—19։*

IMPRIMERIE - MASSIS - ED.

208bis, Rue Lafayette Paris

Le Gérant H. STEPHA

ՅԱՌԱՋ

LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԲԱԺԱՆԵԳԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70ֆ.	140ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ԵԳԻՊՏՈՍ	»		»
ԻՏԱԼԻԱ	250 ֆրանք		
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200ֆ.	

"HARATCH"

Directeur-Propriétaire
SCH. MISSAKIAN
Խմբագիր՝
Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Rédaction et Administration
Խմբագրութիւն եւ վարչութիւն
235, Faub. St.-Martin
PARIS (10e)

MÉTRO: LOUIS-BLANC OU JAURÈS
Téléphone : NORD 67-23
R. C. SEINE 376.286

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 3 ֆրանք

ՀԻՆԳՇԱԲԹԻ 24 ՅՈՒԼԻՍ 1930
24 JUILLET 1930

Զ. ՏԱՐԻ Թիւ 1321 — ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ — ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԹՐՔԱԿԱՆ ՕՐԻԱՆԹԱՍԻՈՆԸ

Թրքական օրիանթասիոնի մասին ընդհանուր ճակատով մը հրապարակ եկող ռամկավար «կուսակցութիւն»ը կարող է շատ եռանդ ժամնել, յատկապէս վարկաբեկումներու համար: Թողունք որ այդ զարտուղի ճանապարհով ընթանայ, որքան հաճելի է իրեն: Բայց ամբոխավարութիւնը շլացուցիչ առաջնորդ մըն է: Ռամկավարականները ամբոխավարութեան եռեւէն վազելով, թերեւս անկախ իրենց կամքէն, ոտքով-գլխով ինկած են ընթացիկ քաղաքականութեան սահմաններուն մէջ:

ՏՕՔԹ. ՄԻՀՐԱՆ Կ. ՔԷՇԻՇԵԱՆ

Նախկին բժշկապետ Մերսինի Ֆրանս. հիւանդանոցներուն
Պատուոյ մէտալ Ֆրանսայի Ազդ. պ. նախարարութենէն

Կ'ընդունի ամէն օր բացի Կիրակիէժ.ը 10էն 12եւէժամադրութեամբ, 134 Rue Blomet, Բէօնթկէնեան Հաստատութեան մէջ։ Կը կատարէ Ռ. ճառագայթներովամէն կերպ քննութիւն,շղանկարում (radiographie), գերմանիշակագոյն, վոտ-կարմրագոյն եւ բէօնթկէնեան դարմանում (radiothérapie profonde), ՏԻԱԹԵՐՄԻԻ բոլոր կիրառումները եւ էլեկտրաբուժական բոլոր ձեւերը որ բազմաթիւ հիւանդութիւններու դարմանման լաւագոյն ազդակներն են։

Թոքախտաւորներու pneumothoraxի գործողութիւն, մասնաւոր շիջուկ եւ պատուաստ։

Չղայլն եւ հոգեկան կարգ մը հիւանդութիւններու դէմ թելադրական, քնէատեան եւ փոէտեան մեթոտներ։

Որպէս ներքին հիւանդութեանց մասնագէտ, կ'այցելէ նաեւ հիւանդներու։

Հասցէ՝ 134 Rue Blomet, Laboratoire de Radiologie. Métro Convention, Autob. X. եւ AG.

Հեռաձայն՝ Vaugirard 29—55, 47—86.

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ PRINKIPO

VERTANÈS MAHDJOUBIAN et A. VITCHEN

24 Rue des Carmes, Paris (5) մէթրօ՝ Place Maubert

Խնամքով պատրաստուած արեւելեան և եւրոպական ամէն տեսակ կերակուրներ ամէն ժամ։ Մասնաւոր կերպով պատրաստուած տէօնէր-քէպապ։

Այցելեցէք, համոզուելու համար։ Հարսնիքի, ժողովներու, հաւաքոյթներու եւալնի համար տրամադրելի սրահ։

ԽՆԱՅԵՑԷՔ ԶԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՒ ԴՐԱՄԸ

Շարիւրին 45 գեղջ ամերիկեան առաջնակարգ գրի մեքենաներու եւ հաշուեմեքենաներու։

Remington թիւ 10, 11 գին՝ 1400 ֆրանք։

Underwood թիւ 5, 12, 14 գին՝ 1800 ֆրանք։

Վճարման դիւրութիւններ։

Գիմել կամ գրել Ս. Նաւասարդեանի, 366 Rue Vaugirard, Հեռաձայն՝ Vaugirard 28—89 եւ 05—93։

Հ. Յ. Դ. ՓԱՐԻԶԻ ԿՈՄԻՏԷՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ

Ժողովի կը հրաւիրէ բոլոր խումբերու ներկայացուցիչները այսօր ուրբաթ իրիկուն ժամը 8.30ին Chope Parisienneի վերնայարկը, 64 Rue des Ecoles.

Հ. Յ. Դ. ԼԻՈՆԻ ՇՐՋ. ԿՈՄԻՏԷՆ ԺՈՂՈՎԻ ԿԸ ՀՐԱՒԻՐԷ ՀԵՏԵԻԵԱԼ ԽՈՒՄԲԵՐԸ

ՎՐԷԺ.— Այսօր Ուրբաթ իրիկուն ժամը 9ին, Գրադարանի սրահը։

ՔՐԻՍՏԱՓՈՐ.— Այսօր Ուրբաթ իրիկուն ժամը 9ին Նիկողոսեանի սրահը։

Բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտադիր եւ անհրաժեշտ է։

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ԽԱՆԱՍՈՐԻ ՏԱՏԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԱՐՂՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԻՆ ԿՈՂՄԷ

Այս կիրակի Շավիլի անտառին մէջ

Fontaine St. Marie վայրը

Կը նախագահէ ԸՆԿ. ԳԻՒԼԱՆԴԱՆԵԱՆ

Ժամը 4ին այցելութիւն ընկ. իշխան Արղութեանի գերեզմանին

Իջնել 1 թիւ հանրակառքի Chavilleի Doisu *կայարանը ուր կը սպասեն առաջնորդներ։*

"ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ,, ՌՕԱՆԻ ՄԷՋ

Հ. Յ. Դ. Ակնունի խումբին կողմէ այս կիրակի Մանրաժանութիւնները տեղւոյն վրայ

ՄՏԱ-ՀԱՁՈՒԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

Վաղը Շաբաթ իրիկուն ժամը 8.30ին Sociétés Savantesի Dսրահին մէջ 8 Rue Danton, մէթրօ՝ Ը3ն միշէլ տեղի կ'ունենայ յայտնի մտաիաշուագէտ Մուշեղ Մելիք Ցակոբեանի փորձերը։

Մելիք Ցակոբեան կարճ ժամանակամիջոցի մէջ միտքով կը կատարէ միլիոնաւոր թիւերու գումարումը, հանումը, բաժանումը եւ բազմապատկութիւնը։ Քանի մը երկվայրկեանի մէջ կը գտնէ մինչեւ հարիւր միլիոն թիւերու քառակուսի արմատը եւ մէկ միլիարդի հանող թիւերու խորանարդ արմատը։

Միտքով կը կատարէ Թուաբանական բարդ կապակցական գործողութիւններ միաժամանակ խօսելով հանդիսականներու հետ։

Հանդիսականներուն պիտի բացատրէ թէ ինչպէս կարելի է գտնել որեւէ Թուականի մը համապատասխան շաբթուան օրը։

ՄՈՒՏՔ 5 ՖՐԱՆՔ

ՅԵՏԱՁԳՈՒԱԾ Է ՌՈՍՏՈՄԻ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՎԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Գրեց՝ ՕՆ. ՄԻՒԹԱՐԵԱՆ

Դեղեցիկ տպագրութեամբ եւ 220է աւելի մեծադիր էջերով այս գիրքը կը բովանդակէ ամբողջական եւ վաւերական պատմութիւնը

ՎԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ, որուն 15 ամեակն է այս տարի,

որ մեր պատմութեան փառաւոր մէկ էջը կը կազմէ։

Հեղինակը, Ջինուորական Խորհուրդի քարտուղար, այս գիրքը կազմած է օրը օրին. 1915ի Վանի ապրիլեան կռիւներու ընթացքին։

Ֆրանսայի համար կ'արժէ միայն 20 ֆրանք

Բացառիկ պայմաններ կանխիկ *Դիմել ՅԱՌԱՋի վարչութեան*

Հ. Ց. Դ.

ՓԱՐԻԶ

ԱՆԻԼՈ-Պուա Քոլոնպի Զէյթուն ենթակոմիտէն ստիպողական ընդհ. ժողովի կը հրաւիրէ Եռագոյն, Վիշապեան եւ Փոթորիկ խումբերու բոլոր ընկերները, այս Կիրակի իրիկուն ժամը ճիշտ 8.30ին ծանօթ հաւաքատեղին։ Կարեւոր օրակարգ և զեկոյց ներկայացուցչական ժողովի։

ԳԱՒԱՌ

ՄԱՐՍԷՅԼԻ Ռոստոմ ենթակոմիտէի ընդհ. ժողովը՝ այսօր Ուրբաթ իրիկուն ժամը 8 30ին սովորական հաւաքատեղին։ Բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտաւորիչ է։

ՍԻՆ ՇԱՄՈՆԻ ենթակոմիտէի ընդհ. ժողովը վաղը Շաբաթ իրիկուն ժամը 7ին Վարուժան ակումբին մէջ։ Խիստ կարեւոր օրակարգ։ Բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ եւ պարտաւորիչ է։ Ներկաներու թիւը մնաժամանութիւն պիտի համարուի։

ՄԱՐՍԷՅԼԻ Պատ. Միութեան ընդհ. ժողովը՝ վաղը Շաբաթ իրիկուն ժամը 8.30ին, 63 Բիւ տը լա Բէփիւպլիք սրճարանին վերնայարկը։

ՌՈՍՏՈՄ Գրադարանը փակ է Օգոստոս1 — Սեպտեմբեր 1։ Իրենց ժամ գիրք ունեցողներէն կը խնդրուի շուտով վերադարձնել գիրքերը։

Հ. Ց. Դ. Լիոնի ժողովրդային Գրադարանը բաց է՝ Բշ. երեկոյները ժամը 7—8, իսկ Դշ. եշ. եւ Ուր. երեկոները ժամը 7էն 8:30։ Նոր բաժանորդագրուիլ փափաքողները դիմեն B. Sahatjianի, 262 Rue Duguesclin, Lyon.

ՑՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Ե. Ո. Միութեան Անիէռի ժողովը՝ այսօր Ուրբաթ երեկոյ ժամը 8.30ին 35 Rue Emile Zola, Պուա Քոլոնպ.

ՄԱՐՍԷՅԼԻ Հայ Լեգէոնական միութեան ժողովը այս կիրակի առաւօտ ժամը 8.30ին Rue Colbert, Bar de la Postի սրահին մէջ։

ՏԱՐՕՆ Տուրուբերանի Հայր. միութեան Տէսինի ժասնաճիւղի ընդհ. ժողովը այս կիրակի ժամը 2ին Սօսիէթէ Լիոնէզի սրահը։ Կարեւոր օրակարգ։ Պարտաւորիչ ներկայութիւն։

Հ. Ե. Ո. Միութեան Փարիզի մասնաճիւղին ընդհ.ժողովվաղը շաբաթ իրիկուն ժամը 9ին Ֆլորիանի մէջ։ Կարեւոր օրակարգ։ Բոլոր ընկերներուն ներկայութիւնը պարտաւորիչ։

ժամը 11ին պիտի ներկայացուի սինէմա մը Միութեան կեանքէն առնուած։

**** Մասնաճիւղը 15 Օգոստոսին պիտի տայ դաշտահանդէս մը։ Կը խնդրուի նկատի ունենալ այս թուականը։*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ծիսակատարութեան հանդիսաւոր մը տեղի կ'ունենայ Անվէրսի ցուցահանդէսին վայրը կառուցուած «Բրիստոս թագաւոր» եկեղեցւոյ եւ հանդիսասրահներուն մէջ։ Գ. Նալպանտեան Յ. վրդ. ժողովներու մասնակցելէ յետոյ, վերջին օրը կիրակի 27 յուլիս ժամը 12ին պիտի պատարագէ եւ քարոզէ, Անվէրսի ամենահին Ս. Պօղոս եկեղեցւոյ մէջ (Բիւսէն Բօլ)։ Հայկական պատարագը նուագախումբ պիտի երգէ պիւժ երաժիշտ վարպետներու խումբը։ Նոյն օրը կարտինալ վանրուէ պիտի փակէ գոնկրէն աթոռանիստ եկեղեցիին մէջ, ի-ներկայութեան Արքայական Ա-ժոլին։

ԱՆԱՏՈԼՈՒԻ ԲԵԿՈՐՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Հը փիւիի Ջ. Ե. Ո. Միութեան հանգանակութիւնը՝—

Անտոնեան եղբարք 75, Ա. Մելքոնեան, Յ. Սարգիսեան, Կ. Տէրտէրեան 50ական, Պ. Պալեան 25, Մ. Պալեան 25, Խ. Աբրահամեան 30, Յ. Քէշիշեան 20, Մ. Մարկոսեան 20, Տ. Խամիսեան 10, Տ. Կարապետեան 20, գումար 375 ֆրանք։ Փոստի ծախք 2.90, գումար 372.10։(Տես ցուցակ 11 փետր.)։

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Հարան Աբարեան կը փնտռէ իր եղբօր Գարեգին Աբարեանի կինը Ազնիւ (Բարերդի Խփոց գիւղացի Թաւպէնց Մխսակիաղչիկը)։Լուրառնուած է որ Ազնիւ 1921էն կրկին ամուսնացած է Ատաբազարի մէջ։ Կը կարծուի թէ այժմ կը գտնուի Ամերիկա։ Իմացնել՝ Haran Aparianի, *31* Rue de l'Infermerie *(*Drôme*), France. Լուր տուողին 50 ֆրանք նուէր։ Կը խնդրուի ամերիկահայ թերթերէն արտատպել։*

— Մարիամ Օսիկեան (ծնեալ Տէրտէրեան) կը փնտռէ իր քրոջ աղջիկը Ազնցեցի (Խարբերդ) Արաքսի Մինասեանը՝ Հօրանուն Խաչատուր, մօր անուն՝ Կիւլիստան, 1924ին, Պէյրութ կը գտնուէր։ Իմացնել՝ Mariam Osikian, Campagne Ripert No 33 St Marguerite, Marseille *(*B. D. R.*). Սուրիահայ թերթերէն կը խնդրուի արտատպել։*

Հ. Լ. Միութեան Մարսէյլի մասնաճիւղի վարչութիւնը կը փնտռէ ընկերներ Սարգիս Մուրատեան, Վահան Տէր Վարդանեան եւ Վահրամ Պապիկեան։ Իմացնել իրենց հասցէները Uuion des Volontaires Arméniens dans l'Armée Française, Section de Marseille, B. P. Colbert 381, Marseille.

— Խնուսի Սբրիթ գիւղացի Շուշան Քէօթիւկեանվուրեան (որ այժմ Տէր Զօր կը գտնուի) կը փնտռէ Խնուսի Սբրիթ գիւղացի իր ամուսինը Խաչատուր Քէօթիւկեանվուրեան, իր տղաքերը Առաքել, Աղաճան եւ Գէորգ Քէօթիւկեանվուրեանները, որոնք ընդհանուր պատերազմէն առաջ կարս (Հայաստան) կը բնակէին։ Իմացնել «Յառաջ»ի կամ Missak Sissérianի, B. P. 35, Dairez-Zor, *(*Syrie*).*

EMPIRE Միւզիք-Հոլ՝ 37 Av. Wagram

ԿՐՈՒԶՈՒԻԻ *ստիպողական բուրդ ժողով, քաղաք, քննպիտի կարող վարժ կարդացողներ։ Լաւ վճարում եւ տեւական գործ։*

Մաքուր չկարողները տեղը չներկայանան։

Դիմել՝ Օր.Զապէլի, 40 Rue la Mare, Ա. յարկ թիւ 5 եակ

Կ'ՈՒԶՈՒԻ *վարպետ գործ մը, որ նայ կօշիկի նորոգութեան բաբերեալ բոլոր մանրամասնութիւնները։ Ֆրանսերէն խօսող պարտաւորիչ է, Լաւ պայմաններ։ Դիմել՝ Crepocuire, 7 Rue Rébéval, Belleville.*

ԿԸ ՓՈԽԱՆՑՈՒԻ ԲՆԱԿԱՐԱՆ

2 սենեակ, entrée եւ խոհանոց, սղաւէտ, կեդրոն մաղչէի մօտ, Port de St. Cloud, *8 վայրկեան։ Դիմել ամէն օր* Billancourt, 1 Rue Liot *քով յարկ (աջ) Լ. Սուբէնեան։ Ուրիշներ ալ կրնան հանդիպիլ քոնսիէրժին։*

ՎԱՐԱՆ Է *100 քառ. տարանոց, թեամբ լուսաւոր եւ օդակեր արհեստանոց մը որ ունի երկու սենեակ, խոհանոց, կազ, ելեկտրականութիւն, ժար ամէն գործի։ Պայմանի մասին դիմել Պ. Մ. Ազնաեանի, 35 Rue Emile Desvaux, Մէթրօ՝* Place des Fêtes.

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՈՒՀԻ

96 r. Rivoli, մէթ. Շաթլէ։ Ունի նոր մեթոտով դարմանում եւ կանանց մորթի, արիւնի եւ հիւանդութեանց (ֆրանկախտ, մարիզ.) եւ վարիսի։ Մասնաւորապէս հաճախում եւ ազատ հրաժարութիւն օր 9—12, Երեքշ. 9—12։

Սիմիթ

Անուան արժանի է մտածել այն սիմֆոնը որ պատրաստած է A. LA GARDE, 1 Rue Lazare, PARIS (9e) Nord N. D. de Lorette. Téléph. Trudaine 95.21

IMPRIMERIE - MASSIS - Ed.
208bis, Rue Lafayette P...

Le Gérant H. STEPHA...

ՍԱՊՈՒՆՋԵԱՆ ԵՂԲԱՐՔ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԵԾ ՆՊԱՐԱՎԱՃԱՌՈՒՈՒՆ

Ա Ր Ա Ր Ա Տ

39 Rue de Trévise, Paris (9), մէթրօ՝ Cadet, Tél. Prov. 05-...

Ամէն տեսակ արեւելեան եւ եւրոպական նպարեղէնի

փոքրաքանակ եւ մեծաքանակ վաճառում։

Ընարատ եւ թարմ ՍՈՒՐՃ

Ապրանքներուն ամէնէն լաւը՝ անմրցելի գիներով



ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

ՋԱՁԱՐԱՆ ՖԼՕՐԻԱ

61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)

Մէթրօ Օտէոն եւ Սէն Միշէլ Հեռաձայն Littré 38—4...

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ

ՀԱՁԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

Ցէր եւ ցնօրէն՝ **ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ**

29, Rue (Place) des Fêtes, Paris, XIX. Tél. Nord 96 - 61

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուի ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Ակնաբոյժ մասնագէտը կ'ընդունի Գշ., Եշ. եւ Շաբաթ օրերը ժամը 4—6։ Քիթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երեք. եւ Շաբաթ օրերը 2—3։ ԱՏԱՄՆԱԲՈՑԺԸ ամէն օր ժամը 9էն 19։

ՅԱՌԱՋ

LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԲԱԺԱՆԵՑԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70 ֆ.	140 ֆ.
ԱՆԳԼԻԱ		20 շլ.	40 շլ.
ԵԳԻՊՏՈՍ		»	»
ԻՏԱԼԻԱ		250 ֆրանք	
ԱՄԵՐԻԿԱ		6 տլ.	10 տլ.
ԵՒՐՈՊԱ		100 ֆ.	200 ֆ.

"HARATCH"

Directeur-Propriétaire
SCH. MISSAKIAN
Խմբագիր՝
Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Rédaction et Administration
Խմբագրութիւն եւ վարչութիւն
235, Faub. St.-Martin
PARIS (10e)

MÉTRO : LOUIS-BLANC OU JAURÈS

Téléphone : NORD 67-23

R. C. SEINE 376.286

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 3 ֆրանք

ՇԱԲԱԹ
26
ՅՈՒԼԻՍ
1930

26 JUILLET 1930

Զ. ՏԱՐԻ ԹԻՒ 1323 — ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ — ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՓԱԿՈՒԱԾ ՉԷ»

Անտրէ Մանտէլշթամ քաղաքային և միջազգային իրաւագիտութեան տուեալներու վրայ հիմնուած՝ կը յայտարարէ թէ՝ Հայկական հարցը փակուած չէ։

Պայքարը որ կը մղուի հայութեան և թրքութեան միջեւ, ինքնին յայտարար նշանն է թէ հայկական հարցը փակուած չէ։ Հայ քաղաքական մտքին առջեւ ոչ միայն փակուած չէ հայոց ազատագրութեան խնդիրը, այլ աւելի յստակօրէն հրապարակ դրուած է և կը հետապնդուի աննկուն կերպով։ Հայ քաղաքական միտքը հայ հայրենիքի տեղը այլեւս չորոներ, գիտէ։ Հայ ժողովուրդի պետական ըմբռնումներու մասին անորոշութեան մէջ չի խարխափեր, գիտէ։ Ազատութիւնը ձեռք բերելու միջոցներու մասին վարանում չունի, գիտէ։ Սակայն այս գիտակցութիւնը կուռ կազմակերպութեան և կամքերու կեդրոնացման կը կարօտի՝ անշեղօրէն ազատագրութեան գործը հետապնդելու համար։

Հայոց քաղաքական բովանդակ կեանքն այս առանցքին շուրջ կը դառնայ։ Հայ ժողովուրդի կազմակերպուած և կորովի տարրը այս գերագոյն նպատակը կը հետապնդէ։ Բոլոր ճիգերն ու ջանքերը այդ նպատակակէտին ուղղուած են։ Եւ որքան առեն որ քաղաքական կեանքով փոթորկուող հայ հաւաքականութիւնը գոյութիւն ունի, Հայկական հարցը չի կրնար փակուիլ։

Այս ամուր հաւատքին և կամքին դիմաց, նոյնքան ամուր և աւելի կոպիտ՝ կայնած է Թուրքիան, կոթնելով իր սուրի քաղաքականութեան։ Ու պէտք է խոստովանիլ, որ այդ դաժան հակամարտութիւնը մտած է ցեղային առելութեան սահմանին մէջ։

Երէկուան «Յառաջ»ին մէջ տպուեցաւ Փրոֆ. Մանտէլշթամի բանախօսութիւնը հայկական հարցի մասին։ Յայտնի գիտնականի խիստ ուշագրաւ միտքերէն, երկու կէտեր մասնաւոր ուշադրութեան արժանի են։ Ան կ'ըսէ,— «Արդի Թուրքիան ազատագրեց կինը, ներքազատուեցաւ իսլամ օրէնսդրութեան յետադիմական ազդեցութենէն, եւ յարեցաւ եւրոպական իրաւունքին եւ որդեգրեց լատինական այբուբէնը, դժբախտաբար Թուրքիոյ հորիզոնին վրայ կը յայտնի մնայ սեւ կէտ մը, — ցեղային մոլեռանդութիւնը միայն, որուչհետեւ Թուրքերը երբեք կրօնական մոլեռանդութիւն չունին»։

Հայերու և Թուրքերու յարաբերութեան մէջ հիմնական նշանակութիւն ունեցած է Թուրքին ցեղային մոլեռանդութիւնը։ Թուրքի ցեղային դաժան ծրագիրներն ու հաշիւները պատճառ դարձան այն արիւնալի անդունդին, որ բացուած է հայուն և Թուրքին միջեւ։ Սակայն Հայերը շատ ուշ իմացան Թրքական ցեղային դաժանութիւնը։ Հայութիւնը յեղափոխական ճանապարհներով կռուեցաւ Թուրք պետութեան, անոր վարչաձեւին, ու ապօրինի բռնութիւններուն դէմ, իսկ Թուրքը Եէ ազգովին և Եէ պետական բոլոր միջոցներով կռուեցաւ հայ ցեղին դէմ։ Մենք կ'ուզէինք բռնակալութիւնը խորտակել և վարչաձեւը բարեփոխել, Թուրքը կ'ուզէր հայ ցեղը արմատախիլ ընել։ Այս երկու ուղղութիւններու հիմնական տարբերութենէն առաջացաւ երկու ցեղերու տարբեր գործելակերպերը։ Թուրքը եղաւ դաժան և անխնայ, մինչդեռ հայը իր սուրը բարձրացուց միայն չարագործին վրայ։ Ու բնական է որ հայը պիտի յաղթանակէր։ Այսօր, հայութիւնը, գոնէ մասամբ մը, ըմբռնած է ցեղային այդ դաժանութիւնը եւ ինքնապաշտպանութեան համար միայն մէկ ճամբայ ունի, — ցեղային դաժանութիւնը՝ Թուրք չարագործ ազգի հարկադրանքով։ Թուրքը իր կամքով ամէն նորութեան կարող է երթալ, ամէն տեսակ բարեփոխութիւններ կրնայ մտցնել իր երկրին մէջ։ Բայց ցեղային դաժանութիւնը այնպիսի արատ մըն է, որմէ Թուրքը միայն բռնի ուժով կրնայ դարմանուիլ։

Երկրորդ կէտը նոյնքան կարեւոր է։ Ա. Մանտէլշթամ կ'ըսէ.— «Այժմ. եթէ Թուրքիոյ մտայնութեան մէջ բան մը փոխուի, նախ պէտք է որ այդ ըլլայ Հայերուն համար։ Առանց չկամութեան, Թուրքիա պէտք է Հայերուն տայ մաս մը հող, որ ոռոգուած է հայ արիւնով եւ քրտինքով»։

Թուրքը իր կամքով հողամա՞ս մը տայ Հայերուն... Քաղաքական հաստնութիւն մը, պետական խելք մը, որ կարող է ամէն տեղ ճարուիլ. բացի Թուրքիայէն։ Շատ քիչ պետութիւններ կարող են գտնուիլ այդպիսի հաստնութեան ապացոյցներ տալու համար, իսկ Թուրքը, բոլոր ազգերն միասին առած, ամէնէն յետինը պիտի ըլլար նման քայլի մը մէջ։

Այս խնդիրն ալ սերտօրէն կապուած է Թուրքիոյ ցեղային դաժան ծրագիրներուն հետ։ Ու մենք վերջնականօրէն համոզուած ենք թէ, Թուրքիա այս խնդրին մէջ ալ պիտի մնայ նոյնիսկ։

Տակաւին շատ ժողովներու եւ կառավարական դահլիճներու մէջ պիտի պտտի հայկական հարցը։ Դիւանագիտութիւնն ալ ճամբայով։ Բայց հայութիւնը պէտք է գիտնայ իր ամբողջ շաղրութիւնը կեդրոնացնել այն դաժան պայքարին վրայ, որ երազանքապէս գոյութեան կռիւ մըն է։

Կ. Ս.

ՄԱՄՈՒԼ

ՋԱՓԸ ՊԱՇԵՆՔ

«Նոր Օր» այս վերնագրով խմբագրականի մը մէջ կը գրէ. (յուլիս 16)։

— «Շամեմատութիւններու գաղափարը կը պակսի մեր մօտ։ Միշտ կը ձգկինք կշիռին մէկ կամ միւս կողմը։ Միջինը գոյութիւն չէ ունեցած մեզի համար, խօսքով արժատական ենք, բայց գործով միշտ երկու ծայրայեղութիւններու ետեւ։

Հաւասարակշռութիւնը կորսնցուցած նաւակի մը կը նմանինք, որ կը սուրայ միշտ մէկ կողմ ձակած։ Դերելի էր այս վերութիւնը ծայրայեղ խանդավառութեան ու լաւատեսութեան օրերուն, բայց այսօր ոչ։

Պարտութեան ու լքումի գիտակցութիւնը մեծագոյն խոչնդոտը կ'ուղղելու մեր սխալները, շըտկելու վերաբերմունքը ու ձաւասարկշռելու մեր քայլուածքը։

Բռնի տարագրութեան այս տարիները, որ ակամայ անգործութեան մատնած ու քիչ մը պաշկանոդական դարձուցած են մեր ժողովուրդը, պէտք է օգտագործել հայ բարոյականին, հայ գիտակցութեան բարձրացման ու զարգացման։

Ցարմարագոյն առիթն է վերգնահատելու անցեալը, արձանագրելու մեր պատմութեան շեղումները եւ ընդգծելու վարուան գործունէութեան ուղեգիծը, փոխանակ սպասելու որ դէպքերը ստիպեն մեզ ուղեգիծ պատրաստելու, ինչպէս եղած է անցեալին մէջ։

Այս պաղարիւն ու վերլուծական աշխատանքը կատարելու համար, ձամեմատութիւնները եւ չափերը պաչելու առաքինութիւնը կը պակսի մեզի։

Հակադաշնակցականները, նոպայէ բռնուած եւ յատկապէս անցեալին պատկանող ամէն պատուաբեր դէպք ու անցք սեւցնելու ձամար, երբեմն այնքան ծայրայեղ ու գարշելի կարծիքներ կը յայտնեն որ, կը պըղտորուի ընթերցողին միտքը, մասնաւորապէս ռամկավար մասուլը ամէն օր ապացոյցներ կուտայ այս ուղղութեամբ։

1918-20 Հայաստանի անկախութեան երկու տարուան կեանքին ու պատմութեան մէջ, յուսադրող, ոգեւորող, միտքն ու գգացումները շարժման մէջ դնող ոչ մէկ երեւոյթ, ոչ մէկ դէպք, ու ոչ մէկ ձեռնարկ կը տեսնեն ռամկավարները։

Նոյն մամուլը՝ խորհրդային վարչաձեւի բռնի ձաստատման Թուականէն ի վեր՝ բառարանները կը պրպտէ գնաձատութեան եւ քաջալերութեան բառերու ծոխ մթերքով պատուելու ձամար խորհրդայինաձայ գործիչներու անձը, գործը եւ ամէն մէկ շարժուձը։

Վերջապէս ձամոզուինք թէ գիրար վարկաբեկելու եւ պատուազրկելու ձամար, իրաւունք չունինք ժողովուրդին միտքը նախապաշարելու եւ անոր ձոգին ատելութեամբ ու Թոյնով լեցնելու այս կամ այն ձոսանքին դէմ։»

ՔՈՍԹ ՊԱՏՐԱՍՏ Է ՄԵԿՆԵԼՈՒ

փարիզ-նիւ եորք անդրատլանտեան Թռիչքին ձամար, ֆրանսացի օդանաւորդը՝ ֆոսթ եւ իր ընկերը պելլոնթ, ամէն պատրաստութիւն տեսած են մեկնելու առաջին առիթիւ որ օդերը նպաստաւոր երեւան։ Իրենց օդանաւին պատրաստութիւնները լրացնելու ձամար, անոնք կատարեցին 88 ժամուան Թռիչքի փորձեր։

ՕՐԸ ՕՐԻՆ

ՔՐՏԱԿԱՆ ԾԱՐԺՈՒՄԸ

ԹՈՒՐՔԻԱ 60,000 ՋՕՐՔ ԵՒ 100 ՕԴԱՆԱՒ ԿԸ ՊՐԿԷ ՔԻՒՐՏԵՐՈՒՆ ԴԷՄ

ԼՈՆՏՈՆ, 25 յուլիս.— «Թայմզ»ի Պոլսոյ Թղթակիցը կը հեռագրէ։

«Կ'ըմանամ Թէ Քիւրտերու դէմ ձեռնարկուած նուաճման առաջին մասը վերջացած կարելի է նկատել։ Ըմբոստները կը կարծէին Թէ պիտի կարենան յաղթել Թուրքերուն եւ հաստատել քրտական անկախ պետութիւն։ Իրենց այս նպատակը ձախողած է։ Բայց անոնք դեռ պարտուած չեն։ Ճակատամարտի երկրորդ մասը պիտի մղուի Արարատ լերան շուրջ, ուր բազմահազար Քիւրտեր հաստատուած են զրեթէ անառիկ դիրքերու մէջ եւ ասկից զատ, անոնք օժանդակութիւն կը գտնեն Պարսկաստանի Քիւրտերուն կողմէ։

Թուրք ընդհ. սպայակոյտը պատրաստութիւններ տեսած է երկարատեւ կռուի մը նախատեսութեամբ եւ Վանի ու Պայազիտի շուրջ հաւաքած է 60,000 զինուորներ և 100 օդանաւեր։

Իտալիոյ երկրաշարժը

Վեզուվի մօտիկ՝ Փոցցուօլա հրաբուխը սկսաւ բորբոքիլ։ Նափոլիի բնակչութիւնը կը վախնայ որ Վեզուվ դարձեալ հրահրի, ժոխիր եւ լաւա ժայթքելով։

Պաշտօնական տեղեկութիւններու համաձայն, երկրաշարժի հետեւանքով մեռելներու թիւն է 1778, վիրաւորներունը 4624։ Ամբողջովին քանդուած են 3188 տուներ, կիսաքանդ 2757։

Ավելինայի մէջ, որ ամէնէն աւելի վնասուեցաւ, բոլոր ժամացոյցները կանգ առին 1,12ի վրայ։

Նափոլիի բնակչութիւնը նոր սարսափի մը եւս ենթարկուեցաւ հովի ուժգին հոսանքի մը հետեւանքով, որ մէկ քանի վայրկեան տեւեց։

Անապատան մնացած անձերու թիւը կը գնահատուի մօտ մէկ միլիոն։

Եգիպտոսի կացութիւնը

Եգիպտական ջուրերը ղրկուած անգլիական մարտանաւերու թնդանօթները ուղղուած են Աղեքսանդրիոյ վրայ, ուր անընդհատ, փողոցէ փողոց կ'երթեւեկեն զօրամասեր եւ անգլիական ու եգիպտական ոստիկանական ջոկատներ։ Ժողովուրդը գերազգռուած է։ Առեւտուրը կեցած է բոլորովին։

Կ'ըսուի Թէ վաֆտ կուսակցութիւնը կը փորձէ ստիպել Ֆուատ Թագաւորը որ հրաժարի գահէն, որմէ յետոյ, պիտի հաստատէ հանրապետական վարչաձեւ։ Չկառակ Նահաս փաշայի կրկին յայտարարութիւններուն, կը հաստատուի Թէ վաֆտի քաղաքականութիւնը յստակօրէն հանրապետական է։

Արդի վարչապետ Սըթքը փաշա, վաֆտի կողմէ պետական հարուած մը նախատեսելով, բացառիկ միջոցներ ձեռք կ'առնէ։ Բոլոր կարեւոր քաղաքները զրաւուած են զօրախումբերու կողմէ։ Զօրքը, ցարդ, կառավարութեան կողմն է, բայց ազգայնականները մեծ ջանք կը Թափեն. բանակը իրենց կողմը քաշելու։

Կանտի տեղի պիտի տա՞յ

Չնդիկ երկու պետեր, որոնք հնդկական կառավարութեան կողմէ արտօնութիւն ստացեր էին, բանտին մէջ, առանց վկայի, տեսակցութիւն ունենալու կանտիի հետ, առաջին խօսակցութենէ մը յետոյ, որ տեւեց հինգ ժամ, երէկ դարձեալ բանակցեցան անոր հետ, ամբողջ չորս ժամ։ Արդիւնքը տակաւին յայտնի չէ։ Սակայն. կէս-պաշտօնական շրջանակներ, լաւատեսութեամբ կը նային բանակցութեանց ելքին եւ կը յուսան Թէ կանտի հնահանգ պիտի տայ դադրեցնելու քաղաքացիական անհնազանդութեան պայքարը։ Կանտի երկու բանագնացներու յանձնեց նամակ մը, ուղղուած հնդիկ շարժման միւս ղեկավարներուն Մոթիլալ և Ճավահարլալ Նեհրուներուն, որոնք Ալլահապատի բանտը կը գտնուին։

∴ Շարժուձը զսպելու համար կառավարութեան ձեռք առած միջոցներուն դէմ իբր բողոքի ցոյց, Պոմպէյի հիւսուածեղէնի առեւտրականներու ընկերակցութիւնը սուգի անժամանակ շրջան յայտարարեց։

Կուէպոյի առևղծուածը

Ռուս հակաբոլշեւիկ յայտնի դէմքերէն վլատիմիր Պուրցեֆ, որ անձնական միջոցներով կը ջանայ լուծել կուէպոյի առեւանգման գաղտնիքը, հետեւեալ մանրամասնութիւնները կուտայ.

— *Առեւանգումէն առաջ, կուէպոյը տեսնելու համար, Ռուսիայէն բազմաթիւ անձեր եկած էին։ Անոնց մէջ էին Չեկայի գործակալները։ Կուէպոյ կը կարծեր Թէ անոնք կարմիր բանակի ներկայացուցիչներն են եւ անոնց հետ իր ժամադրութեան մեծ կարեւորութիւն կ'ընծայէր։ Այս մարդոց մէկ մասին վրայ մեծ վստահութիւն ունէր։ Մնացեալներուն՝ կասկածով կը նայէր։*

Առեւանգման նախորդ օրը, յունուար 25ին, կուէպոյ գիտէր Թէ Ռուսիայէն հասած շատ կարեւոր անձնաւորու-

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՔՐՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՇՈՒՐՋ

Համաձայն «Եարբըն»ի Պիթլիսի Թղթակցին տեղեկատուութեանց, ապստամբութիւնը ճիւղաւորուած է Պիթլիսի եւ Միջագետքի շրջանն ալ, ուր եւս կռիւներ տեղի ունեցած են։ Այս շրջանին մէջ կը գործէ ճէլալիներու քաջարի եւ ռազմունակ ցեղը, որուն դէմ կռուելու համար Թրքական ուժեր բերուած են Տիարպէքիրէն։

Ըստ «Եարբըն»ի Թղթակցին, Պիթլիսի քրտական ուժերուն օգնութեան փութալու համար յունիս 21ին Միջագետքէն 2 հազար հոգի Թուրքիա արշաւած եւ ծանր բախումներ ունեցած են Թուրք զօրքերուն հետ։

Միջագետքէն օգնութեան հասնող քրտական ուժերուն դէմ կռիւ արձերը Թուրքիայէն խոյս տուած ցեղապետներ են։ Ասոնցմէ մէկը Ռահիմօ, «Միլլի» կոչուած քիւրտ ցեղախումբի պետին զաւակն է որ իր ուսումը ստացած է Եւրոպայի մէջ։ Յիշեալը Պարսկաստանի Փահլէվի շահին օժանդակած է քիւրտ Սմկոյի ապստամբութիւնը զըսպելու համար։ Ռահիմօ իր երկու եղբայրներուն հետ կը վարէ Միջագետքի քիւրտ ուժերը։

Թղթակիցը կը խոստովանի որ, «ապստամբները առատ ռազմանիւթ եւ արժանիք ունին»։

Նեստորականներն ալ միացած են Քիւրտերուն, որով Թուրքերը բացայայտ կը գտնեն Անգլիոյ օժանդակութիւնը Քիւրտերու մղած ազատագրական պայքարին մէջ։

«Միլլիյէթ» եւս կը խոստովանի Թէ՝ Արեւելքի մէջ ծագած ապստամբութիւնը եւ յարձակողական շարժումը յելուզակային պարզ դէպք մը չէ։ Այս յարձակումը գործողներուն նպատակը միայն Արարատի եւ շրջականերու մէջ ապստամբութիւն յարուցանել չէր։ Անոնք որոշած էին Արճէշը գրաւել, յետոյ Մուրատ գետին ճամբով հարաւ-արեւելեան նահանգները ժանել եւ ապստամբութիւնը երկարել մինչեւ Տիարպէքիր»։

Դարձեալ ըստ «Միլլիյէթ»ի տեղեկատուութեանց, արտասահմանէն ապստամբներուն օգնութեան հասնող քիւրտ ուժերը ունին զօրաւոր ձիերով և զէնքերով ու խորտրնկէցներով զինուած են»։

ՌԻԿՈՎ ԴԵՍՊԱՆ ՊԵՐԼԻՆԻ

Խորհրդային Պերլին ճասած լուրերու ճամաձայն, կը ճաստատուի Թէ խորհրդային կառավարութիւնը գերմանիոյ ճաւանութիւնը ուզած է Ռիկովը նշանակելու Պերլինի դեսպան, կրէստինսկիի տեղ, որ քիչ առեն կը մեկնի Մոսկուա պիտի մեկնի անցցելու իր նոր պաշտօնին գլուխը։

Եթէ Գերմանիա ճաւանի, Ռիկով Պերլին պիտի մեկնի Օգոստոսի վերջերը, միւս կողմէ, Մոսկուա կը ճերքէ գործավարներու խորհուրդին նախագաճութենէն Ռիկովի նրաժարման մասին լուրերը։

«ԹՌՉՈՒՆ ՆԱԻԵՐ»

Բազմաթիւ շարժիչ մեքենաներով օժտուած ջրային սաւառնակներ կը շինուին Անգլիոյ մէջ, մեծ գաղտպահութեամբ։

Այս «Թռչուն նաւ»երը շատ աւելի մեծ եւ արագաշարժ պիտի ըլլան քան ցարդ գոյութիւն ունեցող ջրային սաւառնակները։

Այս սաւառնակները կը շինուին օդանաւային նախարարութեան մէկ յատակագծին վրայ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՈՒԼԻՍ

ՀԱՄԵՒՐՈՊԱ
ՄԻՏՔԵՐ ՈՒ ՓՈՐՁԵՐ ԱՆՑԵԱԼԻՆ ՄԷՋ

Քաղաքական աշտարակ մը եւս։

Երէկուան արիւնոտ Եւրոպան, պատերազմի կարմիր մղձաւանջէն յոգնած, խաղաղութեան ձիթենիներ կը փնտռէ անդադար։

Անկասկած, քաղաքական նոր հորիզոններ պիտի բանայ Եւրոպայի Միացեալ Նահանգներու գաղափարը, որ վերջերս, այնքան մեծ թափով մէջտեղ դրաւ հին ու փորձուած դիւանագէտ մը՝ Պրիան, խաղաղութեան առաքելական ծրարին հազած։

Եւրոպական բոլոր պետութիւնները արդէն ճշդեցին իրենց դիրքը Պրիանի յուշագրին հանդէպ, դիւանագիտական ընդունուած «վերապահումներով», «նորանոր թելադրութիւններով» եւ կարեւորութեան մասին «մեծ խորհրդածութիւններով»։

Արդեօ՞ք հասունցած, իրականութեան տուեալներով օժտուած պահ՞ը մըն է դարձած Համեւրոպան, թէ գաղափարական ամրոց մը, ուր կը ծածանի վեհափառօրէն խաղաղութեան դրօշը, ցաւագին ծիւանքներով։

Լարուած են ջիղերն ու միտքերը, մանաւանդ չափազանց գոյնզգոյն են պատասխանները։ Տակաւին բոլորն ալ խարխափումներու եւ որոնումներու մէջ էին։ Մամուլը լուռ է։ Զի գովեր, չի փառաբաններ եւ չի մկնաբաներ։ Նոյնիսկ անդրնկերվարականներու օրգան «Տէյլի Հերալտ» կը ժխտէ առնոր կարեւորութիւնը եւ Ազգերու Դաշնակցութիւնը կը տամարէ բաւարար, մեղադրելով Պրիանը, որ հինգերորդ գլան մըն ալ կ'ուզէ աւելցնել նոյն կառքին։

Գրական հրապարակի վրայ ալ, քանի մը սակաւաթիւ աշխատութիւններ կան միայն Ռիւի, Պերթրան տը Ժուվընէլ, Հէհոֆոտի կողմէն։ Վերջերս Revue des Vivants»ն ալ լրջօրէն կը զբաղի եւ նոյնիսկ կազմած է միջազգային ֆիւրի մը Եւրոպայի գրական, քաղաքական եւ հանրային նշանաւոր դէմքերէն՝ Փօլ-Պոնքուր, Պէնէշ, Գանպոն, Ժօրժ Տիւհամէլ, Հայնրիխ Ման, Փոլհէիս, Նինչիչ, Թիլհուէլէօքօ, Վանտէրվէլտ, Կոմս Սֆորցա, Զալէսքի, Լորտ Սէսիլ եւն. եւ սահմանած է տասը հազար ֆրանքի մրցանակ մը, Համեւրոպայի մասին ներկայացուած լաւագոյն աշխատութեան մը համար։

Ամիսի ու խտացուած, ներկայացնենք «Յառաջի ընթերցողներուն, Համեւրոպայի պատմական, քաղաքական, տնտեսական եւ փաստական երեսները, ի վերջոյ կանգ առնելով Պրիանի յուշագրի եւ կարգ մը պետութիւններու բնորոշ պատասխաններուն վրայ։

Պէտք չէ ենթադրել, որ պարզ պետական հաւախմբում մըն է, որ կը կատարուի եւ ազգային կեանքէն կը ձգտի դէպի միջազգայինը։ Հին Եւրոպան յոգնած ու ջլատուած, իր խաղաղութիւնը կը փնտռէ միջազգայնականութեան (էնտերնասիոնալիզմի) մէջ։ Իրականութեան պարագային շատ բան կարող է փոխուիլ. եւ ո՞վ գիտէ վերջին հաշուով, գուցէ մեզ հաւար եւս նշանակութիւն ունենայ, իր զարգացման գանգաղ փուլերուն մէջ...

Համեւրոպայի գաղափարը մեծ պատերազմի անմիջական հետեւանքը չէ։ Անոր արմատները թաղուած են անցեալի փոշիներուն մէջ։ Հոմէական ընդարձակ կայսրութիւնը, Շառլըմանը, Հապսպուրկներու եւ Նաբոլէոնի աշխարհակալութիւնը միացեալ պետութեան գաղափարական սաղմերն ունէին իրենց մէջ, խիստ նախնական վիճակով։

Հաշակրաց արշաւանքները, Ժագ Մօլէյի հսկայ ծրագիրը Համեւրոպայի կազմակերպութեան առթիւ, միջին դարու քրիստոնեայ Եւրոպայի քաղաքական եւ կրօնական անբաժան գործակցութիւնը, պապի տիեզերական դիրքը, արքաներու ենթարկուած վիճակը, տեզծած էր եւրոպական իրերամերժ միութիւն մը, հաւաքական կամք մը, սուկ կրօնական ժառանգութեամբ։

Եւրոպայի միութեան գաղափարը քաղաքական հեռանկարներով լուրջ ուսումնասիրութեան է ենթարկուած Հանրի Դ.էն եւ Սիւլլիէն։ Հանրի Դ.ի եւ Սիւլլիի Եւրոպան, հողային որոշ բարեփոխումներէ վերջ, 15 պետութիւններէ պիտի բաղկանար։ Անոր մէջ պիտի մտնէին Իրանսան, Անգլիան, Սպանիան, Լօմպարտիան, Դանիան, Շուէտիան, Հունգարիան, Լեհաստանը, Պոհէմիան, Զուիցերիան, Պելճիքան, Վենետիկը եւ Իտալիան, իսկ Ռուսաստանը եւ կէս ասիականները զինակցութեան ձեւին տակ պիտի մտնէին համեւրոպայի միութեան մէջ։ Համեւրոպայի ընդհանուր պետը՝ ինքը կայսրը պիտի ըլլար։ Վերակոյտը բաղկացած պիտի ըլլար 66 հոգիէ, Զուիցերականին պէս, եւ երեք տարին անգամ մը փոփոխութեան պիտի ենթարկուէր։ Ներակոյտը պիտի ըլլար ղօղուն եւ կամ մնայուն, որ եւ իցէ տեղ մը, ըստ ցանկութեան։ Պիտի ունենար յարակից շրջանային խորհուրդներ, դատարաններ, տնտեսական իւրայատուկ կազմակերպութիւններ։ Պիտի ունենար 75,000 հոգիէ բաղկացած բանակ մը եւ պիտի կուտէր թուրքերուն դէմ, զանոնք Եւրոպայէն հեռացնելու համար։

Այս ծրագիրը ձախողեցաւ, Հանրի Դ.ի մահուան պատճառով եւ քաղաքական հողային բաժանման սխալ ըմբռնումով։

Ամբողջ դար մը, ժէ—ժէ, Եւրոպայի միութեան գաղափարը մեռաւ։

Մոնթէսքիէօ իր ճանապարհորդական տպաւորութիւններուն մէջ, կ'երեւակայէ Եւրոպան «բազմաթիւ դաւառներէ բաղկացած պետութիւն մը»։ Սակայն այս յայտնութիւնը զիտական մարդու նախատեսութիւն մըն էր սոսկ։ Աբբայ Սէն-Փիէռին էր վերապահուած Հանրի Դ.ի աւանդութիւններուն յարութիւն տալ, իր «Մշտնջենական խաղաղութեան ծրագիր»ը անունով աշխատութեամբ։

Ռուսօն աւելի խորացնելով անոր միտքերը, կ'ըսէր. «Պէտք է կազմել հաւադաշնակցութիւն մը, որ ըլլայ ընդհանուր եւ ոչ մէկուն մէջ մտնեն բոլորը առանց բացառութեան։ Համաձայնակցական դատարան մըն ալ պէտք է գործէ անոր քով, մշտատեւ ու անխախտ, որպէսզի անոր անդամակցող պետութիւնները, իրենց ցանկութեան համաձայն չբաժնուին»։ Ռուսօի այս մտքերը, տակաւին այժմէականութեան դրոշմ կը կրեն, որովհետեւ Ազգերու Դաշնակցութեան մէջ գրեթէ կը կիրարկուին այդ սկզբունքները։

Ժ.Թ. դարուն մէջ, Սէնթ-Ալհանն եւս փորձ մըն էր Եւրոպայի միութիւնն ու հաւասարակշռութիւնը վերականգնելու եւ խաղաղութեան սերմեր ցանելու։ Սակայն 1848ի յեղափոխական շարժուձը, Եւրոպայի միութեան գաղափարը կ'ուզէր կերտել իր տաճարին շուրջը։ Մաձինի յեղափոխութեան բռցավառ աւանդութիւններէն ներշնչուած, կ'ուզէր ստեղծել «Երիտասարդ Եւրոպա» մը ժողովրդավար հիմունքներով։

Սէն-Սիմոն ներշնչուած Ռուսօի եւ Սէն-Փիէռի մտքերէն, կը պատկերացնէ «Եւրոպայի ժողովուրդները մէկ քաղաքական մարմնի մէջ, ապահովելով իւրաքանչիւրի ազգային անկախութիւնը»։

Վիքթոր Հիւկօ, որ նախակարապետներէն մէկն է եղած Եւրոպայի միացեալ պետութեան գաղափարին, բանաստեղծօրէն կը տեսնէր ոսկեդար մը եւ կը գրէր. «Վե՛րջ սահմաններուն, վե՛րջ մաքսերուն։ Ո՛չ բանակ, ո՛չ պրոլետարիատ, ո՛չ տգիտութիւն եւ ո՛չ թշուառութիւն»։ Ուժեղ երեւակայութեան եւ գեղեցիկ պատկերներու յորձանքին մէջ, անոր միտքերը քաղաքական յստակ ձեւակերպութիւն ստացած չէին և չկար հիմք մը, խարիսխ մը կառուցանելու համար գեր-պետութեան վերնաշէնքը։

Սակայն այժմ, պատերազմի արհաւիրքներէն յետոյ, քաղաքական մտքի այս բոլոր պատմական խարխափումները պայծառ ձեւ են ստացած, եւ դարձած են լուրջ ուսումնասիրութեան նիւթ։ Ստեղծուած է գրականութիւն մը թէ Ժրանսայի և թէ Գերմանիոյ մէջ, որուն լծուած են Դէլէզի, Պէրթրան տը Ժուվընէլ, Վուալթինսքի, Պրիան, Հէրիօ, Մաքտոնալտ եւ շատ ուրիշներ։

Հիմք է դրուած զանազան երկիրներու մէջ այս շարժումը խորացնող մարմիններու, ինչպէս Վիէննայի մէջ, 1923ին կոմս Կուդէնով-Քալերկիի կողմէ Համեւրոպա շարժումը, Դասնիայի մէջ Հէհոֆոտի միջոցաւ Նոր-Եւրոպան, 1929ին Իտալիոյ մէջ, Պարթոլուչչիի կողմէն՝ Անդիեւրոպան։

Այս պատմական ակնարկէն յետոյ, տեսնենք անոր արդի ձեւակերպումը եւ արժէքը։

ՎԱՀԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

ԶԾԴՈՒՄՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԴՐՕՇԻՆ ՄԱՍԻՆ

Սեպտեմբեր 9. Մուրատեան վարժարանի վերջին ինանդէսին. որ տեղի ունեցաւ յուլիս 13ին, Մխիթարեան Միաբանութիւնը պարգած էր եռագոյնը, ինչպէս պարտաւոր է ընել ազգային որեւէ հաստատութիւն։ Այս առթիւ, փարիզի ռամկավար թերթը դարձեալ փորձեց ցափուտուքներով եւ խծբծանքներով ցեխ նետել Մխիթարեաններուն, որոնց ժտայնութեան շատ մօտէն ծանօթ եւ իսկապէս «իրազեկ»անձնաւորութիւն մը, հետեւեալ ճշդումները կը կատարէ, կը հրատարակենք նոյնութեամբ, բոլոր անոնց համար, որ հայութեան շահին ու վնասէն զատելու իրենց ազգային զգացումը։ (Խ.)

Ալիշանեան եռագոյնին պարզումը Սեպտ Մուրատեան վարժարանին վրայ՝ վրդովեր է «Ապագայ» թերթի խմբագիրները։ Վերոյիշեալ թերթը ուզելով լուսաբանութիւններ տալ, ինկեր է ծանր սխալներու մէջ։ Առաջին սխալը.— «Հ. Ալիշանի երգած դրօշակը, կ'ըսէ «Ապագայ»ի խմբագրութիւնը, որ կը պարզուի եղեր Վենետիկի Ս. Ղազարու վանքին մէջ, չէ այն դրօշակը որ պարզուած էր անցեալ կիրակի Սեպտ Մուրատեան վարժարանին մէջ։»

Ճիշդ ասոր հակառակն է ճշմարտութիւնը։ Ինչ դրօշ որ պարզուեցաւ անցեալ կիրակի Սեպտ Մուրատեան վարժարանին մէջ, նոյնը պարզուած է Վենետիկի Ս. Ղազարու վանքին մէջ։ Եւ այս կէտին աւելի տեղեակ են Վենետիկի Ս. Ղազարու վանքէն եկող Մխիթարեանները, քան թէ Փարիզի մէջ նստած դուրսէ դուրս մարդիկը։ Եւ ա՛յս ալ ըսեմ որ Ս. Ղազարու վրայ պարզուած եռագոյն դրօշն ալ Պոլսոյ ազգայիններէն նուէր ղրկուած է Ս. Ղազարու վանքին։

*Երկրորդ լուսաբանութիւնը ա՛լ աւելի ծանր սխալի մը առաջնորդած է «Ապագայ»ի խմբագրութիւնը։ — «Մուրատեան վարժարանի մրցանակաբաշխութեան հանդէսին մէջ, անցեալ կիրակի օր կատարուած դրօշակին պարզումը դժբախտաբար տեղի ունեցած է ո՛չ թէ ինքնաբերաբար, այլ հրապարակային պահանջմամբը կարգ մը անձերու, որոնք նախկին հայկական կառավարութեան օրով, Հայաստանի ունեցած պաշտօնական դրօշին եւ ո՛չ թէ Ալիշանի պարզ խորհրդանիշին պարզումը պահանջեցին Մխիթարեան հայրերէն։» Մենք «Ապագայ» թերթին կ'իմանանք միայն հրապարակային պահանջը մը գոհացում տալու առասպելը, քանի որ իրականութիւնն այն է որ Սեւրի Մխիթարեանները, իբրեւ հարազատ անդամներ ազատ եւ անկախ Միաբանութեան մը, երբեք պէտք զգացած չեն հայրենասիրութեան, պատշաճութեան եւ դիւանագիտութեան դասերը հրապարակային թերթերէ կամ անհատներէ սորվելու։ Օրինակի համար, Մխիթարեան Հայրերը շատ լաւ գիտէին թէ Ալիշանեան կամ հայկական եռագոյնին պարզումը Սեւրի Մուրատեան վարժարանին վրայ, «Ապագայ»ի մէջ պիտի քննադատուէր։ Եւ հետեւաբար, եթէ ազատ եւ ինքնաբերաբար գործելու սկզբունքին կառչած չըլլային, կարելի էր հայկական եռագոյնը չպարզել, եւ «Ապագայ» թերթին պատճառաբանութիւնները մէջտեղ քշելով, գործը անուշի կապել։ Այսպէս ալ, վարժարանին բացման մէջ, գիտնալով հանդերձ որ եթէ հայկական եռագոյնը չծածանի վարժարանիս վրայ, կարգ մը մարդիկ պիտի դրէն և պիտի քննադատեն, անոնք եռագոյնը չպարզեցին, որովհետեւ, ինչպէս ըսաւ Հ. Սահակ, ա՛յդպէս կը պահանջէին պատշաճութիւնը եւ դիւանագիտութիւնը։ Եթէ «Ապագայ» թերթի խմբագրութիւնը որոշ զգաստիարտ մը կազմած ըլլար Մխիթարեանց ազատ եւ ինքնաբերաբար գործելու մասին, չեմ կարծեր որ գրելու ելլէր, թէ «Այս վերջինները (Մխիթարեան հայրերը), այդ պահանջին գոհացում տալու տկարութիւնը գործած եղան, ինչ որ այսօրուան Հայաստանի հանդէպ թշնամական արարք մըն է»։ Մեկնութիւնը բոլորովին ծուռ է, եւ իսկապէս վիրաւորիչ Հայաստանի արդի կառավարութեան։ Տանիլ կապել դրօշի մը հետ կառավարութեան մը գոյութիւնը կամ անկումը՝ իսկապէս ծաղրական է։ Հ. Սահակ բանախօսութեանը մէջ ըսեր էր, (եւ արդէն մեր հաւաքոյթներու ներկայ գտնուող խմբագիրներու մէկ մասը սովորութիւն ըրեր է բանախօսներու կարեւոր նախադասութիւնները ականջի տակ նետելու, եւ աննշան խօսքերը արձանագրելու,) «Թէ պետութիւններ, կուսակցութիւններ կրնան կանգնիլ կամ մեռնիլ, բայց եթէ կայ մէկը որ միշտ կանգուն պիտի մնայ եւ երբեք պիտի չմեռնի, այդ ալ հայ ազգն է, եւ Ալիշանեան եռագոյնը անոր անմեռ խորհրդանիշն է զոր ան ամենուրեք իր հետ պիտի շրջեցնէ»։ Արդ, այս տողերուն մէջ ի՞նչ կայ որ «Ապագայ»ի մատնանշած «բռնազբօսիկ բացատրութիւնը» ապացուցանէ։ Բան մը գրել, առանց նիւթին մէջ որոշ չափով մը խորանալու, աններելի կը համարեմ։ Ցետոյ «Ապագայ»ի խմբագրութիւնը այն տեսարանը կը պարզէ մեր առջեւ, որով իբր թէ ինքը Հայաստանի արդի կառավարութեան արթուն քաջագիտակ պահակը ըլլար, որ հրացանը ուսին զարկած, ստուերին մէջ անգամ «թշնամական արարք» կը տեսնէ Հայաստանի հանդէպ։ Մի՛թէ այս անհարկի նախանձախնդրութիւնը կառավարութեան մը տկարութեան նշանը չէ։ Մի՛թէ այդ կառավարութիւնը «Ապագայ»ի խմբագրութենէն աւելի չի՞ գիտեր միջազգային յեղափոխութեան մարմինի մէջ, ապահովելով իւրաքանչիւրի ազգային անկախութիւնը»։

Վիքթոր Հիւկօ, որ նախակարապետներէն մէկն է եղած Եւրոպայի միացեալ պետութեան գաղափարին, բանաստեղծօրէն կը տեսնէր ոսկեդար մը եւ կը գրէր. «Վե՛րջ սահմաններուն, վե՛րջ մաքսերուն։ Ո՛չ բանակ, ո՛չ պրոլետարիատ, ո՛չ տգիտութիւն եւ ո՛չ թշուառութիւն»։ Ուժեղ երեւակայութեան եւ գեղեցիկ պատկերներու յորձանքին մէջ, անոր միտքերը քաղաքական յստակ ձեւակերպութիւն ստացած չէին և չկար հիմք մը, խարիսխ մը կառուցանելու համար գեր-պետութեան վերնաշէնքը։

Սակայն այժմ, պատերազմի արհաւիրքներէն յետոյ, քաղաքական մտքի այս բոլոր պատմական խարխափումները պայծառ ձեւ են ստացած, եւ դարձած են լուրջ ուսումնասիրութեան նիւթ։ Ստեղծուած է գրականութիւն մը թէ Ժրանսայի և թէ Գերմանիոյ մէջ, որուն լծուած են Դէլէզի, Պէրթրան տը Ժուվընէլ, Վուալթինսքի, Պրիան, Հէրիօ, Մաքտոնալտ եւ շատ ուրիշներ։

Հիմք է դրուած զանազան երկիրներու մէջ այս շարժումը խորացնող մարմիններու, ինչպէս Վիէննայի մէջ, 1923ին կոմս Կուդէնով-Քալերկիի կողմէ Համեւրոպա շարժումը, Դասնիայի մէջ Հէհոֆոտի միջոցաւ Նոր-Եւրոպան, 1929ին Իտալիոյ մէջ, Պարթոլուչչիի կողմէն՝ Անդիեւրոպան։

Այս պատմական ակնարկէն յետոյ, տեսնենք անոր արդի ձեւակերպումը եւ արժէքը։

ՎԱՀԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

ՕՏԱՐ ՄԻՏՔ

«ԻՆՁՊԷՍ ՈՐ ՁԱՆՈՆՔ ԿԸ ՏԵՍՆԵՄ»

Comme je les vois, շեղ. Piot (Ժան Փիո), Հրատ. S... Kra, Փարիզ։

Ժան Փիո, աշխատակիցն «Էօվրը» օրաթերթին խմբագիտ կիւստաւ Թէրիին, որուն հէն իվեր ստանձնած է նոյն թին խմբագրութիւնը։

Ծանօթ է որպէս ձախ մեան, եռանդուն կռուազան քննադատ։ Սուր եւ թափ միտք մը ունի, եւ իր հեգն կճող է, բառերն հատու են, բաւագիօրէն, մանաւանդ երբ Թական իր հակառակորդ կը պատկանի։

Ներկայ հատորը, ինչպ զանոնք կը տեսնեմք, ակ օրէն կը յիշեցնէ մեր մեծ գիծաքան՝ Ե Ե. Պարոնեանի գեային Ջոլերը»։ Պարոնեան տիտղոսին տակ ներկայացու իր շրջանին ազգային մեծ քերը, որոնց թէեւ երբ մոմ իսկական ոչինչ ունին մեծ ղոսն արժանացնող, չատ բացառութեամբ։ Այսու հան անոնք օրուան մեծաւորներ եւ ազմուկը կը բարձրանար անունին չուրջ։

Ժան Փիոյի փորձն եւս պէս է։ Ան նիւթ առած է՛ օր համար՝ Արիսդիտ Պրիանը, ը լըռանը, փուանքարէն, փէլ էօն Պլումը, Լուչէօրը, Անտրէ Մաժինօն եւլն։

Այդպէս, Ժան Փիո մ ռայ կը բերէ բազմաթիւ փրանսական դէմքեր, կը կացնէ զանոնք մեր առ բացատրէ կարգ մը հակ կողմերն անոնց, կը փ անոնց երիսի դիմակը, ու դ բերէ անոնց գեղն ու չնորհը, անճոռնութիւնն ու փոքրթիւնը։

Վէպ մը չպիտի պար՛ այդքան հաճոյք, մ՛այդ գեկան գերագոյն ըմբռ որքան Ժան Փիոյի այդ նկ յակապ գիւտեր ունի, անտեսի նմանութիւններ, խ մերթ կծու եւ մերթ անր րելի, ակնարկութիւններ, մ յումներ՝ առանց ազմուկի։

Այդ պատճառով իր ներկայացնէ ուրիշ շահեթիւն մը մեզ, Հայերուս մար, եւ մասնաւորապէս մ ւանագէտներուն համար։ Ըր րապէս, մենք, Հայերս չու Թիւրեպական հոգին, մօտեցած ենք Հայկական նութեամբ, — չըմբռնելով կան արժէքը — գատողո անոնց յայտարարութիւն խարուած ենք բացարձակ սրտի ամենայն հանդարտու՛ լ՝ խաբած ենք մեր ժողո Այդ անփորձութենէն կ այն երկա՛ր գանկը Հայ րուն, որոնք ա՛յնքան Հ են եղած օ՛րքան Թրքասէր սասէր, չինասէր։

Պատահական չէր, երբ էի ներկայ գրութեան սկիզ Ժան Փիոն կը յիշեցնէր Պարոնեանը։ Գիտենք պ Պարոնեան, իր Ազգային Ջ մէջ կարապետ պէյ Եր ներկայացուցած էր խինտ նական եւ կծու տողով մը փիօ եւս, ամենայն լրջութ իր գանկին մէջ կը յիշ Անտրէ Մաժինօն, եւ գիտէ ինչ գրած է անոր մասին.

ANDRE MAGINOT
Sergent, Deux mètres.

Այո՛, երեք բառ, երեք ներու հեգնանք սակայն բառ՝ բովանդակ նկարագիրը տալու համար, եւ իբր ար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐՈՒՆ ԹԻՒԸ

Հայաստանի արդիւնաբերական գործակցութեան մէջ արձանագրուած աշխատաւորներուն թիւն է 7,070, որոնք կը բաժնուին ըստ սեռի եւ ըստ արհեստի հետեւեալ կերպով.

Արհեստ	Աշխատաւոր	կին
Գործագործութիւն	1463	1463
Ջուլհակ	828	472
Հիւսուածեղէն	122	115
կար ու ձեւ	449	175
Ընկերութեանց մէջ	1693	332
Սնունդի մատակար.	60	17
Արդիւնաբերութիւն	203	57
Թայտագործներ	234	—
Մետաղագործներ	284	1
Կօշկակարներ	919	6
Արհեստանոցի մէջ	550	—
Շինութեանց մէջ	265	—

Այս ցուցակին ի՛մաձայն, կիները մեծ թիւ կը կազմեն։ Այսպէս՝

1928ին 720 հոգի, 215ը կին
1929ին 3327 » » 1580ը »

1930 (յունուար) 5701 հոգի, 2229ը կին, 1930 (ապրիլ) 7070 հոգի, 2619ը կին։

ՀԱՅԿԱԿԱՆ ԹՈՒՂԹԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱՐԱՆԸ

ԼՈՆԴՈՆ, 23 նոյեմբ.— Բրիտան. մամուլը մեծ ուշադրութեամբ կը հետեւի Հայկական հարցի շուրջ տարուող բանակցութիւններուն։ Ասոնց մասին կը գրէ նաեւ «Մանչեսթըր Գարտիըն»։ Ան կը գրէ, թէ Ազգերու Լիգայի ներկայ նստաշրջանին ամենէն կարեւոր հարցերէն մէկը հանդիսացող Հայկական հարցի մասին բանակցութիւնները կը շարունակուին։ Ան կը յիշեցնէ, թէ Հայաստանի ներկայացուցիչ Ահարոնեան Ազգերու Լիգայի Գործադիր Մարմնի նախագահ Պրիանի հետ ունեցած հանդիպումէն յետոյ յայտարարած է, թէ ինք յոյսը յայտնած է, որ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ հաշտութեան պայմանագիր մը պիտի կնքուի։ Ան կը գրէ, թէ Հայաստանի ներկայացուցիչը Ազգերու Լիգայի Գործադիր Մարմնի նախագահ Պրիանի հետ ունեցած հանդիպումէն յետոյ յայտարարած է, թէ ինք յոյսը յայտնած է, որ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ հաշտութեան պայմանագիր մը պիտի կնքուի։ Ան կը գրէ, թէ Հայաստանի ներկայացուցիչը Ազգերու Լիգայի Գործադիր Մարմնի նախագահ Պրիանի հետ ունեցած հանդիպումէն յետոյ յայտարարած է, թէ ինք յոյսը յայտնած է, որ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ հաշտութեան պայմանագիր մը պիտի կնքուի։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԱԶԳԵՐՈՒ ԼԻԳԱՅԻ ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԻՆ ՄԷՋ

Ազգերու Լիգայի Գործադիր Մարմնի նախագահ Պրիանի հետ Հայաստանի ներկայացուցիչ Ահարոնեանի ունեցած հանդիպումէն յետոյ, որուն ընթացքին Հայաստանի ներկայացուցիչը յայտնած է, որ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ հաշտութեան պայմանագիր մը պիտի կնքուի, Ազգերու Լիգայի Ժողովի օրակարգին մէջ Հայկական հարցը կը գրաւէ 16-րդ տեղը։ Ան պիտի քննարկուի 1927-ին։

Ժողովի օրակարգին մէջ կը մտնեն նաեւ Սիւրիոյ եւ Լիբանանի հարցերը, որոնց քննարկումը կը սկսի 1927-ին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԱԶԳԵՐՈՒ ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԻՆ ՄԷՋ

Ազգերու Լիգայի Գործադիր Մարմնի նախագահ Պրիանի հետ Հայաստանի ներկայացուցիչ Ահարոնեանի ունեցած հանդիպումէն յետոյ, որուն ընթացքին Հայաստանի ներկայացուցիչը յայտնած է, որ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ հաշտութեան պայմանագիր մը պիտի կնքուի, Ազգերու Լիգայի Ժողովի օրակարգին մէջ Հայկական հարցը կը գրաւէ 16-րդ տեղը։ Ան պիտի քննարկուի 1927-ին։

Ժողովի օրակարգին մէջ կը մտնեն նաեւ Սիւրիոյ եւ Լիբանանի հարցերը, որոնց քննարկումը կը սկսի 1927-ին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԱԶԳԵՐՈՒ ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԻՆ ՄԷՋ

Ազգերու Լիգայի Գործադիր Մարմնի նախագահ Պրիանի հետ Հայաստանի ներկայացուցիչ Ահարոնեանի ունեցած հանդիպումէն յետոյ, որուն ընթացքին Հայաստանի ներկայացուցիչը յայտնած է, որ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ հաշտութեան պայմանագիր մը պիտի կնքուի, Ազգերու Լիգայի Ժողովի օրակարգին մէջ Հայկական հարցը կը գրաւէ 16-րդ տեղը։ Ան պիտի քննարկուի 1927-ին։

Ժողովի օրակարգին մէջ կը մտնեն նաեւ Սիւրիոյ եւ Լիբանանի հարցերը, որոնց քննարկումը կը սկսի 1927-ին։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԱՍԷՐ ԳՐՔԵՐ

Ա. Ա. Ռայթ. Հայկական հարցը եւ Անգլիան։ Լոնտոն, 1917։ Գին 1 շիլինկ։

Ա. Ա. Ռայթ. Հայկական հարցը եւ Անգլիան։ Լոնտոն, 1917։ Գին 1 շիլինկ։

Ա. Ա. Ռայթ. Հայկական հարցը եւ Անգլիան։ Լոնտոն, 1917։ Գին 1 շիլինկ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԱՍԷՐ ԳՐՔԵՐ

Ա. Ա. Ռայթ. Հայկական հարցը եւ Անգլիան։ Լոնտոն, 1917։ Գին 1 շիլինկ։

Ա. Ա. Ռայթ. Հայկական հարցը եւ Անգլիան։ Լոնտոն, 1917։ Գին 1 շիլինկ։

Ա. Ա. Ռայթ. Հայկական հարցը եւ Անգլիան։ Լոնտոն, 1917։ Գին 1 շիլինկ։

թիւններու հետ, ժամադրութիւն ունէր։ Այս պատճառաւ էր որ յաջորդ օրուան համար (կիրակի) ճամբեր էր իր ինքնաշարժի հաւատարիմ վարիչը։ Նոյն օրը ժամը 10ին տունէն ելաւ։ Վերջին անգամ, իր մարդիկը, գինքը տեսած են Մոնթարնաս, շատ գրգռուած վիճակի մէջ։ Մէկուն կը սպասէր։

Պուրջէֆ կ'աւելցնէ թէ, կուտէպովի Զեկայի մարդոց հետ ինքնաշարժ մտնելուն պէս, թմրեցուցիչի մը ազդեցութեամբ, կորսնցուց գիտակցութիւնը եւ մեռաւ սրտի կաթուածէ։ Անոր դիակը, բոլշեւիկներուն կողմէ դրուեցաւ պայուսակի մը մէջ, եւ օգտուելով իրենց դիւանագիտական արտօնագիրէն, յաջողեցան պայուսակը ղրկել Գերմանիա, Շթէթթինի ճամբով։ Անկից Տանցիկ եւ Մոսկուա։

Մոսկուայի մէջ, կուտէպովի մարմինը այրուեցաւ գաղտնի։ Դիւանի եւ Զեկայի մարդոց ներկայութեան։

Պուրջէֆ կը յայտնէ թէ այս մանրամասնութիւնները քաղած է մէկէ մը, որ շատ լաւ կը ճանչնար կուտէպովը եւ տեսած է անոր մեռնիլը, եւ թէ առեւանգման բոլոր փաստերը պիտի տայ անհերքելի կերպով։

Իտալիոյ մէջ ընտրութիւն՞

Նիսի մէջ հրատարակուող ֆրանսական թերթի մը տեղեկութեանց համաձայն, կացութիւնը ծանր է Իտալիոյ մէջ, ուր անգործութեան հետեւանքով, ըմբոստացման դէպքեր կը պատահին։ Կարգ մը գործարաններու մէջ, ամբողջ մէկ ամիս, բանուորները աշխատած են շաբաթը երկու օր, իսկ յաջորդ ամիսը բնաւ չեն աշխատած։

Թուրէնի մէջ, ինքնաշարժի մեծ գործարան մը՝ Ֆիատ մէկ անգամէն ճամբած է 600 գործաւորներ։ Մնացեալ բանուորները թոյլ չեն տուած որ իրենց ընկերները զրկուին գործէ եւ անոնց հետ համերաշխ, դադրեցուցած են աշխատանքը, առանց դուրս ելլելու գործարանէն։ Ուտիկանութիւնը չէ կրցած զսպել զանոնք եւ ստիպուած է գինուորական ուժերու օգնութեան դիմել։ Գործաւորներու եւ կառավարական ուժերու բախումի մը ընթացքին, շատեր վիրաւորուած եւ շատեր ալ ձերբակալուած են։

Իտալական թերթերը ո՛չ մէկ լուր կ'արձանագրեն այս մասին։

Դաս մը բոլշեւիկներու դէմ

Խորհրդային իշխանութեան կողմէ գրաւման եւ ազգայնացման ենթարկուած «Տոպրոֆլոթ» նաւային ընկերութեան վրայ՝ 1,250,000 ֆրանք առնելիքի դատ մը տեղի ունեցեր էր փարիզի առեւտրական դատարանին առջեւ։ Դատարանը «Տոպրոֆլոթ»ի պարտքին պատասխանատու նկատեր էր Փարիզի Խորհրդ. առեւտրական ներկայացուցչութիւնը, եւ արտօներ էր վճռին ժամանակաւոր գործադրութիւնը։

Իսկ դատը շահող պարտապահանջը, վճռին գործադրութիւնը եւ իր պահանջին գանձումը ապահովելու համար, ձեռնարկեր էր օրինական գրաւման ենթարկել Խորհր. Առեւտրական ներկայացուցչութեան շէնքը, գոր կ'ուզէր ծախել տալ։ Խորհր. Առեւտր. ներկայացուցիչը դիմեց վերաքննութեան եւ միեւնոյն ատեն պահանջեց որ իր շէնքին դէմ օրինական գրաւման ձեւակերպութիւնները դադրին, մինչեւ վերաքննիչ ատեանի վճիռը։

Դատարանը մերժեց դիմումը եւ վճռեց թէ պարտապահանջը իրաւունք ունի շարունակելու շէնքին վրայ օրինական գրաւման ձեւակերպութիւնները։

Պուխրէշի խորհրդաժողովը

Ռումանիոյ, Եուկոսլաւիոյ եւ Չունգարիոյ միջեւ, Պուքրէշի մէջ տեղի ունեցող երկրագործական խորհրդաժողովը կը շարունակէ իր աշխատանքները։

Երեք պետութեանց ներկայացուցիչները միաձայնութեամբ մշակեցին երկրագործական արտադրութիւններու սպառման վերաբերեալ ծրագիր մը, հիմնուած երկրագործներու շահերուն վրայ։ Այս ծրագիրը մանրամասնօրէն պիտի ներկայացուի Ազգերու Դաշնակցութեան, իբր պատասխան մաքսային տուրքերու վերաբերեալ անոր հարցարանին։

Գլխաւորաբար, խորհրդակցութիւններ կատարուած են երեք երկիրներու մէջ երկրագործական արտադրութեանց գլիները իջեցնելու մասին։ Որոշուած է նոր խորհրդաժողով մը եւս գումարել աշնան, քննելու համար նախորդ խորհրդաժողովի որոշումներուն արդիւնքը։

ՎԱՐԶՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ ՔԼԱՍԱՌԻ ՄԷՋ

Շոգեկառքի եւ ինքնակառքի կայարաններուն մօտ

Արեւոտ եւ լուսաւոր դիրք։ երեք սենեակ, ճաշասրահ, խոհանոց, Cabinet de Toilette, ջուր, կազ, ելեկտրականութիւն, կեդրոնական ջեռուցիչ եւ հեռաձայն։ Դիմել ամէն օր՝ 27 Rue Lazare Carnot, Clamart.

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

ՃԱՇԱՐԱՆ ՁԼՕՐԻԱ

61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)

Մէթրօ Օտէոն եւ Սէն Միշէլ Հեռաձայն Littré 38—43

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ

ԼԻՈՆԻ ԵՒ ԾՐՋԱԿԱՅԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Ջատկի տօնի առիթով KYSA կօշիկի վաճառատան մէջ

209 Rue Duguesclin (angle rue Dunoir), Lyon



պիտի գտնէք սեփական արհեստանոցի մէջ ժամանակաւոր խնամքով պատրաստուած այրերու եւ կիներու Ֆանթէզի եւ ամէն տեսակ տոկուն կօշիկներ։

ԳԻՆԵՐԸ ԱՆՄՐՑԵԼԻՕՐԷՆ ԱԺԱՆ

կը բաւէ անգամ մը այցելել հաճոյանալու համար

ԾԱՆՕԹ.— Նոյն կօշիկները կը գտնուին մեր երկրորդ վաճառատունը 217 Rue Garibaldi, angle rue Paul-Bert.

Ամէն տեսակ կօշիկներ խնամքով կը նորոգուին մեր արհեստանոցին մէջ

ՏԷՐ եւ ՏՆՕՐԷՆ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ ԵՂԲԱՐՔ

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ԽԱՆԱՍՈՐԻ ՏԱՏԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԱՐՂՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԻՆ ԿՈՂՄԷ

Վաղը կիրակի Շավիլի անտառին մէջ

Fontaine St. Marie վայրը

Կը նախագահէ Ընկ. ԳԻՒԼԱՆԴԱՆԵԱՆ

Ժամը 4ին այցելութիւն ընկ. Իշխան Արղուեթեանի գերեզմանին

Իջնել 1 թիւ հանրակառքի Chavilleի Doisu կայարանը ուր կը սպասեն առաջնորդներ։

''ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԻԱՆՔԸ,, ՌՕԱՆԻ ՄԷՋ

Հ. Յ. Դ. Ակնունի խումբին կողմէ վաղը Կիրակի

Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ

ՄԵԼԻՔ ՅԱԿՈԲԵԱՆԻ ՄՏԱ-ՀԱՃՈՒԱԿԱՆ ՓՈՐՁԵՐԸ

Այսօր Շաբաթ իրիկուն ժամը 8.30ին Sociétés Savantesի Սրահին մէջ 8 Rue Danton, մէթրօ՝ Սէն Միշէլ տեղի կ'ունենայ հանրաճանաչ *Մելիք Յակոբեանի մաթիմաթիքական խիստ հետաքրքրական գիտական փորձերը։*

Այդ փորձերը կատարուած են Հայաստան, Ռուսաստան, Պարսկաստան, Սուրիա եւ մեծ հետաքրքրութիւն առաջ բերած։

ՄՈՒՏՔ 5 ՖՐԱՆՔ

Հ. Ց. Դ.

ՓԱՐԻԶ

Անիլի-Պուա Բոլոնպի Ջէյթուն ենթակոմիտէն ստիպողական ընդհ. ժողովի կը հրաւիրէ Եռագոյն, Վիշապեան եւ Փոթորիկ խումբերու բոլոր ընկերները, վաղը Կիրակի իրիկուն ժամը հիշատ 8.30ին ծանօթ հաւաքատեղին։ Կարեւոր օրակարգ և ղեկոյց ներկայացուցչական ժողովի։

ԳԱԽԱՌ

Սէն Շամոնի ենթակոմիտէի ընդհ. ժողովը այսօր Շաբաթ իրիկուն ժամը 7ին վարուժան ակումբին մէջ։ Խիստ կարեւոր օրակարգ։ Բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ եւ պարտաւորիչ է։ Ներկաներու թիւը մեծաժամանութիւն պիտի համարուի։

ՄԱՐՍԷՅԼԻ Պատ. Միութեան ընդհ. ժողովը՝ այսօր Շաբաթ իրիկուն ժամը 8.30ին, 63 Բիւ տը լա Բէֆիւպլիք սրճարանին վերնայարկը։

ՌՈՍՏՈՄ Գրադարանը փակ է Օգոստոս 1 — Սեպտեմբեր 1։ Իրենց ժամ դիրք ունեցողներէն կը խնդրուի շուտով վերադարձնել դիրքերը։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՄԱՐՍԷՅԼԻ Հայ Էվէնկական միութեան ժողովը վաղը Կիրակի առաւօտ ժամը 8.30ին Rue Colbert, Bar de la Postի սրահին մէջ։

ՏԱՐՕՆ Տարուբերանի Հայր. միութեան Տէսինի մասնաճիւղի ընդհ. ժողովը վաղը Կիրակի ժամը 2ին Սօսիէթէ Լիոնէզի սրահը։ Կարեւոր օրակարգ։ Պարտաւորիչ ներկայութիւն։

Զ. Ե. Ո. Միութեան Փարիզի մասնաճիւղինընդհ. ժողովը այսօր շաբաթ իրիկուն ժամը 9ին Ֆլորիայի մէջ։ Կարեւոր օրակարգ։ Բոլոր ընկերներուն ներկայութիւնը պարտաւորիչ է։

Ժամը 11ին պիտի ներկայացուի սինէմա մը Միութեան կեանքէն առնուած։

*** Մասնաճիւղը 15 Օգոստոսին պիտի տայ դաշտահանդէս մը։ Կը խնդրուի նկատի ունենալ այս թուականը։

Հ. Մ. Ը. Մ.ի բոլոր ֆութպոլիստները կը հրաւիրուին ժողովի, այս երեքշաբթի իրիկուն ժամը 8.30ին, Gare de l'Estի մօտ «Au Tramway de l'Est» սրճարանին վերնայարկը, խումբերու կազմութեան, միջմասնաճիւղային մրցումներու, եւ խաղացողներու ապահովագրութեան պէս կարեւոր խնդիրներու շուրջ խորհրդակցելու համար։ Այս առթիւ անոնք որ դեռ իրենց licenceները չեն ստորագրած, պէտք է իրենց հետ բերեն 3 լուսանկար։ Յուլիս 31ը վերջին պայմանաժամն է։

Շ. Ց. Դ. Լիոնի ժողովրդային Գրադարանը բաց է՝ Չր. երեկոյները ժամը 7—8, իսկ Գշ. եր. եւ Ուր. երեկոները ժամը 7էն 8.30։ Նոր բաժանորդագրուիլ փափաքողները դիմեն B. Sahatjianի, 262 Rue Duguesclin, Lyon.

ՏԷՐ եւ Տիկին Ալանեան, Այրի Տիկին Ալիկիւ Քէշիշեան եւ զաւակունք (Պոլիս), Տէր եւ Տիկին Կարապետ Աբրահամեան եւ զաւակունք (Պոլիս), Տէր եւ Տիկին Պօղոս Գըրմըզեանզաւակունք (Նիւ-Եորք), Տէր եւ Տիկին Աւետիս Թապագեան (Նիւ Եորք), Տէր եւ Տիկին Յակոբ Գըլըճեան եւ զաւակունք (Նիւ-Եորք), Տէր եւ Տիկին Տիրան Թապիպեան եւ զաւակունք, Տէր եւ Տիկին Բարսեղ Չաքարեան եւ զաւակունք, այրի Տիկին Լուսափայլ Չագմագլեան եւ զաւակուք, Պ. Վահան Թունտաեան եւ Պ. Միքայէլ Կէմիճեան սրտի խորունկ կսկիծով կը ծանուցանեն իրենց սիրեցեալ որդւոյն, եղբօրորդւոյն եւ ազգականին

Պ. ՎԱԶԳԷՆ ԱՍԼԱՆԵԱՆԻ

դառնաղէտ մահը՝ որ տեղի ունեցաւ յետ երկարատեւ հիւանդութեան 17 տարեկան ծաղիկ հասակին մէջ։

Յուղարկաւորութիւնը պիտի կատարուի այսօր Շաբաթ առաւօտ ժամը 11.30ին Փարիզի Հայոց Եկեղեցին, 15 Rue Jean Goujon։ Հանգուցեալոյն մարմինը պիտի ամփոփուի Pantinի գերեզմանատունը։

Մահամղ ղրկուած չըլլալով կը խնդրուի ներկայս իբր այն նկատել։

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Հարան Աբարեան կը փընտռէ իր եղբօր Դարեգին Աբարեանի կինը Ազնիւ (Բաբերդի Խփոց գիւղացի Թաւեպենց Մխսակիաղէկը)։ Լուրառնուած է որ Ազնիւ 1921էն կրկին ամուսնացած է Ատաբազարի մէջ։ Կը կարծուի թէ այժմ կը գտնուի Ամերիկա։ Իմացնել՝ Haran Aparianի, 31 Rue de l'Infermerie (Drôme), France. Լուր տուողին 50 ֆրանք նուէր։ Կը խնդրուի ամերիկահայ թերթերէն արտատպել։

— Մարաշցի Մարգարիտ Տէյիրմէնճեան կը փնտռէ իր եղբօր զաւակները՝ Բէօֆիքեան Միսաքի որդի Սարգիս (20 տարեկան) եւ Յովհաննէս (18), ինչպէս նաեւ Բէօֆիքեան Վանէսի որդի Նազար (20 տարեկան)։ Առաջին երկուքին մասին լուր չկայ 1915ի մեծ տարաժրութենէն իվեր, իսկ Նազար 1923ին կը գտնուէր Պէյրութ՝ Անթիլիասի որբանոցին մէջ, յետոյ Սուրիացիի մը ժամ կը ծառայէր, անկէ իվեր լուր չկայ։ Տեղեկացնել Պ. Ղազարոս Տէյիրմէնճեանի, 61 Bld. Beaumont, St. Julien, Marseille.

ԼՈՑՈ ՏԵՍԱԻ

ANTARAM DE TRÉBIZONDE

(ՏՐԱՊԻԶՈՆԻ ԱՆԹԱՌԱՄ)

(Պսակուած տիկին Զօրավար Պրէմոնի գրական առաջին մրցանակով։)

Հեղինակ՝ Paule Henry - Bordeax ծանօթ ակադեմականին աղջիկը։

Այս նոր գրքին մէջ պատկերացուած են հայ ժողովուրդի հերոսական ժարտնջումներն ու դիւցազնական պայքարը։

ԳԻՆ 15 ՖՐԱՆՔ

Դիմել գրատուն Հրանտ Սաժուէլ, 51 Rue Monsieur le Prince, Paris. Մէթրօ Օտէոն. Հեռաձայն Danton 88—65.

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ

96 r. Rivoli, մէթ. Շաթլէ։ Սրմատ. եւ նոր մեթոտով դարմանումն արանց եւ կանանց մորթի, արիւնի եւ վէնէրո. հիւանդութեանց (ֆրանկախտ, կերմամիզ.) եւ վարիսի։ Մասն. լապօռատուռ։ Ազատ եւ արագ խորհրդակցութիւն ամէն օր 9—12, 2—8 Կիրակի 9—12։

ՄԻՄԻԹ

Անուան արժանի է միմիայն այն սիմիթը որ պատրաստուած է A. LA GARDE, 1 Rue St. Lazare, PARIS (9e) Nord Sud, N. D. de Lorette. Téléphone Trudaine 95.21

Վարձու է 100 քառ. մէթր տարածութեամբ լուսաւոր եւ օդասուն արհեստանոց մը որ ունի նաեւ երկու սենեակ, խոհանոց, ջուր, կազ, ելեկտրականութիւն։ Յարմար ամէն գործի։ Պայմաններու մասին դիմել Պ. Մ. Ադաբէկեանի, 35 Rue Emile Desveaux, Մէթրօ՝ Place des Fêtes.

STUDIO D'ART MANOUK

Մարսէյլի գեղարուեստական լուսանկարչատունը՝

116 La Canebière

ուր պիտի գտնէք արուեստի կատարեալ բաւարարութիւն, ինչպէս նաեւ ամառնային բացօդեայ ժամանցներու համար ընտիր մեքենաներ ամէն պիտոյքներով։ Վճարումներու դիւրութիւն։ Ցափաւոր գին։

ՄԱՆՈՒԿ ՄԱՐԿՈՍԵԱՆ

ԲԺՇԿ. ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ

10 Rue Beaugrenelle, Paris

Մէթրօ՝ Beaugrenelle

Միզանցքի, փրոսթաթի, մորթի, արիւնի, կանանց հիւանդութիւններ եւ ֆրանկախտ։ Ամէն օր ժ. 10—12 եւ 3 9։ կիր. եւ տօն օրեր 10—12։

Կ'ՈՒԶՈՒԻՆ

ստիպողական բուրդ ժխտօսք, քաղաք, քոնպինէզոն քոռսաժ կարող վարժ կարներ։ Լաւ վճարում եւ տեւական գործ։

Մաքուր չկարողները տեղը չներկայանան։

Դիմել՝ Օր. Ջապէլի, 40 Rue la Mare, Ա. յարկ թիւ 5 սեակ

Կ'ՈՒԶՈՒԻ

վարպետ գործուոր մը, որ ճշտիկի նորոգութեան ենթարկէ բաբերեայ բոլոր մանրամասնութիւնները։ Թիւնները։ Ֆրանսերէն խօսող պարտաւորիչ է, լաւ պայներ։ Դիմել՝ Crepocuire, 71 Rébéval, Belleville.

EMPIRE Մէթրօ-Շօ՝ 37 Av. Wagram

IMPRIMERIE - MASSIS - ÉDITEUR

208bis, Rue Lafayette Paris

Le Gérant H. STEPHAN

ALLO, ALLO

Tél. TRUDAINE 81 07

Այս է թիւը մեր թէլէֆոնին

ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՁԷՆԱԶԵԱՆ եւ ԳԱՍԱՆՃԵԱՆ

8, Rue de Chateaudun, PARIS (9e)

Métro Cadet, Peletier եւ Notre Dame de Lorette խաչմերուկ

ՏՕՔԹ. ԱՍԼԱՆ

38 Rue Rochechouart Մէթրօ Cadet 4 Anvers Autobus J. J.

Tél. TRUDAINE 56 - 58

Թոքերու, Ստամոքսի, Լեարդի եւ Աղիքի հիւանդութիւններ։ Ցաւուկ յարկաբաժին վէնէրական եւ Մորթի հիւանդութիւններ։ ULTRA - VIOLET ճառագայթներով կը դարմանէ մորթի, ջղային, արեան հիւանդութիւններ եւ ցօդացաւ։ Կ'ընդունի ամէն օր ժամը 9—12 եւ 3—7, կիր. մինչեւ կէս



ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Միշտ ունենալու համար ապուխտի եւ երշիկի ընտիր համեղ եւ մաքուրը, դիմեցէք ուղղակի հանրաճանաչ պուխտագործ եւ ապուխտավաճառ

HAIG MARACHLIANի

Fabrique des salaisons Orientales

16 Rue des Hortensias St. Just, MARSEILLE

որ իր յարգելի յաճախորդներուն դիւրութիւն տալու համար բացած է նաեւ մասնաճիւղ մը (կայարանին մօտ) 55 Rue des Petites Maries MARSEILLE.

Կ'ընդունի ապսպրանքներ ամէն երկիրներէ, մեծ եւ մանր քանակներով։ Ցաւաքոյթներու եւ յաղթանակ կատարեալ ճշտապահութեամբ

ՅԱՌԱՋ

LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԲԱԺԱՆԵԳԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70ֆ.	140ֆ.
ԱՆԳԼԻԱ		20 շլ.	40 շլ.
ԵԳԻՊՏՈՍ		»	»
ԻՏԱԼԻԱ		250 ֆրանք	
ԱՄԵՐԻԿԱ		6 տլ.	10 տլ.
ԵՒՐՈՊԱ		100 ֆ.	200ֆ.

"HARATCH"

Directeur-Propriétaire
SCH. MISSAKIAN
Խմբագիր՝
Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Rédaction et Administration
Խմբագրութիւն եւ վարչութիւն
235, Faub. St.-Martin
PARIS (10e)

MÉTRO: LOUIS-BLANC OU JAURÈS
Téléphone : NORD 67-23
R. C. SEINE 376.286

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 3 ֆրանք

ԿԻՐԱԿԻ
27
ՅՈՒԼԻՍ
1930
27 JUILLET 1930

Զ. ՏԱՐԻ Թիւ 132 — ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ — ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԽԱՆԱՍՈՐ

1897ին, ասկէ 33 տարի առաջ, տեղի ունեցաւ Խանասորի արշաւանքը։ 90ական թուականներու յեղափոխական սերունդը, որ անձնական ճիգով մը, հայ ազատամարտի շեփորը հնչեցուցած էր դարաւոր ստրկութեան տակ հեծող ժողովուրդին մէջ, ներագոյն ջանքեր կը փորձէր, անձնական հերոսութեան եւ յեղափոխութեան օրինակով, ժողովրդական զինեալ բազուկը արթնացնելու յանուն մարդկային տարրական իրաւունքներուն։

95ի եւ 96ի թրքական ջարդերէն յետոյ, 97ի Խանասորի արշաւանքը յեղափոխական հակահարուած մըն էր, այն սանձարձակ բռնակալութեան դէմ, որ ստրուկ ու ենթարկուող ազգութիւններու հանդէպ հետզհետէ կը դառնար աւելի անուղղակի ու աւելի բարբարոս։

Հայ ազատագրական յեղափոխութեան տասնեամեակը բոլորուած էր արդէն, իրեն դէմ ունենալով թուրք դաժան բռնակալութիւնը՝ Համիտի գլխաւորութեամբ, եւ քիւրտ ամբողջ ազգաբնակչութիւնը՝ քիւրտ աւատապետներու ղեկավարութեամբ։

Ա. Հրոդոտ չորս հարիւր տարուան պատմութեան մէջ, թուրք-քրտական յարաբերութեան պատմութիւնը չէ արձանագրած այնքան անպատիւ ու զազրելի դեր մը, որ ստանձնեց քրտութիւնը Համիտեան վարչաձեւի ընթացքին։ Տգէտ աւատապետ քիւրտը նետուեցաւ թրքական ռեաքսիոնի մէջ, իր եռեւէն քաշեց ամբողջ ցեղը, ու դարձաւ ամէնէն խոշոր խոչընդոտը հայ ազատագրական շարժման։ Հայ ազատագրական շարժման յեղափոխութիւններէն ամէնէն գլխաւորն այն եղաւ, որ անհիպոտեզաւ հէնց առաջին օրերէն սկսած, կուռիլ երկու տիրապետութեան դէմ, ու նետուիլ երկու կրակի մէջ։ Հակառակ հայ յեղափոխութեան գիտակից փորձերուն, հնար չեղաւ քրքրութիւնը բաժնել թուրքերէն։ Ու երբ հայկական կոտորածները տեղի ունեցան, արիւնարբու ամբոխներուն հետ խօսելու եւ մասամբ մը զգաստութեան բերելու միակ միջոցը կը մնար մէնքը։

Քիւրտ ցեղապետները վարժուած էին տեսնել հայը հլու պատակի դերին մէջ։ Ու երբ հայ ճորտը սկսաւ իր տարրական իրաւունքները պաշտպանել, թուրք եւ քիւրտ միացեալ ուժը հարուածեց զայն կրկնակի ատելութեամբ։ Քիւրտի եւ թուրքի ընմբռնումներուն մէջ հայը «մարդ» չէր, որովհետեւ ան զէնք եւ ձի չունէր եւ այդ իրաւունքէն ալ զուրկ էր։ Հայ ներգափոխութիւնը հնչեց արտասովոր կերպով, հնչեց ոտքով եւ զէնքով, միակ միջոցը յարգանք ներշնչելու քրտական բազուկներուն։

Հ. Յ. Դաշնակցութեան ձեռնարկը, 1897ին, 300ի չափ զինեալ ֆէդայիներ կը հանէր Խանասորի դաշտին եւ լեռնանցքերուն վրայ, խիզախ ու շշմեցնող հարուածով մը՝ քիւրտ աւատապետներուն եւ թրքական պահակազօրքին ցոյց տալու հետզհետէ ուռճացող հայ զինական կորովը։ Ու այդ տեսակէտէն Խանասորի արշաւանքը հայ յեղափոխութեան զինուորական կարեւոր ցոյցերէն մէկը պիտի մնայ, որու արձագանգը որ աւիւն ներշնչեց զգետնուած ժողովուրդին, և որոշ չափով գաստութեան մղեց սահմանի քիւրտ ցեղապետները։

Շատ յաժախ խօսուած է Խանասորի նշանակութեան մասին։ Շատերը կարող են անտարբեր անցնիլ պատմական երեւոյթներու կողքէն եւ յուսահատի անհաւատութեամբ անտեսել արժէքն այն ցնցումներուն, որոնք 90ական թուականներու հայանիներու անխուսափելի արդիւնքներն էին։ Աւելի հեռու ապագային, առարկայական վերազնահատութիւնը պիտի կրնայ աւելի լաւ արժէքաւորել մեր անցեալը, քան այս հիասթափուած, ընչին սերունդը։

Ինչ որ հետաքրքրական է և պատմական նշանակութիւն ունի, այն մեծ փոփոխութիւններն են, որոնք տեղի ունեցած են անցած 33 տարիներէն ի վեր։ Խօսքը չտարածենք ամբողջ պատմութեան վրայ, այլ սահմանափակուինք հայ, քիւրտ և թուրք ժողովուրդներու յարաբերութիւնները բաղդատութեան նելով։ 1897ին, հայ նորակազմ յեղափոխութիւնը ազատութեան կռիւը ստիպուած էր տանիլ իրմէ շատ գերազանց երկու ժերուն դէմ Արարատէն մինչեւ Խանասոր, Սիփանէն մինչեւ Մուշ։ Այսօր, 33 տարի յետոյ, նորէն ազատագրական արիւնալի կռիւներու թատերաբեմ դարձած է Խանասորը, Արարատէն մինչեւ Մուշ։ Սակայն այսօր, Հ. Յեղափոխութեան դէմ առնող քրտութիւնը իր զէնքը դարձուցած է թուրք ցեղին և հնակալութեան դէմ, որ դարերով հայ և քիւրտ ժողովուրդի ասարակաց թշնամին էր։

Երկու ճնշուած ժողովուրդներու ազատագրութեան ուղիղ անապարհը այս էր, որ սակայն 40 տարի ուշացաւ, մինչեւ հնք ուժասպառ եղանք։ Բայց աւելի լաւ է ուշ, քան երբէք։ երերն ու դիրքերը փոխուած են։ Պատմութեան հսկայ վերիւրութիւններէն յետոյ, ճակատները որոշուած են։ Եւ որքան , այսօր, տակաւ ըլլան հայ և քիւրտ ժողովուրդները, սակայն ատմութեան թելադրած ներկայ ուղիղ ճանապարհով պիտի անին իրենց լիակատար ազատութեան։

Խանասորի արշաւանքը երէկ կը ձգտէր հայ ժողովուրդի ատութեան, իսկ այսօրուան Խանասորի արշաւանքը գրական մըն է հայ և քիւրտ ժողովուրդներու ազատութեան։

Կ. Ս.

ՕՐԸ ՕՐԻՆ

ՔՐՏԱԿԱՆ ԹԱՐԺՈՒՄԸ

ՌՈՒՍ, ԹՈՒՐՔ ԵՒ ՊԱՐՍԻԿ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

(Լուրեր Թրքական աղբիւրէ)

Էնկիւրիէն Պոլիս հասած կարգ մը լուրերու համաձայն Թուրքիոյ Արտաքին գործակալ Թէվֆիք Րիւշտի, խորհրդային դեսպան Պ. Սուրից եւ պարսիկ խորհրդականը նոյն շոգեկառքով մեկնած են Էնկիւրիէն, Պոլսոյ մէջ, հանդիպում մը ունենալու համար։ Կը կարծուի թէ անոնք պիտի խորհրդակցութիւն մը ունենան քրտական ըմբոստութեան մասին։

ՔԻՒՐՏԵՐԸ ՆԵՂ ԴԻՐՔԻ ՄԷՋ

Էրզրումէն հեռագրի մը համաձայն, Արարատի շուրջ օդաչը հետզհետէ կը նեղնայ։ Թուրք սաւառնակները անդադար կը թռչին լերան շուրջը և ռումբ կը տեղեկացնեն քիւրտերուն վրայ որոնք շատ նեղ դիրքի մը մատնուած են։

Թուրք զինուորները պարաններով ու կեռերով կը մագլցին սեպ բարձունքները, շալկած իրենց զէնքերն ու գնդացիրները։

ԱՅՍՕՐՈՒԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Թուրք թերթ մը կը գրէ.—

Մեծ Ագրը լեռը (մեծ մասիսը) 5156 մեթր բարձրութիւն ունի եւ գագաթը ամբողջովին ձիւնապատ է։ Ըմբոստները 3-4000 մեթր բարձր եւ ոչ-ձիւնոտ վայրերու մէջ լարած են իրենց վրաններըՕգոստոսին պիտի աւելնայ ձիւնը, եւ ցուրտը պիտի սկսի։ Հետեւաբար, քիւրտերը ստիպուած են կամաց կամաց վար իջնել եւ իյնալ մեր ուժերուն ձեռքը, որոնք ամէն կողմէ շրջապատած են լեռը՝ ի հարկին մինչեւ ձմեռ պիտի շարունակուի գործողութիւնը։

Փոքր մասիսը որ 3862 մեթր բարձր է, չի կրնար օգտագործուիլ աւազակներուն կողմէ, պարսկաստան փախչելու համար։ Բայց եւ այնպէս իրազեկները կը պնդեն թէ սահմանի սրբագրութիւնը անհրաժեշտ է, եթէ ոչ դիւրացնելու համար սահմանի ապագայ ապահովութիւնը.

***Այսպէս լեռը, կ'ըսէ «փոլիթիքա», անպայման պէտք է գտնուի մեր սահմանին մէջ, որպէսզի թէ ներկայ շարժումները կարճ ատեւէն վերջանան եւ թէ վաղը ժամանակ մեր սահմանը ապահովենք տեսանկիւնէն։

«Դիւանագիտական աշխարհի մէջ գործող ազգային ու տնտեսական նշանակելի հակադրութիւններ իսկ, արգելք կ'ըլլան Խորհրդային Միութեան հանդէպ բռնելու ու որոշ դիրք մը, ինչպէս նաեւ մշակելու անոր դէմ պայքարի միջոցներ։ Հաշտութեան դաշնագրերը որոնք եկան պսակելու կայսերապաշտ պատերազմը, աւելի շեշտեցին այս հակադրութիւնները, յաղթական եւ պարտուած երկիրներուն միջեւ խորացնելով փոսը»։

Եգիպտոսի կացութիւնը

«Տէյլի Թելէկրաֆ»ի Աղեքսանդրիոյ թղթակիցը կը հաւատայ թէ վարչապետ Սըրաջը փաշա մշակելու վրայ է սահմանադրական օրինագիծ մը, որուն բովանդակութիւնը պիտի յայտարարէ երեք շաբաթէն։

Իր թէ եգիպտական դահլիճը մտադիր է Խորհրդարանը հրաւիրել նոյեմբերի երրորդ շաբթուն, այն տեսակ եղանակով մը, որ ան «ընտրուած» ըլլայ։ Այս նպատակով, փոփոխութեան պիտի ենթարկէ ընտրական օրէնքը, ընչելով սահմանադրութեան տրամադրած ընդհանուր քուէարկութիւնը, որ վերջին ընտրութիւններուն մէջ, բացարձակ մեծամասնութիւն մը ապահովեց Վաֆտի։

Միւս կողմէ, կ'ըսուի նաեւ թէ Վաֆտ կուսակցութիւնը որոշած էր, երէկ, շաբաթ, հակառակ կառավարութեան խիստ արգելքին, նիսայի հրաւիրել խորհրդարանը։

Իտալիոյ աղէտը

Քաղաքներու, գիւղերու եւ գործարաններու վլատակներուն տակ, կը շարունակուին մեռեալներ եւ մահամերձ վիրաւորներ փնտռելու ողբերգական աշխատանքները։

Երկրաշարժէն ամէնէն աւելի ընտուած են Ավելլինօ նահանգը։ Պաշտօնական գեկոյց մը հետեւեալ կերպով ցոյց կուտայ զոհերու թիւը.—Ավելլինոյի մէջ՝ 2176 մեռեալ, 1265 վիրաւոր։ Ֆոճճիա նահանգին մէջ՝ 93 մեռեալ։ Փոթէնցայի մէջ՝ 233 մեռեալ։ Նափոլիի մէջ՝ 9, Սալերնայի մէջ՝ 2, իսկ Պենէվինթի մէջ 24 մեռեալ, 93 վիրաւոր։

Երկրաշարժը ընտուած է 8 նահանգներու։ Նիւթական ընտուները շատ մեծ են։ 24 համայնքներ ամբողջովին, իսկ 76 համայնքեր ալ կիսովին քանդուած են։ Մեռեալներու ընդհանուր թիւը, ցարդ կը հաշուուի 2534, վիրաւորներունը մօտ 1500։ Բազմատարմ վիրաւորներու թիւին, մեռեալներու մեծ համեմատութիւնըկը բացատրուի անով որ, երկրաշարժը պատահեցաւ գիշերը, այն ատեն, երբ ամէն մարդ քունի մէջ էր թաղուած։

Տակաւին, երկրաշարժի զարհուրանքը չմեղմացած, փիավէյի հովիտը եւս ենթարկուեցաւ բնութեան սարսափներուն։ Ողբ լաւ էր, փոթորիկի որեւէ նշան չկար, երբ յանկարծ ուժգին կիկլոպ մը սկսաւ աւրել, իր ճամբուն վրայ ինչ որ գտաւ։ Կէս մամուան մէջ, հսկայ ընտներ հասցուց փիավէյի հովտին մէջ՝ 11 քաղաքներու։ 24 մեռեալներ եւ 100 վիրաւորներ կան։ 100ի չափ տուներ քանդուած են։

Պուլկարիա եւ Մեհմիխա եւս

Սոֆիայէն տրուած հեռագիր մը կը յայտնէ թէ ուրբաթ իրիկուն երկրաշարժի մէկ քանի ցնցումներ տեղի ունեցան Արեւելեան Պուլկարիոյ մէջ։ Երկրաշարժը ամէնէն աւելի, բուռն կերպով զգալի եղաւ, Պորիսովկրատի, Հարմանլըի, Սթարա Զակորայի շրջաններուն մէջ։ Սքոպէլովոյի մէջ վեց ցնցումներ բաւական ծանր ընտներ հասցուցին։

Իսկ Մեքսիկայի Փենոթենա շրջանին մէջ մէկ քանի թեթեւ ցնցումներ զգալի եղան։ Որեւէ ընտ կամ անձի կորուստ չկայ։ Բայց ժողովուրդը սարսափած է եւ գիշերները դուրսը կ'անցընէ՝ բաց օդին։

Նոր Զելանտայի մէջ եւս, մէկ վայրկեան տեւող ցնցում մը իրար անցուց Ոուէլթ-Փորթի բնակչութիւնը։

Ֆրանս. դահլիճը եւ ապրուստի գիներն

Երէկ, ֆրանսական դահլիճը, նիստ մը ունեցաւ Ռանպուլեէի մէջ, հանրապետութեան նախագահին ներկայութեամբ։

Ընթացիկ հարցերը արագօրէն լուծելէ վերջ, դահլիճը զբաղեցաւ հացի գնիբարձրացումով, ապրուստի սղութեամբ նաեւ Օգոստ. 1իտոթիւ, համալսարաններու կազմակերպելիք ցոյցին դէմ առնուելիք միջոցներով եւ ընկ. ապահովագրութեանց օրէնքին դէմ, կարգ մը շրջաններու մէջ կազմակերպուած ցոյցերով։

Վոլտէմարաս սխտորուած

Լիթուանիոյ նախկին բռնաւորը Վոլտէմարաս, կառավարութեան հրամանով ձերբակալուեցաւ Քովնոյի մէջ եւ ինքնաշարժով փոխադրուեցաւ Քրոթինկէնի շրջանը, գերմանեւռուս հին սահմանին վրայ, ուր աքսորական պիտի մնայ առնուազն տարի մը։

Աքսորին պատճառ ցոյց կը տրուի, Վոլտեմարասի ներկայութեան շնորհիւ, կարգ մը խռովութիւններու հաւանականութիւնը։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ԼՕԶԱՆԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ.— Թուրքիոյ մէջ, խանդավառութեամբ տօնուեցաւ Լօզանի դաշնագրին 7րդ տարեդարձը։ Թուրք թերթերը կը շեշտեն Թուրքիոյ պատմութեան մէջ, Լօզանի դաշնագրին կարեւորութիւնը եւ կը փառաբանեն Քէմալն ու ըսմէթը։

ԵՈՒԿՕՍԼԱՒԻԱ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ.— Իտալիոյ Պալի քաղաքին մէջ, վերջերս ֆաշիստ ուսանողներ յարձակում գործեր էին եուկօսլաւ հիւպատոսարանին վրայ եւ պատուեր էին դրօշակը։ Այս դէպքը մտահոգած է կառավարութիւնը, որ Տալմացիոյ եւ Խրուաթիոյ գիւղացիներուն հարիւրաւոր քիլոմեթր երկարութեան վրայ խրամներ փորել կուտայ։

ԼԷՆԻՆԳՐԱԴԻ ԺԱՆՏԱՏԵՆԴԸ.— Լէնինգրադի մէջ, ժանտատենդի համաճարակ մը երեւան եկած է, շաժճարակին առաջին դէպքերը նշմարուած էին յունիսի սկիզբները։

ՖԼՈՐԻՆԱՆՏԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ.— Դահլիճկեց Ֆլորինանտի Պուլկարիա վերադարձի լուրերը, յաճախ կը յեղեղուին վերջերս, պուլկար մամուլին մէջ, Այս առթիւ պուլկար հեռագրական գործակալութիւնը կը հաղորդէ.—Ցար Ֆլորինանտի Պուլկարիա վերադարձի լուրերուն մասին, հակառակ պաշտօնական հերքումներուն, պուլկար մամուլը պարբերաբար կը շարունակէ զբաղիլ այդ խնդրով։ Լիափչէֆի ձամբորդութիւնը դարձեալ առիթ ըռաւ անդրադառնալու։ Վճռապէս կը հերքուի նոյնն թէ Ֆլորինանտ եւ Լիափչէֆ որեւէ հանդիպում չեն ունեցած եւ թէ նախկին ցարին վերադարձի լուրերը դիտումնաւոր են։

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

ՀՈԳԻԻ ԵՐԿՈՒ ՏԱՐԲԵՐ ԱՇԽԱՐՀՆԵՐ

Ո՛չ մէկ հայ գրագէտի ստեղծագործութիւնը շուրջ կարծիքները կը տարբերին այնքան, որքան Աւետիս Ահարոնեանի աշուհատին ու գրականութեան շուրջ։

Կարծիքներու եւ գաղափարներու տարբերութիւնը անհրաժեշտ, նոյնիսկ բարերար է, երբ մտածումներն ու դատողութիւնները կը բխին առարկայական քննութիւններէ։ Մեր մէջ հակառակն է, որ տեղի կ'ունենայ։

Աւետիս Ահարոնեանի գրականութեան վերագնահատումը, իր քառասնամեայ գրական գործունէութեան յորելեանին առթիւ, մասնաւորաբար, երեւան հանեց հոգիներու թշուառութիւնը, եւ ազգային հպարտութեան ու գիտակցութեան բացակայութիւնը։

Տեղը չէ անշուշտ այդ տխուր երեւոյթին պատճառներու վերլուծումով զբաղիլ։ Անգամ մըն ալ յայտնենք մեր փոքրութիւնը, սահմանափակ մտայնութիւնը, մանաւանդ այն ատեն երբ հայ քաղաքական միտքը իր հաշիւները մաքրել փորձեց, հրապարակագրական վայնասուններով։ Ճակատագրուած է, որ գրականութեան եւ արուեստի պէս բարձրօրէն անկախ եւ ինքնարժէք հարցերու քննութեան մէջ խմբ, ցոյց տանք մեր մտքին յետադիմականութիւնը։

Գրականութեան եւ արուեստի անունով յայտնուած եւ սակայն քաղաքական տարակարծութիւններով սնած դատողութիւնները բարեբախտաբար չեն արձանագրուիր ի հաշիւ հայ գրականութեան։ Անոնց ձգած սեւ հետքը շատ ժամանակաւոր է, ինչ որ սակայն պիտի ունայ եւ սերունդներուն պիտի կտակուի, ատիկա արուեստագէտին անկորուստ գործին հետ, ճշմարիտ ու արդար քննադատութեան խօսքն է եւ հասկցող մտաւորականութեան վերաբերումը։

Զարմանալի է սակայն, որ տարակարծութիւններ երեւան կուգան մեր մէջ, գրականութեան եւ արուեստի ազգային ըմբռնումներուն ու տեսակէտներու շուրջ մասնաւորաբար, վաստակաւոր արուեստագէտի մը տարիներու բովանդակ գործը ուրանալու աստիճան, այն պահուն, երբ հայ գարաւոր արժէքները չգնահատելու կը դատապարտուին, նոր սերունդը արհամարհել կը սկսի ինչ որ անցեալէն կը հասնի իրեն, եւրոպական ծայրայեղ լոյսերու առջեւ արեւելքցիի իր աչքերը շլացած զգալով... Այն պահուն, երբ քաղաքակիրթ մարդկութիւնը եւ անոր մտաւորականութիւնը արուեստի նախնական ակերուն կը դիմեն, ինքզինքնին գտնելու եւ իրենց ցեղային ինքնատպութիւնները կոթողելու, եւ գեղեցկութեան նոր խորհրդանշաններ արժէքաւորելու համար, ճիշդ այն պահուն, երբ Փրանսայի եւ Իտալիոյ հետ ժտածող ընտրանին, կը տօնեն Վիրգիլիոսի երկհազարամեակը եւ Մխիթարի ծննդեան հարիւրամեակը, երկուքն ալ արուեստի եւ գեղեցկութեան պատգամաբերներ, կապուած ու ապրած ազգային մշակութի անթառամ ծաղիկներու դրացնութեանը մէջ, երգելով բնութիւնը. հայրենի երկիրը, եւ անոր տիպարները՝ գաւառական հոգեբանութեամբ անմահացնելով։

Ամիսներ առաջ այս էջերուն մէջ վերագնահատման ենթարկեցի մեր վերջին յիսնամեայ գրականութիւնը, եւ փորձեցի ապացուցանել, որ մեր գրականութեան մայր երակը ազգային եղած է։ Տուի անուններ, շրջաններ, գործերու թուականներ համառօտ կերպով, եւ եկայ այն եզրակացութեան, թէ մեզի համար, տոհմային արուեստն ու գրականութիւնը գոյութեան իրաւունք ունին, մեզի դրշմ, ոիթմներով, պահելով ի հարկէ իրենց ինքնատպութիւնը, որ անհատական է, մանրամասնութիւններուն մէջ։

(Ըսեմ անմիջապէս, որ մտադրած ըլլալով քննութենէ հարցերուն մօտենալ առարկայօրէն, պիտի չանամ ո՛չ մէկ անուն տալ, մտածելով անոնց իբրեւ երեւոյթներու։)

Աչքի առջեւ ունիմ երկու տարբեր մտայնութիւն արտայայտող գրութիւններ, որոնցմէ հասկաքաղ մը անհրաժեշտ է, տեսնելու համար թէ նորերը ինչպէս կը մօտենան խնդիրներուն, բացասական եւ գրական կերպով ներկայացնելով իրենց համոզումները, մէկը միւսին տրամագծօրէն հակոտնեայ, մէկը միւսը ժխտող հաւասարապէս։ Հոգիի երկու տարբեր աշխարհներ՝ յատուկ թէեւ մարդկային էակին, եւ սակայն շեշտուած՝ երիտասարդ հոգիներու մէջ։

Հանդիսաւոր առթիւ մըն է, որ ըսուած ու գրի առնուած են հետեւեալ տողերը.

Ահարոնեանն է մէկը այն հազուագիւտ հիներէն, որ անմար ջահի նման կը յայտնուի աչքիս առջեւ, ամէն անգամ, երբ երկար մտորումներէ եւ ապրումներէ յետոյ, անբացատրելի ինչուները կուգան ցցուիլ ուղեղիս մէջ, իսկ խաւարը կը շարունակէ ճնշել։

Ահարոնեանը մեր ճշմարիտ մեծն է, մեր հարազատ հայրը եւ հիներու ու նորերու միջեւ բացուած մեծ վիհը լեցնող, գուցէ միակ հինը։

Հայրենի բնութիւնը, իր հոգին եւ մինչեւ հաւատը հոգու գոյութեան մեզ կը կապեն Ահարոնեանի հետ, ոչ միայն մեր էութեան, հայ էութեան եւ խառնուածքի տեսակէտով, այլ եւ կամուրջ կը նետեն դէպի արդիականները ծգտած ապագայ արուեստը։

Ահարոնեան է այն հրաշակայ սիւներէն, որոնք յաւիտեան կանգուն կը պահեն սրբազան այս շէնքը։ Ուր որ ալ երթայ հայ նոր գրողը, իր մտքերն ու զգացմունքները ինչ հոդմի ալ որ յանձնէ, դարձեալ այս միեւնոյն տաճարի սպասարկուն է որ պէտք է լինի։

Ահարոնեանի լեզուն, տակաւին մեր մանուկ օրերէն նրբացուցեր է մեր ճաշակը, շոյեր մեր լսողութիւնը եւ կուռ ու յստակ ոճի կառուցուածք է մեզ սորվեցուցեր։

Նոր սերունդին յոյս եւ ոգեւորութիւն ներշնչող այն վառ, այն երիտասարդ հաւատքի զգացմունքն է, որ Ահարոնեանն ունի իր մէջ եւ որ անխուսափելի կերպով կը կապէ մեզ մեր մեծ վարպետին եւ Թոյլ կու տայ ի. րեն հետ կոդք կոդքի քալել դէպի վառ ապագան։

Այս տողերէն յետոյ, յաջորդ յօդուածով մենք պիտի տեսնենք միւս կողմին մտածումները։

ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՓՕԼ ՎԱԼԵՐԻ, Ազգերու Դաշնակցութեան Դեղարուեստից Յանձնաժողովին ԺԷ վերջերս կը պաշտպանէր երաժշտութեան եւ բանաստեղծութեան ուսման ԺԷ կապ մը հաստատելու տեսակէտը։

ՋԱՄԲՈՐԴԻ ԶԳԱՅԱՐԱՆՔՈՎ

• Ա ·

ԴԻՊԻ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ

Կը խօսա՜ծ՝ պայուսակը ձեռքս։ Անսովոր ուրախութիւն մը, իշխանի պէս, կը պտըտի մարմինէդէն բնակարանիս մէջ։ Ուրախութեան կրակը կ'այրէ մտածումիս թեւերը, եւ անկապակից կը գառնան խօսքերը, զորս կ'արտասանեմ միտքէս։ կ'երգեմ հին երգ մը, առանց բան մը հասկնալու։

Արեւուդ մեռնի ձոռոյի Նազար,
ձապալէզի կազար,
Նարեկալ մուխսի կալօն,
Արարուց ծուռ պետօն,
կազար, Նազար, շէկօն, ակօն,
փիլօն, գէվօն, ջաչալ-խաչօն,
իլլաի կեօն, իլլաի կեօն։

Այս որքա՜ն բազմութիւն կայարանին մէջ. ելեմ ճառ մը արտասանե՞մ։ կամարները ջրմբարի պէս կ'արձագանգեն՝ երբ շոգեկառքը կը ճչայ, ճիշդ ինչպէս կատուները՝ մարտ ամսուն։

Եւ ահա կը քալէ ճեպընթացը։

Աչքե՜ր որ կը ժպտին, աչքե՜ր որ կուլան, աչքե՜ր որ անուշ են, մեզի կը նային։ Դեռ բերաններ կան, որ վերջին բառ մը, հրաժեշտի խօսք մը կը դարձնեն։ Ու բառերը կը պտըտին միջոցին մէջ, սխալմամբ ներս կը մտնեն օտար պատուհանէ մը։

Կատղեցա՜ ճեպընթացը։ Կը զրնգան անիւներն ու երկաթէ ուղին։ Դե՜հ, դաշտին մէջ։ Քոստ ու երկար ծառ մը, որ մենամենակ կեցեր էր բաց դաշտին մէջ, վախցա՜ ու յանկարծ փախաւ կորսուեցաւ բլուրի մը ետին։ Հողը գունաւոր է այս եղանակին։ Հողի շերտեր, ոչ կանանչ են, հողի շերտեր, որ դեղին են։ Հարսնուկը արիւն է նետեր արտերուն մէջ։

Բա՜հ, ճեպընթացը շուրջպար է կպմ՜եր։ Եւ մենաւոր տնակ մը «Էվվէվվի»ի պէս կը դառնայ ինքն իր վրայ։

Կը մթնէ։

Հեռուն մանտրտիկ լոյսեր կը բուսնին, խաղողի պէս անուշիկ։

Գիշե՜ր։ Ո՞վ է որ լոյս կը նետէ պատուհանին ապակիներուն։

Կէս գիշե՜ր։ քնացէ՜ք, քնացէ՜ք։

Ականջս կանուխ արթնցաւ լսեցի որ կ'ըսէին. «Կը լուսնա՜յ»։ Այս որքա՜ն պայծառութիւն, ինչո՞վ են լուացեր կանանչ դաշտերն ու բլուրները։ Խաղողի այգիներ, մշուշի մէջ լեռներ, ապառաժէ բարձունքներ, ձորեր ու հովիտներ, —օ՜ մանկութիւնս, որ կ'արթննաս Լիճէ մը իր կապոյտ հայելին կը բանայ երկու բլուրի միջեւ։

Ու գիմեմ փապուղիի մը մէջէն պահ մը ճամբորդելէ ետք, աչքերս կ'իյնան Միջերկրականի վրայ։ Ցուզումով կը դիտեմ ու կը մտածեմ։ Ես շա՜տ կը սիրեմ Միջերկրականը։

Բայց ահա Մարսէյլի մէջ ենք։

ՄԱՐՍԷՑԻ

Հին ու պատմական քաղաք, այնքան հին, որ աւանդութիւն մը զայն կը կապէ Մագդաղինացիին։ Արդարեւ կը պատմուի թէ այդ նախկին պերճաղիճը, Մագդաղինացի, Ղազարոսի եւ Մարթայի հետ՝ Մարսիլիա անցան, առաքեալներուն գրուժէն ետք։ Մինչեւ այսօր ցոյց կը տրուի Մարսիլիոյ արեւելեան կողմը սէնթ-Պօմի մէջ Մագդաղինացիին քարայրը, ուր պերճաղիճը ապաշխարեց երկար տարիներ։ Այդ խոտոտ հին մէջ, մշտահոս աղբերակի մը կողքին, կայ սպիտակ մարմարէ արձան մը, որ կը ներկայացնէ Մագդաղինացին՝ գետնին վրայ երկնցած պառկած։

Իսկապէս հին է քաղաքը, զոր հիմնած են փոկէացիները, յոյն նաւարկող առեւտրականներ։ Ի վերջոյ Հռոմ՝այեցիները իրենց պաշտպանութեան տակ կ'առնեն այս գաղութը, որ կ'աճի ու կը բարգաւաճի, մրցելով Տիւրոսի, Հռոդոսի եւ կարթագինէսի նաւահանգիստներուն հետ։

Այսօր Մարսիլոյ մէջ ունինք ստուար գաղութ մը, եւ հայկական գիւղեր՝ իր շուրջը։

Սկսինք ուրեմն մեր այցելութիւնները։

ՔԱՂԱՔԻՆ ՄԷՋ

Երբ հեռուէն կը դիտէք Մարսիլիան, ձեր աչքերը կ'երթան բարձունքի մը, որուն վրայ ոսկեպատ արձան մը կարծես կը կանչէ ձեզի։

Ես կ'երթամ ուղղակի այդ արձանին։

Զառիվեր փողոցներ, որոնք հարաւ կ'երթան։ Ու յանկարծ վերելակ մը։ Գրեթէ ուղղահայեաց գիծով մը, վերելակը կը բարձրանայ 72 մեթր (Մեքենան կը գործէ յատկապէս ամբարուած ջուրի ծանրութեամբ)։ Անմիջապէս կամուրջ մը, որ պատգամի մը պէս կախուած է քաղաքին փողոցներուն վրայ, մեզ կ'առաջնորդէ եկեղեցիին ոտքը։ Բարկ արեւը կ'եփէ հողը, եւ տաշուած սպիտակ քարերը կը պսպղան, մթագնելով աչքերս։ Ցաճարին մուտքին վրայ քարաշէն դարատափ մը։ Պահ մը կեցէ՛ք, կը պռատամ ընկերներուս, որոնք մողէսի պէս վեր կը վազեն քարէ սանդուխներէն։ Ցոգնութիւնը կ'ամչցնէ զիս, որովհետեւ յաճախ պարծենցեր եմ գիւղացի ծնած ըլլալով։ Ձեմ սիրեր քաղքցիի պէս հեւալ սանդուխներուն վրայ։ Ո՜ւր ես, իմ հի՛ն վարժութիւնս, որ զիս լեռներու եւ ապառաժներու վրայ կը բարձրացնէիր՝ երբ դեռ փոքր էի, Բայց պէտք է կենալ, ինչու որ գեղեցի՛կ է համայնապատկերը։

Գլուխս վրայ կապո՜յտ երկինքին, Հորիզոնին վրայ՝ կապոյտը լեռներուն, ոտքերուս տակ եւ ձախս վրայ՝ կապոյտը ծովին, եւ աջիս վրայ՝ կարմիրը քաղաքին կղմինտրներուն։ Հովն անուշ է անանուխի պէս։ Արեւը կը հալի քարերուն վրայ, ազնիւ իւղի նման։

Ցաճարին գետնայարկը մեծ-շաղ սրահ մըն է, ապակիները գինիի գոյն ունին եւ պատերուն մէջ ոսկին կրակ կը ցանէ։ Խորանին վրայ Աստուածածին մը,— անուշիկ տիկին մը, որ սպիտակ մարմարէ պատմուճան մը ունի եւ աղուոր մարմին մը։

Ցաճարին վերնայարկը եւս նման սրահ մըն է, ուր լոյսն առատ է։ կանանչ ու կարմիր մարմարէ սիւներ։ Նորէն Աստուածածին մը խորանին վրայ, ձեռքերուն մէջ բարձրացնելով իր մանուկը, առողջ ու կայտառ։

Եւ սակայն նոյն այդ մանուկը, որ ետքէն Քիստոս դարձաւ, ոգեղ ու հիւանդ մարդ մը եղած է խաչափայտին վրայ, հունա՜, տաճարին դրան ետին։ Մեռած մէսի տպաւորութիւն կուտայ փայտէ Քիստոսը, զոր համբուրեց կին մը մեր աչքերուն առջեւ։ Սոսկում մը զգացի տեսնելով այդ համբոյրը։

Զանգակատո՜ւնը։ կարծես մխրճուած ենք երկինքի մէջ։ Ի՜նչ անուշ է երկինքին խորութիւնը, գառնուկի փորի պէս՝ բրդոտ ու տաք։ Զանգակատան դէմ տափին չորս անկիւնէն չորս տակներ — գիրուկ կիներ փող կը հնչեցնեն։ Ու Մարսէյլ մտիկ կ'ընէ կարծես, երկնային Աստուածածին մը եւս մեր խուն վերեւ, ոսկի հագած, բոցեր կը քալեցնէ վրայ։

Սպիտակ կղզիները կը Միջերկրականի մէջ, որ կապոյտ մը ունի միշտ, ղեղիկ է գոյնիշը։ եղեւնի կանանչին մէջէն կը նշմարուի մեր կռնակը հարուստ ապարներուն։ Երբեմն գիծերու խազեր կը ներկայացնեն բնակարանները։ Եւ փոքրիկ մը, որ մէկ աչքով քեզի կը միւսով՝ ծովին, մէջդ կ'ուրախանայ ծուլութեան եւ հաճոյքի բոտը։

Մեր առջեւն է երկաթկերտիքով շինուած մուրջ մը, որ կը գատկէ բազուկի մը վրայէն։ վար, երեքանք դէպի մուրջը։

Վերելակը դարձեալ կը բացնէ մեզ քաղաքին վրայ։ Հանգիստի ծոցին երկու ներուն վրայ 83 մեթր սիւներ, որոնք շինուած են լի աշտարակին ձեւով, գոփով մը կը միանան իրարու։ ակի նման տախտակամած կախուած է 52 մեթր ցած ճամբորդները, կանգնելով տակամածին վրայ, եզերքէ զերք կ'անցնին, երբ ճախ կը քաշէ առկախ նուագը։

Մէկ եզերքը, բարձր ծովուն վրայ, Բժշկական մալարանը ինծի կը պոլսոյ Բժշկական Հանրանը։

Կը ճեղքենք քաղաքը, գելլելու համար Թանգարան կը ներկայացնէ հին Արեւելեան պարտէզի մը դղեակ մը, որուն սրահներն դարուած են ճիշդ այնպէս Մարսիլիոյ պատմական րերուն։ Պատկերներ, որ կուտան քաղաքագիական փողոցներուն մէջ։ Օրաթիւ որոնք կը պատմեն քաղաքին ցեղ մը կ'ողջունենք։ նափոլէոնի վերադարձը, անկիւն մը կը դուգադրին քին նաւային ճարտարարութեան սենեակ մը, ուր մամիկը է, իր հին լաթերով, բուի անկիւնը, քովը երախան քանայ օրօրոցին մէջ, ձայնը ղանը, որ պատրաստ է...։ տի տար մեր հին պատմաչքան կենդանի։ Հեռ մեր հողերէն, եւ կորսնաեւ մեր ազգային հարստութիւնները...։

Այստեղ մօտ է Հայոց ղեցիկ։ Երթանք։

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

ՀԱՅ ՆՈՐ ԲԺԻՇԿ ՄԸ

Լուվէնի (պելճիքա) Բժշկական Համալսարանէն շրջանաւարելաւ ցոքթ. Սերժ Մաքսի «առաջնութեան դիպլոմով» (grande distinction) ընկերներուն մէջ, բոլորը ստացած էր ամէնէն բարձրները։ Քննիչ մարմինը անգամ նապէս շնորհաւորեց հայ տասարդ բժիշկը, որ անթերի գոհողութիւններով կրցաւ տել իր ուսանողական շրջանը։

Նորաւարտ բժիշկները ժեշտի սեղան մը տուին փրոֆէսէօրներուն։ Տոքթ. Թոսեան կը ներկայանար հայը, որուն ճառը ողջունեց «կեցցէ՛ Հայաստան» բացականչութեամբ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒ

Ա. ՀԱՅԿԱԶՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒ

Ա. ՀԱՅԿԱԶՆ

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ԽԱՆԱՍՈՐԻ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԱՐՂՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԻՆ ԿՈՂՄԷ
Այսօր կիրակի Շավիլի անտառին մէջ
Fontaine St. Marie *վայրը*
կը նախագահէ Ընկ. ԳԻՒԼԽԱՆԴԱՆԵԱՆ
Ժամը 4ին այցելութիւն ընկ. իշխան ԱրղուԹեանի գերեզմանին
Իշնել 1 Թիւ հանրակառքի Chavilleի Doisu *կայարանը ուր կը սպասեն առաջնորդներ։*

ՏՕՔԹՕՐ Մ. Տ. ՆՈՐԱՅՐ

8 RUE BUFFAULT, PARIS (9e)

Հեռաձայն, PROVENCE: *20—37*

կը խնամէ ներքին եւ կիներու հիւանդութիւններ

կ'ընդունի ամէն օր կէսօրէ վերջ ժամը 2—7 եւ ժամադրութեամբ: կիրակի եւ տօն օրեր, առաւօտեան ժամը 10—12:

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ
ՋԱՇԱՐԱՆ ՖԼՕՐԻԱ

61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)

Մէթրօ Օտէոն եւ ՍԷն Միշել Հեռաձայն Littré 38—43

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ

ՅԱՐԳԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

Եթէ կ'ուզէք բերնի համով մաքուր եւ անարատ սուրճ խմել, դիմեցէք հռչակաւոր

CAFÉ SULTANի

Ս. ԹՈՐՈՍ (Բէյօղլը)

92 Rue d'Angoulème Métro: Couronne, Tél. Ménil. 56—06

Ամենավերջին դրութեամբ մեքենաներով օժտուած մեր վաճառատան մէջ պատրաստուած սուրճը կը գոհացնէ ամենէն նրբաճաշակները։

Զոյն տեսակներ, գիները անմրցելի, փորձեցէք անգամ մը եւ պիտի տեսնէք տարբերութիւնը մեր գործածած եւ մեր պատրաստած սուրճին։ կ'ընդունինք ապսպրանքներ արտասահմանէն եւ գաւառներէն։ փափաքողներու կր ղրկենք գիներու ցանկը, փոքրաքանակ եւ մեծաքանակ վաճառում:

ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ԳՈՀԱՐԱՎԱՃԱՌ-ԺԱՄԱԳՈՐԾ
ՀՐԱՉ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Նախկին վարիչ հռչակաւոր ՕՄԷԿԱ ժամացոյցներուն

ԺՐՆԵՒԻ ԳՈՐԾԱՐԱՆԻՆ

261 Fbg. St. Martin, Paris (10): Մէթրօ՝ Louis Blanc եւ Jaurès. հեռ. Nord 85—63 եւ 95—50: Հանրակառք՝ 5, 50, 51, 52, 21, 26, 29, Omnibus՝ W. M.

Պատի եւ գրպանի ամէն տեսակ ժամացոյցներ, քարիյոններ, նշանտուքի, հարսնիքի ժատանիներ եւ ամէն տեսակ ոսկի եւ արծաթ զարդեղէններ եւ Թանկարժէք գոհարեղէններ: Ոսկերչութեան եւ ժամացոյցի վերաբերեալ խնամով նորոգութիւններ:

Նախքան ձեր գնումները այցելեցէք մեր խանութը:

Հ. Ց. Դ.

ԳԱՒԱՌ

ՎԱԼԱՆՍԻ Շրջ. կոմիտէն ստիպողաբար ժողովիկրիբաւիրէ բոլոր ընկերները այս երեքշաբթի իրիկուն ժամը 8.30ին սովորական ինաւաքատեղին, ներկայանալ անդամատետրով, պարտաւորիչ ներկայութիւն: Օրակարգ՝ գեկոյց վալանսի շրջ. ներկայացուցչական ժողովի:

ՏԷՐ եւ Տիկին Պետրոս կարապետեան (Արջ Պետրոս) սրտի խորուկ կսկիծով կը ծանուցանեն իրենց ազգական

ԳՈՀԱՐԻԿ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ

դառնադէտ մաիը:

Յուղարկաւորութիւնը կը կատարուի այսօր կիրակի առաւօտ ժամը 9ին ՍԷն Լուիի (փարիզ) հիւանդանոցին մէջէ: Հանգուցեալոյն մարմինը պիտի փոխադրուի Պուրժէի գերեզմանատունը:

Կ'ուզուի վարպետ գործաւոր մը, որ գիտնայ կօշիկի նորոգութեան վերաբերեալ բոլոր մանրամասնութիւնները: Ֆրանսերէն խօսիլը պարտաւորիչ է: Լաւ պայմաններ: Դիմել՝ Crepocuire, 71 Rue Rébéval, Belleville.

ԿԸ ՓՈԽԱՆՑՈՒԻ ԲՆԱԿԱՐԱՆ ՄԸ

2 սենեակ, entrée *եւ խոհանոց, օդաւէտ, կեդրոն տեղ, մառչէի մօտ,* Port de St. Cloudէն *8 վայրկեան: Դիմել ամէն օր* Billancourt, 1 Rue Liot *4րդ յարկ (աջ) Լ. Մուրէնեանի, առանց հանդիպելու քոնսիէրժին:*

IMPRIMERIE - MASSIS - ÉDITIONS
208bis, Rue Lafayette Paris (10)
Le Gérant H. STEPHAN

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ

96 r. Rivoli, *մէթ. Շաթլէ: Աբմատ. եւ նոր մեթոտով դարմանում արանց եւ կանանց մորթի, արիւնի եւ վէներ. հիւանդութեանց (ֆրանկախտ, ջերմամիզ.) եւ վարիսի: Մասն. լապօ աթոռաւոր: Ինճամիտ եւ արագ խոր հրդացկութ. ամէն օր 9—12, 2—8 Եկրոպէի 9—12.*

Ծախու է մեկնումի պատճառաւ դերձակավերաբերեալ իրեղէններ (մեքենայ, սեղան եւայլն): Դիմել Պ. Յ. Ջէրմանեանի, 41 Rue Boucherie, Paris (5): *Մէթրօ Սէն Միշել:*

Վաճառու է 100 քառ. մէթր տարածութ.

Թեամբ լուսաւոր եւ օդասուն արհեստանոց մը որ ունի նաեւ երկու սենեակ, խոհանոց, ջուր, կազ, ելեկտրականութիւն: Յարմար ամէն գործի: Պայմաններու մասին դիմել Պ. Մ. Ազարէկեանի, 35 Rue Emile Desveaux, *Մէթրօ՝* Place des Fêtes.

Կ'ուզուին ստիպողաբար բուրդ ժէոզէ, ոսպ, քազաք, քոնպինէզոն եւ քոռաժ կարող վարժ կարուհիներ: Լաւ վճարում եւ տեւական գործ:

Մաքուր չկարողները զուր տեղը չներկայանան:

Դիմել՝ Օր. Զապէլի, 40 Rue de la Mare, *Ա. յարկ Թիւ 5 սենեակ*

BRASSERIE HAROLA

3 Rue la Vieuville
Place des Abbesses
Métro: Abbesses, Tél. Marc. 39-88

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀՆԵՐ

Պարահանդէսի, հացկերոյթի, երեկոյթներու եւայլնի համար, մասնաւոր գին Հայերու:

EMPIRE Միգիք-Շոլ՝ 37 Av. Wagram

ALLO, ALLO

Tél. TRUDAINE 81 07

Այս է Թիւր մեր Թելէֆոնին

ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ՁԷՆԱԶԵԱՆ եւ ԳԱՍԱՆՁԵԱՆ

8, Rue de Chateaudun, PARIS (9e)

Métro Cadetի, Peletierի եւ Notre Dame de Lorette խիստ մօտ

ՏՕՔԹ. Ա. ՍԱԼԱՆ

38 Rue Rochechouart մէթրօ Cadet *և* Anvers Autobus J. JB.

Tél. TRUDAINE 56 - 58

Թոքերու, Ստամոքսի, Լեարդի եւ Աղիքի հիւանդութիւնները ցատուկ յարկաբաժին Վէնէրական եւ Մորթի հիւանդութեանց

ULTRA - VIOLET ճառագայթներով կը դարմանէ *Ոսկորի, ջղային, Արեան հիւանդութիւնները եւ ցօդացաւ:*

կ'ընդունի ամէն օր ժամը 9—12 եւ 3—7, կիր. մինչեւ կէսօր:

ՍԱՊՈՒՆՋԵԱՆ ԵՂԲԱՐՔ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԵԾ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Ա Ր Ա Ր Ա Տ

39 Rue de Trévise, Paris (9), մէթրօ՝ Cadet, Tél. Prov. 05-91

Ամէն տեսակ արեւելեան եւ եւրոպական նպարեղէններ, փոքրաքանակ եւ մեծաքանակ վաճառում:

Ընարատ եւ Թարմ ՍՈՒՐՃ

Ապրանքներուն ամէնէն լաւը՝ անմրցելի գիներով

ՀԱՃԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

Տէր եւ Տնօրէն՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ

29, Rue (Place) des Fêtes, Paris, XIX. Tél. Nord 96 - 61

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուին ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ: Աչքի մասնագէտը կ'ընդունի Գ.,, Շ. եւ Շաբաթ օրերը ժամը 4—6: Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երեք. եւ Շաբաթ օրերը ժամը 2—3: ՕՏԱՄՆԱԲՈՅԺԸ ամէն օր ժամը 9էն 19:



ՏՕՔԹ. ՄԻՀՐԱՆ Կ. ՔԷՇԻՇԵԱՆ

Նախկին բժշկապետ մերսինի Ֆրանս. հիւանդանոցներուն

Պատուոյ մէտալլ Ֆրանսայի Ազողպ. նախարարութենէն

Կ'ընդունի ամէն օր բացի Կիրակիէ-ը 10էն 12եւ ժամադրութեամբ, 134 Rue Blomet, *Բէօնթկէնեան հաստատութեան մէջ: Կը կատարէ Ք. ճառագայթներովամէն կերպ քննութիւն, շողանկարում* (radiographie), *դեր-մանիշակագոյն, յետ-կարմրագոյն եւ բէօնթկէնեան դարմանում* (radiothérapie profonde), *ՏԻԱԹԵՐՄԻԻ բոլոր կերառկումները եւ ելեկտրաբուժական բոլոր ձեւերը որ բազմաթիւ հիւանդութիւններու դարմանման լաւագոյն ազդակներն են:*

Թոքախտաւորներու pneumothoraxի *գործողութիւն, մասնաւոր շիջուկ եւ պատուաստ:*

Ջղային եւ հոգեկան կարգ մը հիւանդութիւններու դէմ թելագրական, քնէածական եւ ֆսէօտեան մեթոտներ:

Որպէս ներքին հիւանդութեանց մասնագէտ, կ'այցելէ նաեւ հիւանդներու :

Հասցէ՝ 134 Rue Blomet, Laboratoire de Radiologie. Métro Convention, Autob. X. եւ AG.


Հեռաձայն՝ Vaugirard 29—55, 47—86.



PLOMBERIE-COUVERTURE
ՋՈՒՐ ԿԱԶ
ԼՈԳԱՐԱՆի, ԵԻՆ.ի ՋԵՏԵԼՈՒՄ

Կը ստանձնէ կապարի եւ զինկի ամէն տեսակ գործեր, մասնաւորաբար Ջուրի խողովակներու զետեղուս եւ նորոգութիւն: Դիմել նամակով՝

A. TATOULIANի
12 Rue Elie, Gentilly, (Seine)



ՓԱՑՏԷ ԿՐՈՒՆԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ
ԿՐՈՒՆԿՆԵՐ՝ ՄԱՐՍԻԼԻԱԿԱՆ
LOUIS XV *ՄԱՆՏԱԼՆԵՐ*
կաշիով եւ առանց կաշիի

Խիստ չոր փայտ

JUSTINESY

Place des Baumes, St. Antoine, MARSEILLE
Քոմիսիոն եւ արտահուս

ՀՈՂԱԲԱԺԻՆՆԵՐ ՓԱՐԻԶԻ ՇՐՋԱԿԱՅՔԵՐ

ԱՄՍԱՎՃԱՐՆԵՐՈՎ՝ Շոգեկառքով կամ հանրակառքով 15—30 վայրկեան, ջուր, կազ, ելեկտրականութիւն: Ամսավճար՝ սկսեալ *200* Ֆրանկէ տուներու կառուցում, վճարման մեծ դիւրութիւններ. *15—20* տարուան մէջ: 15 տարի տուները ազատ են տուրքէ: Պարբաստի villaներ, նոր բնակարաններ գնելու կամ վարձելու համար, ամէն տեսակ գործողութիւններ, կալուածներու ու ծախ, գրաւ դնելու, ապահովագրութեան եւայլն:

ԲԱՑԱՌԻԿ ՊԱՏԵՒՈՒԹԻՒՆ՝ սկսուած է նոր հողաբաժիններու վաճառումը, Versaillesի մօտ Bois d'Arsyի մէջ շրջապատուած գեղեցիկ անտառով: Հաղորդակցութիւնը փարիզի հետ Gare Mont Parnasseէն ուղղակի, իսկ Gard Invalideէն St. Lazareէն Versaillesի գիծով: Ցեսնել կարելի է ամէն ինքնաշարժով՝ ծրի: Մանրամասնութիւններու համար դիմել

ՏԱՐԱՍՈՎ ՏԷՐ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Գրասենեակը, 18 Rue Chaussé d'Antin, Métro Opéra Chaussé d'Aantin, ամէն օր ժամը *10—12* առաւօտները *4—7* կէսօրէ վերջ, կիրակի եւ տօն օրեր ժամը *10*—1: Հեռախօս Provence *87—32 եւ 82—48:*

Տուներու շինութեան համար ծրի խորհրդակցութիւն մանաւոր ճարտարապետի մը կողմէ Գշ. եւ Շբ. օրերը ժամը 4


ՎԱՐՁՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ ՔԼԱՄԱՌԻ ՄԷ

Շոգեկառքի եւ հանրակառքի կայարաններուն մօտ

Արեւոտ եւ լուսաւոր դիրք: երեք սենեակ, ճաշասրահ, նոց, Cabinet de Toilette, ջուր, կազ, ելեկտրականութիւն, կական ջեռուցիչ եւ հեռաձայն: Դիմել ամէն օր՝ 27 Rue Carnot, Clamart.

ԼԻՈՆԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Ջատկի տօնի առիթով KYSA կօշիկի վաճառատան
209 Rue Dugueselin (angle rue Dunoir), Lyon



պիտի գտնէք սեփական արհեստանոցի մանաւոր խնամքով պատրաստուած բոլոր եւ կիներու ֆանթէզի եւ ամէն տեսակ տոկուն կօշիկներ:


ԳԻՆԵՐԸ ԱՆՄՐՑԵԼԻՕՐԷՆ ԱԺԱՆ

կը բաւէ անգամ մը այցելել հաւատալու համար

ՇԱՆՕԹ.— Նոյն կօշիկները կը գտնուին մեր երկրորդ վաճառատունը 217 Rue Garibaldi, angle rue Paul-Bert.

Ամէն տեսակ կօշիկներ խնամքով կը նորոգուին մեր արհեստանոցին մէջ

Տէր եւ Տնօրէն ՍՈՂՈՄՈՆԵԱՆ ԵՂԲԱՐՔ



En vacances : emportez un
Hawk-Eye Kodak
anastigmat f : 6,3 - 250 frs

On connaît la triple joie de prendre les photos, de les faire admirer à tous, d'y revoir enfants, parents, amis, excursions et ses belles heures de liberté.

ԳՆԵՑԷՔ ՔՈՏԱՔ

ԳԻՆ՝ 250 ՖՐԱՆԿ
Place de Trinité
Châteaudun No

Լուսանկարելով ձեր կ'ունենաք վերատեսնել ձեր գաւակները, կանները, բարեկամները վերյիշելու ձեր գեղեցիկ վայրերը եւ ձակուրդի օրերը:

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԿԵՐՊԱՍԵԳԻՆ
SIROUNAK ARABIAN & Cie

155 Rue Montmartre (1er étage)

Ֆրանսական եւ անգլիական խիստ ճոխ եւ ճաշակաւոր nouveautéներ այրերու համար: Մետաքսեայ եւ բրդեղէն ամէն տեսակ ընտիր կերպասեղէններ կիներու համար:

ԱՐՏԱԿԱՐԳ ԱԺԱՆՈՒԹԻՒՆ

Ջեռք մը կարուած հագուստը ձեզի պիտի արժէ՝ *Ֆրանս. առաջնակարգ գեղեցիկ կերպասով 500 ֆրանկ փոխանակ 700ի: Իսկ Անգլ. կերպասէ 700 փոխանակ 1000* փափաքողներու (այր եւ կանանց) կը տրամադրենք անթերի coupe ունեցող եւ à façon աշխատող վարպետ — դերձակ

Նրբաճաշակ տիկիններ

Մի մտահոգուիք Թէ ձեր հագուստները ո՞վ պիտի կարէ ո՞վ ձեզ լիովին պիտի գոհացնէ: Դիմեցէք B. Jaret Ֆիրմային հայկական հաստատութեան որ մեծ խնամքով կը պատրաստէ ձեր փափաքածամէն տեսակ հագուստները՝ դեկավարութեամբ ծանօթ վկայեալ դերձակուհիի եւ հնարող մոդելիստ ոճի ցասմիկ դասիճօնի: Բաց աստի հոն կը գտնէք ամենավերջ նորաձեւութեամբ պատրաստուած հագուստներ անհաւատալի ժամ գիներով: Հասցէն շատ դիւրին, 4Rue de la Collegiale Ա.յա (86 Bld. St. Marcel). Métro Gobelinsէն 40 քայլ:

Գ. ՃԷՔԷՐԵԱՆ

Փաստաբան Պոլսոյ Պառոյէն, վաւերացեալ հաշուակալ, անդամ Société des Comptables (E. C. I.),

150 Rue du Fbg. St. Denis, Paris. Téléphone: Trudaine 76-

ԿԸ ՍՏԱՆՁՆԵՄ այցելու տումարակալութիւն փոքր ամսավճարով *ԿԸ ԿԱՏԱՐԵՄ* Régistre du Commerce, Patente, Chiffre d'affaires, Bénéfices Commerciaux *և* Impôts sur le revenu *գործողութիւններ:*

ԱՒԵՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ԿԱԶՄԵՄ ԵՒ ԿԸ ԼՈՒԾԵ

Կրնամ ձեզ պերճ պահել Chiffred'Affaires *եւ* BénéficesCommerciaux *տուրքերէն եթէ արհեստաւոր էք, պար օրինակ* Lapidaire, Sertisseur, monteur de bijoux, lingère, *շապկագործ, ժամագործ, դերձակ, կօշկակար, առաղձագործ, եւայլն, պայմանաւ որ ձեզմէ եւ ձեր տանիքի անդամներէն զատ միայն մէկ գործաւոր եւ մէկ* apprenti *նենաք:*

LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

ԲԱԺԱՆԵԳԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70ֆ.	140ֆ.
ԱՆԳԼԻԱ		20 շլ.	40 շլ.
ԵԳԻՊՏՈՍ		»	»
ԻՏԱԼԻԱ		250 ֆրանք	
ԱՄԵՐԻԿԱ		6 տլ.	10 տլ.
ԵՒՐՈՊԱ		100 ֆ.	200ֆ.

"HARATCH"

Directeur-Propriétaire
SCH. MISSAKIAN
Խմբագիր՝
Ե. ՄԻՍԱՔԵԱՆ

Rédaction et Administration
Խմբագրութիւն եւ վարչութիւն
235, Faub. St.-Martin
PARIS (10e)

MÉTRO: LOUIS-BLANC OU JAURÈS
Téléphone : NORD 67-23
R. C. SEINE 376.286

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 3 ֆրանք

ԵՐԵՔՇԱԲԹԻ
29
ՅՈՒԼԻՍ
1930
29 JUILLET 1930

Զ. ՏԱՐԻ Թիւ 1325 — ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ — ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԲԱՐՔԵՐՈՒ ԱՆԿՈՒՄ

Դարձեալ փարիզի հայ յեղափոխական պաշտօնաթերթն է որ յուզման մատնուած է մեր այն դիտողութեան առթիւ, որ ուղղած էինք պոլսահայ լրագրողի մը և նմաններուն հասցէին: Այս յուզման պատճառները դարձեալ նմանութեան կապակցութեան մէջ պէտք է փնտռել:

Դաւաճանութեան և մատնութեան արարքները, գիտակցօրէն և անգիտակցօրէն գործուած, դատապարտելի են, ու ամէն կրկէկ պատուաւոր մարդու պարտականութեան մէջ կ'իյնայ զուշացնելու սայթաքողները:

Այս վերջին ամիսներու ընթացքին Դաշնակցական մամուլը անդիցս ստիպուեցաւ հրապարակով յայտարարել մեր հակառակորդներուն, որ իրենց արտայայտութիւնները քննադատութեան սահմաններն անցած են եւ կը կրեն մատնութեան բնոյթը: Այս բոլոր խնդիրներու վրայէն անցնելով, ամփակաւ բեռը Պոլսոյ լրագրողի պարագային ետեւը թաքնուած, արդացուժի անճարակ ու միեւնոյն ժամանակ խեղաթիւրող միտցներու կը դիմէ:

Հասկնալի ըլլալու համար, անգամ մը եւս բսենք ու ընդծենք մեր խօսքը, որպէս զի ի մտի պահեն անոնք, որոնք տարաբաղձ քիչ մը ողջմտութիւն ունին:

Ո՞վ է դաւաճանը կամ մատնիչը:

Մեր ենթակայական կարծիքները մէկ կողմ թողունք, առնենք միայն այն սահմանումը որ վէճի առարկայ չէ: Մատնիչ ամ դաւաճան է այն անհատը կամ խմբակը, որ իր պատկանած ազգին, ժողովուրդին եւ կազմակերպութեան կենսական աղտնիքները եւ գործնական ծրագիրները կը յայտնէ թշնամիներուն: Այս ձեւակերպումի ընդլայնումն ու մանրամասնութիւնը ընթերցողին կը մնայ:

Արդ, մեզի համար ըմբռնելի են ծայրայեղ հակառակութիւնները, տարամերժ քննադատութիւնները, նոյն իսկ անհրելի անձնական վարկաբեկումները: Բայց երբ հակառակութեան մոլուցքէն տարուած՝ հակադաշնակցական անհատներն ու խմբակցութիւնները այս անսահման ու աններելի շրջագծին մէջ իսկ չեն պարտկեր ու կ'անցնին վնասակար ցուցմունքներու, մեզի ոչինչ չի մ[illegible] այնքան մեծ ցաւ կը զգանք:

Բայց Ռամկավար ուղեղը չի բաւականանար իր դիտաւորութ բթամտութեամբ, այլ յեղափոխականի խարդախութեամբ կը գրէ.— «Թէ՛ հայ եւ Թէ՛ միւս ժողովուրդներու մէջ, դաւաճանները, լրտեսները, մատնիչները երեւան ելած են մասնաւորապէս յեղափոխական կեանքի շրջաններէն: Ինչպէս կը հաստատէ նաեւ Արամեանցի պարագան»: Միայն հակայեղափոխական մատնիչը կրնայ ա՛յսքան լրբենի դատողութիւն մը հրապարակել հայ յեղափոխութեան հասցէին:

Բացի այդ, ըստ յեղափոխական հնարամտութեան, այն դաւաճանները որ յեղափոխութեան շարքերէն դուրս եկած են, դաւաճան են եւ արժանի պատիժի, իսկ մնացած բազմութեան արարքները դաւաճանութեան տակ չեն մտներ: Արամեանցներու պատասխանատուութիւնը իր շրջապատին կը պատկանի: Բայց Դաշնակցութեան պատմութեան ծանօթ եղողները գիտեն որ 40 տարուան ընթացքին, մեր կուսակցութիւնը երկու դաւաճանական պարագաներէն աւելին չէ արձանագրած իր տեգրութեանց մէջ: Մինչդեռ հայ վաշխառուներու ծոցէն դուրս եկած են հարիւրաւոր դաւաճաններ ու մատնիչներ, որոնք իրենց գազիր արարքներու պատիժը կրած են ժամանակին:

Այսօր անցեալ ժամանակներու դաժանութիւնը գոյութիւն ունի: Բայց հայ ժողովուրդի բոլոր խաւերն ալ պէտք է իմանան, որ ամէնէն ստորին արարքը մատնութիւնն ու դաւաճանութիւնն է: Եթէ մեր հակառակորդները համոզուած են թէ մատնութիւնը ստորին արարք է, պէտք է գգուշանան այդ քայլերէն, եւ ոչ թէ ողորմելի պատճառաբանութիւններով, նոյնպիսի արարքներու մէջ թաւալին:

Հին օրինակներն աւելորդ են: Օրինակը իրենց աչքերուն առջեւն է, եթէ ռամկավարները կամաւոր կոյրեր չեն: Այս խնդրին իսկ նուիրուած խմբագրականի մէջ ռամկավար պաշտօնաթերթը կը գրէ.— «Յառաջի այդ խմբագրականը կը յայտարարէ Թէ՝ պ. Ա. Գալփաքճեան իր այդ յօդուածով դաւաճանութիւն կ'ընէ, որուն համար արժանի է մահուան պատիժի»: Այս տողերը գրող պաշտօնաթերթը շատ լաւ գիտէ Թէ «Յառաջի»ի մէջ նման տող մը եւ բառ մը գոյութիւն չունի, սակայն հնարաժտութիւնը մղած է զինք Թարգմանելու եւ իր ընթերցողներուն հրամցնելու այս բոլորը, առանց անդրադառնալու Թէ այս հատուածն ինքնին զգուելիմատնութիւն մըն է, անգոյբանի մը առթիւ: Բարեբախտաբար փարիզի մէջ Թուրք ոստիկաններ չկան, որ ներկայանան խմբագրատուն:

Ռամկավար պաշտօնաթերթը կը յիշէ անշուշտ, որ ասկէ երկու ամիս առաջ էր, երբ գրեց Թէ՝ «Նաիր-էլ-Օմարի քոմիթէի մարդկանց մէջ կը ծագի միտքը մուսուլ, վաճպուրականի սահմանակից վիլայէթը փոխադրել վասպուրականցիները:»

Հայ ժողովուրդը, որ շրջապատուած է Թուրքերէն, Արաբներէն, Պարսիկներէն և Քիւրտերէն, եթէ օր մը դատաստանի նստի այս պարոններուն հետ եւ հարցաքննէ նախ ճշտութիւնը այս խնդրին, ու ապա գալիք վնասներու հաշիւը ուզէ, մենք չենք գիտեր Թէ ի՞նչ անուն պիտի տայ այս «քաղաքագէտ»ներուն:

Ըստ երեւոյթին մեր հակառակորդը պիտի ուզէ արդարանալ, ըսելով որ անշուշտ դաւաճանութիւնը վատ բան է, բայց ինքը յեղափոխական կազմակերպութեան չի պատկանիր, ու հետեւաբար անպարտ է:

Այո՛, «անպարտ» է . . . :

Կ. Ս.

ՄԱՄՈՒԼ

"ՀԱՄԱԶԳԱՅԻՆ,,Ը

«Յուսաբեր» այս վերնագրով խմբագրականի մը մէջ կը գրէ (յուլիս 14).

— «Քանի մը օրէն պիտի բացուի «Համազգայինի» ընդհանուր ժողովը, կասկած չկայ, որ տակաւ առ տակաւ այս նորաստեղծ կազմակերպութիւնը ոչ միայն ինասակ, այլ եւ ձեւ պիտի առնէ, կը հաւատանք, որ մօտ ատենէն ան կ'ունենայ իր սեփական «Հանդէս»ը, ուրկէ հայ ժողովուրդը պարբերաբար անհրաժեշտ տեղեկութիւնները կը քաղէ «Համազգայինի»ի կեանքի եւ գործի մասին:

Այս կենսալիր կազմակերպութիւնը ստեղծուեցաւ ասկէ ընդամէնը երկու տարի առաջ, Առաջին տարին լուռ անցաւ, եւ այդ պատճառով ընթերցողին համար անցաւ «զուր»: Սակայն այդ «զուր» տարին անհրաժեշտ էր գործի ճամբաները վերջնականապէս գծելու եւ սկզբնական աշխատութեանց սահմանները ճշդոտորոշելու համար: «Համազգայինի»ի հանրային կեանքը կը սկսի այս տարուընէ, երբ վարչութիւնը որոշեց գործի ձեռնարկել եւ իր կրթական անդրանիկ հաստատութիւնը բանալ Լիբանանի մէջ, հիմը դնելով Պէյրութի Հայ ճեմարանին:

Աւելորդ չենք նկատեր հոս քանի մը Թիւեր յիշատակել «Համազգայինի»ի [illegible] եւ Հալէպ:

Գահիրէն այժմ 9 խումբ ունի 120 անդամներով, Ալեքսանդրիան՝ 20 խումբ 150 անդամներով, Զակազիկի մասնախումբը 40 անդամ ունի, իսկ Հալէպինը՝ 300:

Ցարուան մը շրջանին Գահիրէն ունեցած է 160 ոսկի մուտք (60 ոսկի՝ անդամատուրքերէ, 70 ոսկի՝ հանդէսէ, իսկ 24 ոսկի՝ նուէրներէ):

Ալեքսանդրիան ունեցած է 185 ոսկի մուտք (130 ոսկի անդամատուրքերէ, 46, ոսկի՝ հանդէսէ եւ 10 ոսկի՝ նուէրներէ):

Զակազիկը ունեցած է 105 ոսկի մուտք, իսկ Հալէպը՝ 50 ոսկի:

Այսպէս, տարուան մը շրջանին, միայն եգիպտոսի եւ Հալէպի մէջ, «Համազգայինը» կրցած է իր շուրջը խմբել 536 անդամ մուհիներ, որոնք իրենց զոհողութեամբ եւ աշխատանքով այս նորաստեղծ կազմակերպութեան ապահոված են 540 ոսկիի հաւեստ գումար մը:

Անշուշտ, ոչինչ է այս գումարը բաղդատմամբ այն հարուստ ու բեղուն ծրագրին, որ առաջադրած է իրեն «Համազգայինը»: Սակայն աւելի քան խրախուսիչ, երբ նկատի առնենք «Համազգայինի գործունէութեան շրջանն ու դաշտը:

Այն Թափով, ինչ Թափով որ այս գործը սկսած է եգիպտոսի եւ Հալէպի մէջ, եթէ նոյն Թափով սկսի ու ծաւալի նաեւ այլ գաղութներու մէջ, տարակոյս չկայ, որ շատ կարճ ատենէն «Համազգայինը» իրապէս կը դառնայ համազգային ու համագաղութային պատկառելի հաստատութիւն մը, անխոցելի՝ իր նպատակներով, ձգտո՛ր իր միջոցներով եւ փրկարար՝ իր կատարած դերով»:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ իշխանութիւնները, այս աշնան, պիտի բանան ժակակրօնական ժամալսարան մը, որուն գործը պիտի ըլլայ պատրաստել գիւղերու մէջ ժակակրօնական պայքարի տարրերը:

ՕՐԸ ՕՐԻՆ

ՔՐՏԱԿԱՆ ՃԱՐԺՈՒՄԸ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԱՒԱՐՏԱՏ ԵՆ

Թրքական աղբիւրէ առնուած լուրերու համաձայն Արարատի ոմբակոծութիւնը կը շարունակուի: Թուրք սաւառնակները ամէն օր կը թռչին լերան վրայ եւ կը ռմբակոծեն: Քիւրտերը աւելի վերերը բարձրացած են ու ցրուած վիճակի մէջ կ'ապրին:

Մեծ մասիսը ամբողջովին պաշարուած է: Փոքր Մասիսի ալ միայն դէպի Պարսկաստան երկարող մասը բաց է: Սակայն պարսիկ կառավարութիւնը կը յայտնէ Թէ այս մասին մէջ հարկ եղած միջոցները ձեռք առած է, «ինչ որ բնականաբար բաւական չէ» կը նկատեն Թուրք Թերթերը.

Արարատի դէմ գինուորական պատրաստութիւնները գրեթէ լրացած են: Այժմ կը սպասուի Գործաւարներու Խորհուրդին որոշման, ընդհանուր յարձակումի մը ձեռնարկելու համար:

Սուրիոյ հաւատարիմները եւ Հայերը

Վերջերս Սուրիոյ եւ Լիբանանի բոլոր մասերուն մէջ հաւատարմագրական Թուղթեր ցրուած էին, դժբախտաբար մեծ մասամբ Հայերու ձեռքով եւ ներբակալուած մօտ 30 հոգի, որոնց 25ը Հայեր:

Այժմ Դամասկոսի Թերթերը կը գրեն Թէ՝ Սուրիոյ եւ Լիբանանի բոլոր մասերուն մէջ կատարուած այս համաշխարհ բրօթականտին կեդրոնը կը գտնուի Պաղեստինի մէջ եւ Թէ անոր անդամները Սիոնիստներ են, որոնք կ'ուզեն խառնակել երկիրը:

Ոստիկանութիւնն ու ընդհ. ապահովութիւնը լուրջ աշխատանքներ կը Թափեն, կը գրէ «Ազդակ», երեւան հանելու համար անոնց բուն հեղինակները: Իշխանութիւնները հասկցած եւ համոզուած են որ քանի մը Թափթփուքներ են այդ ազգատ բրօթականտի գործիք դառնող Հայերը եւ մէկ մասը արարքները:

Ձերբակալուած Հայերը խիստ քննութեան տակ առնուած են: Յովհաննէս Արսէնեան անուն կասկածելին, բոլորովին մեկուսացուած է իբր ամէնէն աւելի պատասխանատու եւ իբր մէկը որ գիտէ ամենախորին ծալքերը այդ շարժումներուն: Ցարդ ան անուններ չէ տուած գլխաւոր հեղինակներուն:

Եգիպտոսի կացութիւնը

Հակառակ կառավարութեան խիստ արգելքին, վաֆտի հրաւէրին վրայ, երեսփոխաններու գաղտնի հաւաքոյթը, որ տեղի ունեցաւ ակումբի մը սրահին մէջ, անվստահութեան բանաձեւ մը քուէարկեց ընդդէմ կառավարութեան: Հաւաքոյթը տեւեց երկու ժամ, որմէ յետոյ, Նահաս փաշա յայտնեց Թէ պիտի հրաւիրեն ժողովուրդը որ մերժէ տուրքերը վճարել:

Իսկ վարչապետ Սրտքը փաշա եգիպտական Թերթերուն արգիլեց հրատարակել վաֆտի յայտարարութիւնը:

Բոլոր գլխաւոր քաղաքները ենթարկուած են գինուորական խիստ հսկողութեան՝ և հակառակ նախատեսութիւններու, որ եւ է միջադէպ չպատահեցաւ Գահիրէի մէջ:

Կառավարութիւնը կտրուկ կերպով արգիլեց Նահաս փաշայի՝ Տամանհուր երթալ, հրապարակային բանախօսութեան մը համար, ինչպէս մտադրեր էր:

Եթէ Նահաս փաշա դէմ շարժի կառավարութեան արգելքին, հաւանական է որ բուռն միջադէպեր ծագին, և Նահաս փաշա ձերբակալուի:

Գահիրէի անգլիական եւ օտար համայնքները ուժ կուտան Սրտքը փաշայի քաղաքականութեան և Նահաս փաշայի դէմ մղած իր պայքարին մէջ, զայն կը նկատեն յաղթական:

Նախարդ խաւիլը կը խլրտի

«Տէյլի Թէլէկրաֆ» կը յայտնէ Թէ եգիպտոսի նախորդ խաւիլը Ապպաս Հիլմի, որ 1914ին, Անգլիոյ դէմ իր ընթացքին պատճառով, գահազուրկ էր եղեր, կը փորձէ ձեռք ձգել կորուսած գահը, օգտուելով Նահաս փաշայի եւ վաֆտի Թշնամական դիրքէն, ընդդէմ Ֆուատ Թագաւորին:

Լոնտոնի մէջ, Ապպաս Հիլմիի մարդերը կը գործեն իրեն ի նպաստ և կը կարծուի նոյն իսկ Թէ կարգ մը ընկերվարական հեղինակաւոր դէմքեր, դէմ չեն անոր կրկին գահակալութեան:

Իտալիոյ աղետը

Իտալիոյ հանրօգուտ շինութեանց նախարարութեան կողմէ տրուած տեղեկագիր մը ոչ մէկ կարեւոր փոփոխութիւն ցոյց կուտայ մեռելներու եւ վիրաւորներու ընդհանուր գումարին մէջ, վերջին 24 ժամուան որոնումներու ընթացքին: Ադէտեալներու օգնութեան գործը կը հետապնդուի բուռն եռանդով և կարելի է նկատել Թէ գանազան կազմակերպութիւններու նախապատրաստական աշխատանքները արդէն լրացած են: Ցամաոօրէն կը շարունակուին աւերակներու մաքրագործման եւ ջնասուած տուներու քանդումի աշխատանքները.

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՄԱՀ ԸՆԿԵՐ ԱՐՏԱՇԷՍ ՎԱՆԱՐԵԱՆԻ

Մեծ ցաւով կը լսենք Հ. Ց. Դ. Ամերիկայի շրջանի եռանդուն ու գործունեայ ընկերներէն *Արտաշէս Վանարեանի* մահը, որ տեղի ունեցած է նիակարա Գոլսի սէնթ մէրի հիւանդանոցին մէջ: Թաղումը կատարուած է տիթրոյիթի մէջ:

երկար ատեն եղած է խմբագիր դաշնակցական Թերթերու եւ միայն մէկ քանի տարի առաջ, ձգեր էր, Ամերիկայի Հ. Ց. Դ. գործիչի պաշտօնը, զոր կը կատարէր այնքան ձեռնհասութեամբ եւ խանդավառութեամբ:

ՀԱԼԷՊԻ ԿՐՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Վագըթ կը գրէ.— *Հալէպի քրտական միութիւնը Հոյպոն կը կոչուի եւ ոչ Թէ Հուպիան: Առկէ առաջ, 17 քրտական միութիւններ կային, բայց միայն Հոյպունը կրցաւ յարատեւել: Անոր նպատակն է քիւրտահայ խառն պետութիւն մը կազմել: Ունի երեք դասէ անդամներ: Ատդէտ աշխրէթապետները, ինչպէս Հասօն եւ Փոզան: Բ. արկածախնդիր քիւրտեր, ինչպէս Մէմտուհ Սէլիմ եւ Ճէլաեէթ Ալի: Գ. Հայերը, ո՛ր կ'ուզեն իբր գործիք գործածել Քիւրտերը: Հայերը, կրան տիւքէն առնուած դրամներով եւ Անգլիացիներու գուցրս Հոյպոնն միութիւնը, որ մօտէն կը շահագրգռուի Արարատի դէպքերով: Հոյպունի ազդեցիկ անդամներէն Պէտրոսեանի Ճէլաեէթ Ալի արտօնութիւն առած է քիւրտիստան անուն Թերթ մը հրատարակելու:*

Միջոց մը վէճ ծագած էր Հայերուն եւ Քիւրտերուն միջեւ, բայց այս վերջինները չեն ուզած վշտացնել Հայերը, որովհետեւ իրենց դրամը սպառած էր և պէտք ունէին անոնց օժանդակութեան:

ԱՍՈՐԻՆԵՐՆ ԱԼ ՄԻԱՑԱՒ ՔԻԻՐՏԵՐՈՒՆ ?

Կարգ մը Թուրք Թերթեր կը յայտնեն Թէ Ասորիներն ալ ուժ կուտան Քիւրտերուն:

Ամերիկայէն է որ կը վարեն սահմանի եւ Միջագետքի մէջ կեդրոնացած Ասորիները: Մասնաճիւղեր ունին նաեւ Փարիզի եւ կարգ մը ուրիշ վայրերու մէջ:

Ասոնց նպատակն է, կ'ըսէ փոլիթիքա, աշխարհի բոլոր Ասորիները մեր սահմանին վրայ հաւաքել: Այսպէս, տուն տեղ եղած Ասորիները Եւրոպայէն, Ամերիկայէն եւ Միջագետքէն կը տարուին սահմանամերձ շրջանները եւ ամէնէն բարեբեր հողերուն վրայ կը զետեղուին: Ամերիկայի անոնց Միութիւնը ունի նաեւ ասորերէն Թերթ մը, եւ առատ դրամ կը հայթայթէ: Պարսկաստանն ալ առաւելագոյն օժանդակութիւն ցոյց կուտայ:

ՌՈՒՍԵԱՄԵՐԻԿԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ռուսեւամերիկեան յարաբերութիւնները սկսան լրջօրէն ձգտուիլ Նիւ-Եորքի Խորհրդային Առեւտրական պատուիրակութեան կողմէ կատարուած մաքսանենգութիւններուն հետեւանքով: Ոստիկանութիւնը երեւան հանեց բոլշեւիկ 25 գործիչներ, ինչպէս նաեւ բոլշեւիկներու Ամերիկա մուտքը դիւրացնող կեղծ անցագրեր:

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ ԵՒ ՌՈՒՄԷՆ ՔՆՆԱԴԱՏՆԵՐԸ

(Մասնաւոր Թղթակցութիւն) 23 Յուլիս, Պուքրէշ

«Կ'արժէ հայ արուեստի ցուցահանդէսը դիտել ու մտածել պատմութեան աչքով, որոշելու համար անոր տեղը. մարդկային քաղաքակրթութեան մէջ»։

Այսպէս կը վերջացնէր իր յօդուածը ռումանացի երիտասարդ՝ բայց արդէն իսկ գրականութեան մէջ դիրք գրաւած դէմք մը՝ Ատրիան Մանիու, հայ արուեստի ցուցահանդէսին մասին, որ տեղի ունեցաւ Պուքրէշի մէջ։

Եւ արդարեւ եկան բոլորը։ Եկան հագարներով։ Եկան սկսեալ արքայական ընտանիքէն մինչեւ ամենահասեստ թերթի խմբագիրը եւ արուեստի ու գրչի մշակը։ Գրագէտներ, նկարիչներ, արձանագործներ, բժիշկներ, ճարտարապետներ, երկրաչափներ, պալատականներ։ Մէկ խօսքով՝ ժողովուրդի մը ընտրանին։ Եկան, տեսան ու հիացան։

Եւ յաջորդ օրն իսկ, թերթերը արդէն սկսան չատագովել հայ արուեստն ու իր մշակները։

Իրենց շահեկանութեան համար, ստորեւ կուտանք քաղուածքներ կարեւորագոյն յօդուածներէն։

Ազդանշանը տուողը եղաւ այս երկրի ոգին մարմնաւորող, մեծ հայասէր փրոֆ. Եորկան որ իր «Neamul Romanese» թերթին մէջ կը գրէր իբր խմբագրական.—

«... Պիտի տեսնէք հոն, օտար հորիզոններու տակ ապրող Հայերու կողմէ ղրկուած առարկաներ, որոնցմէ շատերը բացառիկ գեղեցկութիւն եւ ինքնատպութիւն ունին։ Երկրէ երկիր ու դարէ դար, ազգային նոյն ներշնչումն է, որուն մէջ կը միաձուլուին հայ ազգի իրապաշտ ոգին. արեւելքի վիպապաշտ տարրերը ու միջնադարեան Ծրանաայի բանաստեղծութիւնը։

Հնամեայ վհուկներամբ նկարածածկ վարագոյրներ, որոնց մէջ արեւելեան բոցավառ գոյները՝ Բիւզանդիոնի անձանօթ օրէնքներուն համաձայն կը տրածուին։

Արծաթապատ կողքեր, եկեղեցական անօթներ ու շարք մը նկարներ, որոնց մէջ հայկական է միայն արուեստագէտին ձեռքը։ Ցուցահանդէսի այս բաժնին մէջ, բազմիցս կը զգանք մեր հողի եւ երկինքի, մեր հարեւանութեան եւ կենակցութեան ազդեցութիւնը։

Այս կերպով, տարբեր մշակոյթի մը լուսապատկերին կից, կը տեսնենք միաժամանակ անոր իրագործած համադրութիւնը մեր իսկ հին արուեստի կեանքով»։

«Օմոդ Լիպէր» օրաթերթը, Թ. Ջ. Սթան ստորագրութեամբ կը գրէ.—

«Խիստ տաժանելի է ազգային գեղագրական ցուցահանդէսի մը կազմակերպիչի դերը։ Հազիւ երէկ ըմբռնեցի այս իրողութիւնը, երբ հայ արուեստի ցուցահանդէսը այցելեցի։

Նիւթեր հաւաքել, յաճախ զանոնք հեռաւոր վայրերէ բերելով, դասաւորել ու երեք սրահներու մէջ, այս բոլորը ոչ միայն գեղարուեստական ու պատմական պատկառելի պաշար մը կը պահանջէ, այլ նաեւ հաւասարակշիռ ոգի ու տարածութիւնը օգտագործելու ընդունակութիւն։

Մեր սեղմ սիւնակները մեզ չեն թոյլատրեր մանրամասնօրէն ծանրանալու ցուցադրուած բոլոր առարկաներուն վրայ, ըսելու համար անոնց մասին բոլոր գովասանքները, որոնց արժանի են։

Նկարները, եկեղեցական դիրքերը, անօթները, կողքերը, արծաթեղէնները, յախճապակիները, դրամները, վարագոյրները,— մէկ խօսքով ամէն ինչ որ հայ ազգին յատկանիշն է, օրերու կարօտ են, համբերատար արուեստասէրի մը կողմէ, ըստ արժանւոյն ուսումնասիրուելու համար։ Ու կան, իսկապէս, առարկաներ, որոնք սքանչելի են։

Աչքի կը զարնեն Ախալցխայի, Շապին-Գարահիսարի տարազները իրենց մանրակրկիտ եւ ընտրանի նկարագրերով։ Նոյնպէս ԺԹ. դարէն վարագոյր մը, հրաշալի իր յղացումով, բնականաբար պարզ, ինչպէս պարզ էր գոյն յօրինող հոգին։

Ճարտարապետութեան բաժնին մէջ, ուշագրաւ է Ագրակի աւերուած ու վերաշինուած եկեղեցւոյն նկարը։ Վերապրող քարերու փորանկարները բացառիկ են իրենց շքեղութեամբ եւ նրբութեամբ։

Գրքերու բաժնին մէջ, հետաքրքրութենէ մղուած նայուածքդ երկար սեւեռած կը մնայ տարօրինակ տառերով ծածկուած ձեռագիրներուն վրայ, կատարեալ արուեստով եւ բազմերանգ մանրանկարներով զարդարուն։

Ժամանակակից Հայերու արտայայտութիւններն ալ արհամարհելի չեն։ Յիշենք տաղանդաւոր փորանկարիչ Իտկար Շահինը, քանի մը պաշտելի դիմանկարներով, Տիկին Արմենիա Բաբայեանը,— որուն նկարները երազային, մառախլապատ անորոշ մթնոլորտի մը մէջ կը լողան, Գ. Շահնազարը ու,— անարդարութիւն մը գործած չըլլալու համար,— յիշենք նաեւ Արամ Ալպանի հետաքրքիր ուսումնասիրութիւնները։

Կ'արժէ հայ արուեստի ցուցահանդէսը տեսնել։»

Կառավարութեան պաշտօնաթերթը՝ «Տրէփթաթեան»ին մէջ, տիկին Ջէլիա Թուցեսքու-Սթօրք, յատնի նկարչուհին կը գրէ։

«... Հայ արուեստը՝ իր սեփական, ուրոյն արտայայտութիւնը գտաւ մասնաւորաբար է. դարուն մէջ։ Այս ժողովուրդը որ պատմութեան դժուարութիւններուն պատճառով, այսօր փոքրիկ հողաժասի մը միայն տէր է, ու մինչ իր բոլոր ձգտումներն ու ստեղծագործող ոյժը հարկադրուած է սպասել օտար հորիզոններու տակ, արուեստ մը ունի,— մանաւանդ զարդանկարը,— որ զինքը յառաջացած մշակոյթի տէր ժողովուրդներու կարգին կը զետեղէ։

Հայաստանը այնպիսի դիրք մը կը վայելէր որ թէ արեւելքի եւ թէ արեւմուտքի մշակոյթը կրնար շահագործել։

Հայ ժողովուրդի ազգագրական ինքնատպութիւնը, կը մատնանշէր անոր ցեղային ուժեղ եւ ստեղծիչ խառնուածքը, ու իր կոչումն էր, օգտուելով այդ երկու քաղաքակրթութիւններէն, արեւելքի եւ արեւմուտքի բախտաւոր հաւաղրութիւնը ընել։ Հայ արուեստագէտները մասնաւոր հասկացողութիւն մը ունին ու հակամէտ են դէպի զարդանկարչութիւնը եւ իբրեւ արեւելեան ժողովուրդ, կը սիրեն բազմապիսի ֆլօրան եւ ֆաունան, զորս յաջողութեամբ կը գործածեն։

«Հոս կարելի է դիտել կրօնական կոթողներու արտաքին սիլուէթներուն ներդաշնակ համեմատութիւնը, ինչպէս նաեւ ներքին մանրամասնութեանց բաժանման ձեւը։ Անոնց հնաժեայ եկեղեցիները, կարծես թէ յաւիտենականութեան համար շինուած ըլլան։ Կարծես վերջնականապէս գետնէն բուսած են ու ամուր կերպով կապուած միջավայրին հետ, ներդաշնակ ամբողջութիւն մը կազմելով այսպէս։

Քնքոյշ խաղաղութեան զգացում մը կը թափանցէ հոգիիդ մէջ, դիտելով զանոնք, մինչ ոճի ներդաշնակութենէն հմայուած նայուածքդ սիւներու, կամարներու և այլ մանրամասնութիւններուն վրան կը յածի։

Հոս գեղագիտական խնդիրները, կարծես, ներքեզային բնաղդէ մը լուծուած են, որ միմիայն ինքզինքը կը լսէ, հեռու որ եւ է դպրոցի կանոններէ։

Նոյնպէս, հայերը կ'ըմբռնեն ներկերու կարեւորութիւնը, վասընզի, չմոռնանք ըսելու որ հայերը նախնական ժողովուրդ մըն են։

Անոնց գորգերով, յախճապակիներով, արծաթեղէններով եւ զէնքերով զարդարուած տուներըը, գեղագիտական բացառիկ ճաշակ մը կը յատկանշեն։

Անոնց յարդարումը կը համապատասխանէ ինքնամփոփման պահանջին ու ապաստանարան մըն են արեւի տօթին դէմ։ Հոն խօսակցութեամբ ժամեր կ'անցընեն։

Ցուցահանդէսին, դարձեալ, մէկ հետաքրքիր մասը կը կազմէ ժանրանկարչութիւնը։ Կազմակերպիչները Վենետիկի Մխիթարեաններու հետ յարաբերութեան մտած են, որոնք բազմաթիւ եւ բազմերանգ ձեռագիր հատորներ ղրկած են, որոնց զարդանկարները նախնական արուեստի մը գրաւչութիւնն ունին։ Արուեստագէտը ազատօրէն կը ներշնչուի, որ եւ է օրէնքէ դուրս։ Նկարներու զծագրութիւնը՝ մերթ կարգապահ եւ մտալից ոգի մը կը յատկանշէ, եւ մերթ ազատաթռիչք է, կարծես թէ բնութեան ծոցէն փրցուած ըլլար. ինչպէս պուրակի մէջ թռչնիկին դալլալը, կամ նախամարդու թոթովագին քնքոյշ երգը։

Կան նոյնպէս, գրքի արծաթապատ շքեղ կողքեր, յախճապակիներ, կղերական հանդերձանքներ, եւ այլն։

Հայերը նորագոյն արուեստ ալ ունին։ Իտկար Շահինի, Ա. վազովսքիի, Շահնազարի պէս յայտնի նկարիչներ, ինչպէս նաեւ բազմաթիւ տաղանդաւոր, խոստմնալից երիտասարդներ։

Պուքրէշի բնակիչներուն համար այս ցուցահանդէսը բացառիկ երեւոյթ մըն է, իսկ Գեղարուեստից վարժարանին աշակերտներուն եւ աշակերտուհիներուն համար, չկայ զարդանալու աւելի յարմար տոհմ, քան հիացմունքով դիտել այդ բոլոր իրերը, որոնք նոյնքան արժէք ունին, որքան օտար երկիրներու թանգարաններու մէջ ցուցադրուածները, զորս տեսնելը միայն փոքրաթիւ բախտաւորներուն վիճակուած է։»

«Ռուբէնթալ» քաղաքական կարեւոր օրաթերթը, ՓԱՒԻԼ ՍԹԷՐԵԱՆի ստորագրութեամբ, «Pro Armenia» խորագրին տակ կը գրէ.

«... Կազմակերպողները, որոնց համար ամէն գովասանք քիչ է, իրենց տրամադրութեան տակ ունենալով հանդերձ սահմանափակ նիւթական միջոցներ, կրցան այս բազմաչարչար ժողովուրդի հոգին ներկայացնել, որ աշխարհի խաղաղութեան համար զոհուեցաւ։ Ծանօթ են այն պայմանները, որոնց մէջ հիմը դրուեցաւ Ազգերու Դաշնակցութեան ու բոլորը լաւ գիտեն թէ ինչպէս այս վերջինս, այս կամ այն կողմը զոհացնելու եւ միջազգային դրութիւնը ամրացնելու համար, անպաշտպան թողուց այս քաջարի եւ հին ժողովուրդը։ Այսպիսով հայ ազգը յանձնուեցաւ իր մահացու թշնամիին ձեռքը, որպէսզի կոտորէ զայն ու բնաջնջէ անոր մշակութային ստացուածքը։

«Ահա թէ ինչու կը կարծենք որ, — այն չափով պէտք է շահագրգռէ մեզ եւ օտար ազգերու կեանքը, եւ այնքան ինչքան մենք մեզի եւրոպացիներ կը սեպենք, — այս ցուցահանդէսը ոչ միայն գեղապաշտ, այլ նաեւ խղճի խայթ ձեռնարկ մըն է։ Եւ որուն մենք ռումանացիներս պէտք է միանանք, հետեւելով մեր մեծ գիտնական՝ Ն. Եորկայի օրինակին։

Եթէ Ռումանացի ըլլալը եւրոպացի ըլլալ կը նշանակէ, ապա ուրեմն մեր նուիրական պարտականութիւնն է յարդանքով ու խոնարհութեամբ ծռիլ հոն ցուցադրուած առարկաներուն վրան, զորս նուրբ եւ խորհրդաւոր ճաշակով օժտուած ազգ մը ստեղծած է։

«Իսկ մեզի համար դաս մը թող ըլլայ այս ցուցահանդէսը։ Գուցէ կազմակերպողները չժտածեցին ատոր, բայց ոչինչ աւելի լաւ ու ակնբախ չի խօսիր ի նպաստ Հայաստանին, քան այս ցուցահանդէսը, ուր առարկաները հաժոզելու դիտումով ցուցադրուած չեն, այլ միայն գեղապաշտ նպատակներով։

«Հողեկան հարստութիւնդ խոնարհութեամբ ցուցադրել, ահա ամենալաւ պաշտպանողականը։

«Այս կը սորվեցնէ մեզ հայ արուեստի ցուցահանդէսը։»

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՈՒԼԻՍ

ՀԱՄԵՒՐՈՊԱ

Բ.

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՄՏԱՎԻՃԱԿԸ

Թէպէտ, վաղուց դադրած է պատերազմը, ըստ ձեւի, սակայն տակաւին հոգեբանական պատերազմական վիճակը դադրած չէ։ Իբրեւ մշտատեւ վտանգ, պատերազմի բոցերը կը սաւառնի Եւրոպայի գլխուն։

1919ի դաշնագիրները, յաղթող ու յաղթուած ժողովուրդներու միջեւ ցանած են պատերազմի սերմեր, կուտակած են ոխ ու ատելութիւն, զրկանք ու թշուառութիւն, տնտեսական տագնապ ու լեռնակուտակ պարտքեր։ Մէկ խօսքով հատատարած քայքայում։

Պարտուած երկիրներու մէջ, վրէժխնդրութեան բնական զգացումը օրըստօրէկը խորանայ իր թշուառութեան հետ, հանդէս կուգան ծայրայեղ ազգայինտարրեր, կը զրգռեն ժողովուրդը կը պահանջեն դաշնագրերու վերաքննութիւն, կը նատին ժողովուրդի դիւրավառ զգացումներուն վրայ եւ երկրի ճակատագիրը կը վարեն գլխապտոյտ գալարումներով։ Անոնք դրօշակակիրները կը ներկայանան կորսուած իրաւունքներու վերստացման ու ամբողջացման։ Որոշ գաղափարներու ժամանակաւոր յաղթանակը, թէպէտ մեծագնած է այս տասնամեակի ընթացքին, վրէժխնդրութեան զգացումը, բայց հնոցը միշտ վառ է եւ ժոխերը տաք՝ Գերմանիոյ, Հունգարիոյ եւ Պուլկարիոյ մէջ։

Խռովութեան աղբիւր է եւ պատերազմական որոմ, ազգային ոտնահարուած փոքրամասնութիւններու հարցը։ Երկու ծայրայեղ քաղաքականութիւն է որ, կը գործադրուի անոնց նկատմամբ բիրտ ձուլում եւ բացարձակ ինքնավարութիւն։ Առաջինը իտալական մեթոտն է գործադրուած Թիրոլիմէջ, երկրորդը Եսթոնական՝ հանդէպ սլաւ և գերման փոքրամասնութիւններու։ Կան ուրիշ փոքրամասնութիւններ աւելի կամ պակաս որոշ կեցուածքով, ինչպէս Չեխոսլովաքիոյ Գերմանները, որոնք փարած են իրենց նոր հայրենիքին, բայց միշտ կը դուրգուրան եռապետութեան մը գաղափարին վրայ, պետ. մէկ ձեւի մէջ ներկայացնելով չեխոսլովաք եւ գերման տարրերը բոլորն ալ հաւասար իրաւունքներով։

Պալքաններուն մէջ գործադրուեց բոլորովին ուրիշ աննախընթաց ձեւ մը, ազգային փոքրամասնութիւններու վերաբերմամբ Լօզանի դաշնագրով նախատեսուած։ Այդ փոխանակութեան ձեւն է։ Տոպրուճայէն՝ Պուլկարները, Թրակիայէն Թուրքերը, իսկ Պոլսէն ալ՝ Յոյները փոխանակեցին իբրեւ ապրանք։ Սակայն չկարողացան լուծել Մակեդոնական ողբերգութիւնը։ Եւ սերպօսլուկար սահմանին վրայ, վտանգը դարձեալ կախուած մնաց։

Այստեղ, տեղն է կանգ առնել բոլորովին մէկ ուրիշ ծանրակշիռ խնդրի վրայ, որ պատերազմի անմիջական եւ արտառոց հետեւանքներէն մէկն է։ Դա հայ եւ ռուս գաղթականութեան խնդիրն է։

Հսկայ թիւը, անջատուած իր մայր հայրենիքէն անդոյն ու անորոշ իրաւական հիմունքով մը, չիգիտեր թէ ի՞նչ է ինքը։ Եւ փոքրամասնութիւն է տուեալ երկրի մէջ, եւ՛ չէ, եւ՛ հայրենիք ունի, եւ՛ չունի, եւ՛ ազգ է, ազգային մասնիկ, եւ չէ։ Գորշ կեանք մը ծովէ ծով երկնցած, որ հասցէ չունի։ Կատարեալ հայմաթլոզ։

Վերջերս Գուրդ Կրոսման, Գերման մարդկային իրաւունքի ընկերակցութեան տնօրէնը անդրադառնալով այս խնդրին, հետեւեալ ուշագրաւ յայտարարութիւնները կ'ընէ La Volonté թերթի թղթակցին 1698 թիւին մէջ.

«Մարդկային հսկայ զանգուածը պոկուած իր երկրէն, մասնաւորապէս Ռուսաստանէն եւ Հայաստանէն, նետուած է Եւրոպա, Պալքանները եւ Ամերիկա։ Անոնք բացի իրենց կեանքի իրաւունքէն, ուրիշ ոչ մէկ իրաւունք ունին։ Նոյն ճակատագիրն ունին նաեւ այն փոքրամասնութիւնները, որոնք նորակազմ եւ ընդարձակուած պետութիւններուն չեն կրցած յարմարիլ։ Այս զանգուածի միակ տէրը, ըլլայ իրաւական թէ բարոյական, կը հանդիսանայ Ազգերու Դաշնակցութիւնը։ Պետութիւններ կան, որ հոդ ալ դժուարութիւններ կը հանեն եւ յաճախ անոնց ճակատագիրը կախուած կ'ըլլայ օդին մէջ։ Անշուշտ, ասիկա ոչ նորութիւն է եւ ոչ ալ հարցի լուծում, որովհետեւ այս զանգուածը իր իրաւազուրկ վիճակին մէջ անգամ, տակաւին կարգ մը հաշիւներ կարող է խանգարել։

Այլ են պայմաններն ու պահանջները Իտալիոյ, որ իր երկրի սահմանները նեղ կը տեսնէ իրեն համար եւ ազգային Մուսոլինին, առանց դիւանագիտական թագնամտութեան, կը հնչեցնէ. «կա՛մ պիտի տարածուիմ, եւ կամ պիտի պայթիմ։»

Ամէն տարի, ահագին թիւով իտալական գաղթականութիւն կ'երթայ Ամերիկա, Ֆրանսա եւ Գանատա։ Ամերիկայի դռները փակուած են, Գանատայի կլիմայն չի գար անոնց, կը մնայ Հարաւային Ամերիկան եւ Ֆրանսան։ Վերածնուող Իտալիան թոյլ չտար, որ իր զաւակները երթան հեռաւոր երկիրներու մէջ լուծուելու։ Իր քթին տակն է թունուզը։ Եւ Ֆրանսա չպիտի դիջի անոր։ Դարձեալ հաշուեյարդարը պիտի ըլլայ դէնքը։

Հունգարիան, որ պատուհասը ըն է Չեխոսլովաքիոյ գլխին, բնաւ լքած չէ մեծ Հունգարիոյ գաղափարը։ Կ'ուզէ վերստանալ իր կորսնցուցած գաւառները եւ միապետական բռունցքին տակ դնել Ռումէնները, Խրուաթներն ու Սլովաքները։

Աւստրիան՝ իր Anschluss-ով, Ռուսաստանը՝ իր Պեսարապիա-ով, Լիթուանիան՝ իր Վիլնայով, Լեհաստան՝ իր Կորիտոռով եւ ուրիշ բազմաթիւ հարցեր, որ ճեղքած են Եւրոպան եւ դրած՝ պայթուցիկ դրութեան մը առջեւ։

Ի՞նչ միջոցներ են նախատեսուած այս տասնամեակին մէջ։

Առայժմ, հրապարակի վրայ երեք միջոց կայ միայն.

Ա.— Ազգերու Դաշնակցութիւն։

Բ.— Լոքառնոյի դաշնագիր։

Գ.— Պրիան Քէլլոկ դաշինք։

Ազգերու Դաշնակցութիւնը թէպէտ չընդգրկեր բոլոր ազգերը, բայց եւրոպական ժողովուրդները գրեթէ բոլորն ալ ընդունած է իր ծոցին մէջ։ Շատեր թերահաւատ էին թէ չպիտի ապրի։ Եւ սակայն ապրեցաւ։ Շատեր կը կարծէին, որ հսկայ դեր պիտի խաղայ ազգերու փոխ-յարաբերութեան մէջ, եւ սակայն չկրցաւ ընել նայն դէպս, Ազգերու Դաշնակցութիւնը է՛, ինչ որ է, իրաւաբար եւ բարոյական ունեցող միջազգային ատեան։ Այսպէս թէ այնպէս, կարգ մը կնճռոտ խնդիրներ, ինչպէս Սիլէզիոյ, Սաարի, Վիլնայի եւ յունական կնճիռները։ Ծանր հարցերուն չի կարողանար տեսնալ, որովհետեւ ըստ էութեան օրէնքներուն, չի կրնար ժամանակին պետութիւններու միամիտ թիւնը։ Ինչ որ անկարելի է։

Լոքառնոյի դաշնագիրը, ձեռք կիսամիլիոց մըն է, հետեւ բաւական չէ ստորագրել Արեւմտեան Լոքառնօ մըն ալ պէտք է ստեղծել նաեւ Արեւելեան Լոքառնօ մը, իբրեւ ժամադրափակ իրաւաբար մը։

Պրիան Քէլլոկ դաշինքը ուղղակի է իր ձեւին մէջ, որովհետեւ զրազմը օրէնքէ դուրս կը կէ, սակայն ատիկա հարցի priori լուծումն է, յենուելով բոլորական ուժերու վրայ։ Կոն է, թէ ինչպէ՛ս կարենանիետացնել պատերազմի ճառները, որոնց տողանցը տարեցինք քիչ առաջ։

Ահա թէ ինչո՞ւ այս նախերգանքն են միջազգային մեծ հաստատութեան պիտի կոչուի եւրոպայի եալ Նահանգներ։

ՎԱՀԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ

ԿԱԶՈՒԹԻՒՆ ՔԷՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Փարիզի մէջ հրատարակուող Թուրք ընդդիմադիր կանին՝ La République նէեի մէջ, Թուրքիոյ ներքին նախարար եւ տնօրէն Մէհմէտ Ալի, Թուրք բախտակներուն Թուրքիոյ կացութիւնը կայացնէ հետեւեալ կերպով։

Լոնտոնի «Թայմզ»ը լի Թէլէկրաֆ»ը ինչպէս եւրոպական մամուլին մեծ մասը, քիւրտերու արշաւը Նուգանէին Արարատի դէպի Թրքական հողերուն Արարատեան շրջանին մէջ մէկ քանի չաբաթներ առաջ տեղեկատուութիւնները եւ վերջին շաբաթուան թրքական մամուլին լեզուին, յայտնի կը հասկցուի թէ յունիսի 19ի բախտակները՝ քիւրտական քէմալական զօրախումբերու, նպաստաւոր չեն եղած վերջիններուն։ Նոյնիսկ, ձայն կարգ մը թերթերու ղեկատուութեանց, Թուրքերած են օգնական, զինուորական նիւթեղէնի ուղարկել։ Մինչեւ անգամ, լական մաս մը զօրքեր եղած եւ մրցած են քիւրտերուն։

Քէմալականկառավարութիւնը կողմէ պարսիկ կառավարութիւնը կատարուած դիմումը՝ ցելու համար քրտական զսպումին, ու պարսկական ժուռը, կը մատնեն նկարները։

Ցաւակնութիւնը չունի շակութիւններ ընելու կարմասին, որուն հլքը, շատ պիտի գան հաստատելու քական եւ զինուորական ը Պիտի գոհանանք հետթիւնները գծելով այնպէս որ կը ներկայանան քին եւ ներքին քաղաքանակէտներով եւ ընթերցլու հոգը։

Արտաքին քաղաքութեան տեսակէտով, այս րուն մէջ դիտելի է

Եւ սակայն չկրցաւ ընել նայն դէպս, Ազգերու Դցութիւնը է՛, ինչ որ է, իրաւաբար եւ բարոյական ունեցող միջազգային ատեան։ Այսպէս թէ այնպէս, կարգ մը կնճռոտ խնդիրներ, ինչպէս Սիլէզիոյ, Սաարի, Վիլնայի եւ յունական կնճիռները։ Ծանր հարցերուն չի կարողանար տեսնալ, որովհետեւ ըստ էութեան օրէնքներուն, ժշտ է ապահովել ժամանակին պետութիւններու միամիտ թիւնը։ Ինչ որ անկարելի է։

Լոքառնոյի դաշնագիրը, ձեռք կիսամիլիոց մըն է, հետեւ բաւական չէ ստորագրել Արեւմտեան Լոքառնօ մըն ալ պէտք է ստեղծել նաեւ Արեւելեան Լոքառնօ մը, իբրեւ ժամադրափակ իրաւաբար մը։

Պրիան Քէլլոկ դաշինքը ուղղակի է իր ձեւին մէջ, որովհետեւ զրազմը օրէնքէ դուրս կը կէ, սակայն ատիկա հարցի priori լուծումն է, յենուելով բոլորական ուժերու վրայ։ Կոն է, թէ ինչպէ՛ս կարենանիետացնել պատերազմի ճառները, որոնց տողանցը տարեցինք քիչ առաջ։

Ահա թէ ինչո՞ւ այս նախերգանքն են միջազգային մեծ հաստատութեան պիտի կոչուի եւրոպայի եալ Նահանգներ։

ՎԱՀԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՍԱՀԱՂՈՐԴԸ ՈՒ ՕՐՍՈՑԸ

Ամեն անգամ, երբ մեր հայրենակիցներից մեկը կամ մեկ ուրիշը հարցնում է ինձ, թե ինչպես է ապրում Հայաստանի մասսահաղորդը, ես միշտ պատասխանում եմ, որ նա ապրում է ամենալավ պայմաններում, որ նա ունի ամենալավ սենյակը, ամենալավ սեղանը, ամենալավ անկողինը, ամենալավ հագուստը, ամենալավ կոշիկները, ամենալավ սնունդը, ամենալավ ծխախոտը, ամենալավ գինին, ամենալավ կոնյակը, ամենալավ ուտելիքը, ամենալավ ամեն ինչը։ Ես միշտ պատասխանում եմ, որ նա ապրում է ամենալավ պայմաններում, որովհետև ես ինքս եմ ապրում այդ պայմաններում։

— Ինչպես է հնարավոր, որ դուք ապրեք այդ պայմաններում, — հարցնում է ինձ ընկերը, — դուք, որ ոչ մի կոպեկ չունեք ձեր անունին, դուք, որ ոչ մի կոպեկ չեք վաստակում, դուք, որ ոչ մի կոպեկ չեք ստանում։

— Ես ապրում եմ այդ պայմաններում, որովհետև ես ապրում եմ Հայաստանի մասսահաղորդի տանը, — պատասխանում եմ ես։

— Ինչպես է հնարավոր, որ դուք ունենաք այդ տունը, — հարցնում է ինձ ընկերը, — դուք, որ ոչ մի կոպեկ չունեք ձեր անունին, դուք, որ ոչ մի կոպեկ չեք վաստակում, դուք, որ ոչ մի կոպեկ չեք ստանում։

— Ես ունեմ այդ տունը, որովհետև ես Հայաստանի մասսահաղորդն եմ, — պատասխանում եմ ես։

— Ինչպես է հնարավոր, որ դուք լինեք Հայաստանի մասսահաղորդը, — հարցնում է ինձ ընկերը, — դուք, որ ոչ մի կոպեկ չունեք ձեր անունին, դուք, որ ոչ մի կոպեկ չեք վաստակում, դուք, որ ոչ մի կոպեկ չեք ստանում։

— Ես Հայաստանի մասսահաղորդն եմ

կանոնաւոր կերպով, առատ ուտեստ կը բաշխուի աղէտեալներուն: Շատ վայրերու մէջ, հացի փուռերը կը գործեն կանոնաւոր, շնորհիւ թափուած ջանքերուն, եւ ղեղագործական բազմաթիւ կայաններ հաստատած են, եւ մինչեւ այս իրիկուն, կարելի պիտի ըլլայ, վիրաւորներու վերջին խումբն ալ պատսպարել հիւանդանոցներու մէջ:

Կանոնի պայման կը դնեն

Փունայի բանտին մէջ, իրեն հետ բանակցութեան մտնող հնդիկ երկու պետերուն կանտի յայտնեց թէ, Լոնտոնի մէջ հոկտեմբերին գումարելի խորհրդաժողովին որպէս զի ինքն ալ մասնակցի, Հնդկաստանի փոխարքան պէտք է ապահովէ թէ հնդիկ ազգային կուսակցութեան պահանջները վիճաբանուի թեան պիտի դրուին հոն:

Կանտի պայման դրած է որ իր ձերբակալումէն առաջ, իր կողմէ Հնդկաստանի փոխարքային առաջարկուած չորս նախապայմանները գոհացում ստանան, այսինքն՝ 1,— Լոնտոնի խորհրդաժողովին նպատակը պէտք է ըլլայ մշակել սահմանադրութիւն մը, որ Հնդկաստանի անկախութիւնը ճանչնայ: 2.— Աղի տուրքը պէտք է ջնջուի, ոգելից ըմպելիներն ու օտար հիւսկեղէններու և կտաւներու մուտքը պէտք է արգիլուի: 3.— Անմիջապէս որ քաղաքական անհնազանդութեան պայքարի դադրի, քաղաքական յանցաւորները պէտք է ներման արժանանան: 4.— Մայիսին կատարուած բողոքի ցոյցէն առաջ, կանտի փոխարքային ուղղուած նամակով մը, կարգ մը պայմաններ էր դրեր, որոնք պէտք է վէճի նիւթ դառնան հետագային:

Դեռ յայտնի չէ թէ հնդիկ յեղափոխականները պիտի դադրեցնե՞ն քաղաքացիական անհնազանդութեան շարժումը: Պարագան պիտի ճշդուի հնդիկ երկու պետերուն Նեհրուի հետ տեսակցութենէն յետոյ:

Հնդկուհիներու նոր ցոյցը

Վերջերս, կառավարութիւնը որոշեր էր ձերբակալել եւ դատի յանձնել այն Հնդկուհիները, որոնք ցոյցերու մասնակցեր էին: Ա յս որոշման դէմ բողոքելու համար, Պոմպէյի մէջ, Հնդկուհիները կազմակերպեցին մեծ ցոյց մը: Իգական թափօրը երեկոյեան ժամը 5էն մինչեւ կէս գիշերուան 2ը փողոցներն աղմկեց յեղափոխական կանչերով եւ ի վերջոյ, քարերով յարձակեցաւ ոստիկանութեան վրայ: Բազմաթիւ վիրաւորներ կան:

Ընկ. ապահովագրութեանց դէմ

Ընկ. ապահովագրութեանց օրէնքին դէմ, դժգոհութիւնները հետզհետէ կը սաստկանան Ֆրանսայի ճարտարարուեստական գլխաւոր կեդրոններուն մէջ եւ արդէն, Լիլի մէջ, լուրջ ու վտանգաւոր բնոյթ ստացած են: Հիւսկեղէնի սէնդիկանեբու պատգամաւորները 450 հոգի, Լիլի մէջ ժողով գումարեցին եւ ընդհանուր գործադուլի որոշում տուին, այնպէս որ միայն այդ շրջանին մէջ, բանթողներու թիւը այսօր կը հասնի 60,000ի:

Իսկ Ռուէնի մէջ, վախ կայ որ ծանր խռովութիւններ պատահին: Կիրակի օր, ոստիկանութեան եւ հանրապետական պահակներու ուժեղ ջոկատներ գրաւեր էին քաղքին գլխաւոր կէտերը: Հակառակ խիստ արգելքին գործաւորները մեծ ցոյց մը կատարեցին. Թափօրը գրաւեց Քաղաքապետութեան հրապարակը, հրմշտկելով ու ետ մղելով ոստիկանական ուժերը: Քաղքին ուրիշ մէկ կէտին վրայ, ցուցարարները պատնէշներ կանգնեցին եւ քար տեղացուցին ոստիկաններուն վրայ, որոնք ստիպուեցան յարձակում գործել: Ոստիկան մը վիրաւորուեցաւ ծանրօրէն: Ցուցարարներէն 3 հոգի վիրաւորուած են: 30 անձեր ձերբակալուեցան:

65 անիշխանականներ ձերբակալուած

Ոստիկանութիւնը լուր էր առեր թէ Փարիզի շրջանին մէջ, անիշխանականները յաճախակի հանդիպումներ կ'ունենան, եւ որոշումներ կուտան Սպանիոյ եւ Ֆրանսայի մէջ անիշխանական գործունէութեան մասին:

Նման հաւաքոյթ մը կազմակերպեր էին կիրակի օր, վէնեէօյի մէջ. Սէնի եզերքը, գլխաւոր նպատակ ունենալով Սպանիա չղրկել անձեր, որոնք պիտի գործէին կառավարութեան դէմ: Հարիւր անիշխանականներ հաւաքած էին, երբ ինքնաշարժերով հոն փոխադրուած բազմաթիւ ոստիկաններ պաշարեցին անիշխանականները, որոնցմէ կրցան ձերբակալել ու բանտ փոխադրել 65 հոգի:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԼԻԱԿԱՆ Թերթ մը կը գրէ Թէ Անգլիոյ կառավարութիւնը դէմ չպիտի ըլլայ Չունգարիոյ մէջ Հապսպուրկներու գահակալութեան, պայմանաւ որ, ա) ատով, Հունգարիոյ խաղաղութիւնը չվրդովի, բ) Հունգարիա եւ Աւստրիա չմիանան արքայական նոյն մականին տակ, գ) Հապսպուրկներու գահակալութիւնը արժանանայ շահագրգռուած ժողովուրդներու հաւանութեան:

ՊՈՂՊԱՏԵԱՆ Սաղաւարտները որոնց դէմ դրուած արգելքը վերցաւ շնորհիւ Հինտէնպուրկի միջամտութեան, կիրակի օր վէսթֆալիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ կատարեցին ցոյցեր, որոնք կրնան ծանր հետեւանքներ ունենալ: Բոխումի մէջ, ընկերակցութեան փոխ-նախագահը ճառ մը կարդաց, որով կը յայտնէ Թէ յառաջիկայ ընտրութիւններուն միայն պէտք է շահին անոնք, որ դէմ են երնգի ծրագրին գործադրութեան:

ԿԱՐԿՈՒՏԻ բուռն մրրիկ մը քանդեց էնտիբնիի մէջ, Սէլիմիէյի եւ ուրիշ մզկիթներու մինարէները: Բազմաթիւ տուներ քանդուեցան: Հեռագրական ու հեռաձայնական հաղորդակցութիւնները դադրած են: Մարդու կորուստ չկայ:

ՍԵՐՊԵՐԸ կը տօնեն Գարա Գէորգի յիշատակը, իբր հիմնադիր արքայական տան եւ իբր փրկիչ սերպ ժողովուրդին:

ՄՈՍԿՈՒԱՑԻՆ կ'իմացնեն Թէ կասպից ծովու եզերքները եւ հարաւային Ռուսիոյ մէջ, երկրաշարժի բուռն ցնցումներ տեղի ունեցած են: Կասպից ծովու եզերքը երկու քաղաքներ քանդուած են: Մանրամասնութիւնները կը պակսին:

«ՅԱՌԱՋ» կը ծախուի ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

Գրատան մէջ, 51 Rue Monsieur le Prince

Մամուլի տակ է եւ շուտով լոյս կը տեսնէ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԴՈՐՁԸ

"ԻՄ ԳԻՐՔԸ", Բ. ՀԱՑՈՐ (ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆ)

Ա. հրատարակութիւն ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ ԴՐԱՏԱՆ

ԳԻՆ 20 ՖՐԱՆՔ

ՕԳՏՈՒԵՑԷՔ ԱՌԻԹԻՆ.— Մինչեւ 30 Յուլիս

30 ֆրանք կանխիկ վճարողները կը ստանան Ա. եւ Բ. հատորները միասին:

Այժմէն կարելի է դիմել Librairie H. SAMUEL, 51 Rue Monsieur le.Prince, Paris (VIe), Հեռաձայն՝ Danton 88-65:

Հայերէն եւ ֆրանսերէն ամէն տեսակ գիրքեր, բառարան, գրական, վիպական, պատմական եւ դպրոցական գործեր:

Վերջին կատարելագործութեամբ օժտուած կազմատուն, Արագ եւ մաքուր աշխատանք, Գիրքերու վերնագիրը ոսկետիպ:

Կը ստանձնենք տպագրական ամէն տեսակ գործեր:

Հ. Ց. Դ.

ՓԱՐԻԶ

ՌՈՍՏՈՄ կոմիտէն ստիպողաբար ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս հինգշաբթի իրիկուն ժամը 8.30ին 131 Fbg. du Temple. Պարտաւորիչ ներկայութիւն,

ԴԱԻԱՌ

ՎԱԼԱՆՍԻ Շրջ. կոմիտէն ստիպողաբար ժողովիկըհրաւիրէ բոլոր ընկերները այսօրերեքշաբթի իրիկունժամը 8.30ինսովորական հաւաքատեղին, ներկայանալ անդամատետրով, պարտաւորիչ ներկայութիւն, Օրակարգ՝ գեկոյց վալանսի շրջ. ներկայացուցչական ժողովի:

Այբի ֆիկին եղիսաղեթ Ուզունեան, պ. պ. Շմայեակ եւ ցովհաննէս Ուզունեան (վիէէ) ցովսէփ Ուզունեան (Մարսէյլ)եւիրենցպարագաները շնորհակալութիւն կը յայտնեն հայրենակիցներու, բարեկամներու, ընկերներու, շ. ց. դաշնակցութեան կոմիտէին եւ փասկալի հայրենակիցներուն որոնք անձամբ, նամակով, հեռագրով եւ ծաղկեպսակով ցաւակցութիւն յայտնեցին իրենց կնոջ եւ հարսին

ՖԻԿ. ՎԵՐԳԻՆ ՈՒՋՈՒՆԵԱՆԻ

դառնակսկիծ ժամուան առթիւ որ տեղի ունեցաւ 26 տարեկան երիտասարդ հասակին.

ցուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ ցուլիս 15ին վիէէի (իզեր) մէջ:

ԿԸ ՓՆՏՌԻՒԻ

— Հարան Աբարեան կը փընտռէ իր եղբօր Գարեգին Աբարեանի կինը Ազնիւ (Բաբերդի Խփոց գիւղացի Թաւեալենց Մինասկիաղլիկը)։Լուրառնուած է որ Ազնիւ 1921էն կրկին ամուսնացած է Առաքաղարի մէջ։ Կը կարծուի Թէ այժմ կը գտնուի Ամերիկա։ Իմացնել՝ Haran Apariani*, 31* Rue de l'Infermerie *(*Drôme*), France. Լուր տուողին 50 ֆրանք նուէր։ Կը խնդրուի ամերիկահայ Թերթերէն արտատպել։*

— Մարաշցի Մարգարիտ Տէյիրմէնճեան կը փնտռէ իր եղբօր զաւակները՝ Ռէօֆիքեան Մխոքի որդի Սարգիս (20 տարեկան) եւ Յովհաննէս (18), ինչպէս նաեւ Ռէօֆիքեան Վահէսի որդի Նազար (20 տարեկան)։ Առաջին երկուքին մասին լուր չկայ 1915ի մեծ տարագրութենէն իվեր, իսկ Նազար 1923ին կը գտնուէր Պէյրութ՝ Անթիլիասի որբանոցին մէջ, յետոյ Սուրիացիի մը մօտ կը ծառայէր, անկէ իվեր լուր չկայ։ Տեղեկացնել Պ. Դազարոս Տէյիրմէնճեանի, 61 Bld. Beaumont, St. Julien, Marseille.

IMPRIMERIE - MASSIS - ÉDITIONS

208bis, Rue Lafayette Paris (10)

Le Gérant H. STEPHAN

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ANTARAM DE TRÉBIZONDE

(ՏՐԱՊԻԶՈՆՅԻ ԱՆԹԱՌԱՄ)

(Պսակուած տիկին Զօրավար Պրէմոնի գրական առաջին մըբցանակով:)

Հեղինակ՝ Paule Henry - Bordeax ծանօթ ակադեմականին աղջիկը:

Այս նոր գրքին մէջ պատկերացուած են հայ ժողովուրդի հերոսական մարտնչումներն ու դիւցազնական պայքարը:

ԳԻՆ 15 ՖՐԱՆՔ

Դիմել գրատուն Հրանտ Մաժուէլ, 51 Rue Monsieur le Prince, Paris. *Մէթրօ Օտէոն. Հեռաձայն* Danton *88—65.*

կ'ուզուի վարպետ խոհարար մը՝ Լաւ պայմաններ։ Դիմել «ցառաջ»ի վարչութեան։

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ

96 r. Rivoli, *մէթ. Շաթլէ։ Արմատ. եւ նոր մեթոտով դարմանում արանց եւ կանանց մորթի, արիւնի եւ վէներ. հիւանդութեանց (ֆրանկախտ, լերմախիզ.) եւ վարսի։ Մասն. լապօռատուռ։ Ընդհարմատ եւ արագ խորհրդակութ. ամէն օր 9—12, 2—8 Կիրակի 9—12,*

EMPIRE Միզիք-Հոլ՝ 37 Av. Wagram

Վառոտ է 100 *քառ. մէթր տարածութեամբ լուսաւոր եւ օդասուն արհեստանոց մը որ ունի նաեւ երկու սենեակ, խոհանոց, ջուր, կազ, ելեկտրականութիւն։ Յարմար ամէն գործի։ Պայմաններու մասին դիմել Պ. Մ. Ազաբէկեանի,* 35 Rue Emile Desveaux, *Մէթրօ՝* Place des Fêtes.

Սիմիթ

Անուան արժանի է միմիայն այն սիմիթը որ պատրաստուած է A. LA GARDE, 1 Rue St. Lazare, PARIS (9e) Nord Sud, N. D. de Lorette. Téléphone Trudaine 95.21

STUDIO D'ART MANOUK

Մարսէյլի գեղարուեստական լուսանկարչատունը՝

116 La Canebière

ուր պիտի գտնէք արուեստի կատարեալ բաւարարութիւն, ինչպէս նաեւ ամառնային բացօդեայ ժամանցներու համար ընտիր մեքենաներ ամէն պիտոյքներով: Վճարումներու դիւրութիւն: Չափաւոր գին:

ՄԱՆՈՒԿ ՄԱՐԿՈՍԵԱՆ

WAGRAM AUTO

73 Ave. de Wagram

63 Ave. Gde. Armée

149ter Bd. Villette

Ամբողջ դասընթացքը՝ սկսեալ 100 ֆրանքէն:

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

ՋԱԹԱՐԱՆ ՖԼՕՐԻԱ

61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)

Մէթրօ Օտէոն եւ Սէն Միշել Հեռաձայն Littré 38—43

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ

ՁԵՐ ԳՆՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԴԻՄԵՑԷՔ

MAISON VARTERESSIAN

1bis Rue Hautefeuille, Մէթրօ St. Michel

Արեւելեան եւ եւրոպական ամէն տեսակ նպարեղէններ

Ջոր պտուղներ, լաքէրտա, երշիկ, ապուխտ, եւայլն.

ԱՄԵՆԱԼԱՒ ՄԱԿՈՒՐ ԱԺԱՆ

Մասնաւոր սպասարկութիւն բնակարաններու համար

Կ'ընդունինք ապսպրանքներ գաւառներէն եւ արտասահմանէն

ALLO, ALLO

Tél. TRUDAINE 81 07

Այս է Թիւը մեր Թէլէֆոնին

ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՁԷՆԱԶԵԱՆ եւ ԳԱՍԱՆՃԵԱՆ

8, Rue de Chateaudun, PARIS (9e)

Métro Cadet, Peletier եւ Notre Dame de Loretteի խիստ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԿԵՐՊԱՍԵՂԱՐԱՆ

SIROUNAK ARABIAN & Cie

155 Rue Montmartre (1er étage)

Ֆրանսական եւ անգլիական խիստ ճոխ եւ ճաշակաւոր nouveautéներ այրերու համար: Մետաքսեայ եւ բրդեայ ամէն տեսակ ընտիր կերպասեղէններ կիներու համար:

ԱՐՏԱԿԱՐԳ ԱԺԱՆՈՒԹԻՒՆ

Ջեռք մը կարուած հագուստը ձեզի պիտի արժէ *Ֆրանս. առաջնակարգ գեղեցիկ կերպասով 500 ֆրանք փոխանակ 700ի։ Իսկ Անգլ. կերպասէ 700 փոխանակ 1000ի։* փափաքողներու (այր եւ կանանց) կը տրամադրենք անվճար coupe ունեցող եւ à façon աշխատող վարպետ — դերձակ

ՅԱՐԳԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

Եթէ կ'ուզէք բերնի համով մաքուր եւ անարատ սուրճ խմել, դիմեցէք հռչակաւոր

CAFÉ SULTANի

Ս. ԹՈՐՈՍ (Քէչէճեան)

92 Rue d'Angoulème Métro: Couronne, Tél. Ménil. 56-

Ամենավերջին դրութեամբ մեքենաներով օժտուած վաճառատան մէջ պատրաստուած սուրճը կը գոհացնէ նէն նրբաճաշակները:

Ձոխ տեսակներ, գիները անմրցելի, փորձեցէք անգամ եւ պիտի տեսնէք տարբերութիւնը ձեր գործածած եւ պատրաստած սուրճին: Կ'ընդունինք ապսպրանքներ արտասահմանէն եւ գաւառներէն: փափաքողներու կր ղրկենք գիներու ցանկը, փոքրաքանակ եւ մեծաքանակ վաճառուներ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Միշտ ունենալու համար ապուխտի եւ երշիկի ընտիր համեղ եւ մաքուր, դիմեցէք ուղղակի հանրածանօթ պուխտագործ եւ ապուխտավաճառ

HAIG MARACHLIANի

Fabrique des salaisons Orientales

16 Rue des Hortensias St. Just, MARSEILLE

որ իր յարգելի յաճախորդներուն դիւրութիւն տալու համար բացած է նաեւ մթերանոց մը (կայարանին մօտ) 55 Rue Petites Maries MARSEILLE.

Կ'ընդունի ապսպրանքներ ամէն երկիրներէ, մեծաքանակ եւ փոքրաքանակ եւ կ'ուղարկէ կատարեալ ճշտապահութեամբ

ՍԱՊՈՒՆՋԵԱՆ ԵՂԲԱՐՔ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԵԾ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ա Ր Ա Ր Ա Տ

39 Rue de Trévise, Paris (9), Մէթրօ՝ Cadet, Tél. Prov. 05-

Ամէն տեսակ արեւելեան եւ եւրոպական նպարեղէններ փոքրաքանակ եւ մեծաքանակ վաճառումի:

Անարատ եւ Թարմ ՍՈՒՐՃ

Ապրանքներուն ամէնէն լաւը՝ անմրցելի գիներով

ՏԱՆՏԵՐ ԸԼԼԱԼ ԵՒ ՎԱՐՁՔԷ ԱՋԱՏԻՐ


Ամենադիւրին եւ նպաստաւոր պայմաններով, Պէքմէնի Մէն Լազարի կայարանէն 8 վայրկեան, ելեքտրական գնացքի ժամը 10 Թրէն, երթեւեկ 0.90 սանթիմ օրական, 2, 3 եւ 4 հոգինոց եակով ափարթմըմաններ, ամենավերջին Confortով, ամառնային տաք եւ պաղ ջուր խոհանոցին եւ բաղնիքին մէջ, կեդրոնական ջերմութիւն եւ վերելակ (ascenseur), 50 հազարէն 100 ֆրանք —միայն մէկ քառորդը կանխիկ, մէկ քառորդը մէկ երկու տարիէն, իսկ մնացեալ կէսը 5, 10 կամ 15 տարիէն ըստ կամս, պետական տոկոսի սակով, հարիւրին 7։ Archambault et Delacourt, 14 Rue de la Pépinière, Կազարի մօտ։ *Մէն հինգշաբթի ժամը 4էն 6 հայ Թարգման պիտի տայ պէտք եղած բոլոր բացատրութիւնները։*

ՀԱՑԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEVILLE

ՑԷՐ եւ ՏՆՕՐԷՆ՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ

29, Rue (Place) des Fêtes, Paris, XIX. Tél. Nord 96-61

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամուի ամէն տեսակ ներքին եւ վէներական հիւանդութիւններ։ Աչքի մասնագէտը կ'ընդունի Գշ., Երկ. եւ Շաբաթ օրերը ժամը 4—6։ Քթի, կոկորդի ու ականջի մասնագէտը ամէն Երեք. եւ Շաբաթ օրերը 2—3։ ԱՏԱՄՆԱԲՈՅԾԸ ամէն օր ժամը 9էն 19։



ՅԱՌԱՋ

LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ԲԱԺԱՆԵՑԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70ֆ.	140ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԻՏԱԼԻԱ		250 ֆրանք	
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵԻՐՈՊԱ	100 ֆ.	200ֆ.	

"HARATCH"

Directeur-Propriétaire
SCH. MISSAKIAN
Խմբագիր՝
Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Rédaction et Administration
Խմբագրութիւն եւ վարչութիւն
235, Faub. St.-Martin
PARIS (10e)

MÉTRO: LOUIS-BLANC OU JAURÈS
Téléphone : NORD 67-23
R. C. SEINE 376.286

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 3 ֆրանք

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
30
ՅՈՒԼԻՍ
1930
30 JUILLET 1930

Զ. ՏԱՐԻ Թիւ 1326 — ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ — ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Վրդովիչ լուրերը դարձեալ Սուրիայէն կուգան: Արաբան թերթերը նորէն սկսած են հայութեան անունը հոլովել, այս անգամ վրդովուած համայնավարական վտանգէն: Ձերակալուած են 30 անձեր, որոնք համայնավարական թռուցիկներ կը ցրուէին: Դժբախտաբար ձերբակալուածներէն 25 հոգին Հայերն են:

Արաբական թերթերը իրենց յուզումը յայտնելով Հայերու նման խառնակչական ընթացքի առթիւ, երկու կարեւոր նշդծումներ կ'ընեն: Նախ, կը հաստատեն թէ թռուցիկները րուած են յատակ եւ նուրբ արաբերէնով մը, եւ հետեւաբար, անոնց հեղինակները իսկական Արաբներն եղած են: Երկրորդ, որ համայնավարական շարժման կեդրոնը կը գտնուի Պաղեստինին, եւ իբր թէ այդ կեդրոնի անդամները Սիօնիստներն են, որոնք կ'ուզեն խառնակել Սուրիոյ խաղաղութիւնը:

Որքան ալ թռուցիկներու բուն հեղինակները Արաբներն եղած ըլլան, կամ համայնավարական պրոպագանտի կեդրոնը Սուրիոյ տեղ եւ այլ ձեռքերու մէջ գտնուի, Սուրիոյ հայութեան համար կարեւոր խնդիր մը կը մնայ այն պարագան, որ արաբ մը հայանուն անհատներ. դրդուած իրենց անհատական աներէն, «յեղափոխական» շանթաժներու գործիք կը դառնան' աւելի ստորին դեր մը ստանձնելով, քան բուն շանթաժիստները:

Համայնավարական շարժման եւ պրոպագանտի ձեւերուն դէնք սկզբունքով հակառակ ենք. իսկ հայ թափթփուքներու խառնակչութեան' այդ շարժումներուն, աւելի քան հակառակ նք, գտնելով որ, այդ տարրերը, նոյնիսկ համայնավարական մասսով առած, յեղափոխականներ չեն, ճնշուածներու կազմակերպութիւններ չեն եւ զուրկ են համամարդկային որ և է տէալէ: Ընդհակառակն, այդ տարրերը ամէն տեսակ բարոյան է զուրկ, կասկածելի եւ հակայեղափոխական արարածներն են, որոնք ընդունակ են ամէն սրբութիւն ոտնատակ ընելու եւ ծառայելու բոլոր անոնց, որոնցմէ անմիջական շահ մը արդ են ապահովել: Այս պարագային, մեր սկզբունքային հակառակութիւնը զգուանքի կը փոխուի, որովհետեւ այդ անատները մեր աչքին ստորին լրտեսներ են:

Իսկ երբ գաղթահայութեան խաղաղութեան տեսակէտնէն կը մօտենանք խնդրին, երեւոյթը կը դառնայ վտանգաւոր եւ մտահոգիչ. որովհետեւ զանազան պետութիւններու մէջ ցրուած հայութիւնը թէեւ իր բացարձակ մեծամասնութեամբ, նոյնիսկ կրնանք ըսել իր հաւաքական կազմով, անմասն է համայնավարական սադրանքներէն, սակայն անպատասխանատու շահադէտ անհատներու արարքները զայն կասկածելի կը ընծայեն եւ բոլորովին կը դժուարացնեն անոր գոյութեան կայմանները: Առանց համայնավարական կասկածին իսկ շատ դժուարութիւններ կը կրեն մեր շարք մը գաղութներն իրենց տեղաւորման եւ ազգային մշակութային աշխատանքներու, նչպէս նաեւ տնտեսական փոխյարաբերութիւններու մէջ: Իսկ րբ այդ դժուարութեանց վրայ բարդուի նաեւ այն կասկածը թ թափառական հայութիւնը գործիք մըն է բոլշեւիկեան աղտնի պրոպագանտին, ամբողջովին անել կացութիւն մը ստեղծուի հայ աշխատաւորութեան համար. մանաւանդ որ տարագիր հայութիւնը պետական եւ քաղաքական միջոցներէ ուրկ է սեփական ուժերով զսպելու այդ անպատասխանատու տնհատները, որոնք բարոյական թելադրանքներուն ժտիկ նելու բնաւ տրամադրութիւն չունին:

Հայոց ազգային կեանքին, անոր քաղաքական ապագային գաղթահայութեան բարօրութեան հետ ոչ մէկ առընչութիւն ունեցող այս խառնակիչները բացի ինասէն, որ եւ է բան իք չեն խոստանար հայութեան եւ հետեւաբար' հայ հաւաքանութեան հալածանքին եւ արհամարանքին արժանի են:

Երբ հայ բոլշեւիկները ուզեցին իրենց ազդեցութեան տակ նել գաղթահայութիւնը, Դաշնակցութիւնը իր ամբողջ ւժով մաքառեցաւ անոնց դէմ: Եւ այդ պայքարը, որքան ալ րկու հակառակ կուսակցութիւններու սկզբունքներու եւ ազութեան պայքարն էր, այսուհանդերձ, Դաշնակցութեան տահոգութիւններէն մէկն ալ գաղթահայութեան պայմանրէն կուգար: Անոնք որ ամէն օր ազգի անունով կը խօսին, աշնակցութիւնը հարուածելու համար, ընդհանուր ճակատ կազմեցին Դաշնակցութեան դէմ: Հիմա, երբ զանազան ութ անհատները, այդ քայլերութիւններէն խրախուսուած, և արժիր վարձկաններու կրկնակի վարձկանները կը հանդիսան. մենք կը սպասենք որ, «ազգի խաղաղութեան» անունէն առողները հրապարակ գան եւ ամբողջ հայութեան հետ միերան դատապարտեն այսթշուառականները, որոնք ազգամիջեան րքերուն հետ կը խաղան, հալածանքի ժամնելով իր աշխանքներէն տարուած հայութիւնը:

Հայ ժողովուրդի տականքները գործի վրայ են: «Միջազգեն յեղափոխութեան» շանթաժիստներու կողքին, այս օրեուն, Սուրիոյ մէջ երեւցած են նաեւ քէմալական լրտեսներ, ի զարմանաք, եթէ ըսենք հայ անուն կրող ստոր մարդիկ, րոնք քէմալական յեղափոխութիրներ կը փառաբանեն:

Բարքերու այս անկումին դէմ, բարոյական պատերազմ մը արկաւոր է:

Կ. Ս.

ՄԱՄՈՒԼ

ԱՄՕԹ

Բացի կարգ մը անմիտ ու անողնաշար անձերէ, որոնք հաժայնավար անունին տակ կը վրդովեն Սուրիոյ հայութիւնը, կ'երեւի, կան հայ անուն կրող անձեր ալ, որոնք չեն ամչնար թուրքին թմբուկը զարնելու պատառ մը աղտոտ հացի համար: «Ազդակ» կը գրէ այս առթիւ (17 յուլիս).

— «Պահենք մը ի վեր մենք լուրջ կասկածներ ունէինք կարգ մը հայանունմարդոց շարժումներուն եւ արտայայտութեանց եւ կ'աշխատէինք երեւան հանելու անոսց գործունէութեանց ներքին ծալքերը, ընորհիւ ձեռք առնուած միջոցներու, մեր լրատուն կրցած է ձեռք անցնել հիմնական փաստեր, հաստատելու համար հայանուն գործակալներուն սխրագործութիւնները որոնք կը ծառայեն մեր թշնամիներու շահերուն:

Ո՞ր մէկը յիշենք. մենք բազմաթիւ փաստեր ունինք եւ հաժոզուած ենք որ այս երկրի մէջ թուրքերու հաշուոյն աշխատող օտարներ կան, սակայն այժմ տխուր իրականութիւնը այն է որ թուրքերը վարձած են հայանուն գործակալներ, որոնք ի նպաստ թուրքիոյ բրօքականտ կը մղեն եւ կ'աշխատին դրախտ ներկայացնել Թրքական դժոխքը:

Հայանուն թուրքերու յայտնութեան ոչ մէկ կասկած ունինք մենք եւ չէինք հաւատար որ անոնք կարենան ո եւ է վնաս հասցնել մեզի: Ոչ մէկ հայ կրնայ իր հաժոզուժը փոխել եւ կամ կարեւորութիւն տալ թուրքերու կողմէ վարձուած եւ ի նպաստ անոնց բրօքականտ մղող հայու խօսքերուն, ամօթ անոնց, որոնք իրենց պատկանած ազգը պատառ մը հացի կը ծախեն:

Այս տողերը կը գրենք դառն կսկիծով եւ դժբախտաբար փաստուած ճշմարտութիւն մը հանրութեան սեփականութիւնը դարձնելու համար: երբեք չէինք կրնար երեւակայել որ կը գտնուին հայ անունը կրող մարդիկ, որոնք թուրքիոյ ժտացած ին յաղթութիւններով եւ յաջողութիւններով կ'ոգեւորուին եւ կ'ուզեն ոգեւորել նաեւ ուրիշները. չէինք ժտածեր որ կրնան գտնուիլ Հայեր, որոնք արդարութեան դափնիներ կը դնեն թուրք դեկավարներու ձակատներուն վրայ եւ կը սրբացնէին զանոնք: Նմանապէս մեր մտքէն անգամ չէինք կրնար անցնել որ այս օրերուն, թուրքի ընկերակցութենէն հաժոյք առնող Հայեր պիտի տեսնէինք:

Ցեսանք սակայն այդ բոլորը եւ հաժոզուեցանք:

Ամօթ իրենց»:

"ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ,, ԵՒ ՔՐՏԱԿԱՆ ԿՈՒԻԻՆԵՐԸ

Քրտական կուիւներուն արձագանգը կը տեսնուի նաեւ Հայաստանի Թերթերուն մէջ: Եւ իրենց կարծիքը կ'արտացոլայ հետագրական լուրերու այն խորագրերուն մէջ, զոր խմբագիրները կը դնեն խոշոր տառերով.— «Թուրքիոյ եւ Պարսկաստանի բարեկամական բանակցութիւնները սաիմանամերձ աւազակային շարժմանը վերջ դնելու համար.— Անգլիական իմպերիալիզմի դաւերն իրենց նպատակին չեն հասնի նաեւ այս անգամ»:

Ուրեմն երեւանի Հայ կոմունիստներուն համար, աւազակային շարժում մըն է քիւրտ ժողովուրդին կենաց-մահու պայքարը:

ՕՐԸ ՕՐԻՆ

ՔՐՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

ՀԱՆԴԱՐՏՈՒԹԻՒՆ ԿԸ ՏԻՐԷ

Թուրք թերթերը կը գրեն.— Եկած տեղեկութեանց համաձայն, հանդարտութիւն կը տիրէ Արեւելեան սահմանին վրայ, որովհետեւ Վանի եւ Զալտըրանի ամբողջ շրջանը մաքրուած է, իսկ Արարատ պաշարուած է եւ բանակին յարձակումը դեռ չէ սկսած:

Ճամբորդի եւ ինքնաշարժի երթեւեկը որ պահ մը ընդհատուած էր, նորէն սկսած է:

Ձիլանի մօտ սպաննուած հրոսակներուն մէջ գտնուած են այնպիսիներ, որոնք Հաժիտեան շրջանի գինուորական հաժազգեստ եւ պատուանշան կը կրէին: Հասկցուած է որ ըմբոստները տեսակ մը ծածկագրով կը թղթակցէին իրարու հետ: Իհսան Նուրի «հայ բնակերոջ»(?) մը հետ աշխատած է կազմակերպութիւն առաջ բերել, բայց չէ յաջողած:

Թուրքեւպարսիկ յարաբերութիւնները

Թէհրանի Թուրք դեսպան Մէմտուհ Շեվքէթի տեղ պաշտօնի կոչուած է Սոֆիայի նախորդ դեսպան Մուսրէվ:

Մ. Քէմալ, պաշտօնական ընթրիքի մը ընթացքին, ուր ներկայ էր նաեւ Թէհրանի Թրք. նոր դեսպանը, խօսելով Թուրքեւ պարսկական յարաբերութիւններու մասին ըսաւ թէ Թուրք պետական մարդիկ կը փափաքին Պարսկաստանը տեսնել լաւ կազմակերպուած եւ հզօր պետութիւն մը եւ թէ ինք մեծ հաւատք ունի Փէհլեվի Րիզա շահի անձնաւորութեան վրայ, որ իր համաձայնութիւնը տուած է գործակցելու Թուրքերուն' քրտական խռովութիւններու դէմ գործելու համար: Մ. Քէմալ փափաք յայտնեց, որ նոր դեսպանը Թէհրանի մէջ մեղմացնէ այն տպաւորութիւնները, որ կրած են պարսիկ շրջանակները Թուրք մամուլի քննադատութիւններէն: Թուրք շրջանակները կը կարծեն որ Մ. Քէմալի այս ճառը լաւ տպաւորութիւն պիտի թողու Պարսկաստանի դեկավար շրջանակին վրայ:

Գերմանիա 40 միլիոն մարկուայ Թուրքիոյ

Լոնտոն 28 յուլիս.— Պոլսէն կը հեռագրեն թէ Թուրք կառավարութիւնը համաձայնութիւն մը կնքեց գերման դրամատէրերու խմբակի մը հետ, 40 միլիոն մարքի փոխառութեան մը համար: Դուամարը պիտի յատկացուի երկաթուղիի վերաբերեալ նիւթերէնի գնման:

Աֆղանիստան վերակա՞ւ

Փէշավէրէն Լոնտոն տրուած լուրի մը համաձայն, Քապուլէն հասած ճամբորդներ կը յայտնեն թէ Նատիր Շահի դէմ մեծ ըմբոստութիւն մը ծագած է եւ թէ Պաշայի Սաքոյի ցեղախումբը որուն կր հրամայէ նախկին թագաւորին մէկ բարեկամը' Խան Մուհամմէտ, կը քալէ մայրաքաղաքին վրայ:

Ուրիշ զրոյցներու համաձայն, Նատիրի բանակը կը մերժէ կռուիլ ըմբոստներուն դէմ, որովհետեւ ելմտական տագնապին պատճառով, ռռճիկ չէ ստացած: Կ'ըսուի նաեւ թէ ըմբոստները պարտուած են եւ երկրին մէջ խաղաղութիւն կը տիրէ:

Գ.ԱՊՈՒԼ, 28 յուլիս.— Խոյիստանի մէջ, նոր ըմբոստութիւն մը ծագեցաւ, գլխաւորութեամբ Պաշայի Սաքոյի նախկին պետին՝ Մուհամմէտ Իպրահիմ խանի:

Ըմբոստները փորձեցին իր ամարանոցին մէջ գերի բռնել Թագաւորը, յետոյ քալելու համար Գապուլի վրայ: Իրենց փորձը ձախողեցաւ եւ ներկայիս, ըմբոստները 20 քիլոմէտր հեռու կը գտնուին մայրաքաղաքէն: Մեծ յուզում կը տիրէ այդ շրջանին մէջ, ուր քոլերան աւեր կը գործէ:

ԼՈՆՏՈՆ, 28 յուլիս.— Գապուլէն Լոնտոն հասած պաշտօնական լուրերու համաձայն, կոհդամարի մօտ, 50 աֆղան հեծեալ զօրքեր ծուղակն ինկան: Ցարձակողները ետ ժղուեցան եւ լեռներն ապաստանեցան, ծանր կորուստներ կրելէ վերջ: Անոնցմէ շատերը գերի բռնուեցան:

Ձերբակալուած անիշխանականներ

Երէկ գրեր էինք թէ 65 անիշխանականներ ձերբակալուած են, կիրակի օր, բոլորն ալ սպանիացի: Ատոնց հարցաքննութենէն յայտնի եղաւ թէ Թուլուզի. Փէրփինեանի եւ շրջակայքի անիշխանականները մեծ չանքեր կը թափեն ներկայիս, խըմբելու համար Հարաւի սպանիացի անիշխանականները: Անկից յետոյ էր որ անոնք պիտի աշխատէին մաս մը իրենցմէ անցընել Սպանիա: Ոմանք պիտի երթային Պարչելոնա. Սեվիլ, Քատիքս, ուրիշներ՝ Մալակա, Սանթա-Քրուզ եւ Սարակուսա, և ժողովուրդը պիտի զրդռէին ըմբոստանալու կառավարութեան դէմ: Կը կարծուի նաեւ թէ, Սպանիոյ մէջ կատարելու համար, Օգոստոս 1ի համաչնավար ցոյցի պատրաստութիւններով կը զբաղէին անոնք: Ձերբակալուածներէն 15ը աքսորուեցան Ֆըրանսայէն, 8ը ղրկուեցան բանտ:

Գերման նոր կուսակցութիւն մը

Պերլինի մէջ, կազմուեցաւ նոր կուսակցութիւն մը ռա՛կավարներէ, «Երիտասարդ Գերմաններ»է եւ ժողովրդապաշտ-

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)



Հ. Ց. Դ.

ՓԱՐԻԶԻ ՏԱՆ ՀԱՄԱՐ

(Հանգանակութիւն Եւրոպայի կեդր. կոմիտէի)

ՑԱՆԿ 32

Յակոբ Պօյաճեան	200
Ս. եւ Յ. Աստուրեան եղբարք	200
Ս. Թէրզեան	100
Գ. փափազեան	100
Մ. Ա.	100
Գէորգ Մելիտոնեան	200
Արտաշէս Պիպէռեան	150
Նեւտոն Մաշիկեան	100
ՊՈԼԷՆԷՆ	
Յարութիւն Մանուկեան	100
Ներսէս Ներսէսեան	100
Խաչիկ Աւետիսեան	100
Յակոբոս Մալէզեան	100
Գումար	1550
Նախորդ գումար	39,230
Ընդհ. գումար	40,780

ՀԱՅՈՒՄ ՄԸ ՈՁԻՐԸ

Մարսէյլի Սէն Լու արուարձանի մէկ սրճարանին մէջ, 28 տարուս հայ մը, Մասիւեան Գրիգոր, խնդոյքի մը ընթացքին, ատրճանակով կրակեց խումբ մը հայրենակիցներու վրայ, Հինգ հոգի ծասրօբէն վիրաւորուեցան: Ոճրագործը ձերբակալուած ու բանտարկուած է:

ՀԱՅԵՐՈՒՆ ԵՒ ԱՍՈՐԻՆԵՐՈՒՆ ԿԱՄԱՐՆԵՐԸ

«Փոլիթիքա» յօդուածագրքով մը կը պարզէ թէ Պարսկաստան սկիզբէն ի վեր դէմ ելած է Թուրքիոյ եւ օգնած Քիւրտերուն եւ Ասորիներուն: Այս առթիւ կը յիշէ այն այցելութիւնը զոր Րիզա Շահ տարիներ առաջ տուաւ, Թաւրիզ, երբ տակաւին վարչապետ էր, «փոլիթիքա» կ'ըսէ թէ Րիզա խան արագօրէն անցաւ Թրքական կամարին տակէն, իսկ երկար կանգ առաւ Հայերուն եւ Ասորիներուն կամարներուն առջեւ: կարծես հազարաւոր Թուրքեր բերած էին հոն որ տեսնեն անոր գրկախառնումները Հայերուն եւ Ասորիներուն հետ»:

ՔԻՒՐԴ ՇԱՐԺՈՒՄԻՆ ԲՆՕՅԹԸ

*Թուրք երեսփոխան Եագուպ Դատրի պէյ, խօսելով քրտական շարժումի բնոյթի մասին, կ'ըսէ թէ այդ խլրտումը միայն յետտոդիմական վերջին փորձի մը քայքայումը չէ, այլ եւ «առաջին մէկ երեւոյթը ցեղային պայքարի մը, որ սկսած է ծլիլ Արարատի փէշերուն տակ»: Բառական երկար առենէ ի վեր քրտական ազգայնականութիւն մը բոյն դրած է մեր հողերուն վրայ: Սահմանադրական շրջանին Պոլսոյ մէջ քրտական միութիւն մը կար, որ ունէր իր թերթը եւ պարբերաթերթերը: Զինադադարին, աւելի շուտուեցաւ, իսկ մեր յաղթանակէն յետոյ, քրտական գիտական ու գրական հոսանք մը սկսաւ, եւ Իրանէն, Իրաքէն ու Սուրիայէն մեր երկիրը խուժեց: Մեզի կ'ինայ աչքէ չհեռացնել իսկական հանգամանքը եւ բովանդակ կարեւորութիւնը այս ողբերգութեան, որ ծածկուած է հասարակ աւազակութեան մը ետին»:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ արտաքին գործավարը Լիտվինոֆ Մոսկուայէն մեկնեցաւ Պերլին, ուրկէ կը կարծուի թէ պիտի անցնի Ջեխոսլովաքիա, երկու ամսուան արձակուրդով:

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ ՆԵՐՍ ԵՒ ԴՈՒՐՍ

ՊՂԻՆՁԻ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԹԵՐԻՆԵՐԸ

Ճարտարարուեստական արդիւնաբերութեան տեսակէտէն աղքատ մեր հայրենիքին մէջ, պղինձը մէկն է այն քնական հարստութիւններէն, որու շահագործումը սկսած է նախապատերազմեան շրջանին։

Ղափանի եւ Ալլահվէրտիի հարուստ եւ որակով բարձր պղինձը —մանաւանդ առաջինին, միշտ ալ մեր երկրի արտածումի կարեւոր նիւթերէն է եղած եւ իր սպառման շուկան ապահոված արտասահմանի մէջ։ Այսօր սակայն, հակառակ համաշխարհ իշխանութեան «սոցիալիստական լայն շինարարութեան»մեր պղինձի արտադրութիւնը չափազանց վատ եւ անհանգստացնող վիճակի մէջ է։ Ներկայիս երբ առանձին թափով ծրագիրներ կը կազմուին երկրի ճարտարարուեստի հնգամեայ ծրագիրը իրականացնելու չորս տարուան ընթացքին, աւելի քանկը շեշտուի պղինձի արդիւնաբերութեան այս թոյլ վիճակը։

«Խ. Հ.» ժայիս 30ին «պղինձը ուշադրութեան կեդրոնում» տարօրինակ խորագրով խմբագրականով մը թուելով այս յառաջդիմութիւնը, որ ունեցած է երկիրը «տնտեսութեան վերականգնումի» ընդհանուր գործին մէջ, կը շեշտէ սակայն որ «դանը արդիւնաբերութեան մի քանի ճիւղերում դեռ եւս չենք հասել նախապատերազմեան արտադրանքին»։

«Ցետ մնացած ճիւղերի Թուին պէտք է դասել նաեւ պղնձարդիւնաբերութիւնը, որն իրօք մեր արդիւնաբերութեան նեղ տեղերից մէկն է»։

Այս իրողութիւնը պատճառ չէր սակայն, որպէսզի հնգամեայ արտադրութեան ծրագրի մէջ նախատեսուած քանակը չբարձրացնէր թուղթի վրայ, բան մը որ սովորական է ալլեւս մեր իշխանաւորներու համար։ Սակայն ծրագիրը ամէն բան չէ. իրականութիւնը պէտք է ցոյց տայ ամէն մէկ ծրագրի բուն եւ իրական արժէքը։

Իրականութիւնը առնուած բուն իսկ թիւերէն, ցոյց կուտայ իրական յետամնացութիւնը մեր պղնձի արդիւնաբերութեան ճիւղին մէջ։

Հնգամեայ ծրագրով նախատեսուած է խորհրդային երկիրներու «պղնձի արտադրանքը 1927-28 թիւին 28,300 թոնից հասցնել 84,700 թոնի հնգամեակի վերջում։» Այս չափը անբաւարար նկատուելով, կ'առաջարկուէր քննել ծրագիրը, եւ բարձրացնել նախատեսուած թիւը։

Ծրագրի իրագործման մէջ, Հայաստան իր կարեւոր տեղն ունի, նկատելով «որ Ղափանն և Ալլահվէրտին 1913 թուին տուել են ցարական Ռուսաստանի պղինձի ամբողջ արտադրանքի 19,3 տոկոսը»։ Մինչդեռ 1927-28 թիւերուն այս տոկոսը իջած է եղեր 7ի։

«Այս համեմատական թիւերն ապացուցում են պերճախօս կերպով, թէ որ աստիճան յետ է մնացել Հայպղինձը արտադրանքի տեսակէտից։» (*Խ. Հ. մայիս 30*)։

Հարցը իր զանազան մանրամասնութիւններու մէջ քանիքորդ անգամ ըլլալով քննութեան կ'առնուի կուսակցական և պետական համապատասխան մարմիններու, ինչպէս նաեւ վերջին 7րդ Համագումարի կողմէն, կը տրուին որոշումներ, կ'առաջարկուին արմատական եւ վճռական ծրագիրներ, սակայն արտադրութեան ընթացքին մէջ ոչ մէկ լուրջ եւ հիմնական փոփոխութիւն կը նշմարուի։

Այս անելը, ընդհանուր առմամբ խոտոր համեմատելով հանգոյնավար շինարարութեան «կարողութեան», միաժամանակ փաստ մըն է իր կարգին, անոնց վարած ձախաւեր եւ վնասակար քաղաքականութեան, հանդէպ աշխատաւոր, կամ բանուոր դասակարգին։

Իրենք իրենց իսկ խոստովանութիւններով, կը կրկնեն անդադար փաստեր նոյն այս մտքով։

Le Gérant H. STEPHA

ՄԷԿ ԱՄԻՍԷՆ...

Այո՛ մէկ ամիսէն՝ մինչեւ որ հանրածանօթ ՁԱՇԱՐԱՆ ԼԻԼԻԱՑ աւարտէ իր աշխատութիւնները սրահը մեծցնելու արդի սկսուած գործը, Ճաշարանը բաց է կիրակիները եւ տօն օրերու հասարակ։

Բոլոր անոնք՝ որոնք կ'ուզեն առանց courant d'air ենթարկուելու, պարկեշտ սպասարկութեամբ, բերնի համով հայկական եւ եւրոպական ճաշացուցակ մը վայելել անհաւատալի գիներով,

Թող հաճին դիմել ԼԻԼԻԱՑԻ ՁԱՇԱՐԱՆԸ 24 rue St. Lazare, Paris

24, ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ՁԱՇԱՐԱՆԻՆ ԹԻՒԻՆ, 24

ALLO, ALLO

Tél. TRUDAINE 81-07

Այս է թիւը մեր թէլէֆոնին

ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՁԷՆԱԶԵԱՆ եւ ԳԱՍԱՆՃԵԱՆ

8, Rue de Chateaudun, PARIS (9e)

Métro Cadet, Peletier եւ Notre Dame de Loretteի խաչմ.

ՏՕՔԹ. ՄԻՀՐԱՆ Կ. ՔԷՇԻՇԵԱՆ

Նախկին բժշկապետ Մերսինի Ֆրանս. հիւանդանոցներու

Պատուոյ մէտալյ Ֆրանսայի Ազդ. պաշտպ. նախարարութենէն

Կ'ընդունի ամէն օր բացի Կիրակիէ-ը 10էն 12եւ ժամադրութեամբ

134 Rue Blomet, *Բէօնթ-կէնեան հաստատութեան մէջ։ Կը կատարէ ճառագայթներով ամէն կերպ քննութիւն, շողանկարում* (radiographie), *գերմանիշակագոյն, յետ-կարմրագոյն եւ բէօնթ-կէնեան դարմանում* (radiothérapie profonde), *Տիաթերմիի* բոլոր կիրառումները, *էլեկտրաբուժական բոլոր ձեւերը որ բազմաթիւ հիւանդութիւններու դարմանման լաւագոյն ազդակներն են։*

Թոքաթոռանորներու pneumothoraxի *գործողութիւն, մանուկներու հիջոցով եւ պատուաստ։*

Զղայնի եւ հոգեկան կարգ մը հիւանդութիւններու դէմ թէ բնական, քնէաճական եւ փէշտեան մէթոտներ։

Որպէս ներքին հիւանդութեանց մասնագէտ, կ'այցելէ նաեւ տներու։

Հասցէ՝ 134 Rue Blomet, Laboratoire de Radiologie. Métro Convention, Autob. X. եւ AG.

Հեռաձայն՝ Vaugirard 29—55, 47—86.

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

ՃԱՇԱՐԱՆ ՖԼՕՐԻԱ

61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)

Մէթրօ Օտէոն եւ Սէն Միշել — Հեռաձայն Littré 38—

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ


ՕՐՎԱՆ ՃԱՇԱՐԱՆ
ՕՐՎԱՆ ՃԱՇԱՐԱՆ
ՕՐՎԱՆ ՃԱՇԱՐԱՆ

LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

ԲԱԺԱՆԵԳԻՆ

	3 ամս.	6 ամս.	Տար.
ՖՐԱՆՍԱ	35 ֆ.	70ֆ.	140ֆ.
ԱՆԳԼԻԱ	20 շլ.	40 շլ.	
ԵԳԻՊՏՈՍ	»	»	
ԻՏԱԼԻԱ	250 ֆրանք		
ԱՄԵՐԻԿԱ	6 տլ.	10 տլ.	
ԵՒՐՈՊԱ	100 ֆ.	200ֆ.	

"HARATCH"

Directeur-Propriétaire
SCH. MISSAKIAN
Խմբագիր՝
Շ. ՄԻՍԱԿԵԱՆ

Rédaction et Administration
Խմբագրութիւն եւ Վարչութիւն
235, Faub. St.-Martin
PARIS (10e)
MÉTRO: LOUIS-BLANC OU JAURÈS
Téléphone: NORD 67-23
R. C. SEINE 376.286

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 3 ֆրանք

ՀԻՆԳՇԱԲԹԻ
31
ՅՈՒԼԻՍ
1930
31 JUILLET 1930

Զ. ՏԱՐԻ ԹԻՒ 1327 — ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ — ԳԻՆ՝ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՔՐՏԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Քրտական ապստամբութիւնը արդէն երկու ամիսը բոլորեց։ Միջազգային մամուլը օրը օրին սիւնակներ լեցուց քրտական «անազակախումբ»երու շարժումներու մասին, որ հետզհետէ դարձաւ ապստամբութիւն մը լրագրական լեզուին մէջ, ու հիմա արդէն թուրք-քրտական պատերազմ մը կոչուելու վրայ է։

Որպէս զի մեր ընթերցողները յստակ գաղափար մը կազմեն տեղի ունեցած շարժման և անոր ներկայ կացութեան մասին, քանի մը ամփոփ տեղեկութիւններ անհրաժեշտ են։

Մայիսի ընթացքին թրքական զանազան պահականոցները տեղական ընդհարումներ ունեցան Քիւրտերուն հետ, անոնց ուժերը հրապարակ բերելու համար։ Ըստ երեւոյթին թրքական վերին հրամանատարութիւնը համոզուեցաւ որ քրտական ուժերու կեդրոնը Արարատն էր։ Այդ պատճառով, 10,000 զինուոր կեդրոնացուց Բայազիտ և Իգդիր, արեան մէջ խեղդելու ապստամբութեան օջախը։ Յունիսի սկիզբէն մինչեւ յունիս 15ը կուիւները կեդրոնացած էին Արարատի շուրջը։ Արարատի դէմ սկսած յարձակողականը, 6 սաւառնակներու օժանդակութեամբ, ուժեղ դիմադրութեան հանդիպեցաւ, 3 սաւառնակ եւ հարիւրաւոր սպաններուածներ ու գերիներ կորուստ տալով։

Այս բոլոր իրողութիւնները ցոյց կուտան որ նախայարձակը թրքական կառավարութիւնն էր, իսկ Քիւրտերը կը բաւականանային ինքնապաշտպանութեամբ։ Սակայն Արարատի դեկավարները երբ ստուգեցին թէ թրքական պատրաստութիւնները մեծ են եւ կը ձգտին վճռական հարուած մը տալ Արարատին, ըմբոստութեան հրաւէր կարդացին շրջակայ կազմակերպուած աշիրէթներուն, որոնք Արարատին օգնելու համար ապստամբութեան դրօշը պարզեցին։ Այսպիսով, յունիս 19էն սկսած՝ Արարատի կուիւները կ'ընդարձակուէին մէկէն ի մէկ, ընդգրկելով Վանի, Արճէշի, Բաղնոսի և Տուխախի շրջանները։ Հայտարանցի աշիրէթապետները որ նախորօք քրտական կազմակերպութեան միացուցած էին Զիլանի, Սիփանի եւ Մալազկերտի ուժերը, քաշուած կը մնային եզմալ դիւղը, թուրք-պարսկական սահմանին վրայ, ուր Հայտարանցի աշիրէթի մէկ մասը կը բնակի։ Արարատի պաշարման գօտին երբ սկսաւ ճրնշել, Արարատի դեկավարներէն ոմանք անցան դէպի Ախ Տաղ, իսկ եզմալի դեկավարները ձիաւոր ստուար խումբով մը շարժուեցան դէպի Աբաղայ եւ Արճէշ։

Թիքունքային այս արշաւանքը կայծակի արագութեամբ տարածուեցաւ։ Քրտական բոլոր ցեղախումբերը ոտքի կանգնեցան, գրաւեցին Զիլանի ձորը, 180 զինուորներ եւ սպայ մը սպաննեցին։ Ցանկարծակիի բերելով՝ մտան Արճէշ, 400 թրքական զինուորներ ոչնչացուցին եւ սպաննեցին հրամանատարն ու գայմագամը։ Իսկ Սիփանի ուժերը գրաւեցին Բաթմնոսը։ Յունիս 20ին թրքական բանակը շուարումի մատնուեցաւ, տեսնելով որ մէկ կողմէ Բիւրկրիի ճանապարհը դէպի Վան վտանգուած էր, միւս կողմէ Տուխախի եւ Բաթմնոսի ուղղութեամբ Ալաշկերտի ճանապարհները կը կտրուէին, եւ Արաքսի հովիտը կը վտանգուէր կողբի բռնկումով։ Փաւտօրէն, Բայազիդի եւ Իգդիրի թրքական բանակը կը մնար պաշարուած, երկրի խորերը բռնկուած ապստամբութիւններու շնորհիւ։ Թուրքերը Արարատէն ետ կը քաշուէին եւ կը բռնէին պաշտպանողական դիրք մը։ Էնկիւրին վտանգի մեծութիւնը կռահեով՝ օգնական զօրաբանակներ ճամբայ կը հանէր Արճէշի եւ Զիլանի դէմ։ Այս վերջին օգնական ուժը կը հաշուեն մօտ 12 հազար զինուոր։

Յունիս 25էն մինչեւ յուլիս 11ը ահռելի կուիներ տեղի ունեցան Մալազկերտի, Արճէշի, Զիլանի եւ Վանի շրջաններուն մէջ։ Այդ ծանր կուիներու մանրամասնութիւնները կը պակսին դեռ։ Բայց տրուած լուրերով վայրերու ընդարձակութիւնը, ինչպէսնաեւ յիշեալ աշիրէթներու կռուի ընդունակութիւնը, կրկու կողմերն ալ հազարաւոր սպաննուածներ տուած պէտք ըլլան 15 օրեայ անընդհատ ճակատամարտներու ընթացքին։

Յուլիս 13ին թրքական Գործակալութիւնը հաղորդեց թէ ապստամբութիւնը ճնշուած է։ Իրականին մէջ թուրքերը յաղթած էին գրաւել միայն Բաթմնոսը, Արճէշը եւ Բերկրին։ Քիւրտերը, ըստ թրքական հաղորդագրութեան, 3000 դիակներ ողնելով լեռները ցրուած էին։ Այս հաղորդագրութիւնը լրիւ է, պէտք է աւելցնել որ թուրքերն ալ Քիւրտերու կորուստէն ետ աւելի սպաննուածներ տուած են։ Իսկ Քիւրտերու լեռները ցրուիլը կը նշանակէ վերադարձ մը դէպի իրենց ամրութիւնները։ Յուլիս 15ին շատերը կարծեցին որ քրտական ապստամբութիւնները վերջացած են։ Անցած 15 օրուան նոր տեղեկութիւնները ցոյց կուտան, որ ապստամբութեան միայն մէկ մասնակի շարժումը մեղմացած է, բայց հասած է իր տարած ռազմագիտական նպատակին։

Թուրքերը Զիլանի եւ Արճէշի իրենց յաղթանակներէն ետոյ՝ այս գերազանց ուժերը կեդրոնացուցին Արարատի դէմ։ Բախեցան երկաթեայ դիմադրութեան ու բարուոք համարեցին աւելի սեղմ օղակի մէջ առնել լայնանիստ լեռը։

Յաջորդով կը պատկերացնենք ներկայ դրութիւնը որ յղի անակնկալներով։

Կ. Ս.

ՄԱՄՈՒԼ

ՅԱՐԱՁՈՒՆ ՎԵՐԵԼՔԸ

(Հ. Յ. Դ. ՅՈՒՆԱՍՏԱՆԻ 8ՐԴ ՇՐՋ. ԺՈՂՈՎԻՆ ԱՌԹԻՒ)

«Նոր Օր» այս վերնագրով խմբագրականի մէջ կը գրէ (24 յուլիս)։

Յուլիս 19ին փակուեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան Յունաստանի 8րդ Շրջ. ժողովը,— ամենէն բազմամասնականը՝ այս տարի։

Փակուեցաւ եռանդուն տրամադրութիւններով եւ դրական աշխատանքի յանձնառութեամբ։ Ոչ միայն օրակարգն էր ամփոփ եւ յստակ, այլ եւ պատգամաւորները իրենց բանաձեւերուն մէջ կը ծգտէին իւրաքանչիւր հարցի տալ բացորոշ եւ սեղմ պատասխան։

Անկարելւոր երեւոյթ մը չէ այս երիտասարդ գաղութներէն մէկուն մէջ որ գրեթէ չունեցաւ հաստատուն եւ շէն կեանք, որ 1922էն ի վեր կը տարուբերի քաղաքական անստուգութեան, տնտեսական տագնապի, արտագաղթի եւ ներքին սպառիչ կռիւներու մէջ։ Անկերջ տեղափոխութեանց յոռնանքը ասշուշտ կ'ազդէր նաեւ մը վազակորովութեան վրայ։ կազմերը կը քալուէին, կը նօսրանային կամ կը զօրանային նոր տարրերով։ Մակընթացութիւն եւ տեղատուութիւն։

Եւ սակայն կազմակերպութիւնը մնաց աւելի քան ատուր, միշտ ընդունակ ստեղծելու եւ արտագաղթը հետեւանքով յառաջ եկած բացերը գոցելու։ Աւելի եւ աւելի երիտասարդանալու։

Սահմանափակ, ցիրուցան խումբերով ձեւաւորուած՝ 1923ին կեդր. կոմիտէութեան բարձրացած 1927ին, Հ. Յ. Դաշնակցութեան Յունաստանի կազմակերպութիւնը այսօր կը ներկայացնէ պատկեր մը՝ որ կազդուրիչ է շատ մը տեսակէտներով։ կազդուրիչ մանաւանդ անոր համար որ, այս անկայուն գետնին վրայ եւս, ոտքէն փրցուած եւ թաղարի մէջ դրուած ծաղիկներու չեն նմանիր մեր շարքերը, այլ կը կազմեն տարագիր բազմութիւններու ծոցին մէջ խոբապէս արմատ ձգած, անոնց ճակատագրին հետ սերտօրէն կապուած կորիզներ։

Ձիշդ ատով ալ կը բացատրուի յարաճուն վերելքը, հակառակ բոլոր վերիվայրումներուն եւ կարմիր կամ դեղին վարաձայնութեանց։

***

Շրջ. ժողովը նորընտիր կեդր. կոմիտէին յանձնեց յստակ եւ թանձրացեալ ուղեգիծ մը, որուն հիմնական տարրերը կը բխին Հ. Յ. Դաշնակցութեան 11րդ ընդհ. ժողովի որոշումներէն։

ՔԱՂԱՔԱԿԱՆ տեսակէտով՝ ոչ մէկ վարանում կամ խարխափում, խիտ շարքերով, շեշտակի դէպի նպատակը, դէպի *միացեալ Անկախ Հայաստան*, որ միակ ելքն է այս բազմաչարչար ժողովուրդին իրական, վերջնական փրկութեան։ Միակ արդար հատուցումը՝ թափուած արիւնին եւ անպատժելի գարհուրանքներուն։ Իսկ այդ նպատակին հասնելու համար կուսակցութիւնն ունի կէտ առ կէտ ձշդուած ծրագիր, որ կը պահանջէ լարուած եւ յարատեւ աշխատանք եւ յեղափոխական վճռականութիւն։

ՀԱՅ ԳՈՐԾԱԻՈՐ ՄԸ ԱՐԿԱԾՈՎ ՄԵՌԱԾ

Ալֆորվիլի մէջ, ելեկտրական գործարանի մը շինման աշխատաւորներէն Արիստագէս Ցարուխիւնեան, 22 տարեկան երիտասարդ մը, առջի առաւօտ 15 մեդր բարձրութեան վրայ, պատուհանին երկաթէ փեղկերը մաքրելու ատեն, ոտքը սահելով, ինկաւ ու մեռաւ։

ՕՐԸ ՕՐԻՆ

ՕԳՈՍՏՈՍ 1-Ի ՑՈՅՑԵՐՈՒՆ ԴԷՄ

Օգոստոս 1ի առթիւ, համայնավարներուն կազմակերպեալ ցոյցին դէմ միջոցներ ձեռք առնելու համար, Ցրան տայի վարչապետ Պ. Թարտիէօ խորհրդակցութեան կանչեց փարիզի զինուորական կառավարիչը զօր. Կուրօ, ներքին նախարարութեան ընդհ. քարտուղարը որ միեւնոյն ատեն, տնօրէնն է Ընդհ. Ապահովութեան, Սէնի ոստիկանապետը, փարիզի զինուորական կառավարութեան սպայակոյտի պետը, ընդհ. տեղեկատուութեան պետը եւ թաղապետական ոստիկանութեան փոխ-տեսուչը, ինչպէս նաեւ Ընդ. Ապահովութեան խուզարկութեանց ճիւղին քննիչը։

Այս խորհրդակցութեան ընթացքին, որոշուեցան հետեւեալ կէտերը՝— Օգոստոս 1ի առթիւ, հանրային ճամբաներու վրայ, ամէն թափօր պիտի արգիլուի, որեւէ ցոյց, աշխատանքի ազատութեան դէմ որեւէ արգելք, եւ որեւէ բռնութիւն ցուցարարներու կողմէ, անմիջապէս պիտի զսպուին. յանցապարտները դատական իշխանութեան պիտի յանձնուին։ Իսկ որ եւ է ցոյցի մասնակցող օտարականներ պիտի ձերբակալուին եւ անմիջապէս պիտի արտաքսուին երկրէն։ Եւ վերջապէս, փարիզ թէ արուարձանները, թաղապետական սրահներու մէջ որեւէ հաւաքոյթ չպիտի թոյլատրուի։

Ոստիկանութեան սովորական ուժերը պիտի զօրացուին փարիզի հանրապետական պահակներով, եւ գաւառէն եկած ոստիկան ուժերով։ Փարիզեան զօրանոցներու եւ գաւառէն բերուած զօրախումբերու զինուորները օրն ի բուն պատրաստ պիտի կենան եւ ոստիկանապետին հրահանգներուն պիտի ենթարկուին։

Իրարի հետեւեր կը շարժին

«Թայմզ»ի տեղեկութեան համաձայն յուլիս 27ին, 500 լեհական քիւրտեր իրաքէն Թրքական սահմանը անցած եւ յարձակած են Թրքական պահականոցներուն վրայ։

*** *Թրքական աղբիւրէ.— Հաստատուած է որ ըմբոստները մեծ օժանդակութիւն կը գտնեն Սէրտար Պուլաքի աշիրէթէն, որուն մէկ մասը Թրքական, միւսը պարսկական հողի վրայ կ'ապրին։ Նոյնպէս հասկցուած է որ զէնքերը բերուած են Միջագետքէն, Պարսկաստանի ճամբով։*

*** *Զիլանի մէջ սպաննուած քիւրտերու գրպաններէն գտնուած են կարեւոր փաստաթուղթեր. որոնք կը դասաւորուին։ Նոյնպէս երեւան հանուած եւ խուզարկուած են այն դիակները, որոնք ըմբոստներուն կողմէ թաղուած էին։ Ասոնց վրայէն կարեւոր թուղթեր գտնուած են։*

Ձշդուած են նոյնպէս բանակին կրած աննշան կորուստները (?) Զիլանի կուիներուն մէջ։ Օդային ուժերէն վեց հոգի սպաննուած են, ցամաքային ուժերէն՝ 3—4 սպայ եւ 20 զինուոր։ Վիրաւոր սպաները կը զարմանուին Պայազիտի հիւանդանոցին մէջ եւ բոլորն ալ աղէկ են։

Ընեւեր փաշա եւ հետս շարժուին

Էնկիւրիի իրաւաբանական վարժարանիմէջվկայականներու բաշխման առթիւ, վարչապետ Ըսմէթ փաշա ճառ մը արտասանեց եւ անդրադառնալով Արարատի դէպքերուն, ըսաւ.— Զինեալ խումբերու ճնշման տակ, առաջ եկած քաղաքական եւ յետադիմական ըմբոստութիւնն արդէն զսպուեցաւ։ Ըմբոստները շատ խստօրէն պատժուեցան։ Հալածուած խումբերը սահմանին միւս կողմն անցան։ Միջազգային յարաբերութեանց մէջ, կարգ մը էական սկզբունքներ կան, — ինչպէս սահմաններու ապահովութիւնն եւ դրացիին ներքին կարգը չխանգարելու պարտաւորութիւնը — սկզբունքներ որոնք, ինչ պատրուակով ալ ըլլան, որ եւ է հարուած չեն հանդուրժեր։

«Անհրաժեշտ է ճշտել այս էական կէտերը, երկու երկիրներու միջեւ մեծ քաղաքականութիւն մը եւ բարեկամութիւն մը նախատեսելէ առաջ։ Այս կէտերուն դէմ որ եւ է զանցառում կը թունաւորէ երկու երկիրներու յարաբերութիւնը եւ յարձակման զոհ եղող երկիրը — ինչպէս է Թուրքիոյ պարագան — ստիպուած է դիմելու օրինաւոր պաշտպանութեան միջոցներու»։

«Անհրաժեշտ է որ գիտնան թէ մեր երկիրը օրինաւոր պաշտպանութեան պարագային, չպիտի խուսափի անկից առաջ գալիք պարտաւորութիւններէն»։

Այս բոլորն ու մարտական ազդարարութիւնը ուղղելէ յետոյ Պարսկաստանի, Ըսմէթ կանգ առաւ Թուրքիոյ արտաքին պարտքերուն վրայ.— Թուրքիա ստիպուած է ամէն տարի, երեք միլիոն անգլիականի արժէքով օտար դրամ խնայել, ինչ որ զայն կ'ենթարկէ մեծ զոհողութիւններու, պահելու համար ազգային դրամին արժէքը։ Հաստատեցինք թէ Թուրքիա, որ եւ է ապօրէն ճամբու մէջ չէ մտած, կեզծ միջոցներով խուսափելու համար իր պարտաւորութիւններէն։ Արտաքին պարտքերու հատուցման համար, ժողովուրդին վճարած տուրքերը հասան առաւելագոյն չափին։ Ձեռք առնուած միջոցները կրբ-

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՄԵՋՄԷ ԴՈՒԲՍ

1 ՕԳՈՍՏՈՍ

Ահա Թուականմը, որ մեր օրացոյցէն դուրս պէտք է մնայ, եւ սակայն, կը յաջողի սպրդիլ հոն, ամօթահար յանցաւորի գգուշութիւններով։

Ըսկեր մը կը պատմէ թէ հայաշատ արուարձանի մը՝ Ալֆորվիլի հայկական Թաղին մէջ, պատերուն վրայ փակցուցած են Օգոստոս 1ի կարմիր ցոյցերուն մասնակցելու հրաւէրները, հայերէն տառերով ու բառերով։

Քանի մը օրէն հաւանաբար գաւառէն ալ նոյն լուրերը պիտի կրկնուին։

Առանց զայրանալու կամ զարմանալու, հանդարտութեամբ է որ կը լսենք այս յիմարութիւնները՝ *անպէտ* եւ *անլուսաւ*։

Անպէտ, որովհետեւ մէկ քանի հայերէն Թուղթիկներով, կամ մէկ քանի Հայերու մասնակցութեամբ չէ որ պիտի յաջողի եւ զօրանայ, ի ծնէ եւ ի բնէ ձախողութեան դատապարտուած ցոյց մը։

Անլուսաւ, որովհետեւ վստահ ենք հայ աշխատաւոր ժողովուրդի բնազդական ողջմտութեան։ Չպիտի գտնուի լեցուն մէկը, որ ուզէ նոյնիսկ դիտելով..., պարզ հետաքրքրութեան համար, հետուէն մասնակցիլ բարեկենդանային Թափօրներու, երբ գիտէ Թէ իբր մրջոց որեւէ նպատակի, ոչ մէկ կապ ունին իր Հայու ազգային կամ ընկերային բաղձանքներուն եւ անհատական առօրեայ մտահոգութիւններուն հետ։

Անլուսաւ՝ մանաւանդ, որովհետեւ չիկրնար ըլլալ որ երկու ջրացածներու երեսէն, ամբողջ ազգ մը դատապարտէ ցրանսա։

Այս կողմէն, բոլորովին հանդարտ ենք,

Պարագան անշուշտ նոյնը չէ Սուրիոյ համար, ուր ազգային այլազան ու հակամարտ ըմբռնումներու խառնարանին մէջ, խենթի մը մէկ քայլը կրնայ քառասուն խելօքի գլուխը ծակել։ Հո՛ղ, իր սեփական տան մէջ իսկ իբր հիւր նստած հայութիւնը, պիտի զգուշանայ անընդհատ եւ հսկէ։

Իսկ հո՛ս, վտանգն ուրիշ կողմէ է։

Կը վախնանք որ նման պարագաներու առջեւ, անկիւնային հերոսներու... գրգռութիւններէն ջղայնոտ՝ գտնուին անձեր որ խօսքի հասարակ տուբեւառ մը վերածուի կռուփի եւ երկաթի հարուածներու, ինչպէս պատահած է զանազան առիթներով։

Ափսոս է որ պէտք է զգուշանալ եւ հոդ է որ լռութեամբ ու հանդարտութեամբ, պէտք է պարտութեան մատնել խռովելու եւ գրգռելու իրենց մարմաջը։

Ջգեցէք որ խօսին, եթէ կը յուսան աշխարհը յեղաշրջել խօսքերով, որոնց իմաստն իսկ չեն գիտեր։

Ջգեցէք որ Թուղթ փակցնեն պատերուն վրայ..., եթէ կը կարծեն այդ կերպով պատռել մարդկութեան օրէնքները որոնց դարաւոր խորութիւնը, անշուշտ պտոյտ կուտայ իրենց մէկ ժամնոց խելքին։

Եւ գոհացէք ծիծաղելով, ափսոսալով մի փախցնէք։ Այնքա՜ն հաճոյանալի է այս տխուր աշխարհին մէջ։

Այդքան միայն։ Ուրիշ ոչի՛նչ։

ՄԿՐՏԻՉ ԵՐԻՑԱՆ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՍՈՒԼԻՍ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախորդ երկու յօդուածներով, ըստ կարելւոյն պարզ կերպով բացատրեցինք նոր օրէնքի պարտադրութիւններն ու մտցուցած առաւելութիւնները եւ ըսինք թէ թերի մասերը հետզհետէ պիտի կարգադրուին փոխադառութեան դասերովը։

Ինչ որ տարօրինակ կը թուի սակայն, օրէնքի գտած պաղընդունելութիւնն է գործաւոր դասակարգին կողմէ, հակառակ որ այս օրէնքը արմատական-ընկերվարական տարրերու մէկ պահանջն է եւ գործադրութեան մէջ է շատ երկար տարիներէ հետէ Անգլիոյ եւ Գերմանիոյ մէջ։ Պատերազմէն առաջ, Ռումանիոյ մէջ անգամ, ամէն գործաւոր ունէր իր աշխատութեան տետրը, որուն մէջ գործատէրը կը փակցնէր վաստակի համապատասխան դրոշմը, ամէն ամսու վճարումներու ժամանակ։

Ի՞նչ է ընկերային ապահովագրութեանց հիմնական սկզբունքը,— ստիպել գործաւորն որ իր աշխատութեան ատակ եւ առողջ ժամանակի վաստակէն դոյզն մաս մը խնայելով, մէկ կողմ դնէ կեանքի սեւ օրերուն համար — հիւանդութիւն, անգործութիւն, յղութիւն, ծերութիւն, անկարութիւն եւ մահ։ Եւ միեւնոյն ժամանակ ստիպել գործատէրն որ իր շահէն բաժին հանէ գործաւորին, անոր ըրած զոհողութեան համապատասխան չափով։

Այս ընկերվարական եւ արդար գաղափարի կիրառման ժամանակ, մասնաւոր շահեր մասնաւոր պարագաներու մէջ՝ կըրնան քիչ մը վնասուիլ թերեւս, բայց երբ նկատի ունենանք ընդհանրութիւնն եւ մանաւանդ օրէնքի պարտադրած ընդհանուր համերաշխութեան եւ խնայասիրութեան գաղափարները, այդ մասնաւոր պարագաները կը կորսնցնեն իրենց անհաճոյ բնոյթը։

Կարեւոր խնդիրը ապագայի վրայ մտածելն եւ անով ժամանակ հոգուիլն է։ Դժուար է զոհողութիւն մը ընելը, բայց երբ համոզուինք թէ այդ զոհողութեամբ մեզի հանդիստ ապագայ մը կ'ընբաշխաւորենք, այդ ներկայ զոհողութիւնը կը դարձի զոհողութիւն ըլլալէ եւ կ'ըլլայ պարտականութիւն մը, որուն սիրով եւ հաճոյքով դիմաւորելէ պէտք է ամէն գիտակից, ընտանեսէր եւ խելացի գործաւոր կամ պաշտօնեայ։

Բոլոր ապահովագրութիւնները ալ միեւնոյն հիմքն ունին. հրդեհի, կարկուտի, ծովային արկածներու եւ այլն դէմ կընքուած ապահովագրութիւնները քանի մը հարիւր ֆրանքի զոհողութեանց կը ստիպեն ենթական, բայց ո՞ր վաճառականը ապրանք կը բեռցնէ չոգենաւը, առանց ապահովագրելու՝ ընկերկելով քանի մը հարիւր ֆրանքի զոհողութեան առջեւ։ Ո՞ր խելացի մարդը դանց կ'ընէ իր ստացուածքը հրդեհի դէմ ապահովագրելու։ Անխոհեմութիւն եւ անխելքութիւն չըլլա՞ր ապագան չմտածելով ներկայ քանի մը հարիւր ֆրանքի խնայողութիւնը միայն ի նկատի առնելը։

Կեանքի ապահովագրութիւնն ալ, որուն այնչափ քիչ կարեւորութիւն կուտան դժբախտաբար Հայերը, բոնի խնայողութիւն մըն է, որուն բարերար արդիւնքները կը վայելեն բոլոր եւրոպացի խոհեմ եւ շրջահայեաց պաշտօնեաներու եւ հարբերու ժառանգորդները։ — Որ և է պաշտօնեայ որ կը վաստկի ամիսը 1500էն 2000 ֆրանք, կրնայ իր ընտանիքին սիրոյն ամիսը 100 ֆր. վճարել ապահովագրութեան համար, առանց իր ընտանեկան պիւտճէն խանգարելու։ Եթէ պատահի որ եբիտասարդ հասակի մէջ մեռնի, իր երախաներուն եւ այրիին ապահոված կ'ըլլայ դրամագլուխ մը կամ հաստատ եկամուտ մը, որ կրնայ ահագին դժբախտութիւններէ զերծ պահել զանոնք։ Իսկ պայմանաժամը լրանալուն, ողջ մնալու պարագային տոկոսներով ետ կը ստանայ վճարած գումարները։

Ամէնքին տրուած չէ պատրաստի գումարներ ունենալու բախտը եւ ապահովագրութիւնը լաւագոյն միջոցն է անոր հասնելու։ Փարիզի նման արկածներով լի քաղաքի մը մէջ բնակողներուն համար, անհրաժեշտ է մինչեւ իսկ արկածներու դէմ ապահովագրուիլ. ամուսնացող և զաւակներու հայր եղող մը պարտաւոր է մտածել անոնց ապագային վրայ։ Արկածի դէմ ապահովագրուիլը ամիսը 15—20 ֆր.ի խնդիր մըն է։

Նախորդ յօդուածներուս առթիւ շատ մը հարցումներ ստացայ հայ գործաւորներէն, որոնց առանձին առանձին պատասխանել չեմ կրնար բնականաբար։ Շօշափուած հարցերու մասին կուտամ հետեւեալ բացատրութիւնները, խնդրելով որ ի նկատի ունենանք միշտ թէ օտար երկրի մէջ կ'ապրինք եւ թէ պետութեան դեկավարները երբ օրէնք մը կը խմբագրեն, օտարներու շահերը չէ որ ի նկատի կ'առնեն բնականաբար, այլ տեղացիին շահերը։ Ֆրանսացի օրէնսդիրներէն կարելի չէ պահանջել որ ֆրանսացի գործաւորին ապագայ բարօրութեան վրայ խորհած ժամանակ, մտածէ նաեւ թէ կայ հայ բանուոր մը որ կրնայ քանի մը տարիէն հայրենիք վերադառնալ։ Ֆրանսացին նախ եւ առաջ Ֆրանսացիին բախտով կը հետաքրքրուի բնականաբար եւ մենք ալ եթէ մեր երկրին մէջ ըլլայինք, միեւնոյն կերպով պիտի վարուէինք։ Օտարին անիրաւութիւն չընելը պայման է, բայց բնական է անոր շահը ստորադասել հայրենակիցի շահին։

Ամսական 40 ֆրանք տուրքը առաւելագոյն գումարն է օրական 36 ֆրանք եւ աւելի շահող գործաւորներուն համար, ինչ որ կ'ընէ մօտաւորապէս վաստակի 4 առ 100ը։ Կան գործաւորներ որ ամսէ ամիս հաւասար գումար չեն շահիր, այլ երբեմն 1000 ֆրանք ամիսը, երբեմն 2000 ֆրանք եւս։ Ասոնք կը վճարեն 4 առ 100, պայմանաւոր ամսավճարը 40 ֆրանքը չանցնի։

Օտար գործաւորը կը վայելէ ֆրանսացի գործաւորին շնորհուած բոլոր առաւելութիւնները։ բացի անգործութեան պարագայէն, բաւական է որ ֆրանսայի մէջ կանոնաւոր կերպով աշխատած է երեք ամիսէ հետէ։

Հիւանդութեան, անկարութեան, յղութեան եւ մահուան պարագաներուն, հատուցմանց իրաւունք ունին այն ամէն գործաւորները, որ մէկ տարուան մէջ երեք ամիսէն աւելի, իսկ վերջին տարին տասն ամիս աշխատած են եւ եւ վճարած իրենց տուրքերը. հակառակ պարագային կը կորսնցնեն իրենց իրաւունքը։

Իսկ եթէ գործաւոր մը որոշ տարիներ աշխատելէ վերջ առանձին գործի տիրանայ, կրնայ կամովին շարունակել իր վճարումները, առանց թոշակ ստանալու եւ այսպիսով պահել իր իրաւունքները։ Արդէն կուտած էինք թէ գործաւորական ապահովագրութիւնները կեանքի սղութեան պիտի ծառայէին, բայց հացի գինին 2 ֆրանքէն 2,35ի բարձրացումը միայն այս պատճառին վերագրելի չէ. այլ ցորենին գինը բարձրացած է։

Գալով շատ մը գործարաններու մէջ աշխատանքի պակասութեան, ատոր ալ պատճառը միջազգային եւմտական տագնապն է։ Զինաստանի, Հնդկաստանի եւ Եգիպտոսի մէջ խռովութիւնները անպակաս են եւ Ռուսաստանն ալ հաշուելով, աշխարհի երկու միլիառ բնակ-

ՀԱՄԵՒՐՈՊԱ

Գ.

ՆԱԽՆՏՐԵԼԻ ՋԵՒԵՐ

Ազգերը կը համախմբուին աշխարհագրական միեւնոյն ընտանիքին մէջ։ Օղակները կը սեղմուին երկրէ երկիր, մայր գամաքէ մայր գամաք։ Երկուժեղ յեղաշրջում միաժամանակ կը կատարուի— ինքնորոշում փոքր ազգերու եւ իամադաշնակցութիւն ազգային բոլոր միաւորներու։ Ապագային պատերազմները պիտի մղուին ո՛չ թէ ազգ-ազգ, այլ մայր գամաքէ մայր գամաք, իբրեւ, օրգանապէս իրարզօդուած հաւաքականութիւններ։

Այդ համախմբումները կը կատարուին զանազան պիտակի տակ, ըլլայ ազգային, կրօնական, գեղչային, քաղաքական ու տնտեսական, որոնք ըստ պայմաններու կը դառնան իրականութիւն կամ երազ։ Այդպէս էր «պանիսլամիզմը», որ կրօնական դիմակին տակ մեզ երազական քան իրական։ Այդպէս է այժմ «պանթուրանիզմը», որ կ'ապրի իբրեւ «հաւատաւոր»ի իտէալ։ Բայց ոչ իրբեւ իրականութիւն։ «Պանսլաւիզմն ու պանժերմանիզմը», նոյնպէս չքացան ժամանակի փոշիներուն մէջ։

Բոլորովին այլ է պատկերը «պանամերիկայի» միութեան, որ ծառացած մեր առջեւ, ոչ թէ իբրեւ գաղափար, այլ իբրեւ իրականութիւն, կ'ընդգրկէ 31 միլիոն քառ. քիլոմեթրի չափ շրջագիծ մը, մօտ 200 միլիոն ժողովրդով։ Պանամերիկան կը խաղայ այն դերը Ամերիկայի մէջ, ինչ որ Ազգերու Դաշնակցութիւնը Եւրոպայի մէջ։ Սակայն, որպէս միջազգային հիմնարկութիւն՝ անկատար է եւ անկանոն, ինչ որ չի կրնար յանձնարարելի նկատուիլ Եւրոպայի համար։ Բուն միացեալ Նահանգները, որ տնտեսական բազմազան եւ բազմաթեւ կծիկ մըն է դարձած, եւ ընդած են 48 աստղերուն միջեւ մաքսային պատնէշները, ինչ որ գրեթէ ամբողջ Եւրոպայի չափ չուկաներ կը բանայ իր առջեւ, կարող են ինքնին դառնալ տնտեսական կազմակերպութեան, բայց ոչ քաղաքական կազմակերպութեան։

Իսկ եթէ վերցնենք Անգլիան, որ 35 միլիոն քառ. քիլոմեթրի վրայ փռած է իր մականին տակ ապրող 450 միլիոն ժողովուրդը, տնտեսապէս չի կրնար օրինակ դառնալ, որովհետեւ իւրաքանչիւր բնագաւառը (տոմինիօն) իրեն բաւարարող ներքին շուկայ ունի։ Բայց քաղաքականօրէն կարող է որոշ օգտակարութիւն ունենալ։

Ամենայատկանշականձեւերէն մէկը կը ներկայացնէ Խորհրդ. Ռուսաստանը։ Ահա թէ ինչո՞ւ։

Պատմական աննախընթաց դէպքեր տեղի կ'ունենան Ասիոյ մէջ։ Դեղին գեղը արթնցած իր հազարաւոր տարիներու քունէն, ցոյց կուտայ յեղափոխական յամառ կամք եւ քաղաքակրթական կորով։ Չինաստանի մէջ Սուն-Եաթ Սէնը եւ Հնդկաստանի մէջ Կանտին, այս զարթօնքը բնորոշող բոցավառ դէմքերն են։ Մէկ կուռ ճակատ կ'ուզեն կազմել արեւմուտքի դէմ։ 1926 օգոստ.ին Նակազաքիի մէջ տեղի ունեցաւ «պանասիական առաջին խորհրդաժողովը» ճափոնի նախաձեռնութեամբ։ Կը մասնակցէին Չինաստանի, Հնդկաստանի, ճափոնի, քորէացի եւ ֆիլիպեան կղզիներու ժողովրդական ներկայացուցիչները։ Ուշագրութեամբ կը հետեւէր Ռուսաստանը այդ շարժումներուն, «չէֆ տ'օրքէսդր»ի դերն ստանձնելու եւ կազմելու համար Ասիական Ազգերու Լիկան, որուն մէջ պիտի մտնէին Թուրքիան, Աֆղանիստանը, Պարսկաստանը, տարածուելով այսպէս Միջերկրականէն մինչեւ Խաղաղական, Հնդկական Ովկիանոսէն մինչեւ ճերմակ ծով, ամբարելով իր ծոցին մէջ մօտ 600 միլիոնի մարդկային հուժկու զանգուած մը։ Խորհրդային ձեւը պիտի նուիրագործուէր, իբրեւ պանասիայի գերպետական ձեւ։ Ռուսաստանը չկարողացաւ իրագործել իր այս ծրագիրը, բայց չարժումը իբրեւ իտէալ, կ'ապրի մասնաւորապէս Թուրքիոյ, Հնդկաստանի եւ Աֆղանիստանի մէջ։

Ռուսական համախմբման այս ձեւն եւս չէր կարող Եւրոպայի Միացեալ Նահանգներու համար օրինակ դառնալ, որովհետեւ ամէնէն առաջ խիստ «ռուսական» էր, եւ երկրորդ «բոլշեւիկեան», որ կը նշանակէ ծայրայեղ դիկտատորական եւ գնորական։

Քաղաքական յաւագոյն կարմակերպութեան երկու պատշաճ նախաձեռ կը նկատուի, մէկը զուիցերիականը, միւսն ալ գերմանականը։ Այս երկուքի սահմանադրական եւ ցեղային փոխյարաբերութեան խնդիրը ի մի վերցուցած, կրնայ ծառայել քաղաքական վերնաշէնքի օրինակ, իսկ Ամերիկան ալ տնտեսական։

ՎԱՀԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

ՁՇՏՈՒՄ ՄԸ

Թուրք ընդդիմադիրներու օրգան La République Enchaînée*ի խմբագրութիւնը հետեւեալ խմբագրական յայտարարութիւնը դրած է իր թերթին ճակատը։*

«Քէմալական մամուլը էգուն է յօդուածներով ու անմիտ մեկնաբանութիւններով, Թուրքեւպարսիկ սահմանագլուխի արտաեան դէպքերուն մասին։ Անմտօրէն, իբր այդ ծանր դէպքերուն պատասխանատու, կը մեղադրէ Թուրք ընդդիմադիրները, Անգլիան եւ պարսկաստանը։

«Իրականութեան մէջ, այս արիւնահեղութեան մէջ, միակ յանգաւորը բռնապետական վարչաձեւն է, որուն հարկապարտ կը մնայ այդ մամուլը։

«Քանի՞ բռնապետութիւնը, հանրապետական սկզբունքներու հանդէպ արհամարհանքը ազատութեանց կապուտումը, օրինաւոր խորհրդարանի մը եւ կառավարութեան բացակայութիւնը կը կիրարկուին ամբողջ քէմալական Թուրքիոյ մէջ, ժողովրդային ըմբոստացումները չպիտի պակսին»։

ՖՐԱՆՍԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏ ԱՆՏՐԷ ԹԱՐՏԻԷՕՅԻ ՃԱՌԸ

Ֆրանսայի վարչապետը պ. Անտրէ Թարտիէօ, կիրակի օր, Նանսիի մէջ խօսեցաւ կարեւոր ճառ մը, որ Ֆրանսական մամուլին մէջ, տեղի տուաւ Թեր ու դէմ արտայայտութիւններու։

Ստորեւ կուտանք ճառին գլխաւոր մասերը։

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Վարչապետը պարզելէ յետոյ վերջին յիսուն տարիներու ընթացքին թափուած ջանքերը, բարելաւելու համար աշխատաւորներու պայմանները, խօսքը կ'ուղղէ երիտասարդներուն — «Հարցուցէք ծերերուն, — ինչ որ ալ ըլլայ տակաւին կատարուելիք գործին ծաւալը — թէ արդեօ՞ք, Ֆրանսայի աշխատաւորին վիճակը լայնօրէն չէ բարեփոխուած։ Չէ՞ որ այսօրուան գործաւորը աւելի լաւ կը բնակի, աւելի լաւ կը սնանի, աւելի լաւ հանգստի ժամանակ ունի, քան անցեալ տարու գործաւորը»։

Բայց, այս բոլորը անշուշտ բաւական չեն։ Ի՞նչ պէտք է ընել ընկերային լաւագոյն վիճակ մը ստեղծելու համար։

ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Առաջին ճշմարտութիւն մը կը պարտադրուի աշխատաւորին եւ ճարտարարուեստական ձեռնարկին միջեւ համերաշխութիւնը — իւրաքանչիւրիբարօրութեան համար — բոլորին բարգաւաճման անհրաժեշտութիւնը։

— Այս մանաւանդ, ճշմարիտ է փոքրաթիւ երկիրներու համար, որ կ'ապրինք։ Աշխարհ տնտեսական տագնապի մէջ է։ Պատերազմէն ի վեր, անկարգ կերպով արտադրած է, առանց նկատի առնելու միջոցները եւ պէտքերը։

«Երէք մեծ երկիրներ, որոնք երբեմն կը նկատուէին արդի ճարտարարուեստին թագաւորները, հաւասարապէս կը ճանչնան այս հիւանդութեան ախտանշանները, — անկում ճարտարարուեստական գուցանիշի, անկում մեծաքանակի եւ փոքրաքանակի գիներու, ծաւալում անգործութեան, որ երէք երկիրներուն մէջ երեւան կը բերէ 9 միլիոն անգործներ։

«Ֆրանսա բախտաւորուած է նոյն չափով հարուածի չենթարկուելու։ Ան ալ մեծաքանակի գիներուն վրայ, որոշ համեմատութեամբ անկում ունեցաւ։ Բայց անոր ճարտարարուեստական գուցանիշը մնաց կայուն եւ անգործ չունի։ Այս պայմաններուն մէջ, վստահութիւնը պարտականութիւն մըն է, բայց ուրիշ պարտականութիւն մըն է նաեւ արթնութիւնը։ Որովհետեւ, պատերազմի կորուստները, վերաշինութեան մեծ ծախքերը, եւմտական ծանրաբեռնումը, կրնան դիւրաւ մեզ ենթարկել չարիքին, որմէ կը տառապին մեր դրացիները»։

Այս կացութեան հանդէպ, կառավարութիւնը ձեռք առած է անմիջական միջոցներ եւ երկար տեւեցուան համար, մշակած է գործունէութեան ծրագիր մը. որուն գլխաւոր կէտերը պարզաբանելէ յետոյ, վարչապետը կ'եզրակացնէ.

— Այս ծրագիրը կը համապատասխանէ մեր ներկայ կացութեան։ Չպիտի գոհանանք շինելով ճամբաները, ջրանցքներ եւ նաւահանգիստներ։ Վոլթերի հետ պիտի յիշենք թէ «դրամը չէ որ կը հարստացնէ երկիրը, այլ միտքը՝ որ կը վարէ աշխատանքը», եւ ազգային բարեշրջման այն կէտին վրայ ուր կը գտնուինք, աւելի որակին քան թէ քանակին որ պէտք է ձգտի մեր արդրական ճիգը, բոլորին բարեթեան համար»։

Բայց դեռ, այս ալ չի բաւեր պետութեան, գործատիրութեան աշխատանքի յարաբերութեանց բարւոքման ճամբուն մէջ։ Հեռուները պէտք է երթալ։

ՊԵՏՈՒԹԻՒՆ, ԳՈՐԾԱՏԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՇԽԱՏԱՒՈՐ

Ի՞նչ է պէտք է ըլլայ պետութեան դերը։ Ան պէտք չէ իրեն չվերաբերող խնդիրներու միայն իրաւարարի դեր մը ունենայ երեք գիծերով բնութագրուիլ,—հակակշիռ, կանոնաւորութիւն։ Այս գործը կատարելու համար, պետութիւնը մանափակ միջոցներ միայն ունի, որոնց չնորհիւ, այս վերջին ճգնաժամային պահերու կրցաւ իր տնտեսական հաւասարակշռութիւնը պահպանել։ Պէտք է սակայն որ նոր միտք մը գտնուի եւ դրամագլուխի եւ խատանքի աշխարհը։

Դրամագլուխի կողմէ, ճարտարարուեստի արհեստական վերանորոգում, տալ ծաւալում՝ շնորհիւ վարկի բարձր օրավարձքերու, ամուր եւ կազմակերպութիւններու, ջեւ աւելի կանոնաւոր եւ ռատերական յարաբերութիւն արհեստագիտական դասակարգութեան դարգացում։

— Մեքենականութիւնը, սէ, վարչապետը, կը փոխակերձեռքի աշխատանքը, շնորհիւ նագէտ աշխատաւորի մը։ պէտուրեմն, որ եթէ լաւ հասան շատցնէ գործաւորին

«Ատենօք, խորհրդարանին նար ապահովել այս պարտեան միջոցները։ Արդեան աւելի ընդունակ կը թուքերը աւելցնելու քան թէ մանափակելու։ 1930ի ցոյցին վրայ 4 միլիառի լումը կը պարտինք խորհրդին նախաձեռնութեան»։ տալէ յետոյ խորհրդարկազմի տակ կողմերը, ցոյցի կանոնաւորման տէն, վարչապետը կ'ըսէ.

— Պատուղներու պարնութիւնը կազմակերպելմար, երկու միջոց կայ, ռավարութեան կողմէ եւ րութեան դաստիարակ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓԻԹԱՂ

ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԵՐԸ ՄԵՐ ՕՐԵՐՈՒՄ

Հայ ժողովուրդը ունի իր պատմական ժամերը, որոնք ոչ միայն ամբողջ ազգի, այլև առանձին անհատների կյանքում ստեղծել են ամենաբուռն ու ամենաանմոռանալի տպավորությունները։ Այդ ժամերը ամենաուժեղ կերպով ազդել են ազգի ամբողջ հետագա կյանքի վրա։ Ամեն մի ազգ, որ ուզում է ապրել, պարտավոր է հիշել իր պատմական ժամերը, որպեսզի ամեն անգամ, երբ նրանք կրկնվում են, ազգը պատրաստ լինի նրանց դիմավորելու։

Մեր ազգի պատմության մեջ ամենամեծ ժամերից մեկը 1915 թվականի ապրիլի 24-ն է։ Այդ օրը Կ. Պոլսում ձերբակալվեցին հայ ազգի ամենաազնիվ զավակները, որոնք ազգի առաջնորդներն էին։ Նրանք ենթարկվեցին ամենաանմարդկային տանջանքների, ապա սպանվեցին։ Ամբողջ ազգը ցնցվեց այդ լուրից։ Ամեն մի հայ ընտանիքում ողբ ու կոծ հնչեց։ Ամեն մի հայ սիրտ ցավից ճմլվեց։ Ամեն մի հայ հոգի ցնցվեց։ Ամեն մի հայ մարդ ոտքի կանգնեց։ Ամբողջ ազգը հասկացավ, որ իր առջև մահ կամ կյանք հարցը դրված է։ Ամբողջ ազգը հասկացավ, որ իր առջև ոչնչացման վտանգ է կանգնած։ Ամբողջ ազգը հասկացավ, որ իր առջև ոչնչանալ կամ հարություն առնել հարցը դրված է։

Ամբողջ ազգը հասկացավ, որ ինքը պետք է ինքնապաշտպանության դիմի։ Ամբողջ ազգը հասկացավ, որ ինքը պետք է զենքի դիմի։ Ամբողջ ազգը հասկացավ, որ ինքը պետք է կռվի։ Ամբողջ ազգը հասկացավ, որ ինքը պետք է հաղթի։

Ամբողջ ազգը հասկացավ, որ ինքը պետք է հաղթի, որովհետև հաղթելու ուրիշ ելք չկար։ Ամբողջ ազգը հասկացավ, որ ինքը պետք է հաղթի, որովհետև հաղթելու ուրիշ ելք չկար։ Ամբողջ ազգը հասկացավ, որ ինքը պետք է հաղթի, որովհետև հաղթելու ուրիշ ելք չկար

նան երաշխաւորել թէ՛ ներկան եւ թէ՛ ապագան: Արտաքին պարտքերը վերջնապէս կարգադրելու ճամբուն վրայ ենք, միշտ սակայն նկատի առնելով մեր ներկայ կացութեան պահանջները»:

Եգիպտական հարցին շուրջ

Անգլիոյ խորհրդարանին մէջ, Զըրչիլ ժեղադրեց կառավարութիւնը թէ քաղաքեր ած է եգիպտոսի ազգայնական խլրտուները, մինչեւ իսկ, Անգլիոյ զինուորական ուժերը անկից քաշել թելադրելու աստիճան:

Վարչապետը պատասխանեց թէ կառավարութիւնը ոչինչ ըրած է որ Անգլիոյ վարկը կորսէ Եգիպտոսի մէջ եւ Գահիրէի մէջ, զինուորական ուժերու ներկայութեան մասին, իր տեսակէտին վրայ պնդեց: Հերքեց թէ եգիպտոսի օտարականները անպաշտպան կը զգան իրենք զիրենք: Կառավարութիւնն աւելցուց, մարտանաւեր ղրկեց եւ պատրաստ է դիմելու նոյն ժիջոցին ամէն անգամ որ պէտք ըլլայ՝ օտարներու եւ անգլիական հպատակներու պաշտպանութեան համար:

*** Լոնտոնէն առնուած հեռագրի մը համաձայն, վերջին խռովութեանց առթիւ, եգիպտական ջուրերը ղրկուած անգլիական երկու մարտանաւերը ետ կանչուեցան:

*** Վաֆտի ընդհ. քարտուղարը կը հերքէ «Տէյլի Թելէկրաֆ»ի այն լուրը թէ՝ Վաֆտը համամիտ է Եգիպտոսի նախկին Խտիվ Ապպաս Հիլմիի կրկին գահակալութեան:

Ռուսաերթրաման դաշինքը

ՄՈՍԿՈՒԱ, 29 յուլիս.— Արտաքին գործակարութեան օգնական Գարախան եւ Թուրքիոյ դեսպան Հիւսէյին Բաղըպ այսօր փոխանակեցին 1929 դեկտեմբեր 17ին, էնկիւրիի մէջ կնքուած համաձայնութեան, ինչպէս նաեւ 1925 դեկտ. 17ին, փարիզի մէջ կնքուած չէզոքութեան եւ բարեկամութեան դաշինքին երկարաձգման վաւերագրերը:

Ռուսաեւամերիկեան միջադէպ ը

ՆԻՒ ԵՈՐՔ, 29 յուլիս.— Մաքսատան քննիչը արգիլեց նաւահանգիստ մուտքը երկու նաւերու, մէկը նորվեկիական, միւսը անգլիական, որոնք Արխանկէլէն կուգային եւ ռուսական փայտ կը փոխադրէին:

Ուաշինկթընէն տրուած հրահանգներու գործադրութիւնն է որ կը սկսի, հակառակ մաքսային վերջին օրէնքին, որուն մէկ տրամադրութեամբ «բոնի աշխատանքի արտադրութիւններ»ու մուտքը կ'արգիլուի Ամերիկա:

Նաւային շրջանակները մտահոգութեան մատնուած են: Որովհետեւ 38 բեռնատար նաւեր եւս ճամբայ ելած են դէպի Ամերիկա, նման ապրանքներով:

Միւս կողմէ, պաշտօնական շրջանակները կը յայտնեն թէ այս որոշումը որ եւ է կապ չունի Ամերիկայի մէջ, բոլշեւիկներու գործունէութեան հետ:

Բազմաթիւ ամերիկեան թերթեր կը պահանջեն որ արգելքը ընդհանրանայ ընդդէմ ռուսական բոլոր արտադրութիւններուն, այն առարկութեամբ թէ, անոնք աւելի կամ նուազ չափով «բոնի աշխատութեան» արդիւնք են: Ուրիշ թերթեր ալ կը վախնան որ նման արգելք մը վերջ դնէ Ռուսիոյ կողմէ Ամերիկայի մէջ կատարուած գնումներուն, որոնց գումարը կը հասնի տարեկան հարիւր միլիոն տոլարի:

Աֆղանիստանի կացութիւնը

Փարիզի աֆղան պատուիրակութիւնը հետեւեալ զեկոյցը կը հաղորդէ.—Աֆղանիստանի մէջ, ըմբոստացման մասին լուրեր հրատարակուեցան թերթերուն մէջ: Աֆղան պատուիրակութիւնը կը հերքէ այդ զրոյցները եւ կը յայտնէ թէ յուլիս 22ին, կարգ մը անձեր փորձեցին արշաւել Գապուլի հիւսիսը գտնուած գիւղի մը վրայ: Անոնց յարձակումը չախչախուեցաւ եւ աւազակներէն մեծ մասը գերի ինկաւ: Երկրին մէջ հանդարտութիւն կը տիրէ:

Հնդկական հարցը

Անգլիոյ վարչապետը յայտնեց խորհրդարանին թէ հնդկական հարցին առթիւ Լոնտոնի մէջ գումարելի խորհրդաժողովին մասնակցելու համար, երկու ընդդիմադիր կուսակցութիւնները պիտի հրաւիրուին երեք կամ չորս ներկայացուցիչներ նշանակելու, միւս պատգամաւորներու հաւասար իրաւասութեամբ:

Լորտերու ժողովին մէջ ալ ճշդուեցաւ թէ խորհրդաժողովը պիտի զբաղի Սիմոնի տեղեկագրով, որ երբեք հիմ չպիտի ծառայէ վիճաբանութիւններուն, եւ ոչ ալ պիտի կրնայ որեւէ յանձնառութեան ենթարկել պատուիրակները:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ԼԵՀ ԵԻ ԳԵՐՄԱՆ կառավարութեանց միջեւ պայմանագրութիւն մը կնքուեցաւ, դիւրացնելու համար սահմանագլուխի դէպքերու քննութիւնը:

Արգիլելուհամար սահմանագլուխի միջադէպերուկրկնութը, մաքսային պաշտօնեաներն ու սահմանապահ զօրքերը չպիտի կրնան առանց արտօնութեան սահմանն անցնել:

ՇՈՒԵՑԱՑԻ համբաւաւոր զրագիտուհին Մէլմա Լակերլոֆ քրանսական կառավարութենէն ստացաւ Պատուոյ Լեգէոնի զարդանիշը:

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ չամիչի արտադրիչները իրենց մէկ հաւաքոյթին մէջ, կարգ մը պահանջներու կարգին, կառավարութենէն խնդրեր էին չեղեալ նկատել ֆրանքհւհելլէն առեւտրական դաշնագիրը: Յոյն արտաքին նախարարը պատասխանեց թէ կառավարութիւնը չի հանդուրժեր նման միջամտութիւններու:

ՄԻՆԱՅԵԱՑԻ մէջ բացուեցաւ Ռուժանիոյ եւ Եուկօսլաւիոյ միջեւ, տնտեսական գործակցութեան խորհրդաժողովը:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ

ՍԻՓԱՆ ԵՐԳԶԱԽՈՒՄԲԻ

Այս կիրակի Ֆոնթէնպլոյի անտառին մէջ

կը տրաւիրուին անդամներն իրենց պարագաններովևհամակիրներով

ժամադրավայր Gare de Lyon առաւօտեան ժամը 7—7.30

ՃԱՇԸ ՄԻԱՍԻՆ ԲԵՐԵԼ

Հ. Յ. Դ. ՓԱՐԻԶԻ ԿՈՄԻՏԷՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԿԱՆ

ժողովի կը հրաւիրէ բոլոր խումբերու ներկայացուցիչները վաղը ուրբաթ իրիկուն ժամը 8.30ին Chope Parisienneի վերնայարկը, 64 Rue des Ecoles.

Հ. Յ. Դ. ԼԻՈՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

այս շաբաթ իրիկուն ժամը 8.30ին սկսեն շամոնի Հ. Յ. Դ. վարուժան ակումբի մէջ, 15 Rue Jeanne d'Arc St. Chamond, բոլոր շրջաններու ընկերները պարտաւոր են որոշեալ ժամուն ներկայ ըլլալ իրենց լիազօրագրով:

ՌՈՍՏՈՄԻ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

ՕԳՈՍՏՈՍ 1 ՕԻՆ, ՍԷՆ ՔԼՈՒԻ ԱՆՏԱՌԻՆ ՄԷՋ

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Մարսէյլի Վասպուրականի Հայրենակց. միութեան կողմէ

Այս կիրակի ժամը 8էն 21, 10 Պուլվար Բապաթօի գեղեցիկ պարտէզին մէջ:

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է

Հանրակառքը թիւ՝ 46, իջնել վերջաւորութեան

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ՍԱՐՍԷԼԻ ՄԷՋ

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԻԱՆՔԻՆ ԱՐԹԻԻ

Այս կիրակի առաւօտէն մինչեւ իրիկուն

կը նախագահէ՝ Լ. ՄՕՋԵԱՆ կը խօսի՝ ՈՒԼՆ

երգ, արտասանութիւն, նուագ, երգ եւայլն

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է

Շոգեկառք՝ կառ տիւ Նոռէն 10.25, 11.50, 1.43 եւ 1.51

Հ. Ը. Ի.

ՓԱՐԻԶ

ՌՈՍՏՈՄ կոմիտէն ստիպողաբար ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այսօր Շինգշաբթի իրիկուն ժամը 8.30ին 131 Fbg. du Temple. Պալտաւորիչ ներկայութիւն:

ԻՍԻԼԻ-ՄՈՒԼԻՆՕԻ եւ Պիանքուրի Զաւարեան ենթակոմիտէի Վռամեան, Մ.Օ եւ Մուրատ խումբերու ընդհ. ժողովը՝ այս Շաբաթ իրիկուն ժամը 8ին ծանօթ հաւաքատեղին: Կարեւոր օրակարգ:

ԳԱՒԱՌ

ՄԱՐՍԷՅԼԻ Քրիստափոր Ենթակոմիտէի ընդհ. ժողովը՝ վաղը Ուրբաթ իրիկուն ժամը 8.30ին սովորական հաւաքատեղին: Խիստ կարեւոր օրակարգ, պարտաւորիչ ներկայութիւն:

ԼԻՈՆԻ Պատ. մխութեան վիճաբանական ժողովը՝ այսօր եշ. իրիկուն ժամը 8.30ին, Գրադարանի սրահը: կը հրաւիրուին ընկերներն ու համակիրները:

ՄԱՐՍԷՅԼԻ Պատ. միութեան ընդհ. ժողովը՝ այս Շաբաթ իրիկուն ժամը 8.30ին: Պարտաւորիչ ներկայութիւն:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ջ. Ե. Ո. Միութեան փարիզի մասնաճիւղին վիճաբանական ժողովը այսօր Շինգշաբթի իրիկուն, ժամը 9ին, Ֆլորիայի մէջ: Նիւթ՝ *Ամուսնութեան թեր ու դէմ:* կը հրաւիրուին ընկերներն ու համակիրները, ժամը 11էն յետոյ սինեմա:

Ջ. Ե. Ո. Միութեան Մարսէյլի վիճաբանական ժողովը այս Շաբաթ իրիկուն ժամը 9ին Միութեան սրահին մէջ, 23 Պուլվար տէ Կօմիէ: կը հրաւիրուին ընկերներն ու համակիրները:

Ա. ԱՇԱՐՈՆԵԱՆի փարիզի եւ շրջակայից ցոր. ցանցնախումբի հիմնադրամի մասնախումբը կը փութայ խնդրել բոլոր կազմակերպութիւններէն եւ անհատներէն, որոնք տակաւին չեն փակած առկախ մնացած հաշիւները, (տետրակով հանգանակութիւն, շքադրամ եւ պատկեր), բարի ըլլան մինչեւ Օգոստոս 15 կարգադրել հաշիւները, իրենց քով գտնուած դրամները տետրակներով միասին յանձնել Պ. վ. Թագուորեանի, 53 Fbg. Montmartre, Paris (9e).

Դիւրութեան համար կը յիշենք հոս առկառ մնացած տետրակներու թուահամարները՝ 4, 5, 6, 10, 12, 13, 14, 15, 18, 19, 20, 24, 26, 32:

ՇԱՎԻԼԻ Երիտասարդաց երկսեռ միութեան ժողովը այս Շաբաթ իրիկուն ժամը 9ին ծանօթ հաւաքատեղին:

ՀՐԱՒԷՐ

Պոլսոյ Նարեկեան եւ Էսայեան վարժարաններու երկսեռ բոլոր սաները խորհրդակցական ժողովի կը հրաւիրուին կարեւոր խնդրոյ մը առթիւ, այս Շաբաթ իրիկուն ժամը 9ին, Ֆլօրիա ճաշարանը 61, Rue Monsieur le Prince, մէթրօ սկսեն միշէլ:

ՆԱՄԱԿ ունին Պ. Պ. Արամ Քամալեկեան, Հաւոն Ալթունեան, Տիկ. Շահինեան, Յակոբ Փիլիպպոսեան, Մինրան Քէշիշեան, Արշաւիր եւ Գարնիկ Բարսեղեան, Պետրոս Սիմոնեան եւ Օննիկ Մինասեան:

ՌՈՍՏՈՄ Գրադարանը փակ է Օգոստոս 1 — Սեպտեմբեր 1: Իրենց ժամ գիրք ունեցողներէն կը խնդրուի շուտով վերադարձնել գիրքերը:

ԱՆԱՏՈԼՈՒԻ ԲԵԿՈՐՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Մէշէտի հայ ժողովրդական դպրոցը հոգաբարձութեան հանգանակութիւնը.—

Տիկ. Ս. Աթաեան, Մ. Յարութիւնեան, Մ. Գրիգորեան, Ոմն 1000ական դրան, Յ. Պետրոսեան 312.80, Տիկ. Հիգիա Շահինեան 300, Ա. Գէորգեան, Տիկ. Ա. Գէորգեան, Բ. Դաւիթեան, Ոմն, Եփրատ ընկերութիւն 250ական, Ա. Մանկասարեան 150, Մ. Դարմանեան, Օ. Վարդապետեան, Ոմն, Տիկ. Ռ. Աբիկեան, Տիկ. Ս. Քարամեան 100ական, Տիկ. Ն. Խանլեան, Յ. Կ. Օհանեան, Ն. Օրբելեան, Ս. Գրիգորեան, Բ. Յարութիւնեան, Միքայէլ Խան Մելիք Փարսադանեան 50ական, Ա. Խօջաեան, Կ. Դանիէլեան, Խ. Սաղաթելեան, Ոմն 30ական, Ա. Աբրահամեան, Դուրգէն (սափրիչ) 20ական, Օր. Քնարիկ, Տիկ. Ս. Մկրտիչեան, Ոմն 10ական, Բալասան Մելիք Մելքոնեան, Ս. Սիմոնեան, Մ. Աղբար Ղուկասեան 5ական, Ն. Սահակեան 30, գումար 7047.80 դրան: օրուան սակով 538 տոլար կամ 13,686 ֆր. 50:

Տես յառաջ 28 Մարտ:

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Նուրհան Ծատուրեան կը փնտռէ իր մօրեղբայրը Տրապիզոնցի Արշաւիր Տիրատուրեան: Իմացնել՝ Maison Varteressian, *1 Rue Hautefeuille, Paris.*

— Կը փնտռուի Սեբաստացի Մկճիտիէ Ոսկիեանի (Պուլախի) քոյրը, Ս. Սարգիս թաղեցի, Ագապի Հիւսնեան, որ ուսուցչուհի էր Ներսէսեան եւ Ս. Գէորգ վարժարաններուն մէջ, իմացնել՝ Armenag Guregh, 170 Rue de Crimée, Paris (19e).

— Մարաշցի Յարութիւն Ագրապեան որ ժամանակ մը կը բնակէր Լիոն, 3 ամիս առաջ կը գտնուէր Նիս 19 Rue Biscara, Ներկայիս կը մնայ անյայտ, իր հասցէն գիտցողներէ կամ ուր գտնուելու մասին որոշ տեղեկութիւն ունեցողներէ կը խնդրուի իմացնել՝ Նազար Ագրապեանի. Rue Boteva No. 2 Bourgas, Bulgarie.

ՀԱՄՅԻԻ ՓԻԼԻՊՊՈՍԻԹԻՒՆ

Պ. վ. Նարճանեանի իրաւաբիտական գրասենեակը՝ Օգոստոս 1ին կը փոխադրուի 54 rue Lafayette, Paris (9). Tél. Provence 87-53, Métro Cadet.

Կ'ընդունի ամէն օր 9էն 12 եւ 2էն 7.

ՅԱՐԳԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

Եթէ կ'ուզէք բերնի համով մաքուր եւ անարատ խմել, դիմեցէք հռչակաւոր

CAFÉ SULTAN ի

Ս. ԹՈՐՈՄ (Քէչաթցի)

92 Rue d'Angoulème Métro: Couronne, Tél. Ménil. 5

Ամենավերջին դրուածքով մեքենաներով օժտուած վաճառատան մէջ պատրաստուած սուրճը կը գոհացնէ նէն նրբաճաշակները:

Ձոխ տեսակներ, գիները անմրցելի, փորձեցէք անգամ եւ պիտի տեսնէք տարբերութիւնը ձեր գործածած եւ պատրաստած սուրճին: կ'ընդունինք ապսպրանքներ սահմանէն եւ գաւառներէն: փափաքողներու կը դրկենք գիներու ցանկը, փոքրաքանակ եւ մեծաքանակ վաճառ...

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

ՋԱՇԱՐԱՆ ՖԼՕՐԻԱ

61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)

Մէթրօ Օտէոն եւ սէն Միշէլ Շեռաձայն Littré 38...

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ...



ՀԱՑԿ. ԲՈՒԺԱՐԱՆ - POLYCLINIQUE de BELLEV...

ՑԷՐ եւ ՅՕՐԷՆ՝ ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ Մ...

29, Rue (Place) des Fêtes, Paris, XIX. Tél. Nord 96-...

Բաց է ամէն օր, ուր շատ մը մասնագէտ բժիշկներէ կը խնամէն առանձին ներքին եւ վէներական հիւանդութիւններու: Աչքի գէտը կ'ընդունի Գշ., Երք. եւ Շաբաթ օրերը ժամը 4—6: Ռէնկրդի եւ ականջի մասնագէտը ամէն Երեք. եւ Շաբաթ օրերը 2—3: ԱՏԱՄՆԱԲՈՅԺը ամէն օր ժամը 9էն 19:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Միշտ ունենալու համար ապուխտի եւ երշիկի ընտիր համեղը եւ մաքուրը, դիմեցէք ուղղակի հանրածանօթ պուխտագործ եւ ապուխտավաճառ

HAIG MARACHLIAN ի

Fabrique des salaisons Orientales

16 Rue des Hortensias St. Just, MARSEILLE

որ իր յարգելի յաճախորդներուն դիւրութիւն տալու համար բացած է նաեւ մթերանոց մը (կայարանին մօտ) 55 Rue Petites Maries MARSEILLE.

կ'ընդունի ապսպրանքներ ամէն երկիրներէ, մեծ... եւ փոքրաքանակ եւ կ'ուղարկէ կատարեալ ճշտապահութ...

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԿԵՐՊԱՍԵՂԻՆ

SIROUNAK ARABIAN & C^IE

155 Rue Montmartre (1er étage)

Ֆրանսական եւ անգլիական խիստ ճոխ եւ ճաշակով nouveautéներ այրերու համար: Մետաքսեայ եւ բրդեղէն ամէն տեսակ ընտիր կերպասեղէններ կիներու համար:

ԱՐՏԱԿԱՐԳ ԱԺԱՆՈՒԹԻՒՆ

Ջեռք մը կարուած ֆափուստը ձեզի պիտի արժէ՝ *Ձրանս. առաջնակարգ գեղեցիկ կերպասով 500 ֆր. փոխանակ 700ի: Իսկ Անգլ. կերպասէ 700 փոխանակ 1000ի:*

փափաքողներու (այր եւ կանանց) կը տրամադրենք անթե coupe ունեցող եւ à façon աշխատող վարպետ — դերձ...

ՁԵՐ ԴՆՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԴԻՄԵՑԷՔ

MAISON VARTERESSIAN

1bis Rue Hautefeuille, մէթրօ St. Michel

Արեւելեան եւ եւրոպական ամէն տեսակ նպարեղէններ, ջոր պտուղներ, լաքէրտա, երշիկ, ապուխտ, եւայլն.

ԱՄԵՆԱԼԱՒ ՄԱՔՈՒՐ ԱԺԱՆ

Մասնաւոր ապահարկութիւն բնակարաններու համար

կ'ընդունինք ապսպրանքներ գաւառներէն և արտասահմա...

EMPIRE մէթրօ-Չոլ՝ 37 Av. Wagram

կ'ուզուի վարպետ խոհարար մը, լաւ պայմաններ: Դիմել «Յառաջ»ի վարչութեան:

ԲԺՇԿ. եւ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ

10 Rue Beaugrenelle, Paris (15)

մէթրօ՝ Beaugrenelle

Միզանցքի, փրոսթաթի, մորթի, արիւնի, կանանց հիւանդութիւններ եւ ֆրանկախտ: Ամէն օր ժ. 10—12 եւ 3 9: կիր. եւ տօն օրեր 10-12:

IMPRIMERIE - MASSIS - ÉDITIONS

208bis, Rue Lafayette Paris (10)

Le Gérant H. STEPHAN

STUDIO D'ART MA...

Մարսէյլի գեղարուեստ... լուսանկարչատունը՝

116 La Canebière

ուր պիտի գտնէք արագ... կատարեալ բաւարարու... ինչպէս նաեւ ամառնային... ցօդեայ ժամանցներու... ընտիր մեքենաներ ամէն... տոյքներով: Վճարումներու... րութիւն: Զափաւոր գին:

ՄԱՆՈՒԿ ՄԱՐԳ...

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ

96 r. Rivoli, մէթր. Շաբ. է... եւ նոր մեթոտով դարմանում... եւ կանանց մորթի, արիւնի եւ... հիւանդութեանց (ֆրանկախտ... մասին.) եւ վարիսի: Մասնաւորապէս միզամիտ եւ արտ... հրդեհկութ. ամէն օր 9—12, Կիրակի 9—12: